



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1584

22

U-34 1883

2010

ի Եւրոպայի Պրինցիպալի
~~այն~~ Եւրոպայի
Մեջ 1771-ի

ՅԱՐԻՍ
Եւրոպայի

ՊԱՏԱՌԱԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

2012

[Faint, illegible handwritten text in brown ink]

[Faint, illegible mirrored text, likely bleed-through from the reverse side]

50:5

1994 ար.

222

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

U-34

ՀԻՆԵՒՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Հ. ԵՓՐԵՄ Վ. ՍԵԹԵԱՆ

ՄԻԻԹԱՐԵԱՆ



ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

544

19948-59 (35310)

ՎԵՆԵՏԻԿ

Ի Ս Ո Ւ Ր Բ Ղ Ա Ջ Ա Ր

1863

36 677 w.h.

101
101

101

Ծ Ա Ն Ո Ի Յ Ո Ի Մ Ն

Անձամբ փորձ եղած ու աչքով տեսած կը վեր-
կայեմ, որ մեր ազգին մէջ վարպետները սորվե-
ցնելու՝ և տղաքը սորվելու բաւական ջանք ու
ախորժակ ունին. բայց քիչ աշխատանքով և քիչ
ժամանակ կորսուցնելով սորվելու յարմար ամէն
ուսման դասատուները չունին: Եւ գիտնալով
որ ուսմանց մէջ հարկաւոր տղոց սորվելու մէկ
բանն ալ պատմութիւնն է, անոր համար հիմա
մեզի ալ յորդոր մը եկաւ աշխարհքիս պատմու-
թիւնները համառօտ ոճով շինելու հարցմամբ
պատասխանով, որ օրինակ ըլլայ տղոց՝ թէ ինչպէս
յարմար կերպով պիտի հարցնեն ու պատասխա-
նեն սորված պատմութիւննին: Եւ որովհետեւ
հաւատքին հիմը, պատմութիւններուն մէջ ալ ա-
ւելի հարկաւոր գիտնալու՝ մէջէն շատ խրատ առ-
նելու պատմութիւնն աստուածաշունչն է, այս ինքն
հին ու նոր կասկարանը, անոր համար առաջ ա-

սոր ձեռք դարկինք • մէկ քանի հարկաւոր դիտե-
լիքներ ալ ամէն մէկ մասին ետեւէն աւելցուցինք ,
ու ետքը Երուսաղեմին կործանմանը վրայ քիչ մը
բան խօսեցանք • անկէ վերջն ալ ամէն մէկ դասին
համար մէյմէկ խրատական խմաստներ գրինք • և
ետքը գրքին ցանկը՝ կղած դիպուածներուն խա-
մանակովը :

[Faint, illegible handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.]

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

ՎՐԱՅ

Հ. Հին ու նոր կաակարան ըսելով ինչ կ'իմա-
նաս .

Պ. Կաակարան՝ կաակի կամ գաշինքի գիրք
ըսել է : Հին կ'ըսուի ան կաակարանը որ կը խօսի
Աստուծոյ Մովսէս մարգարէին ձեռքով տուած
Հին օրէնքներուն վրայ : Իսկ Նոր Կաակարան կ'ը-
սուի Քրիստոսի ձեռքովը մեզի տրուած օրէնքնե-
րուն գիրքը :

Հ. Կաակարաններուն հեղինակը ո՞վ է .

Պ. Աստուած է, որ աուն տուաւ Մովսէս մար-
գարէին ու իր ուրիշ ծառաներուն որ գրեցին .
անոր համար Աստուածաշունչ ալ կ'ըսուի, որ ըսել
է՝ Հոգւոյն սրբոյ ազգելովը գրուած : Մորէ Գիւրգ
ալ կ'ըսուի՝ որովհետեւ Աստուծոյ գիրքն է, ու
մէջի ամէն բանը իրաւ ու աղէկ է, ամէն մարդու
սուրբ ըլլալու ալ պատճառ :

Հ. Աստուածաշունչը կարգալու ատեն ինչ ըզ-
գուշութիւն պէտք է ընել .

Պ. Որովհետեւ ամէն մէջի պատմութիւնները
Աստուծոյ ազգելովը առանց սուտի մը գրած են .

մէջի խրատներն ալ բոլոր Աստուծոյ սուած խրատներն են, անոր համար երկիւղածութեամբ ու մեծ պատուով պէտք է կարգալ: Ուր որ մէկուն խելքը չհասնիր կամ մէջէն սխալ բան կ'իմանայ, պէտք է գիացողի մը հարցընէ ու սուրբ հարց և եկեղեցւոյ ընդունած մեկնիչներուն մէջը նայի, և չարութեամբ աղէկը գէշի չմեկնէ: Անոր համար սուրբ Օգոստինոս ալ կ'ըսէ « Թէ որ մէջէն բան մը քու խելքէդ վեր երևնայ, պէտք չէ որ ըսես թէ գիրքը շինողը սխալ բան կ'ըսէ, հասկա գիացիր որ կամ կարգացած օրինակդ սխալ է, կամ սխալ թարգմանուեր է, կամ թէ դու չես հասկընար »:

Հ. Հին կտակարանը քանի՞ գիրք կը բաժնուի .

Պ. Քառսուներհինգ . Մովսէս մարգարէին դրած հինգ գրքերը . այսինքն Ծնունդք, Եւք, Ղևտականք, Թիւք, Երկրորդ օրէնք . Յետու որդի՛ Նաւեայ, Դատաւորք, Հռութ, չորս գիրք Թագաւորութեանց, երկու գիրք Մնացորդաց, երկրորդ Եզր, Նէեմի, Եսթեր, Յուդիթ, Տօբիթ, երկու Մակաբայեցիք, Սաղմոս Դաւթի, Առակք Սողոմոնի, Ժողովող, Երգ երգոց, Իմաստութիւն, Յօք . հինգ մեծ մարգարէները՝ այսինքն Եսայի, Երեմիա, Բարուք, Դանիէլ, Եղեկիէլ . աասուերկու փոքր մարգարէները՝ այսինքն Ովսէէ, Ամովս, Միքիա, Յովէլ, Աբդիու, Յովնան, Նաւուս, Ամբակուս, Սոփոնիա, Անգէոս, Զաքարիա, Մաղաքիա, և Սիրաքայ գիրքը¹:

Հ. Նոր կտակարանը քանի՞ գիրք կը բաժնուի .

Պ. Քսանըեօթը . չորս աւետարանիչք, այսինքն Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս . Դործք առաքելոց, Կաթողիկեայց Եօթը թուղ-

¹ Ասոնցմէ զատ կան նաև առաջին Եզր, երրորդ Մակաբայեցիք:

Թերը, այսինքն Յակովբու մէկ, Պետրոս առաքելոյն երկուք, Յովհաննէս աւետարանչինը իրեք, Յուդային մէկ, Պողոս առաքելոյն տասնըջորս Թուղթերը, որ դրեց Հռոմայեցւոց, երկու Թուղթ Կորնթացւոց, Գաղատացւոց, Եփեսացւոց, Փիլիպեցւոց, Կողոսացւոց, երկու Թուղթ Թեսաղոնիկեցւոց, Եբրայեցւոց, երկու Թուղթ Տիմոթէոսի, Տիտոսի, Փիլիմոնի, և ՅայանուԹեան գիրքն որ Յովհաննէս աւետարանիչը դրեց:

Հ. Հին կտակարանը ի՞նչ լեզուով գրուեցաւ.

Պ. Հրէից լեզուով. միայն Դանիէլի, ՅուդիԹայ գրքերուն համար կ'ըսեն թէ քաղգէարէն գրուած են, որ Հրէից լեզուէն քիչ մը տարբեր է. իսկ երկրորդ Մակաբայեցիք ու Սողոմոնի ԻմաստուԹեան գիրքը՝ սուրբն Հերոնիմոս կ'ըսէ թէ յունարէն գրուեցան:

Հ. Նոր կտակարանը ի՞նչ լեզուով գրուեցաւ.

Պ. Հռոմերէն. միայն Մատթէոսի աւետարանը ու Պողոս առաքելոյն Եբրայեցւոց գրած Թուղթը շատերը կը կարծեն որ Հրէից լեզուով գրուած ըլլան:

Հ. Հին կտակարանին հին ու երևելի ԹարգմանուԹիւնները որո՞նք են.

Պ. Երևելի է հայերէն ԹարգմանուԹիւնը, յունարէնը, լատիներէնը, քաղգէարէնը, ասորերէնը, արաբացին: Յունարէն քանի մը անգամ Թարգմանած է, որոնց մէջ ընտիրը Եփեսանսնից ըսուած ԹարգմանուԹիւնն է, որ Պաղոմէոս Փիլադելիոս անուանով Եգիպտոսի Թագաւորին հրամանովը ԵօԹանասուճուէրկու հրեայ Ռաբբիներ Թարգմանեցին, Քրիստոսէ 273 տարի առաջ:

Հ. Հայերէն մեր Ատուածաշունչը ո՞վ Թարգմանեց, և ո՞ր լեզուէն.

Պ. Հինգերորդ դարուն մէջ, Քրիստոսի 410 Թուականին, մեր սուրբ Թարգմանիչները Սահակ

ու Մեսրոպ իրենց աշկերաններովը թարգմանեցին հին կաակարանը Եօթանասնից թարգմանութեանէն, ու նոր կաակարանն ալ նոյնպէս յոյն բնագրէն. աչքէ անցընելով նաև Հրէից, Ասորւոց ու Արարացւոց թարգմանութիւնները: Աս մեր թարգմանութեան նման աղէկ թարգմանութիւն մէկ լեզուի մը մէջ չկայ. ինչպէս որ կը վկայեն օտարազգիք ալ, որոնք որ հայերէն սորվեր ու մեր Աստուածաշունչը կարդացեր են: Լաբրող ըստած երևելի հոլանտացի հեղինակը համարձակեցաւ ըսելու՝ որ հայերէն թարգմանութիւնը թագոսկի է ամէն ուրիշ ազգերուն թարգմանութեանցը:

Հ. Լատիներէն Աստուածաշունչը ո՞վ թարգմանեց .

Պ. Լատինացիք թէ և առաջուց Եօթանասնից թարգմանութենէն թարգմանածը ունէին, բայց սուրբն Հերոնիմոս ուղեւով որ աւելի աղէկ ըլլայ՝ նորէն թարգմանեց Հրէից լեզուէն, որ Առաքա ըսուեցաւ, և արևմտեան եկեղեցւոյ մէջ կը գործածեն. որ աեղ աեղ Եօթանասնից թարգմանութենէն կը տարբերի:

Հ. Աստուածաշունչի պատմութիւնը քանի՞ դար կը բաժնուի .

- Պ. Ա. կց. Յ. Աշխարհքիս ստեղծմանէ ինչուան ջրհեղեղ 1656 տարի:
- Բ. Ջրհեղեղէն ինչուան Արրահամու կոչումը 2114 տարին:
- Գ. Անկէ ինչուան Իսրայէլացւոց Եղիպատսէ ելլելը 2544 տարին:
- Դ. Անկէ ինչուան Հրէից թագաւորութեան սկիզբը 2962 տարին:
- Ե. Անկէ ինչուան Հրէից Բաբելոն դերի երթալը 3446 տարին:
- Զ. Անկէ ինչուան Յիսուսի ծնունդը, աշխարհքիս 4053 տարին:

Հին կառակարանին պատմութիւնը մենք ալ աս վերի ըսած վեց դարերուն վրայ վեց մաս կը բաժնենք :

Առջի մասը՝ նահապետաց ատենը , ինչուան Զրհեղեղ , 1656 տարուան պատմութիւն :

Երկրորդ մասը՝ Զրհեղեղէն ետքը եղած նահապետաց ատենը , ինչուան Աբրահամու կոչումը , 458 տարուան պատմութիւն :

Երրորդը՝ անկէ ետքը եղած նահապետաց ատենը , ինչուան Հրէից Եգիպտոսէ ելլելը , 430 տարուան պատմութիւն :

Չորրորդը՝ Մովսէս մարգարէէն սկսած Դատաւորաց ատենը , ինչուան Սաւուղ թագաւորը , 418 տարի :

Հինգերորդ՝ Սաւուղէն ինչուան Բաբելոնի գերութիւնը , 484 տարուան պատմութիւն :

Վեցերորդը՝ իշխանութեան կամ քահանայութեան ատենը , որ կը սկսի Բաբելոնի գերութենէն , ինչուան Յիսուսի ծնունդը՝ 607 տարուան պատմութիւն : Բոլորը կ'ըլլայ 4053 տարի աշխարհքիս ստեղծմանէն 'ի վեր :

Նոր կառակարանին պատմութիւնն ալ չորս մաս կը բաժնենք .

Ա . Սուրբ Աստուածածնայ աւետմանէն , ինչուան Յիսուսի մկրտութիւնը :

Բ . Յիսուսի մկրտութենէն , ինչուան փառաւորապէս Երուսաղէմ մանելը :

Գ . Յիսուսի Երուսաղէմ մանելէն ինչուան Հոգւոյն սրբոյ գալուստը :

Դ . Հոգւոյն սրբոյ գալստենէն ինչուան Պետրոս և Պօղոս աւաքելոյ դիստուումը : Աս նոր կառակարանին պատմութիւնը 74 տարուան միջոց է :

ՊԱՏՄՈՒԹԻՒՒՆ

Հ Ի Ն Կ Տ Ս. Կ Ս. Բ Ս. Ն Ի Ն

Ն Ա. Հ Ա. Պ Ե Տ Ա. Յ Դ Ա. Բ Ը

Ջ Բ Հ Ե Ղ, Ե Ղ, Է Ն Ա. Ռ. Ա. Զ

1

Աշխարհքիս ստեղծումը .

Հ. Աշխարհքս ո՞վ ստեղծեց, ու ի՞նչ կերպով .
Պ. Աստուած լեց օրուան մէջ ոչընչէ ստեղծեց
Երկինքն ու երկիրս իր ամէն մէջի բաներովը : Թե
և կրնար իր ամենակարողութեամբը մէկ վայրկենի
մէջ ստեղծել ամէնը մէկէն, բայց ուզելով իմացը
նել որ ինքն ամէն բան խորհրդով կ'ընէ ու կար
գով, անոր համար ամէն օր մէյմէկ բան ըրաւ :
Ուստի նախ և առաջ ստեղծեց երկինքն ու երկիրս
և հրեշտակները . ետքը լոյսն ստեղծեց, ու գիշե
րը ցորեկն որոշեց . և ան եղաւ աշխարհքիս ըս
տեղծմանն առաջին օրը :

Երկրորդ օրը հաստատութիւն ըրաւ, ու երկրն
քի ջրերն երկրիս ջրերէն զատեց :

Երրորդ օրը ծովը ցամաքէն բաժնեց, ու հրա
ման առաւ որ գետինը խտանը, ծաղկերն ու
ամէն կերպ պաղոյ ծառեր բուսցնէ :

Չորրորդ օրն արևը լուսինն ու աստղերն ստեղծեց, ու անոնցմով ժամանակ, օր, տարի որոշեց:

Հինգերորդ օրը՝ ձկներն ու թռչուններն ըրաւ, ու օրհնեց զանոնք որ աճին ու շատնան, օգոյն և ջրին մէջ սփռուին:

Վեցերորդ օրն ամէն ցեղ չորքոտանիներ ու անասուններ, ամէն բանէն ետքն ալ մարդն ստեղծեց իրեն նման ու անունը Ադամ դրաւ:

Հ. Աստուած Ադամն ինչ կերպով ստեղծեց.

Պ. Աստուած միայն Եդէմ ըսելով ամէն բան ստեղծեց. երկինքը, երկիրս, ծովը, աստղերը, արևը, տեսակ տեսակ կենդանիները, թռչունները, ձկները, և ամէն տեսակ ծառերը ծաղկերները: Բայց երբոր կարգը մարդուն եկաւ՝ բոլորովին ստեղծելու կերպը փոխեց, սկսաւ խորհուրդ ընել. կ'ըսէ « Ստեղծենք մարդը՝ մեր կերպարանքովը և մեղի նման »: Ասով խնայրնել ուզեց Երրորդութեան խորհուրդը: Ասանկ մտաւոր ստեղծուածի մը մարմինն ալ արժան սեպելով որ չընէ մինակ խօսքով, հող առաւ ու մարդ շինեց, և աւելի զարմանալու կերպով ալ հողին ստեղծեց: Ուրիշ բաներու համար՝ աս դիէն ան դիէն ելլեն կ'ըսէր. բայց մարդուն հողին ինքն իրմէ փշեց: Այսչափ տարբերութիւնները անոր համար ըրաւ որ խնայրնէ թէ ուրիշ արարածները ամէնը մէկէն առած՝ մարդէն շատ վար և տարբեր բաներ են:

Հ. Ամէն աշխարհքիս բաները ստեղծելէն ետքը Աստուած ինչ ըրաւ.

Պ. Եօթներորդ օրը դադրեցաւ իր ամէն գործքերէն ու օրհնեց ան օրը, որն որ ետքը պատուիրեց որ իրեն նուիրենք՝ Եաբաթ անուանելով, որ հանդիսա ըսել է. անոր տեղը ետքը Աիրակի օրը դրուեցաւ՝ ի յիշատակ Բրիստոսի յարութեանը:

Աղամայ մեղքն ու պատժուիլը .

Հ . Աստուած իր ստեղծած բաներուն ինչ կարգ
ու կանոն դրաւ .

Պ . Անբան արարածներուն հրաման տուաւ որ
իրեն դրած կարգովք փոփոխուելով՝ ամէնքն ալ
իրենց տեսակը սլահեն . իսկ մարդը դրաւ աղուոր
ու զուարճալի պարտեղի մը մէջ որ Գրախօս կ'ը-
սուի : Անոր մէջը ամէն տեսակ պաղատու ծառե-
րէն զատ երկու ծառ ալ կային . մէկուն անունը՝
Ծառ Կենաց , մէկալինը՝ Ծառ Գիտութեան Բարոյ Ե-
լարի . ուստի Աղամայ ալ ստորսպրեց որ տիրէ աչ-
խարհքիս ամէն բաներուն , և ուղածին պէս կա-
ռավարէ . միայն արդեւեց իրեն որ գիտութեան
ծառին պաղէն չուտէ , թէ չէ՝ գիանայ որ կերա-
ծին պէս կը մեռնի :

Հ . Ինչո՞ւ արդեւեց Աստուած Աղամայ որ գի-
տութեան ծառին պաղէն չուտէ .

Պ . Որովհետեւ Աստուած զմարդը իրեն նման
ստեղծեց բանահան և ինքնիշխան , ու ամէն բան
անոր ձեռքը թողուց որ վայելէ և ուրախանայ ,
անոր համար ուղեց որ մէկ սղտի բանի մը մէջ
հնազանդելով Աստուծոյ , ու իրեն կամքին դէմ
ընելով իմացընէ որ թէպէտ ազատ ստեղծուած է ,
բայց հաւատարիմ է իր ստեղծողին , ու կը ճանչ-
նայ որ ան ամէն բարիքը Աստուծմէ առեր է :

Հ . Ազամ հնազանդեցա՞ւ Աստուծոյ հրամա-
նին .

Պ . Քանի որ մինակ էր՝ չկերաւ . բայց երբոր
Աստուած Եւան անոր ընկեր տուաւ , Եւային
յորդորելովը կերաւ ան ծառին պաղէն :

Հ. Եւան ինչպէս ստեղծուեցաւ .

Պ. Ազամ երբոր գրախափն մէջը պառկեր քուն կ'ըլլար, առաւ Աստուած անոր մէկ կողը, ու անկէ շինեց Եւան, ու տուաւ Ազամայ որ անոր ընկեր, օգնական ու կիին ըլլայ :

Հ. Եւան չիմացաւ Աստուծոյ հրամանը չուտելու գիտութեան ծառին պտղէն .

Պ. Ազամ զուրցած էր անոր . բայց սատանան օձի կերպարանք առած, որ ամէն կենդանիներէն խորամանկ է, եկաւ Եւային խաբխրբելով ըսաւ . « Թէ որ ուտէք ան ծառէն՝ Աստուծոյ պէս կ'ըլլաք, բարին ու չարը կը ճանչնաք » : Եւան առ խոսամունքիս հետ առնելով պտղոյն աղուորութիւնն ալ՝ հաւնեցաւ, փրցուց Ազամին ալ տուաւ ու մէկ անգ կերան :

Հ. Ազամ ու Եւա իրենց ըրած անհնազանդութեան համար ինչպէս պատժուեցան .

Պ. Նախ մէկէն ՚ի մէկ կորսընցուցին իրենց անմեղութիւնը, ու խմանալով թէ մերկ են՝ սկսան ամրջնալ, և թուղի աերկներով իրենք զիրենք ծածկեցին, ու ծառերու մէջ պահուրանեցան : Աստուած ուզելով որ զղջումի դան, հարցուց թէ Ո՛ւր էք . անոնք զղջալու անդ՝ մերկ ըլլալնին պատճառ կը բերէին . ու երբոր նորէն հարցուց, թէ « Չըլլայ թէ ան արդեւած պտղէն կերած ըլլաք » . ան ատեն Ազամ յանցանքը Եւային վրայ ձգեց, Եւան ալ օձին, ասանկով չզղջացին . անոր համար Աստուած ալ առաջ օձը պատժեց որ ամէն կենդանիներէն ալ անիծած ըլլայ, փորուն վրայ քաշէ ու հող ուտէ, ու կիներ իրեն գլուխը ճզմէ, օձն ալ կնոջ կրունկը խածնելու ջանայ : Եւային ալ պատիժ դրաւ որ ցաւով տղայ բերէ, ու երկը իշխէ անոր վրայ . Ազամին ալ պատիժ՝ որ իր հացը ճակատին քրտնաբովը դանէ, ու մեանի հող դառնայ : Եսբը Աստուած երկուքին ալ կաշիէ զգեստ

Հաղցուց, ու դրախառնէն դուրս հանեց, որ գեալին
բանին ու սալրին. ու քերտքէներուն ալ հրաման
տուաւ որ բոցեղէն սրով արգելեն կենաց ծառին
մտանալու :

3

Կայեն, Աբէլ .

Հ. Ազամ դրախառնէն ելլելէն ետքը ի՞նչ նոր խեղ
ճութեան հանդիպեցաւ .

Պ. Ազամ երկու տղայ ունեցաւ . առաջինին ա-
նունը Կայէն էր, երկրորդին Աբէլ : Կայէն եր-
կրագործ եղաւ, Աբէլ հովիւ . Կայէն Աստուծոյ
զոհ ըրաւ իր երկրին պտուղներէն, Աբէլն ալ զոհ
ըրաւ իրեն ոչխարներուն առջինեկները ու գէրե-
րը . անոր համար Աստուած Աբէլինը ընդունե-
ցաւ, բայց Կայէնին տուածին չհաւնեցաւ : Աս-
բանիս վրայ Կայէն շատ տրտմեցաւ : Աստուած
իրեն ըսաւ որ դու սրտանց չառելի, անոր համար
չընդունեցայ : Բայց Կայէն սաստիկ նախանձեցաւ
եղբորը վրայ . որ մը խաբելով զինքը դաշտ տա-
րաւ, ու հոն զարկաւ մեռցուց : Աս բանս մեծ ցաւ
եղաւ Ազամայ, երբոր տեսաւ իր անհնազանդու-
թեան պատիժը սիրելի անմեղ որդւոյն վրայ հա-
սած իր առջինեկ որդւոյն ձեռքով :

Հ. Կայէն եղբայրասպանութեանը համար ի՞նչ
պատիժ քաշեց .

Պ. Աստուած կ'ուզէր որ զլջուժի դայ . անոր
համար չցիտցողի մը պէս հարցուց թէ ո՞ւր է Աբէ-
լը . բայց Կայէն զլջալու տեղ լրբութեամբ պա-
տասխանեց, թէ Նո իրեն պահապանն եմ : Անոր
համար Աստուած ալ պատիժ տուաւ իրեն, որ
ասղիս անդին բարբարական պտըտի, շատ աշխա-

տի, ու երկիրը իրեն պատու չտայ, բայց Վայեն
չհետևեցաւ Ադամայ օրինակին ու ետքն ալ չզըզ-
ջաց. և անանկ յուսահատած ապրեցաւ՝ ինչուան
որ Ղամէք իր թողը մէկ անտառի մը մէջ վայրի
կենդանի կարծելով ղինքը՝ նետով զարկաւ մեռ-
ցուց :

Հ. Աստուած ինչով մխիթարեց Ադամայ սիրտը՝
որ Աբելին մահուամբ վշտացած էր :

Պ. Անոր անզը ուրիշ զաւակ մը տուաւ Սէթ
անուանով, որ Աստուծոյ ալ շատ սիրելի եղաւ ի-
րեն որդիքներովը, անոր համար ալ Սէթայ ցեղը
Որդիք Աստուծոյ ըսուեցան :

Հ. Սէթայ ցեղին մէջ որո՞նք եղան երեւելի .

Պ. Մէյմը Ենովս Սէթայ որդին, որ սկսաւ կա-
տարեալ աստուածաբաշտութիւն սորվեցընել. Ե-
նովք՝ որ Աստուծոյ շատ սիրելի ըլլալուն ողջ ողջ
աշխարհքէս վերացաւ իրեք հարիւր վաթսուներ-
հինգ տարուան. Մաթուսաղան՝ որ 969 տարի
ապրեցաւ, որուն չափ երկայն ապրող մարդ չե-
ղաւ աշխարհքիս վրայ :

Հ. Վայենին զաւկրները ի՞նչպէս անուանեցան
ու մէջերնին ի՞նչ երեւելի մարդիկ եղան .

Պ. Որդիք Ժորդիան ըսուեցան, և մէջերնին առջի
նշանաւորն եղաւ Վայեն՝ որ քաղաք շինեց և անու-
նը դրաւ Ենոք, որ էր իր առջի որդւոյն անունը :
Ղամէքայ մէկ որդին Յոբաղ երաժշտութիւն դը-
տաւ. մէկալ որդին Թոբէլ դարբնութիւն դտաւ .
և ասոնց քոյրն ալ Նոյեմա՝ կտաւ դործել սկսաւ :

Հ. Արդիք Աստուծոյ իրենց աղէկութեանը մէջ
որչափ ասեն մնացին .

Պ. Բանի որ խնամութիւն չէին ըներ Արդիք
մարդկան ըսուածներուն հեա՝ Աստուծոյ սիրելի
էին . բայց երբոր աս զգուշութիւնը մէկդի թող-
լով սկսան խնամե՛նալ անոնց հեա, բոլորովն գէշ-
ցան : Ան ասենն էր որ երեւելի հսկաները ծնան
անոնց խնամութենէն :

65-59
8/661

35.210
018.58

Չրհնդեղ .

Հ . Որդիք Աստուծոյ գեշութեան ետեկ ըլլալ նուն համար ի՞նչ պատիժ ապին Աստուծմէ .

Պ . Աստուած թէպէտ ամէնը մէկէն կրնար յանկարծ ջնջել , բայց իր ողորմութեամբը , հարիւր ասրի աստղ խնայուց՝ թէ սրդողած է և կ'ուզէ պատժել . ու երբոր չզղջային , ջրհնդեղով կորսնցուց բոլոր աշխարհքիս մարդիկը . ողջ պահելով միայն Նոյ նահապետը իրեն ընտանիքովը :

Հ . Աստուած ի՞նչ կերպով խնայուց մարդիկներուն , թէ իրենց մեղքին համար կ'ուզէր ջրհնդեղ ընել .

Պ . Նոյ նահապետին հրաման տուաւ որ հարիւր ասրուան մէջ մէկ տասան մը շինէ՝ որուն երկայնքն ըլլայ իրէք հարիւր կանգուն , լայնքը յետուն կանգուն , բարձրութիւնն ալ երեսուն . իրէք յարկ , մէջը բաժանմունք , քովէն ալ դուռ մը . աս նաւը շինելու ատեն ամէնքը խնայան , բայց կը խնային Նոյ նահապետին վրան , ու շէին հաւատար .

Հ . Զրհնդեղ ի՞նչպէս եղաւ .

Պ . Նոյ նահապետը Աստուծոյ հրամանովը ամէն տեսակ սարք ըստւած կենդանիներէն եօթնապան զոյգ , և անսարք ըստւածներէն երկերկու զոյգ տասանը մտցուց՝ իրենց պէտք եղած պաշարով . մտաւ ինքն ալ տասանին մէջ իր իրէք որդիքներովը ու իրենց կնիկներով , ամէնը ութ հոգի . Աստուած ալ դուռը վրաներնէն գոցեց : Եօթն օր անցնելէն ետքը սկսաւ երկնքէն սաստիկ անձրև գալ , գեանէն ալ չորս գիէն սկսաւ ջուր ելլալ քառասուն օր միակերպ , ինչուան ջուրը բարձր

լեռներէն ալ տասնուհինգ հանդուռն վեր բարձրացաւ ու խղզեց բոլոր մարդիկներն ու կենդանիները, որ տապանէն դուրս մնացած էին :

5

Աստուծոյ խնամքը Նոյ նահապետին վրայ .

Հ. Նոյ նահապետը սրբաբն ատեն տապանին մէջ փակուած կեցաւ .

Պ. Տարի մը ամբողջ . վասն զի ինչուան հարիւր յիսուռն օր ջուրը բարձրացած մնաց . ինչուան օր ամէն մարմինները ջրին երեսը կեցած՝ փառեցան ջնջուեցան : Իսկ թէ որ ջուրը շուտ մը ցամքեր , անտէք գեանին երեսը տարածուած՝ իրենց գէշ հոտովը բոլոր օդը կ'ապականէին : Հինգ ամիսէն ետքը Աստուած հով մը հանեց որ սկսաւ ջուրը ցամքիլ . երբոր եօթը ամիս եղաւ՝ նստաւ տապանը Հայաստանու Արարատ կամ Մասիս ըսուած լեռան վրայ . և տասնումէկերորդ ամսուռն առջի օրը լեռներուս գլուխները սկսան երևնալ . քառասուռն օր ալ անցնելէն ետքը Նոյ նահապետը տապանին պատուհանը բացաւ ու ազաւ մը թացուց , որ գնաց ու ալ չդարձաւ . ան ատենը Նոյ աղաւնի մը թողուց որ խմանայ թէ ջուրը ցամքեր է . բայց աղաւնին կենալու տեղ չգտնալով ետ դարձաւ , 'Նոյ ալ ձեռքը երկրնցուց՝ ներս առաւ : Եօթը օրէն նորէն թողուց աղաւնին , որ իրիկուան գէմ դարձաւ եկաւ տապանը՝ ձիթենի ճիւղ մը առած բերանը . անցաւ եօթը օր ալ՝ նորէն խրկեց աղաւնին , որ գնաց ու մէյմ՝ ալ չդարձաւ : Ան ատեն Նոյ տապանին վրան բացաւ ու անանկ մէկքանի օր ալ սպասեց ինչուան օր աղէկ մը ցամքեցաւ գեանը , ու Աստուծմէ հրաման առաւ , ելաւ

դուրս, ու ամէն անասունները ու թռչուններն ալ
թողուց որ ելեն:

Հ. Նոյ նահապետ տապանէն ելելուն պէս իր
առջի գործքը ո՞րն եղաւ.

Պ. Մէկէն ընկաւ Աստուծոյ առջև շնորհակալ
եղաւ, ու հետը ունեցած սուրբ կենդանիներէն
զոհ ըրաւ, ու Աստուծոյ շատ հաճոյ անցնելով
օրհնեց զինքը որ շատնայ ու իշխէ աշխարհքիս ամէն
բաներուն վրայ:

Հ. Աստուած ի՞նչ դաշինք դրաւ Նոյին հետ՝
տապանէն ելելէն ետքը, և ի՞նչ նոր բանի հրա-
ման տուաւ.

Պ. Գիանալով մարդուս բնութեան տկարու-
թիւնը որ սղտիկուց գէշութիւն կը սիրէ, անոր
համար Աստուած ուխտ ըրաւ որ մէյմ՝ ալ ջրհե-
ղեղ չընէ. և իր ուխտին նշան տուաւ ծիրանի գօ-
տին, որ երբոր երևնայ յիշէնք Աստուծոյ գթու-
թիւնն ու յուսանք որ չպատժեր զմեզ, հասցա
կը սպասէ որ զղջանք ու թողութիւն տանենք ը-
րածներնուս վրայ: Նոր տուած հրամանն ալ աս
էր որ ջրհեղեղով երկիրս գէշնալով մարդիկնե-
րուն բնութիւնն ալ տկարացաւ, անոր համար
ասրասպրեց որ անկէ ետքը մարդիկ միս ալ կարե-
նան ուտել՝ ուրիշ ուտելիքներու պէս:

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Աղամ գրախառն մէջ սրչափ կեցաւ .

Պ. Ասոր վրայ շատ կարծիք կայ . ոմանք կ'ըսեն թէ երեսուն տարի կեցաւ , ոմանք իրեք տարի , ոմանք քառասուն օր , ոմանք ութը օր , ոմանք վեց օր , ոմանք իրեք օր , ոմանք ալ թէ և ոչ մէկ օր : Խիստ շատը հաւանական չէ , վասն զի « Աճեցէք և բազմացարուք » ըսելը էր Աստուած , ինչո՞ւ չշատցան : Մէկ օրն ալ նոյնպէս հաւանական չէ . վասն զի աչքերնին բացին չբացին՝ դեռ մէկ պըտուղ մը չկերած և գրախառն չորս դին չպտրած՝ դժուար կ'երևնայ մէկէն անանկ մեծ հրամանին դէմ ընել : Ըշմարտանման է քառասուն օր կամ քիչ մը աւելի միջոց :

Հ. Աստուած ինչո՞ւ համար Աղամայ ու բոլոր աշխարհքիս սասաիկ պատիժ տուաւ .

Պ. Մեզի իմացընեղու համար որ շատ մեծ մեղք է Աստուծոյ չհնազանդիլն ու իրեն կամքին դէմ կենալը :

Հ. Աստուած Աղամ ու Եւան պատժելու աւան դժուրեան նշան մը ցրցո՞ւց .

Պ. Չէ թէ միայն նշան մը , հասկա իր աստուածային անչափ դժուրեանը հոն յայանի երեցուց , նախ հարցընեղով ու ատեն տալով որ զզան : Ետքը երբոր չզզացին , պատիժը տալու ատեն իմացուց որ ինքը միշտ բարութեամբ կը յաղթէ մարդկային չարութեանը , ու սատանան խաղք ընել կ'ուզէ . անոր համար սպառնացաւ օձին որ Եւան (այսինքն

սուրբ Աստուածածինը) ճգմէ սասանային գլու-
խը : Ասով Ազամայ սիրան ալ մխիթարեց , իմա-
ցընելով թէ ինքն որ հոգւով նման է Աստուծոյ՝
առեն կուգայ որ Աստուած ալ մարմնով իրեն
նման կ'ըլլայ ու զինքն ալ մեռնելէն կ'ազատէ :

Հ . Զրհեղեղէն առաջ քաղաքահան կառավա-
րութիւնը ինչպէս էր .

Պ . Ամէն մէկ նահապետ իրենց առւեր կը կա-
ռավարէին : Եւ շատ ապրելով շատ ալ աղաքներ
թուներ ունենալով , մէյմէկ պզտի թագաւոր կը
ձեանային , որ իրենք իրենց քաղաք կը շինէին , ու
իրենց ընտանեացը կարգ կանոն կը դնէին :

Հ . Իրախար աշխարհքիս որ կողմն էր .

Պ . Աստուածաշունչին պատմութենէն հաւա-
նական կ'երևնայ որ դրախար հայաստանի մէջն
ըլլայ : Նախ ան խօսքէն որ կ'ըսէ Աստուածաշուն-
չը . « Եւ անկեաց Աստուած զգրախան յԵգեմ
ընդ արևելս » . որ ըսել է թէ դրախար Արաբիայի ,
Մովսեսի պարտած տեղերուն արևելեան կողմն
էր՝ որ հայաստանու դին կ'իյնայ : Երկրորդ որ
դրախան մէջի եղած գեաներուն երկուքը՝ Տիգրիս
ու Եփրատ՝ հայաստանի մէջ քովէ քով կեցած են
ինչուան հիմա : Ասոնցմէ զատ , ան գեաներուն
մօտ տեղերուն պարարտութիւնը , գեղեցկութիւ-
նը , այն տեղւոյն հոտաւէա ծաղկըններուն անթիւ
տեսակները , որ ինչուան հիմա կը բուսնին ու տես-
նողները կը զմայլեցընեն , և յայտնի կը ցուցընեն՝
որ առաջուց մասնաւոր Աստուծմէ օրհնած տեղ
մը եղած է :

Ն Ա. Հ Ա. Պ Ե Տ Ա. Յ Գ Ա. Բ Ը

Ջ Բ Հ Ե Ղ Ե Ղ Է Ն Ե Տ Ե Ի

7

Նոյ նահապետին որդիքը .

Հ . Նոյին որդւոց անունը ի՞նչ է, և ի՞նչ մասնաւոր գործք կը պատմուի իրենց վրայ .

Պ . Անուննին Սեմ, Քամ, Յաբել է : Ասոնց հայրը Նոյ այգի տնկեց, ու մէկ անգամ մը շառկեկ խմելով գլուխը զարկաւ, ու երբոր տանը մէջ մերկ պառկեր էր՝ գիպուածով Քամը տեսաւ՝ ու գնաց ծիծաղելով պատմեց եղբարցը . անոնք լսելն ունի պէս լաթ մը առին, ու ետ ետ երթալով գնացին գոցեցին հայրերնին առանց տեսնելու : Երբոր արթընցաւ Նոյ ու իմացաւ եղածը, անիծեց զՔամ որ ծառայ ըլլայ մէկալ երկու եղբարցը, և օրհնեց զՍեմ որ իշխէ անոր վրայ, և զՅաբել որ Սեմայ հետ բնակի :

Ն . Նոյ նահապետ ջրհեղեղէն ետքը ո՞րչափ տունն ապրեցաւ .

Պ . Իրեք հարիւր յիսուն տարի . հինգ հարիւր տարուան էր երբոր տապանը սկսաւ շինել, վեց հարիւր տարուան էր ջրհեղեղին ստեղծումը, ինը հարիւր յիսուն տարուան մեռաւ :

Հ . Սեմ, Քամ, Յաբել ջրհեղեղէն ետքը մէկէն զատուեցան մէկմէկէ .

Պ . Երբոր այնչափ շատցան որ ալ մէկտեղ չէին
կրնար բնակիլ, արեւելքէն ասդիս անդին երթալ
սկսան . բայց երբոր ճամբուն վրայ հանդիպեցան
Սենաարայ մեծ գաշաին, քիչ մը ստեն ալ հոն
կեցան Բաբելոնի աշտարակը շինելու մտքով . ու
երբոր չյաջողեցաւ խորհուրդնին, բոլորովին ցը-
րուած բաժնուեցան մէկմէկէ :

Հ . Ի՞նչ բանի համար կ'ուզէին մարդիկ շինել
Բաբելոնի աշտարակը .

Պ . Երբոր տեսան Սենաարայ մեծ ու ընդար-
ձակ գաշար, մտքերնին հստարտութեան խորհուրդ
մը ինկաւ իրենց կարողութիւնը ցուցնելու, ու
յիշատակնին ձգելու յաւիտեան աշխարհիս վրայ .
ասոր համար սկսան շինել քաղաքի չափ մեծ աշ-
տարակ մը, որուն բարձրութիւնը կ'ուզէին ին-
չուան երկինք հասցընել : Իսկ շինուածքին նիւթ-
կը գործածէին քարի տեղ եփած աղիւս . և կրով
շաղախի տեղ կուպր, ինչու որ ան տեղուանքը
քար դժուար կը գանուէր :

Հ . Ի՞նչ արգելք եղաւ որ աշտարակ շինելու
խորհուրդը չկրցան առաջ տանիլ .

Պ . Աստուած տեսաւ որ մտքերնին չար է, ու
գիտնալով որ ամէն մարդ մէկտեղ մէկ լեզու ու
մէկ ազգ ըլլալով ուրիշ շատ անկարգութիւններ
ալ կ'ընեն, յանկարծ լեզունին շփոթեց, խառ-
նակեց, անանկ որ մէկմէկու ըսածը չէին հասկը-
նար . ասանկով խռովութիւն ինկաւ մէջ ընին,
ու ասդիս անդին ցրուեցան գնացին : Անո՞ւ հա-
մար ան տեղին անունն ալ Բաբելոն գրին՝ որ
խառնակութիւն ըսել է, որ առաջ Սենաար կ'ը-
սուէր :

Հ . Ո՞վ գլուխ կեցեր էր աշտարակ շինելու խոր-
հուրդը առաջ տանելու համար . ու շինուածքիւ
նիւթը ուսկից կը գանէին .

Պ . Ներբովթ անունով Քամայ թոռանը որդին

կարիճ ու աղէկ սիրա վաստրկիլ զխացող մարդ մը
ամէնուն դուխ կեցեր՝ բանը առաջ կը տանէր :
Բայց լեզուները շփոթեցնէն ետքը ճար չեղաւ զա-
նոնք միարանելու . անոր համար ինքը իրեններովը
մինակ մնաց , ու կ'իշխէր անոնց :

8

Սեմայ որդիքը ինչոչան Աբրահամ .

Հ . Սեմը՛նոյ նահապետէն օրհնուելով ինչ բա-
րիք դասւ Աստուծմէ .

Պ . Աստուած անոր ցեղէն ընտրեց առաւ իրեն
սիրելի ազգ մը՝ որոնց վրայ մասնաւոր դուժ խը-
նամք ցուցընելով կը հոգար : Այս ազգը հրէից
կամ Եբրայեցւոց ժողովուրդն էր , որուն յայտ-
նեց Աստուած իր ամէն կամքը , ու օրէնքներ դրաւ
վրանին՝ որոնք կ'ուզէր որ մարդիկ սրահեն , և ա-
նոնցմով արժանի եղան Աստուծոյ ժողովուրդ կո-
չուիլ , և զՔրիստոս իրենց մէջը ընդունիլ :

Հ . Աստուած երբ ընտրեց Եբրայեցիները ու
զատեց ուրիշ ազգերէն .

Պ . Չորս հարիւր յիսունըութը տարի ջրհեղե-
ղէն ետքը հայր Աբրահամու ասեմը , որ Սեմէն
սկսած տանըմէկերորդն էր : Ասան զի Սեմայ
տղան Արփաքսադ , Արփաքսադին տղան Կայնան ,
Կայնանայ տղան Սաղա , Սաղային տղան Եբեր՝
որուն անունով ազգը ըսուեցաւ Եբրայեցի . Եբե-
րայ տղան Փաղէկ , Փաղէկայ տղան Ռագաւ , Ռա-
գաւայ տղան Սերուք , Սերուքայ տղան Նաբովը ,
Նաբովրի տղան Թարա : Աս Թարան իրեք որդի
ունեցաւ . Աբրահամ , Նաբովը , Ասան . Ասան
մեռաւ ու Թողուց տղայ մը՝ Լովտ անունով : Աբրա-

Համ ու Նաբովը ալ կարգուեցան . Աբրահամու
կնոջ անունը Սարա էր , Նաբովինը Մեղքա :
Ետքը Թարա առաւ իրեն երկու որդիքը Աբրա-
համ ու Նաբովը , և մեռած որդւոյն արան Ղով-
արը , ու Քաղզէացւոց երկրէն ելաւ Քանանացւոց
երկիրը երթալու համար : Ետքը եկան բնակեցան
Խառան ըսուած տեղը , ու հոն մեռաւ Թարա
Աբրահամու հայրը : Աս տեղս ու աս անեմս ընտ-
րեց Աստուած Աբրահամը իրեն ժողովուրդ ընե-
լու համար :

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Աշտարակին վրայ դրսի պատմիչները գիտնալու ինչ հարկաւոր բան կը խօսին .

Պ. Նախ ձեկն վրայ ամէնը համաձայն չին խօսիր . ոմանք կըր էր կ'ըսեն , ոմանք ալ քառակուսի : Նոյնպէս բարձրութեանը համար ալ ոմանք ինչուան միտն մը ելեր էր կ'ըսեն , ուրիշները ինչուան 12,000 գիրկ կը հանեն : Սուրբն հերոնիմոս չորս միտն բարձրութիւն կուտայ : Իսկ հրեայք չափը անցնելով ուղեցին որ քսանըկօթը միտն բարձրութիւն ունենայ : Իսկ շինելուն պատճառ կուտան՝ թէ ուրիշ ատեն ջրհեղեղէն աղատելու համար էր : Փլշելուն համար ալ կ'ըսեն թէ Աստուած սասաիկ փոթորիկ մը հանեց , ու հիմնայտակ կործանեց :

Հ. Զրհեղեղէն առաջ մարդիկ որչափ երկայն կ'ապրէին , և ինչո՞ւ ետքէն կարճըցաւ կեանքերնին .

Պ. Զրհեղեղէն առաջ սովորաբար ինըհարիւր տարիի չափ կ'ապրէին , ինչպէս որ Ադամ ինըհարիւր երեսուն տարի ապրեցաւ . ասոր նման ուրիշներն ալ քիչ մը աւելի քիչ մը պակաս . բայց Աստուած տեսաւ որ մարդիկ շատ ապրելով զինքը բոլորովին կը մոռնան , և ըրած չարութիւննին ալ խիստ չափը կ'անցընէ , Նոյնահապեալին ջրհեղեղէն առաջ խնայուց որ մարդու տարիքն ալ պիտի կարճեցընէ , անանկ որ շատ շատ՝ ապրին հարիւր քսան տարի : Անոր համար ջրհեղեղով գետնին ուժն ալ տկարացուց , խտանդէնները գէշ

ցան: Բայց առ մարդկան տարիքին կարճընալը
Թողուց Աստուած որ բնական կերպով ըլլայ կա-
մաց կամաց • վասն զի Նոյին Թոռները հինգ հարիւր
տարիի չափ ապրեցան, և անոնց որդիքը չորս հա-
րիւր և իրեք հարիւր տարի: Եւ ջրհեղեղէն հինգ
հարիւր տարի ետքը Աբրահամու ատենը՝ հազիւ
երկու հարիւր տարի կ'ապրէին • անկէ մէկ երկու
հարիւր տարի ալ ետքը՝ հարիւր կամ հարիւր
քսան տարի ապրող քիչ կը դանուէր, ինչպէս որ
ըսեր էր Աստուած: Անկէ ետքը ինչուան հիմա
չորս հազար տարուան միջոց միշտ նոյնպէս հա-
րիւր քսան տարուընէ վեր ապրող խիստ դժուար
կը դանուի: Իսկ ասկէ իրեք հազար տարի առաջ
Դաւիթ մարգարէն Սաղմոսին մէջ կ'ըսէ իր ատե-
նին համար՝ Թէ եօթանասուընէն անդին առողջ
հանգիստ կեանք չըլլար • ինչպէս որ հիմա ծերերը
փորձով նոյն խօսքը կը հաստատեն:

Տ. Աղուները խառնուելէն առաջ մարդիկ ի՞նչ
լեզուով կը խօսէին •

Պ. Հաւանականաբար հայերէն, ինչպէս ստոյգ
կ'երևնայ Աստուածաշունչին պատմութենէն • վասն
զի Նոյ նահապետը երբոր տապանէն ելլելով Սա-
սիա լեանէն իջաւ, հոն հայաստան բնակեցաւ • ու
երբոր մարդիկ շարցան, ու ելան հայաստանէն
ասդիս անդին երթալու համար, և Սենաարայ
դաշտին մէջ լեզուին խառնուեցաւ, միայն հայ-
աստանու բնակիչներուն լեզուն՝ որոնք տեղեր-
նէն չէին շարժած՝ մնաց առջի լեզուին՝ առանց
խառնուելու: Այսչափէն յայտնի կրնանք գուշա-
կել որ երբոր հայկ նահապետը հայաստանէն ել-
լուան վրայ զղջալով նորէն ետ դարձաւ, ինչպէս

որ չախորժեցաւ ուրիշ տեղուանքէն ու իր առջի բնակութիւնը եկաւ, ասանկ ալ չախորժելով իր աւրուած լեզուէն, և տեսնելով որ բոլոր առջի բնակիչները իրենց առջի լեզունին կը խօսէին, ինքն ալ նորէն սկսաւ հայերէն լեզուով խօսիլ. մէյով՝ իրեն հօրը լեզուով խօսելու փափաքով, մէյով՝ ալ որպէս զի շահի բնակիչներուն սիրտը ու տիրէ անոնց վրայ, որոնք բնական կերպով կ'ատէին անանկ նորելուկ լեզու մը որ պատժոյ համար Աստուած աուեր էր: Աս պատմութիւնը չը գիտնալով Եւրոպացիք, և չկրնալով ալ ուրիշ ազգի մը աս առջի լեզուն յարմարցընել մէկ կերպով մը, ընդհանրապէս կը կարծեն թէ Եւրոպացւոց լեզուն եղած ըլլայ. բայց յայտնի է որ կը սխալին:

Հ. Սեմ, Քամ, Յարէթ մէջերնին ինչպէս բաժնեցին երկիրը.

Պ. Աստուածաշունչին մէջի ազգերուն անունները աշխարհքներուն անուններուն նմանցընելով կրնայ ըսուիլ թէ Յարէթին որդիքը Եւրոպա ու փոքր Ասիա բնակեցան. Սեմայ որդիքը Ասիայի մէջ արևելեան կողմերը. Քամայ որդիքը Աֆրիկէ, Փիւնիկէ ու Պաղեստին:

Ն Ա. Հ Ա. Պ Ե Տ Ա Յ Դ Ա Ր Ը

ԻՆՉՈՒԱՆ ԵԳԻՊՏՈՍԷ ԵԼԼԵԼՆԻՆ

11

Հայր Արքանաւոր Ղուկասյ հետ ըրած
գործքերը .

Հ . Ինչո՞ւ համար Աստուած կանչեց Աբրահա-
մը , և ան ալ ո՞ւր գնաց .

Պ . Աբրահամու հաւատարմութեանը համար
ուզեց Աստուած որ զատ ազգ ընէ զինքը . ուստի
երբոր Աբրահամ եօթանասուներհինգ տարուան
էր , Աստուծոյ հրամանովը ելաւ Խառանէն՝ Ղովան
ալ հետը եկաւ Քանանացւոց երկիրը ինչուան
Սիւքեմ՝ բարձր կաղնի ծառին քովը . հոն Աս-
տուած երեւցաւ ու ըսաւ թէ քու զաւկըներուդ
պիտի տամ առ երկիրներս . անկէ ելաւ Բեթէլ
գնաց , անկէ ալ անաստա : Ան ատենները սաս-
տիկ սով եղաւ Քանանացւոց երկիրը . անոր հա-
մար ելաւ գնաց Աբրահամ Եգիպտոս :

Հ . Աբրահամ Եգիպտոսի մէջ ո՞րչափ ատեն
կեցաւ .

Պ . Քիչ կեցաւ . վասն զի ինքը վախնալով որ
չըլլայ թէ Սարային համար զինքը մեռցնեն , ով որ
կը հարցնէր՝ քոյրս է կ'ըսէր . անոր համար Փա-

բաւանը զՍարան իրեն կին առաւ, և սա բանիս
համար Աստուծմէ սասաիկ պատժուեցաւ: Ան
ասենը իմացաւ Փարաւոն Աբրահամու ըրած խա-
րէութիւնը, ու իրեն շատ ընծաներ ալ առաւ
առջի սոււածներէն զատ, ու ըսաւ որ Առիւտին
հետ մէկ տեղ ելլեն երթան:

Հ. Աբրահամ երբոր Եգիպտոսէն ելաւ Առիւ-
տայ հետ ուր գնաց.

Պ. Բարձաւ առջի անապատը Բեթէլի մօտ՝
ուր որ առաջ Աստուծոյ սեղան շիներ էր. բայց
որովհետեւ բաներնին խիստ շապցեր էր, մէկտեղ
չէին կրնար կենալ, անով կախ ալ կ'ըլլար Աբրա-
համու ու Առիւտայ հովիւներուն մէջ. անոր հա-
մար Աբրահամու խորհրդովք բաժնուեցան մէկմէ-
կէ, ու Առիւտ Յորդանան գետին կողմերուն աղէ-
կութեանը համար Սոդոմ քաղաքը գնաց նստե-
ցաւ, ուր որ գերի բանուեցաւ: Եւ Աբրահամու
ըսաւ Աստուած որ ելլէ պարտի բոլոր Բանանա-
ցոյ երկիրը՝ որ իրեն տալ կ'ուզէ. Աբրահամ ալ
ելաւ գնաց Քեբրոնի մէջ Մամբրէի կաղնի ծառին
քով բնակեցաւ ու հոն Աստուծոյ սեղան շինեց:

Հ. Առիւտ ինչ պատճառաւ գերի գնաց Սոդոմ
քաղաքէն, և ինչպէս ազատեցաւ.

Պ. Ան ասանները չորս թագաւոր մէկ եղած՝
հինգ թագաւորի դէմ պատերազմ բացին Աղաից
ձորին մէջ, ու Սոդոմացիք յաղթուեցան և թա-
գաւորնին նաւթի ջրհորի մէջ պահուրտեցաւ.
Թշնամիները Առիւտն ալ առին գերի տարին: Եր-
բոր ըսեց Աբրահամ, իրէք հարիւր տասներու թը
հոգի իր ծառաները առաւ գնաց, վաղեց թշնամի-
ներուն վրայ՝ զարկաւ, ազատեց զԱռիւտ իր ամէն
բաներովք և ժողովուրդն ալ մէկտեղ: Ան ասին
Սոդոմայ թագաւորը շնորհակալ եղաւ Աբրահա-
մին ու կ'ուզէր աւարը իրեն թողուլ. յանձն չա-
ռաւ Աբրահամ ու ըսաւ, չըլլայ որ ըսես թէ ես

հարստացուցի զԱբրահամ, վասն զի ինքը բոլորովին Աստուծոյ ապաւինած էր: Եւ Մելքիսեդեկ Սաղեմոյ Թագաւորն ալ որովհետեւ քահանայ Աստուծոյ էր՝ օրհնեց զԱբրահամ. Աբրահամ ալ առած բաներէն անոր տասանորդ տուաւ:

12

Արրաւանու: գործքերը Ղովտը գերաւորեն
դարձրենէն իսկ.

Հ. Աբրահամ իր բոլոր յոյսը Աստուծոյ վրայ դրած ըլլալուն համար Աստուծակէ ինչ վարձք ընդունեցաւ.

Պ. Աստուած տեսիլքով իրեն խոստացաւ որ ինքը վերահացու ըլլայ անոր, ու երկնքի աստղերուն չափ իրեն որդիքը շատցընէ: և աս խոստմունքներուս կատարուելուն նշան՝ հրաման տուաւ Աստուած որ Աբրահամ մէկ զոհ մը ընէ, ան զոհը ընելու ատեն ասաւոր կերպով մը իմացուց իրեն ետքի ըլլալեքները:

Հ. Սարային ամուլ ըլլալուն համար Աբրահամ չէր տարակուսէր Աստուծոյ խոստմունքներուն վրայ.

Պ. Ոչ երբէք, վասն զի ինքը կը հաւատար կատարեալ սրտով որ Աստուած իր ուղածը կ'ընէ՝ առանց իմացընելու ատենը և ինչպէս ընելէքը, և կը սպասէր կատարուելուն. Թէպէտ և ինչուան ան ատենը դեռ աղայ ջունէր, որովհետեւ Սարա ամուլ էր: Բայց Սարային ուղեւորը Ագար աղախինէն աղայ մը ունեցաւ Իսմայէլ անունով: Աս Ագարը դեռ աղան չճեամ՝ սկսաւ հպարտանալ Սարային վրայ. Սարան ալ սկսաւ Ագարը նեղը խոթել, ան ալ առջինին պէս հնարանդելու տեղ

ելաւ փախաւ • բայց Աստուած ճամբէն ետ դարձուց զինքը՝ որ երթայ հնազանդի Սարային : Երբոր տասուիրեք տարուան էր Իսմայէլ, Աստուած յայտնեց Աբրահամու որ Սարայէն տղայ մը ունենայ՝ որուն պիտի տայ ան խոստացած երկիրները • իր Աբրամ անունն ալ Աբրահամ կոչուի ըսաւ, Սարան ալ՝ Սարրա • և իրեն Աստուծոյ ժողովուրդ ըլլալուն նշան տուաւ թլփատութիւնը :

Հ • Զովոր գերութենէն ազատելէն ետքը միշտ Սողոմայ մէջ բնակեցաւ •

Պ • Չէ • վասն զի Սողոմ քաղաքը քիչ ատենէն կործանեցաւ :

Հ • Ինչո՞ւ համար Սողոմ կործանեցաւ •

Պ • Սողոմացւոց մեղքերուն շատութեանը համար : Բայց ուզելով Աստուած իրեն անչափ ողորմութիւնը խնայունել մեզի, որ մը ցորեկը երբոր Աբրահամ իր տանը դրան առջև նստեր էր, իրեք հոգի կ'անցնէին ան ճամբէն • անանելուն պէս Աբրահամ դիմացնին ելաւ • հանդէպուց զիրենք, ոտուրնին լուաց ու կերակուր հանեց • անոնք ալ պատմեցին իրեն թէ Սարրան գալ տարի առ օրս տղայ կ'ունենայ : Սարրա դրան ետեւէն լսեց ու ծիծաղեցաւ իննսուն տարուան պառաւ ըլլալուն համար : Ետքը երբոր ելան որ երթան, պատմեցին Աբրահամու թէ Սողոմը կործանելու կ'երթան • Աբրահամ լաածին պէս, գութը շարժեցաւ ու աղաչեց որ յիսուն արդար թէ որ մէջը դանուի՝ չկործանեն • երբոր մտիկ ըրին աղաչանքին՝ կամաց կամաց արդարներուն համրանքը քիչցուց, ինչուան խօսք առաւ որ տասը արդար թէ որ դրանուի՝ ազատեն քաղաքը • բայց չգանուեցաւ :

Սոգոմ Գոմարայ կործանումը .

Տ. Ի՞նչ կերպով կործանեցին հրեշտակները Սոգոմ ու Գոմար քաղաքները .

Պ. Երկու հրեշտակ իրիկուան դէմ մտան քաղաքը՝ Ղովտայ դրան առջևէն կ'անցնէին . Ղովտանեամիսն պէս՝ շատ աղաչանքով ներս հրամայուց զանոնք՝ երկու օտարական մարդ կարծելով, որ տուրնին լուաց ու կերակուր հանեց : Քիչ մը անցաւ, եկան քաղաքացիքը կ'ուղէին Ղովտէն ան օտարականները որ չարչարեն . Ղովտ չառուաւ : Երբոր շատ նեղը խոթեցին, ձեռքերնէն ազատելու համար՝ անոնց տեղը խոստացաւ տալու իրեն երկու աղջկները . բայց անոնք իրենց ուղածէն ետ չէին կենար : Ան ասեն հրեշտակները զՂովտ ներս քաշեցին, ու ասնը դուռը կորսնցընել տրւին որ կը փնտրուէին ու չէին գտներ : Ետքը Ղովտայ հասկըցուցին հրեշտակները իրենց ինչ բանի համար եկածնին, ըսին որ իրեն նշանած փեսաներուն ալ խնայընէ որ մէկտեղ դան . բայց անոնք երբոր լսեցին՝ ծիծաղեցան Ղովտայ դիւրահաւանութեանը վրայ ու տեղերնէն չչարժեցան : Երբոր առաւօտ եղաւ՝ առին Ղովտը, կինը ու երկու աղջկները, քաղքէն դուրս հանեցին ու ապաստեցին որ չըլլայ թէ դառնան ետեւին նային, տեղ մըն ալ չկեցած շիտակ լեռը ելլեն : Արևը ծագելուն պէս սկսաւ սաստիկ կրակով խառնած ծծումբէ անձրև դալ Սոգոմ Գոմարայ վրայ : Ղովտայ կինն ալ Աստուծոյ հրամանին դէմ ընելով ետեւ նայեցաւ ու մէկէն աղէ արձան կորեցաւ : Ղովտ վախնալով որ չըլլայ թէ դեռ լեռը չհասած կրակը

հասնի իրեն, ուղեց որ մօտ քաղաքներուն մէկը
փախչի. հրեշտակներն ալ իրեն ուղեւուն համար
հոն ասորին ղկնքը. ասով ազատ մնաց ան քաղաքը
աս պատժէն, և անոր համար անունը Սեգովը ը-
սուեցաւ: Ահա ասանկով չորս քաղաք մէկտեղ
երկնքէ թափած կրակով մօխիր դարձան իրենց
մեղքերուն համար:

Հ. Աովա Սեգովը քաղաքը սրչափ ատեն կե-
ցաւ.

Պ. Խիստ քիչ. վասն զի սրտին վախէն մէկէն
անկէ ալ ելաւ դնաց մօտ անդ այրի մը մէջ բնա-
կեցաւ: Աովա երկու որդիք ունեցաւ, Մովաք և
Ամն. ասոնցմէ եղան Մովաբայիք և Ամնայիք:
Հոս կը ըմբնայ Աովայ վրայ եղած պատմու-
թիւնը:

Հ. Հայրն Աբրահամ ինչպէս իմացաւ Սողո-
մայ այրիը, ու անկէ ետքը ինչ ըրաւ.

Պ. Առաւօտանց նայեցաւ դէպ ՚ի Սողոմ Գո-
մոր, տեսաւ որ ծուխը երկինքը պատեր էր՝ ցաւե-
ցաւ: Ետքը ելաւ դնաց դէպ ՚ի հարաւ՝ Գերարայ
ըսուած տեղը, ու հոն Սառային համար ամէն
հարցընողին՝ քոյրս է կ'ըսէր: Անոր համար Աբի-
մեւէլք ան անդին թագաւորը՝ Սառան իրեն կին
առնել ուղեց. բայց Աստուած տեսիլքով երեցաւ
անոր ու ասըսարեց որ չդպչի Աբրահամին կնոջը:
Ան ալ կանչեց զԱբրահամ, գանգատեցաւ սուս
զուրկելուն վրայ, ու շատ պարզենէր տալով թո-
ղուց՝ որ ուր կ'ուղեն երթան: Բայց երթալէն ա-
ռաջ Աբրահամ աղօթք ըրաւ Աբիմեւէլքայ համար
ու ազատեց Աստուծոյ առած պատժէն, որ ի-
րեն պատճառաւ Աբիմեւէլքայ մարդիկներէն մէ-
կու մ' ալ աղայ չէր ըլլար:

Խասնակ .

Հ . Սառան որդի ունեցաւ .

Պ . Երբոր հասաւ Աստուծոյ խոստացած աւաներ տղայ մը ունեցաւ և անունը դրաւ Իսահակ , և կաթէն կտրած օրը մեծ ուրախութիւն ըրաւ Աբրահամ :

Հ . Իսահակ Սառային հարազատ տղան ըլլալով , Իսմայէլին մնաս մը եղաւ .

Պ . Իսահակայ պատճառաւ Իսմայէլ սկսաւ արհամարհուիլ՝ չէ թէ խորթ որդի ըլլալուն համար , հասաւ որովհետեւ Իսահակայ հետ կ'իյնար , անոր դէշ օրինակ կուտար . անոր համար Սառան ուզեց որ հետացընէ զԻսմայէլ իր քովէն : Եւ թէպէտ Աբրահամ չէր ուզէր , բայց Աստուած խնայուց Աբրահամու որ Սառային ուզածը տղէկ բան է : Ան ստանը մէկէն Աբրահամ հնազանդեցաւ Սառային խօսքին : Ելաւ աւաւտանց հաց և ջուր տուաւ Ագարայ , տղան ալ հետը ճամբայ դրաւ : Ագար ճամբան կորսնցուցած՝ երգման ջրհորին քովերը կը պտրտէր , ինչուան ջուրն ալ հատաւ . ինքն ալ յուսահատած՝ թողուց տղան մէկ ծառի մը տակ , ու դնաց քիչ մը հեռու նստեցաւ՝ որ չտեսնէ աղուն մեռնիլը : Աստուած լսեց աղուն լալու ձայնը , ու ջուր բղխեցուց ան տեղուանքէն , և խոստացաւ ալ որ մեծ աղգ ընէ զԻսմայէլ :

Հ . Երգման ջրհորը ուր տեղուանք կ'իյնայ .

Պ . Գերարայ Փղապցոյ երկերը՝ Աբիմեղէքին թագաւորութեան տակը : Աս ջրհորը Աբրահամ բացեր էր ու Աբիմեղէքին մարդիկը ատեր էին ձեռքէն : Երբոր Աբիմեղէք նորէն դաշինք դրաւ

Աբրահամու հետ, սա ջրհորն ալ նորէն ետ ար-
ւաւ, անմեղադիր ընելով ինքզինքը թէ չէր խմա-
ցած: Աբրահամ ալ ծառեր անկեց ան ջրհորին
քովերը, ու հան Աստուծոյ աղօթք կ'ընէր:

Հ. Աբրահամ զԻսմայէլ դուրս ընելէն ետև ալ
ուրիշ վիշա չքաշէց Իսահակայ պատճառաւ:

Պ. Երբոր բոլորովին հանդասութեան մէջ կը
կարծէր ինքզինքը՝ տեսնելով որ իր վրայ կը կա-
տարուի Աստուծոյ խոստումը, յանկարծ մէկ գի-
շեր մը ցաւալի դիպուած մը հանդիպեցաւ: Հրա-
ման առաւ Աստուած Աբրահամու որ Իսահակը
ողջակէզ ընէ: Աբրահամ բնաւ չտարակուսեցաւ,
առաւօտ կանուխ ելաւ, փայտ կտարեց, էշով մը
և երկու ծառայով ճամբայ ելաւ գնաց իրէք օր
հետև. ու երբոր տեսաւ Աստուծոյ ցրցուցած
տեղը, ծառաները թողուց, փայտերը շալկեցուց
Իսահակայ կանակը, ինքն ալ կրակ և դանակ ա-
ռաւ ու գնացին. տղան տարակուսած կը հարցը-
նէր թէ ո՞ւր է ողջակէզ ընելու ոչխարը. Աստուած
պատրաստած է՝ ըսաւ Աբրահամ: Երբոր հա-
սան տեղը, կապեց զԻսահակ, քաշեց դանակը,
կ'ուզէր մորթել. Կեցիր, ըսաւ Աստուած. ու
Սարեկայ ծառին վրայէն կախուած ոչխար մը ցը-
ցուց անոր տեղը՝ որ ողջակէզ ըրաւ: Աստուած
ալ օրհնեց զԱբրահամ ասանկ միամիտ հնազան-
դութեանը համար:

Սառայի մանր, Իսահակայ կարգուիլը.

Հ. Ա՛ւր տեղ և քանի տարուան մեռաւ Սառա.

Պ. Քեբրոնի մէջ Քանանացւոց երկիրը հարիւր
քսանընթեք տարուան:

Հ • Ո՛ւր թաղեցաւ Սառա •

Պ • Քերթոն Քանանացւոյ երկիրը Մամբրէին գիմացը երկու այրին մեկուն մէջ, որն որ Աբրահամ գիմացի ազարակովը մեկտեղ գնեց չորս հարիւր սասերի Սահառ քետացիին տղուն Եփրոնին ձեռքէն : Աստուածաշունչը կանանց մէջէն միայն Սառային տարիքը, մեռնիլը ու թաղուիլը կը յիշէ՝ եկեղեցւոյ օրինակ ըլլալուն համար • Ինչպէս Իսահակ ալ Քրիստոսի օրինակ էր :

Հ • Իսահակ երբ կարգուեցաւ, և ի՛նչպէս •

Պ • Սառային մեռնելէն իրէք տարի ետքը : Տեսնելով Աբրահամ որ ինքն ալ ծերացած է՝ հարիւր քառասուն տարուան, կանչեց զԵղիազար՝ իրեն հաւատարիմ ծառան, ու երգում ընել տալով որ քետացի կին չառնէ իրեն որդւոյն, տասը ուղտով, շատ ընծաներով, ոսկիէ արծրթէ զարդերով խրկեց որ երթայ իր հայրենիքը՝ Միջագետքէն Իսահակայ կին առնէ ու բերէ : Երբոր անիկայ տարակոյս կը հանէր թէ չգալու ըլլայ նէ՛ ի՛նչ ընեմ, Աբրահամ հաստատուն յուսով ըսաւ, թէ Աստուծոյ հրեշտակը կ'առաջնորդէ քեզի • բայց թէ որ չգայ, ազատ ըլլաս երգումէդ : Գնաց Եղիազար Նաքովրայ քաղքին դուրսի դին ջրհորին քովը նստաւ : Ազաչեց Աստուծոյ որ երբ քաղքէն կուգան աղջիկները սամիրներով ջուր առնելու, ո՛ր աղջիկն որ ընտրուած է աս բանիս՝ Եղիազար թէ որ խմելու ջուր ուզէ անկէ՛ անիկայ ինքիւրեն ուղտերուն ալ խմցընէ : Աս բանս մտածելու ատեն եկաւ Ռեբեկա Աբրահամու եղբորը՝ Նաքովրայ տղուն Բաթուելին աղջիկը, ու Եղիազարայ խօսք դրածին պէս ըրաւ : Ան ատեն Եղիազար հարցուց իմացաւ ո՞վ ըլլալը, ու հանեց ձեռուրները ոսկիէ ապարանջաններ դրաւ, ականջներն ալ ոսկիէ օղեր անցուց : Երբոր Լաբան տեսաւ անոնք ու լսեց եղածը, եկաւ ատեն հրամ-

ցուց • ուղտերուն խոտ առաւ, իրենց ալ սասը-
նին լուաց ու կերակուր հանեց • բայց Եղիազար
չուզեց ուտել ինչուան որ խօսքը չկապեն : Ետքը
պատմեց եղած դիպուածը • անոնք ալ Աստուծոյ
բանն է առ ըսելով մէկէն հաւանեցան : Եղիազարն
ալ ան առենը հանեց ոսկիէ արծրժէ ամաններ ու
լաժեր և ընծայ առաւ Բաժուէլի, Ռեբեկային
մօրը, Լարանայ եղբօրը ու իրեն • և ասանկով կե-
րան խմեցին ու հանգչեցան : Առաւօտը մէկէն եր-
թալ կ'ուզէր Եղիազար • անոնք ստիպեցին որ տա-
սը օր ալ կենայ աղջիկը • ետքը խօսքը որոշելու
համար Ռեբեկային հարցուցին, և անոր ուզելովը
մէկէն բաժնուեցան դնացին Ռեբեկա և իր աղա-
խիմները ուղտերու վրայ նստած : Երբոր մօտեցան
Տեպեան ջրհոր ըսուած տեղին, ան առենը Իսա-
հակ ելեր դաշտին մէջ կը պարտէր • մէկզմէկ տեսան
հեռուէն, և Ռեբեկա երբոր խնայաւ թէ դէպ 'ի
իրենց եկողը Իսահակն է, վրան լաժ առաւ՝ վար
իջաւ, ու անանկ դնաց : Ասանկով Իսահակը երբ
քառասուն տարուան էր՝ իրեն կին առաւ զՌե-
բեկա, ու մօրը մահուան սուգն ալ սրտէն փարա-
տեցաւ :

Աբրահամն ու մանր, և Իսահակայ աղօթքով
տղայ ունենալը .

Հ • Իսահակայ կարգուելէն ետքը Աբրահամ
որչափ ատեն ապրեցաւ .

Պ • Երեսունըջինգ տարի • և առ միջոցիս մէջ
Քեառերա անունով կին մը առաւ, և անկէ վեց
որդի ալ ունեցաւ ծերացած ատենը Աստուծոյ
մասնաւոր խնամքով, բայց չթողուց անոնց որ Ի-

սահակայ հետ իրեն ժամանոյ ըլլան . մեռնելէն
առաջ անոնց մէյմէկ քիչ բան սուաւ ու ճամբեց :
Ինքը մեռաւ հարիւր եօթանասուներհինգ տա-
րուան , և Իսահակ ու Իսմայէլ մէկտեղ թաղեցին
Սառային քովի այրին մէջ , Մամբրէի կապնի ծա-
ռին դիմացը :

Հ . Իսահակ ո՛ւր կը բնակէր .

Պ . Քանանացւոց երկիրը Աբրահամու կեցած
տեղը , ինչուան որ մեծ սովի մը սրաճառաւ ելաւ
ճամբայ Եգիպտոս երթալու համար : Բայց Աս-
տուած արգելեց որ ան երկրէն դուրս չելլէ , որն
որ իր հօրը խոստացեր էր ու իրենց կ'ուզէր տալ :
Անոր համար գնաց Գերարայ Փղշտացւոց Աբիմե-
լէք թագաւորին քով . հոն երկար ատեն կենալէն
ետքը՝ դարձաւ նորէն առջի տեղը :

Հ . Իսահակ Փղշտացւոց երկրին մէջ ի՞նչ նե-
ղութիւն քաշեց .

Պ . Առջի նեղութիւնը եղաւ իր սրտադողը որ
քաշեց Ռեբեկայի համար . ուստի ամէն հարցնու-
ղին քոյրս է կ'ըսէր . բայց Աբիմելէք գիպուածով
խնայաւ ու նեղացաւ Իսահակայ երկդիմի խօսքին
վրայ , և ապապրեց ամենուն որ գիտնան , ու չըլ-
լայ թէ ինչա՞ս մը հասցրնեն անոնց : Ատեն անցաւ
շաա հարրսացաւ Իսահակ . սկսան նախանձիլ
Փղշտացիները , ու Իսահակայ հօրը փորած ջրհոր-
ները ամէնն ալ լեցուցին . ետքը Իսահակ նորէն
բացաւ : Աս բաներուս համար Աբիմելէք ալ Իսա-
հակայ ըսաւ որ ելլէ երթայ ան տեղէն :

Հ . Իսահակ Աբիմելէքին քովէն երթալէն ետև
ի՞նչ մասնաւոր գործք ունի յիշուած .

Պ . Գերարայի ձորին մէջ՝ ուր որ կը բնակէր ,
ջրհոր մը բացաւ ինքիրեն բխած ջրոյ , ու անունը
դրաւ Զրհամն , անոր համար որ Գերարայի հովիւ-
ները կռիւ կ'ընէին՝ ան ջրհորը մերն է ըսելով :
Ուրիշ ջրհոր մըն ալ բացաւ , անուանեց Թանանա-

Բիան նորէն կախ ընկնուն համար . ուրիշ մըն ալ բացաւ ու անուանեց Անդորրո-Ռիան , որուն համար կախ չեղաւ : Ետքը քնաց Երդման ջրհորին քով . հոն Աստուծոյ սեղան շինեց , զոր ըրաւ , ու օրհնուեցաւ Աստուծմէ : Հոն ալ ջրհոր մը փորեց ու ջուր չեղարուն համար անունը Երդոմ գրաւ : Աս ատեններս եկաւ իրեն քով Աբիմեղէք թագաւորը , Ոքողաթ ու Փիքող իրեն իշխաններով մէկտեղ դաշինք դնելու : Իսահակ անոնց սեղան ըրաւ ու մէկտեղ բարեկամութեան ուխտ ըրին գնացին :

Յակոբ , Եսաւ .

Հ . Իսահակ կարգուելուն պէս տղայ ունեցաւ .

Պ . Ռեբեկա ամուլ ըլլալուն համար քսան տարի ետքը ազաչելով Աստուծմէ երկուորեակ տղաք ունեցաւ . որոնք երկու ազգ կը նշանակէին ու մեծը պղտիկին պիտի ծառայէր : Եսաւ էր մեծը՝ մազոտ թխադոյն և բնութիւնը խիստ , և պղտիկը Յակոբ՝ հեղաձօգի :

Հ . Եսաւայ ու Յակոբայ բնաւորութիւննին ինչ օգուտ կամ փնտս հասուցին իրենց .

Պ . Եսաւ տաքզուխ կտրիճ մը ըլլալով , անգրանկութենէն և հօրը օրհնութենէն զրկուեցաւ . Յակոբ հանգարտ մտածող ընտանի բարք ունենալուն՝ ամէն բանի մէջ յաջողութիւն գտաւ :

Հ . Եսաւ ինչպէս անգրանկութիւնը կորսընցուց .

Պ . Օր մը Յակոբ ստակ տալուր եփեր էր . Եսաւ սաստիկ անօթի դաշտէն գարձած տեսաւ ,

ուղեց : Յակոբ ալ ըսաւ . « Թէ որ անգրանկու-
թիւնդ ինձի տաս , կեր » : Եսաւ մէկէն առանց ա-
ռաջը ետեր մտածելու « Անգրանկութենէն ի՞նչ
կ'ելլէ՝ քեզի ըլլայ » , ըսաւ : Յակոբ երգում ու-
ղեց : Եսաւ մէկէն երգում ալ ըրաւ ու նստաւ կե-
րաւ խմեց ու գնաց : Անոր համար Եսաւ Եղով
ըսուեցաւ :

Հ . Իսահակ հաւանեցաւ Յակոբայ ու Եսաւայ
ըրած անգրանկութեան փոփոխութեանը .

Պ . Ինքը չիմանալով անգրանկութեան օրհնու-
թիւնն ալ Յակոբայ տուաւ . վասն զի Եսաւ որ-
սորդ ըլլալով երբեմն երբեմն աղէկ որսեր կ'ընէր
ու կը կերցնէր հօրը . անոր համար Իսահակն ալ
Եսաւը կը սիրէր : Իսկ Ռեբեկա մայրերնին ալ Յա-
կոբը կը սիրէր : Իսահակ երբոր շատ ծերացաւ՝ ու-
ղեց որ զԵսաւ օրհնէ . կանչեց ըսաւ որ երթայ մէկ
աղէկ որս մը ընէ եփէ ու բերէ , որ ինքն ուտէ ու
եաքի օրհնութիւնը տայ իրեն : Մէկէն որսալու
գնաց Եսաւ : Իմացաւ բանը Ռեբեկա . խրկեց ըզ-
Յակոբ որ շուտ մը դաշտէն երկու գիրուկ ուլ բե-
րէ , որ ինքը եփէ ու տայ իրեն որ տանի ու օրհնու-
թիւնը ինքն աւնու . Յակոբ սկսաւ վախնալ թէ
չըլլայ որ խնացուի ու ինքը անէծք առնէ օրհնու-
թեան տեղը . մայրը « Իմ վրաս ըլլայ , ըսաւ , ա-
նէծքը , դու խօսքիս մտիկ ըրէ » : Երբոր գնաց բե-
րաւ , Ռեբեկա եփեց շուտ մը . Եսաւայ նոր զգեստն
որ իր քովը սլահէր էր անոր հագցուց . ուլին
մօրթն ալ թնկրունն ու վզին վրայ յարմարցուց ,
ձեռքը տուաւ կերակուրը որ տանի : Իսահակ ձայ-
նը լսածին պէս սկսաւ տարակուսիլ , հարցընել
զարմանալով թէ ի՞նչ շուտ բերաւ . քովը կան-
չեց , ձեռուրները բռնեց նայեցաւ . մինակ ձայնը
ձանձցաւ թէ Յակոբայ էր . բայց երբոր մօտե-
ցաւ՝ Եսաւայ լսթերուն հօտը առաւ . ու առանց
տարակուսի անգրանկութեան օրհնութիւնը աը-

լաւ՝ շատ խորհրդաւոր խօսքերով, և թէ եղբօրը վրայ իշխէ : Ասանկով ելաւ գնաց Յակոբ : Ետեւէն Եսաւ ալ բերաւ իրեն բռնած որսը . աս բանիս վրայ խիստ զարմացաւ Իսահակ, հարցուց իմացաւ, բայց Ասաուծոյ մասնաւոր խնամքովը՝ որով արդարացի խաբէութիւնը առաջ գնաց, տըւած օրհնութիւնը ալ աւելի հաստատեց : Ան առտենը տեսնելով Եսաւ որ անդրանկութեան հետ օրհնութիւնն ալ կորսընցուց, սկսաւ լալ ու խընդրել որ զինքն ալ օրհնէ : Իսահակ չուզեց օրհնել . երբոր խիստ շատ թախանձեց՝ ան առենը մէկ քանի խօսք ալ իրեն ըսաւ : Եսաւ երկու անգամ խաբուելուն համար սասաիկ ոխ սրահեց Յակոբայ դէմ՝ ու կը սպասէր Իսահակայ մահուանը՝ որ զինքն ալ մեռցընէ :

Յակոբայ կրթալը Լաբանայ քով .

Հ. Յակոբ անդրանկութեան օրհնութիւնը առնելէն ետքը Եսաւայ հետ ի՛նչպէս վարուեցաւ .

Պ. Ռեբեկա խնամաւորով Եսաւայ միաքը՝ ուզեց զՅակոբը հեռացընել : Եւ որովհետեւ Եսաւ երկու կին առեր էր քետացի և խեւացի, որոնք շատ նեղութիւն կուտային իրեն ու Իսահակայ, աս պատրուակաւ գնաց աղաչեց Իսահակայ որ Յակոբ երթայ Միջագետք Խառան, ու հոն կարգուի : Յակոբն ալ յորդորեց որ երթայ Լաբանայ իրեն եղբօրը քով հեռանայ Եսաւէն : Ան առեն Իսահակ կանչեց զՅակոբ, օրհնեց նորէն ու Խառան խրկեց :

Հ. Եսաւ երբոր լսեց Յակոբայ Խառան երթալը՝ ինչ ըրաւ .

Պ. Իմացաւ որ իր ծնողքը չեն ուզեր Քանաւորացոց հետ խնամութիւն ընել, դնաց նոր կին մ' ալ առաւ Իսմայելի մէկ աղջիկը :

Հ. Յակոբայ Խառան երթալու ատեն նոր բան մը հանդիպեցաւ .

Պ. Ճամբան գիշերը վրայ հասնելով, առաքար մը իրեն բարձ ըրաւ ու պառկեցաւ : Քնոյն մէջ կը տեսնէր ասնդուխ մը կեցուցած գեանէն ինչուան երկինք, որուն վրայ հրեշտակները կ'ելլէին ու կ'իջնէին . ծայրն ալ Աստուած կեցած՝ Աբրահամու ըրած խոստումները կը հաստատէր : Ասիցաւ Յակոբ, ու ելաւ ան բարձ ըրած քարը անկեց՝ ձէթով օծեց . ու ան տեղին անունը Բեթել այսինքն Տան Աստուծոյ դրաւ . խոստացաւ որ եթէ ողջ դառնայ, ամէն ունեցածէն տասնորդ տայ :

Հ. Յակոբ ինչ տեսակ մարդասիրութիւն գըտաւ Լաբանէն .

Պ. Երբոր Խառանին գիտաց Ջոհորի մը քով մօտեցաւ Յակոբ, տեսաւ հան հովիւներ որ կը սպասէին Ջոհորին բերնին քարը վերցընելու, ոչխարներուն խմցընելու համար . երբոր սկսաւ հարցընել անոնց, Ռաքէլ Լաբանայ աղջիկը վրայ հասաւ հօրը ոչխարներով . Յակոբ վերցուց քարը ու խմցուց անոր ոչխարներուն, ետքը պագտուեցաւ ու լացաւ : Գնաց Ռաքէլ պատմեց հօրը, ան ալ եկաւ առն հրամցուց : Երբոր իմացաւ որ կ'ուզէ երկար ատեն հան կենալ, ամիսի մը չամի անցնելէն ետեւ, « Չեմ ուզեր որ, ըսաւ Լաբան, առանց վարձուց աշխատիս ինձի . որովհետեւ աղգականա ես » : Յակոբ ալ եօթը տարուան աշխատանքին փոխարէն Ռաքէլը ուզեց : Հասաւ օրը, հարսնիք ըրին, ու գիշերը մութ տեղը Լիա մէկալ մեծ աղ-

ջիկը տուեր էր. և Չելփա իր աղախինն ալ անոր նաժիշտ : Առաւօտանց երբոր խնացուեցաւ խաբէութիւնը, Լարան տուտ պատճառ բերաւ թէ ան երկիրը սովորութիւն չէ կարգել պղախկը մեծէն առաջ : Ուստի եօթը տարի ալ Ռաքելն համար ծառայեց ու առաւ. որուն նաժիշտ ալ արւաւ Բալլան :

Հ. Յակոբ քանի՜ աղայ ունեցաւ Խառանի մէջ .

Պ. Տանըմէկ մանչ ու մէկ աղջիկ : Որովհետեւ Լիա այնչափ սիրելի չէր Յակոբայ, Աստուած դժացաւ անոր ու տուաւ վեց մանչ. Ռուբէն, Շմաւոն, Ղևի, Յուդա, Իսաքար և Զաբուդոն . մէկ աղջիկ մ'ալ Դինա : Ռաքելն ալ շատ արբամած ըլլալով իր ամուլ ըլլալուն համար, Բալլա աղախինը տուաւ Յակոբայ, ուսկից ունեցաւ Գանը ու Նեփթաղիմը : Լիան ալ իր աղախինը արւաւ և ունեցաւ Գադը ու Ասերը : Ամենէն ետքը ընելով Աստուած Ռաքելին աղաչանքին, տուաւ իրեն Յովսէփը :

Յակոբայ Լարանէն բաժնուշիր .

Հ. Յակոբ Լարանայ քով բոլոր սրչափ ատեն կեցաւ .

Պ. Քան տարի . վասն զի տանըջորս տարիէն Ռաքելը առնելէն ետքը երբոր Յակոբ ուզեց երթալ, Լարան ըսաւ թէ « Գու գալովդ խմ տունս օրհնուեցաւ, կեցիր հոս և ինչ վարձք որ կ'ուզես քեզի տամ » : Ան տակնը Յակոբ, « Այսչափ ատեն բան մը ինձի չես տուած, ըսաւ . թէ որ կ'ուզես կենամ, միայն հօտին մէջէն ամէն խառու-

տիկ ոչխարները միշտ խնս ըլլան » : Հաւանեցաւ
Լաբանն ու մէկէն զատեց բոլոր ճերմակներն , ու
իրեն տղոցը ձեռքը տուաւ որ իրեք օրուան ճամ-
բայ հեռու արածեն , որպէս զի Յակոբ ճերմակ-
ներուն ծնած խատուախիկներն ալ չառնէ : Տեսաւ
Յակոբ որ Լաբանն խարդախութիւն կ'ընէ , ինքն
ալ Աստուծակէ խրատուած՝ ծառի դալար ճիւղեր
տուաւ , որոնց վրայի կանաչները տեղ տեղ կեղևե-
լով գոյնզգոյն կ'երևնար . անոնք ոչխարները ջուր
խմելու ատեն աւազանին մէջ կը դնէր որ տեսնե-
լով կը խրաէին ու խատուախիկ կը ծնանէին , ինքն
ալ անոնք բոլոր մէկդի կը զատէր . և վեց տարուան
մէջ Յակոբ այնչափ հարստացաւ որ Լաբանն սկսաւ
վրան նախանձիլ ու ծուռ նայիլ : Օր մը Յակոբ
խնացուց Լիային ու Ռաքելին իրենց հօրը արտուն-
ջը , և թէ ինքը տեսիլք տեսեր է որ Աստուծո՛ւ
« Ելիր ասկէ գնա քու հօրդ տունը կ'ըսէ » : Մէ-
կէն հաւանեցան անոնք ալ . ուստի տուաւ ընտանի-
քը , տղաքը , ու ամէն ունեցածը՝ ելաւ ճամբայ :
Ռաքելն ալ իր հօրը կուռքերը գողցաւ մէկտեղ
տուաւ :

Հ . Լաբանն ինչպէս ձայն չհանեց Յակոբայ իրմէ
բաժնուելուն վրայ .

Պ . Ան ատենը Լաբանն ուրիշ տեղ ոչխար խու-
ղելու դացած ըլլալով իրեք օրէն ետև խնացաւ և
սաստիկ նեղացաւ , ու իրեն մարդիկներովը եօթն
օրուան ճամբայ ինչուան Գաղաադու լեռը ետևէն
վաղեց հասաւ : Գիշերը Աստուծո՛ւ երևցաւ Լա-
բանու , և ասպարեց որ զէն մը չհասցընէ Յակո-
բայ . անոր համար մինակ յանդիմանեց գաղտուկ
փախչելը , և կուռքերը գողնալը : Յակոբ գաղ-
տուկ փախչելուն համար « Ախցայ , ըսաւ , որ
չըլլայ թէ արգելես զիս . իսկ գողութիւնը թէ որ
մէկը ըրած է՝ սլաութուի » ըսաւ : Լաբանն շատ
փրճառեց չգտաւ . վասն զի Ռաքել ուղտին կոնա-

կը դրեր ու վրան նստեր էր : Ան ատենը աղէկ մը
գանգատեցաւ Յակոբ՝ որ այնչափ իրեն տունը աշ-
խատեր է սիրով, ու մէկ պարզեւ մը չէ ընդու-
նած, և հիմայ ալ զինքը դող բռնելու համար բո-
լոր ասկնուվայ ըրաւ : Ամբոջաւ Լարան և ուղեց
որ դաշինք դնեն մէջերնին • քար մը անկեց Յա-
կոբ, և ուրիշ շատ քարեր ալ գիղելով պղտի լեռ
մը շինեցին • վրան նստան կերան խմեցին, և անու-
նը դրին Բլաւր Վայո-Ւէան : Ետքը սիրով պագտը-
ւելով մէկմէկէ բաժնուեցան :

20

Յակոբայ Բանակ հասնիլը •

Հ • Յակոբայ Լարանէն բաժնուելէն ետքը ի՞նչ
նոր բան հանդիպեցաւ •

Պ • Ճամբան օր մը տեսաւ իր առջին շարուած
հրեշտակներու բանակ, որ եկեր էին պաշտպա-
նելու իրեն • բայց ինքը դիտնալով որ պէտք չէ
անհոգ կենալ, «Աստուած կ'օգնէ» ըսելով, մարդ
խրկեց Սէիր ըսուած տեղը իր Եսաւ եղբայրը
բարևելու : Ետքը լսեց որ չորս հարիւր հոգուով
Եսաւ իրեն առջևը կ'ելէ, շատ վախցաւ • իր մար-
դիկը երկու բանակ բաժնեց, որպէս զի թէ որ
մէկը ջարդուի՝ գոնէ մէկալը ազատի • և շատ ըն-
ծաներ ալ խուճի խուճի առջևէն խրկեց որ «Յա-
կոբայ քու ծառայիդ է» ըսելով ասն • ինքն ալ
սկսաւ Աստուծոյ աղօթել որ փրկէ զինքը : Ան գի-
շերը Աստուծոյ հրեշտակը իրեն հետ կուուեցաւ,
ու յաղթուելուն համար ազգրին տակի ջիղը թրմ-
րեցուց որ ցաւէն թողու • ետքը ըսաւ ալ թէ թող
երթամ, բայց Յակոբ ինչուան որ չօրհնեց զինքը

չթողուց . ան տանն հրեշտակը անուռնն ալ փոխեց
Իսրայէլ այսինքն Աստուածաբէն դրաւ : Յակոբ ալ
ան տեղւոյն անուռնը Տեփէ Աստուծոյ ըսաւ :

Հ . Յակոբ Եսաւայ ինչպէս հանգիստեցաւ .

Պ . Երբոր մօտիկցաւ իրեք բաժնեց իր ընտա-
նիքը . առաջ երկու աղախներ իրենց աղոյժով ,
Ահան իրեններովը , ետեէն զՌաբէլը և զՅովսէփ .
և ինքն անոնցմէ առաջ անցաւ՝ եօթն անգամ եր-
կրրագագութիւն ըրաւ , անոնք ալ մէկտեղ , ինչուան
Եսաւայ դուժը շարժեցաւ ու լալով պագտուե-
ցաւ : Եսաւ ուզեց մէկտեղ երթալ կամ իրեն մար-
դիկներէն օգնական տալ . Յակոբ շնորհակալ եղաւ .
մանր աղաքը՝ անասունները պատճառ բերելով ,
կամայ կամայ կը հասնիմ ըսաւ ինչուան Սէիր :

Հ . Յակոբ Միջագետէն դառնալէն ետե ուր
գնաց բնակեցաւ , և ինչ նոր վիշտ քաշեց .

Պ . Սիկիմ քաղաքին դիմացը բնակեցաւ , ու Սիւ-
քեմայ հօրմէն Եմովրէն հարիւր ոչխարի Խորան
ըսուած տեղը գնեց : Օր մը Ռինա իր աղջիկը գնաց
քաղաքը պարտելու : Սիւքեմ Եմովր իշխանին
աղան՝ տեսաւ աղջիկը ու չարչրկեց , և իրեն կնիկ
առնելու մտքով առաւ տուն տարաւ : Հայրը Ե-
մովր եկաւ Յակոբայ հետ խօսեցաւ՝ յորդորելով
որ իրենք ալ միշտ հոն կենան և ուրիշի հետ ինտա-
մուժիւն ալ ընեն : Սիւքեմն ալ կը խոստանար ինչ
օժիտ որ ուզեն : Բայց Յակոբ ու աղաքը շատ նե-
ղացած ըլլալով , Էմաւոն ու Ղեի որ մէկ մօրէ
Ռինայի եղբայրներն էին՝ խարդախութեամբ ըսին՝
Թէ պէտք է որ մեղի պէս թշխաաիք որ ատ բանիդ
հաւանիք : Անոնք յանձն առին , գնացին քա-
ղաքացիներն ալ յորդորեցին ըսելով Թէ հարուստ
են , բոլոր ունեցածներն ալ մերը կ'ըլլայ . ասան-
կով ամենքն ալ թշխատուեցան : Երբորդ օրը երբ
որ ամենքը ցաւի մէջ էին , Էմաւոն ու Ղեի սրե-
րով մտան քաղաքը ջարդելին ամէն էրիկ մարդիկ ,

բոլոր քաղաքն ալ կողոպտեցին, կանայքն ու անասուններն ալ առին, Դինա քուրերնին ալ մէկտեղ, ու դարձան: Շատ նեղացաւ Յակոբ վրանին, վախցաւ ալ որ չըլլայ թէ քանանացիները ու փերեզացիները գան զիրենք ջարդեն առ բանիս համար:

Հ. Յակոբ Միջագետքէն դառնալէն ետքը չգընաց հօրը առնը:

Պ. Սիկիմին բնակիչները ջարդելէն ետեւ, Աստուած հրաման տուաւ որ Բեթէլ երթայ ու հոն Աստուծոյ սեղան շինէ, ուր որ առաջ սանդուխտներ էր: Ան առնելը Յակոբ իրեն հետ եղողներուն ապրասպրեց որ քովերնին եղած կռատաշատ կան բաները թողուն. որոնք ամէնն ալ Սիկիմ բնակնի ծառին տակը թաղեց, ու գնաց Բեթէլ: Հոն մեռաւ Գեբուլթա Ռեբեկայի դայեակը. անոր համար հոն տեղի կաղնիին անունը կաղնի սփոյ գրաւ: Անկէ ելաւ, եւ երբոր Եփրատի կամ Բեթղէհէմ կը մտնէր, Ռաքէլ Բենիամինը ծնանելու տուն մեռաւ, և հոն ճամբուն վրայ թաղուեցաւ. Յակոբ ալ արձան կանգնեց՝ որ ետքը Աբնան շիրմն Ռաքէլայ կոչուեցաւ: Ետքն եկաւ Քեբրոն հօրը առնը, ուր որ Աբրահամ ալ կեցեր էր, ու գտաւ դեռ ողջ զԻսահակ, որ մեռաւ հարիւր ութսուն տարուան, և Յակոբ ու Եսաւ մէկտեղ թաղեցին. Յակոբ անկէ ետքը հոն բնակեցաւ. բայց Եսաւ ելաւ Սէիր գնաց՝ ան տեղը երկուքին ալ չօգտելուն համար:

Յոսիսուփայ վրայ եղած կռիւսանքի .

Հ. Յակոբայ տասուերկու տղաքը միշտ մէկտեղ կեցան .

Պ. Թէ որ նախանձու կիրքը չըլար՝ խաղաղ մէկտեղ կը կենային : Բայց որովհետեւ հայրերնին զՅովսէփ աւելի կը սիրէր, ինչուան իրեն համար աղուոր ծաղկեայ լաթ ալ շիներ էր, աս պատճառաւ եղաւ իրենց մէկմէկէ բաժնուիլը և շատ նեղութիւններ քաշելը :

Հ. Յակոբայ Յովսէփը ուրիշներէն աւելի սիրելը անկարգ բան չէր .

Պ. Չէ . վասն զի աղէկութեանը համար կը սիրէր, ինչպէս Աստուած ալ իմացուց ասանկ երազով մը . կը տեսնէր Յովսէփ դաշտի մը մէջ որ ինքը եղբայրներուն հետ ցորենի որայ կը կապէին, և իր կապած որան ելաւ կայնեցաւ, ու մէկալ նոնցը անոր երկրպագութիւն կ'ընէին : Աւրիշ երազ մըն ալ տեսաւ, որ արևը լուսինն ու տասնըմէկ աստղերը իրեն երկրպագութիւն կ'ընէին : Երբոր լսեցին ասոնք եղբայրները, իմանալով երազին միտքը, այնչափ վառուեցաւ նախանձնին, որ, կարելի ըլլար, մեռցընել կ'ուզէին :

Հ. Յովսէփայ եղբարքը սաստիկ նախանձելով իրեն վրայ ինչ կրցան ընել .

Պ. Անգամ մը եղբայրները դնացեր էին Սիւքեմ ոչխար արածելու . շատ օրեր անցնելէն ետեւ, Յակոբ խրկեց զՅովսէփ տեսնելու թէ ինչպէս են . Յովսէփ մոլորած սլարտելու ատեն, հանդիպեցաւ ճամբան մէկու մը որ ըսաւ թէ Գովթայիմ դացած են : Գնաց Յովսէփ գտաւ եղբայրները . երբոր տեսան անոնք հեռուէն, խորհուրդ ըրին որ սպաննեն . բայց Առեքէն ապրեցընել ուղելով ըսաւ թէ արիւն չընեն, հասկա չոր հորեր կային ան տեղուանքը՝ անոնց մէկուն մէջը ձգեն : Երբոր իրենք նստեր կերակուր կ'ուտէին՝ տեսան հեռուէն որ Գաղաադէն խմայէլացի վաճառականներ Եղիստոս կ'երթան, տեսակ տեսակ խունկեր կը տանին . Յուդային խորհրդով հանեցին

հորէն, ծախեցին անոնց քսան դահեկանի: Ռու-
բէն գնաց որ հորէն հանէ փախցընէ, ու չգանե-
լով սկսաւ յուսահատած լալ: Ետքը անոր լաթը
այծի արիւնի մէջ թաթխած, տարին Յակոբայ ը-
սելով թէ ասանկ գտանք որ գաղանը պատուեր
էր: Յակոբ երբոր տեսաւ՝ պատուեց իր լաթերը,
արամուծեան լաթ հագաւ ու կուլար, կ'ողբար-
եկան քովը ամէն ընտանիքը՝ ճար չեղաւ միտիթա-
րելու, ցաւէս կը մեռնիս՝ կ'ըսէր:

Յովսէփայ բանտ կորսալը .

Հ . Իսմայէլացիներն ինչ ըրին զՅովսէփ .

Պ . Տարին Եգիպտոս ծախեցին Պետափրէս Փա-
րաւոն թագաւորին դահճապետին: Պետափրէս
տեսնելով որ Յովսէփ խելացի ու հաւատարիմ
տասնըեօթը տարուան կարիճ մըն է, և Աստուած
ալ անոր հետն է, տանը ամէն կառավարութիւնը
անոր յանձնեց: Բայց Յովսէփ քիչ ատեն կրցաւ
կենալ Պետափրէս դահճապետին քով: Ասան զի
Պետափրէսի կինը անոր վրայ աչք ձգելով կ'ուզէր
որ իրեն հետ անկարգութիւն ընէ . բայց Յովսէփ
մտիկ չէր ընէր: Օր մը միտակ գտնելով երբոր քը-
ղանցքէն բռնած նեղը կը ձգէր, Յովսէփ հանեց
վերարկուն փախաւ . կիսին ալ սկսաւ կանչուրա-
տել՝ յանցանքը անոր վրայ ձգելով, ու երբոր Պե-
տափրէս տուն դարձաւ, սուտերով հաւանեցուց
որ Յովսէփ անկարգութիւն կ'ուզէր ընել, ու երբոր
ես կանչուրատեցի, կ'ըսէր, փախաւ քովէս: Բար-
կացաւ դահճապետը, ու բանտ դրաւ զՅովսէփ:

Հ . Բանտին մէջ Յովսէփայ ինչ նոր բան հան-
դիպեցաւ .

Պ • Ան օրերը թագաւորին տակաւապետը ու մատակարարը Յովսէփին կեցած բանաւր գրուեցան • և մէկ գիշեր մը երկուքն ալ երազ տեսան : Երկրորդ օրը Յովսէփ տեսնելով որ երեսնին կախեր են՝ խնայաւ պատճառը , հարցուց երազը ու ըսաւ , թէ Աստուծով ես կը մեկնեմ երազնիւ : Ան ատենը պատմեց տակաւապետը • « Տեսայ որ , ըսաւ , որթ մը իրեք կանաչ ճիւղ և խաղող ունէր , ես ճզմելով գաւաթի մէջ Փարաւոնին տուի » : « Իրեք օրէն , ըսաւ Յովսէփ , առջի պաշտօնիդ պիտի հասնիս՝ ու գաւաթով գինին Փարաւոնին տաս » : Եւ ազաչեց որ երբոր ազատի , յիշէ զինքն ալ Փարաւոնին առջև որ յանցանք չունի : Մատակարարն ալ տեսնելով որ երազին աղէկ մեկնութիւն տուաւ , « Ես ալ տեսայ որ , ըսաւ , իրեք ազնիւ ալիւրի աման գլխաւս վրայ գրած էր • վրայինին մէջը ազնիւ թագաւորական կերակուրներ , և թռչունները կ'ուռակէին մէջէն » : Պատասխանեց Յովսէփ • « Իրեք օրէն Փարաւոն գլուխդ պիտի կարէ և մարմինդ ալ փայտէ պիտի կախէ որ թռչունները դան ուտեն » : Իրեք օրէն Փարաւոնին ծննդեան օրը ըլլալով , կատարուեցաւ Յովսէփայ ըսածը • բայց տակաւապետը մտցաւ յիշել զՅովսէփ :

Հ • Յովսէփ ինչպէս բանաէն խաղըտեցաւ •

Պ • Երկու տարի բանաւր կենալէն ետքը , Փարաւոն երազ մը տեսաւ • գեալին մէջէն եօթը գիրուկ կոլեր ելան կ'արածէին • ուրիշ եօթը վատոյժ կոլեր ալ ելան , արածելու ատեն առջինները կլլեցին : Արթընցաւ և նորէն քնացաւ , տեսաւ որ մէկ արմատէն եօթը պարարտ ցորենի հասկեր ելան , ետքը եօթն ալ ցամաք հասկեր , ու առջինները կլլեցին : Փարաւոն տակնուվրայ եղած չէր գանէր մէկը որ տեղն 'ի տեղը մեկնէ • յանկարծ տակաւապետին միտքը ինկաւ , պատմեց

Թագաւորին Յովսէփայ համար : Ան ատեն նոր
լաթեր հագուցին ու Փարաւոնին առջև հանեցին .
մեկնեց թէ երկու երազն ալ մէկ բան կը ցուցը-
նեն . « Եօթը գէր կովերը և եօթը պարարտ ցո-
րենի հասկերը եօթը առատութեան տարի է ը-
սաւ՝ որ դալու է . և եօթը վատոյժ կովերը և
եօթը ցամքած հասկերը եօթը սովի տարիներ են ,
որ ետեւէն պիտի յաջորդեն : Ատուած առ բանս
ցըցուց ըսաւ՝ որպէս զի խելացի մարդ մը գտնես ,
որ առատութեան ատենը ժողովէ ցորենները , ու
պահէ սովին ատենին համար » : Ասով չէ թէ միայն
բանտէն խալըսեցաւ , հասցա նաև Փարաւոնին
հրամանովը իրեն երկրորդը եղաւ . վասն զի
« Քեզմէ խելացի մարդ չկայ , ըսաւ Փարաւոն , որ
աս կարգերը ընէ » : Ասկէ ետքը փառաւոր հա-
գուստով , մասնիով , ոսկի զարդերով Թագաւո-
րական կառքի մէջ նստուցին , ու բոլոր քաղաքը
պարսոցուցին՝ որպէս զի ամէնքը խմանան թէ Ե-
գիպտոսի տէրն է : Ետքը Յովսէփայ անունը
Փսոմփթոմբանէ դրաւ , և Արեգ քաղքին քրմին
աղջիկը իրեն կին տուաւ . ուսկից երկու տղայ
ունեցաւ՝ Մանասէ , Եփրեմ : Աս ատեն Յովսէփ
երեսուն տարուան էր :

23

Յովսէփայ դատաւորութիւնը .

Հ . Յովսէփ դատաւոր ըլլալով ինչ օգուտ ըրաւ .

Պ . Բոլոր ժողովրդեան մահուանէ ազատելու
պատճառ եղաւ , և Թագաւորին ալ մեծ հարստու-
թեան . վասն զի ամէն գետինները՝ անասունները
նաև մարդիկը ստակի տեղ գերի առաւ , որ անկէ
ետեւ սկսան ամէնքը գետին բանիլ գերիի պէս , ու
վասարկածնուն մէկ մասը Թագաւորին տալ :

Հ. Եզիպտոսի սովը ինչուան ո՛ւր տարածուեցաւ .

Պ. Ամէն ան կողմի աշխարհքները . ինչուան Յակոբ ալ սովէն նեղացած խրկեց աղաքը Եզիպտոս՝ որ ցորեն գնեն :

Հ. Յովսեփայ եղբարքը երբոր առջի անգամ տեսնուեցան իրեն, ինչպէս վարուեցաւ անոնց հետ .

Պ. Երբոր անոնք եկան առջևը ինկան երկրօղագուծիւն ըրին, մէկէն ճանչցաւ . բայց չճանչնալ ձեացուց, ու սկսաւ բարկանալ « Լրտես էք, ըսաւ, եկեր էք որ քաղաքս աչքէ անցընէք ու մաանիչ ըլլաք » : Անոնք « Չէ, կ'ըսէին, ցորեն գնելու եկեր ենք » . ու կը սպասէին ո՛վ ըլլալնին . և թէ տասուերկու եղբարք են, սղտիկը հօրերնուն քոյն է, և մէկը մեռած է : Յովսեփի աս ըաներս լսելով, ալ աւելի վրայ տուաւ թէ « Գէշ մարդիկ էք . թէ չէ, ըսաւ, ձեզմէ մէկը խրկեցէք որ ձեր սղտի եղբայրը բերէ » : Ասանկով ամենն ալ բանար դրաւ : Իրեք օրէն ետքը իբր թէ խղճալով հրաման տուաւ որ մինակ մէկը մնայ, մէկալնոնք ցորեննին տանին ու ՚ի դարձին սղտի եղբայրնին ալ բերեն, որ իրենց հաւատայ : Սիրով յանձն առին, ու կարծելով որ Յովսեփ չհասկընար, որովհետեւ թարգմանով կը խօսէր, սկսան ըսել թէ « Աս նեղուծիւնը կը քաշենք Յովսեփայ ըրածներնուս համար . ո՛րչափ կ'աղաչէր ու մենք մտիկ չըրինք » . Բուբէն ալ կ'ըսէր՝ թէ « Ես ձեզի չըսի . խեղճ աղուն արիւնը մի մանէք » : Աս խօսքերուս վրայ Յովսեփայ սիրտը փղձկեցով, մէկդի քաշուեցաւ ու լացաւ : Ետքը նորէն եկաւ, հրամայեց որ զՇամառն կապեն ու պահեն : Իրենց ամանները լեցընել տուաւ, և դադտուկ ապսպրեց որ ամենուն ցորենին գինն ալ իրենց ամանին մէջը գնեն : Անկէ զատ ճամբուն համար կերակուր ալ տուաւ ու խրկեց :

Հ. Ամաններնուն մէջի ստակները ինչ կերպով
յայտնուեցան .

Պ. Ճամբան իջևան մը հասնելով, ումանք քուր-
ձերնին բացին՝ իշուն կերակուր տալու համար .
տեսան ստակնին ու զարմացան , և Աստուծոյ
բանն է ըսելով գնացին տեղն ՚ի տեղը պատմեցին
Յակոբայ : Եւ հոն մեկաշներն ալ իրենց տարած
ստակը գտնելով , սաստիկ վախի մէջ ինկան :

Հ. Յակոբ թողո՛ւց Բենիամինը տանելու .

Պ. Առջի բերանը այրած սրտով սկսաւ ըսել՝
Թէ « Ձիս զուկրներէս զսկեցիք . Յովսէփ չկայ ,
Ընաւոն չկայ , Բենիամինս ալ կ'ուզէք առնել . առ
ամէն խեղճութիւնները իմ վրաս կուգան » : Ան
տանը Ռուբէն պատասխան տուաւ թէ « Իմ եր-
կու տղաս սպաննէ , թէ որ զԲենիամին չգարձը-
նեմ : — Չէ , կ'ըսէր Յակոբ , չըլլար . սասոր եղբայ-
րը մեռած է . թէ որ առ ալ մէկ փորձանքի մը հան-
դիպի , իմ ծերութիւնս անվսիթար դերեզմանը
կը մտնէ » : Բայց սովը օրէ օր սաստկանալով պէտք
եղաւ նորէն երթալ . Յուզան ըսաւ , « Հայր , գիտ-
նաս որ խօսք տուեր ենք Բենիամինը հետերնիս
տանելու » : Յակոբ կ'ըսէր « Ինչո՞ւ ըսիք թէ ու-
րիշ եղբայր ալ ունիք : — Մեզ նեղը ձգեց , ըսին ,
հարցուց թէ հայրերնիդ ո՞ղջ է . ուրիշ եղբայր
ունիք . ո՞վ գիտէր որ ան ալ տեսնել կ'ուզէ » :
Ետքը Յուզա նորէն երաշխաւոր ըլլալով հազիւ
հաւանեցուց , Յակոբ ալ ըսաւ որ իրենց երկրին
բերքերէն ընծայ տանին , առջի ստակնին ալ հե-
տերնին առնեն : Ասանկով Յակոբ օրհնեց զիրենք
ու ճամբայ դրաւ :

Յովսէփայ եղբայրց յայտնութիւնք .

Հ . Երկրորդ անգամ Յովսէփ եղբայրները ինչպէս ընդունեցաւ .

Պ . Երբոր Բենիամին հետերնին Եգիպտոս հասան , Յովսէփ հրամայեց իր տանը վերակացուին՝ որ տուն տանի զանոնք ու կերակուր պատրաստէ , որպէս զի մէկտեղ հաց ուտեն : Բայց անոնք կարծելով թէ ստակին համար կ'երթան պատանոսիան տալու , սկսան ան մարդուն առջև զիրենք արգարացնել . ու « Հիմա , ըսին , անկէ զատ ուրիշ ստակ ալ բերինք » : Մարդը սիրտ տուաւ անոնց թէ « Աս Աստուծոյ բանն է , հոգ մ'ընէք » . Ետքը Շամուն եղբայրնին ալ արձրկեց , տուն բերաւ : Երբոր Յովսէփ եկաւ , ամէնքը երկրպագութիւն ըրին , ու ինքն ալ սիրով առաւ բերած ընծանին , հարցուց հօրերնուն ինչպէս ըլլալը , ու ըսաւ թէ Աստուծմէ օրհնած մարդ մըն է անիկայ : Ետքը Բենիամինի վրայ նայելով , հարցուց . « Աս է ձեր պզտիկ եղբայրը . Աստուած քեզի ողորմի որդի » , ըսաւ , և ան տեղը Յովսէփայ սիրտը լեցուեցաւ , արցունքը չկրցաւ բռնել , ելաւ մինաւոր տեղ մը գնաց լալու համար : Ետքը ամէնը մէկտեղ կարգով իր հետը հացի նստեցուց , ու սեղանին վրայ աւելի պատիւ ցըցուց Բենիամինի : Ետքը Յովսէփ վերակացուին ապաստեց որ ցորենին ամանները աղէկ մը լեցընէ , ու նորէն ստակները քուրձերուն բերանը դնէ կապէ . իր արծրթէ գաւաթն ալ Բենիամինի քուրձին մէջ դնէ : Ասանկով առաւօտանց կանուխ ճամբեց զիրենք :

Հ . Բենիամինին քուրձի արծրթէ գաւաթը ինչ կերպով յայտնուեցաւ .

Պ. Յովսէփ եղբայրներէն բաժնուելէն ետքը , վերահացուն ետենուն խրկեց՝ որ երեսնին տայ արծըթէ գաւաթը գողնալնին . երբոր լսեցին անոնք , խռովեցան ու սկսան ըսել՝ թէ « Այդպէս բան չենք ըրած , չենք գիտեր . ինչպէս կարելի է որ մենք արծաթ կամ ոսկի գողնանք , որ մեր քուրձին մէջ գտած ստակնիս ալ նորէն ետ դարձուցնիք » : Եւ ըսին վստահութեամբ թէ որուն քովէն որ ելլէ ան գաւաթը՝ սպաննուի , և ամէնքս ալ դերի ըլլանք : Ան ատեն վերահացուն սկսաւ կարգով նայիլ փնտուել՝ ու գտաւ Բենիամինի ամանին մէջէն : Պաղեցան մնացին ամէնքը , և յուսահատած լաթերնին սկսան սլաօրաւել , և գլուխնին կախած ետ դարձան :

Հ. Երբորդ անգամ Յովսէփայ եղբայրներուն առջև երևնալը ինչ կերպով եղաւ .

Պ. Երբոր եկան Յովսէփայ առջևը՝ սկսաւ զերենք յանդիմանել : Ան ատեն Յուդա շուտ մը ոտքը ինկաւ ըսելով . « Ալ պատասխան չունինք . Աստուած մեղքերնիս երեսնիս տուաւ . ահա ամէնքս քու գերիդ ենք » : Յովսէփ « Չէ ըսաւ , որուն քովէն որ գաւաթը ելլաւ . միայն ան իմ գերիս ըլլայ , դուք ազատ ելէք գնացէք » : Աս խօսքէս քիչ մը սիրտ առաւ Յուդա , ու թողութիւն ուղեւոր սկսաւ պատմել թէ ինչպէս հօրը ծերութեան սիրական զաւակն է Բենիամին , և թէ շատ դժուարութեամբ թողուցեր է բաժնուիլ իր մէն , ըսելով թէ « Ռաքէլ ինձի միայն երկու զաւակ բերաւ . մէկը ըսիք թէ գաղանը բզբքտեց . հիմա թէ որ աս ալ առնէք՝ իրեն փորձանք մը հանգիպելու ըլլայ , ցաւէս կը մեռնիմ » : Անոր համար , ըսաւ Յուդա , ես աս տղին երաշխաւոր եղայ , ուստի սիրով գերի կ'ըլլամ քեզի , միայն թէ ինքը ազատ հօրը երթայ . թէ չէ , ինչ երեսով ես հօրս առջևը ելլեմ , անոր կսկիծը տեսնեմ » :

Յովսէփ ալ չկրցաւ ինքզինքը բռնել, օտար մարդիկը քովէն դուրս հանել տուաւ, մէկէն լալով կանչել սկսաւ. « Ես Յովսէփն եմ, իրաւցընէ իմ հայրս ո՞ղջ է » : Եղբայրներն որ լսեցին՝ պաղեցան, մնացին : Յովսէփ նորէն մօտ կանչեց ու ըսաւ. « Ես Յովսէփ ձեր եղբայրն եմ որ ծախեցիք. բայց մի վախնաք, Աստուած աս ճամբովս զիս տէր ըրաւ Եգիպտոսի, որպէս զի ձեզ կերակրեմ, և դեռ սովին երկրորդ տարին է » : Սիրով ու լալով հետերնին պագտուեցաւ, ու ապաստեց որ շուտով երթան իր հօրը ըսեն՝ թէ « Աստուած զՅովսէփ Եգիպտոսացոց վրայ իշխան է ըրեր. և շուտ ինքն ալ անով տեղով ելլէ գայ, որ զինքը աս սովիս ատենը կերակրեմ » :

Հ. Թագաւորը չիմացաւ Յովսէփայ եղբայրներուն յայանուիլը .

Պ. Իմացաւ ու շատ ուրախացաւ, և Յովսէփայ ապաստեց որ հայրը բերել տայ : Յովսէփ ալ սայլեր խրկեց, ու ամենուն երկերկու պատմութեան տուաւ, և Բենիամինին հինգ պատմութեան և իրեք հարիւր ալ դահեկան. հօրն ալ նոյնպէս, տասը բեռ ալ Եգիպտոսի աղնիւ բաներէն, ուրիշ տասը բեռ ալ հօրը ճամբու պաշար : Եւ ասանկով ճամբայ դրաւ :

25

Յակոբայ Եգիպտոս կրթալը ու վախճանիլը .

Հ. Յակոբ երբոր լսեց Յովսէփայ ողջ ըլլալը ինչ ըրաւ .

Պ. Առջի բերանը սաստիկ շփոթեցաւ, պաղեցաւ ու չհաւտաց. ինչուան որ տեղն ՚ի տեղը նորէն պատմեցին, ու ցուցրցին Յովսէփայ խրկած բաները : Ան ատեն սիրտը վառուեցաւ ու ըսաւ .

« Ասկէց աւելի ալ ի՞նչ մեծ քարիք կրնամ ունե-
նալ որ իմ Յովսէփս ողջ է . կ'երթամ սիրով որ
չմեռած տեսնեմ զինքը » : Առաջով պատրաստուե-
ցաւ իր աղաքներովը և թռուներովը եօթանասու-
որհինգ հոգի , և ճամբայ ելաւ .

Հ . Յակոբ ի՞նչպէս գնաց Եգիպտոս , որովհետև
Աստուած ըսեր էր թէ Քանանու երկրէն դուրս
չելլեն .

Պ . Ինքն ալ տարակուսեր էր ասոր համար .
բայց երբոր հասաւ Երզնան ջրհորին քով , Աս-
տուծոյ զոհ մատուց որ իմացընէ իր կամքը : Աս-
տուած երևցաւ , ու ըսաւ որ Եգիպտոս երթայ , Յով-
սէփայ քով մեռնի . հոն իր ազգը շատնան՝ ու ետ-
քը նորէն ետ դառնան :

Հ . Ո՛ւր տեսնուեցաւ Յակոբ Յովսէփայ .

Պ . Յակոբ խրկեց Յուդան , Յովսէփայ ըսելու
որ գայ Ռամեսսա ըստած տեղը , որ Գեսեմ ալ
կ'ըսուի : Հոն մէկզմէկ տեսնելուն պէս՝ լալով
պագտուեցան , և կ'ըսէր Յակոբ թէ « Մեռնիմ եր-
թամ որդի՛ որ զքեզ ողջ տեսայ » :

Հ . Յովսէփայ եղբարքը Փարաւոնի հետ տես-
նուեցան .

Պ . Նախ չորս հինգ հոգի առաւ Յովսէփ հա-
նեց Փարաւոնի առջև՝ առաջուց խրատելով որ ե-
թէ հարցընէ Փարաւոն ինչ գործքի տէր ըլլալինն ,
հովիւ ենք ըսեն . այնպէս ըրին , ու եգիպտացիներ-
րէն զատ Գեսեմայ մէջ բնակելու հրաման առին :
Փարաւոն՝ հայրերնին ալ ուզեց տեսնել . ու երբոր
գնաց Յակոբ , ի՞նչպէս ըլլալը ու տարիքը հարցուց
Փարաւոն : Ետքը Յովսէփայ հրաման տուաւ որ ա-
նոնցմէ իրեն ոչխարներուն ալ վերակացու դնէ :

Հ . Յակոբ Եգիպտոսի մէջ քանի՞ տարի ապրե-
ցաւ .

Պ . Տասնութ թը տարի : Երբոր լմընցաւ աս տա-
րիները , զՅովսէփ կանչեց՝ երգուընցընելով ապրա-

պրեց որ զինքը իրեն հայրենական գերեզմանը դնէ :
Անկէ ետև մէկ հեղ մըն ալ իմացուցին Յովսէփայ
թէ հայրը ծանրացեր է . բերաւ երկու որդիքը
Մանասէ ու Եփրեմ , որ իր վերջի օրհնութիւնը
տայ : Յակոբ ալ աղաքը գերկը առաւ պագաւ ,
« Իմ որդւոցս կարգը ստոնք ալ սեպուին » ըսաւ :
Ետքը Յովսէփ չոքեցուց զանոնք առջևը որ օրհնէ :
Յակոբ օրհնելու ատեն՝ աջ ձեռքը Եփրեմի վրայ
դրաւ՝ ու ձախը Մանասէին . Յովսէփ դիպուա-
ծով կարծելով շահել ուղեց . բայց Յակոբ գի-
տեմ ըսաւ . երկուքն ալ օրհնած ըլլան , բայց Ե-
փրեմը Մանասէէն վեր ըլլայ : Եւ Սիկիմը , որուն
մարդիկը ջարդեր էին , Յովսէփայ տուաւ : Ետքը
կանչեց մէկալ որդիքն ալ առջևը , ու ամէն մէկը
զատ զատ օրհնեց՝ վրանին մարդարէութիւններ
խօսելով : Եւ Յուդային օրհնութեանը մէջ յայտ-
նի գուշակեց անոր ցեղին մէջը հաստատուելու
Իսրայէլացւոց թագաւորութիւնը , և Մեսիային
գալուստը : Եւ մեռաւ հարիւր քառսունուեօթը
տարուան :

Հ . Յակոբայ մարմինը մէկէն տարին Քանա-
նացւոց երկիրը թաղելու .

Պ . Նախ զմուսել տուաւ Յովսէփ . որ Եգիպ-
տացիք պատուոյ համար կ'ընէին , ու եօթանասուն
օր սուգ ընելէն ետև , Փարաւոնին հրամանովը իր
եղբայրները ու շատ իշխաններ հեանին՝ կառ-
քերով և ձիաւորներով խիստ փառաւոր հանդէ-
սով գնացին Յորդանանին անդիի գին , եօթը օր
ալ հոն սուգ ըրին , որ ամէն Քանանացիք կ'ըսէին .
« Մեծ սուգ ունին Եգիպտացիք » : Անկէ տարին
Մամբրէին գիմացը իրենց հայրենական գերեզ-
մանը թաղեցին :

Յովսէփայ մահը, Հրեից քաշած վիշտը.

Հ. Յակոբայ մեռնելէն ետև Յովսէփ ինչ աչքով կը նայէր եղբարցը վրայ.

Պ. Անանկ իբրև թէ բան մը ըրած չըլլային : Բայց իր եղբարքը վախցան որ չըլլայ թէ վրանին ոխ պահելով վրէժ առնէ, եկան Յովսէփայ ըսին թէ « Հայրերնիս ապաստեց որ իր կողմանէ հրամանացդ ըսենք, որ մեզի թողութիւն տաս. ուստի մենք հիմա քեզմէ ներուսն կը խնդրենք » ըսելով Յովսէփայ ոտքը ինկան ու քու ծառայէնք ըսին : Յովսէփայ սիրտը լեցուեցաւ՝ սկսաւ լալ. ու մխիթարելով ըսաւ. « Մի վախնաք, ես ալ Աստուծոյ ծառան եմ. յիրաւի դուք ինձի չարիք ընել ուղեցիք, բայց Աստուած չարը ՚ի բարին դարձուց » . ուրիշ աս տեսակ խօսքերով սրտերնին առաւ՝ բոլորովին անյիշաչար ըլլալով. ու խաղաղութեամբ հանգիստ կ'ապրէին :

Հ. Յովսէփ ինչուան էրբ մնաց իր պատուոյն մէջ.

Պ. Ինչուան ետքը. և մեռաւ հարիւր տասը տարուան՝ կտակ ընելով մնացած եղբայրներուն որ Եգիպտոսէ ելլելու առեննին իր ոսկորներն ալ տանին :

Հ. Իսրայէլացիք ինչ վիճակ ունեցան Յովսէփայ մեռնելէն ետքը.

Պ. Ալթաուն տարիի չափ հանգիստ անցընելով, օրէ օր կը շամնային : Փարաւոն անունով թագաւոր մը՝ տեսաւ որ կը շամնան կ'ուժովնան Իսրայէլացիք, վախցան թէ օր մը իրեն թշնամի ներուն հետ մէկ եղած՝ կը պատերազմին իրեն

հետ ու կ'երթան Եգիպտոսէն • անոր համար սկը-
սաւ չարչարել զանոնք, քաղաք շինել տալ, Փիդո-
նը, Ռամեսէն, ու Ունի կամ Արեգը • բայց որչափ
Եգիպտացիները զԻսրայէլացիքը կը տանջէին, ա-
նոնք այնչափ կը շատնային : Ուստի Փարաւոնն ու-
րիշ հնարք մը մտածեց • անոնց երկու Սեփովա
ու Փուա դայեակներուն գաղտուկ հրամայեց որ
տղայ առնելու ատեն մանչ ծնածները խղզեն :
Բայց դայեակները թագաւորէն աւելի Աստուծմէ
վախնալով, չկատարեցին աս հրամանը : Աստուած
ալ օրհնեց զիրենք՝ ու բաներնին յաջողելով կը
հարըստանային : Ետքը երբոր թագաւորը սրգո-
ղեցաւ անոնց, պատասխան տուին թէ « Եբրայե-
ցիք դայեակը չհասած տղան կը բերեն » : Ինքն ալ
նեղացած հրաման հանեց սր անկէ ետքը բոլոր
Իսրայէլացւոց մանչ ծնած տղաքը գետը ձգեն :

Մովսէս .

Հ . Փարաւոնի տղաքը գետը ձգելու հրամանէն
կրցաւ մարդ խալըսիլ .

Պ . Ղեկին ցեղէն՝ Ամրամ անունով մարդու մը
տղան աղատեցաւ աս կերպով : Երբոր ծնաւ տը-
ղան՝ իրեք ամիս գաղտուկ պահելէն ետե՛ վախ-
նալով որ օր մը յանկարծ կ'սմայուի, խսիրէ հիւ-
սած սնտուկ մը առին կարածիւթով ծեփեցին, ու
տղան մէջը դրած գոցած՝ գետը ձգեցին : Տղուն
քրոջն ալ սիրար չգիմանալով քովէն չէր զատուէր՝
որ տեսնէ թէ ինչ կ'ըլլայ : Ան ատենը Փարաւոն
թագաւորին աղջիկը իր նաժիշաներովը անդին
գետին քովերը ելեր ժուռ կուգար • տեսաւ աս
սնտուկը՝ շուտ մը հանել տուաւ՝ տեսաւ տղան որ

կուլար, գութը շարժեցաւ: Տղուն քոյրը քովը մօտեցաւ. « Կ'ուզէս, ըսաւ, որ Եբրայեցի կաթ տըւող կնիկ մը կանչեմ որ տղան պահէ » . ան ալ կանչէ ըսաւ: Աղջիկը գնաց տղուն մայրը բերաւ. որ առաւ տղան Փարաւոնի աղջկանը ծախքովը մեծցուց ու տարաւ իրեն տուաւ: Փարաւոնին աղջկն ալ ուրիշ զաւակ չունենալով իրեն որդեգիր ըրաւ, և անունը Մովսէս դրաւ, որ Զրէ հանած ըսել է: Ու Եգիպտացւոց իմաստութիւնները անոր սորվեցնել տուաւ:

Հ. Մովսէս ինչուան էրք կեցաւ Փարաւոնին պալատը .

Պ. Երբոր քառսուն տարուան եղաւ, տեսնելով իր եղբարցը քաշած վիշաք, գնաց ղերենք մը խիթարելու: Մէկ հեղ մը տեսաւ որ Եգիպտացի մը Եբրայեցւոցմէ մէկը բռներ կը ծեծէր, աստուածային նախանձով վառուեցաւ սիրաք՝ չորս զին նայեցաւ որ մարդ չկայ. հոն մէկէն սպաննեց զԵգիպտացին՝ ու աւազին մէջը թաղեց: Մէկալ օրը նորէն տեսաւ որ երկու Եբրայեցի կախ կ'ընէին, ուղեց հաշտեցնել. « Մարդիկ, ըսաւ. դուք մէկմէկու եղբայր էք, ինչո՞ւ կախ կ'ընէք » : Ան աւտենը անիրաւութիւն ընողը ըսաւ. « Քեզ ո՞վ դրաւ գատաւոր մեր վրայ. իս ալ սպաննել կ'ուզես երեկուան Եգիպտացւոյն պէս » : Զարմացաւ մնաց Մովսէս թէ ինչպէս յայանուեր է: Եւ իմանալով որ Փարաւոն ղինքը կը փրնտուէ, ելաւ Մադիանացւոց երկիրը փախաւ, որ Կարմիր ծովուն մէկալ զին է, Սինա լեռանը մօտ:

Հ. Մովսէս երբոր փախաւ Մադիանացւոց երկիրը ո՞ր կը բնակէր .

Պ. Նախ գնաց ջրհորի մը քով նստած երբոր կը մտածէր, ան ատենը Մադիանացւոց քուրմին եօթը աղջիկները եկան ջուր քաշելու ոչխարներուն համար, և ուրիշ հովիւներ թող չէին տար, տե-

սաւ Մովսէս, վարնաեց հովիւները ու ջուր քաշեց անոնց համար. որ խմցուցին ոչխարներուն ու դարձան: Հապուէլ հայրերնին շուտ գառնալնուն պատճառը իմանալով, մէկէն ասն բերել ասուաւ զՄովսէս՝ որ իրեն կերակուր մը ընէ: Եւ հոն մնաց Մովսէս ինչուան որ Աստուած զինքը ետ կանչեց. ու Սեփուրա անոր աղջիկը կին առաւ, ուսկից երկու որդիք ունեցաւ՝ Գերսամ ու Եղիազար:

Մովսէսի առաջնորդ ընտրուիլը.

Հ. Ի՞նչ քանի համար, ու ի՞նչ կերպով կանչեց Աստուած զՄովսէս Մագիանացոց երկրէն.

Պ. Երբոր մեռաւ Փարաւոն և ուրիշ մը նստաւ, որ ալ աւելի կը չարչարէր Եբրայեցիքը, Մովսէսի ելլելէն քառսուն տարի ետքը Աստուած իր անհուն ողորմութեամբը Իսրայէլացոց հառաչանքը լսելով, ուզեց որ Մովսէսի ձեռքովը զանոնք աղատէ: Ուստի որ մը Մովսէս ոչխարները արածելու ասան Բորեք լեռան վրայ, յանկարծ տեսաւ որ մորենի ծառ մը կրակ կտրած կը վառէր, ու չէր այրեր: Մովսէս սկսաւ առաջ երթալ մօտիկնալ որ աս հրաշքս աղէկ մը աեսնէ. ան ատենը մորենիէն ձայն եկաւ. «Մովսէս Մովսէս, հոս մի մօտենար. կօշիկներդ հանէ, վասն զի կայնած տեղդ սուրբ դեռաին է»: Մովսէս ալ զարհուրած չէր ալ կրնար նայիլ: Ետքը Աստուած յայանեց իր կամքը անոր, և թէ ժողովրդեան աղաչանքը լսեր է, և կ'ուզէ որ ինքն երթայ հանէ զանոնք Եգիպտոսէն:

Հ. Մովսէս յանձն առաւ Իսրայէլացիները Եգիպտոսէն հանելու հրամանը.

Պ. Ըստ դժուարութեամբ: Առջի բերանը իր
անկարող ըլլալը յայտնեց. Աստուած՝ « Ես քեզի
կ'օգնեմ » ըսաւ: « Հասցա թէ որ անուեդ հարցը-
նեն ի՞նչ ըսեմ » ըսաւ Մովսէս: Պատասխանեց Աս-
տուած. « Որ էն խրկեց ըսէ. և անոնցմէ խօսքի
տէր մարդիկներ հետդ առ՝ Փարաւոնի առջևը ելիր
ու ըսէ. մեր տէր Աստուածը զմեզ կը կանչէ որ ի-
րեք օրուան ճամբայ դէպ 'ի անապատը երթանք,
զո՛հ ընենք: Գիտեմ, ըսաւ Աստուած, չուզեր թո-
ղուլ. բայց ես զինքը չարաչար կը պատժեմ՝ ին-
չուան որ թողու »: Ան ատեն Մովսէս. « Հասցա
թէ որ Իսրայէլացիք չհաւտան, ի՞նչ ընեմ » ըսաւ:
« Չեմքի գաւազանդ գետինը ձգէ », ըսաւ Աս-
տուած. ձգելուն պէս օձ դարձաւ, ու Մովսէս
սկսաւ վախնալ: Երբոր Աստուծոյ հրամանովը
պոչէն բանեց, նորէն գաւազան եղաւ: Ետև Աս-
տուած. « Չեմքդ ծոցդ խոթէ », ըսաւ. Մովսէս
երբոր խոթեց ու հանեց՝ տեսաւ որ բորոտած էր.
Աստուած « Կորէն ծոցդ դիր » ըսաւ. դնելուն
պէս՝ բորը վրայէն գնաց: « Թէ որ նորէն չհաւա-
տան, ետևէն աս ալ ըրէ՝ ըսաւ. գետէն ջուր առ,
գետինը լեցուր, ջուրը արիւն կը դառնայ »: Երբ-
որ Մովսէս նորէն ետ կեցաւ՝ համարձակ խօսիլ
չուենեալուն » համար, « Ես ոյժ կուտամ, ըսաւ
Աստուած, քեզի խօսելու »: Մովսէս երբոր սկը-
սաւ նորէն հրաժարիլ, ան ատենը Աստուած սրը-
գողեցաւ, ու Ահարոն իրեն եղբայրն ալ ընկեր
տուաւ. « Ան աղէկ խօսք ունի բերանը, գուն իմ
կողմանէս կ'ըլլաս ըսաւ, ան ալ ժողովրդեան »:
Ասանկով Բորեք լեռնէն տուն դարձաւ, աներո-
ջը մնաք բարով ըսաւ, աղաքը կինը մէկտեղ՝ գա-
ւազանն ալ ձեռքը՝ ճամբայ ելաւ:

Եգիպտոսի հարուստները .

Ն . Մովսէս ինչ յաջողութեամբ կատարեց Աստուծոյ հրամանը Եգիպտոս երթալու .

Պ . Երբոր ճամբայ ելաւ Աստուծոյ հրամանով, Ահարոն եղբայրը գիմաւորեց զինքը . սիրով պագաւուեցան ու մէկտեղ գնացին, ան Աստուծոյ տրւած հրաշքները Իսրայէլացւոց առջև ընելով հաւտացուցին թէ կ'ուզէ զիրենք փրկել Աստուած : Ետքը երկուքն ալ մէկտեղ Փարաւոնի առջևը ելան, ըսին . « Աստուած կ'ըսէ որ թողուս իր ժողովուրդը որ երթան իրեն տօնախմբութիւն ընեն » : Փարաւոն բարկացաւ . « Չեմ ճանչնար ան Աստուածը » ըսաւ . ու սկսաւ աւելի նեղը խոթել Իսրայէլացիները որ զբաղին ու փուճուճուճ բաներ չմտածեն :

Ն . Երբոր Մովսէսին դառն սլառճառաւ Իսրայէլացիք սկսան տանջուիլ ինչ կ'ընէին .

Պ . Մտնալով Աստուծոյ խոստմունքը որ քիչ ասենէն կը փրկուին, սկսան գանգատիլ Մովսէսի Ահարոնի դէմ : Բայց Աստուած Մովսէսի նորէն սիրտ տուաւ, որ երթայ աղէկ մը Իսրայէլացւոց հասկըցընէ, ըսէ թէ համբերեն քիչ մը որ Աստուծոյ առ Աբրահամ, և առ Իսահակ ըրած խոստմունքը վայելեն . ու ինքն ալ Ահարոնի հետ նորէն Փարաւոնի երթան ըսեն որ թողու, թէ չէ չարաչար կը պատժէ զանոնք, ու իր ժողովուրդը անկէ կը հանէ : Բայց Փարաւոն գաւազանին օձ դառնալը կախարդութիւն կարծեց, տեսնելով որ իր կախարդներն ալ ըրին . թէպէտ Մովսէսի գաւազանը մէկաշնեբուներ կլլեց :

Հ. Փարաւոնին խատարաութիւնը Աստուած
ինչով կակրողոց .

Պ. Տասը կերպ սասաիկ պատիժներով . ամէն
մէկ պատիժը տալու տակն կը ցուցընէր իրեն ար-
դար դատաստանին ահեղութիւնը , և զատ զատ
ամէն մէկը օրերով ուշացընելովը կ'իմացընէր իր
երկայնամիտ համբերութիւնը :

Հ. Եգիպտացւոց առջի պատիժը ինչպէս ե-
ղաւ .

Պ. Առաւօտանոց Փարաւոն գետին եզերքը ելեր
կեցեր էր . Մովսէս Աստուծոյ հրամանովը դնաց
դիմացի կողմէն . « Արովհետեւ չես թողուր Իսրայ-
էլացիները՝ ամէն տեղի ջրերը արիւն դառնան
ըսաւ , ձկներն ալ սաակին » . ու զարկաւ գաւա-
զանովը ջրին ու արիւն դարձան բոլոր Եգիպտոսի
ջրերը : Առջին անգին փոսեր կը բանային Եգիպ-
տացիք ու ջուր չէին դաներ եօթը օր : Բայց աս
բանս կախարդներն ալ փորձեցին՝ ըրին , անոր
համար խատացաւ Փարաւոնին սիրտը :

Հ. Ո՞րն է երկրորդ պատիժը .

Պ. Աստուծոյ հրամանովը նորէն գնաց Մով-
սէս ու ըսաւ Փարաւոնին : « Արովհետեւ չես թո-
ղուր , գետէն գորտեր ելլեն ու բոլոր քաղաքը լե-
ցունին » : Ետքը Ահարոն Մովսէսի գաւազանը եր-
կրնցուց դէպ 'ի Եգիպտոսի ջրերուն ու լճերուն
վրայ , ու այնչափ գորտ բխեց անոնցմէ՝ որ բոլոր
Եգիպտացւոց աները եկան լեցուեցան , և անոնց
պառկելու մահիճներուն վրայ , թոնիրներուն ու
կերակուրներուն վրայ կը վիտային : Աս բանս կա-
խարդներն ալ ըրին . բայց Փարաւոն աղաչեց Մով-
սէսի որ աղօթքով աս պատիժս վերցընեն , որ զի-
րենք թողու : Մովսէս ալ Փարաւոնի ցուցընե-
լով թէ ինքը աս բաներս կախարդութեամբ չընէր ,
հարցուց թէ ե՞րբ կ'ուզես որ դագրի . Փարաւոն
ալ վաղը ըսաւ : Ու Մովսէս աղօթք ընելուն պէս ,

ձեկալ օրը սատկեցան ան գորտերը, ու բոլոր երկիրը հոտեցուցին: Բայց Փարաւոն խօսքին վրայ չկեցաւ:

Հ. Ո՞րն է երբորդ պատիժը.

Պ. Հրամայեց Աստուած Մովսէսի որ Ահարոն գաւազանովը դեանի հողը զարնէ. անանկ որ ըրաւ՝ բոլոր Եգիպտոս մտնով ծածկուեցաւ: Փարաւոնի կախարդներն ալ ընել ուղեցին՝ ու երբոր չկրցան, ըսին թէ Աստուծոյ ձեռքը կայ ամ բանիդ մէջը: Բայց անով ալ Փարաւոնի սիրտը չկապրողցաւ:

Հ. Ո՞րն է չորրորդ պատիժը:

Պ. « Գնա՛, ըսաւ Աստուած Մովսէսի, ու ըսէ որ թողու, թէ չէ՛ բոլոր երկիրը շանաճանձով լեցուի, որն որ Գեսեմ Եբրայեցւոց կեցած տեղը չըլլայ »: Ինչպէս որ ըսաւ՝ եղաւ, ու կճելով շատ մարդ և անասուն մեռցուց: Փարաւոն չգիմացաւ՝ Մովսէսն ու Ահարոնը կանչեց, ըսաւ. « Գնացէք ձեր Աստուծոյ զո՛հ ըրէք իմ երկրիս մէջ. — Չըլլար, ըսաւ Մովսէս, որ Եգիպտոցւոց առջև ան կենդանիները զո՛հ ընենք՝ որոնք մորթելը սղծութիւն կը սեպեն ու մեզ կը քարկոծեն. հասրապէտք է որ երէք օրուան ճամբայ հեռու տեղ երթանք: — Գացէք, ըսաւ, միայն թէ շատ չհեռանաք, աղօթք ալ ըրէք որ շանաճանձը անցնի »: Աղօթքին ուժովը անցաւ, բայց Փարաւոն խօսքը չպահեց:

Հ. Ո՞րն է հինգերորդ պատիժը.

Պ. Եգիպտացւոց ամէն կենդանիները մեկէն ջարդուեցան. բայց երբոր խմացաւ Փարաւոն թէ Իսրայէլացւոց զեն մը չէ կղեր, դժուարը գալով նորէն չթողուց:

Եղիապտոսի հարտաւածները .

Տ . Ո՞րն է վեցերորդ պատիժը .

Պ . Աստուած հրամայեց Մովսէսի ու Ահարոնի , որ Փարաւոնի առջևը ելլեն , ու ամով տաք մոխիր առած դէպ 'ի երկինք ցանեն : Ասով մարդիկնե-
րուն և մնացած անասուններուն վրայ անանկ խո-
ցեր ու բշտած ուռեցքներ ելան , որ չէին կրնար
դիմանալ : Աս խոցերս Փարաւոնի կախարդներն
ալ ունենալով չկրցան Մովսէսի դիմացը ելլել :

Տ . Ո՞րն է եօթներորդ պատիժը .

Պ . Աստուած տեսնելով որ Փարաւոնի սիրտը
չկակոցաւ ' նորէն խրկեց զՄովսէս որ ըսէ , « Գիտ-
նաս որ վաղը ' չտեսնուած կարկուտ պիտի թա-
փեմ Եղիապտոսի մէջ . ուստի , ըսաւ , դուրս տեղ
ինչ որ ունիք ' ներս առէք » : Մէկալ օրը եկաւ
կարկուտը կրակով խառնած , ու ամէն բան մո-
խիր դարձուց . և ով որ Մովսէսի մօտիկ չըրաւ ,
զանոնք կարկուտը սպաննեց : Սոսկացաւ Փարա-
ւոն , կանչեց զՄովսէս , որ կարկուտը դադրեցը-
նէ , և թող կուտամ ըսաւ . բայց երբոր դադրե-
ցաւ , ինքն ալ խօսքէն ետ դարձաւ :

Տ . Ո՞րն է ութերորդ պատիժը .

Պ . Սպաննացաւ Մովսէս սաստիկ մարախ բե-
րելու . երբոր լսեցին Փարաւոնի քովը եղած Ե-
ղիապտոսիները , սկսան դանդաափիլ իրեն ' թէ ին-
չո՞ւ չթողուր որ երթան իրենց Աստուածը պաշ-
տեն . « Չես տեսներ , կ'ըսէին , որ Եղիապտոս
կորսուելու վրայ է » : Փարաւոն կանչեց հարցուց
թէ « Գնացողները որո՞նք են » : Մովսէս ալ պա-
տասխան տուաւ թէ « Մենք ամէնքս ամէն ունե-

յածնիս ալ մէկտեղ : - Միայն էրիկ մարդիկը երթան » ըսաւ Փարաւոն : Մովսէս ալ երբոր դուրս ելաւ , Աստուծոյ հրամանովը ձեռքը դէպ 'ի երկինք երկնցրնելուն պէս՝ հարաւային կողմէն սաստիկ հով մը ելաւ , մէկ օր մը և դիշեր մը փչեց , ու մարախով Եգիպտացոց երկիրը ծածկեց , որ կերան չորցուցին կարկուտէն մնացածները : Ետքը Փարաւոնին մեղայ ըսելովը՝ Մովսէս Աստուծոյ աղաչեց , հով մը հանեց՝ որ ան մարախը բոլոր տարաւ Վարմիր ծովը թափեց . բայց ետքը նորէն Իսրայէլացիները չթողուց Փարաւոն :

Հ . Ի՞նչպէս էր իններորդ պատիժը .

Պ . Մովսէս նորէն Աստուծոյ հրամանովը ձեռքը դէպ 'ի երկինք երկնցուց ու սոսկալի թանձր մուժ պատեց բոլոր Եգիպտացոց երկիրը , և իրեք օր ամենևին մէկզմէկ չէին կրնար տեսնել , ինչուան ճրագն ալ լոյս չէր տար : Ուստի ան իրեք օրը ամէն մարդ պառկած կեցաւ : Բայց Գետեմ երկիրը աս պատժէս աղաա էր : Փարաւոն նորէն կանչեց զՄովսէս , և հրաման տուաւ որ երթան , միայն անասուննին թողուն : Մովսէս « Չըլար , ըսաւ , կճղակ մըն ալ չենք թողուր » : Ան ատենը Փարաւոն սրդողեցաւ Մովսեսի . « Մէյմ՝ ալ առջև չերենաս , ըսաւ , ապա թէ ոչ , կը սպաննեմ զքեզ » : Մովսէս « Ըսածիդ պէս ըլլայ ըսաւ » ու գնաց : Ան ատեն Աստուած Մովսեսի ըսաւ թէ մէկ պատիժ մըն ալ մնաց տալու՝ որ Փարաւոն զձեզ թողու :

Եգիպտոսի տասներորդ հարուածը .

Հ . Ի՞նչ կերպով եղաւ տասներորդ պատիժը .

Պ . Աստուած օրերով առաջ Մովսեսի ձեռքով

ապրսպրեց Իսրայէլացւոց որ իրենց բարեկամ և
զրացի Եգիպտացիներէն ոսկիէ արծըթէ զարդեր
ու ուրիշ սուղ հագուսաներ փոխ ուզեն, որ Եգիպ-
տոսէ ելլելու ատեն հետերնին ասնին • որպէս զի
կերպով մը վճարուի իրենց չարաչար աշխատան-
քը: Ետքը նորէն հրամայեց Աստուած որ Իսրայ-
էլացիքը տան գլուխ մէյմէկ արու մէկ տարուան
ոչխար առնեն պահեն՝ և նիսան ամսոյն տասնը-
ջորսին իրիկուան դէմ մորթեն, ու ամբողջ խոր-
վելով ան գիշերը արտորնօք ճամբորդի պէս՝ կօ-
շիկնին հագած, գաւազան ձեռուրնին՝ բաղար-
ջով, ու եղեգով կամ լեղի աղցանով ուտեն, որուն
յիշատակն ալ ընեն ամէն տարի, անունը գնելով
Պասքա կամ Պասեք, հայերէն Զատիկ: Ուրիշ
օրէնքներ ալ տալէն ետև, զգուշութեան համար
ապսպրեց որ ան մորթած ոչխարին արիւնէն ա-
մէն տանը գրան վերի շեմին վրայ քսեն, որ Ե-
գիպտացիները պատժող հրեշտակը տեսնէ ու Իս-
րայէլացիներուն զեն մը չհասցընէ: Ան օրը կէս
գիշերուն յանկարծ բոլոր Եգիպտացւոց առջի-
նեկ տղաքը մեռան, նաև անբան կենդանիներուն
ալ • անանկ որ ան գիշեր ամէն տուն մեռել կար,
ու բոլոր Եգիպտոս խռովեցաւ: Գիշերանց հրա-
ման տուաւ Փարաւոն որ երթան • ամէն Եգիպ-
տացիներն ալ վախցած կ'արտորցընէին: Ասան-
կով երկու հարիւր տասնըհինգ տարի Եգիպտոս
կենալէն ետքը, արտորնօք պատառը բերաննին
ճամբայ ելան • ու շաղուած ալիւրնին ալ ջլամու-
րած՝ լաթի մէջ փաթտած կռնակնին զարկին, և
իրենց բաներուն հետ՝ փոխ առած ոսկիէ ու ար-
ծըթէ բաներն ալ մէկտեղ աարին:

Հ • Եգիպտացւոց անդրանիկներուն շարդուե-
լուն յիշատակ ինչ նշան տուաւ Աստուած Եբրայ-
եցւոց •

Պ • Ապրսպրեց որ անկէ ետև միշտ արու առ-

ջինեկները իրեն ընծայեն, տղուն տեղ զոհ ընելով
Աստուծոյ կով մը կամ ոչխար մը կամ երկու
տատրակ կամ երկու աղաւնի. նաև անբաններուն
վրայ ալ աս օրէնքը դրաւ. և թէ որ անսուրբ կեն-
դանի է՝ տեղը սուրբ կենդանի տան :

Հ. Իսրայէլացիք Եգիպտոսէ ելած ատեննին
որչափ հոգի էին .

Պ. Վեցհարիւր հազար էրիկ մարդ՝ մանր տը-
ղոցմէ ու կնիկներէ զատ, ուրիշ շատ մարդիկ ալ
հետերնին :

Հ. Իսրայէլացւոց ճամբայ ցուցնող ո՞վ էր .

Պ. Բարձր օգուն մէջ կեցած ցորեկը սեան պէս
ամալ մը, ու գիշերը կրակէ լուսաւոր սիւն մը : Ա-
նանկ որ գիշեր ցորեկ դէպ'ի ուր որ կը շարժէր
կ'երթար աս սիւնը, բանակն ալ անոր ետեւէն կ'եր-
թար :

Հ. Եգիպտացւոց տասը պատիժները Փարաւոնին
սիրար չարժեցին պաշտելու ճշմարիտ Աստուածը .

Պ. Իրեն խստասրտութեան մէջ կեցաւ ինչուան
մահը. անոր համար մէկ քանի օրէն ետև՝ երբոր
Իսրայէլացիք Վարմիր ծովուն քովերը հասեր էին,
Փարաւոնին միտքը փոխուեցաւ. « Անխ, ինչո՞ւ
թողուցինք, ըսաւ, որ մեզի աղէկ կը ծառայէին » .
շուտ մը ետևէն ինկաւ բոլոր զօրքովը՝ երկու հա-
րիւր յիսուն հազար, ու վեցհարիւր ալ պատե-
րազմական կառքեր, ձիաւորներ, դէնքեր մէկ-
տեղ : Երբոր հեռուէն տեսան Իսրայէլացիք,
սաստիկ վախէն իրար անցած սկսան Մովսէսի
դէմ գանգատիլ թէ շատ աղէկ էր Եգիպտացւոց
ծառայութիւնը, քան թէ անապատին մէջ մեռ-
նիլ : Մովսէս աղօթքով Աստուծմէ լուսաւորուած
սիրտ կուտար : Երբոր Եգիպտացիները մօտեցան,
ամազէ սիւնը Իսրայէլացւոց ետևնին անցաւ, չթո-
ղուց որ խառնուին, ու սաստիկ մութ եղաւ ան
գիշերը : Ետքը Մովսէս Աստուծոյ հրամանովը

ջրին զարկածին պէս՝ սաստիկ հարուային հով
մը փչելով երկու բաժնուեցան ջրերը, և պարսպի
պէս երկու դիէն դիպուեցան, ու Իսրայէլացիք
բոլոր գիշերը մէջէն անցան: Երբոր Եգիպտացիք
ալ անոնց ետեւէն ծովին մէջ բացուած ճամբան
մտան, Աստուած իրենց սիրար սաստիկ վախ մը,
շփոթութեամբ մը ձգեց որ կապուեցան մնացին:
«Ես դառնանք փախչինք» ըսելուն չմնաց, Մով
սէս Աստուծոյ հրամանովը ձեռքը ծովուն վրայ եր-
կրնցուց, ու մէկէն՝ ի մէկ բոլոր ծովին բաժնուած
ջուրը քովէքով եկաւ, և բովանդակ Եգիպտացի-
ները ծածկեց, խղդեց, և բոլոր մարմինները ծո-
վուն եղերքը լեցուեցան: Աս տեսնելով Իսրայէ-
լացիք սկսան վախնալ Աստուծմէ ու Մովսէսէն •
ու էրիկ մարդիկը և կնիկ մարդիկը երկու դաս ե-
ղած, մէկուն դասագլուխ Մովսէս, մէկալին Մով-
սէսին քոյրը Մարիամ՝ սկսան նուագարաններով
փառք աալ Աստուծոյ ու երգել:

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Աբրահամ ինչպէս քոյր ըսաւ Սառային համար .

Պ. Հրէից սովորութիւն է ազգականին քոյր ըսել : Սառան ալ որ Ղովտայ քոյրն էր Աբրահամու քոյր ալ կրնար ըսուիլ :

Հ. Ո՞վ էր Մելքիսեդեկ .

Պ. Սուրբ Թագաւոր մըն էր Քանանացւոց երկիրը Երուսաղէմի մէջ . և կոյս ու քահանայ ըլլալով Քրիստոսի օրինակ էր :

Հ. Աբրահամին ու Սառային անունը Աստուած ինչո՞ւ փոխեց .

Պ. Աբրամ հրէարէն մեծ հայր ըսել է . իսկ Աբրահամ շատ ազգերու հայր : Ասանկ ալ Սարա քիբոնի ի՞նչ կը նշանակէ . իսկ Սարրա՝ ամենուն տիրուհին : Որովհետեւ Քրիստոսին աշխարհ դալովը, իրենք ամէն ազգերուն ծնող պիտի ըլլային :

Հ. Հրեշտակը ինչո՞ւ կոչու ըրաւ Յակոբայ հեա .

Պ. Իրեն սիրտ տալու համար որ հրեշտակի յաղթելէն ետքը, Եսաւէն ամենեկին չվախնայ :

Հ. Յակոբ իր Մանասէ ու Եփրեմ Թոռները օրհնելու ատեն ինչո՞ւ աջ ձեռքը Եփրեմին վրայ դրաւ .

Պ. Վասն զի մարդարեւական հոգւով իմացաւ թէ Եփրեմին ցեղէն պիտի ըլլային Իսրայէլացւոց տասը ցեղին Թագաւորները : Երկրորդ որ Եփրեմին ցեղը Մանասէին ցեղէն պատուաւոր ու շատւոր պիտի ըլլար : Երրորդ որ Եփրեմին ցեղէն պիտի ծնանէր Յեսու՝ Քրիստոսի օրինակը :

Ն. Փարաւոնի հրամանը որ ըրեր էր Իսրայէլացւոց մանչ տղաքը մեռցնելու համար, առաջ գնաց .

Պ. Հաւանական կարծիք է թէ Եգիպտացւոց սիրար չգիտացաւ ասանկ անգթութեան, ու քիչ ատենէն դադրեցուցին . կամ ան թաղաւորն որ Փարաւոն Ամենովփիս կ'ըսուէր, մեռնելուն պէս անոր հրամանն ալ հետը վերջացաւ, երբոր Մովսէս չորս տարուան էր :

Ն. Մովսէսի Աստուծոյ հրամանին դէմ կենալը, ու մէկէն յանձ չառնելը աղէկ բան էր .

Պ. Չէ, վասն զի անհնազանդութիւն էր ըրածը, չմտածելով թէ Աստուած էր հրամայողը, ուստի իրեն պէտք եղած ոյժն ալ կրնար տալ : Անոր համար Աստուած ալ վրան նեղացաւ :

Ն. Ի՞նչ իրաւունքով Իսրայէլացիք կողոպտեցին Եգիպտացիները .

Պ. Աստուած ամենուն տէրը՝ արդար դատաստանով անանկ որոշեց ու հրամայեց իրենց՝ առանց վարձքի քաշած աշխատանայ ու չարչարանայ տեղը : Արովհետեւ Եգիպտացիք ինքիրերնուն չէին տար՝ բռնի աալ տուաւ :

Դ Ա Տ Ա Ի Ո Ր Ա Յ Դ Ա Ր Ը

Մ Ո Վ Ա Ս Ե Ս Է Ն Ի Ն Չ Ո Ւ Մ Ն Ս Ա Ի Ո Ւ Ղ

33

Խորայեղացոց ձամբորդութիւնք .

Հ . Խորայեղացիք Փարաւոնին ձեռքէն խալըսե-
լէն ետև ազատ ու հանգիստ մնացին .

Պ . Չէ . վասն զի Վարմիր ծովէն ելլելէն ետև
Սուր անապատին մէջը իրեք օր ճամբայ ըրին , ու
խմելու ջուր չէին գտներ : Հասան Մեռա , հոն ալ
ջուրը լեզի էր , անոր համար սկսան արանջալ :
Մովսէս Աստուծոյ դիմեց . Աստուած ալ փայտ
մը ցրցուց որ ջրին մէջը դնելով կ'անուշիար : Աս-
տուած հոն խրատեց ժողովուրդը՝ սլատուիրանք-
ներ տուաւ որ պահեն , ու ինքն ալ զանոնք հո-
գայ : Ետքը ելան Ազիս՝ եկան՝ ուր որ տասուեր-
կու անոյշ ջրի աղբիւր կար ու եօթանասուն ար-
մաւենի . հոն քիչ մը կենալէն ետքը դնացին Սին
անապատը , և հոն ալ կերակուրի նեղութիւն սկը-
սան քաշել :

Հ . Խորայեղացիք անապատին մէջ ուսկից գտան
կերակուր .

Պ . Երբոր մեկքերան կը արանջային Մովսէսի
ու Ահարոնի վրայ , Եզիպատոսի միտը հացը յիշե-

լով և փափաքելով որ հոն մեռած ըլլային, անոնք
ալ սկսան խնայելն թէ Աստուծոյ դէմ է ըրած
նին: Ետքը Աստուծոյ կողմանէ խօսք առին որ
իրիկուան դէմ միս ուտեն, և մէկալ առաւօտ հաց
և ան միջոցին Աստուծոյ փառքը երևեցաւ ամպին
մէջէն: Ետքը իրիկուան անհամար լորամարդի ե-
կան իջան բանակին վրայ, և առաւօտը ելան տե-
սան որ ցօղին հետ եղեամի պէս ճերմակ գինձի
նման բան մը իջեր է, զարմանալով սկսան երբայե-
ցերէն ըսել Ման հո, որ ըսել է « Աս ի՞նչ է »:
Ասկէ անուէր մնաց Մանան: Եւ Աստուծոյ դիէն
Մովսէս ապապրեց որ ամէն առաւ մէկ օրուան
ուտելու համար հացի անկէց ժողվեն արևը
չծաղած. վստն ղի արև տեսածին պէս մէկէն կը
հալէր: Եւ ուրբաթ օրերը շաբաթ օրուանն ալ
մէկանդ ժողվեն: Բայց թէ որ ուրիշ օրուան պա-
հէին կ'որդնօտէր: Եւ մէկ օրուան համար քիչ
ժողվողին չէր պակսէր, շատ ժողվողին ալ չէր ա-
ւելնար: Եղան ոմանք որ պահեցին մէկալ օրուան
ալ, և բոլոր որդնօտեցաւ. Մովսէս ալ նեղացաւ
անոնց վրայ: Ոմանք ալ շաբաթ օրը ելան ժողվե-
լու չգտան, Աստուած ալ բարկացաւ ու ապրա-
պրեց որ շաբաթը սուրբ պահեն:

Հ. Մանանան ի՞նչպէս կ'ուտէին.

Պ. Առաջ ալիւրի պէս կը ծեծէին, ետքը շա-
ղուելով կ'եփէին, խորիսխի համ կ'ըլլար: Բառա-
սուն տարի ասով ապրեցան Իսրայէլացիք. Աս-
տուծոյ հրամանովը աս մանանայէն ոսկիէ սափա-
րով պահեցին, ու ետքը Աստուծոյ տապանակին
մէջ դրին, իրեն բարերարութեանը յիշատակ:

Հ. Սին անապատէն ո՞ր գնացին Իսրայէլա-
ցիք, և հոն ի՞նչ նոր գիպուած հանդիպեցաւ.

Պ. Ռամփիղիմ գնացին, և հոն նորէն ջուր չգտ-
նելով, այնչափ սասափկ Մովսէսի դէմ տրանջա-
ցին՝ որ քարկոծել կ'ուզէին: Մովսէս Աստուծոյ

դիմեց . Աստուած հրամայեց որ քանի մը հողի
ծերերէն հեար առած երթայ դիմացը Բորեբ լե-
ռը , դաւաղանով ապառաժ քարին զարնէ . և ա-
սանկով ջուր բխեցուց : Մովսէս ան տեղին անու-
նը Փոքն-Բիւն դրաւ . որովհետեւ Իսրայէլացիք ու-
զեցին խմանալ թէ Աստուած իրենց հեա է : Աս
Ռամփիդիմ ըստւած տեղը առաջինը եղան որ պա-
տերազմի ելան Իսրայէլացւոց դէմ Ամաղեկացիք :
Մովսէս հրաման տուաւ Նաւեայ որդւոյն՝ Յե-
սուայ՝ Եփրեմի ցեղէն , որ առաւօտը կարիճ մար-
դիկ հեար առնէ՝ Ամաղեկացւոց դէմ պատերազմի
ելլէ : Ինքն ալ դաւաղանը ձեռքը Ահարոնի ու
Ովբի հեա լեռան վրայ ելաւ . թեւերը վեր բռնած
աղօթք որ կ'ընէր , Իսրայէլացիները կը յաղթէին .
երբոր յոգնելով վար կ'իջեցընէր , Ամաղեկացինե-
րը վրայ կ'ելլէին : Ան ասենը քարի մը վրայ նստե-
ցուցին զՄովսէս , և երկու կողմէն Ահարոն և Ովբ
թեւերը վեր կը բռնէին , և անանկ ինչուան իրիկուն
բաղկատարած կենալով բոլոր Ամաղեկացիները
ջարդուեցան . ետքը Աստուած ըսաւ Մովսէսի որ
աս յաղթութեան յիշատակը դրէ , և Յեսուայ ալ
ըսէ որ Աստուած Ամաղեկը բոլորովին ջնջել կ'ու-
զէ : Մովսէս ալ հոն սեղան մը շինեց՝ անունը դը-
րաւ Տէր ապա-էն Իմ :

34

Ճամբորդութիւն .

Հ . Իսրայէլացւոց ճամբորդութեան ասեն դա-
տաստաննին ո՞վ կը տեսնէր .

Պ . Ինչուան Ռամփիդիմ մինակ Մովսէս : Հոն
Մովսէսի աները Յոթոր , անոր կինը ու երկու
աղաքը առած եկաւ բարեկու , և Իսրայէլացւոց
ուրախակից ըլլալու . Մովսէս պաղտուեցաւ և սի-

րով ընդունեցաւ ու պատմեց ամէն բան : Արտնց
վրայ Յովթոր զարմացաւ ու զոհ ըրաւ Աստուծոյ ,
ու ամէն ծերերն ալ անոնց հետ սեղանի նստան :
Երկրորդ օրը Յովթոր տեսաւ Մովսէսի մինակ դա-
տաստան կարելն , ու չհաւնելով խրատ տուաւ
որ իրեն ընկեր ընարէ խելացի , արգար , խոնարհ ,
աստուածասպաշտ մարդիկ , ու դատաւոր դնէ հա-
զարին մէկ հողի , հարիւրին մէկ , յիսունին մէկ ,
տասնին մէկ , որ սղտիկ դատերը հողան , ու մեծը
իրեն խնայընեն : Ետքը Յովթոր դարձաւ իր տեղը .
Մովսէս ալ անկէ ետեւ անոր ըսածին պէս կ'ընէր :

Հ . Իսրայէլացիք Ռափիիդիմէն ուր գնացին .

Պ . Սինա լեռանը դիմացը , Եգիպտոսէ ելլելէն
իրէք ամիս ետքը : Հոն Մովսէս Սինա լեռը ելաւ ,
և Աստուած յայանեց Մովսէսին՝ թէ կ'ուզէ դա-
շինք դնել հետերնին որ պահեն , ու իրեն ժողո-
վուրդ ըլլան : Մովսէս իջաւ լեռնէն , սա բանս
պատմեց ծերերուն , և ամէնքն ալ հաւնեցան :
Երբոր Մովսէս ժողովրդեան պատասխանը Աս-
տուծոյ տարաւ , ըսաւ Աստուած , թէ ամպէ սիւ-
նին մէջէն կը խօսիմ քեզի հետ որ իրենք ալ լսեն :
Եւ հրամայեց որ երկու օր պատրաստուին , լա-
թերնին լուանան որ երրորդ օրը Աստուած Սինա
լեռը պիտի իջնայ : Լեռանը չորս դին ալ սահման
դնել տուաւ որ անկէ անդին չանցնին թէ մարդ
թէ կենդանի՝ քանի որ Աստուած հոն է , որ չմեռ-
նին : Սիայն Մովսէսն ու Ահարոնը մօտ կանչեց :
Երրորդ օրը առաւօտանց Սինա լեռը ամպով ծած-
կած կը բռնկէր կը միսար . սասաիկ փողի ձայնե-
րով կայծակներ կ'ընէր կը գոռար : Ժողովուր-
դը սարսափած շուարուած կեցան , և Աստուած
ահաւոր ձայնով ան ամպերուն մէջէն տասը պա-
տուիրանքները ըսաւ Մովսէսի :

Հ . Աստուծոյ խօսիլը Սինա լեռանը վրայէն Իս-
րայէլացիք ինչ սրտով մտիկ ըրին .

Պ . Սասաիկ վախով եա քաշուեցան , ու խօսիլը դադրելուն պէս՝ Մովսէսին աղաչեցին որ ուրիշ ատեն իրմէ լսեն պէտք եղածը , որ չըլլայ թէ մեանին : Մովսէս ալ ըսաւ թէ « Աստուած իր վախը սրտերնուդ մէջ անկելու համար ըրաւ » : Ետքը ամպին մէջ մտաւ՝ ուրիշ օրէնքներ ալ լսեց ու դարձաւ պատմեց , գիր անցուց . ետև տասուերկու քար շարեց լեռան ծայրը , սեղան շինեց . ու վրան հորթ զոհ ընել տուաւ , և արիւնը ժողովրդեան վրայ սրսկեց՝ դրած դաշինքին նշան :

Հ . Մովսէս միշտ մինակ կ'երթար Սինա լեռը .

Պ . Առջի օրէնքները առնելէն ետքը Աստուծոյ հրամանովը գնացին մէկտեղ Ահարոն , Կարաթ , Աբիուդ և եօթանասուն ալ ծեր . ու Աստուծոյ կեցած տեղը տեսան՝ որուն գետինը աղիւսի պէս շափիւղայ քարէ կ'երևնար : Ետքը նորէն առանձին Յեսուայ հետ գնաց քարէ տախտակներու վրայ պատուիրանքները գրած բերելու համար : Աեց օրէն ետև Աստուած մինակ Մովսէսը՝ ալ առաջ կանչեց , որ կրակի գունով երեցած ամպերու մէջ կեցաւ քառասուն օր :

35

Ոսկիէ հորքը .

Հ . Ան քառասուն օրն որ Մովսէս գնացեր էր Սինա լեռը , Իսրայէլացիք խնչ ըրին .

Պ . Մովսէսին ուշանալուն վրայ նեղացած գնացին Ահարոնին ըսին թէ « Աստուածներ շինէ որ մեզի առաջնորդ ըլլան » : Ահարոն « Բերէք ըսաւ կնիկներնուդ՝ զաւկրներնուդ ոսկի օղերը » ու առնոցմէ հորթ մը թափեց , առջև սեղան շինեց , ու « Ապըր տօնը կատարեցէք » ըսաւ : Ուստի եկան

առջևը զոհ ըրին, կերան խմեցին ուրախու թեամբ,
ու երան պար բռնեցին:

Հ. Աստուած Իսրայէլացւոց հորթ պաշտելուն
համար ի՞նչ պատիժ տուաւ.

Պ. Ուզեց ջնջել ամէնքը մէկէն, ու լեռան վրայ
Մովսէսին խնայուց որ կ'ուզէ մեծ ազգ ընել միայն
զինքը: Բայց Մովսէս շատ աղաչանքով Աստու-
ծոյ բարկութիւնը իջեցուց: Ետքը Աստուծոյ
գրած երկու քարէ տախտակներն առած լեռնէն
իջնալու առնն՝ Յետե պատերազմի ձայն կը լսէր.
« Չէ, ըսաւ Մովսէս, գինովներու ձայն է »: Եւ
երբոր մտեցաւ ու տեսաւ հորթն ու պարը, ա-
նանկ բարկացաւ որ ձեռքի քարերը գեախնը զար-
կաւ ջարդեց: Այրեց ան հորթը, խարտոցեց,
ջրին մէջ ցանեց ու ժողովրդեան խնայուց. Ահա-
րոնի ալ սրգողեցաւ որ դէմ չէր կեցած անոնց:
Ետքը բանակին դուռը կեցած ըսաւ. « Աստու-
ծոյ կողմ եղողը իմ քովս գայ »: Մէկէն ժողովե-
ցան Ղևեայ ցեղը: Ան առնն « Աստուծոյ հրա-
մանն է, ըսաւ, որ սուրերնիդ առնէք՝ մէկ անգամ
պարտիք բանակին մէջն ու ջարդէք, ազգական
բարեկամ չնայելով »: Ասանկով իրեք հազար
մարդ սպաննուեցաւ: Աս բանիս համար Աստուած
ալ քահանայութիւնը Ղևտացւոց տուաւ, և Ահա-
րոնը քահանայապետ:

Հ. Հորթ պաշտելու յանցանքն ի՞նչպէս ներեց
Աստուած Իսրայէլացւոց.

Պ. Մովսէսի աղաչանքովը, որ կ'ըսէր՝ « Թէ
որ չներես անոնց, զիս ալ երեսէ ձգէ »: Աս-
տուած ալ ներեց ու ապրասպրեց որ սուգ մանեն,
զարգարուն լաթերնին փոխեն, ինչուան որ նորէն
Աստուծոյ հրամանը լսեն: Եւ իր խորանն ալ Աս-
տուծոյ հրամանովը բանակէն դուրս հանեց՝ որ
ըսուեցաւ Խորան Վայո-Ւէան. ով որ կ'ուզէր Աս-
տուծոյ բան մը հարցնել, հան կ'երթար:

Հ . Մովսէս Աստուծոյ հետ ինչպէս կը խօսէր .

Պ . Ամսփն մէջէն Աստուծոյ ձայնը միայն լսելով . ու երբոր բանակէն դուրս հանեց իր խորանը , խօսելու ատեն ամպէ սիւնը խորանին դուռը կ'իջնէր՝ ու մէջէն քարեկամի պէս մէկտեղ կը խօսէին . և ժողովուրդն իրենց տեղը կեցած երկըրպագութիւն կ'ընէին : Բայց անգամ մը Մովսէս ուզեց՝ որ բուն զԱստուած տեսնէ : Աստուած ըսաւ իրեն թէ « Զիս տեսնողը կը մեռնի » . բայց զինքը սիրելուն համար՝ դրաւ մէկ քարի մը ձեղքի առջև՝ որ Աստուած անցնելու ատեն՝ ետեէն քիչ մը տեսաւ :

Հ . Տասը սլաաուիրանքին քարերը Մովսէս չընորոգեց .

Պ . Աստուծոյ հրամանովը նորէն երկու քարէ տախտակ շինեց , ելաւ Սինա լեռը , ու նորէն գրեց՝ քառսուն որ հոն ծով կենալով : Ետքը երբոր կ'իջնէր՝ անանկ փառաւորաւած էր երեսը՝ որ ժողովուրդը քոյն երթալու վախցան . թէպէտ ինքը չէր խնայեր : Մովսէս կանչեց՝ պատմեց Աստուծոյ ըսածները . և անկէ ետքը ժողովրդեան հետ խօսելու որ կ'ըլլար , երեսը քող կը ծածկէր . ու երբոր Աստուծոյ կ'երթար , կը վերցընէր :

Խորայեղացոց ծեսերը .

Հ . Աստուծոյ ասլըստրած օրէնքներն ու կարգերը բոլոր կրցան պահել .

Պ . Առջի բերան չէին կրնար , վասն զի շատ բաներ կար շինելու : Աւստի Մովսէս նախ հրաման տուաւ որ ամէնքը ընծայ բերեն Աստուծոյ : Երբոր սկսով բերին արեւի հազուսաներ , զարգա-

րանքներ, ոսկիէ արծրթէ ամաններ, աղնիւ քարեր, և ուրիշ սուղ բաներ, աս ամէնը տուաւ Բեւելիէլին և Եղիաբին, որ իրեն ըսածին պէս շինեցին նոր խորան վկայութեան մը վրանի ձևով իրեն ամէն բանովը: Անկէ ետքը ուր որ կենային, աս խորան վկայութեանը բանակին մէջ աեղը կը դընէին, որուն մէջն էր տապանակն ալ:

Հ. Տապանակը ի՞նչ բան է.

Պ. Մնաուկ մըն էր կարծր փայտէ՝ ներսէն դըրսէն ոսկի պատած, վրայի խուփը մէկ կտոր թափածու ոսկի որ Բաաափիան կ'ըսուէր: Ա ըսան երկու ոսկիէ Բերոր գիմացէ գիմաց թևերով տապանակը կը ծածկէին: Մէջը դրին պատուիրանքներուն երկու քարերը, ոսկիէ ամանով մանանան, ետքը Ահարոնին ծաղկած դաւաղանն ալ. քովերն ալ ուրիշ սեղաններ ոսկիով պատած: Ուրիշ փառաւոր հագուստներ ալ Ահարոնին ու ղևաացիներուն հագնելու՝ պաշտօն ընելու ատեն: Ասոնք ամէնը Մովսէս օձեց սուրբ եղով: Ասանկ ամէն բան կարգի դնելէն ետքը, ամպէ սիւնը խորանին վրայ իջաւ. ու երբոր կը վերնար՝ առջևնէն կ'երթար, ճամբայ կ'ընէին:

Հ. Տապանակին քովի սեղանները ի՞նչ բանի համար էին.

Պ. Մէկը կ'ըսուէր Սեղան առաջադրութեան, որուն վրայ տասուերկու բաղարջ հաց միշտ կար. մէկալը Սեղան խնկոց՝ վրան ընծաները կը դրուէին: Խորանէն դուրս ուրիշ սեղան մը կար ողջակիզի, զոհի համար, ամէն գործիքներով: Ուրիշ մեծ ոսկիէ աշտանակ մըն ալ կար եօթը կանթեղով որ բոլոր գիշերը կը վառէր:

Հ. Աստուծոյ օրէնքը չպահողին Իսրայէլացիք ի՞նչ պատիժ կուտային.

Պ. Շատ անգամ ինքն Աստուած կը պատժէր խմացընելով թէ ան օրէնքները ճիշդ պահել պէտք

է : Ինչպէս որ օրէնք էր թէ ողջակիզին սեղանին վրայի կրակը միշտ վառած պահուի , ու բուրվառին մէջ միշտ ան կրակէն բանեցընեն : Նարազ ու Աբիուզ Ահարոնին մեծ որդիքը աս օրէնքը բանի անդ չսեպելով , անգամ մը իրենց բուրվառներուն մէջ ուրիշ կրակ դրին • ան ասենը յանկարծ սեղանէն կրակ ելաւ ու էրեց մեռցուց զանոնք : Ուրիշ անգամ ալ Նարայէլացիները մեծ մեծ պատիժներ Աստուծմէ ընդունեցան : Երէնք ալ երբոր իրենց մէջ օրէնքի դէմ բան կը տեսնէին , կ'երթային Մովսէսի կ'իմացընէին ու ընողը կը քարկոծէին • ասանկով մեծ վախ ինկաւ մէջերնին ու սկսան զգուշանալ ամէնքն ալ :

Հ • Օրէնքի դէմ ընողին ինչ պատիժ կուտային Իսրայէլացիք •

Պ • Անգամ մը հօր կողմանէ եգիպտացի մարդ մը՝ մեկու մը հետ կռիւ ընելով , անոր Իսրայէլացի անունը հայհոյեց • մեկէն քովի եղողները բանեցին Մովսէսի առջև տարին • որ Աստուծոյ հրամանովը ըսաւ՝ թէ ան մարդը բանակէն դուրս հանեն ու հայհոյութիւն լսողները ձեռուրնին անոր գլխուն վրայ դրած , իրենց վկայ ըլլալուն նշան , անանկ քարկոծեն : Ուրիշ մարդ մըն ալ որ ելեր շաբաթ օրը փայտ կը ժողվէր , երբոր Մովսէսի առջևը բերին , Աստուծոյ հրամանովը քարկոծել տուաւ :

Լորսամարգին , ու Մարիամին պատիժը •

Հ • Իսրայէլացիք Սինա լեռնէն ուր գնացին և ինչ նոր գիպուած եղաւ մէջերնին •

Պ • Մէկ տարիի չափ հան կենալէն ետև , իրէք օր ճամբայ ըրին դէպ 'ի Փառանու անաստաար :

Հասարակ ժողովուրդը սկսան տրանջալ միս ու-
ղել, միաբերնին բերելով Եգիպտոսի ձկները, ձմե-
րուկը, սոխն ու սխտորը: Ան ասենը Մովսէս ին-
կած Աստուծոյ առջև, կ'աղաչէր որ զինքը մեռցը-
նէ. « Չեմ կրնար, կ'ըսէր, այսչափ ժողովուրդը
մինակ հոգալ »: Աստուած եօթանասուն հոգի
ընտրել առւաւ, ու Մովսէսի մարգարէութեան
հոգիէն անոնց ալ բաժնեց որ իրեն օգնական ըլ-
լան: Անոնցմէ երկուքը Ելզադ ու Մովզադ մնա-
ցին բանակը ու կը մարգարէանային. երբոր Մով-
սէսի խնայուցին, Զեսուն ըսաւ որ արդիւնէ: « Ի՞նչ
կ'ըսես, ըսաւ Մովսէս. ո՛ւր է թէ բոլոր ժողո-
վուրդը մարգարէ ըլլային »:

Հ. Իսրայէլացւոց միս ուտելու վաճառքը Աս-
տուած ի՛նչպէս անցուց.

Պ. Ապրապրեց որ սլատրաստուին վաղը միս
ուտելու ինչուան որ կշտանան: Ար զարմանար
Մովսէս՝ թէ այնչափ ժողովուրդին որոնց միայն
կարիճները վեցհարիւր հազար հոգի են, ի՛նչպէս
ամիս մը միս կը բաւէ: Աստուած ծովու դիէն սաս-
տիկ հով մը հանեց՝ որ բերաւ դիզեց լորամարդի՝
երկու կանգուն բարձր բոլոր բանակին մէջն, ու
չորս դին՝ ինչուան օրուան մը ճամբայ հեռու.
անանկ որ երկու օր մէկ գիշեր ամէնքը վրան թա-
փեցան ժողվեցին: Ամենէն քիչ ժողվողը տասը
քոս ժողվեց. ամէնքն ալ ասխատեցին ու սկսան
ուտել: Քանի որ չէին հասցուցած, Աստուած
իր բարկութիւնն ալ վրանին թափեց. կրակ մը
բորբոքեցաւ մէջերնին որ չարաչար տանջելով
չառ մարդ մեռցուց, ինչուան որ Մովսէսին ա-
ղօթքովը դադրեցաւ. անոր համար ան տեղին տ-
նունը Հրայրեայ, և Գերեշման, զանկուհեան ըսուե-
ցաւ: Ետքը անկէ ելան Ատերովթ եկան. ուր բո-
րոտեցաւ Մարիամ Մովսէսի քոյրը:

Հ. Մարիամ Մովսէսի քոյրը ինչո՞ւ բորոտեցաւ.

Պ • Մովսէսի կինն որ Եթովպացի էր՝ տեսաւ որ Մովսէս Աստուծոյ սիրելի եղաւ, սկսաւ պարծենալ: Մարիամ չգիմանալով առ բանիս, Ահարոն եղբայրը հետն առած սկսան Մովսէսը վար զարնել, ըսելով « Միթէ Աստուած միայն Մովսէսի հետ կը խօսի, մեզի հետ ալ խօսեր է »: Մովսէս խիստ հեղ ըլլալով ամենեկին դէմ չզրուցեց: Բայց Աստուած բարկացաւ, իրէքը մէկէն խորանը կանչեց՝ ու ամպէ սիւնէն ըսաւ իրենց • « Գիտնաք որ ուրիշ մարդարէներուն հետ տեսիլքով կը խօսիմ, բայց Մովսէսի հետ՝ որ իմ հաւատարիմ ծառաս է, բերնէ բերան կը զրուցեմ • ինքը իմ աստուծային փառքս ալ տեսեր է • դուք ինչպէս չվախցաք քամահրեցիք զինքը »: Դուրս ելլալնուն պէս մէկէն բորոտեցաւ Մարիամ • ան ատենը Ահարոն գնաց աղաչեց Մովսէսի • Մովսէս երբոր խնդրեց Աստուծմէ, հրամայեց Աստուած՝ որ Մարիամ եօթը օր բանակէն դուրս կենայ: Աս պատճառաւ ժողովուրդը ճամբայ չելաւ՝ սպասեց եօթը օր:

38

Լրտեսները ոչ կորիս Գարսն Արիւրն •

Հ • Ատերովթէն ո՛ւր գնացին Իսրայէլացիք •

Պ • Փառանու անապատը • հոն Մովսէս խմացուց թէ Աւետեաց երկիրը մօտեցան • անոնք ալ ուղեցին որ առաջուց մարդ խրկեն խմանան ինչպէս տեղ ըլլալը:

Հ • Մովսէս հաւնեցան Իսրայէլացւոց ուղածին որ իրենցմէ առաջ լրտես խրկեն Աւետեաց երկիրը •

Պ • Աստուծոյ հրամանովը տասուերկու ցեղէն մէյմէկ մարդ ընտրեց որ երթան նային, ու ան

տեղի պատուհներն ալ հետերնին բերեն : Քառասուն օր ցնացին ուշացան . ու երբոր դարձան բերին հետերնին նուա , թուզ ու մէկ խաղողի կուզ մը անանկ մեծ ու ծանր՝ որ փայտի մը անցուցած երկու հողի կը վերցընէին : Եւ պատմեցին թէ շատ բարեբեր երկիր է , բայց մարդիկն ալ շատ զօրաւոր են , քաղաքնին մեծ՝ ամուր . ժողովուրդը լսելով աս բաներս՝ վախցան : Քաղէք Յուդայի ցեղէն ու Յեսուէն սիրտ կուտային . և մէկաշնոնք կը վախցընէին , ըսելով թէ « Ան երկրին մարդիկներուն քով մենք մարտիս կ'երենայինք » : Ան դիշերը իրար անցած ամէնքն սկսան տրանջալ Մովսէսի ու Ահարոնի դէմ , և ըսել թէ « Ա՛լ աղէկ էր Եգիպտոս կամ հոս մեռնէինք , քան թէ հոն երթանք ու անոնցմէ տղոցմով կնիկներով ջարդուինք » :

Հ . Երբոր Իսրայէլացիք վախցան մանեւու Աւետեաց երկիրը , ինչ ըրին .

Պ . Սկսան խորհուրդ ընել որ իրենց առաջնորդ մը դնեն , ու նորէն Եգիպտոս դառնան : Ան ատեն Մովսէս ու Ահարոն ինկան առջնին , կ'աղաչէին որ դադրին . Յեսու և Քաղէք ալ լաթերնին պատուած կը յորդորէին որ Աստուծոյ յուսան , որ կը պատերազմի իրենց ակըր : Ժողովուրդը կատրած վրանին վաղեցին որ քարկոծեն զիրենք . ան ատենը յանկարծ Աստուծոյ փառքը երեցաւ վկայութեան խորանին վրայ ու ըսաւ Մովսէսի . « Թող ալ սպաննեմ ատոնք՝ ու քեզ ալ աւելի շատցընեմ մեծցընեմ » : Մովսէս շատ աղաչելով որ իր երկայնամութեամբը աս անգամ ալ ներէ , իջեցուց Աստուծոյ բարկութիւնը : Բայց Աստուած սպառնացաւ որ ան Եգիպտոսէ ելող մարդիկը՝ քսան տարուրնէն վեր , մէկը Աւետեաց երկիրը չմանէ՝ Յեսուէն ու Քաղէքէն զատ : Անոր համար ճամբանին փոխել տուաւ դէպ ՚ի կարմիր ծովը , որ քառասուն տարի անասպատին մէջ պարտելով ամէնքն ալ մեռնին :

Հ. Իսրայէլացիք երբոր լսեցին թէ քառասուն տարի ճամբայ ընելով պիտի ջարդուին, ի՞նչ ըրին.

Պ. Հաս զլիցացին ըրածնեմունն վայ, ու մէկալ օրը առաւօտանց Մովսէսի ըսին որ « Ելլենք լեռը ու պատերազմելով առաջ երթանք : — Մի ընէք, ըսաւ Մովսէս, Աստուած հեաներնիդ չէ » : Անոնք մտիկ չըրին՝ ելան լեռը : Ան առենը Ամադէկացիք ու Քանանացիք ալ դէմ ելան, անոնցմէ շատը մեռուցին, մնացածն ալ նորէն բանակը դարձան :

Հ. Մովսէս քառասուն տարի Իսրայէլացւոց ճամբորդութեան ասեն ի՞նչ ըրաւ .

Պ. Աստուծմէ շատ ծէսեր ու դատաստան ընելու օրէնքներ առաւ՝ որ Աւտացւոց ու Երկրորդ օրինաց դրքերուն մէջ գրած են : Մէկ կողմանէ ալ Ժողովրդեան անկարգութիւնները դադրեցընել կը ջանար որ ազատին պատժուելէն :

Հ. Աւտացւոց ցեղն ալ պատժոյ արժանի գործք ըրին քառասուն տարուան մէջ .

Պ. Անոնք ալ կը յարմարէին ուրիշներուն . ինչպէս անգամ մը Կորխ Աւեայ ցեղէն, Իսթան և Աբիրոն Ռուբենի ցեղէն, ուրիշ երկու հարիւր յիսուն հոգի ալ խօսքի աէր մարդիկ մէկ եղած՝ Մովսէսի ու Ահարոնի դէմ ելան թէ « Ինչո՞ւ դուք Աստուծոյ Ժողովրդեանը կ'իշխէք » : Մովսէս աղաչելով կ'ըսէր թէ « Աստուած իր ուղածը ընարեց » . Կորխին ալ կ'ըսէր թէ « Ուրիշ ցեղերուն դժուարը պիտի դար աս բանիս համար . չէ թէ քեզի ու քու ցեղիդ որ Աստուած ընարեր իրեն առեր է » : Ետքը ըսաւ անոնց որ վաղը բուրվանին առած խորանը դան, ու հոն Աստուած իր կամքը յայանէ : Մարդ խրկեց որ Իսթան ու Աբիրոնն ալ դան : Անոնք, « Աչուրնիս հանես չենք դար ըսին, հերիք չէ քեզի որ մեզ կաթ ու մեղր բխած Եգիպտացւոց երկրէն հանեցիր որ ըս :

պաննես անապատիս մէջ, ու հիմա կը սրգայնս ալ
մեզի » : Մովսէս առ բանիս նեղացաւ ու ըսաւ առ-
տուծոյ • « Տէր առ ապերախաներուն աղօթքը մի
ընդունիր » : Առաւօտանց Կորխը երկու հարիւր
յիսունն ալ հեար, Մովսէս ու Ահարոնն ալ բուր-
վաներով խորանին դուռը եկան • հոն երեւցաւ
Աստուծոյ փառքը, ու ըսաւ Մովսէսի՝ թէ « Մէկ-
դի կեցէք որ ջարդեմ բոլոր ժողովուրդը » : Անոնք
ինկան երեսնուն վրայ ու կ'աղաչէին որ մէկ մար-
դու համար զամէնքը չսպառօթէ : Աստուած նորէն
հրաման տուաւ որ ամէնքն ալ ան իրեք ասըս-
տամբներէն զատուին : Ան ատեն Մովսէս ըսաւ
ժողովրդեան թէ « Նշան ըլլայ որ Աստուած զին-
քը խրկեր է, թէ որ ողջ ողջ անոնք գետինը անց-
նին » : Աս խօսքս ըսելու ատեն գետինը պատուե-
ցաւ, ու զԿորխ, զԴաթան և զԱբիրոն ողջ ողջ
անով տեղով մէջը առաւ : Երկու հարիւր յիսուն
հոգիին վրայ ալ կրակ իջաւ այրեց • անոնց պղնձէ
բուրվաները Աստուծոյ հրամանով հալեց Մով-
սէս՝ ու ողջակէզի սեղանին վրայ անցուց որ յիշեն
ու մէյմըն ալ Ահարոնին զաւկրներէն զառ մարդ
Աստուծոյ առջև խունկ չծխէ :

Ահարոնի գաշազանիս ծաղկիլը, բարեկ ջուր
բխիլը, պղնձե օձը .

Հ • Իսրայէլացիք Կորխայ պատիժն որ տեսան
ինչ ըրին •

Պ • Առջի բերանը խիստ սարսափելով իրար ան-
ցան • բայց մէկալ օրը վաղեցին Մովսէսի ու Ահա-
րոնի վրայ՝ « Դուք պատճառ եղաք » ըսելով : Ա-
նոնք մէկէն խորանը փախան, ամսիկ ալ զիրենք

ծածկեց : Աստուած նորէն ուզեց ջնջել ժողովուրդը, ինկան Աստուծոյ առջև աղաչելու, Մովսէս ըսաւ Ահարոնին թէ « Առ բուրվաւր, գնա ժողովուրդեան մեղքը քաւէ » : Ինչուան որ գնաց՝ տասնըչորս հազար եօթըհարիւր հօգի մեռան :

Հ. Իսրայէլացւոց մէջ քահանայութեան համար եղած տրտունջը ինչպէս վերցուեցաւ .

Պ. Ապսարեց Աստուած որ տասուերկու ցեղն ալ մէյմէկ գաւազանի վրայ գրեն անուննին, և վկայութեան խորանը գնեն . որուն գաւազանն որ ծաղկի՝ ան է Աստուծոյ ընտրածը : Մէկալ օրը տեսան ու ժողովուրդեան ալ ցրցուցին որ մինակ Ահարոնինը ծաղկեր ու ընկոյզ ալ տուեր է, որ Աստուծոյ հրամանովը առաջնակին մէջ սլահեցին . ժողովուրդն ալ զարհուրած ճար կը խնդրէին չի ջարդուելու : Մովսէս ալ կարգ գրաւ որ խորանին մէջ միայն Ահարոն իր աղաքներովը ծառայեն, մէկալ Ղևտացիները իրենց գործքը ընեն . մնացած մարդիկն ալ դրսէն Ղևտացւոց ծառայեն :

Հ. Աւետեաց երկիրը չմանելու պատժոյն տակը Մովսէս ալ կը սեպուէր .

Պ. Չէ . բայց շատ տարիէն ետքը, երբոր նորէն Սին անապատը եկան, Աստուած տեղը բանակնին գրին . հոն Մարիամ մեռնելէն ետքը, ժողովուրդը ջրի համար սկսան տրանջալ . « Երանի թէ մենք ալ մեռած ըլլայինք » կ'ըսէին : Մովսէս Աստուծոյ հրամանովը ժողովուրդեան հետ գիմացի լեռը գնաց՝ ապառաժէն ջուր հանելու, ու տարակուսած քարին վրայ ելաւ ըսելով թէ « Ասքարէս ձեզի ջուր պիտի հանենք » . ու գաւազանով երկու հեղ զարկածին սէս սկսաւ առատ ջուր գալ : Բայց Աստուած աս բանիս համար բարկացաւ Մովսէսի և Ահարոնի, ու ըսաւ որ Աւետեաց երկիրը չմանեն : Ասոր համար ան ջրին անունն ալ Զուր Բամբասանաց ըսուեցաւ :

Հ. Իսրայէլացիք Վաղեսէն ո՛ւր գնացին .

Պ. Աւզեցին անցնիլ Եդոմոյ երկրէն , անոր համար մարդ խրկեց Մովսէս՝ ըսելով որ մէկ բանի մը վնաս չենք ընել , միայն ճամբայ առէք : Անոնք վախցան՝ թող չտուին , կ'ուզէին պատերազմի ելլել , անոր համար դարձան Հովր լեռը եկան :

Հ. Ահարոն երբ մեռաւ .

Պ. Եղիպատոսէ ելլելէն քառասներորդ տարին , Հովր լեռան տակը . հոն Աստուած Մովսէսի ըսաւ որ Ահարոնը Հովր լեռը տանի՝ քահանայապետական լաթերը հանէ Եղիպար տղին հաղցրնէ . ասանկով հարիւր քսանուիրէք տարուան մեռաւ ու հոն թաղուեցաւ : Երեսուն օր ալ մահուանը վրայ սուգ առին :

Հ. Ահարոնին մեռնելէն ետքը Իսրայէլացւոց ինչ նոր դիպուած հանդիպեցաւ .

Պ. Քահանայիք վրանին պատերազմի ելան ու Իսրայէլացիներէն դերի առին . անոնք ալ ուխտ ըրին Աստուծոյ , թէ որ մտանէ Քահանայի իրենց ձեռքը , նզովեն . Աստուած լսեց իրենց աղաչանքին . յողթեցին Քահանայիներուն ու ան տեղին անունը Նու՛՛՛՛՛ գրին : Ետքը երբոր Հովր լեռնէն Սեւմոնայ գնացին , ճամբուն նեղութենէն ձանձրացած նորէն սկսան աժգոհալ Մովսէսի դէմ , ըսելով թէ « Գաներ ենք անշահ մանանայէն , ինչո՞ւ հանեցիր զմեզ Եղիպատոսէն » : Աստուած ալ թունաւոր օձեր խրկեց վրանին որ կը սպաննէին զամենքը . սկսան աղաչել Մովսէսի որ աղօթք ընէ իրենց համար : Մովսէս Աստուծոյ հրամանով սղնձէ օձ մը շինեց՝ ձողի վրայ բարձր կայնեցուց , ով որ անոր կը նայէր՝ կը բժշկուէր :

Բաղասում .

Հ . Իսրայէլացիք երբոր Աւետեաց երկրին մօտեցան , ինչ պատճառաւ ան տեղի ազգերը իրենց դէմ պատերազմի կ'ելլէին .

Պ . Աստուած կը գրգռէր զիրենք՝ սիրտերնին վախ ձգելով որ չըլլայ թէ իրենց միաս հասցընեն Իսրայէլացիք . անոր համար Ամովհաացաց երկիրը հասան ու անցնել կ'ուզէին , Սեհոն անոնց թագաւորը դէմ դրաւ . ուստի Իսրայէլացիք ալ պատերազմ ըրին . անոնց երկիրներուն տիրեցին : Ետքը Բասանու Ովգ թագաւորն ալ դէմ ելաւ , անոր ալ յաղթեցին՝ երկիրները առին : Ան ասեն Մովաբացաց Բաղակ թագաւորը վախուն որ չըլլայ թէ իրեն ալ յաղթեն , մարդ խրկեց Բաղասամ որդի Բէովրայ ըսուած կախարդին՝ որ գոյ Իսրայէլացիները անիծէ :

Հ . Բաղասամ անիծէց Իսրայէլացիները .

Պ . Աւջի բերան Բաղակայ քօլը չգնաց՝ Աստուծոյ հարցընելով . Բայց Բաղակ նորէն մարդ խրկեց ընծաներով . Բաղասամ մտիկ չըրաւ ան դիչեր նորէն Աստուծոյ հարցուց : « Գնա , ըսաւ Աստուած , բայց ըսածէս դուրս մի ելլեր » : Առաւօտանց էջը հեծած երթալու ասեն միտքը փոխուելուն համար՝ ճամբուն դիմացը երեցաւ հրեշտակ մը թուրը ձեռքը . էջը սկսաւ ճամբէն դուրս փախչիլ . Բաղասամ չտեսնելով հրեշտակը՝ զարկաւ էջին որ շտակ քալէ . երբոր քիչմ' ալ առաջ դնացին , էջը նորէն տեսաւ հրեշտակը ու մէկդի քաշուելով այգիին պատին քսուեցաւ որ Բաղասամու ոտքը ձիկնց ցաւցուց . ան ալ սրդողելով

կը զարնէր : Ետքը հրեշտակը նեղ ճամբու մը վրայ կեցաւ . էշն որ տեսաւ , ալ ճարը հասնելով նստաւ : Երբոր Բաղաամ չարաչար կը ծեծէր էշը , Աստուած բացաւ էշին բերանը որ ըսաւ . « Ինչո՞ւ իս կը ծեծես » . Բաղաամ ըսաւ . « Ասն զի իս ծաղը կ'ընես , դանակ մը ըլլար՝ հիմա անով կը զարնէի » : Պատասխանեց էշը . « Պզտըկուց 'ի վեր վրաս կը հեծնէիր , ասանկ բան ըրած ունիմ » : Բաղաամ Չէ , ըսաւ , ու յանկարծ հրեշտակը տեսաւ և մէկէն երկրադուր թիւն ըրաւ : Ան ատենը հրեշտակը ըսաւ . « Ի՞նչ անգթութեամբ կը ծեծես էշը . թէ որ առջեկս չփախչէր՝ քեզ կը սպաննէի : — Մեղայ , ըսաւ Բաղաամ , թէ որ կամենաս՝ ետ դառնամ » : Հրեշտակը , « Գնա՛ ըսաւ , միայն թէ Աստուած ինչ որ տուն տայ ան ըսես » : Երբոր հասաւ , Բաղակ անոր շատ սլափել ըրաւ ու բարձր տեղ մը հանեց որ Իսրայէլացիքը տեսնէ ու անիծէ : Ան ալ կախարդական բաներով անիծելու ճար մը գտնալ կ'ուզէր՝ Աստուծմէ հրաման առնելով . բայց Աստուած՝ իրեք անգամ ալ որ կը սլատրաստուէր անիծելու՝ օրհնել տուաւ : Բաղակ սրգողեցաւ վարնաեց , « Քեզի տալու սարգեներուս արժանի չեղար » ըսաւ : Ան ատենը Բաղաամ խորհուրդ տուաւ որ Մովսէսը ու Մադիանացոց աղջիկներուն ձեռքով Իսրայէլացիքը գլխէ հանեցին ու Բելփեգովը կուսքը սլաշտել տուին :

Հ . Ի՞նչ սատիժ կրեցին Իսրայէլացիք Բելփեգովը սլաշտելուն համար .

Պ . Աստուծոյ հրամանովը Մովսէս զանոնք անխնայ մեռցրնել տալով քանուչորս հազար հոգի որ մեռան , Փենեհէս Ահարոնի թուր՝ Եղիազարին որդին՝ աստուածային վրէժխնդրութիւն ցուցրնելով Մադիանացոց Քաղբի իշխանին աղջիկը մեռցուց , ու անով Աստուած հաշտեցրնէ .

լով դադրեցաւ մարդիկներուն կոտորածիւր : Ետքը
Աստուծոյ հրամանով հազարական հոգի ամէն
մէկ զեղէն գնացին Մադիանացւոց վրայ՝ Փենե-
հէան ալ հեաերնին, ջարդեցին զամէնքը, Բա-
ղասան մէկտեղ, ու ամէն ունեցածնին աւար ա-
ռին : Մովսէս ան երկիրները ինչուան Յորդանա-
նին քով Ռուբենի, Գադայ զեղերուն ու Մանա-
սէին կէս զեղին առաւ՝ իրենց ուղեւուն համար,
խօսք դնելով որ աներնին հոն թողուն ու իրենք
մէկալներուն հետ Աւետեաց երկիրը երթան օգ-
նեն որ անոնք ալ աեղաւորուին, ու ետքը դառնան :

Հ. Մովսէս ո՛ր մեռաւ .

Պ. Յորդանանու քովը Աստուծոյ հրամանով
Յեսուն իր աեղ առաջնորդ դրաւ, Իսրայէլացւոց
ալ շատ խրատներ առաւ օրէնքները աղէկ պա-
հելու . ու ամէն մէկ զեղը զատ օրհնելէն ետքը՝
Աբարիմ կամ Նաբաւ լեռը ելաւ, ուսկից Աս-
տուած իրեն զրոյսց բոլոր Աւետեաց երկիրները,
ու ան աեղը մինակ մեռաւ ու թաղուեցաւ հա-
րիւր քսան տարուան . ոչ աչուրները տկարացան,
ոչ ալ երեսը խորշովեցաւ . Իսրայէլացիք երեսուն
օր վրան սուգ ըրին :

41

Յորդանանէն անցնիլը ոչ եղած պատե-
րագնէկը .

Հ. Մովսէսի մեռնելէն ետքը Իսրայէլացիք ո՛ր
գնացին .

Պ. Աստուծոյ հրամանովը Յեսու ըսաւ որ
պատրաստուին Յորդանանէն անցնելու . ու եր-
կու լրտես խրկեց Նրիքով որ խմանայ թէ ի՞նչ

մտքի վրայ են ան տեղի մարդիկները . ու անոնց բերած լուրը աւելի սիրտ առած կարգով մտեցան գետին քովը . քահանաները առջևէն տապանակը վերցուցած . որոնք սառւելին ջրին դպրունելուն պէս Յորդանան երկու բաժնուեցաւ . վարի ջրերը Մեռեալ ծովը գնացին , վերինները դիզուեցան մնացին : Քահանաները տապանակով գնացին գետին մէջ տեղը կեցան , ինչուան որ աճէնը անցան :

Հ . Յորդանան գետին մէջէն Իսրայէլացիք անցնելուն պէս տապանակն ալ դուրս հանեցին .

Պ . Տապանակը դուրս չելած Աստուած հրամայեց որ գետին մէջէն քահանաներուն կեցած տեղէն՝ ամէն ցեղէն մէյմէկ հոգի մէյմէկ քար առնեն ու ան գիշերը ուր որ պիտի կենան՝ հոն տանին անկեն . ուրիշ տասուերկու քար ալ գետին մէջ տապանակին կեցած տեղը անկեն . ետքը տապանակը դուրս ելլելուն պէս՝ ջուրը նորէն առջինին պէս սկսաւ վազել : Ասով Յեսուէն ալ Մովսէսին պէս սկսան վախնալ :

Հ . Յորդանանէն անցնելէն ետքը ի՞նչ նոր դիպուած հանդիպեցաւ Իսրայէլացւոց .

Պ . Մէկէն մանանայ իջնալը դադրեցաւ , հոն առջի զատիկը ցորենէ բաղարջ կերան : Յետու ալ Աստուծոյ հրամանով գայլախաղ քարով թլփանեց անապատը ծնածները , անոր համար ան տեղին անունը Գաղգաղա ըսուեցաւ :

Հ . Յետուայ Երիքով խրկած լրտեսները ի՞նչ լուր բերին .

Պ . Գնացին Ռախաբ ըսուած կնկան մը տուն . Թագաւորը խմացաւ , մարդ խրկեց որ բռնեն . Ռախաբ պահեց զանոնք ու ըսաւ թէ գնացին . ետքը լրտեսներուն խմացուց որ ամէնքը սաստիկ վախի մէջ են , գիտնալով որ Աստուած է ձեր առաջնորդը . ու երգուընցուց զերեւիք որ քաղաքը

առնելու առեն իր տունը ազատեն . անոնք ալ
ասլրասլրեցին որ պատուհանին վրայ կարծիր չուան
կապէ որ ճանչցուի : Ետքը զիրենք չուանով պա-
տուհանէն վար իջեցուց՝ որ դադարուկ ճամբով
գնացին ու առ բաներս պատմեցին :

Հ . Երիբով քաղաքը ինչպէս առնուեցաւ .

Պ . Երբոր մէջի մարդիկը սարսափած՝ դռները
դոցած կեցեր էին , Աստուած Յեսուայ ասլրասլրեց
որ վեց օր մէյմէկ անդամ պարսպին չորս դին պար-
տին , քահանաներն ալ եօթը փող փչելով տա-
պանակին առջևէն , ու եօթներորդ օրը եօթը հեղ
պարտելով . ետքի անդամուն փողերը փչելու ա-
տեն բոլորը մէկէն կանչեն : Աս որ ըրին պարխապ-
ները մէկէն կործանեցան . իրենք ալ մտան զամէն-
քը մեռուցին՝ Ռախաբէն զատ , քաղաքն ալ այ-
րեցին : Ետքը Յեսու նորէն Երիբովը շինողին վրայ
անէծք կարգաց ըսելով թէ « Առջինեկովը հիմը
դնէ , վերջինովը դռները շինէ » : Ինչպէս որ հինգ
հարիւր տարի ետքը կատարուեցաւ , Ազան կամ
Աքիէլ Բեթելացին առջինեկ Աքիրոն տղուն հեա
սկսաւ շինել , ամէն տղաքը մեռան ու մնացած պրզ-
տի տղուն հեա լմրնցուց :

Հ . Երիբովն առնելէն ետքը ո՞ր քաղաքին վրայ
գնացին Իսրայէլացիք .

Պ . Յեսու Գայի քաղաքին վրայ երթալ ուղե-
լով ու խմանալով որ տկար քաղաք մըն է , իրեք
հազար մարդ խրկեց . բայց գնացին , երեսունու-
վեց հոգի իրենցմէ ջարդուելով փախան : Ասոր
վրայ Յեսու շփոթեցաւ՝ Աստուծոյ առջևը ինկա-
կը գանգատէր , ամէնուն սիրան ալ կոտրեցաւ :

Հ . Ինչո՞ւ համար Գայի վրայ գնացողները
յաղթուեցան .

Պ . Ասան զի Երիբովը կործանելու առեն՝ ա-
նոր նշոված բաներէն գողցեր պահեր էին : Աս-
տուած , « Թէ որ կ'ուղէք , ըսաւ , տա մեղքէն

աղաախլ, վիճակով գտեք գողն ու անով այրե-
ցեք » : Աս վիճակը Յուդայի ցեղէն Ա.քար զի-
նուորին վրայ ելաւ . Յեսու հարցուց անոր , ի-
մացաւ որ Երեքովը կողոպտելու ատեն՝ գողցեր
է աղուոր բանած վերարկու մը , երկու հարիւր
արծըթէ երկդրամեան , եւ լեզու մը յիսուն ոսկիի ,
ու վրանին մէջ հողուն տակը պահեր է : Յեսու
բերել տուաւ . և Ա.քարն իր անով տեղովը մէկ
ձորի մը մէջ տարին քարկոծեցին ու այրեցին .
վրանին ալ քարեր լեցընելով լեռ ձևացաւ , ո-
րուն անունը դրին Եմակ Ափովրայ :

42

Արևուտն կենսալը .

Հ . Ա.քարը մեռցընելէն ետքը Գայիի վրայ նո-
րէն գնացին .

Պ . Աստուած Յեսուայ ըսաւ որ բոլոր զօրքով
երթայ ու կործանէ : Յեսու ալ գիշերով երեսուն
հազար զօրք տարաւ քաղքին ետեները պահուը-
տեցուց , ու ինքն աւտուն քիչ մը զօրքով քաղ-
քին դէմ ելաւ . Գայիի մարդիկն որ տեսան , ա-
մէնքն իրենց թագաւորին հետ Իսրայէլացւոց դէմ
ելան : Յեսու սուտ վախ ցուցընելով ետ քաշուե-
ցաւ , ինչուան անոնք աղէկ մը իրենց քաղքէն հե-
ռացան , ան ատենը ետեխններուն նշան տալուն
սէս՝ ելան քաղքին կրակ տուին : Գայեցիք տե-
սան քաղքին ծուխը՝ յուսահատեցան : Անոնք եր-
կու կողմէն ջարդեցին զամէնքը՝ տասուերկու հա-
զար հոգի , և թագաւորը ողջ բռնած , Յեսու՝ երկ-
ճիւղ փայտի վրայ կախել տուաւ ինչուան իրի-
կուն . ետքը փոս մը ձգեցին՝ վրան քարեր դիզե-
ցին որ աս յաղթութեան յիշատակ ըլլայ :

Հ . Գային ասնեւէն ետքը ո՛ւր գնացին Իսրայէ-
լացիք .

Պ . Յետու զիրենք Գերաղ ու Գարիզին լեռները
աարաւ . հոն քարերով Աստուծոյ սեղան շինեց՝
վրան զոհ ըրաւ , և աստուածային պատուիրանք-
ները անոր վրայ գրեց ու ամէն օրհնութիւններն
ու անէծքները կարդաց որ չմոռնան :

Հ . Յորդանանէն անցնելէն ետքը ըրած յաղ-
թութիւննին լսելով ան ազգերը ի՛նչ կ'ըսէին .

Պ . Սրտերնին սասաիկ վախ ինկաւ՝ ու ամէնը
մէկաեղ խօսք գրին որ Իսրայէլացւոց դէմ ելլեն :
Բայց Գաբաւոնացիք մտածելով որ անոնց դէմ
գնել չըլլար , հետու տեղացի ձեացան , հին պա-
արուած ճամբորդի լաթեր հագան , ու մաշած
կօշիկներով , և կըտըրաւ գինիի աիկեր՝ չորցած
որդնտած հացի կտորուանք ճամբու պաշար ա-
ռած՝ Յետուայ առջևն ելան ու ըսին՝ թէ « Մեր
իշխանները լսելով Իսրայէլացւոց մեծ անուեր՝
կ'ուզեն հետերնիդ դաշինք գնել » : Յետու Ա-
ստուծոյ չհարցուցած հաւատաց անոնց ու իշխան-
ներուն հետ երգուընցաւ իրենց որ հետերնին
բարեկամութիւն պահէ : Իրեք օրէն խմացան ա-
նոնց բանեցուցած հնարքը , ու ժողովուրդը սըր-
դողած կ'ուզէին ջարդել զանոնք . բայց իշխան-
ները չթողուցին , որ Աստուծոյ անուանը վրայ
ըրած երգումին դէմ չգործեն որ չպատժուին :
Բայց Յետու կանչեց Գաբաւոնացիներն ու բար-
կանալով անոնց՝ պատիժ գրաւ որ գերիի պէս
միշտ Իսրայէլացւոց և Աստուծոյ խորանին փայտ
կտարող ջուր կըրող ըլլան : Անոնք ալ սիրով յանձն
առին :

Հ . Գաբաւոնացւոց անձնատուր ըլլալը երբոր
մէկալ թագաւորները խմացան , ի՛նչ ըրին .

Պ . Ամէնքը շատ վախի մէջ խնալով , վասն զի
իրենց մէջ Գաբաւոն մեծ ամուր քաղաք էր , Ա-

գոնիքեղեկ Երուսաղէմայ թագաւորն՝ ուրիշ չորս
թագաւոր ալ մէկտեղ Գաբաւոնացւոց վրայ պա-
տերազմի ելան . Գաբաւոնացիք ալ Իսրայէլացւոց
դիմեցին : Ան ատենը Յեսու Աստուծոյ հրամանովը
քաջ զօրքերով գիշերանց ճամբայ ելաւ , ու լուս-
նալու ատենը մէկէն անոնց վրայ վազեց , Աստուած
ալ քարէ կարկուտ թափել սկսաւ անոնց վրայ .
անանկ որ սուրէն աւելի անով ջարդուեցան :

Հ . Ագոնիքեղեկ ու իր ընկերները Յեսուայ
ձեռքէն կրցան խալըսիլ .

Պ . Չէ . վասն զի երբոր Յեսու տեսաւ որ ա-
տենը քիչ է , յաղթութիւնը չմընցած իրիկուն
կ'ըլլայ , « Արևն ու լուսինը կենան , ըսաւ , չքա-
լն » . մէկէն հասած տեղերնին կեցան , ինչուան
որ Իսրայէլացիքը զանոնք բոլորովին ջարդեցին ու
Գաղգաղա իրենց բանակը դարձան : Եւ որովհետև
հինգ թագաւորներն ալ փախեր Մահեսաա այրի
մը մէջ պահուըտեր էին , հրամայեց որ ան այրին
բերանը քարերով գոցեն՝ ինչուան որ լմննայ պա-
տերազմը : Ետքը բանալ տուաւ , ան հինգն ալ
հանեց պառկեցուց , ու Իսրայէլացւոց զօրապետ-
ներուն ըսաւ որ անոնց վզերնուն վրայ կոխեն , ու
սիրա անեն , գիանան որ Աստուած բոլոր Իսրայէ-
լացւոց թշնամիները ասանկ պիտի ջնջէ : Ետքը
սպաննեց ու մարմիննին ինչուան իրիկուն կախե-
լէն ետքը՝ վար առին առջի այրին մէջ ձգեցին մեծ
քարերով գոցեցին : Անկէ գնացին ուրիշ քաղաք-
ներու վրայ ալ՝ առին ու թագաւորնին փայտի վրայ
կախեցին :

Յեսուայ ևորի գործքերը .

Ն . Երբոր Յեսու շատ քաղաքներ կ'առնէր , չգանուեցա՛ն ազգ մը որ քիչ մը ուժով կարենայ դէմ դնել .

Պ . Յարին Սուրայ Թագաւորը սաք էլաւ , չորս դին մարդ խրկեց Ամովսացւոց , Քեաացւոց , Փերեզացւոց , Յերուսացւոց , Խեացւոց , և ուրիշ քովի ազգերուն , ու ամէնը մէկէն անհամար զօրքով՝ ձիերով ու պատերազմական կառքերով ժողմեցան Մառոն ջրին քովը : Ան ատեն Աստուած ըսաւ Յեսուայ . « Մի վախնար , վաղը պիտի յաղթէք ամենուն , ձիերը ջարդէք , կառքերը այրէք » : Յեսու քաջութեամբ լեռան դիէն յանկարծ վրանին վազեց՝ կտարեց զանոնք , փախչողներուն ալ ետեէն ինկաւ՝ զամէնքը մեռցուց ու երկիրներնուն տիրեց : Ասանկով վեց տարուան մէջ երեսունու մէկ Թագաւոր ջարդեց ու բոլոր Աւետեաց երկիրը մաքրեց :

Ն . Յեսուայ ըրած պատերազմներով ջարդուեցան բոլոր Թշնամիները .

Պ . Մէկ քանի այլազգի տէրութիւններ Թողուց Աստուած Խորայէլացւոց զգուշութեան համար , որ պարապ կենալով չթուչնան . նաև սէտք եղած ատենը՝ անոնց ձեռքովը պատժուին խրատուին :

Ն . Յեսու ի՛նչ կարգով բաժնեց երկիրները Խորայէլացւոց .

Պ . Ինչպէս որ Մովսէս որոշեր էր՝ ինն ու կէս ցեղին վրայ բաժնեց . երկու ու կէս ցեղին Յորդանանէն անդին տուած ըլլալով . Աւսացւոց բաժինն ալ մասնաւոր տեղ չէր , հասլա քառսունըութը

քաղաք ցրուած բազոր Իսրայէլացւոյ մէջ . որոնց-
մէ վեցը Քաղաք ապաստանի կ'ըսուէր , որսէս զի թէ
որ մէկը դիպուածով մարդ սպաննէ՝ հոն փախչի
խալըսի : Ասկէ զատ Քաղէքայ ալ , բարի վկայու-
թեանը վարձ՝ ինչպէս որ Աստուած խոստացեր
էր , մասնաւոր տեղ տուաւ . Իսրայէլացիք ալ Աս-
տուծոյ հրամանովը՝ Եփրեմի ցեղին երկրին մէջ
լեւան մը վրայ Թամնաթսարան Յետուայ տուին ,
որ հոն քաղաք շինեց ու բնակեցաւ :

Հ . Յորդանանէն անցնելէն ետքը տապանակը
որ կը սլահէին .

Պ . Ինչուան որ պատերազմները լմընցաւ եր-
կիրները բաժնեցին՝ Գաղգաղա էր , ետքը Եփրե-
մայ ցեղին երկրին մէջ Սելով քաղաքը դրին . թէ-
պէտ անկէ ալ Իսրայէլացիք վերուցին՝ տեղէ տեղ
տարին , բայց իր հաստատ տեղը հոն եղաւ՝ ին-
չուան Սամուէլ մարդարէին տակնը :

Հ . Երկիրները բաժնելէն ետե՛ւ ամէն կերպով
խաղաղացան Իսրայէլացիք .

Պ . Երբոր խաղաղ կեցեր էին՝ յանկարծ շփո-
թութիւն մը պատահեցաւ : Ան երկու ցեղ ու
կէսն որ Յորդանանու անդի կողմը գնացին տե-
ղաւորուեցան , հոն մէկ մեծ սեղան մը շինեցին :
Մէկալ տասը ցեղը երբոր խմացան՝ ծուռ մաքի
գնացին . անոր համար խորհուրդ ըրին որ անոնց
վրայ պատերազմի ելլեն : Բայց առաջուց աղէկ մը
խմանալու համար՝ Փենեհէս քահանան՝ ուրիշ
խօսքի տէր մարդիկներու հետ մէկտեղ անոնց
խրկեցին , որ գնաց յանդիմանեց զանոնք թէ կռա-
պաշտութիւն ընել սկսեր են : Անոնք պատաս-
խան տուին թէ անոր համար շինեցինք որ ետևի
եկողները խմանան թէ մենք ձեզի հետ եղբայր ենք :
Ասով ամենուն սիրտը հանգչեցաւ ու փառք տուին
Աստուծոյ՝ որ աս մեղքէս աղատ են եղեր : Յետու
ալ ան սեղանին անունը դրաւ՝ Ակայութիւն , որ

ան ցեղերն ալ մէկաշնոնց հետ մէկ Աստուած կը պաշտեն :

Հ . Յետո՛ւ Թամնաթասրան երթալէն ետքը յիշատակի արժանի ի՞նչ բան ըրաւ .

Պ . Աւերջի ծերութեան ատենը բոլոր մեծերը քովը կանչեց ու մտքերնին ձգելով Աստուծոյ անհամար բարերարութիւնները , յորդորեց որ չըլլայ թէ կուսքերուն ետեւէն երթալով Աստուած վրանին բարկացընեն . երդում ալ առաւ իրենցմէ որ յաւիտեան իրենց Աստուածը պաշտեն . եւ աս բանիս յիշատակ՝ խորանին քովը մեծ քար մը արնկեց որ որդւոց որդի յիշեն աս Աստուծոյ հետ ըրած ուխտերնին . իսկ ինքը բարի ծերութեամբ հարիւր տասը տարուան մեռաւ : Արան շատ չանցաւ՝ Եղիազար քահանայապետն ալ մեռաւ , և տեղը անցաւ Փենեհէս որդին :

44

Քաղէբ , Գորսնիել , Սշուիդ , Սամեզար .

Հ . Յետուայ մեռնելէն ետե ո՞վ եղաւ առաջնորդ Իսրայէլացւոց .

Պ . Աստուծոյ հրամանովը Քաղէբ՝ Յուդայի ցեղէն : Ան ատենը Յուդայի ցեղը՝ Շմառոնի ցեղը հետը առած Քանանացւոց ու Փերեզացւոց դէմ ելլել սկսան . Ադոնիրեղեկ թագաւորն ալ բռնեցին ու ձեռուրները սառւրները կարեցին : Ինքն ալ ան ատենը ըսաւ թէ « Ըրածիս հատուցումը դասյ , որ եօթանասուն թագաւոր բռներ եմ ու անոնց ձեռուրները կարած սեղանիս տակը շան պէս ինկած փշրանքները բերնով կ'առնէին ու կ'ուտէին » :

Հ . Իսրայէլացիք մնացին միշտ իրենց աստուած-
պաշտութեան մէջ .

Պ . Քանի որ Յեսուայ ասենի ծերերը կային՝
Աստուծոյ օրէնքները կը պահէին . անկէ ետքը
սկսան գէշնալ՝ կուռք ալ պաշտել . անոր համար
Աստուած Քուսարսաթեմ Ասորոց Թագաւորին
մասնեց զիրենք , և ուժը տարի չարաչար ծա-
ռայելէն ետե՛ երբոր նորէն Աստուծոյ դիմեցին ,
Գոթոնիէլ Քաղերայ պղտի եղբայրը իրենց ա-
ռաջնորդ տուաւ , որ Իսրայէլացիները ազատեց ու
քաւսուն տարիէն մեռաւ :

Հ . Գոթոնիէլէն ետքը ո՛վ իշխեց .

Պ . Նորէն մնացին ինքնագլուխ ու սկսան մե-
ղանջել . ուստի Եգղոմ Մովաբացոց Թագաւորը
վրանին տիրեց տասներու թը տարի , ինչուան որ
նորէն Աստուծոյ ինկան : Ան ատենը Աստուած
զԱւովգ Բենիամինի ցեղէն իրենց առաջնորդ աը-
ւաւ որ երկու ձեռքով ալ յաջող էր :

Հ . Աւովգ ինչպէս ազատեց Իսրայէլացիները
գերութենէ .

Պ . Անգամ մը Իսրայէլացիք իրեն տուին ընծա-
նին որ տանի Եգղոմին . ինքը երկասյրի սուր մը
մէկ թիզ երկայն՝ աջ կողմը վերարկուելն տակը
պահեց ու գնաց : Ընծաները տալէն ետքը մար-
դիկը դուրս ձամբեց , ու Եգղոմին ըսաւ թէ գաղ-
տուկ խօսք մը ունիմ . Եգղոմն ալ քովի մարդիկը
դուրս հանել տուաւ . ան ատեն Աւովգ ըսաւ .
Աստուծոյ կողմանէ քեզի բան մը պիտի ըսեմ :
Եգղոմ քովը մօտեցաւ , Աւովգ շուտ մը ձախ ձեռ-
քովը գանակը քաշեց՝ Եգղոմին կուշար խոթեց
Թողուց ու արտորնօք դուրս ելաւ՝ դուռը վրայէն
կղպեց ու գնաց : Թագաւորին ծառաները եկան
տեսան որ կղպած է , կարծեցին թէ ինքը ներսը
հարկի համար կ'ուշանայ , խել մը սպասելէն ե-
տե , բանալին բերին՝ դուռը բացին տեսան որ Եգ-

զումը մեռած գեղինը փռուեր էր: Երբոր Մովս-
թացիք շիտթած իրար անցեր էին, Առովգ գնաց
շուտով Իսրայէլացիքը ժողովեց՝ դարձաւ մէկ օ-
րուան մէջը տասը հազար հոգի ջարդեց, ու Իս-
րայէլացիքը դերուծենէ խալըսեց, որ ութսուն
տարիի չափ ազատ մնացին. ու ինքը Առովգ ին-
չուան որ մեռաւ՝ անոնց դատաւորութիւն կ'ընէր:

Հ. Առովգէն ետքը ո՛վ եղաւ դատաւոր.

Պ. Սամեզար՝ Անաթայ որդին կարիճ մարդ
մը, որ շատ օգնութիւն ըրաւ Իսրայէլացւոց. մէկ
հեղ մը արօրին մաճովը վեց հարիւր այլազգի մեռ-
ցուց, ու շատ կովեր ու ոչխարներ կողոպտեց:

45

Գեբորա և Բարակ .

Հ. Սամեզարին ո՛վ յաջորդեց .

Պ. Երբոր Իսրայէլացիք նորէն ճամբանին փո-
խեցին, Աստուած զիրենք մասնեց Քանանացւոց
Յաբին թաղաւորին ձեռքը քսան տարի, որ շատ
ուժով էր, ինը հարիւր երկըթէ կառք ունէր: Աս-
տուանները Իսրայէլացւոց կ'առաջնորդէր մարդա-
րէ կնիկ մը՝ Գեբորա անունով: Երբոր Իսրայէ-
լացիք զղջումի եկան՝ Գեբորան կանչեց իրեն Բա-
րակը՝ Նեփթաղիմի ցեղէն ու ըսաւ. « Աստուած
կը հրամայէ որ թաքօր լեռը երթաս Նեփթաղիմի
ու Չաբուղոնի ցեղերէն տասը հազար հոգի հեադ
անհետ երթաս Ախանի հեղեղատը՝ Յաբին թաղա-
ւորին Սիատրա զօրապետին դէմ »: Բարակը ը-
սաւ Գեբորայի. « Թէ որ հետս գաս՝ կ'երթամ »:
Գեբորան խօսք տուաւ, « Բայց գիտնաս, ըսաւ,
որ ան ատենը յաղթութիւնը քուկդ չըլլար » . ու
մէյտեղ գնացին: Երբոր իմացաւ Սիատրա՝ բոլոր

զօրքերով երկրթէ կառքերով եկաւ Ախտնի հեղեղաար՝ Իսրայէլացւոց դէմ: Դեբորայի ըսածին պէս Բարակն որ Թարօր լեռնէն ինջաւ պատերազմի՝ Աստուած սասաիկ շփոթութիւն ձգեց մէջերնին, որ փախչող փախչողի եղան, ու Բարակ ետևնին ինկած զամէնքը ջարդեց: Սիսարան աղաւելու ճարը փնտռելով՝ ոտքով վազելով Աինեցւոց կողմը գնաց:

Հ. Աինեցիք ո՞վ էին, և ի՞նչ օգնութիւն ըրին Սիսարայի.

Պ. Պղաիկ ազգ մըն էին որ եկեր վրանով ան տեղուանքը կը բնակէին, և Մովսէսի կնկանը դիէն Իսրայէլացւոց խնամի ըլլալով՝ բարեկամ էին, բայց այլազգիներուն հետ ալ թշնամի չէին: Յայէլ՝ Բարեք կինեցիին կնիկը՝ Սիսարայի դէմը հանդիպեցաւ ու ներս կանչեց որ հանգչի. խմելու ջուր ուղեց, Յայէլ ջրին տեղը իրեն կաթ խմցուց, ու ներսը անոր ուղածին պէս գաղտուկ պառկեցուց՝ վրան ծածկեց որ մարդ չիմանայ, ու ինքը գնաց վրանին ցիցն առաւ և ուռով զարկաւ Սիսարայի գլուխը գետինը գամեց մեռուց: Բարակ հասաւ կը փնտռէր զՍիսարա, Յայէլ ներս կանչեց զինքը՝ ցըցուց: Ասանկով Աստուած Իսրայէլացիքը խալըսեց. Դեբորան ալ Բարակայ հետ փառք տալով Աստուծոյ շնորհակալութեան գովասանք մը ըրին:

46

Գեղեոն.

Հ. Բարակայ ձեռքով եղած Իսրայէլացւոց ազատութիւնը որչափ գիմացաւ.

Պ. Քառասուն տարի. ետքը նորէն Աստուծոյ երեսէն իյնալով Մազիանացւոց և Ամաղեկացւոց

ձեռքը մասնուեցան . եօթը տարիէն երբոր Աստուծոյ ինկան , Աստուած մարգարէ մը խրկեց որ ըրած մեղքերնին երեսնին տուաւ՝ խրատեց : Ետքը հրեշտակ մը խրկեց Գեղէոնին՝ Մանասէի ցեղէն , երբոր ասիկայ Մաղիանացւոց ձեռքէն փախած՝ իր հօրը կալը ցորեն կը ծեծէր , հրեշտակն եկաւ ըսաւ թէ « Աստուած քեզ ընտրեց է որ թշնամիները վարնտես » : Գեղէոն ըսաւ , « Ես ո՞վ եմ որ Իսրայելացիքը ազատեմ » : Հրեշտակը պատասխան տուաւ թէ « Աստուած հեադ է » : Ան ասնն Գեղէոն նշան մը ուզեց . սղաքեց հրեշտակին որ հոն կենայ՝ ինչուան ինքն երթայ իրեն համար կերակուր բերէ . ու գնաց Գեղէոն շուտով ուլ մը պատրաստեց ու բաղարջ հաց շինեց , հրեշտակին առջևը բերաւ . հրեշտակն ըսաւ որ դիմացը քարին վրայ դնէ ան բաները , և ձեռքի գաւազանովը մսին գպածին պէս՝ քարէն կրակ ելաւ այրեց կերակուրները , ու հրեշտակն ալ աներևոյթ եղաւ : Գեղէոն աս հրաշքովս խնացաւ որ հրեշտակ Աստուծոյ է եղեր՝ վախշաւ , և ան տեղը Աստուծոյ սեղան շինեց : Ան գիշերը Աստուած Գեղէոնի հրամայեց որ երթայ իր հօրը Բահաղ կուռքին սեղանը կործանէ , քովի անտառը կտրէ , և ան փայտերով իր հօրը եօթը տարուան դիրքուցած եղը Աստուծոյ ողջակէզ ընէ՝ նոր շինած սեղանին վրայ : Գեղէոն վախցաւ ցորեկն ընելու . ուստի գիշերը ելաւ գաղտուկ տասուիւրէք հողի առաւ իր հօրը ծառաներէն՝ գնաց Աստուծոյ հրամանը կատարեց : Առաւօտանց քաղքին մարդիկը խնայան որ Գեղէոն ըրեր է , հօրը եկան , կ'ուզէին որ Գեղէոնը ապ որ սպաննեն : Հայրը պատասխան տուաւ . « Բահաղը թէ Աստուած է՝ ինքը թող վրէժ առնէ » : Գեղէոնի անուեն ալ Յէրոֆոաղ դըրաւ , իրը թէ Բահաղ կուռքին յալթող :

Հ. Երբ գնաց Գեղէոն Մաղիանացւոց և Ամա-
ղեկացւոց դէմ.

Պ. Աստուծոյ իրեն երևնալէն ետքը երբոր
լսեց թէ անոնք նորէն վրանին կուգան, կանչեց
Իսրայէլացիքը Ասերի, Զաբուղոնի և Նեփթա-
ղեմի ցեղերէն՝ որ դէմ ելլեն: Բայց նորէն Աս-
տուծմէ աս նշանս խնդրեց, որ գղաթ մը գիշերը
դուրս փռէ, ու ան գղաթին վրայ միայն անձրե-
գայ. առաւօտանց որ ելաւ գղաթը քամեց՝ կոնք
մը ջուր ելաւ: Աս որ տեսաւ՝ մէյմ՝ ալ խնդրեց
որ ասոր ներհակը՝ ան գղաթը չոր մնայ, ու բո-
լոր գետինը թրջի: Աս երկու հրաշքով սիրտ ա-
ռած, երբոր ելաւ թշնամիներուն դէմ երթալու,
Աստուած « Ըստ են, ըսաւ, զօրքդ. ետքը կը
կարծեն թէ իրենց ուժովը յաղթեցին. ըսէ որ
վախկոտները ետ դառնան »: Ան ատենը քսա-
նուերկու հազար հոգի ետ գնացին ու ասոր հա-
զար մնացին: « Ասոնք ալ շատ են ըսաւ Աս-
տուած. ուստի ան ամէնը ջրի քով տար, ու հոն
նայէ թէ ո՛վ ջուրը ափը առած շան պէս կը լափէ,
ու ով ճնկան վրայ ինկած, ու մէկ մէկէ դատէ »:
Ասանկով միայն իրեք հարիւր հոգի շան պէս լա-
փելով խմեցին. և Աստուած ըսաւ Գեղէոնին.
« Մինակ ասոնցմով Իսրայէլացիքը Մաղիամու-
ձեռքէն պիտի ազատեմ, մէկալները ճամբէ »:

Հ. Գեղէոն իրեքհարիւր հոգւով ի՛նչպէս պա-
տերազմեցաւ Մաղիամու հետ.

Պ. Ասաջ Աստուած իրեն սիրտ տալու հա-
մաց հրամայեց որ ինքը իր Փարա աղուն հետ գի-
շերանց գաղտուկ թշնամիներուն բանակը եր-
թայ, ու լսէ ինչ որ կը խօսին: Գեղէոն գնաց
լսեց որ զինուորին մէկը մէկալին երազ կը պատ-
մէր, թէ « Տեսայ որ մէկ գարիէ նկանակ մը գլո-
րեցաւ գէտ ՚ի մեզ, ու զարկաւ կործանեց բոլոր
Մաղիամու բանակը » . մէկալն ալ ըսաւ, թէ

« Աս Գեղէոնի սուրն է, Ասառած զմեզ անոր
ձեռքը սուեր է » : Գեղէոն Ասառածոյ շնորհա-
կալ ըլլալով բանակը դարձաւ « Ելիք, ըսաւ, Աս-
առած Մաղխամը մեր ձեռքը մահանեց » • ու իրեք
հարիւրը իրեք գունդ բաժնեց, և զէնքի տեղ ա-
մենուն մէկ ձեռքը եղջիւրէ փող տուաւ, ու մէ-
կալ ձեռքը վառած ճրագ՝ սափորի մէջ ծածկած •
և ապսպրեց որ իրեն նային ու անանկ ընեն : Աէս
գիշերուան մօտ յանկարծ թշնամիներուն բանա-
կը գնացին, ու մէկէն փողերնին փչելով սափոր-
նին կտարրաւեցին՝ ճրագները դուրս երեցան, ու
մէկ բերան սկսան կանչել, Սուր Տէառն և Գեղէո-
նի : Աս բանովս Ասառած Մաղխամու բանակը
անանկ վախ մը ձգեց որ մէկզմէկ թշնամի կարծե-
լով անխնայ կը ջարդէին, ինչուան հարիւր քսան
հազար հոգի մեռան : Փախածներուն համար ալ
մարդ խրկեց մէկալ Խորայէլացոց, որ գէմերնին
ելեն ջարդեն : Արէք ու Չէք իշխաններուն ալ
զուսնին կարեցին, Գեղէոնի բերին :

Հ. Զահերով վախցընելով Մաղխամու զօրքը
ջարդելէն զատ Գեղէոն ուրիշ ինչ պատերազմ
ըրաւ •

Պ. Երկու Մաղխամու թագաւորներ՝ Չէրէի
և Սաղմանա՝ տասնըհինգ հազար զօրքով փախեր
էին ուրիշ տեղ : Ետևնուն գնաց Գեղէոն, բայց
յօգնած և անօթի ըլլալով զօրքը՝ հանդիպեցան
Սոկքովթ քաղաքը որ քիչ մը հայ տան • տասնք
չտուին՝ ըսելով, « Ո՞ր են թագաւորները, ցը-
ցուր որ տանք : — Երբոր բռնեմ զանոնք, ըսաւ
Գեղոն, զձեզ փուշերու վրայ կը տանջեմ » • ու
գնաց Փանուէլ քաղաքը • անոնք ալ առջիննե-
րուն պէս ըսին • անոնց ալ սպառնացաւ որ կոր-
ծանէ իրենց աշտարակը : Գնաց ջարդեց զամէն-
քը • թագաւորներն ալ բռնեց ու դարձաւ, ըրած
սպառնալիքները կատարեց ու Փանուէլի մարդիկն

ալ սպաննեց : Ետքը Չեբէի և Սաղմանա թա-
գաւորներուն համար իրեն Եթեր անդրանիկ ար-
ղուն ըսաւ թէ Ել մեռցուր . ահ դեռ պղախկ ըլ-
լալուն՝ վախցաւ . անոնք ալ ըսին Գեղէոնի թէ
« Գու զմեզ սպաննէ որ ուժով կարիճ ես » . ան
ատենը ելաւ ինքը մեռուց , ու անոնց ուղտերուն
մանեակներն ալ առաւ :

Հ . Իսրայէլացիք Մադիամու ձեռքէն ազատե-
նուն համար Գեղէոնին ինչ փոխարէն ըրին .

Պ . Ուղեցին որ ինքը ու իր տղաքը իրենց ա-
ռաջնորդ ըլլան . Գեղէոն ըսաւ թէ « Չեր իշխա-
նը Ասաուած է » , ու խնդրեց անոնցմէ որ թշնա-
միներուն կողոպուտաներէն մարդագլուխ իրեն մեյ-
մէկ օղ տան . իրենք ալ սիրով առին , ու ամէնը
եղաւ հազար եօթը հարիւր սիկղ ոսկի , թող ու-
րիշ ոսկիէ առած զարդերը :

Հ . Գեղէոն ժողովուրդէն առած զարդերը ինչ
ըրաւ .

Պ . Աւելորդապաշտական բաներ շինեց Ափրա-
քաղքին մէջ , որ ետքը իրեն՝ իր զաւակներուն մե-
ղաց պատճառ եղաւ , նաև Իսրայէլացւոց ալ : Ա-
սանկով քառասուն տարի՝ Գեղէոնին ատենը Իս-
րայէլացիք ազատ մնացին , ու ետքը նորէն սկսան
կռապաշտութիւն ընել :

Աբիմեկք .

Հ . Գեղէոնին տեղը դատաւոր ո՞վ նստաւ .

Պ . Գեղէոն եօթանասուն զաւակ թողուցեր
էր , Աբիմեկքն ալ Սիկիմացի կինէ մը եղած : Ա-
սիկայ մօրը ազգականներուն ձեռքովը Սիկիմա-
ցւոց սիրաը իրեն քաջեց՝ որ հօրը տեղը Իսրայէ-

լացւոց իշխանն դնեն . և ապահով ըլլալու համար՝ մէկէն Սիկիմացիներէն առած սարկով սրիկաներ ժողովեց՝ ու գնաց իր եղբայրները եօթանասուն հոգի քարի մը վրայ մորթեց . միայն պղտիկը Յովակիմով պահուրտելով ազատեցաւ : Ետքը Սիկիմացիք ու Մասաղոն քաղքին մարդիկը Աբիմեւէքը թագաւոր նստեցուցին : Յովակիմով անոնց առակով մը իմացուց որ գէշ ըրին :

Հ . Յովակիմով Աբիմեւէքին թագաւորելուն վրայ ի՞նչ առակ բերաւ Սիկիմացւոց .

Պ . Գնաց դիմացը Գարիզին լեռքելաւ ու սկսաւ կանչել « Մտիկ ըրէք Սիկիմացիք , ծաւերն ուղեցին իրենց թագաւոր մը . գնացին ձիթենուօյն ըսին , անիկայ պատասխանեց թէ , Ես չեմ թողուր իմ եղս , որ անով Աստուած ու մարդիկ իսկը մեծարեն , ու չեմ երթար ծաւերուն իշխելու . ետքը գնացին թղենիին որ դայ իրենց թագաւորէ . ան ալ յանձն չառաւ՝ իր անուշութիւնը յիշելով . գնացին որթին , որթն ալ չուղեց , իմ գինիս՝ փայտերուն իշխելէն աղէկ է ըսելով . ան ատեն դժնիկը կանչեցին , ուրախացաւ դժնիկն ու ըսաւ . Եւ կէք իմ շուքիս տակը : Ի՞նչ կը կարծէք , ըսաւ Յովակիմով , դժնիկէն կրակ չելէր ու չայրեր եղև նափայտերը . թէ որ արգարութիւն էր Գեդէոնի տանը վրայ ըրածնիդ , բարով վայլէք մէկդմէկ . թէ չէ՝ պիտի կրակ ելլէ Աբիմեւէքէն՝ ու դձեղ այրէ » : Աս խօսքերէն ետքը փախաւ գնաց :

Հ . Գեդէոնի տղուն Աբիմեւէքայ թագաւորութիւնը ի՞նչ վերջ ունեցաւ .

Պ . Ինչպէս որ Յովակիմով ըսեր էր , Աբիմեւէք իրէք տարիի չափ անկարգութեամբ Իսրայէլացւոց իշխելէն ետքը , չդիմացան Սիկիմացիներն , ու Գաաղ իշխանին հետ գէմն ելան : Աբիմեւէք Սիկիմացւոց վրայ գնաց՝ ջարդելով ցրուեց . ետքը իմացաւ որ Սիկիմի բերդին մէջ շատ մարդ ժողո-

վեր է, ըսաւ իր զօրքին, « Ինչ որ ես ընեմ՝ դուք
ալ ըրէք » • Ետքը առաւ կացին մը՝ բեռ մը վայա
կտարեց՝ ուսը զարկաւ, զօրքն ալ ըրին իրեն պէս
գնացին բերդին կրակ տուին, ուր հազար հոգիի
չափ այրեցան: Անկէ Թեբէս քաղքին վրայ գնաց՝
առաւ • ան քաղաքը ամուր բերդ մը ունէր, մեծա-
մեծները հոն փախան: Երբոր Աբիմեւէք բերդին
դրանը մօտեցաւ՝ վերէն կնիկ մը երկանի քարի
կտոր մը ձգեց դիտուն վրայ ու ջախջախեց • ան ա-
տեն յուսահատած՝ ըսաւ կապարճակիրին որ սու-
րը հանէ՝ ղինքն սպաննէ, որ չըլլայ թէ կնկան
ձեռքով մեռած սեպուի: Ասանկով ինքն ալ Սի-
կիմացիք ալ պատիժնին առին:

Թովղա, Յայիր, Յեփրայե .

Հ • Աբիմեւէքէն ետև դատաւոր ո՞վ եղաւ •

Պ • Թովղա Իսաքարի ցեղէն, քանուիրէք տա-
րի: Ետևէն Յայիր Գաղատացին քանուերկու
տարի, որ երեսունուերկու որդի ունէր, որոնք
երեսունուերկու յաւանակի վերայ հեծած կը
պարտէին, եւ մէյմէկ քաղաք ունէին որ Աւան +
Յայիրայ ըսուեցան:

Հ • Յայիրէն ետքը ո՞վ իշխեց •

Պ • Իսրայէլացիք նորէն որ կռասպաշտութիւն
կ'ընէին՝ Աստուած սրգողեցաւ, թողուց որ տաս-
նըութը տարի այլազգիներէն չարչարուեցան •
Ետքը երբոր մեղայ ըսել սկսան, Աստուած մէկէն
չուզեց ըսել: Անգամ մը Գաղատադու մեծերը խօսք
դրին մէջերնին՝ թէ ո՞վ որ առաջ պատերազմի ել-
լէ Ամոնացւոց դէմ, ան ըլլայ իրենց իշխան • Ետ-
քը կանչեցին Յեփիթայէն որ իրեն հօրն անհարա-

զատ տղան ըլլալով՝ վարձաներ էին մէկալ եղբայր-
ները. ան ալ գացեր սրիկաներու գլուխ եղեր էր :
Երբոր խմայաւ թէ Գաղաադացիք իրեն կարօտ
են, չուզէլ ձեացուց. « Դուք, ըսաւ, զիս վարձ-
անցիք » : Բայց ետքը անոնցմէ երգուամով խօսք
առաւ՝ որ եթէ Աստուած պատերազմը յաջողէ՝
ինքն իշխան ըլլայ. ու հեաներնին Մասեփա եկաւ,
ուր որ Իսրայէլացիքը ժողովեր էին : Դեասպան
խրկեց Ամնացւոց թագաւորին թէ « Ինչո՞ւ եկեր
պատերազմ կ'ընես » . թագաւորը պատասխան
տուաւ թէ « Իմ երկիրներս ետ տուէք », Յեփ-
թայէն նորէն խրկեց ըսաւ թէ « Իսրայէլացւոց
ճամբայ ընելու ատեն աս անդի մարդիկը մեզի
դէմ ելան, մենք ալ անոնց յաղթելով մեր Աս-
տուծոյ օգնութեամբը՝ պատերազմական իրաւուն-
քով աս երկիրները առինք՝ իրէք հարիւր տարի
առաջ . հիսաւ ատ քու ըրած անիրաւութեանդ դա-
տաստանը Աստուած տեսնէ » . Երբոր թագաւո-
րը մախի չըրաւ, ան ատենը Յեփթայէն Աստուծմէ
չարժած՝ շուտ մը պատրաստուեցաւ պատերազ-
մի, եւ Աստուծոյ ուխտ ըրաւ որ եթէ Ամնացւոց
յաղթէ, իր տունը դառնալու ատեն՝ ով որ առաջ
իրեն դիմացը գայ, անիկայ Աստուծոյ ողջակէզ
ընէ : Ետքը գնաց թշնամիները չարաչար կոտոր-
անց . քսան քաղաք առաւ ու գարձաւ :

Հ. Յեփթայէն ըրած ուխտը ինչպէս կատա-
րեց .

Պ. Երբոր Մասեփա քաղաքն՝ իր տունը կը գառ-
նար՝ իր մէկ հասիկ աղջիկը պար բռնած թմբուկ
զարնելով դիմացը ելաւ : Յեփթայէն ցաւեցաւ՝
« Ա՛յ ինձի դուստր, ըսաւ, ուխտ ըրեր եմ որ
նախ ով որ դիմացս ելլէ, անիկայ Աստուծոյ ող-
ջակէզ ընեմ » : Աղջիկը սիրով յանձն առաւ, մի-
այն երկու ամիս ատեն ուզեց որ երթայ լեռները
իր ընկերներուն հետ լայ իր կուսութիւնը . երկու

ամսէն ետև կատարեց Յեփթայէն իր Աստուծոյ ջրած ուխտը: Եւ ան ատենէն սովորութիւն եղաւ Դարայէլացւոց մէջ՝ տարին չորս օր աղջիկները մէկտեղ եկած՝ Յեփթայէի աղջկանը վրայ ողբ կ'ընէին:

Հ. Յեփթայէն Ամնացւոց պատերազմէն զատ ինչ պատերազմ ըրաւ.

Պ. Եփրեմայ ցեղին հետ մեծ պատերազմ ըրաւ. վասն զի անոնք իրեն նախանձելով անցան Յորդանան գետը՝ եկան ըսին թէ « Ինչո՞ւ մեզ չկանչեցիր Ամնացւոց դէմ » . ու կ'ուղէին իրեն միաս հասցընել: Յեփթայէն պատասխան տուաւ թէ « Կանչեցի, բայց դուք չեկաք, Աստուած ալ բանս յաջողեց »: Երբ տեսաւ որ անոնք չեն հանդարտիր՝ սկսաւ անոնց հետ պատերազմիլ, ու մեծ ջարդ տուաւ, ետքը փախչողներն ալ որ Յորդանանի մէկ նեղուցէ մը պիտի անցնէին՝ բռնել կուտար կը հարցընէր թէ Եփրեմայ ցեղէն են. երբոր Չէ կ'ըսէին, իրենց ըսել կուտար աս բառը՝ ՚Խապուէի, որ հասի ըսել է, ու ով որ շիտակ ըսել չկրնալով ՚Խապուէի կ'ըսեր, ան կը մեռցընէին. և ասանկով քառասունուերկու հազար հոգի կոտորուեցան անոնցմէ: Ամենը վեց տարի դատաւորութիւն ընելէն ետքը մեռաւ:

Հ. Յեփթայէին ո՞վ յաջորդեց.

Պ. Եսերոն Բեթղէհեմացին՝ եօթը տարի. որ երեսուն մանչ ունէր, երեսուն ալ աղջիկ, և ամէնն ալ ինքը կարգեց: Ետէն նստաւ Էլոն Չարուղոնացի տասը տարի: Ետքը Աբդոն Փարաթոնացի՝ Եփրեմի ցեղէն ութը տարի, քառասուն աղաք ունէր, երեսուն ալ թոռ:

Սամիսան .

Հ . Աբգոնէն ետքը Իսրայէլացւոց ով կ'առաջ նորդէր .

Պ . Նորէն աստուածապաշտութենէ թուրաւ ըով քառասուն տարի այլազգիներուն տակը ինկան : Ան տաւնները Իանայ ցեղէն Մանուէ աւուանով մէկը ամուլ կին ունէր . որ մը հրեշտակ Աստուծոյ երեցաւ աս կնկան , ու ըսաւ թէ « Դուն տղայ պիտի բերես՝ ուխտաւոր Աստուծոյ . բայց զգուշացիր գինիէ օղիէ և ուրիշ անսուրբ կերակուրներէն , ու տղուն ալ մաղը ամենեկին պիտի ջարուի . անիկայ Իսրայէլացիները կ'աղատէ » : Աինը երբոր պատմեց Մանուէի , աղաչեց Աստուծոյ որ ան սուրբ մարդը մէյնին ալ խրիէ որ խնայքնէ ինչ պիտի ընեն ան աղին : Հրեշտակը նորէն երեցաւ կնկանը , ան ալ շուտ մը վաղեց էրիկը կանչեց , որ նորէն հարցուց ան բաները հրեշտակին . ետքը Մանուէ ուղեց անոր սեղան ընել , հրեշտակն ալ ըսաւ , « Ես չեմ՝ ուտեր , Աստուծոյ նուիրէ » . ան ատենը Մանուէն՝ « Անունդ ինչ է , ըսաւ , որ ըսածներդ ըլլայ նէ զքեզ օրհնենք » : Հրեշտակը պատասխանեց՝ Աքանչելի է : Մանուէն սկսաւ զոհ ընել Աստուծոյ , հրեշտակն ալ կրակին բոցովն երկինք ելաւ : Աս որ տեսան՝ սաստիկ վախցան , խնամալով որ հրեշտակ է եղեր : Ետև ատենին կնիկը տղան բերաւ , անունը Սամիսան գրին :

Հ . Սամիսանին առջի զարմանալի գործքը ո՞րն եղաւ .

Պ . Անգամ մը Թամնաթա գնաց , ու հոն այ-

լազգի աղջիկ մը տեսաւ, եկաւ իր ծնողացը ըսաւ
որ ան աղջիկը իրեն անեն: Ծնողքը չգիտնալով
որ սա բանս Աստուծմէ է, չէին ուզեր՝ այլազգի
ըլլալուն համար. բայց երբոր ճար չեղաւ՝ մէյակեղ
եղան թամնաթա գնացին խօսելու աղջկան համար:
Ճամբան Սամիսոն այգիներուն մէջէն մինակ եր-
թալու ատեն, յանկարծ առիւծի ձագ մը վրան
վազեց. Սամիսոն բերնէն բռնեց բացաւ երկուք
ձղքեց, ու ետքը ծնողացը բան մը չրտաւ:

Հ. Սամիսոնին երկրորդ կարճութեան գործ-
քը սրն է.

Պ. Քիչ ատենէն հարսանիք ընելու համար թա-
մնաթա երթալու ատեն՝ գնաց ան մեռուցած ա-
ռիւծը նայելու, տեսաւ որ մեղուները բերնին
մէջ մեղր շիներ են, առաւ ճամբան ուտելով կ'եր-
թար, հօրը մօրն ալ տուաւ: Արովհետեւ հարսնիքը
եօթն օր կը քշէր, այլազգիք վախցան իրմէն ու
երեսուն կարիճ՝ դրին Սամիսոնի քով ընկերու-
թեան համար: Սամիսոն ըսաւ իրենց. « Չեզի
հանելուկ մը ըսեմ. թէ որ սա եօթն օրուան մէջ
գիտնալու ըլլաք, երեսուն կտոր բարակ կտաւ
տամ, երեսուն ալ հարգնելու լաթ. թէ չէ՞ դուք
լինձի տաք » . և հանելուկը աս էր .

Կերակուր՝ կերուէն,

Եւս՝ քաղորդ ութովէն:

Իրեք օր մտածելով երբոր չկրցան մեկնել, գաղ-
տուկ սկսան աղաչել Սամիսոնի հարսին որ իմա-
նայ իրմէն ու իրենց զրուցէ. թէ չէ՞ կ'այրենք
կ'ըսէին զքեզ անովդ: Կնիկն ալ աղաչելով այն-
չափ բան ըրաւ, որ եօթներորդ օրը բերնէն ա-
ռաւ, ետքը անոնք ալ Սամիսոնի ըսին .

Աւ ի՞նչ կայ մեղրէն անուր,

Ո՞վ առիւտ առիւծին այժ:

Սամիսոն իմացաւ խաբէութիւնը, և ինքն ալ ա-
սանկ պատասխան տուաւ.

Թէ լեւելի + ի՞նչ երէնչ,

Իսկ + լեի + գլխներ հանելու + ի՞նչ :

Ու սրդողած շուտ մը Ասկաղան գնաց, երեսուն այլազգի սպաննեց, լաթերնին բերաւ անոնց տը-
ւաւ . ետքը կնիկն ալ ձգեց՝ իր հօրը տունը դարձաւ :

Հ . Սամփսոնին երրորդ կարճութիւնը սրն է .

Պ . Երբոր բարկութիւնը անցաւ, ուլ մը հեար սարգէ առած՝ ուզեց որ կնկանն երթայ . ու եր-
բոր խնայաւ որ ուրիշի մը հետ կարգուեր է ,
գլուխը տաքցաւ՝ գնաց իր սխը հանելու այլազգի-
ներէն . իրեք հարիւր աղուէս բռնեց , երկերկու
աղուէս սոչ սոչի կապեց , և սոչերնուն մէջտե-
ղը մէյմէկ ջահ կապեց ու այլազգիներուն արտե-
րը թողուց որ այրեցին բոլոր ցորենները՝ այ-
գիներն ու ձիթենիները : Տէրերն որ խնայան թէ
ո՞վ է ըրեր , և ի՞նչ պատճառաւ , եկան Սամփսո-
նի աներոջը տանը կրակ տուին , որ աղջիկն ալ
հեար անով տեղով այրեցաւ : Ասով Սամփսոնի
սիրարը չիջաւ , ուրիշ շատ մարդիկներ ալ սպան-
նեց , ու գնաց Ետեմ ըսուած այրը նստեցաւ :

Հ . Սամփսոնի չորրորդ կարճութիւնը սրն է .

Պ . Այլազգիները զօրքով Յուդայի ցեղին վրայ
գնացին , ուզեցին որ Սամփսոնը կապած ձե-
ռուրնին տան : Յուդայի մարդիկն իրեք հազար
հոգի Սամփսոնի եկան , ըսին թէ « Ի՞նչ կ'ընես ,
չէս գիտեր որ աղաա չենք . ուստի հիմա այլազգի-
ները քեզ կ'ուզեն » : Սամփսոն առաջ երգուրն-
ցուց որ իրենք չըսպաննեն զինքը , ու թողուց
որ իրեք նոր հասա չուաններով կապեն զինքը ,
տանին այլազգիներուն տան : Երբոր այլազգիներ
ը տեսան՝ սկսան ուրախանալ . ան տեղը Սամփ-

սոն թօթվելուն պէս կարեց ան չուանները, գեա-
նէն իշու ծնօտ մը գաաւ, ու անով հաղար հոգի
մեռուց: Ետքը սասաիկ ծարուելով՝ Աստուծմէ
ջուր խնդրեց. Աստուած ալ ծնօտէն իրեն ջուր
բխեցուց:

Հ. Սամիսոնի հինգերորդ կարճութիւնը ո՞րն է.

Պ. Ելաւ Սամիսոն Գաղա գնաց. թշնամիները
եկան գիշերանց քաղքին գոները առին որ բռնեն
զինքը: Բայց Սամիսոն կէս գիշերուն ելաւ քաղ-
քին գոները շեմերովը՝ կղպաքներովը փրցուց՝
կռնակը զարկաւ տարաւ զխմացի լեռան գլուխը
գրաւ ու գնաց:

Հ. Սամիսոնի վեցերորդ կարճութիւնը ո՞րն է.

Պ. Այլազգիները տեսնելով որ Սամիսոն ի-
րենց երկիրը Գալիլա կնկանը քով շատ անգամ
կուգայ, անոր հետ խօսք գրին որ՝ եթէ Սամիսո-
նին ուժը ուսկից ըլլալը խմանայ, ամէն մէկը իրեն
հաղար ու հարիւր արծաթ տան: Երբոր ան կնիկը
անուշուժեամբ կ'ուզէր խմանալ, Սամիսոն ըսաւ,
թէ որ եօթը նոր ջիւով զինքը կապեն, ուժը կ'եր-
թայ: Անիկը կասկեց զինքը ան ջիւերովն ու ետքը
փորձելու համար կանչեց. « Սամիսոն, այլազգի-
ները եկան»: Սամիսոն մէկէն ցառքելով թօթվեց
կարեց ան ջիւերն ու ելաւ տեսաւ որ մարդ չկայ,
կատակ կարծեց. և նորէն որ աղաչեց կնիկը որ
իրաւը ըսէ, Սամիսոն ալ ըսաւ. « Թէ որ եօթը
նոր ամուր չուաններով կապուիմ, ուժս կը կրա-
րի »: Ան ալ փորձեց. ու երբոր չեղաւ, նորէն
կ'աղաչէր. Սամիսոն ալ « Թէ որ ըսաւ, գլխիս
մաղերուն եօթը ոլորքը աղքով հիւսես ու պատին
գամես, ուժս կ'երթայ »: Անիկը ասով ալ խա-
բուելով այնչափ ետեէն ընկաւ՝ ինչուան որ բեր-
նէն առաւ՝ ինչպէս ուխտաւոր ըլլալը:

Հ. Սամիսոն Գալիլային շողոքորթութենէն
խարուելով ի՞նչ մնասի հանգիպեցաւ.

Պ. Ան մարդն որ առիւծը կը սլառուէր, զօրաց բանակը կը ջնջէր, կնկան մը սատանու թեամբ ա մէնուէն խաղալիք եղաւ ու չարաչար մեռաւ: Ասան զի Գալիլա լաածին սէս որ սրտանց շխտակը ըսաւ, շուտ մը այլազգիները գաղառուկ կանչեց, ու ինքը Սամիսոնին հետ անոյշ խօսելով, ծնկանը վրայ քնացուց, ու գլխուն մազերը ածիլել տալուն սէս՝ սկսաւ Սամիսոն թուլնալ, ետքը կանչեց, «Սամիսոն, այլազգիները հասեր են»: Սամիսոն արթնցաւ, կ'ուզէր մէկէն ցաաքել, բայց տեսաւ որ չկրնար շարժիլ. շուտ մը եկան այլազգիները բռնեցին՝ աչուրները փորեցին, երկաթներով կապած Գաղա տարին ու հոն ջաղացքը դրին որ աղայ:

Հ. Սամիսոնին եօթներորդ կարճութիւնը ո՞րն է.

Պ. Օր մը այլազգիները Գաղոն կուռքին մեծ տօնը կատարեցին՝ Սամիսոնին համար. զինքն ալ բերել տուին որ ծաղր ընեն, վրան խնտան: Սամիսոնին մազերը չափաւոր երկրնցած ըլլալով՝ գնաց ան սալատին երկու միջի սիւները բռնեց, որոնց վրայ շինուածքը հաստատուած էր, ու «Տէր զօրութեանց, ըսաւ, յիշէ զիս, եւ աս մէկ հեղս ալ ինձի ոյժ տուր, որ ես ալ ասոնց հետ մեռնիմ», ըսելով անանկ ուժով թօթիկեց որ մէկէն սալատը փլաւ, ու ամէն մէջի եղողները՝ իրեք հազար հոգի ասկը մնացին, բոլոր իշխանները՝ կնիկներով ու աղոցմով: Ետքը իրեն ազգականներն եկան մարմինն առին՝ իր հօրը գերեզմանը թաղեցին. որ քսան տարի այլազգիները չարչարեց, ու Իսրայէլացիներուն առաջնորդեց:

Իրմէ ետքը Իսրայէլացւոց վրայ դատաւորութիւն ըրաւ հեղի քահանայապետ:

Միքս .

Հ . Իսրայէլացւոց մէջ դատաւոր չեղած ատեն ի՞նչպէս կը կառավարուէին .

Պ . Ամէն մարդ ուզածը կ'ընէր , անոր համար մէջերնին ամէն անկարգութիւն կ'ըլլար . ինչպէս որ Միքայի պատմութենէն և Բենիամինի ցեղին դիպուածէն՝ յայտնի կ'երևնայ :

Հ . Ի՞նչ կը պատմուի Միքայի վրայ .

Պ . Միքան Եփրեմի ցեղէն աւելորդապաշտութեամբ արծըթէ արձան մը շինեց՝ իր տունը դրաւ . ան օրերը ղևաացի մը կ'անցնէր՝ կ'անչեց որ իրեն քահանայութիւն ընէ ու ինքը անոր ապրուստը հոգայ : Ան ատենն ալ Ղանայ ցեղը՝ տեղերնին իրենց նեղուածք ըլլալով՝ հինգ հոգի լրանա խըրկեր էին որ բնակելու տեղ գտնեն . ասոնք ճամբան ան ղևաացիին հանդիպեցան ու անոր ձեռքով Ասաուծոյ հարցուցին իրենց բանին յաջողութիւնը : Երբոր լրանները գարձան , ու վեց հարիւր հոգի կ'երթային Լայիսա քաղաքն որ ջարդէն այլազգիներն ու հոն բնակին , Միքայի տանն առջևէն անցնելու ատեննին ան ղևաացին իր աւելորդապաշտական բաներովը Միքայի անէն յափշտակեցին՝ Լայիսա քաղաքը տարին որ հոն իրենց քահանայութիւն ընէ . քաղքին անունն ալ Ղան գրին . հոն երկար ատեն ան արձանը կը պաշտէին :

Հ . Իստաւորաց դարուն մէջ Բենիամինի ցեղին ի՞նչ դիպուած հանդիպեցաւ .

Պ . Ղևաացիի մը կնիկը փախաւ քովէն . անոր հօրը տունը դնաց ղևաացին որ հաշտուի . աները մէկ բանի օր ղղևաացին սեղանի բանեց , չորրորդ

օրը երբոր դարձան՝ գիշերը վրայ գալով Բենիա-
մինի ցեղին Գաբաա քաղաքը հանդիպեցան . տե-
սաւ զիրենք Նփրեմայ ցեղէն մէկը՝ տուն հրամ-
ցուց որ գիշերը ճամբու վրայ չմնան : Բենիամինի
անօրէն մարդիկը գիշերը ժողվեցան՝ տանախո-
ջէն բռնի կ'ուզէին հիւրն որ չարչարեն . երբոր
ճար չեղաւ՝ հարսը ձեռուրնին մամնեցին . առա-
ւօտանց ղևտացին ելաւ որ երթայ , տեսաւ որ
կինը մեռուցեր են , իշուն վրայ դրաւ գնաց իր քա-
ղաքը , ու մեռելը տասուերկու կտոր ըրած՝ տաս-
ուերկու ցեղին խրկեց : Ասանկ մեծ անիրաւու-
թեան վրայ ամէն Իսրայէլացիք ոտք ելան՝ չորս
հարիւր հազար հոգի . առաջ մարդ խրկեցին Բե-
նիամինի ցեղին որ սլատթեն յանցաւորները . եր-
բոր անոնք մտիկ չըրին , Իսրայէլացիք երդում ը-
նելով որ ջնջեն , ու անկէ ետքը մէկը խնամու-
թիւն չընէ անոնց հետ , սլատերազմ բացին Բե-
նիամինի ցեղին դէմ , որոնք ունէին քսան ու հինգ
հազար եօթը հարիւր կարիճ ղինուոր : Առջի օրը
քսանուերկու հազար Իսրայէլացի մեռան . Աս-
տուծոյ աղաչեցին՝ հարցուցին , բայց նորէն երկ-
րորդ օրը ութ հազար ջարդուեցան . երրորդ օրը
սլաքով աղօթքով նորէն հարցուցին , ետքը քաղ-
քին ետեէն մարդիկ դարանի դրին ու սկսան սլա-
տերազմիլ . առջի բերանն երեսուն հոգի ջարդուե-
լով սկսան փախչիլ , ինչուան զանոնք հեռացու-
ցին քաղքէն . եւ այնպէս քսանուհինգ հազար
հարիւր հոգի Բենիամինէն ջարդեցին և բոլոր քա-
ղաքներուն կրակ տուին՝ կնիկներով աղոցմով ջըն-
ջեցին , միայն վեց հարիւր հոգի Բեամինի այրին
մէջ պահուրտած աղատեցան :

Հ . Բենիամինի ցեղին վեց հարիւր ողջ մնացած
մարդիկը ինչպէս կրցան տուն տեղ ըլլալ .

Պ . Իսրայէլացիք սկսան ճարը մտածել . հար-
ցուցին , իմացան որ Իաղաազ ու Յաբիս քաղքէն

մարդ չէ եկած պատերազմի . որովհետև մէջերնին
երգում ըրեր էին որ ամենքը երթան , գնացին ջար-
դեցին զանոնք , մինակ կոյսերը թողում որոնք չորս
հարիւր գրանուեցան : Մնացածներուն ալ ըսին
որ Սելով քաղքէն տօնին օրը յափշտակեն . եր-
բոր բողոքեն՝ ըսին՝ մենք խօսք կը հասկըցընենք , ա-
սանկով Բենիամինի ցեղը նորէն հաստատուեցաւ :

52

Հոռք .

Հ . Ո՞վ է Հոռթ , ու ի՞նչ գործք ըրաւ .

Պ . Յուզայի ցեղէն Ելիմեէք անունով մէկը
սովի պատճառաւ իր Նոոմին կնիկովն ու երկու
տղոցմով Մովաբացոց երկիրը գնաց ու հոն մե-
ռաւ , տղաքն ալ կարգուեցան այլազգիներուն
հետ . հարսերուն անունն ալ՝ մէկունը Արփա էր ,
մէկաւինը Հոռթ . տասը տարիէն տղաքն ալ մե-
ռան : Նոոմին ուզեց հարսերը իրենց տունը ճամ-
բել ու ետ գառնալ : Արփան շատ դժուարու-
թեամբ գնաց , բայց Հոռթ ճար չեղաւ՝ իր կե-
տուրէն չզատուեցաւ , « Մահը միայն զիս քեզմէ
կը բաժնէ » կ'ըսէր , անոր համար մէկտեղ Բեթ-
ղէհէմ գարձան : Հոն Ելիմեէքի ազգականը կար՝
Բոոս անունով . Նոոմինին տեղ տուաւ որ բնա-
կին : Երբոր արտերերը ցորեն կը հնձէին՝ Հոռթ
Նոոմինէն ուզեց որ երթայ ինքն ալ արտերը բա-
նի . ու գնաց Բոոսին արախի հնձած ցորենները կը
քաղէր : Բոոս երբոր իմացաւ թն՝ Հոռթ Նոոմի-
նին հարսն է , վրան հոգ ցըցուց . եւ ըսաւ որ իր
աղջիկներուն հետ մէյտեղ ուտէ . հնձողներուն ալ
ապրասպրեց որ զինքն աղէկ նային , և ցորենի հաս-
կերուն մնացածը թողուն որ ժողովէ տանի : Նոո-

մին երբ իմացաւ եղածը, հարսին ճամբայ ցըցուց
որ զինքը սիրցընէ Բոսսին ու կարգուի: Բոսս եր-
բոր հռութայ միտքն իմացաւ՝ չէ չըսաւ. բայց ո-
րովհետև ուրիշ մօտ ազգական կար, անոր կ'իյ-
նար կարգուիլ. որպէս զի բանը կարգով ըլլայ,
քաղաքին ծերերը ժողովեց ու անոնց առջևն ան
ազգականին ըսաւ որ Նոոմինը իր երկանէն մնա-
ցած գետիններուն մէկ կտորը ծախել կ'ուզէ, քե-
զի կ'իյնայ առնել, թէ չէ՝ ես կ'առնեմ. բայց աս
ալ գիտնաս որ ան տեղին հետ հարսն ալ պիտի
առնես. որ անկէց մեռնողին ժառանգ թողուս:
Անիկայ աս բանս յանձ չառաւ: Ան ատենը Բոսս
վկայ բռնելով ան ծերերը՝ հռութն իրեն հարա-
զատ կնիկ առաւ, որ ամէնքն օրհնեցին. ուսկից
չատ չանցաւ՝ որդի մը ունեցաւ անունն Ովբեդ, ու
անկէց եղաւ Յեսսէն՝ Բաւիթ մարդարէին հայրը:

53

Հեղի, Սամուէլ .

Հ. Հեղի ինչպէս կը կառավարէր Դարայէլացի-
ները .

Պ. Թէպէտ իր կառավարութիւնը աղէկ էր,
բայց երկու սրդի ունէր՝ Ովինի ու Փենեհէս, ու
րոնք ժողովրդեան զոհ մատուցանելու ատեն անի-
րաւութիւն կ'ընէին. ինքն ալ կ'իմանար, բայց
ինչպէս որ պէտք է չէր խրատէր, անոր համար
զինքն ալ պատժեց Աստուած իր որդւոցը հետ ու
տեղը Սամուէլն ընտրեց:

Հ. Սամուէլ որո՞ւն տղան է .

Պ. Եղկանա անունով մէկ ղևտացիի մը Արիմա-
թեմ քաղքէն. աս մարդս երկու կին ունէր՝ Ան-
նա ու Փեննանա: Տարին հեղ մը ուխտի կ'երթար

Սեւով քաղաքը՝ Աստուծոյ տապանակին առջև .
անգամ մը Աստուծոյ զօհ ընեւէն ետև սեղան որ
նստաւ՝ Փեննանային ու անոր աղոցը բաժինները
մէկտեղ տուաւ . եւ Աննային աղայ չունենալուն՝
անոր մէկ բաժին մը տուաւ : Աննան մինաւոր նըս-
տած՝ իր ամուլթեանը վրայ արամած կը մաշէր .
Թէպէտ Եղիանան կ'ուզէր զինքը մխիթարել , բայց
ճար չէր ըլլար : Սեղանէն ետքը Աննան մինաւոր
գնաց տաճարին դրան առջևն ինկաւ ու սրտանց
հառաչելով մտքէն սկսաւ աղաչել որ Աստուած
իրեն ողորմի՝ զաւակ մը տայ , եւ ուխտ ըրաւ Աս-
տուծոյ նուիրելու ան աղան : Հեղի հոն նստած
ըլլալով՝ երբոր տեսաւ որ Աննա երկայն ատեն ան-
շարժ կեցեր է , կարծեց թէ գինով է , աղան խըր-
կեց որ վարնտէ ան սուրբ տեղէն : Աննան պատաս-
խան տուաւ թէ « Գինով չեմ , հապա արամու-
թեամբ լեցուած կնիկ մըն եմ որ Աստուծոյ առջև
սրտիս ցաւը կը բանամ » : Ան ատենը Հեղի զինքն
օրհնեց . ասով խիստ մխիթարուեցաւ Աննա , ու
երբոր տուն դարձաւ , աղայ մը բերաւ՝ որուն ա-
նունը Սամուէլ գրին , որ ըսել է Աստուծմէ խընդ-
րուած :

Հ . Աննան ինքիրեն կատարեց Աստուծոյ ըրած
խոսամունքը .

Պ . Տեղնիտեղը կատարեց . նախ ինչուան որ կա-
թէն կտրեց Սամուէլը՝ ալ չգնաց Սեւով երկանը
հեա . ետքը ատենը հասածին պէս ընծաներով բե-
րաւ Աստուծոյ նուիրեց , ու աղան Հեղի քահա-
նայապետին ձեռքը տալու ատենն ըսաւ . « Տէր իմ ,
ես ան կնիկն եմ որ քու աչքիդ առջևն Աստուծոյ
աղաչեցի աս տղիս համար . ինչպէս որ Աստուծոյ
ուխտ ըրի՝ ասիկայ իրեն կը նուիրեմ » . ու օրհնու-
թեան աղօթք մըն ալ ըրաւ Աննան հոն տեղը .
և ետքը Թողուցին Սամուէլն ու դարձան : Աս-
տուած ալ Աննային՝ Սամուէլի տեղն ուրիշ իրեք

մանչ ու իրեք աղջիկ զաւակ տուաւ . և ինքն ամէն տարի որ Սեւով քաղաքը կ'երթար՝ Սամուէլին լաթ կը շինէր կը տանէր . Սամուէլ ալ հոն ապանակին կը ծառայէր :

Հ . Աստուած Հեղին ու տղաքը պատժեւէն առաջ իմացօնց կերպով մը որ զգուշանան .

Պ . Կախ հրեշտակ մը խրկեց Հեղինն որ տղոցն ըրած անկարգութիւններն ըսեւէն ետքը պատիժ ալ սպաննայաւ՝ քահանայութիւնը ձեռքէն առնելու . ու առ ըլլալիքներուն նշան ըսաւ . « Երկու տղաքդ մէկէն մեռնին » : Արովհետեւ ասով Հեղին չչարժեցաւ , մէկ գիշեր մը երբոր Սամուէլ տաճարը պառկեր էր , կանչեց Աստուած . Սամուէլ Սամուէլ : Ան կարծեց թէ Հեղին կը կանչէ , մէկէն գնաց՝ Հրամմէ , ըսաւ . Հեղին « Չկանչեցի , ըսաւ , դնա պառկէ » : Աս բանս իրեք անգամ եղաւ : Ան ասեմը Հեղին իմացաւ որ Աստուած կը կանչէ , աստպրեց Սամուէլին որ եթէ նորէն կանչէ՝ պատասխանէ . « Հրամմէ Տէր ծառայիդ » : Չորրորդ անգամ ըսածին պէս ըրաւ . ան ասեմն Աստուած նորէն յայտնեց թէ գէշ կ'ընեն Հեղինն տղաքը , պիտի պատժուին : Աստուանց Սամուէլ վախցաւ պատմելու , բայց Հեղին երդումով բերնէն առաւ ու անհոգութեամբ ըսաւ . « Կամք տեսան որհնեալ եղիցի » . տղաքն ալ ամենեւին իրենց ըրածէն ետ չկեցան : Աստուած ալ ան ասեմնէն սկսաւ յայտնել Սամուէլի իր կամքն՝ ու օրէ օր անունը խորայեւոցուց մէջ հռչակուեցաւ , թէ Աստուած օյ սիրելի եւ հաւատարիմ մարդարէն է :

Տապաւնակին գերոշրիւնը .

Տ . Ի՞նչ կերպով պատժեց Աստուած Ռփնին ու Փենեհէսը .

Պ . Այլազգիները Իսրայէլացւոց վրայ պատերազմի ելան . ու առջի զարնուելուն Իսրայէլացւոց մէջ չորս հազար հոգի ինկան . ուստի եկան Սելովէն տապանակը մէկտեղ առին որ Աստուած իրենց օգնէ . Ռփնի ու Փենեհէս ալ տապանակին հետը գնացին : Այլազգիները Իսրայէլացւոց կանչուրտեղէն խմանալով տապանակին դալը , վախցան . « Այ՛ մեզի , ըսին , բաներնիս լմընցաւ » . բայց մէկմէկու սիրտ աալով յուսահատութեամբ սկըսան կռուիլ , ու երեսուն հազար հոգի կոտորեցին՝ Ռփնին ու Փենեհէսն ալ մէկտեղ . Աստուծոյ տապանակն ալ գերի առին : Ան առենը Յեմինացի մը վազեց բերաւ աս գէշ լուրը Սելով քաղաքը : Հեղին ալ ծերացած իննսունեութը տարուան՝ աչքին լոյսն ալ կորսընցուցած՝ տանը դրանը քով աթոռով նստեր լուրի կը սպասէր , երբոր լսեց եղած բաները , և թէ Աստուծոյ տապանակն առնուեր է , սրտին ցաւէն կանրկին վրայ ինկաւ՝ մէջքը կոտորեցաւ մեռաւ : Փենեհէսի կնիկն ալ որ անօրերը տղաբերքի մօտ էր՝ իր կեսրայրին և էրկանը մեռնիլը լսելով՝ ցաւը բռնեց ու տղաբերքին առենը մեռաւ :

Տ . Այլազգիք տապանակն ի՞նչ ըրին .

Պ . Տարին Ազովտոս քաղաքը՝ Բագոն կռուքին տաճարը դրին : Երբոր մէկալ առաւօտ տաճարը գնացին՝ տեսնեն որ Բագոնը տապանակին առջև երեսին վրայ ինկեր է , վերցուցին : Բայց նորէն

մէկալ առաւօտ տեսան որ Դագոնը գեախնը կոր-
ծանա՞ծ՝ ու միայն ողնայարը ողջ մնացեր էր, գլու-
խըն ու երկու ռառւքները կոտորած մէջ տեղը ին-
կած, երկու ձեռքն ալ դրանը շեմին վրան: Բո-
լոր այլաղգիներն ալ սկսան պատժուիլ, նստուկ
անդերնին խոց կ'ելլէր ու կը տանջուէին, շատն
ալ կը մեռնէին. իրենց արտերն ալ մկներ կը վըխ-
տային որ բոլոր վարուցաննին կ'աւրէին: Անոր
համար տապանակն անկէց վերցուցին՝ Գէթ քա-
ղաքը տարին՝ որ իմանան թէ տապանակն է ընձ-
ղը. հոն ալ որ սկսան ըլլալ ան պատուհասները,
ուզեցին որ Ասկաղոն տանին, բայց Ասկաղոնացի-
ները դէմ կեցան: Ուստի եօթը ամիս տապանա-
կը քովերնին կենալէն ետեւ, ուզեցին ետ ճամբել՝
ազատիլ. ան ատենը քուրմերը խորհուրդ տուին
որ ընծայով խաւրեն. այլաղգիներուն հինգ իշ-
խաններուն համրանքովը հինգ ոսկիէ երաստանի
պատկեր շինեն, ու հինգ ալ ոսկիէ մուկ, որոնք
տապանակին նուիրեն որ ան պատիժները վրա-
ներնէն վերնայ. եւ ըսին որ տապանակը ոսկիէ
ընծաներով նոր սայլի վրայ դնեն, ու երկու ե-
րինջ լծեն՝ զտակելով իրենց առջինեկ հորթերնեն,
ու ատենեն որ շիտակ Իսրայէլացւոց երկիրը կ'եր-
թան. ասով իմանան թէ ան պատիժները տապա-
նակէն է: Աս որ ըրին՝ կովերը շիտակ դնացին
Բեթսամիւս Իսրայէլացւոց երկիրը, երբոր անոնք
ցորեն կը հնձէին:

Հ. Երբոր տապանակը Բեթսամիւս հասաւ՝
Իսրայէլացիք ինչ ըրին.

Պ. Տապանակն որ մտաւ Յովսեայ Բեթսամիւ-
սացիին արտը, Իսրայէլացիք ուրախութեամբ վը-
րան վազեցին՝ սայլէն վար առին, ու սայլը ջար-
դեցին, ան երկու կովերն ալ ողջակէզ ըրին տա-
պանակին առջևը: Ետքը հետաքրքրութեամբ մե-
ջք նայելնուն համար՝ յիսուն հազար եօթանա-

տուն հոգի Աստուծմէ պատժուելով մեռան : Ուս-
տի զարհուրած՝ Կարիաթարիմի բնակչաց իմա-
ցուցին որ իրենց քաղաքը տանին . հոն շատ տարի
Ամինադար քահանային տունը կեցաւ :

Տ . Սամուէլ ինչպէս կ'առաջնորդէր Իսրայէ-
լացւոյ :

Պ . Երբոր իր վրայ ինկաւ ժողովրդեան հոգը ,
սկսաւ կռատաշտութիւնը ջնջել ու աստուած-
պաշտութիւն սորվեցընել : Եւ ինքը սովորութիւն
ըրեր էր որ տարուէ տարի ամէն տեղ կ'երթար
կը հոգար , դատաստաննին կը տեսնէր , և ուրիշ
ատեն միշտ Արիմաթեմ կը կենար :

Տ . Սամուէլի դատաւորութեան ատեն Իսրայէ-
լացիք ամէն կողմանէ խաղանդ էին .

Պ . Անգամ մը Իսրայէլացիք Մասեփաթ ժող-
ված՝ Սամուէլ իրենց խրատ որ կուտար , այլազ-
գիներն իմացան , յանկարծ վրանին պատերազմի
ելլել ուղեցին : Իսրայէլացիք վախնալով Սամուէ-
լի դիմեցին որ Աստուծոյ աղաչէ . Սամուէլ դառ
մը ողջակէզ ըրաւ . Աստուած ալ երկինքն անանկ
ասասիկ դուացուց , որ բոլոր այլազգիներն իրար
անցած՝ փախչիլ սկսան . Իսրայէլացիներն ալ ե-
տենուն վազեցին ջարդեցին , ու իրենց ամէն քա-
ղաքները նորէն անոնց ձեռքէն առին : Ասով այ-
լազգիներուն աչքը վախցաւ , ու մէյմ՝ ալ պատե-
րազմի չելան , ինչուան Սաւուղի թագաւորու-
թեան ատենը :

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ . Տապանակն ինչո՞ւ Տապանակի կախարանայ կ'ըսուի .

Պ . Աստուծոյ պատուիրանքներուն տախտակները մէջը գրուած ըլլալուն համար :

Հ . Մովսէսի երեսը ինչո՞ւ լուսաւորուեցաւ .

Պ . Մէյմը որ նշան ըլլայ թէ Աստուծոյ փառքը տեսած է . երկրորդ որ ժողովուրդը վախնայ իրմէ ու պատկառի :

Հ . Իսրայէլացիք երբոր միս ուղեցին , Աստուած ինչո՞ւ լորամարդի տուաւ .

Պ . Վասն զի լորամարդին ան կողմերն ուրիշ թռչուններէն շատ կը դանուի ու պարարտ ալ է :

Հ . Ինչո՞ւ Մարիամ բորտեցաւ ու Ահարոն պատիժ մը չտուաւ .

Պ . Վասն զի բուն արանջացողը Մարիամն էր . Ահարոն ալ անոր դէմ չգնելովը հաւնիլ ցըցուց . անոր համար իրեն տուած յանդիմանութիւնը Աստուած հերիք սեպեց :

Հ . Թէ որ Բաղաամ կախարդ էր՝ Աստուած ինչպէս հետը կը խօսէր .

Պ . Բաղաամ սատանայի կը հարցընէր , բայց Աստուած հրեշտակի բերնով իր ուղածը պատասխան կուտար անոր :

Հ . Մովսէսի գերեզմանն ինչո՞ւ անյայտ մնաց .

Պ . Արպէս զի չըլլայ թէ կուսապաշտութիւն սիրող Իսրայէլացիներն իրեն մարմինը պաշտեն :

Հ . Յետուայ ատեն եղած բաներն ո՞ւր կը պատմուին .

Պ. Յետուայ գրքին մէջ որ կամ ինքը գրեց
կամ ետքի մարգարէ մը :

Հ. Աստուած որ հրամայեց Իսրայէլացւոց բո-
լոր Քանանացիները ջարդելու, անոնցմէ մարդ ա-
զատելու ճար չկար :

Պ. Մովսէսի օրէնքներովն աս ալ ապրասպրեր
էր իրենց, որ ան երկիրներուն բնակիչները թէ որ
ճշմարիտ Աստուածը ճանչնան ու իրենց հարկա-
տու ըլլալ յանձն առնուն, Իսրայէլացիք հետեր-
նին դաշինք դնեն ու չմեռցընեն :

Հ. Իսրայէլացիք Գաբաւոնացւոց ըրած երդ-
մանը պարտը կան էին :

Պ. Պարտը կան էին. վասն զի ինչպէս որ Աս-
տուած ապրասպրեր էր, անոնց հետ ըրած դաշին-
քին մէջ կար թէ Գաբաւոնացիք ճշմարիտ Աս-
տուածն անկէ ետքը պիտի սլաշտեն, անոր հա-
մար պարտը կան էին զանոնք չմեռցընելու. բայց
որովհետեւ անոնք խաբելով հեռու տեղացի ձեռ-
ցուցին զիրենք ու հարկատու ըլլալէն ազատ մնա-
ցին, անոր համար երբոր խաբէութիւնը իմացուե-
ցաւ՝ Յետեւ անոնց պատիժ դրաւ, որ չէ թէ մի-
նակ հարկատու ըլլան, հասցա գերիի սէս ծառայ-
են ժողովրդեան :

Հ. Իստաւորաց գործքերը ո՞ւր կը պատմուին :

Պ. Իստաւորաց ըստած գրքին մէջ քիչ մըն ալ
առաջին Թագաւորութեանց գրքին սկիզբը. որ
կ'երևնայ թէ Սամուէլ մարգարէն կամ ուրիշ մը
գրած է :

Հ. Իստաւորներն ամենը սո՞ւրբ էին :

Պ. Սուրբ վարդապետաց հասարակ կարծիքն
է որ սուրբ էին. վասն զի Պողոս առաքեալն ալ
կը գովէ զիրենք. միայն Աբիսկէք անոնց մէջ չը-
սեպուիր, որովհետեւ բռնաւոր էր :

Հ. Յեփթայէին ուխտն աղէկ էր :

Պ. Ինքը բարի սրտով ուխտեց. բայց աստուա-

ծաշունչը վերջը ինչպէս կատարելը յայտնի չսե-
լով, կ'իմացընէ որ խոհեմութիւն չէր անանկ ուխա-
րնելը:

Հ. Սամփսոն ինքզինքը սպաննած չիսեպուիր.

Պ. Չէ. վասն զի ինքը Աստուծոյ ազգամարը
իր ազգին բարւոյն համար դրաւ իր կեանքը. ինչ-
պէս որ պատերազմի մէջ ալ կը սպասահի:

Հ. Բենիամինի ցեղին վրայ պատերազմի գնա-
ցողներն ինչո՞ւ երկու անգամ ջարդ կերան.

Պ. Աստուած անանկ կարգաւորեց որ առաջ
իրենց ըրած մեղքերուն պատիժը քաշեն, իրենք
իրենց մեղքերէն զղջան ու ետքը ուրիշներուն
վրէժխնդիր ըլլան. մէյմըն ալ որ իրենց ուժին ու
բազմութեանը չվրասահին:

Հ. Հռութայ դիրքը ո՞վ գրեց.

Պ. Հաւանական կարծիք է որ Սամուէլ մար-
գարէն գրած ըլլայ, որովհետեւ իր ասեններն ե-
ղած բան էր:

56

Յոբ կրակնի.

Հ. Աստուծոյ Իսրայէլացւոյ տուած օրէնքը
պարտըկան էին պահելու ամէն աշխարհքիս մէջ
գտնուած աստուածապաշտ մարդիկ.

Պ. Չէ. վասն զի ան օրէնքները միայն Աւե-
տեաց երկիրը ժառանգելու համար գրած էր, օ-
րինակ նոր օրէնքին՝ որ արքայութիւնը ժառանգե-
լու համար տուաւ Քրիստոս: Ինչպէս որ զՅոբ
երանելին ալ գովելով կը յիշէ աստուածաշուն-
չը, որ Եսաւայ որդիքներէն էր ու աստուածապաշ-
տութեամբ զարգարուած, թէպէտ Իսրայէլացւոյ
օրէնքը չէր գիտեր:

Հ. Ի՞նչ բանի մէջ աւելի երեցաւ Յոբայ աստուածապաշտութիւնը .

Պ. Համբերութեան օրինակ եղաւ ամենուս . Որովհետեւ Յոբ, որ Յորաբ ալ կ'ըսուէր, Եդոմայեցւոց երկիրը Աւսիդ գաւառը իշխան մըն էր խիստ հարուստ, աստուածավախ ու արդար : Եթէ թը մանչ զաւակ ունէր, իրէք ալ աղջիկ . երբոր անոնք մէկտեղ եկած կ'ուրախանային, ինքն անոնց ամէն մէկուն համար զոհ կը մատուցանէր Աստուծոյ, որ եթէ մեղք մը ըրած են՝ Աստուած թողութիւն տայ : Ստանան ետեւ էր որ զինքն Աստուծոյ աչքէն հանէ . բայց Յոբ ամէն փորձութիւններուն համբերելով աւելի Աստուծոյ աչքը յտաւ :

Հ. Ի՞նչպէս փորձուեցաւ Յոբ .

Պ. Ստանան միտքը դնելով որ Յոբայ ըրած աստուածապաշտութիւնը սրտանց չէ, անոր համար զինքը խարել կ'ուզէր . Աստուած ալ Յոբայ աղէկութիւնը իմացընելու համար հրաման տուաւ ստանային որ ինչ կ'ուզէ ընէ Յոբայ, միայն թէ իրեն անձին չդրայչի : Օր մը յանկարծ մէկն եկաւ Յոբայ պատմեց որ « Աւազակներ եկան՝ հերկող եղներդ ու արածող էշերը բոլոր յափշտակեցին տարին, պահապաններն ալ մեռուցին . անոնցմէ ես միայն ազատեցայ » : Ասիկայ խօսքը չմընցուցած՝ ուրիշ մըն ալ հասաւ՝ սկսաւ ըսել թէ « Երկրնքէն կրակ իջաւ ոչխարներդ հովիւներովն այրեց . մինակ ես մնացի » : Երբոր աս կ'ըսէր ետեւէն ուրիշ մը եկաւ . « Իրէք խուճք ասպատակաւորներ եկան, ըսաւ, ուղտերդ տարին՝ ու պահապանները մեռուցին . մինակ ես կրցայ փախչիլ » : Անոր ետեւէն հասաւ ուրիշ մը ու ըսաւ . « Երբոր աղաքդ ու աղջիկներդ իրենց մեծ եղբօրը քով կ'ուտէին կը խմէին, յանկարծ փոթորիկ մը ելաւ՝ տունը կործանեց, ինձմէ զատ ամէնքը մե

ուռց » : Ան առեն ելաւ Յոր, լաթը պատուից ու մազերը կտրեց, ինկաւ Աստուծոյ երկրպագութիւն ըրաւ, ըսելով. « Մերկ եկայ աշխարհք, և նորէն մերկ պիտի դառնամ. Աստուած տուաւ, ինչպէս որ կամեցաւ՝ անանկ եղաւ. Աստուծոյ առնունն օրհնեալ ըլլայ » : Ասանկով երբոր սասանան անօթով մնաց, սկսաւ Աստուծոյ դէմ պատճառ բերել թէ « Իրեն չգտայ, անոր կամար հողը չեղաւ. թէ որ իր մարմնոյն ալ զեն հասցընեմ՝ անանկա թէ ինչպէս զքեզ կ'անիծէ » : Ան առենն Աստուած թողուց որ սասանան ինչ կ'ուզէ ընէ, միայն թէ չմեացընէ : Մէկէն սասանան Յորայ վրան ոտքէն ինչուան գլուխը խոցեր հանեց. անանկ որ գուրս աեղ մը աղբիւսի մէջ նստած՝ խնցիով ինքն իր թարախները կը մաքրէր, ու միշտ փառք կուտար Աստուծոյ : Բայց խորամանկ սասանան Յորայ կինը միայն ողջ թողուցեր էր, որ տեսնելով աս խեղճութիւնները՝ ալ ձանձրացած եկաւ Յորայ ըսաւ. « Ինչուան երբ պիտի համբերես, որ ես ալ քու պատճառաւդ անէ տուն բարբարական եմ եղեր. Աստուծոյ դէմ անէծք մը ըրէ որ մեռնիս, աղատիս » : Յոր պատասխան տուաւ. « Իրաւ անողգամ կնկան մը պէս խօսեցար. բարիքը վայլեցինք, չարիքին չհամբերե՞նք » :

Հ. Յորայ քաշած փորձութիւնները ինչ կերպով գողրեցաւ.

Պ. Ըսելով իրեն խեղճութիւնը իրեք բարեկամ թագաւորները՝ Եղիփաղ Թեմնայիս, Բաղդատ Սաքեցին, Սովիար Մինեցին, եկան զինքը մտի թարեւու. որոնց հետ էր նաև Եղիսուս Բուզային : Առջի բերան չձանչցան, բայց ետքն որ իմացան՝ սկսան լալ, ու վրայի լաթերնին պատառած՝ գլուխնին հող ցանած՝ հօթն օր Յորայ առջևը պատանձած կեցան, ինչուան որ Յոր սկսաւ ցաւելով պատմել զինքն անցածները, խնայընելով թէ Աս-

տուժոյ կամքն աս է, պատժոյ համար չէ: Անոնք
ալ սկսան պնդել թէ անմեղ մարդը անանկ բան
չքաշեր: Յոք կ'ըսէր թէ Աստուած մարդուն համ-
բերութիւնը կը փորձէ. անոնք մէկ բերան դէմ
կը խօսէին. ինչուան որ Աստուած ամպին մէջէն
Յոքն արդարացուց՝ ու բարեկամները յանդիմա-
նեց, և սպրսպրեց իրենց որ եօթը հորթ և եօթն
ոչխար բերեն Յոբայ, որ իրենց համար զոհ մա-
տուցանելով աղօթք ընէ՝ ու իրենց մեղացը թո-
ղութիւն ըլլայ: Ասանկով եօթը տարի քաջասրբ-
աութեամբ համբերելէն ետև, նորէն Աստուած
տուաւ իրեն առողջութիւն. և եկան ամէն ճան-
չուորները ուրախակից եղան իրեն ու մէյմէկ ըն-
ծաներ տուին: Աստուած ալ օրհնեց զինքն ու
առջինէն աւելի հարստացուց, և նորէն եօթը մանչ՝
իրեք ալ աղջիկ տուաւ: Անկէ ետքը հարիւր եօ-
թանասուն տարի ալ ապրեցաւ՝ ինչուան իրեն
թուանը թողը տեսաւ, և երկու հարիւր քա-
ռասունևութը տարուան վախճանեցաւ:

ԹՒԱԳԱԻՈՐԱՑ ԴԱՐԸ

ԻՆՉՈՒԱՆ ԲԱԲԵԼՈՆԻ ՓԵՐՈՒԹԻԻՆԸ

57

Մառտոյայ քաղաքիւր .

Հ . Ի՞նչ պատճառաւ Իսրայէլացիք սկսան իրենց թագաւոր դնել .

Պ . Սամուէլ ծերութեան ատենը իր երկու որդիքը Յովէլ ու Աբիա իր տեղը դատաւոր դրաւ . ասոնք անիրաւութիւն ընելով Ժողովուրդը կը նեղէին . որով ամէնքը մէկ եղած՝ թագաւոր ուղել սկսան : Սամուէլ վախնալով որ չըլլայ թէ Աստուծոյ ասկերախտ դանուին , որ ինչուան ան օրը ինքը զանոնք կը կառավարէր՝ դատաւորներու ձեռքով , Աստուծոյ հարցուց . Աստուած հաւանեցաւ , բայց առաջուց խնայուց թագաւորին իրաւունքները . երբոր անոնք յանձն առին , Աստուած Սաւուղն ընտրեց :

Հ . Սաւուղն ի՞նչպէս թագաւոր օժեցին .

Պ . Սաւուղայ հայրը Աիա՝ Բենիամինի ցեղէն՝ անգամ մը իր էշերը կորսընցուց , ու Սաւուղը ծառայի մը հետ խրկեց էշերը փնտռելու . երբոր չգտան և յուսահատած ետ կը դառնային , ծառան ըսաւ որ « Երթանք Սամուէլ մարդարէին

հարցընենք » : Օրով առաջ Աստուած Սամուէլի յայտներ էր թագաւոր օժելու մարդը : Ուստի Սամուէլ տեսածին պէս՝ ըսաւ Սաւուղին թէ « Գանուած են էշերը » • ու առաւ կերակուրի տարաւ • հոն Սաւուղն ամենէն վեր նստեցուց, ու աղէկ կատրուանքը իրեն առջևը դնել տուաւ • ան դիշերն ալ հոն բռնեց, ու առաւօտանց գլուխը եղ լեցընելով ըսաւ • « Աստուած զքեզ թագաւոր օժեց » : Մէկէն Սաւուղի սիրան ալ փոխուեցաւ : Ետքը Սամուէլ զինքը հաւտացընելու համար՝ իրէք նշան տուաւ իրեն • մէյմը որ տուն դառնալու ասեն ընդ առաջ դան ըսեն թէ էշերը դանուեր են • երկրորդ որ ուխտի գնացող իրէք մարդու հանդիպի որ իրեն երկու հաց ընծայ տան • երրորդ որ մարդարէն թիւն ընէ : Աս նշանները կատարուեցաւ՝ ու ետքի նշանէն առակ եղաւ՝ կըրցածէն դուրս բան ընողին ըսել Եւ Սաւուղ 'ի մարգարէս :

Հ • Սաւուղին թագաւորելը ինչպէս հրատարակուեցաւ •

Պ • Սամուէլ ասորսարեց որ Սաւուղ Գաղգաղա երթայ՝ իրեն եօթն օր ստասէ • ինքն ալ գնաց բոլոր ժողովուրդը Մասեփաթ ժողովեց՝ թագաւոր ընտրելու համար : Ա իճակ որ ձգել տուաւ, Սաւուղայ վրան ինկաւ՝ որ պահուրտեր էր • ան ասենը Աստուծոյ հարցուց՝ գտաւ • երբոր բերաւ մէջտեղ՝ թիզ մը հասակով ամենէն բարձր էր • ժողովուրդը կեօռէ կանչեցին, Սամուէլ ալ սորվեցուց անոնց թագաւորի իրաւունքները : Ետքը կարիճ մարդիկներ Աստուծմէ շարժած Սաւուղին քով ժողովեցան :

Հ • Սաւուղ իշխանութիւնը առջի անգամ ինչ բանի մէջ ցըցուց •

Պ • Ամենացուց Նաաս թագաւորն ելաւ Գաղտագու երկրին Յաբիս քաղքին վրայ : Յաբիսա-

ցիք վախնալով՝ ուզեցին դաշինք դնել. « Կ'ընդու-
նիմ, ըսաւ, դաշինքը՝ թէ որ ձեր աջ կողմի աչ-
քերնիդ հանէք » . անոնք եօթն օր ատեն ուզեցին
մտածելու : Սաւուղ երբոր լսեց՝ վառուեցաւ աս-
տուածային զօրութեամբ, երկու եղ կտոր կտոր
ըրաւ, ու ասդին անդին Խորայեւացւոց խրկեց ըսե-
լով, « Ով որ Սաւուղի ու Սամուէլի հետ չգար՝
ասանկ՝ կ'ըլլան անոր եղները » : Ասանկով ամէնքն
ուրք ելան վեց հարիւր եօթանասուն հազար հօգի :
Սաւուղ զանոնք իրեք խումբ բաժնեց . մտան Ա-
մոնացւոց բանակը ու ցիրուցան փախուցին . ասով
անանկ ժողովրդեան աչքը մտաւ Սաւուղ՝ որ կ'ու-
ղէին մեռցնել ան մարդիկը որ Սաւուղը բանի-
տեղ չէին սեպած, բայց Սամուէլ արդիւեց . ետքը
Խորայեւացիքը Գաղգաղա տարաւ, հոն նորէն Սա-
ւուղը հանդէսով թագաւոր օծեց ու Աստուծոյ
չնոր հակալութեան զոհեր ըրին . և Սամուէլ ին-
չուան ան ատեն արդար կառավարութեան վկայու-
թիւնը ժողովրդոց բերնէն առնելով և Աստուծոյ
իրենց վրայ ըրած բարերարութիւնները յիշելով,
խրատեց ու յորդորեց՝ որ իրենց թագաւորին հետ
Աստուծմէ վախնան : Եւ նշան՝ թէ թագաւոր ու-
ղէնին ալէկ չէր, աղօթք ըրաւ Սամուէլ, ու շուտ
մը առանց ամպի երկինքը սասաիկ գոռալով սկսաւ
անձրե գալ . այնչափ որ ժողովուրդը սոսկալով
մեղայ ըսին, ու Սամուէլէն աղօթք խնդրեցին :

Սաւուղայ պատերազմները .

Հ . Սաւուղ հանդէսով թագաւոր օծուելէն
հտե ինչ պատերազմ ըրաւ .

Պ . Իրեք հազար հօգի իրեն թիկնապահ ընտ-

րեց, ասոնցմէ հազարը իր տղուն Յովնաթանին
տուաւ ու Գաբաա խրկեց. հոն Յովնաթան զար-
նուեցաւ այլազգիներուն հետ ու սպաննեց Նա-
սիր այլազգին. անկէ գրգռուեցան Փղտայիք ու
երեսուն հազար կառքով եւ վեց հազար ձիա-
ւորով, և ուրիշ անթիւ մարդիկներով պատե-
րազմի ելան: Իսրայէլացիք ալ սկսան Սաւուղի
քով ժողովիլ. Սամուէլ խօսք դրաւ որ եօթն օրէն
ինքն ալ Գաղգաղա գայ ու զոհ մատուցանեն մէկ-
տեղ: Ան միջոցին ժողովուրդը վախնալով թշնա-
մաւոյն շատուորութենէն, սկսան ցրուիլ, պահուը-
աիլ: Եօթն օր եղաւ՝ Սամուէլ չերեցաւ. Սաւուղ
ալ չըստասեց՝ զոհը ինքն ըրաւ լմրնցուց. Սամուէլ
վրայ հասաւ ու սրգողելով Սաւուղի անհամբե-
րութեան և յանդգնութեանը վրայ, ըսաւ. «Այ-
սօր Աստուած հաստաակեր պիտի քու թագաւո-
րութիւնդ, դու չհնազանդեցար կորսընցուցիր ».
ու թողուց գնաց: Սաւուղ ալ ուզելով թշնամաւոյն
գէմ երթալ՝ գնաց Գաբաա, ու մնացած զօրքը
համրեց՝ տեսաւ որ վեց հարիւր հողի են. հոն կե-
ցաւ: Ան ասենը Փղտայիք իրեք խումբ բաժ-
նուած՝ բոլոր երկիրներուն սկսան աիրել. ու Իս-
րայէլացուց երկրին մէջ դարբին չթողուցին, որ
պէս զի սուր ու գեղարդ չչինեն, և որուն որ ման-
գաղ կամ ուրիշ բան պէտք կ'ըլլար՝ Փղտայուց
երկիրը կ'երթար: Անգամ մը այլազգիք Գաբաայի
քով Մաքմաս եկեր էին. օր մը Յովնաթան լեռան
ժայռերուն մէջ նեղ ճամբէ մը դաղտուկ իր կա-
պարճակիրովը գնաց անոնց վրայ՝ Աստուած քի-
չով ալ յաղթել կուտայ ըսելով, ու ճամբուն
բերանը կեցած՝ քսան հողի մեռուց, անկէ մէջեր-
նին շիտթութիւն մը ինկաւ Աստուծմէ, սկսան
միախշրաիլ. Սաւուղ բանը իմացաւ, ելաւ ետե-
նուն ինկաւ, ուրիշ պահուըտած մարդիկն ալ ե-
լան պատերազմելու: Ան ասենը Սաւուղ ուխտ

ըրաւ Աստուծոյ որ ինչուան իրիկուն քանի որ պատերազմը չէ լմբնցած՝ ով որ բան ուռէ՝ մեռնի : Զօրքը մեղուի անտառէն կ'անցնէին տրանջալով : Յովնաթան չգիտնալով հրամանը դաւազանին ծայրովը կտոր մը խորխախ առաւ կերաւ : Քովիններն խնացուցին թէ հօրը հրամանին դէմ ըրաւ : երբոր լսեց , « Ափսոս ըսաւ , թէ որ աւարէն ուռէին զօրքը , բոլոր թշնամիները կը ջարդէին » : Իրիկուան զօրքը անօթի յոգնած , սկսան տրտորնօք գեանի վրայ մօրթել ոչխարներն ու արիւնտա ուռել՝ օրինաց դէմ : Սաւուղ բարկացաւ , քարի վրայ մօրթել տուաւ ու անանկ մաքրած ուռեն ըսաւ : Ետքը ուղեւով նորէն գիշերանց այլազգիներուն ետեւէն երթալ , քահանային ձեռքովը հարցուց Աստուծոյ . Աստուած պատասխան չտալով խնացուց որ մեղք մը եղած է : Սաւուղ վիճակ ձգել տուաւ , Յովնաթանու վրայ ելաւ վիճակը . Սաւուղ մեռցրնել կ'ուզէր , բայց Ժողովուրդը դէմ կեցան՝ ան յաղթութեան պատճառն ինքն ըլլալուն համար , ու Աստուծոյ աղաչելով ան մեղքին թողութիւն խնդրեցին : Ասկէ ետքը ուրիշ շատ յաջող պատերազմներ ըրաւ Սաւուղ չորս կողմի ազգերուն հետ :

Հ . Սաւուղ Աստուծոյ սիրելի մնաց ինչուան ետքը .

Պ . Չէ . անգամ մը Սամուէլ մարդարէն Աստուծոյ անունով հրամայեց Սաւուղին որ երթայ Ամաղեկացիները ջարդէ , ամենեկին բան մը չտարեցրնէ , որովհետեւ անոնք պատերազմ ըրեր էին Իսրայէլացւոց հետ Եգիպտոսէ ելլելու ատեննին : Սաւուղ չորս հարիւր երեսուն հազար զօրքով գնաց ջարդեց ու ողջ պահեց անոնց Ագագ թագաւորը , և անոնց կենդանիներուն աղէկները : Անոր համար սաստիկ բարկացաւ Աստուած , ու ըսաւ Սամուէլի , « Զղջացայ , որ Սաւուղը թա-

գաւոր դրի » • Սամուէլ ան գիշերը արամած կ'ա-
ղօթէր Աստուծոյ • ու առաւօտանց դնաց տեսաւ
որ Սաւուղ Ամաղէկացւոց կողոսպուաներէն Աս-
տուծոյ զոհ կը մատուցանէր • Սամուէլը տեսածին
պէս՝ գիմաւորեց ու ըսաւ • « Ահա Աստուծոյ հրա-
մանը կատարեցի » : Սամուէլ « Հապա ինչ է , ը-
սաւ , ան ոչխարներուն ու կովերուն ձայնը որ ես
կը լսեմ » : Սաւուղ « Աղէկները պահեցի , ըսաւ ,
որ Աստուծոյ զոհ ընենք » : Սամուէլ աստուա-
ծային նախանձով վառուած՝ չարաչար յանդիմա-
նեց զինքը , ըսաւ • « Զոհէն աւելի հաճոյ է Աս-
տուծոյ հնազանդութիւնը • արհամարհեցիր զԱս-
տուած , արհամարհուիս Աստուծմէ : — Մեղայ ,
ըսաւ Սաւուղ , եկու մէկտեղ Աստուծոյ աղօթք
ընենք որ մեղքս թողու » : Սամուէլ մտիկ չըրաւ •
ան ատեն Սաւուղ վերարկուէն բռնեց որ չերթայ ,
պատուեցաւ կտորը ձեռքը մնաց • դարձաւ Սա-
մուէլ ըսաւ • « Աստուած սրտուեց ու առաւ թա-
գաւորութիւնդ՝ որ քեզմէ աղէկ մարդու տայ » :
Ետքը տեսաւ որ խիստ շատ կ'աղաչէ՝ ժողովոր-
դեան առջև պատիւը չկորսընցընելու համար , դար-
ձաւ մէկտեղ աղօթք ըրաւ : Ետքէն Ագադ թագա-
ւորն առջևը բերել տուաւ • երբոր դողալով եկաւ ,
Սամուէլ զարկաւ մեռուց , ըսելով , « Ինչպէս քու
սուրդ այնչափ մայրեր անորդի ըրեր է , այսպէս
ալ հիմա քու մայրդ քեզմէ զրկուի » : Ետքը ե-
լաւ Արիմաթեմ դնաց , ու մէյմըն ալ Սաւուղի
հետ չտեսնուեցաւ :

Դասքի օժուրիչը .

Հ . Աստուած զճ՛վ ընտրեց Սաւուղայ տեղ .

Պ . Սամուէլի հրամայեց որ Բեթղեհէմ երթայ , Յուզայի ցեղէն Յեսսէին աղոցը մէկը թագաւոր օժէ . և Սաւուղէն գաղտուկ ըլլալու համար Աստուած ըսաւ՝ որ ձայն հանէ թէ զո՛հ ընելու գնացեր է : Հոն ըսաւ Սամուէլ որ Յեսսէն ալ դայ զոհին . ետքը ուղեց որ Յեսսէն աղաքը մէկիկ մէկիկ իր առջևը բերէ որ տեսնէ : Երբոր տեսաւ մեծ աղան՝ Եղիաքը , Սամուէլ հաւնեցաւ , բայց Աստուած իրեն ըսաւ թէ « Ատիկայ չէ , վասն զի մարդ երեսին կը նայի , Աստուած սրաին » : Աւրիշ վեցն ալ եկան , չհաւնեցաւ . հարցուց Յեսսէին՝ իմացաւ որ պղտիկ մըն ալ կայ՝ ոչխար կ'արածէ , բերել տուաւ ու տեսաւ որ շնորհալի աղայ մըն էր Դաւիթ անունով , որն որ Աստուծոյ ուղեւովը թագաւոր օժեց . և Աստուծոյ հոգին Սաւուղէն հեռացաւ՝ Դաւիթի եկաւ . Սաւուղ ալ դիւահարեցաւ ու ասեն ասեն կը տանջուէր :

Հ . Դաւիթ օժուելէն վերջը ո՛ւր կը կենար .

Պ . Սաւուղի քով . վասն զի Սաւուղին համար քնար զարնող մը փնտաւցին որ դիւահարած ասունը քնարին ձայնովը հանդարաի . իմացան որ Դաւիթ աղէկ քնար զարնել գիտէ . ասրին Սաւուղին՝ որ առջի բերան շատ սիրեց զինքն ու իրեն կապարճակիր ալ ըրաւ : Բայց երբոր Դաւիթ սպաննեց զԳողիաթ , ու անով Ժողովրդեան առջև անուն ունեցաւ , Սաւուղ սկսաւ ասել զինքը :

Հ. Գողիաթն ո՞վ է, ու ի՞նչպէս սպաննուեցաւ .

Պ. Հսկայ մարդ մըն էր այլազգիներուն բանակին մէջ, վեց կանգուն ու մէկ թիղ երկայն . հագած երկրթէ զրահին ծանրութիւնը հարիւր քրտան հօխայ : Երբոր անգամ մը Սաւուղ այլազգիներուն դէմ պատերազմի դնաց, պատերազմը չսկսած՝ բանակէն դուրս ելաւ Գողիաթն ու Իսրայէլացւոց բանակը քամահրելով կը կանչէր . « Հանեցէք դիմացս մէկը որ մինակ ծեծկուինք . և ով որու յաղթէ՝ յաղթութիւնն ան կողմին ըլլայ » : Սարսափեցան Իսրայէլացիք, ու քառասուն օր կեցան բանակ բանակի դիմաց, և Գողիաթ ամէն օր կ'ելէր կը նախատէր Իսրայէլացիները . Սաւուղ աս բանիս սիրտ ընողին իր աղջիկը խոստացաւ տալու ու զինքը անովն ազատ ընելու : Ան օրերը Յեսսէն Դաւիթը բանակ խրկեց որ իրեն իրէք եղբայրներուն հաց տանի, ու տեսնէ թէ ինչպէս են : Դաւիթ երբոր դնաց ու տեսաւ զԳողիաթ՝ վառուեցաւ սիրան ու սկսաւ մէկուն մէկալին հարցնել, ու արհամարհել զինքը : Եղիաբ իր մեծ եղբայրը չէխեց որ հարարութեամբ իր հասակէն ու կարողութենէն վեր բանի ձեռք կ'ուզէ զարնել : Բայց Դաւիթ Աստուծոյ սիրովը վառուած, հոգը չեղաւ . ինչուան Սաւուղ լսեց՝ ու առջևը կանչեց, և տեսնելով որ սղօթիկ է՝ « Ախնամ թէ չկրնաս ըսաւ » : Դաւիթ պատասխան տուաւ . « Ես իմ հօրս ոչխարներն արածելու ատեն երբոր առիւծ կամ արջ վրայ կուգար ու ոչխար կը յափշտակէր, ես կ'աղատէի . ու թէ որ վրաս ելէր, վզէն կը բռնէի կը սպաննէի . յուսամ որ Աստուծով հիմայ ալ անանկ կ'ընեմ » : Ան տանն Սաւուղ իր զէնքերը հագցուց անոր . Դաւիթ սորված չըլլալով երթալու ատեն երկու իրէք անգամ սահեցաւ, ուստի հանեց վրայէն .

« Աստուծոյ շեմ կրնար երթալ » ըսաւ . ու իր գաւազանը ձեռքն առած , և սարսափակը , հինգ քար ալ մախաղին մէջը դրած Գողիաթին դիմացն ելաւ : Գողիաթ աս որ տեսաւ , ծիծաղեցաւ՝ ըսելով . « Ես շնն եմ որ գաւազանով ու քարով կուգաս վրաս » : Դաւիթ պատասխան տուաւ . « Ընէն ալ ցած ես » : Ան ալ ըսաւ . « Եկու որ զքեզ թռչուններու գաղաններու կերակուր ընեմ : — Ինչ քու ղէնքերուդ վտասհացեր ես , ըսաւ Դաւիթ , բայց ես Աստուծոյ զօրութեանը ասպարէսներ եմ , ու կը յուսամ որ հիմա գլուխդ կ'առնեմ , և բոլոր այլազգիներուն մարմինն այսօր թռչուններու գաղաններու կուտամ որ ուտեն . և ամէնքն իմանան թէ մերն է ճշմարիտ Աստուածն , որ առանց ղէնքի երբ կ'ուզէ կը յանձնէ » : Աս խօսքերէն ետքն երբոր սկսան մէկմէկու մօտենալ՝ մէկէն Դաւիթ սարսափակով քար մը նետեց , ու Գողիաթին ճակատին զարկաւ որ փռուեցաւ ինկաւ . վաղեց Դաւիթ վրան ցատքեց , քաշեց Գողիաթին սուրն ու կտրեց առաւ գլուխը : Այլազգիները տեսածնուն սէս՝ փախչող փախչողի եղան . Իսրայէլացիք ալ ետենին ինկան ջարդեցին ու բոլոր բանակն առին :

Սառուղայ և Կախաւեօն Դաւիթի վրայ .

Հ . Սառուղ ինչ փոխարէն ըրաւ Դաւիթի՝ Գողիաթն սպաննելուն համար .

Պ . Առջի բերան վրան զարմանալով՝ քովը պահեց ու զօրագլուխ ըրաւ . Յովնաթան ալ հետը սասափկ սիրով կապուած՝ իր ղինուորական հարուսաները բոլոր անոր տուաւ : Բայց ետքը երբոր սրտանրազմէ կը գառնային՝ Ժողովուրդն սկսան

Հնորհաւորելով գիտացնին ելլել, ու կնիկները պար
բանած՝ ծնծղաներով կ'երգէին ու կ'ըսէին. « Սա-
ւուղ հաղար ջարգեց, Դաւիթ տասը հաղար » :
Ասոր վրայ Սաւուղ նախանձելով սկսաւ ծուռ
աչքով նայիլ Դաւիթի վրայ ու մեայրնելու հնարք
մտածել : Օր մը գիւահարուծիւնը բռնած՝ երբոր
Դաւիթ առջևը քնար կը զարնէր, յանկարծ գե-
ղարդը վրան նեաեց . բայց Դաւիթ երկու անգամ՝
փախչելով ազատեցաւ :

Հ . Սաւուղ ինչ հնարք բանեցուց որ Դաւիթի
սպաննէ .

Պ . Որովհետեւ ինչպէս որ խոստացեր էր՝ Մե-
րովք իր մեծ աղջիկը Դաւիթի պիտի տար . բայց
որպէս զի Դաւիթը վտանգի մէջ ձգէ, ուղեց որ
առաջ ուրիշ կտրճուծիւն մ' ալ ընէ . Դաւիթ՝
« Արժանի չեմ, ըսաւ, թագաւորի փեսայ ըլլա-
լու » : Սաւուղին յոյսը պարսպ ելլելով ուրիշի
հետ կարգեց Մերովքը . ետքը իմանալով որ իր
մէկալ Մեղքող աղջիկը Դաւիթի հաւնէր է նորէն
Դաւիթը փորձանքի մէջ ձգել ուղեց որ սպաննուի
այլազգիներէն . ու ըսաւ թէ « Մեղքող աղջիկս
քեզի տամ, բայց առաջ գնա՛ հարիւր այլազգի
մեռցու » : Առջի բերանը ետ կեցաւ Դաւիթ, բայց
ետքը Սաւուղայ մարդիկն ալ որ շատ յորդորե-
ցին՝ գնաց քաջութեամբ Սաւուղին ուղածը կա-
տարեց, ու Մեղքողը կին առաւ :

Հ . Դաւիթ Մեղքողը առնելէն ետքը՝ Սաւուղ
ինչպէս հետը կը վարուէր .

Պ . Երթալով Դաւիթ ամենուն սիրելի եղաւ .
և Յովնաթանին միջնորդելովը Սաւուղայ հետ ալ
բարեկամացաւ : Բայց որ մը նորէն Սաւուղին
գիւահարուծիւնը բռնած՝ Դաւիթ քնար որ կը
զարնէր՝ Սաւուղ գեղարդը վրան նեաեց . Դաւիթ
անկէ փախաւ իր տունը . Սաւուղ գիշերանց տանը
դուռը առնել տուաւ որ առաւօտանց սպանն-

նուի: Մեղքող գաղտուկ պատուհանէն վար ի-
ջեցուց 'Դաւիթն ու աղաթեց. ետքը պաճուճա-
պատանք շինեց՝ Դաւթի պառկած տեղը դրաւ ու
մարդիկներուն ըսաւ թէ հիւանդ է: Սաւուղ
հրամայեց որ մահճովք բերեն իրեն, ու երբոր
խնայաւ Մեղքողին խաբէութիւնը՝ 'Դաւթի ե-
տեէն իրէք անգամ մարդ խրկեց Նաւաթ հռամա
Սամուէլի քով ուր որ փախեր էր. ան մարդիկը
կ'երթային հոն կը մարդարեանային: Բարկացաւ
Սաւուղ, ինքն ալ ելաւ գնաց ու մարդարեացաւ,
ինչուան որ 'Դաւիթ անկէ ալ փախաւ՝ Յովնա-
թանին գնաց որ աւ Սաւուղին թշնամութեանը
համար խօսի: Երկար խօսեցան մէկտեղ, ճար
փրնառեցին տեսան որ չըլար. Յովնաթան խոր-
հուրդ տուաւ որ բոլորովին Սաւուղին քովէն
հեռանայ. և ասանկ լալով պաղտուելով մէկմէկէ
բաժնուեցան:

Հ. Դաւիթ Սաւուղէն որ փախաւ ո՛ւր գնաց.

Պ. Շիտակ գնաց 'Նոմբա՝ Ա. քիմելէք քահանայ-
ին հանդիպեցաւ իր մարդիկներովն, ու ձեռ-
ցուց թէ թագաւորական բանի մը համար ծա-
ծուկ խրկուած է: Երբոր հաց ուզեց անկէ, ու-
րիչ հաց չգտնուելուն՝ հինգ օրհնած առաջաւո-
րաց հաց առաւ. Գողիաթի սուրն ալ որ առա-
ջուց Աստուծոյ նուիրած էր՝ վրան առաւ. ան
միջոցին հոն գտնուեցաւ Գովէկ ասորին որ Սա-
ւուղայ ջորիները կ'արածէր: Իսկ 'Դաւիթ գնաց
Գեթացուոյ Անքուս թագաւորին քով. հոն ալ
երբոր ճանչցուեցաւ թէ Գողիաթը մեռցնողն է՝
վախցաւ ու սկսաւ առջևին խենթ ձեանալ, ին-
չուան որ թագաւորը վարնակց զինքը: 'Դաւիթ
Մովաբացուոյ երկիրը գնաց. հոն եկան նաև հայ-
րը՝ մայրը՝ եղբարքը և ուրիշ չորս հարիւրի չափ
փախստական մարդիկ, որոնց 'Դաւիթ զօրապե-
տութիւն կ'ընէր:

Հ. Երբոր Դաւիթ Սաւուղէն բողոքովն բաժնուեցաւ՝ Սաւուղ ինչ ըրաւ .

Պ. Սաստիկ կատղեցաւ . նախ Գովէկ ասորիէն իմանալով որ Ա. քիմէլէք Դաւթի պաշտպանութիւն է ըրեր՝ առջևը կանչեց զինքն ու բողոք քահանաները իրէք հարիւր հոգի, ու հրամայեց որ աչքին առջև սպաննեն զանոնք : Մարդիկը վախցան քահանաներուն ձեռք վերցընելու . սն առնեն Գովէկ ասորիին ըսաւ . անիկայ մէկէն զամէնքը ջարդեց : Ետքը մարդ խրկեց Նոմբա քահանաներուն քաղաքն ու զամէնքը թրէ անցընել տուաւ , մինակ Ա. քիմէլէքին մէկ սղան Աբիաթարը Դաւթի քով փախաւ : Անկէ ետև Սաւուղ ալ զօրքով սկսաւ Դաւթի ետևէն իյնալ , Դաւիթ ալ փախչելով ամէն վտանգներէն Աստուծով կ'ազատէր : Երկու հեղ ալ սյնալէս յաջողեց Աստուած , որ Սաւուղ Դաւթի ձեռքն ինկաւ , բայց Դաւիթ անյիշատակութեամբ թողուց :

Հ. Առջի անգամ ինչպէս եղաւ որ Սաւուղ Դաւթի ձեռքն ինկաւ .

Պ. Անգամ մը Անձուկ Գաթթայ ըսուած այրին մէջ կեցեր էր Դաւիթ . Սաւուղ իրէք հազար զօրքով երբոր բռնելու կ'երթար , մօտ տեղ ճամբուն վրայ այրի մը մէջ մտաւ հանդէսը . Դաւթի մարդիկն իմացան , սկսան ըսել թէ Աստուած մասնեց որ ոխդ առնես : Դաւիթ զիտեց որ կը քնանար , սիրտ ըրաւ՝ Սաւուղի քով գնաց . թէպէտ քովնները , շատ վրայ կուտային որ սպաննէ , բայց ինքն Աստուծմէ օժուած է ըսելով չըղը պաւ , միայն վերարկուին ծայրէն կտրեց առաւ : Երբոր Սաւուղ ջիմանալով ելաւ կ'երթար , Դաւիթ ետևէն կանչեց . « Տէր իմ արքայ , ինչո՞ւ կը հաւտաս Դաւիթ քեզ մեռցընել կ'ուզէ ըսողներուն » . ու ցուցընելով կտորը՝ յայանեց իր միտքն ու ըսաւ . « Աստուած մեր դատաստանը կտրէ » :

Աս խօսքերէս Սաւուղայ սիրան ելաւ, ու լալով սկսաւ ըսել. « Աս քու ձայնդ է, որդեակ իմ Դաւիթ. դուն արդար ես որ բարիք հատուցիր իմ քեզի ըրած չարութեանս, ու կը հաւատամ որ թագաւորութիւնս քուկդ պիտի ըլլայ. միայն թէ, ըսաւ, կը խնդրեմ որ զաւակներուս խնայես, և իմ անունս աշխարհքէս չիջնչես »: Դաւիթ ալ երգում ըրաւ, ու բաժնուեցան:

Հ. Արկրորդ անգամ Սաւուղայ Դաւթին ձեռք իյնալը ինչպէս եղաւ.

Պ. Քիչ մը առնեն նորէն Սաւուղ Դաւթի ետեւէն իյնալով, Չիփացիք եկան մտանկցին թէ Դաւիթ իրենց կողմերն է. Սաւուղ շուտ մը իրեք հազար զօրքով գնաց՝ Նքեղասի բլրոյն վրայ նըստաւ: Դաւիթ լրանա խրկեց իմացաւ. ետքը գիշեր առն երբոր ամենքը քնոյ մէջ էին, Դաւիթ Աբեսային հետ Սաւուղի բանակը մտաւ. ան առնն Աբեսան տեսնելով Սաւուղի քով գեղարդը տնկած, Դաւթի ըսաւ. « Ահա Աստուած թշնամիդ քու ձեռքդ տուաւ, թող աս գեղարդովս մէկէն սպաննեմ »: Դաւիթ « Մի ըներ, ըսաւ, թողունք որ Աստուած ինքը խրատէ, միայն գեղարդն ու ջրին ամանը ան երթանք »: Այնկ մը հեռանալէն ետեւ, կանչեց Դաւիթ զԱբեններ Սաւուղայ զօրավարը՝ « Մահապարտ էք, ըսաւ, որ աղէկ չէք պաշտպաններ ձեր թագաւորը. թըշնամի մտաւ բանակը՝ գեղարդն ու ջրին ամանը վերուց »: Սաւուղ երբոր լսեց՝ դուժը նորէն շարժեցաւ, « Մեղայ, ըսաւ Դաւթի, քովս դարձիր՝ բան չեմ ըներ »: Բայց Դաւիթ չգնաց, « Մէկը գայ գեղարդն առնէ՝ » ըսաւ: Սաւուղ նորէն Դաւիթն օրհնելով դարձաւ իր տեղը:

Նարադ .

Հ . Գաւիթ Սաւուղէն հալածուելու ատեն ուրիշ մարդ ալ եղաւ որ զինքը նախատէ .

Պ . Երբոր վեց հարիւր մարդով Վարմելոս լեռը կը կենար , հոն ազահ ու հարուստ մարդ մը Նաբաղ անունով զԳաւիթն արհամարհեց նախատեց , ու վարնտեց անոր մարդիկը , երբոր իրեն ոչխարներուն խուզելու օրը տասը հոգի խրկեր էր որ իր կողմանէ բարևեն Նաբաղն ու իրեն ըրած բարեացը տեղը քիչ մը բան ուզեն . որովհետև անոր հովիւներն ան լեռանը վրայ արածելու ատեն իրենք միաս մը չեն հասուցած , ու թշնամի ձեռքէ ալ պահեր են :

Հ . Գաւիթ Նաբաղայ ըրած նախատանացն ինչ հատուցմունք ըրաւ .

Պ . Երբոր լսեց՝ կրակ կարեցաւ , ու շուտ մը չորս հարիւր հոգւով ճամբայ ելաւ որ երթայ Նաբաղը անով տեղով ջարդէ : Բայց Աբիգեա Նաբաղի կինը՝ երբոր ծառաներէն իմացաւ եղածը , շուտ մը դադարուի գնաց երկու հարիւր հաց ճարեց , երկու աման գինի , հինգ եփած ոչխար , և ուրիշ ուտելիքներ առաւ գնաց Գաւիթը գիմաւորեց ու խոնարհութեամբ խմաստուն անոյշ խօսքերով սիրան առաւ : Ան ատեն Գաւիթ շնորհակալ եղաւ իրեն որ զինքն ազատեց արիւն ընելէն : Աբիգեան ան իրիկունն երկանը բան չըսաւ՝ որովհետև գինովցած ուրախութեան մէջ էր : Առաւօտանց երբոր պատմեց , Նաբաղը վախէն հիւանդցաւ ու տասը օրէն մեռաւ : Երբոր լսեց Գաւիթ , փառք տուաւ Աստուծոյ որ ար-

դարութեամբ Նարազը դատեց, ու Աբիգեանն
իրեն կին առաւ:

Հ. Դաւիթ Աբիգեանն առնելէն ետքը ո՛ւր կը
բնակէր:

Պ. Ասինալով որ օր մը Սաւուղայ ձեռքը կ'ըլ-
նայ, վեց հարիւր հողւով, անով անդով գնաց
Անքուս Գեթացւոց Թագաւորին քով, և Անքուս
իրեն բնակելու համար Սիկեւակը առաւ: Հոն
կեցաւ Դաւիթ չորս տարի. ու ամէն օր ասդիս
անդին թշնամեաց վրայ կ'երթար, աւար կ'առնէր
կը դառնար:

Հ. Դաւիթ Սիկեւակ կեցած ատեն ինչուան
ետքը հանդիստ անցո՛ւց:

Պ. Անդամ մը մեծ փորձանքի մը հանդիպե-
ցաւ. բայց Աստուած շուտով մխիթարեց զինքը:
Ան օրերը մեծ պատերազմ բացին այլազգիք Նարայ-
էլացւոց դէմ, և Անքուս Թագաւորը Դաւիթն
ալ մէկտեղ առաւ, բայց իշխանները երբոր դէմ
կեցան՝ Անքուս ըսաւ Դաւիթին որ ետ դառնայ:
Իրէք օրէն եկաւ դտաւ Սիկեւակն այրած ու կո-
ղոստած Ամաղէկացիներէն: Աս որ եղաւ, իր
մարդիկն ալ իրենց կնկաոցը տղոցը վրայ սրանք-
նին այրած՝ կ'ուզէին Դաւիթը քարկոծել: Ան
ատեն Դաւիթ Աստուծոյ դիմելով հրաման առաւ
ու գնաց ան Ամաղէկացիներուն վրայ չորս հարիւր
հողւով. մէկալ երկու հարիւրը յուսահատած
կեցան: Ճամբան Եդիպապի մը հանդիպեցան
որ իրէք օր անօթի մնացած էր, կերակուր տուին՝
հարցուցին իմացան որ Սիկեւակը կողոստողնե-
րուն մէկուն ծառան է եղեր, իրենց ճամբայ ցը-
ցուց: Մտան քաղաքը՝ երբոր անոնք ըրած կողո-
ստանին կ'ուռակին՝ կ'ուրախանային, առաւօտանց
ինչուան իրիկուն ջարդեցին, ու ողջ առողջ բո-
ւոր գերի գնացողներն աղաատեցին: Երբոր դար-
ձան Դաւիթ հետ գնացողները՝ պատերազմի չե-

կողներուն իրենց կնկարացմէն զատ ուրիշ բան տալ
չէին ուզէր : Բայց Գաւիթ ամենուն հաւասար
բաժնեց . և աս օրէնքը միշտ մնաց Իսրայէլացւոյ
մէջ որ կողոպուտը՝ քաղաքը պահողին և պատե-
րազմի գնացողին հաւասար բաժնուի :

62

Սաւուդայ մանր .

Հ . Անբուսաց Իսրայէլացւոյ դէմ ըրած պատե-
րազմը ինչ վերջ ունեցաւ :

Պ . Սաւուդ անոր դէմ ելաւ Գեղբուա լեռը :
Հարցուց Ասաուծոյ , պատասխան չառաւ , անոր
համար վախը սիրար տիրեց . և որովհետեւ ինքը
դիւթերը՝ կախարգները բոլոր ջնջեր էր , հագու-
ար փոխեց ու գիշերանց կախարդ կնկան մը
գնաց՝ ուզեց որ Սամուէլը իրեն ցուցնէ , որ նոր
մեռած էր : Ահուկը չճանչնալով առջի բերանը
յանձն չառաւ՝ Սաւուդ արդիւնց ըսելով : Բայց
եաքը երեցուց Սամուէլն որ սրգողելով Սաւու-
դին ըսաւ , « Ինչո՞ւ դիւ աշխատացուցիր . Ասաուծ
քեզ երեսէ ձգեր է , վաղը պիտի ջարդուիք այ-
լազգիներէն՝ անհնազանդ ըլլալնուդ համար » :
Սաւուդ սարսափած գետինն ինկաւ : Արեւը երբոր
խմայաւ թէ Սաւուդն է՝ վախցաւ . եաքը հորթ
մը ունէր՝ մորթեց , ուրիշ բաներ ալ պատրաս-
տեց , որ Սաւուդ շատ դժուարութեամբ նստաւ
կերաւ ու բանակը դարձաւ : Առաւօտանց պա-
տերազմ սկսաւ . Իսրայէլացիք ջարդուեցան ,
Սաւուդին իրէք տղաքն ալ ինկան , և ինքը նետով
զարնուելով յուսահատած ըսաւ կապարճակիրին
որ իր սրովը մեռցրնէ , որ չըլլայ թէ այլազգիներ-
էն մեռած սեպուի . կապարճակիրն երբ ետ քա-

չուեցաւ, Սաւուղ իր սրոյն վրայ ինկաւ մեռաւ :
Կապարձակիրն ալ ցաւէն ինքզինքը մեռուց : Երկ-
րորդ օրն այլազգիները գտան Սաւուղին ու ի-
րեն տղոցը մարմինը . Սաւուղի գլուխը կտրեցին
տախն , զէնքերը Գաղտնի տաճարը տարին . մար-
միններն ալ Բեթսան քաղքին պարսպէն կախե-
ցին : Ետքը գիշերանց Գաղտադու Յարիս քաղ-
քին կտրիճները գողցան թաղեցին . քաղաքա-
ցիներն ալ վրանին եօթն օր սուգ կատարեցին ,
որովհետեւ իրենք ալ Բենիամինի ցեղէն էին :

Հ. Դաւիթ ուրախացաւ Սաւուղայ մահուանը
վրայ .

Պ. Մանաւանդ թէ մեծ ցաւ ցրցուց . ինչպէս
իրեն պէս առաքինի սիրտ ունեցողի մը կը վայէր .
և երբոր երկու օրէն ետեւ մէկ Ամաղէկացի մը Սի-
կեղակ Դաւթի առջին ելաւ , իբր թէ Դսրայէլա-
ցւոց բանակէն աղատած , Դաւիթ հարցուց անոր
պատերազմին համար . անիկայ պատասխան տուաւ
թէ « Ես տեսայ որ Սաւուղ իր նիզակին վրայ
կրօթընած՝ ինքզինքը մեռցընել կ'ուզէր , զիս տե-
սաւ , ինձի աղաչեց , ես ալ մեռուցի , և գլխու
թագն ու ապարանջանները հրամանոցդ բերի » :
Աս բանս լսելուն պէս Դաւիթ՝ սրտին ցաւէն
վրայի լաթը պատակց . և ինչուան իրիկուն իր
մարդիկներուն հետ սուգ կեցաւ՝ լացաւ՝ ծով
պահեց , ու Սաւուղայ և Յոնթաթանու վրայ ցա-
ւալից ողբ մը ըրաւ : Արիկուան ան մարդը կան-
չեց , ըսաւ . « Ի՞նչպէս դու չվախցար , Ասաուծմէ
օժուած մարդուն ձեռք վերուցիր » . և հոն մէ-
կէն զինքն սպաննել տուաւ ու ըսաւ . « Արիւնդ
քու գլուխդ , դու անանկ ըսիր » . Ետքը ինքն
Ասաուծոյ հարցընելով գնաց Բեբրոն Յուդայի
երկիրը :

Դառքի քագառորտը և սկիզբը .

Ն . Սաւուղէն ետև ո՞վ եղաւ թագաւոր .

Պ . Յուդայի ցեղը Դաւիթն իրենց թագաւոր
օժեցին , որ եօթը տարի ու կէս միայն անոնց իշ-
խեց . մէկալ ցեղերուն վրայ Աբեհնեք Սաւուղի
զօրապետն անոր Յերուսթէ աղան թագաւոր
գրաւ : Անոր համար միշտ կուիւ սպաս չէր մե-
ջերնէն , և Դաւիթ օրէ օր առաջ կ'երթար :

Ն . Ի՞նչ ճամբով տիրեց Դաւիթ բոլոր Իսրայէ-
լացոց .

Պ . Աբեհնեք պատճառով մը Յերուսթէին հետ
աւրուելով ետևէ էր որ բոլոր թագաւորութիւնը
Դաւիթի գարձընէ . բայց Յովաբ Դաւիթի զօրա-
պետը վախնալով որ Աբեհնեք իր տեղը կ'անցնի ,
երբոր անիկայ Դաւիթի քովէն հրաժարեր կ'եր-
թար իշխանները համոզելու որ Դաւիթի հնազան-
դին , ճամբէն ետ կ'անչել տուաւ իբրև թէ իրեն
գաղտուկ հարկաւոր խօսք մը ունի ըսելու , և պագ-
տուելու ասէն յանկարծ զարկաւ մեռուց :
Ըստ ցաւեցաւ Դաւիթ ու Յովաբայ սաստիկ սրը-
գողեցաւ : Երբոր ըսեցին Իսրայէլացիք , ամենուն
սիրար կոտորեցաւ յուսահատեցան . ան ասէն
երկու զօրապետ դնացին գաղտուկ Յերուսթէն
քնոյն մէջ մօրթեցին ու դուրսը Դաւիթի ընծայ
բերին : Դաւիթ շնորհակալ ըլլալու տեղ՝ բարկա-
ցաւ ու մէկէն երկուքն ալ սպաննել տուաւ , և
Յերուսթէին դուրսը պատուով թաղեց : Ետքը
որովհետև Սաւուղայ որդիքներէն մինակ Մեմփի-
թոսթէն մնացեր էր՝ Յովաթանաւ աղան՝ ոտքը
կալ , անիկայ Դաւիթ քովն առաւ , իր սեղանէն

կը կերցընէր : Իսրայէլացիք ալ տեսնելով Դաւթի
աղէկութիւնները՝ անոնցմէ մեծամեծները Քեր-
րոն քաղաքը Դաւթի քով եկան , և զինքը նորէն
բոլոր Իսրայէլացւոց վրայ թագաւոր օժեցին :

Հ . Դաւիթ բոլոր Իսրայէլացւոց ախրելէն ետքն
առջի գործքը ո՞րն եղաւ .

Պ . Մէկէն գնաց Երուսաղէմ քաղաքը պաշա-
րեց . մէջի Յերուսացիքը ծաղը կ'ընէին՝ ըսելով
թէ « Քաղքիս մինակ կոյրերն և կաղերը բաւա-
կան են քեզի դէմ գնելու » : Դաւիթ իր զօրա-
տեսներուն ըսաւ . « Ով որ առաջ բերդին վրայ
վաղէ՛ առնէ , անիկայ իմ զօրատեսա ըլլայ » : Աջ-
ղեց Յովտը՝ ելաւ բերդին վրայ . և զօրատեսու-
թեանը մէջ հաստատուեցաւ : Դաւիթ ալ հոն
նորէն քաղաք շինեց , մէջն ալ թագաւորական
պալատ , ու հոն գնաց նստաւ : Ասկէ ետեւ սկսաւ
Փղշտացւոց դէմ քաջութեամբ պատերազմիլ , մե-
ծամեծ յաղթութիւններ ըրաւ , և զանոնք որ
հարկ կ'առնէին Իսրայէլացւոցմէ իրեն հարկա-
տու ըրաւ , ու շատ ոսկի , արծաթ , պղինձ ձեռք
ձգեց անոնցմէ :

Հ . Փղշտացւոց դէմ պատերազմելու ատեն ի՞նչ
երեւելի գործք ըրաւ Դաւիթ .

Պ . Այլազգիները Բեթղէհէմ ժողովը էին .
Դաւիթ սաստիկ պատերազմին մէջ թշնամիներուն
յաղթելու ատեն՝ աւելի մեծ քաջութեամբ իրեն
անձին ալ յաղթեց : Ասան զի սաստիկ ծարուե-
լով « Ա՛ւր էր թէ , ըսաւ , մէկը Բեթղէհէմի
դրան քովի հորէն ինձի ջուր մը բերէր » : Աս որ
լսեցին իրեք քաջ զինուորիներ՝ վաղեցին թշնամի-
ներուն բանակը ճեղքեցին ու ջուրը բերին : Դա-
ւիթ երբոր տեսաւ՝ շիտեց , « Բաւ լիցի որ ուրիշի
արիւնը խմեմ » ըսաւ , ու Աստուծոյ նուիրեց :

Տասրանակին փոխադրուելը .

Հ. Դաւթի ատեն տապանակը ո՞ր քաղաքը կը կենար .

Պ. Երբոր Աստուած ամէն կողմանէ կը յաջողէր Դաւթի գործքերը, ուզեց Դաւիթ որ տապանակն ալ Կարիաթարիմէ Երուսաղէմ բերէ : Ուստի եօթանասուն հազար հոգւով գնաց հանեց Ամինադարին անէն՝ նոր սայլի վրայ դրած՝ առջևէն կերպ կերպ նուագարաններ զարնելով ինքն ալ հագուած կապուած առջևէն պար կը բռնէր : Երբոր հասան Քելոն ըսուած տեղը կովերուն մէկը թօթուելով սայլը ծակեց . ան ատեն Ողա ղևասցին՝ Ամինադարի աղան՝ որ տապանակին քովէն կ'երթար, ձեռքովը բռնեց տապանակն որ շիյնայ, ու մեկէն ինքն ինկաւ մեռաւ : Ասկէ Դաւիթ վախնալով տապանակն իր առնը տանելու՝ Աբեղղար Գեթացիին առնը տանել առաւ : Իրեք ամսէն լսեց որ տապանակին պառճառովն օրհներ է Աստուած Աբեղղարին առնն ամէն բարիքներով, ինքն ալ սիրտ առաւ, ու առջինէն աւելի հանդէսով բերաւ, անոր համար շինած նոր խորանին մէջ դրաւ :

Հ. Դաւթի կը վայլէր որ տապանակին առջև պար բռնէ .

Պ. Կը վայլէր . վասն զի անով ժողովուրդը կը յորդորուէին ձեռքերնէն եկած պատիւն ընելու Աստուծոյ : Բայց Մեղքող իր կիներ պատուհանէն տեսնելով իրեն անշնորհք երեցաւ . երբոր Դաւիթ առն դարձաւ, առջևն ելաւ ըսաւ . « Ի՞նչ պէս փառաւոր կ'երևնար Դարայէլացեոյ թագաւորը՝ որ իր ծառաներուն առջևը սօթառած կա-

քաւչի մը պէս կը ցափքէր » : Դաւիթ՝ « Անանկ է, ըսաւ, թող քու առջևդ նախատուիմ. բայց Աստուծոյ առջև քու հօրդ անէն աւելի ընդունելի կ'ըլլամ » : Աստուած ալ Մեղքողին ըրածին պատիժ՝ տղայ չտուաւ իրեն : Ետքը Դաւիթ կ'ուզէր որ վառաւոր սաճար մըն ալ շինէ. բայց Աստուած՝ Նաթան մարդարէին ձեռքով խնայուց թէ իր տղան պիտի շինէ :

Հ. Դաւիթ ինչ պատճառաւ Ամենացւոց դէմ պատերազմ բացաւ .

Պ. Նաա Ամենացւոց թագաւորն որ մեռաւ՝ Դաւիթ անոր Անն աղուն երկու դեսպան խրկեց որ ցաւակից ըլլան : Անն իր իշխաններուն խորհրդով ան դեսպանները խայտառակեց, մօրուքնին ամիլել տուաւ, և լաթերնին ինչուան կէս մէջքը կարած՝ նախաախնքով վաճակեց քովէն, կարծելով թէ Դաւիթ զանոնք լրտեսութեան համար խրկեր է : Դաւիթ երբոր լսեց՝ իրենց խնայուց որ Երկքով կենան ինչուան մօրուքնին բուանի, և ինքն ուզելով Ամենացւոց հատուցումն ընելու՝ Յովաք զօրապետը վրանին խրկեց : Ասոնք առաջուց կասկածելով շատ զօրք իրենց օգնութիւն բերեր էին, Յովաք զարնուեցաւ ու եօթը հարիւր պատերազմական կառք, և քառասուն հազար ձիաւոր զօրք ան պատերազմին մէջը կոտրեց՝ մնացողներն ալ Դաւիթի հարկատու ըրաւ : Ետքը Ամենացիք նորէն շարժեցան . Դաւիթ մէյմ՝ ալ խրկեց Յովաքն որ ինչուան Ռաբաթ անոնց թագաւորական քաղաքը հասաւ պաշարեց՝ և կանչեց Դաւիթն որ եկաւ քաղաքը մտաւ . չարաչար տանջանքով սպաննեցին մէջիններն ու շատ կողոսկուտ ասին, և թագաւորական դահլ որ տաղանդ մը ոսկիի ծանրութիւն ունէր՝ իբր տասնըհինգ հօխա՝ սուղ քարերով զարգարուած, Դաւիթ սկսաւ բանեցընել :

Դաւրբի մեղքն ու ապաշխարեկը .

Հ . Դաւիթ իր կենացը մէջ ամենեկին Աստուծոյ դէմ բան չըբան .

Պ . Ինչպէս որ յայտնի է , աշխարհքիս մէջ հանգստութիւնը Աստուծմէ կը հեռացնէ ըզմարդ : Երբոր Դաւիթ ալ ամէն կողմանէ հանգիստ թաղաւորութիւն կը քշէր , որ մը իրիկուան դէմ տանիքին վրայ հանգչելու ասեն յանկարծ տեսաւ կին մը որ գիմացը աւաղանին քովը կը լուացուէր . Դաւթի կիրքը շարժեցաւ ու իմանալով որ իր զօրտականերէն մէկուն՝ Ուրիա Քետացիին կինն է Բերսաբէն . իրեն կանչեց . և մեղքը կատարելէն ետև , անիրաւութեամբ Ուրիա Քետացին ալ մեռցնել տուաւ , Յովաբայ դաղտուկ թուղթ գրելով որ կամօք պատերազմին վտանգաւոր կողմը դնէ զինքն որ մեռնի : Բերսաբէն երբոր իմացաւ իր էրկանը մեռնիլը՝ սուգ մտաւ , ու ետքը Դաւիթ զանիկայ իրեն կին առաւ :

Հ . Դաւիթ ինչպէս ապաշխարեց իր մեղքը .

Պ . Աստուած խրկեց Նաթան մարդարէն որ առակով մը անոր ըրած մեղքերն երեսը տուաւ . « Քաղքի մը մէջ՝ ըսաւ՝ հարուստ մարդ մը ու աղքատ մը կար . հարուստը շատ ոչխարներու տէր էր , իսկ աղքատը մինակ դաճուակ մը ունէր որ վրան կը դողար : Անգամ մը հիւր մը եկաւ հարուստին . առ մարդս կսկծալով իր ոչխարներուն՝ գնաց ան խեղճ աղքատին դաճուակն առաւ ու հիւրին կերակուր ըրաւ » : Աս որ լսեց Դաւիթ՝ բարկացաւ , Նաթանայ խօսքը բերնէն աննկով՝ « Աստուած վկայ որ , ըսաւ , մեռնելու արժանի

է ան մարդը, սէպք է որ եօթը հեղ վճարէ ան
գանուկին տիրոջը » : Ան ասեն Նաթան՝ « Գուն
ես, ըսաւ, ան մարդը, Աստուած քեզի կ'ըսէ .
այսչափ բարիք ընելէն ետե՛ դու հերիք չըսեպե-
ցիր, Ուրիա Գեառացիին կինը յափշտակեցիր, և
անմեղ մարդը անգթութեամբ սպաննեցիր . ուս-
տի գիտնաս, քու ուրիշի ըրածներդ քու գլուխդ
սխախ դարձընեմ » : Դաւիթ մէկէն խոնարհու-
թեամբ « Մեղայ Տեան » ըսաւ : Նաթան ալ
սպաստասխանեց . « Աստուած ալ մեղացդ թողու-
թիւն տուաւ » : Բայց անոր սխախթ՝ Բերսա-
բէէն եղած առջի տղան մեռաւ : Ետքը Դաւիթ
Բերսաբէէն ուրիշ տղայ մըն ալ ունեցաւ՝ Սողո-
մոն անունով, որուն Աստուած Յէրէրի կանչեց,
որ սիրելի Աստուծոյ ըսել է :

Հ. Դաւիթ իր ծերութիւնն ինչպէս անցուց .

Պ. Աստուծոյ թոյլ տալովք մէկ քանի ծանր
նեղութիւններ քաշեց իր մեղացը համար, թէ-
պէտ ինքն Աստուծմէ թողութիւն աւեր էր :
Առջի վնասն եղաւ Ամոնի անդրանիկ որդւոյն
մահը՝ Աբիսողոմին ձեռքէն . վասն զի Ամոն ան-
կարգութիւն մը ըրաւ, Աբիսողոմ ալ վրան սաս-
տիկ ոխ սղահելով փառաւոր կոչուեց մը ըրաւ
Քերրոն քաղաքը, հոն իր մէկալ եղբայրներուն
հետ Ամոնն ալ կանչեց . ու երբոր սեղանէն ել-
լելու վրայ էին՝ ծառաներուն ձեռքովն Ամոնը
մեռուց ու ինքն այլազգիներուն Գեսուր երկիրը
փախաւ : Աս լսելով Դաւիթ շատ ցաւեցաւ, ու
սաստիկ բարկացաւ Աբիսողոմայ վրայ . բայց իրէք
տարիէն Յովաբ վարպետ կերպով մը Դաւիթէն
հրաման տաւ ու Աբիսողոմը Երուսաղէմ դար-
ձուց :

Աբխաղոսի ապստամբիչը .

Հ. Գաւթին ծերութեան ատեն քաշած երկրորդ վիշանն ո՛րն եղաւ .

Պ. Աբխաղոսին ապստամբութիւնը . վասն զի Քեսուրէն գառնալէն ետքը Յովարի ձեռքովը գնաց Տօրը հետ հաշտուեցաւ , ու սկսաւ ապրատամբութեան մտքով ժողովրդոց սիրտը վաստակիլ : Ամէն օր ձիով՝ ծառաներն առջևէն , խանուխ գուռը կ'երթար , ու ամէն եկողին առջևը կ'ելէր՝ սիրով կը հարցընէր . « Ուտա՛ի ես , ի՞նչ կ'ուզես » . ու թէ որ սէտք մը ունէին՝ կը հոգար , և եթէ մէկը իրեն ծառայէր , շուտ մը Աբխաղոս կը գրկէր զինքը կը սպագնէր : Չորս տարի ասանկ ընելով ժողովրդեան սիրան իրեն քաշեց . ետքը հօրմէն հրաման ուղեց որ Քերրոն երթայ՝ իր ուխտը կատարէ , որ փախչելու ատեն ըրեր էր : Եւ երկու հարիւր հոգի մեծերէն հեան առած գնաց , ու հոն խնայուց իր միտքը . մէկէն ամէնքը հաւանեցան . Աբխաղոսիչ Գաւթի մեծ խորհրդականն ալ իրեն կանչեց Աբխաղոս : Գաւթի երբոր խնայաւ , զինքն Աստուծոյ յանձնելով իր քօմն եղած քիչ մը զօրքօմն Երուսաղէմէն ելաւ որ փախչի : Ան ատեն Սագովկ քահանայապետն ալ բոլոր քահանաները մէկտեղ՝ աստղանակը վերցուցին որ տանին . Գաւթի չուղեց , թէ որ Աստուած ուղէ՛ ես նորէն կը գառնամ ըսելով . և Սագովկայ ապրասպրեց որ իր տղոցը ձեռքով Աբխաղոսին ընելիքները գաղտուկ իրեն խնայընէ : Քուսի Արաքացւոյն ալ ըսաւ Գաւթի որ Աբխաղոսի քօմն երթայ , գրտուանց բարեկամութիւն ցուցընելով Աբխաղոսիչին խորհուրդը փձացընէ ,

և ինչ որ Աբխազում պիտի ընէ՝ իրեն խնացրնէ :
Իսկ ինքը լալով ու բուսիկ սաքով երբոր կ'երթար ,
դիմացն ելաւ Սեմէին՝ Սաւուղի աղգականն ու
սկսաւ նախատելով քարեր նետել վրան , ըսելով .
« Աստուած քու գլուխդ դարձուց Սաւուղի
տանն արիւնը » : Ան ատեն Աբխասա զօրապետը՝
Յովարի եղբայրն ալ չգիմացաւ . « Աս ի՛նչ է որ ,
ըսաւ , մէկ սասկած չուն մը կը հայհոյէ իմ տէրս .
հետև կ'երթամ գլուխը կ'անենմ » : Դաւելթ
« Թող ըսաւ . Աստուած կ'ուզէ որ Դաւելթն ա-
նիծուի . ահա իմ որդիս իմ ետեւս ինկեր է , հա-
պա ի՛նչ պիտի չընէ Սաւուղի աղգականը , կարե-
լի է որ Աստուած տեսնէ ու ինծի սղորմի » :
Ետքը հոգնած հասան Բաւուրիս ըսուած տեղը :
Հ . Դաւելթի Երուսաղէմէն փախչելէն ետև Ա-
բխազում ի՛նչ ըրաւ .

Պ . Մտաւ Երուսաղէմ անիրապետեց . Աբխա-
փէլն իրեն ըսաւ որ « Տասուերկու հազար մարդ
առնեմ , շուտ մը Դաւելթի ետեւէն երթամ , քանի
որ հոգնած են , զինքը միայն մեռցրնելով ամէնքը
քու կողմդ դարձրնեմ » : Աբխազում առ բանս
Քուսիին ալ հարցուց . Քուսիին չհաւնելով սկսաւ
Աբխազոմին աչքը վախշրնել . « Խոհեմութեամբ
պէտք է վարուիլ ըսաւ , քիչ զօրքով Դաւելթի զօ-
րաւոր մարդիկներուն դէմ դնելը վտանգաւոր
է » : Աբխազում Աստուծմէ կուրցած հաւնեցաւ
աս խորհրդին : Քուսիին միայն ան էր որ Դա-
ւելթ փախչելու ատեն ունենայ . անոր համար
չուտ մը Դաւելթի խնացուց եղածը : Բայց Աբխ-
աուփէլ յայտնի տեսնելով Աբխազոմի կործանու-
մը՝ յուսահատութենէն գնաց իր տունն՝ ինք
զինքը կախեց : Դաւելթ խմանալով Յորդանանէն
անցաւ , ու քովիններն իրեք բաժնեց , և ինքն
ալ հետերնին Աբխազոմին վրայ ելլել կ'ուզէր ,
բայց զօրապետները չթողուցին . ան ատեն ա-

պրսպրեց անոնց որ Աբխաղումայ խնայեն : Հա-
սաւ Աբխաղում իր զօրքովն սկսաւ պատերազ-
միլ, ու քսան հազար մարդ կորանցընելէն ետքը՝
ցիրուցան Եփրեմի անտառին մէջէն փախչելու
տակենին շատ մարդ ալ հոն մեռան : Աբխաղում
իւր ջորիովն ան անտառէն երբոր կ'անցնէր՝ գլխուն
մազերը կաղնիի մը ծառին ճիւղերուն պլուեցան,
ջորին ալ տակէն ելլելով ինքն անանկ կախուած
մնաց : Զ ինուոր մը եկաւ Յովաբայ պատմեց, ան
ալ ըսաւ՝ « Ինչո՞ւ չսպաննեցիր՝ հիմա քեզի յի-
սուն սիկղ արծաթ ու թուր մը կուտայի » : Զ ի-
նուորը պատասխան տուաւ . « Հազար ալ տայիր՝
ես թագաւորիս տղուն ձեռք չէի վերցընէր, որով
հետեւ ապրսպրեց » : Ան ատեն Յովաբ՝ « Ուրեմն
կեցիր » ըսաւ, ու գնաց իրեք նետով Աբխաղումի
սրտին զարկաւ . տասը հոգի ալ Յովաբի մարդիկը
վրայ հասան՝ մեռուցին, ու մարմինը խորունկ
փոսի մը մէջ ձգեցին :

Դաւթի վերջի գործքերը .

Հ . Յովաբ Աբխաղումը մեռցընելէն ետեւ ինչ
ըրաւ .

Պ . Պատերազմը դադրեցընել տուաւ, ու խըր-
կեց Բուսին որ Դաւթի աւետիս տայ : Դաւթ թ
երբոր խնայաւ՝ սաստիկ արամուծենէն առանձ-
նացած սկսաւ ողբ ընել ու ըսել . « Իմ Աբխաղ-
ում տղաս, Աբխաղում իմ տղաս, երանի թէ ես
քու տեղդ ըլլայի Աբխաղում իմ տղաս » : Ետքը
Յովաբ ալ դարձած երբոր խնայաւ՝ գնաց յորդո-
րեց որ ելլէ զօրացն երևնայ որ սիրտ առնեն՝ իրեն
համար քաշած աշխատանացը վրայ, որ սրտերնին
կոտրէր էր՝ իմանալով իրեն ըրած ողբը : Բայց

ասով և առջի ըրած մէկ քանի գործքերով Յովաք
Դաւթի աչքէն ելաւ . անոր համար Ամեայիին
որ Աբխողոմի զօրասպեան էր՝ խօսք տուաւ՝ զինքը
Յովաքին տեղը գնելու : Յովաք իմանալով որ մը
կեղծաւորութեամբ Ամեային բարեւելու ասուն՝
դանակը փորը խոթեց՝ մեռուց :

Հ . Դաւիթ ինչպէս դարձաւ Երուսաղէմ իր
աթոռը .

Պ . Բոլոր Իսրայէլացիք առջևն ելան՝ թողու-
թիւն խնդրեցին ու մեծարանքով բերին : Ան
ասուն զինքն անիծող Սեմէին ալ հաղար հոգի
Բենիամինի ցեղէն հեան առած՝ Դաւթի առջևն
ելաւ՝ « Մեղայ » ըսաւ : Աբեսա զինքը տեսածին
սէս՝ « Աստուծոյ օժեալը հայհոյեր է, սէտք է
մեռցնենք » ըսաւ . Դաւիթ երգում ըրաւ Սե-
մէին չմեռցնելու , և ըսաւ . « Այսօր ամենեկին
մարդ սխախ չմեռնի » , Մեմփիբոսթէն ալ սգա-
ւորի կերպարանքով առջևն ելաւ :

Հ . Մեմփիբոսթէն ինչո՞ւ Դաւթի հետ չէր
գնացած :

Պ . Իր Սիբա ծառային ասրսպրեր էր Մեմ-
փիբոսթէն որ էշը սպարաստէ՝ երթալու համար .
ան աւեր է երկու էշ՝ շատ մըն ալ ուտելիքներ ,
մինակ գնացեր է Դաւթի ետեւէն , ըսելով թէ
Մեմփիբոսթէն կը սպասէ որ զինքը թաղաւոր
ընեն . Դաւիթ ալ մէկէն հաւատալով բոլոր Մեմ-
փիբոսթէին երկիրները Սիբայի տուեր է : Երբոր
Դաւթի առջևն ելաւ . Դաւիթ հարցուց՝ իմա-
ցաւ , ու ըսաւ որ կէսուսիկէս մէջերնին բաժնեն
երկիրները :

Հ . Դաւիթ Աբխողոմէն փախչելէն ետքը եր-
բոր Երուսաղէմ դարձաւ՝ ամենեկին իրեն գէմ
կեցող մը չեղաւ .

Պ . Բենիամինի ցեղէն մէկը Սաբէէ անունով
գլուխ քաշեց , որուն հետեւեցան շատ մարդ :

Մէկէն Յովար ու Աբեսսան զօրքերով վրան գնացին, ան ալ Աբէլ քաղաքը փախաւ. անոնք գնացին սկսան պարխապը կործանել: Ան ատենը վերէն կնիկ մը խելացի խօսքերով Յովարը հանգարտեցուց ու բերնէն խօսք առաւ որ եթէ Սաբէէին պըտխը տան՝ կ'աղաաին: Աւատի գնաց քաղաքացիներն ալ համոզեց որ դըտխը կարեցին՝ պարբուպէն վար նեանցին. և պատերազմը դադրեցաւ:

Հ. Գաւիթի ծերութեան ատեն քաշած երրորդ վիշտն ո՞րն եղաւ.

Պ. Ան ատենները սով մը եղաւ իրէք տարի: Գաւիթ հարցուց Աստուծոյ ու խնայաւ որ Սաւուղայ Գաբաւոնացիները ջարդելուն համար է եղեր: Աւատի Գաւիթ Գաբաւոնացիներուն հարցուց թէ « Ի՞նչ հատուցում ընել կ'ուզէք »: Անոնք ալ եօթը հողի սեղեցին Սաւուղի տղաքներէն որ կախեն մեռցրնեն: Գաւիթ ալ առաւ Սաւուղի երկու մնացած խորթ տղաքն ու անոր Մերովք աղջկանը հինգ տղաքը, որ ողջ ողջ արկը կախած մեռուցին, ու սովը դադրեցաւ: Ասկէ ետքն ալ Գաւիթ երեւելի պատերազմներ ըրաւ այլազգիներուն դէմ. և անգամ մը քիչ մնաց որ կը զարնէր զինքը կարիճ այլազգի մը, բայց Աբեսսան աղաատեց անոր ձեռքէն. ու անկէ ետքն ալ թող չտուին որ Գաւիթ պատերազմի երթայ:

Հ. Գաւիթի ծերութեան ատենը քաշած չորրորդ վիշտն ո՞րն եղաւ.

Պ. Իսրայէլացւոց վրայ Աստուած բարկանալով Գաւիթ թող առաւ որ հպարտութեան մտքով համրէ զանոնք. ուստի Յովարայ հրամայեց Գաւիթ որ ծայրէ ծայր բոլոր ժողովոգոց համրանքն իրեն բերէ: Յովար ջերնալով դէմ գնել՝ գնաց պարտեցաւ՝ համրանքը բերաւ. միայն կարիճ պատերազմի մարզիկն ու թը հարիւր հազար, Յուդայի ցեղիկն ալ զատ՝ հինգ հարիւր հա-

զար : Բայց ետքը Գաւիթ զղջացաւ ըրածին վրայ . Աստուած ալ Գաղ մարգարէին բերնով անոր պատիժ՝ կամ իրեք տարի սով ըլլայ ըսաւ , կամ իրեք ամիս պատերազմ՝ , և կամ իրեք օր մահատարածամ , որը կ'ուզէ՝ ընարէ : Ան ատենը Գաւիթ շատ ցաւելով ըսաւ , « Լաւ է որ Աստուծոյ ձեռքն իյնամ՝ որոյ սղորմութիւնը շատ է » . ուստի մահատարածամն ընարէ . Եւ առաւօտանց մահն սկսաւ , ու ինչուան կէսօր եօթմասնասուն հազար հոգի մեռան : Գաւիթ տեսաւ հրեշտակը Ռաւա Յերուսացիին կալին վրայ , որ ձեռքը սուր աւած կը ջարդէր զամէնքը , ինկաւ Աստուծոյ առջև « Ես հովիւնին ըրի մեղքը , սէտք է որ զիս պատժես » ըսաւ : Ան ատեն Աստուծոյ հրամանովն եկաւ Գաղ մարգարէն ու ըսաւ որ ան կալին մէջ սեղան շինէ , ու Աստուծոյ զահ մատուցանէ : Գաւիթ շուտ մը գնաց , ան կալին տեղը գնեց իրեն եղներովն ու սայլերովը , հոն սեղան շինեց՝ ու եղներն Աստուծոյ տղջակէզ ըրաւ . աւսով մահուան պատիժը դադրեցուց Աստուած : Եւ Գաւիթ ուզեց որ ետքը տաճարը հոն շինուի :

Սողոմոնիս քաղաւորելը .

Է . Գաւիթ երբոր ծերացաւ՝ իրեն յաջորդ զո՞վ ընարէց .

Պ . Ինքը դեռ չընարած՝ Ադոնիա իր մեծ տղան ուզեց որ հօրն ետեւէն ինքը նստի , և զՅովարն ու Աբիաթար քահանայապետն ալ իրեն դին առած՝ Ոսղեթայ վիժին քով մեծ սեղան ըրաւ , թագաւոր օծուելու համար : Ան ատեն Նաթան մարգարէն գնաց Բերսաբէին ըսաւ որ երթայ Գաւիթ միտքը ձգէ , որովհետեւ Սողոմոն սղուն

խոստացեր էր թագաւորութիւնը : Բերսաբէն գնաց Դաւթի պատմեց Ազոնիային ըրածը, միաքը ձգելով Սողոմոնին համար ըրած երգումը . հա-
թան ալ վրայ եկաւ ու սկսաւ Դաւթի հարցընել
թէ իրեն հրամանովն է Ազոնիային թագաւորելն,
որ միայն զինքն ու Սագուլի քահանան ու Բանեա
որդի Յովիգայեայ զօրապեան ու իր Սողոմոն
տղան չէ կանչած : Ան ատենը Դաւթ շուտ մը
հրամայեց որ Սողոմոնն իր թագաւորական ջորին
հեծցընեն, Գեհան տանին, և բոլոր Իսրայէլա-
ցոց վրայ թագաւոր օժեն : Սողոմոն ան ատենը
աասուերիւ աարուան էր : Երբոր Ազոնիայի
հեան եղողները լսեցին որ Դաւթ Սողոմոնն իր
աթոռը նստեցուցեր է, ցրուեցան . Ազոնիան ալ
Ասաուծոյ խորանը փախաւ . ինչուան որ Սող-
մոն իրեն խօսք տուաւ չմեացընելու՝ թէ որ չա-
րութեամբ չէր ըրածը, ու թէ որ նորէն բան
չխառնէ :

Հ . Դաւթ մեռնելէն առաջ ինչ կտակ ըրաւ
Սողոմոնին .

Պ . Ասաուծոյ պատուիրանքներուն ու օրինացը
վրայօք շատ խրատներ տալէն ետքը, Յովաբայ ու
Սեմէիին համար ալ ապրստրեց որ արդար հա-
տուցումն ընէ : Եւ իր առաջուց պատրաստած
ոսկին՝ արծաթը և ուրիշ բաներն անոր յանձնե-
լով հրամայեց որ Ասաուծոյ տաճարը շինէ : Ետքը
օրհնելով զինքը՝ եօթանասուն տարուան վախճա-
նեցաւ, քառսուն տարի թագաւորութիւն ընելէն
ետե :

Հ . Դաւթի մեռնելէն ետքը Սողոմոնի եղբարց-
մէ թագաւորութեան աչք ձգող եղաւ .

Պ . Ազոնիան կ'ուզէր նորէն սաք ելլել . անոր
համար գնաց Բերսաբէին աղաչեց որ Սողոմոնի
ըսէ իրեն կին առնելու համար Աբիսակ Սոմնա-
ցին որ Դաւթի ծերութեան ատենը քովն առեր

էր : Սողոմոնն մօրմէն աս բանս լաածին պէս՝ սաս-
տիկ բարկացաւ , խմանալով Ադոնիային միաքը . ու
չուտ մը Բանեա որդի Յովիդայեայ զօրապետը
խրկեց՝ սպաննել տուաւ . Աբիաթարն ալ որ անոր
կողմն էր՝ քահանայապետութենէ ձգեց . իր Ա
նաթովթ գեղը աքսորեց , տեղը Սաղովիը գնե-
լով : Ան ատեն Յովար վախնալով Աստուծոյ խո-
րանը ապաւինեցաւ . Սողոմոնն անոր ալ Բանեա
որդի Յովիդայեան խրկեց ըսաւ որ դուրս ելլէ ,
բայց չելաւ . ուստի Սողոմոնն ալ հոն սպաննել
տուաւ , և անոր տեղը զօրապետ Բանեան դրաւ :

69

Սողոմոնի խնաստուքիւնը .

Հ . Սողոմոնն Սեմէիին դատաստանն ինչպէս
կարեց .

Պ . Արան պարաք գրաւ որ Երուսաղէմէն դուրս
չելլէ , թէ չէ՝ կը սպաննուի . Սեմէին ալ կեցաւ
իրեք տարի : Եսե անգամ մը անոր ծառաները
Գեթացոց երկիրը փախան . Սեմէին ալ դնաց՝
բռնեց ու Երուսաղէմ բերաւ . ան ատեն Սողոմոնն
մէկէն զինքն սպաննել տուաւ :

Հ . Սողոմոնն ինչ բանով աւելի Աստուծոյ սի-
րելի եղաւ .

Պ . Թագաւորութիւնը հաստատուելէն ետե
կլաւ Գաբաւոն լեռը , և հոն Աստուծոյ հազար
ողջակէզ մատուց : Աստուած ալ ան գիշերը քնոյն
մէջն իրեն երևնալով ըսաւ թէ « Խնդրէ ինչ որ
կ'ուզես » : Սողոմոնն ալ շնորհակալ ըլլալով Աս-
տուծմէ՝ « Միայն խնաստութիւն կ'ուզեմ , ըսաւ ,
որ այսչափ ժողովուրդը կառավարեմ » : Աս-
տուած ալ ըսաւ . « Արովհեակե դուն ոչ երկայն
կեանք , ոչ հարստութիւն , ոչ թշնամիներու գ

դէմ յաղթութիւն խնդրեցիր . անոր համար
այնչափ խնամտուն ըլլաս՝ որ քեզի պէս մարդ չէ
եղած և պիտի չըլայ , և ասկէ զատ չխնդրածդ
ալ քեզի կուտամ . անանկ հարուստ ըլլաս որ քու
օրերդ թագաւորներուն մէջ քեզի պէս չգանուի .
ու թէ որ քու հօրդ Գաւթի շխտակ ճամբէն դուրս
չելլես , քեզի երկայն կեանք ալ կու տամ : Առա-
ւօտանց Երուսաղէմ դարձաւ ու հոն ալ նորէն
Աստուծոյ ողջակէզ ընելէն ետեւ , մէկէն յայանը-
ւեցաւ իր խնամտութիւնը՝ առջի ըրած դատա-
տանովը :

Հ . Սողոմոնի խնամտութեանն առջի նշանը որն
եղաւ .

Պ . Երկու կնիկ դատաստանի եկան , որոնք եր-
կուքն ալ իրեք օր ետեւ առաջ մէյմէկ տղայ բե-
րեր են . մէկ գիշեր մը մէկը իրենին վրան պառ-
կած մեռուցեր է , ու դադարուկ գնացեր մէկալի-
նին հետ փոխեր է . ուստի երկուքն ալ կը պնդեն
թէ ողջն իրենն է : Սողոմոն ասանկ կարեց դա-
տաստանն որ սղ տղան երկու կտոր ընեն ու կէսը
մէկուն՝ կէսը մէկալին տան : Ասով մէկէն խնայուե-
ցաւ տղուն բուն մայրն , որ դուժը շարժելով
կ'աղաչէր թէ տղան մէկալին տան ու չսպաննեն .
իսկ մէկալը կ'ուզէր որ կէսկէս բաժնուի : Սողո-
մոն լռեցոյց զանոնք ու ըսաւ . « Աս տղան ան
կնոջն է , որն որ ասոր մեռնիլը չուզեր , անոր
տուէք » : Աս դատաստանը զամենքը զարմացուց ,
ու Սողոմոնն ամենուն պատկառելի ըրաւ :

Հ . Սողոմոն թագաւորելուն պէս տաճարը
շինեց .

Պ . Ամէն գիէն խաղաղութիւն ըլլալով հարրս-
տութիւնը օրէ օր կ'աւելնար . ուստի թագաւո-
րութեանը շորրորդ տարին մեծ պատրաստու-
թեամբ շինելու ձեռք զարկաւ : Ութսուն հազար
հօգի էին քար կարողները , եօթանասուն հազար

հողի՝ քար կրող, իրեք հազար հինգ հարիւր վերահացաւ, ու շատ վարպետ արհեստաւորներ ալ որ Քիրամ Տիւրոսի թագաւորն ու Փարաւոն Եգիպտոսի թագաւորը՝ Սողոմոնին խրկեցին: Ասանկով տաճարը եօթը տարուան մէջ շինուեցաւ՝ անանկ փառաւոր, որ աշխարհքիս վրայ նմանը չէ եղած, մէջը բոլոր սսկւով ծեփած:

Հ. Երբոր տաճարը շինելը ըննցաւ՝ ինչ հանդէս ըրաւ Սողոմոն.

Պ. Հասն Աստուծոյ տապանակը մեծ փառքով բերաւ ան տաճարին մէջը, ետքը տանըչըս որ բոլոր Իսրայէլացիքը ժողոված՝ մեծ տօն կատարեց, և քսանուերկու հազար կով ու հարիւր քսան հազար ոչխար զոհ ըրաւ Աստուծոյ. հոն ինքն ալ շնորհակալութեան աղթք մը ընելով խնդրեց Աստուծմէ որ ան անոր ժողովուրդը ինչ խընդրուածք որ ընէ, Աստուած կատարէ: Ան ասեն լուսաւոր ամառով մը տաճարը լեցուեցաւ, ու երկընքէն կրակ իջնալով ըրած ողջակէզները այրեց: Ժողովուրդը սոսկալով երեսի վրայ ինկած՝ Աստուծոյ փառք կուսային: Ան գիշերն Աստուած նորէն ըսաւ Սողոմոնի թէ « Խնդիրներդ կը կատարեմ, սա տաճարն ալ իմ տունս կը սեպեմ, միայն թէ Գաւթի ճամբէն շատարիս որ որդւոց որդի թագաւորութիւնդ ալ հաստատեմ »:

Հ. Սողոմոն տաճարէն զատ ինչ շինութիւններ ըրաւ.

Պ. Տաճարը ընննալէն ետե՛ իրեն թագաւորական պալատը շինեց, որուն մէջ ամենէն փառաւոր իր թագաւորական աթոռն էր փղոսկրէ՛ և ոսկի զարդերով. վեց աստիճան ունէր, որոնց վրայ երկու կողմէն տասուերկու առիւծ շինած: Փառաւոր պալատ մըն ալ շինեց Փարաւոն թագաւորին աղջկանը համար, որ իրեն կիներ էր: Ասոնցմէ զատ քաղաքներ ալ շինեց, և բոլորը քսան

տարուան մէջ եղաւ . նաւեր ալ շինել տուաւ Սողոմոն՝ ու Սովբեր խրկեց , որ իրեք տարին հեղ մը անկէ շատ ոսկի , ազնիւ քարեր և ուրիշ շատ քարիք կը բերէին : Ասոնցմով անանկ եղաւ որ ամէնքը Սողոմոնին իմաստութեանն ու հարստութեանը վրայ զարմացած , զինքը տեսնել կ'ուզէին :

Հ . Ո՞վ եղաւ որ Սողոմոնը տեսնելու համար աշխարհքէ աշխարհք քալեց .

Պ . Սաբայ թագուհին՝ իր զօրքերովը և ուղտերովն ընծաներ հեար առած եկաւ որ Սողոմոնին իմաստութիւնը փորձէ : Բայց Սողոմոնի հետ խօսելէն ետքը , ամէն բանին կարգը կանոնն ալ տեսնելով , ըսաւ . « Ասածներս տեսածիս կէտը չէր : Աստուած սիրեր է աս ազգն որ զքեզ իրենց թագաւոր դրեր է » : Սողոմոն ալ անոր տուած ընծաներուն տեղ ինչ որ անոր սիրան ուզեց՝ տուաւ ու ճամբեց :

70

Յերոբոամ .

Հ . Սողոմոն ինչուան մահը Աստուծոյ հաւատարիմ մնաց .

Պ . Տարիքն աւնելով՝ սկսաւ Աստուծմէ հեռանալ . վասն զի Աստուծոյ արգելած ազգերէն կին առաւ , ու անոնց սիրոյն համար կռատուններ շինեց . իր իմաստութեամբն Աստուծոյ ըրած ամէն բանը քննեց իմացաւ , կնոջը սէրէն խաբուած՝ ինքը զինքն ալ իր Աստուածն ալ մոռցաւ . անոր համար Աստուած ալ սասաիկ բարկացաւ Սողոմոնի , և ուզեց որ թագաւորութիւնն իրմէն առնէ ծառային տայ : Բայց Գաւթի սիրոյն համար երկու բան կը շնորհեմ ըսաւ , մէյմը որ քու

որդ չեմ ընէր, երկրորդ որ միայն երկու ցեղը
Դաւթի տանը կը թողում: Ան ատեններն երկու
այլադէք՝ Ադեր ու Ռասոն սկսան Սողոմոնի դէմ
ելլել:

Հ. Աստուած ինչ կերպով հանեց տասը ցեղը
Սողոմոնին ձեռքէն.

Պ. Երբոր Սողոմոնին ծառան Յերոբոամ հա-
բատայ որդին Եփրեմի ցեղէն՝ բանի մը համար Ե-
րուսաղէմէն ելեր կ'երթար, Աքիա Սիլոնացի մար-
դարէն նոր լաթ մը հագած եկաւ Յերոբոամին,
ան լաթը տասուերկու կտոր ըրաւ ու տանն անոր
տուաւ, ըսելով. « Աստուած Սողոմոնի թագաւո-
րութեանը տասը ցեղը քեզի պիտի տայ՝ անոր
ապերախտութեանը համար. դուն ալ, ըսաւ, թէ
որ Աստուծոյ պատուիրանքները պահես, որդւոց
որդի թագաւորութիւն կ'ընես »: Երբոր խնայաւ
Սողոմոն, Յերոբոամը մեռցրնել ուզեց. ան ալ
փախաւ Եգիպտացոց թագաւորին քովը ինչուան
որ Սողոմոն մեռաւ՝ քառասուն տարի թագաւո-
րութիւն քշելէն ետքը:

Հ. Իսրայէլացոց տասը ցեղին թագաւորու-
թիւնն ինչ կերպով Յերոբոամայ ձեռքն անցաւ.

Պ. Սողոմոնի մեռնելէն ետե Ռոբոամ անոր
աղան Սիկիմ քաղաքը գնաց՝ հօրը տեղը թագաւոր
օծուելու. Յերոբոամն ալ որ Սողոմոնի մահը
լսելով դարձեր էր Եգիպտոսէն՝ հոն կանչեցին,
ինդրեցին Ռոբոամէն որ աւերքերը թեթեցրնէ.
Ռոբոամ ալ « Իրեք օրէն եկէք, ըսաւ, որ պա-
տասխան տամ » . ու գնաց առաջ Սողոմոնին ա-
տենի ծեր խորհրդականներուն հարցուց. անոնք
ըսին որ առջի բերանն անուշութեամբ վարուե-
լով սրտերնին վաստըկի: Բայց Ռոբոամ գնաց
իրեն հասակակից տղոցն ալ հարցուց, ու անոնց
ասուած խորհրդին հաւնելով, գնաց ըսաւ ժողո-
վերդեան. « Իմ ձեռքով մասսա՝ հօրս մէջքէն հաստ

է. հայրս ձեր վիզն անուր դրաւ, ես ան անուրը պիտի ծանրացընեմ. հայրս ձեզ գաւաղանով կը ծեծէր, ես զձեզ քուքով պիտի ծեծեմ » : Ան աւենը Իսրայէլացւոց աասը ցեղը մէկ եղած « Մենք քեզի հետ բան չունինք, ըսին, դնա՛ քու ցեղիդ թագաւորէ », ու իրենք Յերոբովամն իրենց թագաւոր դրին : Ետքը Ռոբովամ ետենուն Ազոնիւրամ իշխանը խրկեց հաշտեցընելու համար, անոնք բռնեցին՝ քարկոծեցին. Ռոբովամ ալ վախնալով Երուսաղէմ փախաւ :

Հ. Ռոբովամէն բաժնուելուն համար Իսրայէլացւոց մէջ ամենեկն կռիւ չեղաւ .

Պ. Ռոբովամ հարիւր ութսուն հազար մարդ ժողովեց Յուդայի ու Բենիամինի ցեղէն, կռուի դուռ բանալ կ'ուղէր . բայց Ասաուած Սամէէ մարդարէն խրկեց . որ ըսաւ . « Աս բաժանումս Ասաուած ըրաւ, պարագ աեղը մի կռուիք » : Ասանկով մէջերնին խաղաղութիւն եղաւ :

71

Յերոբովամայ կռապաշտութիւնը .

Հ. Յերոբովամ հաւատարիմ մնաց Ասաուծոյ ինչուան ետքը .

Պ. Չէ. վասն զի վախնալով որ չըլլայ թէ Իսրայէլացիք ասաուածպաշտութեան համար Երուսաղէմի տաճարն երթալով կամաց կամաց Ռոբովամի կողմն ելլեն, երկու ասկիէ հորթ շինեց, ու մէկը Գան՝ մէկաւն ալ Բեթէլ քաղաքը դրաւ, ու հրամայեց ամենուն որ անկէ ետե դո՛հ ընելու համար Բեթէլ կամ Գան երթան, ըսելով թէ « Չձեզ Ազիպասէ հանող ասաուածները ան հորթերն են » : Ժողովրդեան մէջէն մէկ քանին քուրմ ը-

բաւ, տօնի օրեր ալ որոշեց, ու յայտնի կ'ապաշ-
տուծիւն խոթեց Դարայէլացւոց մէջ:

Հ. Երբոր Յերոբովամ սկսաւ կ'ապաշտուծիւն
ընել, մէկ կերպով մը Աստուած զինքը չխրատեց
որ դարձի գայ:

Պ. Առջի անգամն որ Յերոբովամ Բեթէլ, սե-
ղանին առջևը գնաց զոհ ընելու, Յուդայի եր-
կրէն մարդարէ մը եկաւ, սկսաւ կ'անչել. « Ո՛վ
սեղան, գիտնաս որ Դաւթի ցեղէն Յովսիա ա-
նունով մէկը քու վրագ քուրմերդ զոհ պիտի ընէ:
Նշան ըլլայ ըսածիս որ սեղանը հիմա ճղքուի ու
վրայի բաները վար թափին »: Յերոբովամ ձեռքն
երկնցուց. ըսաւ, « Բռնեցէք առ մարդը »: մէ-
կէն ձեռքը չորցաւ՝ երկնցուցած մնաց. սեղանն
ալ մարդարէին ըսածին պէս ճղքուեցաւ: Ան ա-
տենը Յերոբովամ սարսափած աղաչեց մարդա-
րէին, ու անոր աղօթքովը բժշկուեցաւ: Ետքն ու-
ղեց որ մարդարէն իրեն քովը կերակուր ուտէ,
ան յանձն չառաւ ու գնաց: Ասան զի Աստուած
մարդարէին ապրսպրեր էր որ դուրս տեղ հաց
չուտէ, ու նոյն գնացած ճամբէն ետ չդառնայ. ա-
նոր համար ալ ուրիշ ճամբով ետ դարձաւ. բայց
չկրցաւ ինչուան ետքը պահել աս հրամանը. վասն
զի սուտ մարդարէ մը իրեն տղոցմէ իմանալով ա-
նոր ըրածները, մէկէն գնաց ճամբան՝ զիմացն ա-
ռաւ, սուտ ըսաւ թէ « Աստուած ինձի ապրս-
պրեց որ զքեզ կերակուրի հրամայրենմ »: Երբոր
անկէ խաբուած նստաւ ուտելու, Աստուած յայտ-
նեց որ իր անհնազանդութեանը պատիժ օտար
տեղ պիտի մեռնի: Ետքը նորէն ճամբան երթա-
լու ատեն առիւծը զինքը պատուեց. սուտ մարդա-
րէն երբոր իմացաւ, առաւ թաղեց, ու տղոցն ալ
յանձնեց որ զինքն ալ անոր քովը թաղեն:

Հ. Յերոբովամայ ձեռքին բժշկութեանը հա-
մար ըրած զղջումը սրտանց էր:

Պ. Չէ. անոր համար Աստուած ալ բարկացեր էր անոր: Եւ երբոր իր Աբիա տղան ծանր հիւանդութեան մէջ ինկաւ, ու Յերոբոամ իր կրնկանը լաթերը փոխել տալով գաղտուկ՝ ընծանելով Սելով խրկեց զինքն Աբիա մարգարէին որ տղին համար հարցընէ, Աստուած յայտնեց Աբիային որ Յերոբոամի ըրած ասերախտութիւնը կնկանն երեսը զարնելով ըսաւ. « Աստուած զձեզ անով տեղով պիտի ջնջէ. և հիմա դուն տուն գառնալուդ պէս՝ Աբիան պիտի մեռնի, ու գերեզման մանէ, բոլոր տանը մէջ միայն անիկայ արդար գանուելուն համար: Իսկ մեկաշնոնք թէ որ քաղքին մէջ մեռնին՝ շնորը պիտի ուտեն, թէ դուրսը մեռնին՝ թռչունները »: Եւ անանկ եղաւ:

72

Նարաա, Բաասա, Էլա, Զամբրի, Աքասար.

Հ. Աբիային ըսած սլաաթը Յերոբոամայ վրայ էրբ կատարուեցաւ.

Պ. Քսանուերկու տարի թագաւորելէն ետեւ, էրբ չարաչար մեռաւ, իրեն Նարաա կաապաշտ սրդին տեղը նստաւ. բայց երկու տարիէն Բաասա զօրապետը գլուխ քաշեց, ու զինքն սպաննեց, թագաւորութիւնը ձեռքէն առաւ, ու բոլոր Յերոբոամայ ցեղն ալ թրէ անցուց:

Հ. Բաասա ինչպէս թագաւորութիւն քշեց.

Պ. Յերոբոամայ պէս կաապաշտութիւն ըրաւ. անոր համար Աստուած Յէու մարգարէին բերնաօն իմացուց որ Յերոբոամայ պէս պիտի ըլլայ իրեն ալ: Եւ քսանուիրէք տարի թագաւորելէն ետքը երբոր մեռաւ, ու իր սրդին Էլա սկսաւ թագաւորել, զան ալ Զամբրի զօրապետը սպաննեց

կերուխաւ մի մէջ եղած ատենը՝ թագաւորութեան
երկրորդ տարին, ու ինքը թագաւորելով ջնջեց
բոլոր Բաասային ցեղը :

Հ. Չամբրի օրչափ ատեն թագաւորեց .

Պ. Եօթն օր . վասն զի բանակը ուրիշ տեղ ըլ-
լալով, երբոր զօրքը խմացան, իրենց Ամրի զօրա-
պետը թագաւոր դրին . ու եկան Թերսա թագա-
ւորական քաղաքը պաշարեցին : Չամբրի երբոր
նեղը մտաւ, իր պալատին կրակ տուաւ, ու ինքն
ալ մէջն այրեցաւ :

Հ. Չամբրին սպաննուելէն ետքը՝ Ժողովուրդը
Ամրին ընդունեցան .

Պ. Ոմանք ընդունեցան, ուրիշներն ալ Թամնի
անունով մէկը կ'ուզէին . բայց յալթեց Ամրին ու
թագաւորեց տասուերկու տարի, կռապաշտու-
թիւն ընելով . և շինեց Սամարիա քաղաքը :

Հ. Ամրիէն ետև ո՞վ թագաւորեց Իսրայէլա-
ցւոց .

Պ. Ա. քաաբ՝ որ առջիններէն աւելի չար եղաւ՝
Յեզաբել իր կինն այլազգի աղջիկ ըլլալուն հա-
մար : Աստուած ալ սաստիկ բարկանալով, Եղիա
մարդարէն խրկեց անոնց խմացուց որ Իսրայէլա-
ցւոց երկիրը տարիներով անձրև պիտի չգայ ու
սաստիկ սով պիտի ըլլայ : Երբոր ըսածին պէս սո-
վը սաստկացաւ, Ա. քաաբ ու Յեզաբել կատղած՝
Եղիան կը փնտռէին որ սպաննեն, կարծելով թէ
անոր ուզելովն եղեր է աս սովը . և Եղիան չգրա-
նելով ուրիշ մարդարէներէն ձեռուրնին ինկածը
կը մեռցընէին :

Հ. Եղիա սովին ատենն ի՞նչպէս ապրեցաւ .

Պ. Աստուած հրամայեց իրեն որ երթայ անա-
պատը՝ Բուաթու ջրին քովը բնակի, ու հոն ագ-
աւեներն առաւօտ իրիկուն իրեն հաց ու միս բե-
րեն : Ետքը ան ջուրն ալ երբոր ցամքեցաւ, Աս-
տուած Եղիային ըսաւ որ Սիզոնացւոց Սարեփ-

Թա քաղաքն երթայ, հոն իրեն որբևարի կին մը
կերակուր տայ: Գնաց, ու երբոր կտոր մը հաց
ուզեց, կինն ըսաւ՝ Թէ « Միայն քիչ մը ալիւր ու
եղ մնացեր է որ ուտենք ու մեանինք սկիտի: — Ա-
լիւրդ ու եղդ չսպակոխն, ըսաւ Եղիա, ինչուան որ
անձրև դայ »:

73

Քոչարկերուն ջարդը .

Հ . Սովին ատեն Ա. քաաբ ղԵղիան փրնտուելով
կրցաւ գտնել .

Պ . Սովին երբորդ տարին Աստուծոյ հրամա-
նաւ Եղիա ինքիրեն գնաց որ երևնայ Ա. քաաբու . և
նախ հանդիպեցաւ անոր Աբղիու հաղարտակտին
որ ձիերուն համար խոտ փնտուելու կ'երթար .
« Գնա՛, ըսաւ Եղիա, խմացուր Ա. քաաբին Թէ
հոս եմ » . Աբղիու յանձն չառաւ, ըսելով « Չըւ-
լայ Թէ Աստուծոյ հոգին ղքեզ ուրիշ տեղ մը տա-
նի, ետքը ղիա կը մեռցընէ Ա. քաաբ . վասն ղի ես
ալ երկիւղած մարդ եմ ու ան սովին ատենն Ա.
քաաբին ձեռքէն փախուցած հարիւր մարդարէ
գաղտուկ այրի մէջ սպահեր եմ ու հացով ջրով
կը կերակրեմ: — Մի վախեր, ըսաւ Եղիա, այսօր
սկիտի երևնամ ես անոր »: Ան ատենը գնաց Աբ-
ղիու խմացուց: Ա. քաաբ ղԵղիան տեսածին սէս՝
« Իսրայէլացւոց մէջ խռովութիւն ձգող » կանչեց
իրեն . Եղիան ալ ըսաւ, « Ինչ էք՝ որ Աստու-
ծոյ տեղ Բահաղը կը սպաշտէք »: Ետքը ասըս-
տրեց Ա. քաաբին որ Կարմեղոս լեռը ժողովէ ամէն
ժողովուրդը և ութը հարիւր յիսուն քուրմերը .
երկու եղ ալ բերեն մորթեն, մէկը ինքը մէկալն
ալ քուրմերը և Աստուծոյ մատուցանեն . որուն
Աստուածն որ երկնքէն կրակ իջեցընէ ու այրէ

պատարագը, ան է իրաւ Աստուածը : Ժողովուրդը աս բանիս հաւնեցաւ . ուստի առաջ քուրմերն իրենց եղը չոր փայտերու վրայ դրին և առաւօտէն ինչուան իրիկուն անոր չորս դին կը պարտէին ու կը կանչէին Բահաղը : Եղևան ալ ծաղը ընելով կ'ըսէր, « Ամուր կանչեցէք, թէ որ քուն է՝ արթըննայ » : Անոնք ալ սկսան ալ ամուր կանչու ըստել՝ մարմիննին ալ կը ճեղքուտէին, բայց ձայն մը չելաւ : Ան ատեն « Մէկդի կեցէք ըսաւ Եղևա . ու ինքը տասուերկու քարերով սեղան մը շինեց և ամէն բան պատրաստելէն ետքը վրան տասուերկու սափոր ջուր լեցընել տուաւ, անանկ որ միտը կը լողար ջրին մէջը . ու խնդրեց Աստուծու մէ որ ինքզինքը Ժողովուրդեան խնայընէ . Մէկէն երկնքէն կրակ իջաւ՝ այրեց ողջակէղը՝ ջուրը՝ սեղանն ալ մեկաեղ . Ժողովուրդը ապշած երեսի վրայ ընկան՝ ըսելով . « Իրաւն աս է ճշմարիտ Աստուածը » : Ան ատեն Եղևա հրամայեց Ժողովուրդեան որ Բահաղի քուրմերը բռնեն . ու զամէնն ալ ջարդեն : Եսե Աքաաբին ըսաւ, թէ « Անձրևի չբռնուած՝ դնա՛ կերակուրդ կէր » . Աքաաբ տուն հասաւ չհասաւ՝ անձրևն ալ ասաւ :

Հ . Եղևայի քուրմերը ջարդելը երբոր լսեց Յեզարէլ ինչ ըրաւ .

Պ . Սաստիկ սրդողելով Եղևայի, խրկեց ըսաւ, թէ « վաղը զքեզ ալ քուրմերուն պէս պիտի ընեմ » : Եղևա վախցաւ ու դէպ 'ի Յուդայի երկիրն անապատը փախաւ . ճամբան հողնած անօթի ծառի մը տակ նստած՝ քունը տարաւ . հրեշտակ Աստուծոյ եկաւ արթընցուց, « Ելի կէր ըսաւ » : Աչքը բացաւ՝ տեսաւ որ քովը հաց ջուր կայ, կերաւ ու նորէն քնացաւ : Հրեշտակը նորէն ըսաւ որ ելլէ ուտէ, վասն զի շատ ճամբայ պիտի ընէ : Նորէն կերաւ ու անոր ուժովը քառասուն որ ճամբայ ընելով Գորեր լեռը հասաւ :

Հ. Եղիա Քորեբ լեռը ի՞նչ ըրաւ .

Պ. Հոն այրին մէջ երբ կը գանգատէր, Աստուած խնայուց թէ Իսրայէլացւոց մէջ այնպիսի դէշ կռապաշտութեան ատենը եօթը հազար աստուածապաշա մարդ կայ. ու ասըսպրեց որ երթայ Աղայէլն Ասորւոց թագաւոր օծէ, ու Յէուզորասպեան ալ Իսրայէլացւոց, Եղիսէն ալ իրեն տեղը մարգարէ դնէ, որ անոնց ձեռքով Աքաաբն ու Յեզաբէլը սպառժուին: Գնաց Եղիա հանդիպեցաւ Եղիսէին որ տասուերկու եզով երկիր կը հերկէր, կանչեց. « ան ալ թողուց ամէն բան ու սկսաւ իրեն հետ սպորտիլ:

74

Աքաաբի պատերազմները .

Հ. Աքաաբին առջի ըրած պատերազմը ո՞րն եղաւ .

Պ. Որդի Ադերայ Ասորւոց թագաւորն ուրիշ այլազգի թագաւորներու հետ եկաւ Սամարիան պաշարեց ու Աքաաբի դեսպան խրկեց՝ ըսելով « Բու ունեցած արծաթներդ՝ ոսկիներդ ու զաւակներդ բոլորն ալ խնս են » : Աքաաբ վախէն պատասխան տուաւ՝ թէ « Անանկ է » : Ան ալ նորէն խրկեց ըսաւ՝ թէ « Ապը բոլորն ալ ինձի խրկես » : Աքաաբ խորհուրդ ըրաւ ու պատասխան խրկեց թէ « Չըլլար » : Երբոր անոնք սկըսան խրոխտաւ, « Ալ հերկէք է, ըսաւ Աքաաբ, չօրարձի կորն իբրեւ ուղիղ » : Ետքը երբոր անոնք ուտելու խմելու հետ էին՝ մարգարէի մը խօսքով անոնց վրայ վազեց ջարդեց փախուց զամէնքը : Ասորիք կարծելով որ Իսրայէլացւոց Աստուածը լեռներու Աստուած է, անոր համար մէկաւ տարի նորէն պատերազմ բացին Յափեկա դաշտին

վրայ : Աստուած նորէն ան մարդարէին բերնով
խմայուց Ա.քաաբին որ անանկ ծուռ կարծիք եր-
թալնուն համար պիտի յաղթուին . ուստի մէկ
օրուան մէջ անոնցմէ հարիւր հազար հոգի կտորե-
ցին Իսրայէլացիք . մնացածներուն վրայ ալ քաղ-
քին պարիսպը փլաւ՝ քանուեօթը հազար ալ
հոն մեռան : Ան ատենը թագաւորնին ալ դադ-
տուկ տեղ մը փախած՝ իշխանները խրկեց որ յաղ-
թուածի զգեստով եկան Ա.քաաբէն թողութիւն
ուղեցին : Ա.քաաբ ալ խղճաց վրանին՝ ու մեծա-
րեց անոնց թագաւորը , իր կառքին մէջ քոփն ա-
ռաւ , հետը բարեկամութեան դաշինք դրաւ . ա-
սոր համար Աստուած նեղացաւ , մարդարէի ձեռ-
քով առակով մը խմայուց որ անոնց տեղն ինքն ու
իր ժողովուրդը պիտի ջարդուին :

Հ . Ա.քաաբ՝ որդի Ադերայ թագաւորին դէմ
ըրած պատերազմէն ետև յիշատակի արժանի ինչ
դործք ըրաւ .

Պ . Մեծ անիրաւութիւն մը ըրաւ աս կերպով :
Նաբովթայ այգին Ա.քաաբի պալատին քով ըլլա-
լով , Ա.քաաբ կ'ուղէր դնել . բայց Նաբովթ չէր
տար՝ իր հօրը ժառանգութիւն ըլլալուն համար :
Ա.քաաբ ասոր վրայ տրամած՝ մէկ օր մը հաց չկե-
րած պառկեցաւ . Յեզարէլ կիներ հարցուց խմա-
ցաւ , մէկէն հրովարտակ մը գրեց անոր քաղա-
քացիներուն մեծերուն որ դատաստան ընեն ու
երկու սուտ վկայով հաստատեն թէ Նաբովթ
Աստուծոյ ու թագաւորին դէմ խօսեր է . ու ա-
սանկով քարկոծեն զինքը : Ետքը երբոր Ա.քաաբ
Յեզարէլէն խմացաւ Նաբովթայ մահը , առջի բե-
րան քիչ մը ցաւ ցըցուց , բայց ետքը գնաց առաւ
այգին : Ան ատենն Աստուած խրկեց զՆղիան Ա-
քաաբին՝ ասանկ ըսելով . « Ուր որ անմեղ Նա-
բովթին արիւնը շները լափեցին , հոն քուկգ ալ
լափեն , ու Նզրայէլ քաղքին պատին տակը Յե-

գարէլի մարմինն ալ շներն ուտեն, և քու ցեղդ ալ
բոլոր ջնջուի » : Բայց որովհետև ինքը Նաբովթայ
մահուանը վրայ ցաւ ցըցուց՝ անոր համար » Բու
օրդ չըլան աս բաներս » ըսաւ :

Հ . Աքաաբ ի՞նչպէս մեռաւ .

Պ . Արդի Ազերան աղատելէն իրէք տարի ետև
նորէն Աքաաբ ուղեց սրատերազմ բանալ Ասս
րուոց դէմ՝ որ Ասամաթ Գաղաադն անոնց ձեռքէն
առնէ : Յովսափաա Յուդայի թագաւորն ալ ան
օրերը հոն գտնուելով՝ խորհուրդ տուաւ որ մար
գարէներուն հարցընեն . ուստի չորս հարիւր սուա
մարգարէ ժողոված՝ յաջողութիւն կը խոստանայ
ին : Ան ատենը Յովսափաա ըսաւ . « Չկայ մէկ
Ասուածոց մարգարէ մըն ալ որ անոր հարցը
նենք » : Աքաաբ ըսաւ . « Կայ մէկն որ միշտ իմ
վրաս գէշ կը խօսի » : Յովսափաա աղաչեց՝ բերել
տուաւ, որ Միքիա մարգարէն էր, ու համարձակ
եկաւ ամենուն դէմ ըսաւ, թէ « Աքաաբ ան սր
ատերազմին մէջ պիտի մեռնի » : Բարկացաւ Ա
քաաբ ու բանա գնել տուաւ, որ եթէ ողջ գառ
նայ ինքը սրատերազմէն մեռցնել տայ : Եւ գնաց
ան սրատերազմին մէջ նեաով զարնուեցաւ, ու
ինչուան իրիկուն արիւնը վազելով՝ մեռաւ . և նըս
տած կառքն ալ արիւնով լցուած՝ Սամարիա քա
ղաքը Նաբովթայ այդիկն տեղը բերած լուանալու
ատեն՝ շներն արիւնը կը լափէին :

Արդիա, Յովրամ, և Եղիաայի վերանալը .

Հ . Աքաաբին տեղն ո՞վ յաջորդեց .

Պ . Աքաաբ իրեն աղան որ կաապաշտութիւն
ընելով երկու տարիէն ետքը օր մը տանը սրա

առհասնէն խնաւով չարաչար հիւանդացաւ, ու մարդիկ խրկեց Ահիարոն քաղաքն որ Ճանձիկ կուռքին հարցընէ թէ պիտի բժշկուի: Ան առննն Աստուծոյ հրամանովն Եղիա հանդիպեցաւ անոնց ու ըսաւ. « Իսրայէլացիք Աստուած չունին՝ որ դուք Ճանձիկ կուռքին կ'երթաք հարցընելու. գնացէք խմացուցէք իրեն որ Իսրայէլացւոց Աստուածը կ'ըսէ. թէ « Պատկած տեղէդ մէյ մ' ալ պիտի չելլես »: Ա. քողիան երբոր նշաններէն խմացաւ թէ Եղիան է ան ըսողը, վրան յիսնապետ մը խրկեց զօրքով ան առննն որ Եղիա լեռան մը վրայ նստեր էր: Յիսնապետը վարէն ըսաւ. « Մարդ Աստուծոյ, թագաւորը քեզ կ'ուզէ »: Պատասխանեց Եղիա. « Թէ որ ես մարդ Աստուծոյ եմ, հիմա կրակ իջնայ երկնքէն ու զքեզ քու մարդիկներովդ այրէ »: Մէկէն կրակ իջաւ՝ զամենքն այրեց: Ա. քողիա նորէն յիտուն մըն ալ խրկեց, անոնք ալ առջինին պէս այրեցան: Երբորդ անգամն որ խրկեց, յիսնապետը ծունկի վրայ եկաւ, ու աղաչեց Եղիային որ իրենց խնայէ՝ չայրէ, ու ելլէ դայ: Ան առննը Եղիա Աստուծոյ հրամանովը գնաց, յանդիմանեց թագաւորին կռապաշտութիւնն, ու « Պիտի մեռնիս » ըսաւ: Ասանկով Ա. քողիա ալ մեռաւ:

Հ. Ա. քողիայէն ետե ո՞վ եղաւ թագաւոր Իսրայէլացւոց.

Պ. Ինքն որդի չունենալով, Յովրամ իր եղբայրը նստաւ՝ տասուերկու տարի. որ թէպէտ հօրը չափ դէշ չէր, բայց կռապաշտութիւնը բոլորովին ձեռքէ չթողուց: Ասոր օրերը Մովաբայիք ապրստամբեցան:

Հ. Յովրամայ թագաւորութեան առննը ի՞նչ նոր գործք ըրաւ Եղիա.

Պ. Աստուած ուզեց որ զինքն սղջ սղջ երկինքը վերացընէ. ուստի ինքն ալ կ'ուզէր որ մինակ տեղ

մը երթայ՝ վերանալու համար . բայց Եղիսէն խմա-
ցաւ ու քովէն չէր դատուէր . ինքն ալ տեսաւ որ
չըլլար , մէկտեղ Յորդանանին քովը գնաց՝ իր կա-
շիէ վերարկուով ջրին զարկաւ ճեղքեց ու մէջէն
անցան : Հոն յայտնեց Եղիսէի՝ թէ « Ես պիտի
աշխարհքէս վերանամ . ուստի խնդրէ , ըսաւ , ինձ
մէ ինչ որ կ'ուզես » . Եղիսէն ալ ըսաւ . « Քու
երկու զօրութիւնդ ալ՝ հրաշք ընելու և մարդա-
րէանալու՝ ինձի դան : — Բժուար բան խնդրեցիր ,
ըսաւ Եղիան , բայց թէ որ զիս տեսնես երկինք
ելլելու անես , ուզածդ ըլլայ » : Մէյմըն ալ յան-
կարծ կրակէ կառքով և ձիերով սկսաւ վեր ելլել .
Եղիսէն ալ սկսաւ կանչել . « Հայր հայր , ո՞ւր կ'եր-
թաս՝ Իսրայէլացւոց կառքն ու կառավարը » : Ես-
քը տրամութեամբ իր լաթերը պատուեց՝ ու Ե-
ղիայի վերարկուն ձեռք առած՝ որ վեր ելլելու ա-
տեն վրան ձգեց՝ նշան թէ խնդիրքը կը կատարէ ,
եկաւ Յորդանան գետին զարնելով երկու բաժ-
նեց ջուրն , ու նորէն ասդիս անցաւ :

76

Եղիսէի հրաշքերը .

Հ . Եղիսէն Եղիայէն առած զօրութիւնն ինչ
բաներու մէջ երեցուց .

Պ . Երբոր Երեքով գնաց , քաղաքացիքն խմա-
նալով թէ Եղիայի զօրութիւնն անոր անցեր է ,
աղաչեցին որ քաղքին ջուրն աղէկցընէ որ լեղի էր
ու ինասահար : Եղիսէն ալ գնաց օրհնեց . մէջն
աղ ցանեց ու անուշցուց : Ետքը ճամբան տղաք-
ներ ելան դիմացն ու սկսան զինքը ծաղր ընել
կռնա գլուխ՝ կանչելով . Եղիսէն ալ զանոնք անի-
ծելուն պէս՝ անտառէն երկու արջ վրանին վա-

զեցին ու քառասունութիւն հոգի մեռուցին : Ան-
գամ մըն ալ որբեարի կնոջ մը պարտքընաէրները
պարտքի տեղ երկու տղաքը կ'ուզէին առնել . ե-
կաւ Եղիսէին օտքն ինկաւ . հարցուց Եղիսէն՝ ի-
մացաւ որ քիչ մը եղ ունի , « Գնա՛ ըսաւ դրացի-
ներէդ փոխ առ պարտալ ամաններ ու ան եղն ա-
մենուն մէջ լեցու » : Ասանկով որչափ աման որ
գտաւ կիներ՝ ամէնն ալ լեցուեցաւ ու անով պարտ-
քը վճարեց : Ըստ անգամ Եղիսէ Սոմնա քաղա-
քը կ'երթար . հոն բարեպաշտ ամուլ կին մը իր
տունն անոր խուց մը պատրաստեր էր՝ որ միշտ
հոն կ'իջնար . մարգարէն ուղեւով անոր բարի
սրտին հատուցմունք մը ընել , Աստուծոյ խնդրեց ,
որ անոր զաւակ մը եղաւ . առ տղան մեծնալէն
ետքը երբոր մեռաւ , Եղիսէն աղօթքով նորէն ող-
ջացուց զինքը : Սովի ատեն իր աշկերտին ըսաւ որ
երթայ քիչ մը կանաչեղէն ժողովէ ու մարգարէնե-
րուն կերակուր ընէ . աշկերտը գնաց շատ ազոխ
գտաւ՝ շալկեց բերաւ , ու չգիտնալով սանին մէջը
դրաւ եփեց . մարդիկն ուտելու ատեն իմացան որ
ժանգը զարկեր է , Եղիսէ քիչ մը ալիւր մէջը ցա-
նել տուաւ ու կերցուց , մէկու մըն ալ մնաս չե-
ղաւ : Անգամ մը մէկը իրեն հաց ու թուղ ընծայ
բերաւ . ան մէկ երկու հացը ժողովրդեան բաժնել
տուաւ . ամէնքն ալ կերան ու աւելցուցին ալ :
Ուրիշ հրաշքներէն զատ Ասորուց թագաւորին
Նէեման զօրասեան ալ բժշկեց բորոտութենէ :

Հ . Նէեման ինչպէս բժշկուեցաւ .

Պ . Նէեմանայ տունը գերի առնուած Իսրայէ-
լացի աղջիկ մը կար , անիկայ իմացուց թէ Սամա-
րիա մէկը կայ որ կը բժշկէ . ուստի Նէեման իր
թագաւորէն յանձնարարական թուղթ մը առած
Յովրամ թագաւորին՝ շատ պարգևներով եկաւ
Սամարիա : Յովրամ երբոր իմացաւ անոր գալուն
պատճառը , խարդախութիւն կարծեց ու վախ-

ցաւ՝ ըսելով « Ես Աստուած եմ որ մարդ բժշկեմ » : Աս բանիս լուրը երբոր Եղիսէին հասաւ , խրկեց թագաւորին ըսաւ որ թող քովս գայ որ խմանայ Աստուծոյ զօրութիւնը : Գնաց Նէեման Եղիսէին . Եղիսէն ինքը չերեցած՝ մարդ խրկեց ըսաւ թէ երթայ Յորդանան եօթն անգամ լուացաւի ու բժշկուի : Բարկացաւ Նէեման . « Ես կարծէի թէ , ըսաւ , գայ օրհնէ պիտի զիս ու բժշկէ , ալ աղէկ չեն Գամասկոսի ջրերը » . ու սկսաւ ետ գտնաւ : Ան ատենն իր ծառաները յորդորեցին զինքն որ մարդարէին ըսածը զիւրին բան մըն է , չարհամարհէ , մէյմը փորձէ : Ասանկով Նէեման գնաց Յորդանան ու լուացուելուն պէս՝ բժշկուեցաւ . ուստի ուրախութեամբ լցուած դարձաւ Եղիսէին շնորհակալ եղաւ , ըսելով թէ « Հիմա խնացայ որ մինակ Իսրայէլացւոց Աստուածն է ճշմարիտ . անոր համար երկու ջորի բեռ հող առնեմ տանիմ՝ որ ան հողին վրայ՝ միայն աս Աստուծոյն առջև ողջակէզ ընեմ » : Ինքն ալ Եղիսէի տալ կ'ուզէր իր բերած ընծաներէն , բայց Եղիսէ բան մը չառաւ : Իսկ երբոր մէկմէկէ բաժնուեցան , Եղիսէին աշկերար Գեէզի՝ Նէեմանին ընծաներուն աչք անկելով՝ գաղտուկ գնաց անոր ետեւն , ու ըսաւ թէ « Իմ տէրս զիս խրկեց որ տաղանդ մը արծաթ ու երկու ձեռք հագուստ տաս , երկու աղքատ մարդիկներու համար » : Նէեման ալ սիրով հանեց իրէք տաղանդ արծաթ՝ ան հագուստներն ալ՝ ծառաներուն տուաւ , Գեէզին հետ ճամբեց , որ մութ ատեն՝ մարդ չսեւած՝ տունն առաւ սգահեց , և ատենին Եղիսէին առջին ելաւ : Եղիսէն հարցուց , թէ « Ուսկից կու գաս » : Պատասխան տուաւ , « Ծառագ տեղ մը չեմ գնացեր » : Ան ատեն Եղիսէն ալ ըսաւ . « Ազատութիւնն ընել տուաւ քեզի աս բաները , անոր համար Նէեմանին ստակին հետ բոյն ալ քե-

զի ու զաւերներուդ անցնի » : Հոն մէկէն ձիւնի պէս բորոտեցաւ Գեէզին :

Հ. Երբոր Մովսէսայիք ապստամբեցան Կարայէլացւոցմէ՛ Յովսափ կրցաւ զիրենք նորէն հարկատու ընել :

Պ. Ըրաւ՝ Եղիսէին հրաշքովը : Ասան զի երբոր Յովսափ պատերազմ բացաւ անոնց դէմ, և զՅովսափառ Յուդայի թագաւորն ու Եգիպտոս թագաւորն իրեն օգնական առած՝ եօթն օր անասաւին մէջէն կ'երթար, ջրերնին սրահսեցաւ և յուսահատեցան. և Յովսափառայ խորհրդով կանչեց Յովսափ զԵղիսէն ու հարցուց : Եղիսէն չէր ուզէր պատասխանել, բայց Յովսափառայ սիրոյն համար քնար զարնող մը բերել առւաւ ու քնարին ձայնովը զուարթացած՝ ըսաւ որ հեղեղաափին մէջ փոսեր բանան, ինքիրեն անոնք ջրով լեցուին, և ետքը թշնամեաց ալ յաղթեն : Առաւօտանց կարծիր արևն ան ջրերուն զարնելով կը փայլէր, Մովսէսայիք հեռուէն տեսան՝ արիւն կարծեցին և ըսին թէ « Ուրեմն իրեք թագաւոր մէկմէկուհեա կռուեր՝ մէկզմէկ ջարդեր են » . ուստի վաղեցին որ կողոպուտ առնեն : Կարայէլացիք պատրաստ ըլլալով՝ զանոնք աղէկ մը ջարդեցին, ու ինչուն թագաւորական քաղաքը փախուցին . հոն Մովսէսայուց թագաւորը յուսահատած՝ իրեն անդրանիկ աղան պարըստին վրայ մօրթեց ողջակէզ ըրաւ. և աս բանս քսմմեցուց Կարայէլացիներն որ թողուցին եւ զարձան :

Եղիսէի մարգարէութիւնները.

Հ. Եղիսէն հրաշագործութենէն զատ՝ իր մարգարէութիւնն աւելի ինչ բաներու մէջ ցըցուց.

Պ. Ինչ վարպետութիւն որ կը բանեցնէին Ասորիք պատերազմի մէջ՝ բոլոր Յովրամայ կ'իմացընէր: Անգամ մը Ասորիք դարան ըրին, Եղիսէն Յովրամայ իմացուց որ ան տեղէն չանցնի. ասանկով ուրիշ քանի մը անգամ ալ պարսպն ելան Ասորիք: Բարկացաւ թագաւորնին, կը հարցընէր թէ ո՞վ կ'իմացընէ Իսրայէլացւոց իրենց ըրածը: Ըսին իրեն թէ « Եղիսէ մարգարէ մը ունին որ դադտուկ խուցի մէջը խօսածդ ալ կ'իմանայ » . շուտ մը վրան զօրք խրկեց որ գնացին պաշարեցին Դովթայիմ քաղաքը: Եղիսէն առաւօտանց քաղքէն դուրս ելլել կ'ուզէր, աշկերան սկսաւ վախնալ. Եղիսէն անոր սիրտ առաւ, ու Ասաուծոյ աղաչեց՝ անոր ալ ցուցընելու իրենց քովի զօրքերն որ լեռանը վրայ Եղիսէին չորս դին ձիաւորներ՝ կրակէ կառքեր շարուած էին: Ետքը իր վրայ եկողներուն աչքն ալ կուրցուց ու ըսաւ. « Եկէք ցուցընեմ ուզածնիդ », և Սամարիա տարաւ. հոն երբոր աչուրնին բացաւ, տեսան որ բռնուած են: Յովրամ հարցուց Եղիսէի զանոնք ջարդելու համար. Եղիսէն ալ ըսաւ. « Մեռցընելու իրաւունք չունիս. կերակուր առը իրենց ու թող որ երթան »: Ուրիշ անգամ ալ սասախիկ սովի ատեն՝ ըլլալու առատութիւնը մարգարէացաւ:

Հ. Եղիսէի ատեն մեծ սովն ինչպէս եղաւ.

Պ. Ասորւոց թագաւորն եկաւ պաշարեց Սամարիա քաղաքն, որ ամենեին ուտելիք չմնաց մէ-

ջը: Օր մը Յովրամ յուսահատած՝ պարսպին վրայ
պարտելու ատեն՝ վարէն կին մը սկսաւ կանչել
Թէ ուրիշ կնիկան մը հետ առջի օրն իր տղան կե-
րեր են, ու երկրորդ օրը մէկալ կինն իրը պահեր
է՝ դուրս չհաներ որ ուտեն: Թագաւորին սիրաւը
խշխշաց աս բանիս. երդում ըրաւ Եղիսէին գլուխն
առնելու՝ հրաշք մը չընելուն համար, ու գնաց
որ խօսի հետը: Եղիսէն ղինքը հանգարտեցուց ու
ըսաւ. « Ապր աս ատենս մէկ գրիւ բարակ ա-
լիւրը՝ մէկ սիկղ պիտի ծախուի »: Իշխանին մէկը
զարմանալով պատասխանեց. « Երկնքէն ալիւրի
անձրև պիտի գայ »: Եղիսէն ալ անոր անհաւա-
տութեանը համար ըսաւ. « Տեսնես՝ ու չուտես »:
Հոն քաղքին գրանը քով չորս բորոտ կային. ա-
սոնք յուսահատած՝ ան գիշերը Թշնամիներուն
բանակը գնացին որ կամ սպաննուին, կամ ուտե-
լու բան գտնեն՝ ասորին: Նոյն գիշերն Աստուած
Ասորուց մէջ սաստիկ վախ ձգեր էր՝ զօրքերու
ձիաւորներու ձայներ լսել տալով արտորնօք փա-
խուցեր էր զամէնքը: Ուստի ան բորոտները տե-
սան որ ձայն չկայ՝ նստան կերան խմեցին, ու սկը-
տան ոսկի արծաթ փախցընել պահել. բայց տես-
նելով որ գլուխ չելուիր ասանկով և խմանալով
որ հոս Աստուծոյ բանը պիտի ըլլայ, գնացին քաղ-
քին պահապաններուն աւետիս տուին: Թագա-
ւորն ալ լսելով սկսաւ ըսել Թէ « Թշնամիներուն
խաբէութիւնն է »: Բայց մարդ խրկեց խմացաւ որ
իրաւ փախեր են, ճամբուն վրայ ալ լաթերնին և
ուրիշ բաներնին Թողուցեր են: Ուստի ամէնքը
մտան բանակին մէջը, Ժողովոյ Ժողովոյն, անանկ
որ Եղիսէին ըսածին պէս ցորենն ու գարին ոչինչ
գնով կը ծախուէր: Ան չհաւատացող իշխանն ալ
որ Թագաւորին հրամանովը քաղքին գրանը վե-
րակացու գրուած էր, ան տեղն ոտքի տակ ինկաւ
կոխկրատուեցաւ մեռաւ:

Յեռո, Յովսափազ, Յովսա, Յերոյրովամ, Չա-
քարիա :

Տ. Յովրամ ինչպէս մեռաւ .

Պ. Եղիան Եղիսէին յանձնած ըլլալով որ Ազա-
յէն ու Յեռն թագաւոր օծէ, անոր համար Գա-
մասկոս գնաց Եղիսէն: Ասորոց թագաւորը երբոր
լսեց, ինքը հեւանդ ըլլալուն՝ խրկեց Աղայէլ իշխանն
որ հարցընէ Եղիսէին՝ իր հեւանդութեանը համար:
Ան ատենը Եղիսէ ցաւելով ըսաւ Աղայէլին թէ
« թագաւորը կը մեռնի, դու տեղը կ'անցնիս, ու
Խորայէլացոց շատ վիշտ պիտի հասցընես » : Ինչ-
պէս որ ըսաւ՝ քիչ ատենէն Աղայէլ թագաւոր ե-
ղաւ ու Յովրամին գէմ պատերազմ բացաւ. հոն
վերաւորուեցաւ Յովրամն ու Եղրայէլ գնաց բժրշ-
կուելու: Ետքը Եղիսէն իր աշկերաներուն մէկը
Ռամաթ Գաղասոյ խրկեց, ու Յեռն ալ թագա-
ւոր օծել տուաւ որ Ա. քաաբու տանը վրայ Աս-
տուծոյ սպառնալիքը կատարէ: Ան ատենը Յեռ
զօրքն առաւ գնաց Եղրայէլ քաղաքը Յովրամ թա-
գաւորին վրայ. ու երբոր անիկայ սկսաւ փախ-
չիլ՝ հասաւ ու նետով սպաննեց, մարմինն ալ հա-
բովթայ այդին ձգեց:

Տ. Եղիայի մարգարէութիւնը Յեզաբելայ վրայ
ինչպէս կատարուեցաւ .

Պ. Յեռ Եղրայէլ քաղաքը մանելու ատեն՝ Յե-
զաբէլ հագուած կապուած՝ պատուհանէն խօսք
կը նետէր, « Բարի եկար, ըսելով Չամբրի տի-
րասպան », իբր թէ Չամբրիին պէս իր տէրն սպան-
նեց: Յեռ հրամայեց Յեզաբելի քովի ներքինինե-
րուն որ զինքը վար ձգեն, ու ձգածնուն պէս ջախ-

Զատեցաւ և ձիերէն կօխկրատուեցաւ ու շնորը կե-
րան, անանկ որ թաղելու համար միայն գանկն ու
ձեռաց թաթերը մնացեր էին: Ետքը Յէու ջար-
դեց Ա. քաարի մնացած եօթանասուն որդիքն ալ.
Բահաղու քուրմերն ալ՝ հանդէս պիտի ընեմ ըսե-
լով դամէնքը կռատան մէջը ժողովեց թրէ անցուց.
կռատունն ալ կործանեց՝ ոտից ճամբայ շինեց:

Հ. Յէու որչափ տանն թագաւորեց.

Պ. Քսանեուծը տարի. և թէպէտ Բահաղը
ընջեց, բայց հորթ պաշտելէն ետ չկեցաւ: Աս-
տուած ալ իրեն ըրած առջի աղէկութեանը հա-
մար ինչուան չորրորդ ազգը թագաւոր նստին
ըսաւ: Աս ատեններս Ազայէլ Ասորեոց թագա-
ւորը շատ կը չարչարէր Բարայէլացիները:

Հ. Յէուէն ետքն ո՞վ թագաւորեց.

Պ. Յովաքաղ իր որդին՝ հօրը նման կռասպաշտ,
տասնեօթը տարի. անոր ետէն Յովաս իր որ-
դին, ան ալ կռասպաշտ:

Հ. Յովաս ի՞նչ երևելի գործք ըրած ունի.

Պ. Եղիսէին մեռնելու ատենն որ մօտեցաւ,
գնաց Յովաս սկսաւ լալ, ըսելով թէ « Ասանց
քեզի Բարայէլացիք ի՞նչ պիտի ընեն »: Եղիսէն
հրամայեց որ աղեղն առնէ ու պատուհանէն դէպ
'ի Ասորեոց երկիրը նետ նետէ. թագաւորն իրեք
հեղ նետելէն ետե գաղթեցաւ. ան ատենը Եղի-
սէն՝ « Ափսո՛ս, ըսաւ, միայն իրեք անգամ Աս-
րիները պիտի ջարդես. թէ որ հինգ կամ վեց հեղ
նետէիր՝ բոլոր զանանք կը ջնջէիր »: Ուստի Յո-
վաս իրեք անգամով Բարայէլացեոց կորսնցուցած
քաղքերն ըրր բոլոր նորէն ետ առաւ: Ետքը Ամա-
սիա Յուդայի թագաւորն երբոր հպարտութեամբ
Բարայէլացեոց վրայ պատերազմ բացաւ, Յովաս ա-
նոր ալ յաղթեց՝ զինքն ալ բռնեց, Երուսաղէմն ալ
առաւ, և անկէ շատ կողոպուտ Սամարիա բերաւ,
և տասուերկու տարի թագաւորելէն ետե մեռաւ:

Հ. Եղիսէին վերջին հրաշքն ո՞րն եղաւ .

Պ. Անգամ մը Երբոր Իսրայէլացիք մեռել կը տանէին՝ յանկարծ աւաղակներ վրանին վաղեցին . անոնք ալ դիպուածով մեռելը Եղիսէին գերեզմանին վրայ ձգեցին փախան . ան տեղը մեռելը մէկէն յարուժիւն առաւ :

Հ. Յովասէն ետե ո՞վ նստաւ .

Պ. Իր տղան Յերոբոլամ Երկրորդ , քառասուն տարի : Ետեէն անոր որդին Չաքարիա՝ Յէռուի ցեղին ետքինը՝ վեց ամիս . Սեղղում անուհով մէկը զինքը սպաննեց , ու ինքը թագաւոր նստաւ ամիս մը : Աս չորսն ալ կաապաշտ ըլլաւ նուն , սրտիժն ալ իրենցմէ սրահաս չէր :

Հ. Սեղղումին ո՞վ յաջորդեց .

Պ. Մանայեմ Սեղղումն սպաննեց ու ինքը նրստաւ : Երբոր Փուա Ասորոց թագաւորը վրան սրտերազմ բացաւ , Մանայեմ ժողովուրդը բուր կեղէքեց ու Փուային շատ սասկ տալով զինքը հանդարտեցուց : Տասը տարիէն մեռաւ ու տեղը նստաւ իր տղան Փակիա . որուն տասներորդ տարին Փակէէ որդի Ռովմէլայ իր իշխանը զինքը մեռուց ու տեղն անցաւ : Ասոր օրը թագազաթփաղասար Ասորոց թագաւորն եկաւ շատ տեղերու տիրեց ու շատ ալ գերի Ասորեաւտան տարաւ : Վասն զի ամէնն ալ կաապաշտութիւն կ'ընէին :

Հ. Իսրայէլացւոց թագաւորութիւնն ի՞նչպէս վերջացաւ .

Պ. Փակէին քսաներորդ տարին՝ Ռվսէէ որդի Ելան սպաննեց զինքն ու տեղը անցաւ . և Ասորոց ձեռքէն աղատելու համար գաղտուկ Եգիպտացւոց աղաչեց որ գան օգնեն : Երբոր խնայաւ Սաղմանասար Ասորոց թագաւորը , անոր թագաւորութեան եօթներորդ տարին եկաւ իրեք տարի սաշարեց Սամարիան՝ առաւ , ու Ռվսէէն շղթայով կապած շատ Իսրայէլացիներ ալ մէկտեղ

Ասորեստան գերի տարաւ : Ասանկով բոլորովին սպառեց Աստուած իրենց կռապաշտութիւնը . թագաւորութիւննին առաւ ու զիրենք գերի ըրաւ անոնց՝ որոնց որ կուռքերը կը սիրէին : Ետքը Սաղմանասար Սամարիային կողմերն ասգիէն անդիէն ուրիշ մարդիկներ բնակեցուց , որոնք Սամարացի ըսուեցան :

Հ . Սամարացիք ի՞նչ կը պաշտէին .

Պ : Առջի բերանը կուռք կը պաշտէին . անոր համար Աստուած վրանին առիւծներ խրկեց որ շատ մարդ կ'ուտէին : Երբոր խնացաւ Ասորոց թագաւորը , Իսրայէլացւոցմէ քահանայ մը խրկեց իրենց որ սկսաւ Մովսէսի օրէնքներն անոնց սորվեցընել : Անկէ ետքը Սամարացիք Աստուծմէ ալ իրենց կուռքերէն ալ կը վախէին :

79

Ռորովամ , Արիա , Աւա .

Հ . Իսրայէլացւոց տասը ցեղին կռապաշտ թագաւորներուն հետ բաղդաակով Յուդայի թագաւորներն ի՞նչպէս կը գտնանք .

Պ . Հաս տարբեր : Թէպէտ ասոնց մէջն ալ կռապաշտ թագաւորներ եղան , բայց շատ աստուածապաշտներ ալ իրենց գործքովը զԱստուած կը հաշտեցընէին . անոր համար Յուդայի թագաւորութիւնը Իսրայէլացւոց թագաւորութենէն շատ դիմացաւ , որոնց առջինը Ռորովամն էր՝ Սողոմոնին որդին :

Հ . Ռորովամ ի՞նչպէս թագաւորութիւն քշեց .

Պ . Առջի իրէք տարին աստուածապաշտութեամբ անցուց , անկէ ետքն սկսաւ գէշնալ : Անոր համար Աստուած թագաւորութեանը հինգերորդ տարին թող տուաւ որ Եգիպտացւոց

Սօսակիմ թագաւորն անհամար զօրքով եկաւ ինչուան Երուսաղէմ ու բոլոր տաճարին և թագաւորական պալատին ոսկեղէն ու արծաթեղէն բաներն առաւ • վրանին ալ ծանր տուրք դրաւ : Եւ և Սամիաս մարդարէին խրատովն որ քիչ մը զգաստացան, Աստուած ալ պատիժը դադրեցուց : Բայց Ռոբովամ նորէն իր առջև չար ճամբան բռնեց • և Յերոբովամայ հետ ալ միշտ պատերազմ կ'ընէր :

Հ • Ռոբովամին ետեւէն Յուդայի թագաւոր ո՛վ նստաւ •

Պ • Աբիա կամ Աբիու՝ Ռոբովամի քսանեւութը որդւոց մէջ աւելի սիրելի աղան որ կռապաշտութեան ղիէն իր հօրմէն վար չէր մնար : Անգամ մը մեծ պատերազմ բացաւ Յերոբովամայ դէմ • իր զօրքը չորս հարիւր հազար էին, ու Յերոբովամի զօրքը ութը հարիւր հազար : Պատերազմը չսկըսած՝ Աբիան Իսրայէլացւոց յորդորանք մը ըրաւ որ նորէն հնազանդին Դաւթի թագաւորութեանն ու ճշմարիտ Աստուածը պաշտեն՝ իր տաճարին մէջը : « Հիմա ալ փուճ տեղը մի պատերազմիք, ըսաւ • վասն զի դուք Յերոբովամին անկած հորթին ապաւինեք էք, իսկ մենք ճշմարիտ Աստուծոյ վրայ դրեք ենք յոյսերնիս » : Յերոբովամ աս միջոցիս իր բանակին կէսը դադառել անոնց ետեւ անցուց : Երբոր տեսաւ Աբիան որ ետեւէն առջևէն պաշարուեր է՝ Աստուծոյ ապաւինելով սասախի զարնուեցան, հազարաւոր մարդ ջարդեցին ու շատ տեղուանք ալ առին : Աբիան իրէք տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

Հ • Աբիայի տեղն ո՛վ յաջորդեց •

Պ • Իր որդին Ասա • որ շատ բարեպաշտ ըլլալով կռապաշտութեան բաները բոլոր վերուց, և իր Մաաքա մայրը կռապաշտութիւն սիրելուն համար թագուհիութենէ ձգեց, անոր համար

Աստուած ալ իր բաները յաջողեց : Աթուղայացոց
Չարեհ թագաւորը հաղարաւոր զօրքով և իրեք
հարիւր հազարով վրան ելաւ . Ասան իրեք հարիւր
հազար Յուզայի՝ երկու հարիւր վաթսուէն հազար
ալ Բենիամինի զօրքով դէմն ելաւ , ու Աստուծմէ
օգնութիւն խնդրելով անոնցմէ շատը ջարդեց ,
մնացածը փախուց , ու շատ կողոսուտ առաւ ,
ոսկիով արծաթով նարէն տաճարը զարդարեց :
Ուրիշ ցեղերն ալ ըրածներն խմանալով շատ մարդ
եկան իրեն հնազանդեցան :

Հ . Ասան իր բարեպաշտութեանը մէջ ինչուան
եաքը հաստատ կեցաւ .

Պ . Չէ . անոր համար իրեն թագաւորութեանն
երեսունուութերորդ տարին երբոր Բաասան իրեն
դէմ պատարազմ բացաւ : ինքը շատ ոսկի արծաթ
ժողովեց տաճարին մէջէն , ու Ասորուոց թագաւո-
րին խրկեց՝ որ իրեն օգնեց ու Բաասան փախցը-
նել տուաւ . բայց եաքը Անանիա մարգարէն եկաւ
զինքը յանդիմանեց թէ ինչո՞ւ Աստուծոյ չապաւի-
նեցաւ . ինքն ալ մարգարէն բանտ դրաւ : Ծերու-
թեան ատենն ալ որ ոտքի ցաւով պառկեր էր ,
յոյսը Աստուծոյ վրայ դնելու տեղ՝ բժիշկներուն
վրայ դրաւ ու անանկով մեռաւ՝ քառասունումէկ
տարի թագաւորելէն ետեւ : Շատ մեծ հանդէսով
թաղեցին զինքը :

80

Յովսափաւ , Յովրամ .

Հ . Ասայէն ետե ո՞վ թագաւորեց .

Պ . Յովսափաւ Ասային որդին որ իր հօրմէն
աւելի բարեպաշտութիւն ընել կը ջանար . անոր
համար քահանաներ ու բարեպաշտ իշխաններ
խրկեց քաղաքներն ու դեղերն՝ որ Աստուծոյ

օրէնքներն աղէկ մը սորվեցրնեն ամէնուն : Աստուած ալ օրհնեց զինքն ամէն կողմանէ . հարիւր վաթսուն հազար զօրք ունեցաւ , բերդերն ու քաղաքներն ամրացուց . ուստի սահմանակից տէրութիւններն իրմէ կը վախնային ու տուրք կուտային :

Հ . Իսրայէլացւոց թագաւորը Յովսափատայ հետ ինչպէս էր .

Պ . Իսրայէլացւոց թագաւորն ան ատեն Աքաաքն էր , ու Յովսափատ անոր հետ խնամութիւն ըրաւ . անոր համար երբոր տարեգարձին Յովսափատ իրեն գնացեր էր , Աքաաք մեծ պատուով ընդունեցաւ զինքը . և ան օրերը Ասորւոց դէմ պատերազմ ունենալով՝ հետը կանչեց . ինքն ալ սիրով գնաց , թէպէտ մարգարէի հարցուցին ու խմացան որ Աստուած իրենց հետ չէ : Պատերազմին ատենը Աքաաք իր լաթերը Յովսափատայ հագցուց որ ինքը չճանչցուելով կարենայ հանդիստ պատերազմիլ . անոր համար թշնամիք Յովսափատայ վրան վաղեցին՝ Աքաաքը կարծելով ու մեռցրնել կ'ուզէին . բայց Աստուած հրաշքով վերկեց՝ զինքը սիրելուն համար . ու ետքն որ Երուսաղէմ դարձաւ՝ Յէռու մարգարէն Աստուծոյ կողմանէ զինքը յանդիմանեց թէ ինչո՞ւ Աստուծոյ թշնամւոյն հետ բարեկամութիւն կ'ընէ : Յովսափատ զղջումի գալով՝ նորէն ետէ էր որ աստուած պաշտութիւնը ծաղկեցրնէ :

Հ . Յովսափատ ինչ երևելի պատերազմ ըրաւ .

Պ . Անգամ մը Ամոնացիք ու Մովաբացիք՝ Միւնեյիք ալ մէկտեղ Յովսափատայ վրայ ելան : Յովսափատ աղօթքով ու պաքով երբոր Աստուծոյ օգնութիւնը կը խնդրէր , Ողիէլ զևտային Աստուծմէ շարժած՝ « Գնացէք , ըսաւ , չէ թէ պատերազմելու , հասլա տեսնելու թէ Աստուած ձեր տեղը ինչպէս կը պատերազմի անոնց հետ » : Ասով յորդորուած գնացին մօտեցան , տեսնեն

որ ան իրեք աղղը մէկզմէկ կը ջարդեն, ինչուան
որ հատան: Ետքը իրեք մտան պատերազմին
անդն ու իրեք օրուան մէջ հազիւ կրցան ժողվել
անոնց կողոսպուաները:

Հ. Յովսափաատ ամենեկին Աստուծոյ դէմ բան
չըրան.

Պ. Յովսափաատայ յանցանքն եղաւ միայն առ
իննամուծիւնն ու բարեկամուծիւնը որ ըրաւ ա-
ռաջ Ա. քաարու հետ, ետքն ալ անոր տղուն Ա. քո-
ղիայի հետ. անոր համար կորսընցուց ան նաւերն
որ Ա. քողիային նաւերուն հետ մէկտեղ Սովփեր
խրկեր էր՝ ոսկի բերելու համար: Քսանուհինգ
տարի թագաւորելէն ետքը մեռաւ:

Հ. Յովսափաատէն ետև ո՞վ նստաւ.

Պ. Յովսափ անոր անդրանիկը: Ասոր կիներ Գո
թողիա՝ Ա. քաարին աղջիկն ըլլալուն՝ ինքն ալ Իս-
րայէլացուց թագաւորներուն ճամբան բռնեց:
Նախ իր վեց եղբարքը մեռուց՝ ու կնոջը յորդո-
րանքովն սկսաւ կռատաշատուծիւն ընել: Անոր
համար Աստուած ալ թողուց որ հարկատու աղ-
գերն իրմէ գլուխ քաշեն. և երբոր վրանին պա-
տերազմի ելաւ, յաղթուեցաւ ու շատ անգիր
կորսընցուց: Ետքը Եղիա մարգարէէն ալ իրեն
թուղթ մը եկաւ որ ըրած գէշուծիւններն երեսը
կը զարնէր ու կը սպառնար որ ինքը փորհարու-
ծեամբ չարաչար տանջուելով մեռնի, և իր ընտա-
նիքն՝ այլազգիները յափշտակեն: Երեսունեկը-
կու տարուան էր երբոր թագաւոր նստաւ, ու
քառասուն տարուան՝ ամէն խոստացուած պա-
տիժները վրան գալէն ետքը՝ բոլոր աղիքը դուրս
թափելով մեռաւ. և անարգանքով թաղեցին զին-
քը թագաւորներուն գերեզմանէն դուրս տեղ մը:

Որոգիա, Յոյսաւ .

Հ . Յովրամին յաջորդն ո՞վ եղաւ .

Պ . Ոքոզիա՝ որ մինակ ազատեր էր թշնամեաց ձեռքէն . քանուերկու տարուան էր՝ երբոր հայրը մեռաւ : Ասիկայ իր մօրը Գոթողիայի խրատով սաստիկ կռապաշտութեան ետէ կղաւ . անոր համար՝ մէկ տարիէն երբոր Իսրայէլացւոց Յովրամ թագաւորին հետ Ասորւոց դէմ պատերազմի գնացեր էր, ու դարձեր Յովրամին քովը կեցեր էր՝ Յովրամ վերաւորուած հիւանդ ըլլալուն համար, ան ատենն որ Յէու Աքաարի տունը կը ջնջէր՝ ղինքն ալ հոն դաւա՛ստաննեց : Գոթողիան իմանալուն պէս՝ ինքն ալ ջարդել տուաւ բոլոր թագաւորութեան ժառանգներն ու տեղն ինքը նստաւ . բայց Յովսաբէ թ Ոքոզիայի քոյրը՝ Յովիգայէ քահանայապետին կինը՝ Ոքոզիայի պղտի տղան Յովամն որ մէկ տարուան էր՝ պահեց տաճարին մէջը վեց տարի :

Հ . Յովամն ի՞նչ կերպով նստաւ իր հօրը աթոռը .

Պ . Երբոր եօթը տարուան եղաւ՝ Յովիգայէ ծածուկ կերպով իմացուց բոլոր Յուդայի մեծերուն . և որ մը մէկտեղ տաճարը ժողովեց ղիրենք ու հոն Յովասին գլուխը թագ դրաւ՝ օծեց . և ամէնքն ալ ծափ զարնելով ցնծումով սկսան Վեօթեաբայ կանչել : Գոթողիա լսելով ժողովոցոց իրար անցնիլը, իր մարդիկներովը տաճարը վաղեց, տեսաւ թագաւորն ու անոր քովը շարուած իշխանները, բոլոր ժողովուրդն ալ խնտուով մէջ, կատղեցաւ՝ վրայի լաթերը պատռեց, սկսաւ կանչուրաւել թէ « Դաւաճանութիւն է զաւաճանու-

Թիւն » : Ան առեն Յովիգայէն հրամայեց որ մէկէն տաճարէն դուրս հանեն Գոթոյիան ու մեռցնեն : Ետև Թագաւորին ու իշխաններուն Աստուծոյ հետ դաշինք ընել տուաւ որ Աստուծոյ օրինացը յարմարցնեն ամէն բան . ուստի շուտ մը բոլոր Յուդայի երկրէն կառապաշտական բաները վերուցին : Ետքը Յովաս Աստուծոյ տաճարն ալ նորոգեց՝ գանձանակով ստակ ժողովելով, ու ամէն բան նորոգուելէն ետքը, աւելցած ստակով ալ հարկաւոր զգեսաներ՝ գործիքներ ու զարդեր շինեցին :

Հ . Յովաս ինչուան վերջը մնաց աստուածապաշտ .

Պ . Երբոր Յովիգայէ հարիւր երեսուն տարուան մեռաւ, Յովաս ալ իր իշխաններուն խորհրդով կառապաշտութիւն սկսաւ . Աստուած մարգարէներ խրկեց, մտիկ չըրին : Զաքարիա Յովիգայեաց օրգին՝ Աստուծոյ հոգւով վառուած երբոր զիրենք յանգիստանեց, Յովասի հրամանաւը քարկոծեցին զինքը, որ մեռնելու առեն « Աստուած անսնէ, ըսաւ, դատաստանդ » : Անոր համար երկրորդ տարին թոյլ տուաւ Աստուած որ Ասորիները քիչ զօրքով եկան՝ յաղթեցին, Թագաւորական գանձը կողոսկաւցին տարին : Ետքը Յովաս աս բաներուս վրայ նեղանալով հիւանդացած պառկեր էր . իրեն ծառաներէն քանի մը հոգի մէկ եղած՝ մահճին մէջը մօրթեցին զինքը՝ քառասուն տարի Թագաւորելէն ետև :

Ամասիա .

Հ . Յովասէն ետքը ո՞վ նստաւ .

Պ . Ամասիա իր օրգին քսանեհինգ տարուան .

իր հայրը մեռցրնողներն սպաննեց . և ինքն ալ առջի բերանը բարեպաշտութիւն ցրցուց : Եզոմայեցիք որ ապստամբեր էին՝ ուզեց նորէն իր տակն առնել՝ և իրեն զօրքը հերիք չսեպելով՝ Իսրայէլացւոցմէ հարիւր հազար զօրք վարձեց՝ հարիւր տաղանդ արծաթով : Ան առնն մարդարէ մը Աստուծոյ կողմանէ ըսաւ իրեն . « Թէ որ կ'ուզես յաղթութիւն ընել՝ ան Իսրայէլացիքը ետ ճամբէ » : Ամասիան ալ « Հասցա առած ստակս մեղք չէ » ըսաւ . մարդարէն՝ « Մի վախեր , ըսաւ , Աստուած անոր տեղը քեզի ալ շատը կուտայ » : Երբոր Ամասիան հնազանդեցաւ ու մինակ իրէք հարիւր հազար զօրքովը գնաց , Եզոմայեցւոցմէ տասը հազարը ջարդեց , տասը հազար ալ գերի առաւ ու զամէնքն ալ բարձր ժայռէ մը վար ձգելով սպաննեց :

Հ . Ամասիան ինչ պատճառով իր առջի աստուածապաշտութենէն ետ կեցաւ .

Պ . Եզոմայեցւոց յաղթելէն ետքը՝ կուռքերն ինն Երուսաղէմ բերաւ ու սկսաւ պաշտել . և երբոր Աստուծոյ կողմանէ մարդարէն զինքը խրատեց՝ Ամասիա սրգողելով « Թէ որ ըսաւ , մէյմ' ալ բերանդ բանաս կը մեռցրնեմ » : Անոր համար Աստուծոյ երեսէն խնալով երբոր հպարտութեամբ Իսրայէլացւոց Յովտա Թագաւորին դէմ ելաւ , Յովտա զինքը բռնեց , ու Երուսաղէմի սարխապները փլուց , բոլոր ոսկին արծաթն ալ կողոպտեց տարաւ : Ետեւ Ամասիայի զօրքն ալ գլուխ քաշեցին , ինքն ալ Լաքիա քաղաքը փախաւ , գնացին սպաննեցին զինքը՝ քսանեկինը տարի Թագաւորելէն վերջը , ու բերին Երուսաղէմ Թաղեցին :

Հ . Ամասիային ետեէն ո՞վ Թագաւորեց .

Պ . Ողիա կամ Ազարիա անոր որդին տասնուվեց տարուան : Աստուածապաշտութեամբ Թա-

զարուեց յիսուսուերկու տարի, ամէն թշնամի-
ներու յաղթեց, Երուսաղէմի պարիսպները նս-
րողեց, ուրիշ քաղաքներ ալ շինեց, երկրագոր-
ծութիւնը ծաղկեցուց, զօրքերուն կարգ կանոն
դրաւ. անանկ որ ինչուան հետու աշխարհքներ
իր անունէն կը վախէին. անոր համար հպարտա-
ցաւ՝ ուզեց որ ինքը քահանայութիւն ալ ընէ :
Ուստի որ մը բուրվառն առած տաճարն որ մտաւ,
քահանաներն արգիլեցին « Քեզի չվայլեր » ըսե-
լով: Երբոր Ողիա սրդողելով արհամարհեց զա-
նոնք, հան մէկէն բորոտեցաւ ու ահով գողով
դուրս ելաւ, եւ դնաց քաշուեցաւ իր տունն ին-
չուան մահը, իր տեղը Յովաթամ որդին թագա-
ւոր դնելով:

Հ. Ողիային մեռնէ քն ետև Յովաթամ մնաց իր
թագաւորութեանը մէջ.

Պ. Աստուածպաշտութեան և թագաւորու-
թեան մէջ հաստատուած՝ խաղաղութեամբ ա-
ռաջնորդեց ինչուան մահը: Ամոնացւոց հետ պա-
տերազմեցաւ ու զանոնք հարկատու ըրաւ: Աս-
տուած գրգռեց Փակէէ որդի Ռովմելան՝ Իսրայէ-
լացւոց թագաւորը՝ ու Ռասոն Ասորւոց թագա-
ւորն որ Յուդայի տէրութեան վրայ ելլեն՝ ժողո-
վըրդեան անկարգութեանը համար. քայց պատե-
րազմը չըսկաած Յովաթամ մեռաւ՝ քառսուսուեր-
կու տարուան, տասնուվեց տարի թագաւորելէն
ետև:

Հ. Յովաթամէն ետքն ո՞վ թագաւորեց.

Պ. Ա. քաղ անոր տղան՝ քսան տարուան: Կըս-
տելուն պէս սկսաւ կռապաշտութիւն ընել, ին-
չուան իր տղաքն ալ կուռքերու կը զոհէր: Ուստի
նախ Ասորւոց Ռասոն թագաւորն եկաւ աղէկ
մը ջարդեց, շատ մարդ գերի տարաւ. ետքը Իս-
րայէլացւոց Փակէէ թագաւորը մէկ օրուան մէջ
հարիւր քսան հազար մարդ ջարդեց, ու իրեք հա-

ըիւր հազար կին դերի տարաւ : Բայց Ա. քաղ ա-
սոնցմով չզգաստայաւ ու թշնամիներէն շատ նեղա-
նալով, ամէն տաճարին հարստութիւնն ու իր գան-
ձը Ասորեստանի Թագաւորութիւնը տար թագաւորին
խրկեց որ իրեն օգնէ : Ան ալ եկաւ յաղթեց մե-
կաշնոնց, ու Ա. քաղն իրեն հարկատու ըրաւ . Ա.
քաղ գնաց Դամասկոս՝ զինքը բարեւելու . և կար-
ծելով թէ Ասորիք որ կը յաղթեն՝ անոնց աստուածն
է զօրաւոր, անոնց կուսքին սեղանին նմանը տա-
ճարին մէջ շինել տուաւ ու վրան ողջակէզ կ'ը-
նէր, տաճարին շատ բաներն ալ փոխեց, ետքը բո-
լորովին ալ դոցեց տաճարը, ու ըիչ ամէն տեղ կուս-
տուններ շինել տալով. տասնութեց տարիէն մեռաւ :

Եզեկիա, Մանաս.

Հ. Ա. քաղէն ետքը թագաւորութիւնը որո՞ւ
անցաւ .

Պ. Եզեկիային՝ որ քանուհինգ տարուան էր,
Գաւթի պէս բարեպաշտ ու աստուածասէր . ա-
մէն աստուածապաշտութեան կարգերը նորէն հաս-
տատեց, և մարդիկ խրկեց՝ բոլոր Դարայէլացիքը
յորդորելու, որով շատերն սկսան կուսապաշտու-
թենէ կա կենալ ու տօնախմբութեան համար
զատկին Երուսաղէմ եկան . թէպէտ շատն ալ
ծաղը կ'ընէին զանոնք : Ասանկով առջի տարին մեծ
զատկի տօնախմբութիւն ըրաւ, երկու հազար
կով տասնեութը հազար ալ ոչխար զոհ ընելով :
Սողոմոնէն ետքը ասանկ մեծ հանդէս չէր եղած :
Աստուած ալ իրեն յաջողութիւն տուաւ որ բո-
լոր թշնամիներուն յաղթեց ու տէրութեան սահ-
մանը մեծցուց :

Հ. Եղեկիան Ասորեստանցւոց ինչպէս կրցաւ
յաղթել ու տուրք չտալ .

Պ. Ամէն քովի ազգերուն յաղթելէն ետքը Ա-
սորեստանցւոց տուրք տալն ալ դադրեցուց : Անոր
համար թագաւորութեանը տասնըչորրորդ տարին
Սենեքերիս թագաւորը սասաիկ ուժով քաղաք-
ներ առնելով եկաւ ինչուան Աքքիս քաղաքը : Ե-
ղեկիս վախցաւ ու շատ ոսկի արծաթ խրկեց իրեն
որ հաշտուի ու ետ դառնայ . բայց Սենեքերիս
մտիկ չընելով Երուսաղէմ խրկեց Ռափաակ զօրա-
պետն որ եկաւ պաշարեց քաղաքն ու Սենեքերի-
սին բերնէն Աստուծոյ գէմ հայհոյութիւններ խօ-
սեցաւ . « Ես ամէն տատուածներուն կը յաղթեմ »
ըսելով : Եղեկիս քուրձ հագած գնաց տաճարը ,
ինկաւ Աստուծոյ առջին սկսաւ աղօթք ընել . Ե-
սայի մարգարէին ալ մարդ խրկեց ըսաւ որ ինքն
ալ Աստուծոյ աղաչէ Երուսաղէմին համար : Ե-
սայի մարգարէն պատասխան տուաւ որ չվախէ ,
վասն զի Աստուած Սենեքերիսը ամօթով իր տե-
ղը դարձրնէ պիտի : Եւ ան գիշերը հրեշտակ մը
Սենեքերիսին բանակին մէջէն հարիւր ութսունու-
հինգ հազար հողի սպաննեց : Սենեքերիս առաւօ-
տանց սարսափելով թողուց փախաւ՝ Նինուէ գը-
նաց : Հոն ալ իր երկու որդիքն իմանալով որ կուռ-
քը հաշտեցընելու համար՝ զերենք զոհ ընել կ'ու-
զէ , զինքն սպաննեցին ու իրենք հայաստան փա-
խան :

Հ. Եղեկիս միշտ մնաց իր աղէկութեանը մէջ .

Պ. Անգամ մը սասաիկ հիւանդացաւ , անանկ
որ Եսայի մարգարէն ալ ըսաւ թէ « Պիտի մեռ-
նիս » . բայց աղաչանքովը Աստուած տանուհինդ
տարի ալ կեանքն երկընցուց ու ամէն յաջողու-
թիւն խոստացաւ իրեն : Աս բաներուս նշան ալ
տուաւ որ Աքքաղու ըսուած արևի ժամացուցին
չուքը հրաշքով տասը աստիճան ետ շարժի : Ասան-

կով Եղեկիա առողջանալէն ետև Աստուծոյ շնորհակալ եղաւ, բայց ետքը տեսնելով իրեն եղած յաջողութիւնները՝ հոգարտացաւ, ու Բաբելոնացոց թագաւորին աչքիլուսի համար խրկած մարդկանցը պարծենալով ցրցուց բոլոր իր հարստութիւնները: Անոր համար Աստուած ալ իրեն բարկացաւ, ու աղգն ալ իրենց անկարգութիւններուն համար կ'ուզէր պատժել. բայց Եղեկիա նորէն զղջալուն համար, թողուց Աստուած որ ինքը հանդիսա մեանի: Ասոր ալ շնորհակալ եղաւ Եղեկիա, ու քսանուինը տարի թագաւորելէն ետքը մեռաւ, և մեծ հանդէսով թաղուեցաւ:

Հ. Եղեկիայէն ետև ո՞վ նստաւ.

Պ. Մանասէ իր սրդին՝ տասուերկու տարուան. մէկէն կուռք պաշտել սկսաւ, ինչուան Աստուծոյ տաճարն ալ կռատուն ըրաւ, ու իր աղաքն ալ կը զոհէր, և ամէն անասկ կախարդութիւններու գէշութիւններու ետևէ եղաւ, և ով որ իրեն խրատ տար՝ կը սպաննէր. անոր համար զՆսայի մարգարէն ալ փայտէ սղոցով մէջքէն երկու կտոր ընելով սպաննեց: Աստուած ալ սպաննացաւ որ Խորայէլացոց պէս Յուդայի թագաւորութիւնն ալ ջնջէ. ուստի Ասորեստանի թագաւորն եկաւ առաւ Երուսաղէմը, ու Մանասէն շղթայի զարկաւ Բաբելոն տարաւ:

Հ. Մանասէն Բաբելոն գերի երթալէն ետքն ի՞նչ ըրաւ.

Պ. Հոն բանալին մէջք խելքը գլուխը ժողովեց՝ զղջումի եկաւ ու Տէր ամենակալ զղջման աղօթքն ըրաւ: Աստուած ալ իրեն ողորմեցաւ ու նորէն դարձուց իր աթոռն, որ բոլոր նորոգեց առջի աստուածապաշտութեան կարգերն, որ յիսուսուհինգ տարի թագաւորելէն ետքը մեռաւ:

Ամուսն, Յովսիա, Յովաքսագ, Եղիսակիս.

Հ. Մանասէին յաջորդն ո՞վ է.

Պ. Ամսն իրեն աղան քանուերկու տարի թագաւոր նստաւ, ու նորէն կապաւաշտութիւն ընել սկսաւ: Աստուած ալ թողուց որ թագաւորութեանը տասուերկուերորդ տարին՝ ծառաները ղինքը տանը մէջ սպաննեցին:

Հ. Ամսնէն ետև ո՞վ նստաւ.

Պ. Ժողովուրդը ղինքը մեռցրնողներն սպաննեցին, ու անոր Յովսիա որդին ութը տարուան թագաւոր դրին. որ իր բարեպաշտութեամբը ամէն կապաւաշտական բաները վերուց մաքրեց, պարտեցաւ չորս ղին Նարայէլացուց երկիրները, կուռքերը կործանեց, քուրմերուն սակորները հանեց այրեց իրենց սեղանին վրայ, ու Յերոբոամայ ատեն եղած մարգարէութիւնը կատարեց: Տաճարը նորոգելու ատեն օրինաց գիրք մը գտան. երբոր լսեց թագաւորը մէջի օրէնքներն ու չարահոյներուն պատիժները, սրտին կակիծէն լաթերը պատռեց, ու մարդ խրկեց Ողգան անունով կին մարգարէի մը հարցուց, թէ իրենց բանը ի՞նչպէս պիտի ըլլայ: Մարգարէն ըսաւ թէ « Պիտի դան ան պատիժները, բայց թագաւորին բարեպաշտութեանը համար իր օրը պիտի չըլլայ »: Ասոր վրայ Յովսիա նորէն ժողովուրդը յորգորեց ու ամէն կարելի եղած ջանքն ըրաւ որ Աստուծոյ բարկութիւնը դադրեցրնէ, փառաւոր դատիկ մըն ալ ըրաւ՝ ամէն օրէնքներուն ապրսպրածին պէս, որուն նմանը չէր եղած:

Հ. Յովսիան իր բարեպաշտութեամբը կրցաւ Աստուծոյ բարկութիւնն իջեցրնել.

Պ . Չէ . վասն զի ալ Իսրայէլացւոց մեղաց չափը լցուած էր . անոր համար Աստուած Յովսիայի թող տուաւ որ ինքիւնն պատերազմ բանայ Եգիպտացւոց Նեքաւով թագաւորին դէմ , երբոր անիկայ Ասորեասանցւոց վրայ պատերազմի կ'երթար . ու հոն պատերազմին մէջ Յովսիա նետով մը չարաչար զարնուեցաւ՝ ու մեռաւ : Եւ իրեն մահուանը վրայ սասախի սուգ մտան ամէնքը . Երեմիա մարգարէն ալ ողբ շինեց :

Հ . Յովսիային ետեւէն ո՞վ նստաւ :

Պ . Յովաքազ իրեն որդին քսանուիրէք տարուան , որ նստելուն պէս նորէն սկսաւ կռապաշտութիւն ընել . բայց իրէք ամիսէն Նեքաւով թագաւորը՝ Ասորւոց պատերազմէն դառնալու ատեն Երուսաղէմ եկաւ՝ զինքը շղթաներով կապած Եգիպտոս տարաւ , որ հոն մեռաւ . եւ տեղը թագաւոր դրաւ անոր մեծ եղբայրն Եղիակիմը՝ տասներհինգ տարուան , վրան ծանր աուրքեր դնելով . անուէնն ալ փոխեց Յովակիմ դրաւ :

Հ . Եղիակիմի կռապաշտութիւնը ի՞նչպէս էր .

Պ . Իր Յովաքազ եղբորմէն ալ գէշ էր բնած ճամբան , թէպէտ Երեմիա մարգարէն զինքը միշտ կը խրատէր : Ուստի չորս տարիէն Բաբելոնացւոց Նաբուգոդոնոսոր թագաւորն եկաւ նորէն Երուսաղէմն առաւ , ու Յովակիմ թագաւորը շղթաներով կապած՝ Բաբելոն տարաւ , և քիչ ատենէն վրան ծանր աուրք դրած՝ անանկ թող տուաւ : Յովակիմ մէկ քանի տարիէն ետքը Նաբուգոդոնոսորէն դարձեալ ապստամբեցաւ . ան ատենը նորէն վրան եկան Բաբելոնացիքն ու երկար ատեն պատերազմ ընելով , Երուսաղէմն առին կողոպտեցին , ու Յովակիմ թագաւորն ալ տասներմէկ տարի թագաւորելէն ետքը՝ չարաչար սպաննեցին :

Յեքոնիս , Սեղեկիս .

Հ . Եղևակիմին յաջորդն ով եղաւ .

Պ . Իրեն որդին Յեքոնիս՝ որ Յովակիմ ալ կ'ըսուէր՝ աասնեութիւն տարուան . հօրը նման գէշ : Ուստի իրեք ամսէն նորէն եկաւ Նաբուգոդոնոսոր՝ Երուսաղէմը սլաշարեց առաւ , մնացած ոսկին ու արծաթը կողոսպեց . և թագաւորն ալ իր իշխաններովն և ուրիշ հազարաւոր գերիներով Բաբելոն տարաւ , մնացածներուն վրայ ալ իրեն ձեռքին տակը թագաւոր դրաւ Սեղեկիան՝ Յովսիս թագաւորին պզտի տղան քսանութիւն տարուան :

Հ . Սեղեկիան ի՞նչ ճամբայ բռնեց .

Պ . Սեղեկիան իր եղբայրներէն ալ գէշ եղաւ . Ժողովուրդը բոլորովին վարժեցուց կաապաշտութեան , որ մարդարէները համարձակ ծաղը ընել սկսան : Ուստի Աստուծոյ թոյլ տալովը Նաբուգոդոնոսորէն գլուխ քաշեցին . ան ալ անհամար զօրքով նորէն հրէաստան եկաւ . առաջ Եգիպտացւոյ յաղթեց՝ որ հրէից օգնութիւն եկեր էին , ետքը գնաց Երուսաղէմի վրայ և երկու տարի սլաշարելով զիրենք չարչարելէն ետեւ պարսպին մէկ կողմը փլուց՝ ներս մտաւ , մեծ ջարդ տուաւ . Սեղեկիս թագաւորն ալ քաղքէն դուրս փախչելու ատեն զինուորները բռնեցին , Նաբուգոդոնոսորի առջև տարին , որ ան ալ իրեն ըրած երգմնազանցութիւնն երեսը զարնելով՝ հոն իրեն տղաքն ու մեծամեծ իշխաններն աչքին առջևն սպաննել առաւ . ետքը իրեն երկու աչքն ալ հանեց ու զինքը շղթաներով Բաբելոն տարաւ :

Հ Սեդեկիայի գերուելէն ետև Երուսաղեմին ուլ իշխեց .

Պ . 'Նաբուզարդան 'Նաբուգոդոնոսորի դահճապեան եկաւ՝ Աստուծոյ տաճարն ու թագաւորին պալատը կողոստեց ու կրակի տուաւ . քաղքին պարիսպներն ալ փլուց , ու բոլոր մեծամեծները Բաբելոն գերի տարաւ , թողլով միայն աղքատներն ու երկրագործները , և անոնց վրայ 'Նաբուգոդոնոսորի հրամանովը Հրէից ազգէն Գոթոլիա որդի Աքիկամայ իշխանը վերակացու դրաւ :

Հ . Գոթոլիայի իշխանութիւնը որչափ ատեն քշեց .

Պ . Խիստ քիչ . վասն զի Իսմայէլ որդի 'Նաթանայ Յուդայի թագաւորական ցեղէն մէկը , խաբէութեամբ սպաննեց զինքն ու փախաւ Ամոնացւոց թագաւորին քով՝ որդի Վարէին Յովնաթանայ ձեռքէն՝ որ զօրքով ետեէն ինկեր էր զինքը մեռցրնելու համար :

Հ . Գոթոլիայէն ետև մնացած Երուսաղեմի ժողովրդեան ուլ իշխեց .

Պ . Յովնաթան Վարէի որդին , բայց վախնալով Քաղզէացիներէն՝ ժողովուրդը հեան առած Եգիպտոս փախաւ , և հոն Աստուած պատժեց զերեւք . վասն զի Երեմիա մարգարէն Աստուծոյ կողմանէ ըսեր էր որ չվախէ Քաղզէացիներէն ու չերթայ :

Հ . Բոլորովին Հրէից իշխանութիւնը վերնալէն ետքը չկրցան նորէն վրայ գալ ու առջի փառքը պատիւն ունենալ .

Պ . Եօթանասուն տարի անանկ երեսի վրայ մնալէն ետքը , նորէն ողորմեցաւ Աստուած . բայց առջինին պէս բոլորովին ազատ չկրցան ըլլալ :

Հ . Երբոր Հրեայք բոլորովին իշխանութիւնը կորուսին ու ասդիս անդին ցրուեցան , մէջերնին չհանդիպեցաւ յիշատակի արժանի գործքեր .

Պ. Հանդիպեցաւ, որոնք տեղն 'ի տեղ Բարե-
լացւոց գերութեան մասին մէջ գրած է. և են
ասոնք. Պատմութիւն Տօբիթայ, Յուդիթայ, Ես-
թերայ, և Երեք մանկանց. ասոնցմէ զամ կայ
'նակ առանձին մարգարէներուն պատմութիւնը:

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Տ . Սամուէլ արգէն ղևտացի ըլլալովը՝ տապա-
նակին պէտք էր ծառայէր , հասցա մայրն ինչո՞ւ
մասնաւոր ուխտ ըրաւ որ զինքն Աստուծոյ նուիրէ :

Պ . Ղևտացիներուն Աստուծոյ ծառայելու պարտ-
քը կը սկսէր քսանըհինգ տարուան եղած ատեն-
նին . և երբոր յիսուն տարեկան կ'ըլլային՝ պարտ-
քէն կ'ազատէին . իսկ Սամուէլ պղտիկուց ինչուան
մահն ուխտաւոր Աստուծոյ եղաւ :

Տ . Աստուած ինչպէս առաջ Սաւուղին եր-
դումն ընդունեցաւ՝ յաղթութիւն տուաւ , ու ետքն
որ նորէն հարցուց՝ պատասխան չտուաւ .

Պ . Առջի յաղթութիւնը տուաւ՝ միաքը շխտակ
ըլլալուն համար . և թէպէտ ան հրամանը գիտնա-
լով արհամարհող մը չէր եղած , բայց ետքը Աս-
տուած սրդողելովն ու պատասխան չտալովն ուզեց
խմացրնել թէ անխոհեմ հրամանը՝ թէպէտ ան-
մեղութեամբ եղած՝ զգուշանալի է . վասն զի ինքն
սրտաճառ եղաւ որ բոլոր զօրքն իրեն հրամանին
գէմ տրանջացին , և իր տղան զինքը արհամար-
հեց . ետքը օրինաց գէմ ալ ընել սկսան՝ ոչխար-
ները գեանի վրայ մորթած արիւնոտ ուտելով :

Տ . Յովնաթանին մեղը ուտելը յանցանք չէր .

Պ . Չէ . բայց իր հօրը հրամանին չհաւնիլ ցու-
ցրնելն աղէկ բան չէր :

Տ . Երբոր Սաւուղ Մեղայ ըսաւ , Սամուէլ
ինչո՞ւ մտիկ չըրաւ .

Պ . Վասն զի սրտանց չէր զղջումը , հասցա մի-
նակ վախէն՝ որ չըլլայ թէ թագաւորութենէն զըր-
կուի , և ժողովրդեան աչքէն ելլէ :

Ն . Ի՞նչպէս կ'ըլլար որ Գաւթի քնար զարնելու վը Սաւուղայ դիւահարութիւնը կը հանդարտէր .

Պ . Որովհետեւ սատանան մարդուն սիրար նոր կիրք չկրնար խօթել, հասար բնական ունեցած կիրքը Աստուծոյ թոյլ տալովը կը սաստկացընէ . անոր համար սատանան Սաւուղայ վրայ տիրելէն ետքը՝ երբոր Սաւուղ բնութեամբ քիչ մը այլայլութիւն կ'իմանար, նոյն այլայլութիւնը սատանան ուղածին պէս կը սաստկացընէր . ուստի դըրսուանց ալ բնական հիւանդութիւն կ'երևնար . երբոր քնար կը զարնէին՝ բնական կիրքը կ'իջնէր, սատանան ալ կը թողուր զինքը :

Ն . Սաւուղին Գաւթիթը բռնելու համար Նաւթիթհաւամա խրկած մարդիկն և ինքը, ի՞նչպէս կը մարդարեանային .

Պ . Մարդարեանալ բառը կը նշանակէ երբեմն երգել, զԱստուած օրհնել : Երբոր անոնք մարդարէներուն քովը կ'երթային, Աստուած մտքերնին անանկ կը փոխէր որ ամէն բան կը մոռնային՝ կը սկսէին անոնց հետ երգել : Անով Աստուած Գաւթի փախչելու ատեն տուաւ :

Ն . Գաւթիթ իրաւունք ունէր Նաբաղը անով տեղով սպաննելու .

Պ . Մինակ զինքն ալ սպաննելու իրաւունք չունէր . վասն զի գեռ իրեն թագաւոր ըլլալը չէր հրատարակուած, և Նաբաղը սպարաք չունէր իրեն բան տալու . միայն թէ Գաւթի ըրած եղբայրսիրութեանը պէտք էր շնորհակալ ըլլալ ու քիչ մը բան տալ, չէ թէ անարգել զինքը : Բայց Գաւթիթ զինուորական տաքութեամբ սխալեցաւ, անոր համար կիրքն իջածին պէս ճանչցաւ որ աղէկ չէր ըրածն, ու փառք տուաւ Աստուծոյ :

Ն . Գաւթիթ ի՞նչպէս յանձն առաւ Անքուսայ հետ Իսրայէլացւոց վրայ սրատերազմի երթալ .

Պ . Թէպէտ աստուածաշունչը յայանի պատ-

Ճատը չըսեր, բայց Դաւիթի ուրիշ գործքերէն յայտնի է որ Աստուծոյ հարցուց, Աստուած՝ Գնա՛, ըսաւ, իմացընեւում թէ ինքն ուզէր է որ այլազգիք Իսրայէլացւոյ վրայ ելլեն. և թէ որ թողուին իշխանները, Դաւիթ Աստուծոյ հրամանին հնազանդեւում պիտի պատերազմէր Իսրայէլացւոյ դէմ:

Հ. Ահուկ կնոջ կախարդութեամբն ինչպէս երեցաւ Սամուէլ Սաւուղին.

Պ. Ահուկն իր արհեստը չբանեցուցած Աստուած ցրցուց Սամուէլն որ Սաւուղը յանդիմանէ. և վհուկը տեսնելով որ դեռ ինքը բան մը չըրած՝ երեցաւ, շատ վախցաւ: Իսկ Սամուէլ՝ « Ինչո՞ւ զիս անհանգիստ ըրիր » ըսելովն, իմացընեւ կ'ուզէր թէ Աստուծոյ ոտքն իյնալով ապաշխարելու տեղ՝ ատանկ վհուկի ձեռքովը զինքը փրկուաւր Սաւուղին օգուտ մը չընելէն ետքը մնաս ալ ըրաւ:

Հ. Դաւիթ ինչո՞ւ այնչափ լացաւ Աբիսողոմին մահուանը վրայ.

Պ. Հոգւոյն կորսուելուն համար. գիանալով թէ իր մեղքը պատժելու համար Աստուած թողուց որ Աբիսողոմ իրմէ ապստամբի. անոր համար Դաւիթ կ'ուզէր որ զինքը յորդորելով դարձի բերէր:

Հ. Սաղմօսը երբ դրեց Դաւիթ.

Պ. Այլ և այլ ասեն կատր կատր. վասն զի երևելի գիտուած մը ըլլալուն պէս՝ Աստուծոյ գովասանք կը շինէր ու քնարովը կ'երգէր. թէպէտ Սաղմօսին մէջ ետքի մարդարէներուն և երգիչներուն շարագրածներն ալ կան:

Հ . Ի՛նչպէս կրնայ ըլլալ որ Սողոմոնին պէս խմաստուն մարդ աշխարհք գեռ չէ եկած և պիտի չգայ .

Պ . Սողոմոնին խմաստութիւնը որովհետև գերբնական չէր՝ բնական էր , անոր համար սովորական մարդկանց հետ բաղդատելով իրեն նմանը պիտի չըլլայ . բայց Ադամայ՝ մարդարէից՝ առաքելոց եւ ուրիշ սուրբերու , ևս առաւել Յիսուսի և Աստուածածնայ խմաստութիւնը բնականէն վեր է . անոնց հետ չբաղդատուիր :

Հ . Սողոմոն խմաստունն ի՛նչ գիրք շինեց .

Պ . Առական գիրքը՝ որ կարճ կարճ խրատներ են . Ժողովօղը՝ աշխարհքիս ունայնութեանն ու մարդուս ճշմարիտ վախճանին վրայ . Երգ երգոց ըսուած խորհրդաւոր գիրքը և խմաստութիւն : Ուրիշ գրքեր ալ գրեր էր՝ բնական գիտութիւններու վրայ , բայց հիմա չեն գտնուիր . ու կարծիք է որ Եզեկիա Թագաւորն այրած ըլլայ դանոնք՝ Ժողովրդեան վնասակար սեպելով :

Հ . Սողոմոն իր մեղքերն ապաշխարեց .

Պ . Ապաշխարած ըլլալուն մեծ նշան է Ժողովօղին գիրքը . բայց սուրբ գրքին անոր փրկութիւնն անորոշ Թողուլը՝ յայանի կը ցուցնէ Աստուծոյ դատաստանին ահաւորութիւնը :

Հ . Յերթըրովամին միաքն ուսկից ինկաւ հորթ պաշտելը .

Պ . Մէյսը որ լսեր էր թէ Իսրայէլացիք անաստանն մէջը հորթ պաշտեր էին . մէյսըն ալ ինքն առաջ Եգիպտոս փախած ըլլալով տեսեր էր Եգիպտոսացոց կով պաշտելն ու անոնց կարգերը :

Հ . Եղևան ինչո՞ւ կրակով պատժեց երկու յիսնասպեաները .

Պ • Ասան զի ծաղր ընելով՝ Մարգ Աստուծոյ
կ'ըսէին իրեն, ու հպարտ կերպով մը կը հրամայ-
էին որ ելլէ գայ :

Հ • Երբոր Յովրամ պատերազմին համար Եղի-
սէին հարցուց, ինչո՞ւ Եղիսէ քնար զարնել առաւ՝
պատասխան ապէն առաջ •

Պ • Ասան զի հողին սուրբ խաղաղ սիրտ կ'ու-
ղէ : Եղիսէն ան ատենը նեղացած ըլլալով Յովրա-
մոյ ըրած գէշութիւններուն համար, քնար ու-
ղեց որ հանդարտ սրտով կարենայ Աստուծոյ խոր-
հուրդները մտածել :

Հ • Եղիան որ դեռ Յովսափատ չմեռած վերա-
ցեր էր, ինչպէս թուղթ գրեց անոր որդւոյն Յով-
րամ թագաւորին •

Պ • Կ'երենայ որ գրախառն գրեց ու մարդա-
րէի մը կամ ուրիշ բարեպաշտ մարդու մը յայտ-
նուելով առաւ թուղթը՝ Յովրամին խրկեց :

Հ • Հրէից թագաւորներուն պատմութիւնն
ո՞ւր կը պատմուի •

Պ • Թագաւորութեանց ըստած չորս կտոր գրե-
րուն, ու երկու Մնացորդաց գրքերուն մէջ, որ
ատեն ատեն այլ և այլ մարգարէներէ գրուած են :

Գ Ե Ր Ո Ի Թ Ե Ա Ն Ա Տ Ե Ն Ը

Ի Ն Չ Ո Ի Ա Ն Ք Ր Ի Ս Տ Ո Ս

88

Տոբիր .

Հ . Տոբիթ ով է .

Պ . Նեփթաղիմի ցեղէն՝ Թեղբուէ քաղքէն բարեպաշտ մարդ մըն էր Իսրայէլացւոց տասը ցեղին վերջի կռապաշտ թագաւորներուն ատեն, որ ամէն օրէնքնէրը կը պահէր, ու ատենին Երուսաղէմի տաճարը կ'երթար : Երբոր Սաղմանասար Իսրայէլացւոց տասը ցեղը գերի տարաւ, Տոբիթ ալ մեկտեղ գնաց իր Աննա կնիկուին ու Տուբիա տղուն հետ : Հոն Ասուածոյ օրհնութեամբը առանկ սիրելի եղաւ Սաղմանասար թագաւորին՝ որ կ'երթար կուգար, ինչուան որ մեռաւ Սաղմանասար :

Հ . Սաղմանասարայ մեռնելէն ետքը Տոբիթ ինչ գործքի հետ էր .

Պ . Երբոր Սաղմանասարայ տեղը Սենեքերիմ թագաւորեց ու Եզեկիայի պատերազմէն յալթուած դարձաւ, սիրան այրած ըլլալով՝ շատ Իսրայէլացի կը սպաննէր . Տոբիթ ալ գիշերանց ան մեռելները կը թաղէր : Թագաւորն իմացաւ ու Տոբիթն ալ սպաննել կ'ուզէր . ան ալ որ փախաւ,

բոլոր ունեցածները յափշտակեցին : Ետքը քիչ օրէն սպաննուեցաւ Սենեքերիս, և Տօբիթ նորէն դարձաւ : Օր մը երբոր իր ազգականներուն սեղան ըրեր էր՝ Տուբիան խրկեց որ եթէ իր ազգէն աղքատ մը գտնէ, սեղանի կանչէ : Տղան շուտ դարձաւ պատմեց թէ Իսրայէլացի մը մեռուցած՝ փողոցը ձգած է : Տօբիթ կերակուրը թողուց՝ գնաց ան մեռելը տուն բերաւ ու ետքը գիշերանց թաղեց . և օրինաց ըսածին պէս պիղծ սեպուելով, դուրսը պատին տակը հոգնած կանըկի վրայ ինկած քնացաւ՝ աչքը բաց . վերէն ճնճղուկները ծրտելու ասին Տօբիթի աչուրներուն երթալով՝ կուրցաւ . բայց ինքը՝ եղբայրսիրութեան համար ըլլալուն՝ սիրով կը համբերէր, եւ կնկանը մանածովը խեղճութեամբ կ'ապրէր :

Հ . Աննային մանածին ստակը թէ որ չօգտէր ապրելու, ինչ կ'ընէին .

Պ . Իրենք Աստուծոյ ապաւինած էին, Աստուած ալ զիրենք կը հոգար . ուստի Տօբիթ ան յուսով մեռնելու վիճակ ալ հասնէր, չէր ուղեր որ ապրուստ գտնելու համար անիրաւութիւն ընեն : Անոր համար, անգամ մը մանած գնողներուն մէկը այժու ձագ մը պարգև տուաւ Աննային . Տօբիթ կարծելով թէ գաղտուկ տեղէ մը ձեռք ձգեր է՝ սկսաւ հետը վիճել որ ետ տայ, ինչուան որ իրան խնացաւ : Ետքը տասնկ բաներով սիրան ելած՝ խնդրեց Աստուծմէ որ ազգին մեղացը թողութիւն տայ ու իր հոգին ալ անէ : Անոր համար սկսաւ Տուբիային կտակ ընել՝ աստուածապաշտութեան խրատներով . և միտքը դալով տասը քանգար ստակն որ Մարաց երկիրը Գաբայէլ ըսուած մարդուն փոխ տուեր էր, ապրուստըրեց որդւոյն որ անէ բերէ :

Հ . Տուբիան ուստի գիտէր Մարաց երկրին ճամբան և Գաբայէլին տունը .

Պ . Չէր գիտէր . անոր համար երբ հօրը հրամանաւ կ'երթար ընկեր մը գանելու , Ռափայէլ հրեշտակը կարիճ մարդու մը կերպարանքով գիմացն ելաւ ու ըսաւ թէ ինքը կը տանի : Երբոր Տօբիթի առջևն ելան , հարցուց որո՞ւն տղան ըլլալը . ան ալ ըսաւ թէ « Քու Անանիա բարեկամիդ տղան եմ՝ Ազարիան » : Աս որ լսեց՝ սիրով անոր յանձնեց Տուբիան որ երթան , խոստանալով իրեն վարձք օրը դրամ մը ու կերակուր :

Հ . Տուբիան Ռափայէլ հրեշտակին հետ ի՞նչ յաջողութեամբ ըրաւ իր ճամբորդութիւնը .

Պ . Մտքէ չանցած բարիքներուն հանդիպելով : Ասիս երբոր Եփրատ գետին քով հասան , ու Տուբիան քիչ մը լուացուիլ կ'ուզէր , մեծ ձուկ մը վրան վազեց . « Մի վախեր , ըսաւ հրեշտակը , բռնէ դուրս հանէ » . ան ալ դուրս քաշեց . ու հրեշտակը « Հանէ , ըսաւ , սիրար՝ լերդն ու լեղին պահէ » . ու ձուկն եփեցին կերան : Ետքը Եփրատան որ հասան , հրեշտակին խորհրդովն ան գիշերը Տուբիայի ազգականին հապուէլին տունն իջան , որ անոր Սառա աղջիկը Տուբիան իրեն առնէ . թէպէտ Տուբիան վախ կը ցուցընէր՝ ըսելով որ եօթը հոգի ան աղջիկն առնելու եղեր են , ու եօթն ալ առջի գիշերը մէկ դէ մը մեռուցեր է , չըլլայ թէ ինձի ալ անանկ պատահի : Բայց հրեշտակը սիրտ տուաւ և ապրսպրեց որ առջի գիշերը քիչ մը կրակով ան ձկան սիրան ու լերդը ծխէ , և հարսին հետ մէկտեղ աղօթք ընեն Աստուծոյ . ան հոռէն ըսաւ՝ դեր կը փախչի : Ետքը Հապուէլին հրեշտակը խօսք բացաւ աղջկանը համար . անոնք ալ սիրով յանձն առին , ու հարսնիքին գիշերը Տուբիան հրեշտակին ապրսպրածն ընելով երբոր ինաս մը չեղաւ , ամէնքը փառք տալով Աստուծոյ տասնուչորս օր հարսնիք ըրին : Եւ ան օրերը հրեշտակը գնաց Գարայէլի քովէն ստակն

ալ բերաւ . ետքը Տուբիան ու հարսը մէկտեղ ետ
դարձան : Ասանկով մէկ քանի օր ուշանալուն հա-
մար Տուբիայի ծնողքը մտմտութի մէջ ինկան , և
Աննան հաց չէր ուտէր , կուլար ու կ'ըսէր . « Ա՛հ ,
մեռաւ տղաս , ինձի ստակ ի՛նչ պէտք էր » : Օր
մըն ալ յանկարծ երեցան . մէկէն գնաց Տուբիան
հրեշտակին ըսածին պէս ձկան լեղին հօրը աչքը
քսեց՝ որ մէկէն բացուեցան . ան ատենը ուրա-
խութեամբ մէկմէկու պըռուելով փառք կուտային
Աստուծոյ՝ լսելով ու ատենելով եղած յաջողու-
թիւնները . ու եւթն օր ալ Տոբիթ նորէն հարս-
նիք ըրաւ : Ետքը Տոբիթ ուղեց որ սարկին կէսը
ճամբայ ցուցընողին վարձք տան . ան ատենը հրեշ-
տակն ինքզինքը յայանեց անոնց , անոնք սկսան
վախնալ . հրեշտակն ըսաւ , « Մի վախէք , հապա
փառք տուէք Աստուծոյ , որ ձեր ողորմութիւն-
ներն ու բարեգործութիւնները կը վարձատրէ » .
և մէկէն աներեւոյթ եղաւ :

Հ . Տոբիթ Աստուծ մէ մխիթարուէլէն ետքը ո՛ր-
չափ տպրեցաւ .

Պ . Անկէ ետքը շատ տարիներ հանգիստ ան-
ցուց՝ Աստուծոյ փառք տալով և շնորհակալու-
թեան աղօթքներ ընելով . մարդարէացաւ ալ Ե-
րուսաղէմի կործանինն ու նորոգուիլը , և հարիւր
յիսուն տարուան մեռաւ , Տուբիային կտակ ընե-
լով որ Նինուէէն ելէ , վասն զի պիտի կործանի :
Տուբիան ալ իր ծնողքը թողելէն ետև գնաց Մա-
րաց երկիրը . և միշտ բարեպաշտութեամբ ապրե-
լով հարիւր քսանուեօթը տարուան մեռաւ :

Յոշիք .

Հ . Յուզիթայ պատմութեան նիւթն ի՛նչ է .

Պ . Աստուծոյ գթութեան ու սիրոյ նշանն իրեն ապաւինածներուն վրայ , որով Իսրայէլացիք ազատեցան Նաբուգոդոնոսորայ բարկութենէն . և արդար պատուհասն որ չկարծուած ատեն կը հասնի հպարտ ու ինքնահաւան մարդկանց վրայ , որով Հողեփեանէս պատժուեցաւ :

Հ . Ո՞վ է Հողեփեանէս , և ի՛նչ գործք ըրաւ .

Պ . Ասորեստանի Նաբուգոդոնոսոր թագաւորին զօրապետը : Աս թագաւորը Մարաց Արփաքսադ թագաւորին յայլթեւէն ետքը , ուղեց որ բոլոր աշխարհքիս ալ տիրէ ու Աստուծոյ սէս պաշտօնի : Անոր համար Հողեփեանէս իր զօրապետը խրկեց՝ հարիւր քսան հազար հեռեակ՝ նոյնչափ ալ ձիաւոր զօրքով , որ ամէն աշխարհք երթայ իրեն հնազանդեցրնէ : Աս հրամանով սկսաւ Հողեփեանէս առաջ շարժիլ , ու անխնայ զամէնքը ջարդելով՝ հասաւ ինչուան Հրէաստան :

Հ . Հրեայք ի՛նչպէս կրցան դէմ դնել Հողեփեանէսին .

Պ . Սրտանց Աստուծոյ դիմեցին որ զիրենք ազատէ , և սկսան բերդերն ալ ամրացրնել , աւելի Բեափղուա քաղաքն որ Հրէաստանի դուռը կը սեպուէր :

Հ . Հողեփեանէս երբոր խնայաւ Հրէից իրեն դէմ պատրաստուիլն , ի՛նչ ըրաւ .

Պ . Զարմայաւ անոնց յանդգնութեանը վրայ , կանչեց Իսրայէլացւոց քովի ազգերուն իշխանները՝ հարցուց : Ան ատեն Աքիովր Ամոնացւոց իշխանն ըսաւ թէ « Անոնց Աստուածը զօրաւոր է :

մէկէ մը չյաղթուիր . պէտք է սպասել որ իրենք իրենց Աստուծոյն գէ՛մ յանցանք ընեն որ յաղթուին » : Հողեփեռնէս կրակ կարեցաւ , « Նաբուգոդոնոսորին ո՞վ կրնայ յաղթել » ըսելով . Աքիովըն ալ՝ զԱստուած իր թագաւորէն զօրաւոր սեպելուն համար՝ ձեռքը ոտքը կապած՝ Բեափղուայի բերդին տակը ձգել տուաւ , որ երբոր քաղաքն առնէ՝ զինքն ալ հրէից հետ պատժէ : Բեափղուացիք ներս առին Աքիովըր , պատմել տուին . որ երբոր խնայան Հողեփեռնեսին պատրաստութիւնը սարսափեցան , սկսան աղօթք ընել : Հողեփեռնէս ալ իրեն իշխաններուն խորհրդով պաշարեց քաղաքն ու ջուրն ալ կարեց :

Հ . Բեափղուացիք ի՞նչպէս կրցան դիմանալ Հողեփեռնեսի պաշարմանը .

Պ . Երեսունըջորս օրէն ետքը՝ սաստիկ ծարաւէն նեղացած՝ իշխաններն որոշեցին որ եթէ հինգ օրէն ալ Աստուած չողորմի՝ քաղաքը տան : Անտան Յուդիթ որբւարի կինը՝ Շմաւոնի ցեղէն՝ պարկեշտ , շնորհալի , որ սպքով աղօթքով կ'անցընէր կեանքը , Աստուծմէ լուսաւորուած՝ կանչեց իշխանները յանդիմանեց զանոնք անանկ ծուռ խորհուրդներուն համար , ու ըսաւ թէ « Աղօթք ըրէք , կը յուսամ որ Աստուած իմ ձեռքովս բարիք մը ընէ » :

Հ . Յուդիթ ի՞նչպէս ազատեց Բեափղուան Հողեփեռնեսին ձեռքէն .

Պ . Գնաց քուրձով ու մոխրով ինկաւ Աստուծոյ առջև , շատ աղաչելէն ետքը՝ հագուեցաւ , զարդարուեցաւ ու իր աղախինին հետ քաղքէն դուրս ելաւ դնաց : Հողեփեռնեսի զինուորներն երբոր տեսան , վրան զարմանալով թէ ինչո՞ւ դուրս ելեր է՝ զինքը Հողեփեռնեսի տարին : Հողեփեռնէս հարցուց թէ ո՞վ է , ուսկից կուգայ . Յուդիթ խելացի կերպով պատասխան տուաւ . « Տէր

իմ, տեսայ որ Աստուած բարկացիր է մեր աղ-
գին, ու իրենց բանը գէշ պիտի ըլլայ. անոր հա-
մար փախայ եկայ քեզի աղախին ըլլալու » : Բայց
գիշերները բանակէն դուրս ելլելու հրաման խընդ-
րեց որ իր Աստուածը ստաշտէ, ու զհողեփեռնու-
նէսն ալ առանց մնասի մը Աստուծոյ հրաման
տուած օրն Երուսաղէմ տանի : Հողեփեռնէս Յու-
դիւթայ ըսածներուն հաւասարով հրամայեց որ իր
վրանը բերեն զինքն ու իր աղէկ կերակուրներէն
տան անոր. բայց Յուդիւթ աղաչեց որ ինքն իր հե-
ար բերած կերակուրն ուտէ : Ասանկ իրեք օր հսն
կեցաւ, ու գիշերները մինակ բանակէն դուրս
կ'ելէր՝ աղօթք կ'ընէր որ Աստուած իր բանը յա-
ջողէ : Չորրորդ իրիկունը Հողեփեռնէս փառաւոր
սեղան մը ըրաւ իր զօրասպեաներուն, Յուդիւթն ալ
կանչեց, որ եկաւ նստաւ ու իր հեար բերածնե-
րէն կ'ուտէր. կերան խմեցին, Հողեփեռնէս ալ
աղէկ մը գինովցաւ : Ետքը ամէնքն որ գնացին,
ու մինակ Յուդիւթ ու Հողեփեռնէս մնացին,
Յուդիւթ տեսաւ որ Հողեփեռնէս խորունկ կը
քնանայ, գնաց քովը, հանեց անոր թուրը,
բռնեց մազերէն, « Տէր Աստուած, ըսաւ, օգ-
նէ ինձի », ու երկու հեղ զարկաւ՝ գլուխը կըրա-
րեց առաւ, դուրս ելաւ՝ իր աղախինին տուաւ
որ կերակրին մախաղին մէջը դնէ : Եւ ասան-
կով մարդ չխնացած՝ գիշերանց ետ դարձաւ, Բե-
տիղուայի պարսպին տակն որ հասաւ, սկսաւ
կանչել պահապաններուն թէ « Բացէք դռները,
Աստուած մեր հեան է » : Ժողովեցան ամէնքը
չահերով ճրագներով տեսան Հողեփեռնէսին
գլուխը Յուդիւթայ ձեռքը, փառք տուին Աս-
տուծոյ. Աքիովը Ամոնացւոյ իշխանն տեսնելուն
տէս՝ ինկաւ մարեցաւ. ու ետքը զարմանալով
Աստուծոյ զօրութեանը վրայ՝ դարձաւ աստուա-
ծապաշտ եղաւ :

Հ. Հողեփեռնեօսին մարգիկն ինչ կերպով իմացան իրեն մահը, և ինչ ըրին.

Պ. Հրեայք առաւօտանց Հողեփեռնեօսի գլուխը բերդին վրայ կախեցին, ետքը վաղեցին թշնամիներուն վրայ, անոնք ալ շուտ մը գնացին Հողեփեռնեօսի ձայն տալու որ սլաակերպով սկսին: Մտաւ սենեկասպետը տեսաւ մարմինն արիւնլուայ գեախնը փռուած, « Ա՛յ, կանչեց, Երբայեցի կին մը խաղք ըրաւ զմեզ »: Աս որ լսեցին զօրքը՝ փախչող փախչողի եղան: Ան ասունը Հրեայք աղէկ ջարդ մը տուին անոնց, ու երեսուն օրուան մէջ հազիւ կրցան կողոպուեաները ժողովել:

Հ. Յուդիւթայ յաղթութեանը համար Հրեայք իրեն ինչ փոխարէն ըրին.

Պ. Ամէնքը չորս դիէն կուգային զինքը կ'օրհնէին. ինչուան Երուսաղեմէն քահանաներ և կան զինքը տեսնելու և օրհնելու: Հողեփեռնեօսի վերանն ալ բոլոր արծրթեղէն ու սսկեղէն բաներովք Յուդիւթայ տուին, որ ինքն ալ ետքը տաճարին ընծայեց: Իսկ Յուդիւթ սերախութեամբ լցուած օրհնութիւն մը երգեց Աստուծոյ, ու նորէն գնաց իր տունը՝ բարի վարքով ապրեցաւ ինչուան հարիւր հինգ տարի:

90

Ետեր.

Հ. Եսթերայ պատմութեան մէջ զլխաւոր դեմքերը զիպուածներն որոնք են.

Պ. Արտաշէս թագաւորին փոփոխամտութիւնը, համանայ հպարտութիւնը, Մուրդաբէն ինծապաշտութիւնը, և Եսթերայ եղբայրսիրութիւնը:

Հ. Արտաշէսն ո՞վ է.

Պ . Պարսկաց զօրաւոր թագաւոր մը , որ թագաւորութեանը երրորդ տարին մեծ յաղթութիւններ ընելով փառաւոր կոչուեց մը ըրաւ իր իշխաններուն՝ Սիսիս թագաւորական քաղքին մէջ՝ վեց ամիս . ետքը վեց օր ալ առանձին իր սալաւանին մէջ չպատմուելու մեծ հանդէսով : Ետքի օրը Արտաշէս բոլորովին զուարճացած՝ ուղեց որ Ասթինէ մեծ թագուհին գայ , իշխաններուն երկնայ ու իրեն հետ մէկտեղ փառաւորուի . բայց Ասթինէն չեկաւ . անոր համար Արտաշէս ալ սաստիկ բարկացաւ , իշխաններուն խորհրդովը զինքը թագուհիութենէ ձգեց՝ որ ուրիշ կնիկներն իր մէն չար օրինակ չառնեն . որուն տեղը Եսթեր ընտրուեցաւ :

Հ . Ի՞նչ կերպով Եսթեր թագուհիութեան հասաւ .

Պ . Հրաման եղաւ որ ուրիշ մը փրնտուեն , որ Ասթինէի տեղ թագուհի ընտրուի : Եսթեր Մուրգքէի հօրեղբօրն աղջիկն էր՝ որք մնացած՝ որ Մուրգքէն զինքը կը պահէր . ու երբոր լսեց թագուհի ընտրելու հրամանը , զԵսթերն ալ խրկեց՝ ապրասպրելով որ չյայտնէ ինչ աղդ ըլլալը : Թագաւորն Եսթերին հաւնեցաւ ու թագուհի ըրաւ . Եսթեր ալ Մուրգքէի խրատովն աստուածայաշատութիւնը գաղտուկ կ'ընէր :

Հ . Մուրգքէն ի՞նչ պաշտօնի մէջ էր .

Պ . Թագաւորին ծառայութեանը մէջ մտած էր , անոր համար անգամ մը խմանալով որ երկուներքինի մէջերնին խօսք գրեր են թագաւորը մեռցընելու , մէկէն Եսթերայ ձեռքովն խմացուց թագաւորին . Արտաշէս կախել տուաւ ան ներքինիներն ու Մուրգքէին հաւատարմութիւնը յիշատակարանին մէջ գրել տուաւ : Եւ աս Մուրգքէին գործքը պատճառ եղաւ որ Համանին ձեռքէն ազատեցաւ :

Հ. Համանն ո՞վ էր, ու ի՞նչ բանի համար Մուրդ-
քէին հեա թշնամացաւ .

Պ. Արաաշեսին մեծ իշխաններէն մէկն էր .
վարպէտութեամբ մը հրաման հանել առաւ որ
ինքը թագաւորին երկրորդ սեպուի, ու սալա-
տին մարդիկն ամէնքն ալ իրեն երկրպագութիւն
ընեն : Մուրդքէն աս հրամանը չէր սլահէր՝ հա-
մանն Ամաղեկայի՝ Աստուծոյ անիծած ազգէն ըլ-
լալուն համար : Համան կատուեցաւ աս բանիս
վրայ, ու ոխը բոլոր Հրեաներէն ուղեց հանել .
ուստի հասկըցուց Արաաշեսի թէ Պարսից տէրու-
թեան խաղաղութիւն գանելու համար՝ ան խոս-
վարար Հրէից ազգը սէտք է ջնջել . և հրովար-
տակ հանել առաւ որ ազար ամսուն տասնուե-
րեքին ամէն Հրեաները մեծ ու պզտիկ՝ թրէ ան-
ցուին, և անոնց ունեցածները թագաւորին գանձն
երթան : Հրեաները յուսահատած՝ Աստուծոյ ա-
պաւինեցան :

Հ. Հրեայք ի՞նչպէս կրցան ազատիլ Համանին
բարկութենէն .

Պ. Մուրդքէ Եսթերին հասկըցուց որ ինքը
պարտրիան է աս բանիս համար ձեռքէն եկածն
ընելու, Եսթեր Մուրդքէին պատասխան խրկեց
թէ « Ինչպէս որ գիտես՝ թագաւորը չկանչած
առջևն ելլողը կը մեռնի . երեսուն օր է որ ես ալ
թագաւորին չեմ գնացեր » : Մուրդքէ նորէն
խրկեց խմացուց թէ սէտք է որ ինքը աս բանիս
ճարը տեսնէ : Եսթեր տակնուվրայ եղաւ, ասլըս-
պրեց որ ամէն Հրեաներն աղօթք ընեն՝ պաք պա-
հեն որ Աստուած իրեն ոյժ տայ . ինքն ալ քուրձ
մը հագած՝ հանգստութեան բաները մէկզի թո-
ղած՝ աղօթքի նստաւ իրեք օր : Ետքը վառաւոր
լաթեր հագաւ զարգարուեցաւ ու երկու տղա-
խինով թագաւորին առջևն ելաւ . բայց սրտին
վախէն հոն մարեցաւ ինկաւ : Եսթերին անանկ

խեղճ կերպը թագաւորին գուժը շարժեց որ
շուտ մը ելաւ ակօռէն քովն եկաւ, անոյշ խօսքե-
լով սիրտ կուտար որ չվախէ : Եսթեր ասով քիչ
մը սիրտ առաւ. բայց երբոր նորէն մտրեցաւ,
թագաւորը նորէն վրայ տուաւ, « Ինչուան կէս
թագաւորութիւնս ալ ուզես՝ կուտամ » ըսելով :
Եսթեր ան ասեւնը համարձակեցաւ « Ար խնդրեմ
որ, ըսաւ՝ համանը հետդ հրամես իմ սեղանս
դաս » . թագաւորն ալ յանձն առաւ : Սեղանին
վրայ նորէն ըսաւ թագաւորը Եսթերին որ խընդ-
րէ ինչ որ կ'ուզէ . Եսթեր ալ խնդրեց որ եր-
կրորդ օրը նորէն հրամեն : Համան ուրախու-
թեամբ լցուած երբոր տուն կը դառնար, ճամ-
բան Մուրդքէին հանգիստեցաւ, որ իրեն երկըր-
պագութիւն չըրաւ . բարկացաւ վրան, ու ան-
ցաւ տուն գնաց . պարծելով պատմեց իր կնիկանն
ու բարեկամներուն թէ մինակ ինքը կանչուեցաւ
Եսթերայ սեղանին . բայց ցաւելով ալ ըսաւ
Մուրդքէին իրեն ըրած անարգանքը : Անոնք ալ
ըսին թէ « Ապր երկայն փայտ մը անկել տուր,
ու ըսէ որ կախեն զինքը » : Համան մէկէն հրա-
մայեց որ յիսուն կանգուն երկայն փայտ մը պատ-
րաստեն :

Հ . Համան կրցաւ առաջ տանիլ Մուրդքէն կա-
խելու խորհուրդը .

Պ . Աստուած բանը անանկ դարձուց որ ինքը
կախուի ան փայտէն : Ան իրիկունն Արաաշեսի
քունը չտանելով ասեն անցընելու համար ուղեց
յիշատակարաններն աչքէ անցնել կարգալ . ու
դիպուածով բացուեցաւ երկու ներքիններուն
կախուելուն պատճառն ու Մուրդքէին հաւա-
տարմութիւնը . ան ասեն հարցուց թէ « Մուրդ-
քէին ինչ փոխարէն ըրիք » . ծառաներն ըսին որ
« Բան մը չըրինք » : Երբոր առաւօտ եղաւ՝ հար-
ցուց թէ « Ա՞վ կայ գուրսը » . և իմանալով որ

Համանը հոն է, որ եկեր էր՝ Մուրդքէն կախելու հրամանը առնելու համար, ներս կանչեց՝ հարցուց. « Թէ որ, ըսաւ, ես մէկը ուզեմ փառաւորել՝ ինչ պէտք է ընեմ » : Համանն ալ մըտքէն անցընելով թէ « Ինծմէ զատ ո՛վ պիտի փառաւորէ », ըսաւ. « Կը վայլէ որ զան մարդը թագաւորի հազուստով ու ձիով թագաւորին խիստ սիրելին տանի բոլոր քաղաքը պարտցընէ. առջեկն ալ կանչեն թէ « Թագաւորին փառաւորած մարդն է ասիկայ » : Թագաւորը հաւնեցաւ ըսածին ու հրամայեց իրեն որ երթայ Մուրդքէին ընէ ան պատիւները : Համան ալ չկրնալով ձայն հանել՝ գնաց զՄուրդքէն պատուեց, ու սիրտը սաստիկ կտորած՝ տուն դարձաւ : Ետքը Եսթերայ սեղանը գնաց : Թագաւորը հարցուց նորէն Եսթերին թէ « Ի՞նչ է խնդիրդ. գիանաս, ըսաւ՝ թագաւորութեանս կէսն ալ ուզեմ՝ կուտամ » : Ան ատեն Եսթերն ըսաւ. « Տէր իմ, կը խնդրեմ՝ քեզմէ իմ աղգիս կեանքն որ խաբեքայ Համանը աշխարհքէս վերցընել ուզեց » : Թագաւորը լսածին պէս՝ այլայլած ելաւ սեղանէն. Համանը մինակ մնալով սարսափած Եսթերի ոտքն ինկաւ՝ կ'աղաչէր : Ան որ տեսաւ դիպուածով թագաւորը՝ բարկացաւ թէ ինչո՞ւ Եսթերայ քով կեցեր է. հոն մէկն ալ խմացուց թագաւորին թէ Համանն զՄուրդքէն կախելու համար փայտ անկեր է. մէկէն ըսաւ. « Զ՛խնքն ան փայտէն կախեցէք » : Ետքը Համանին ունեցածներն ալ Եսթերի պարգևեց, և խմանալով որ Մուրդքէն Եսթերին ազգականն է, Համանին իշխանութիւնն ալ Մուրդքէին տուաւ :

Հ. Հրէից վրայ եղած հրովարտակն ինչ կերպով ետ դարձուեցաւ .

Պ. Նոր հրովարտակ մը ելաւ առջինին ներհակ հրամաններով. ան օրն որ իրենք պիտի

Չարգուէին՝ իրենք զուրիշները Չարգեն : Ուստի
ան օրը շատ մարդ Չարգեցին , բոլոր Համանայ
տունն ալ ջնջեցին : Ետքը Աստուծոյ շնորհակա-
լութեան համար հրեաները տօն հաստատեցին
ազար ամսուն տասներչորսին , և ինչուան հիմա կը
սլահեն , որ Փօքի՛՛ կ'ըսուի :

91

Եսայի , Երեմիա , Եզեկիի .

Հ . Մարգարէներուն վրայ հարկաւոր գիտնա-
լու ի՛նչ բան կայ .

Պ . Մանաւոր գիպուածներ՝ թէ Քրիստոսի
անօրէնութեանը վրայ և թէ Իսրայէլացւոց մե-
ղաց սլաախիժներուն վրայ , որ երբեմն տեսիլքով
և երբեմն խօսքով մարգարէացան :

Հ . Եսայեայ գլխաւոր տեսիլքը ո՛րն է .

Պ . Եսայի մարգարէն որդի Անովսայ՝ որ Ողիա
Թագաւորին ատենէն ինչուան Եզեկիայի ատենը
մարգարէացաւ , անգամ մը տեսաւ տաճարին մէջ
զԱստուած բարձր փառաւոր աթոռ նստած ,
հրեշտակներ չորս դին սլաաած՝ վեց վեց թևե-
րով , որ երկու թևով երեսնին կը գոցէին , եր-
կուքովը օտուրնին , մէկալ երկուքովն ալ կը թըռ-
չրակին , ու կ'ըսէին . « Սուրբ , սուրբ , սուրբ , տէր
զօրութեանց՝ լի է ամենայն երկիր փառօք նորա » :
Մարգարէն՝ « Ասց ինձի , կ'ըսէր , որ տէր զօ-
րութեանց կը տեսնեմ ու լուռ կեցեր եմ պիղծ
բերանով ըլլալուս համար » : Ան ատեն սերօքե-
ներէն մէկը ունելիքով սեղանէն կայծ մը բե-
րաւ՝ մարգարէին բերնին դպուց ու ըսաւ , « Ա-
սիկայ սրբէ զքեզ քու սլախսութիւններէդ » :

Ետքը լսեց որ Աստուած կը հարցընէր, « Ա՞՞՞՞՞ իտր-
կեմ ան Ժողովրդեանը » : Ինքն ալ պատասխան
տուաւ թէ « Ահա զիս խրկէ » . Աստուած ալ
խրկեց որ անկէ ետքն սկսաւ քարոզել :

Հ . Եսայեայ մարգարէութիւններուն մէջ 'նչա-
նաւոր ի՞նչ բան կայ .

Պ . Քրիստոսի հրաշալի ծնունդն ու խաչուիլը՝
մեռնիլը՝ աւետարանչի պէս տեղն 'ի տեղը կը
պատմէ :

Հ . Երեմիա մարգարէին գլխաւոր տեսիլքներն
որոնք են .

Պ . Երեմիա մարգարէն որ Յովսիա թագաւո-
րին ատենէն ինչուան բոլորովին հրէից կործա-
նումը մարգարէացաւ, շատ տեսիլքներ տեսաւ .
որոնց մէջ գլխաւոր կրնայ ըսուիլ ան՝ որ անգամ
մը երկինքը հիւսիսային դիէն կաթսայ մը կրակի
վրայ կ'եփէր, որով կ'իմացընէր Աստուած թէ ան
կողմէն Քաղզէացիք հրէից վրայ պիտի խրկէ :

Հ . Երեմիայի մարգարէութիւններն աւելի ի՞նչ
բանի վրայ էին .

Պ . Իր ազգին անօրէնութիւններն կուլար . որ
ետքը յուսահատած՝ ողբ ալ ըսաւ վրանին :

Հ . Երեմիա ի՞նչպէս անցուց իր օրերը .

Պ . Հրեայք տեսնելով որ զերենք շատ կը յան-
դիմանէ, զղջալու տեղ կ'ատէին ու կը հալածէին
զինքը . և ըսելով թէ Ժողովրդեան ձեռքը կը
թուլցընէ որ չկարենան թշնամիներուն դէմ դը-
նել, տարին մահապարաներուն գուրը ձգեցին որ
մեռնի : Բայց Աբդամեւէք Եթովպացին մէջ մը-
տաւ, « Ասանկ սուրբ մարդ մեզի հարկաւոր է »
ըսելով թագաւորին, ուստի գուրէն հանեցին ու
բանտ դրին : Ետքը երբոր Նաբուզարդան դահճա-
պետը հրեաները Բաբելոն գերի տարաւ, Երե-
միան խնդրեց որ ինքն իր Բարուք աչկերաին հետ
Երուսաղէմ մնան : Բայց ետքը Յովնաթան որգի

Աստուծոյն երբոր զժողովուրդը Եզրիպտոս փախուց,
զԵրեմիա ալ տարաւ . և հոն հրեաները չգիմա-
նալով իրեն քարոզութիւններուն, քարկոծեցին
զինքը :

Հ . Եզրեկիէլի տեսիլքները որոնք են .

Պ . Նաբուգոդոնոսոր երբոր եկաւ , Յեքոնիա
Թագաւորը Բաբելոն տարաւ , Եզրեկիէլ ալ մէկալ
գերիներուն հետը գնաց , ու տեսիլքները հոն
յայտնուեցան իրեն : Առջինն աս էր . անգամ մը
Քորար գետին քովը կեցած՝ յանկարծ ամպերուն
մէջը մեծ կառք մը տեսաւ՝ ամէն զիէն աչուրնե-
րով , որ չորս կենդանի կը քաշէին , ու անոնց կեր-
պարանքը մարդու , առիւծի , կովու և արծուց ,
որոնք չորս ալ Թև ունէին , անանկ լուսաւոր էին
որ վրանին նայելու աչք չէր գիմանար : Տեսաւ
մէջ տեղի երկինքն ալ բաց , ուր աթոռով փառա-
ւոր մարդ մը ճառագայթներով կը փայլէր արևու-
տէս : Ասով Աստուած յայտնեց հրէից որ իրենց
երկրաւոր տաճարին կարօտ չէ . փուճ տեղը ա-
նով չպարծին : Եզրեկիէլ երբոր վախնալով կը նայ-
էր , Աստուած սկսաւ գանգատիլ Իսրայէլացւոց
ըրած ասերախտութեանը վրայ . ետքը դէպ 'ի ի-
րեն ձեռք մը երկնցաւ ու գիրք մը տուաւ որ ու-
տէ , որուն ներսը գուրսը ողբ ու վայ գրած էր .
ան ուտելուն պէս բերանն անուշցաւ . Աստուած
ալ հրամայեց որ երթայ սկսի քարոզել :

Մէկ ուրիշ ուրախական տեսիլք մըն ալ տե-
սաւ . որ մը Աստուած Եզրեկիէլը դաշտ մը տա-
րաւ՝ որ մեռելներու չորցած ոսկորներով լեցուած
էր . ու ըսաւ անոր . « Հրամայէ որ ողջանան » . և
բոլոր դաշտն անհամար մարդով լեցուեցաւ , որ
յարութեան նշան էր : Աւրիշ անգամ ալ Երու-
սաղեմի տաճարը նոր ձևով մը տեսաւ :

Հ . Եզրեկիէլի մարգարէութիւններն ինչ բանի
վրայ էին .

Պ . Իսրայէլացւոց վրայ եկած ու գալու թշուա-
ռութիւնները կը քարոզէր առակներով :

92

Դանիէլ .

Հ . Դանիէլ ո՞վ էր և ի՞նչպէս առաջ եկաւ .

Պ . Նաբուգոդոնոսոր Բաբելացւոց թագաւորը
երբոր Երուսաղէմն առաւ ու շատ մարդ գերի աա-
րաւ . իր Ասիանէզ իշխանին ապագրեց որ Հրէից
մէջէն շնորհալի խելացի տղաքն ընարէ ու կրթէ :
Անոնցմէ էր Դանիէլ Յուդայի ցեղէն , որուն ա-
նունը Բաղասասար գրին , և իրեք ընկերները՝ Անա-
նիա , Միսայէլ ու Ազարիա , որոնց անունը փո-
խեցին՝ Սեգրաք , Միաք ու Աբեգնագով գրին .
ու երբոր թագաւորէն իրենց տղէկ կերակուրներ
կը բերուէր , անոնք վերակացուին տղաչեցին որ
միայն ընդեղէն տայ , խմելու ալ ըսկ ջուր : Անիկայ
առջի բերան թող չտուաւ , վախնալով որ կը վա-
տուժնան տղաքը . բայց ետքը փորձեց որ ան չորսը
ընդեղէն ուտելով թագաւորին կերակուրն ուտող-
ներէն աւելի դէր ու կայտառ կ'ըլլան : Ետքը երբ-
որ թագաւորն ասոնց սորված իմաստութիւնը փոր-
ձեց՝ տեսաւ որ Բաբելացւոց կարգացողներէն ալ
չատ բան գիտեն , մանաւանդ Դանիէլը , անոր հա-
մար զիրենք կարգացողներուն կարգն անցուց :

Հ . Դանիէլի նշանաւոր գործքերն որոնք են .

Պ . Երբոր տասուերկու տարուան էր՝ Հուշա-
նին անմեղութիւնը յայտնեց : Ետքը Նաբուգո-
դոնոսորայ երկու երօզին մեկնութիւնը տուաւ .
Բաղասասարին պատին վրայ գրերը կարդաց . ա-
ռիւժներուն գուբէն թղջ ազատեցաւ . Աիւրոսի
ատեն Բելայ սուտ աստուած ըլլալը յայտնեց .

Բարեկացւոց սլաշտած վիշապը ճաթեցուց, երկրորդ անգամ վեց օր առիւծներուն գուրը կեցաւ. և Քրիստոսի գալստեան ժամանակը յայտնի մարգարէացաւ :

Հ. Ըուշան ո՞վ է, և ի՞նչ բանի մէջ յայտնեց Գանիէլ անոր անմեղութիւնը .

Պ. Ըուշանն էր Յովակիմին կինը : Աս Յովակիմը Բարեւոն գերի գնացող մեծատուններուն մէկն ըլլալով, հրէից ծերերն իրեն տունը կը ժողվէին խորհրդի : Անոնցմէ երկու ծեր շատ գալով Յովակիմի տունը՝ սկսան չար մտքի երթալ Ըուշանին վրայ, ու ատեն կը փրնտռէին որ մտքի չարութիւննին կատարեն : Օր մը Ըուշանը ելաւ սարաւէզ՝ գնաց աւազանին քովը լուացուելու, և աղախինները խրկեց որ երթան օճառ բերեն : Ան ատենը ան երկու ծերերն որ հոն սլահուրաւեր էին՝ եկան Ըուշանին վրայ . Ըուշան նեղը մտած հառաչեց, ու տեսաւ որ ուրիշ ճար չկայ, սկըսաւ կանչուրումել : Անոնք երբոր տեսան որ բանը գէշի գնաց, իրենք ալ կանչուրումեցին . ու երբոր մարդիկ հասան՝ ծերերն սկսան Ըուշանայ վրայ սուտ զրպարտութիւն ընել : Ուստի երկրորդ օրը դատաստանի հանեցին զինքը, ու ան երկու ծերերուն հաւտալով վճռեցին որ մեռնի . Ըուշան զԱստուած իրեն վկայ կանչելով մեռնելու կ'երթար . ճամբան Գանիէլ սկսաւ կանչել թէ « Ես անպարտ եմ ատոր արիւնէն » : Ժողովուրդը կեցան, հարցուցին թէ ի՞նչ կ'ըսէ : Ան ալ ըսաւ . « Առանց քննելու անմեղն ի՞նչպէս կը դատապարտէք . գարձիք նորէն դատաստանի նստէք » : Երբոր գարձան, ըսին Գանիէլի . « Աստուած զքեզ լուսաւորեց, դու եկո՞ տես աս դատաստանը » . ան ատենը Գանիէլ՝ « Զատեցէք, ըսաւ, ատ երկու ծերերը մէկմէկէ » . ետքը առանձին երկաքին ալ հարցուց թէ ո՞ւր տեսան Ըուշանը . ա-

նոնք ուրիշ ուրիշ տեղ ըսելով խաղք եղան, ու
Շուշանին տեղ սպաննուեցան: Ասով ու ետքն
ալ Նաբուգոգոնոսորին երազը մեկնելով Գանիէ-
լին անուէր խիստ հռչակուեցաւ:

Հ. Նաբուգոգոնոսորին առջի տեսած երազն
ինչ էր.

Պ. Ինքն ալ մոռցեր էր երազը. անոր համար
կանչեց Բաբելոնի խմաստունները, հարցուց թէ
ինչ է երազը և մեկնութիւնը. ու չգիտնալնուն
համար բարկացաւ, սպաննել տուաւ զամէնքը:
Երբոր Գանիէլ ըսեց, խնդրեց որ իրեն օր մը ատեն
տան, ինքը կը զօրուցէ: Ան գիշերն Աստուծոյ դի-
մեց իր ընկերներուն հետ որ Աստուած յայտնէ ու
առաւօտանց գնաց թագաւորին ըսաւ. « Երազիդ
մէջն ահաւոր արձան մը տեսար. գլուխն ոսկիէ,
ձեռուրները՝ կուրծքն ու թևերը արծրթէ, մէջ-
քէն ինչուան ծունկերը պղնձէ, սրունքը երկրթէ,
և ոտուրներուն կէսն երկրթէ ու կէսը հողէ: Ետ-
քը լեռնէն ինքիրմէ քար մը փրթաւ՝ գլորեցաւ,
արձանին զարկաւ ու փոշի դարձուց, հոմն ալ
փչեց տարաւ, ու ան քարն աճեցաւ՝ մէկ մեծ լեռ
մը եղաւ և բոլոր աշխարհքս լեցուց: Ասոր մեկ-
նութիւնն ալ աս է, ըսաւ. ան արձանին ոսկի գը-
լուխը դու ես՝ թագաւորներուն թագաւորը. ետևէդ
ուրիշ թագաւորութիւն մը պիտի գայ, որ ան ար-
ծաթը կը ցուցնէ. անոր ետևէն աւելի տկար մը
ու անկէ ետքը չորրորդը երկաթ՝ որ ըսել է ամենէն
ուժով, բայց անոր ալ կէսը հողէ է՝ որ ետքը տկա-
րանայ պիտի: Ետևէն նոր թագաւորութիւն մը
պիտի ելլէ որ զամէնքը կործանէ՝ իր տակն առնէ
պիտի, որ է ան քարն որ յաւիտեան պիտի մնայ »:

Հ. Նաբուգոգոնոսոր Գանիէլին երազ պատմե-
լուն համար ինչ փոխարէն ըրաւ.

Պ. Ելաւ Գանիէլին երկրպագութիւն ըրաւ, ու
հրամայեց որ անոր խունկ ու զոհ մատուցանեն.

և ըսաւ թէ « Հիմայ խմացայ որ ձեր Աստուածն է ճշմարիտ » : Ըստ պարզեաներ ալ տուաւ անոր , ետև Բաբելոնացոց իշխաններուն ու կարգացողներուն գլուխ ըրաւ զինքը . և անոր խնդրելովք՝ իրեն իրեք ընկերներն ալ թագաւորական գործքերու վրայ դրաւ :

Երեք մանկուշիք .

Հ. Գանիէլի իրեք ընկերներն ինչով երեւելի եղան .

Պ. Ճշմարիտ աստուածապաշտութեամբ . վասն զի Նաբուգոգոնոսոր թագաւորութեան տասնըութերորդ տարին օսկիէ արձան մը անկեց վաթսուն կանգուն երկայն , վեց կանգուն լայն՝ Գէլբաց դաշտին մէջ , ու հրաման հանեց որ ամէն տեղէն մեծամեծները ժողովին ու հանդէսով ան արձանը պաշտեն . անոր քովն ալ հնոց մը շինել տուաւ որ չհնազանդողը հոն ձգեն : Աս բանս Գանիէլին իրեք ընկերները յանձն չառին . ոչ յորդորանք մտիկ ըրին , ոչ խրատ : Սաստիկ կատուեցաւ Նաբուգոգոնոսոր ու հրամայ որ մէկէն զանոնք հնոցը ձգեն : Բայց բռնաւոր թագաւորին բարկութիւնը բարեգութ Աստուծոյ խնամոցը չկրցաւ յաղթել : Նաբուգոգոնոսորայ մարդիկը վառեցին հնոցը , իրեքը մէկէն մէջը ձգեցին . անոնք հնոցին մէջը զԱստուած օրհնել սկսան . մարդիկը մէկ կողմանէ կրակը կը սաստկացընէին որ քառսունուինը կանգուն վեր կ'ելլէր բոցն , ու չորս դին կեցողներն ալ կ'այրէր : Իսկ անոնց քովը հրեշտակ մը իջաւ՝ զովացաւց փռան մէջն՝ որ հանդիսակը պարտէին ու զԱստուած կ'օրհնէին : Թագաւորն եկաւ տեսաւ՝ որ մէջը չորս հողի կան , զար-

մայաւ կանչեց . « Սեդրաք , Միսաք , Աբեդնա-
գով , ծառայք Աստուծոյ բարձրելոյ , դուքս ե-
կէք » . և երբոր եկան , երեցան որ լաթերնին ալ
բան մը չէր եղած . Նաբուգոդոնոսոր զարմացած
« Մեծ է , ըսաւ , ձեր Աստուածը . ասկէ ետքը ով
որ անոր դէմ խօսի՝ կը մեռցնեմ » : Իրենց իշխա-
նութիւնն ալ առջինէն աւելի մեծցուց : Բայց ինքն
ասով չկրցաւ ճանչնալ զԱստուած , ինչպէս որ
պէտք է , ու սուտ հպարտութենէն դադրիլ :

Հ . Նաբուգոդոնոսորայ հպարտութեանը պատ-
ճառն ի՞նչ էր .

Պ . Ըրած յաղթութիւններն ու դիզած հարրս-
տութիւնները : Բայց Աստուած ուրիշ երազով մը
յայտնեց իրեն գլխուն գալիքը , որ իմանայ իր տը-
կարութիւնը :

Հ . Նաբուգոդոնոսորայ երկրորդ տեսած երազն
ի՞նչ բան էր .

Պ . Տեսաւ երկրիս մէջ տեղը անկուած մեծ
ծառ մը բարձր ինչուան երկինքն ու բոլոր աշխարհ-
քիս վրայ տարածուած՝ տերեւներով պաղով լե-
ցուն , շուքին տակը դաղաններ կը բնակէին , և ճիւ-
ղերուն վրայ թառեր էին թռչունները : Ետե եր-
կրնքէն հրեշտակ մը իջաւ ու կանչեց . « Վարեցէք
առ ծառը , ջնջեցէք , միայն արմատը թողէք՝ եր-
կրթէ ու պղնձէ շղթայով կասպած , խոտերուն
մէջ՝ դաղաններուն հետ . մարդկային սիրտը վեր-
ցուի , դաղանի սիրտ արուի իրեն ինչուան եօթը
ժամանակ » :

Հ . Նաբուգոդոնոսորին տեսած ծառը Դանիէլ
ի՞նչպէս մեկնեց .

Պ . Երբոր ամէն կարգացողները չկրցան մեկ-
նել , Դանիէլ մեկէն մեկնութիւնը սուտ ըսելով
որ « Ան ծառը դուն ես , մարդիկներուն մէջէն
պիտի վարնաուիս ու անբան անասուններուն հետ
խոտ ուտես եօթը տարիի չափ , ինչուան որ խելքդ

գլուխդ դայ • և արմատդ պիտի թողուի որ նորէն
դառնաս թագաւորես » : Գանիէլ առ մեկնութիւն
նը տալէն ետե խրատ ալ տուաւ թէ շատ ողոր-
մութիւն տայ աղքատներուն որ Աստուած իրեն
մեղքին թողութիւն ընէ :

Հ • Նաբուգոգոնոսոր Գանիէլի խրատը պահէց՝
դիտուն դալու պատժէն ազատելու համար •

Պ • Չէ • անոր համար տարիէ մը ետքը օր մը իր
պալատին վրայ քաշելով հպարտութեամբ Բաբել-
ոնի գեղեցկութեանը վրայ պարծենալով որ կը
խօսէր , յանկարծ երկրնքէն ձայն եկաւ , թէ « Նա-
բուգոգոնոսոր՝ քեղի կ'ըսեմ , թողուս թագաւո-
րութիւնդ ու դազաններու հետ բնակիս » : Ուս-
տի հոն անոնց հետ խօսի կ'ուտէր : Եօթը տարիէն
ետե խնայաւ Աստուծոյ կարողութիւնն , ու դար-
ձաւ եկաւ իր աթոռը նստաւ :

Հ • Բաղտասարայ պատին վրայ տեսած գիրն
ի՛նչ բան էր •

Պ • Բաղտասար Նաբուգոգոնոսորին յաջորդն
անգամ մը սեղան ըրաւ իր իշխաններուն՝ հազար
հոգւոյ • և իր հրամանովը սեղանին վրայ սկսան
գործածել Երուսաղէմի տաճարէն կողոպտած ոս-
կիէ ու արծրթէ ամանները , ու անոնցմով գինի
կը խմէին իրենց կուռքերուն կենացը : Ան տտենը
յանկարծ ձեռք մը երեցաւ որ ճրագին լուսոյն
առջևը պատին վրայ բան մը գրեց : Թագաւորը
սարսափած՝ դողալ սկսաւ , ու շուտ մը կանչեց
բոլոր Բաբելացւոց մոգերն որ ան գիրը կարդան
ու մեկնեն • բայց երբոր չկրցան , թագուհին
միտքն ինկաւ Գանիէլը • ուստի մէկէն կանչեցին ,
ու թագաւորն ալ խոստացաւ անոր ինչուան կէս
թագաւորութիւնը՝ թէ որ կարգայ ան գիրը : Գա-
նիէլ պատասխան տուաւ • « Ընծաներդ քեզի ըլ-
լայ , և պատիւդ ուրիշի տուր » : Ետքը յանդիմա-
նեց զթագաւորն որ Նաբուգոգոնոսորին պատիժ-

ներէն ինքը չէ խրատուած, ու Աստուծոյ տաճարին սուրբ ամանները սղծեր է: « Իսկ գրածն աս է, ըսաւ. « Մանէ, թագաւորութեանդ վերջը հասաւ. Թե՛նչ, Աստուած դքեզ քննեց՝ յանցաւոր գանուեցար. Փաբէս, թագաւորութեանդ կէսը Մարայ՝ կէսն ալ Պարսից արուեցաւ »: Թագաւորը շուտ մը իշխանութեանը երրորդ մասին աէր գրաւ զԴանիէլը. և ան գիշերն ինքն ալ սպաննուեցաւ Մարայ Դարեհ թագաւորէն որ զինքը սլաշարեր էր, ու ներս մտաւ Բաբելոնն առաւ:

94

Դանիէլիև ևսրի գործքերը .

Հ. Դարեհ զԴանիէլն ինչո՞ւ ձգեց առիւծներուն գուբը .

Պ. Դանիէլ անոր շատ սիրելի ըլլալուն՝ իշխաններուն գլուխ էր եղեր. ուստի ամէնքը նախանձելով՝ կ'ուզէին փորձանքի բերել, վրան յանցանք չէին գտներ: Անոր համար հրաման հանել տուին որ երեսուն օր՝ միայն թագաւորէն խնդիրք ըլլուի. և ով որ աս հրամանին դէմ ընէ, առիւծներուն գուբը ձգուի: Դանիէլ իր սովորութիւնը չթողուց. օրը իրեք անգամ իր տունը պատուհանին առջև դէպ 'ի Երուսաղէմ աղօթք կ'ընէր Աստուծոյ: Թշնամիներն իմացան, սախակցին զթագաւորն, ու Դանիէլը առիւծներուն գուբը ձգեցին: Ան ատեն թագաւորն յուսահատած ըսաւ. « Աստուածդ քեզ կ'աղատէ »: Մեծ քարով մըն ալ գուբին բերանը գոցեցին ու թագաւորին մատնիովը կնքեցին: Ան իրիկունը մեծ արամութեամբ անցուց թագաւորն, ու առաւօտանց կանուխ գրին բերանը բանալ տուաւ. և երբոր Դանիէլն

ողջ հանեցին՝ ուրախացաւ, և հրամայեց որ անոր տեղը թշնամիները ձգեն առիւծներուն գուրը. և անոնք դեռ վար չհասած առիւծները բղքտեցին զիրենք: Իսկ Գանիէլ մնաց իր սլառուոյն մէջ նաև Պարսից Կիւրոս թագաւորին ատենն որ եկաւ Քաբելոնն առաւ ու տիրեց:

Հ. Բէլին սուտ աստուած ըլլալը Գանիէլ ինչպէս յայանեց.

Պ. Աս Բէլ աստուածին ամէն օր կուտային տաս, ուերկու արդու բարակ ալիւր, քառասուն ոչխար, ու վեց մար դինի: Թագաւորն օր մը Գանիէլի հարցուց թէ « Դուն ինչո՞ւ չես պաշտեր Բէլը: Գանիէլ ըսաւ. « Ես միայն ճշմարիտ կենդանի Աստուածը կը պաշտեմ »: Ան ատեն թագաւորը սատասխանեց. « Բէլը կենդանի չէ՞ որ ամէն օր կ'ուտէ կը խմէ »: Գանիէլ խնտալով ըսաւ. « Մի խաբուիր թագաւոր, Բէլին ներսի դին հող է՝ դրսի դին պղինձ, ոչ կ'ուտէ, ոչ կը խմէ »: Թագաւորը քուրմերը կանչեց՝ հարցուց ու ըսաւ. « Թէ որ խաբէ՞ու թիւն է ըրածնիդ՝ պիտի մեռնիք. թէ չէ՞ Գանիէլը մեռնի որ հայհոյեց զԲէլ »: Ետքը գնացին կուստուներ, դրին կերակուրները Բէլին առջևն ու քուրմերն ըսին. « Ահա մենք դուրս կ'ելլենք. դուն թագաւոր դռները կնքէ, ու վաղը կամ մենք կամ Գանիէլ մեռնի »: Եւ երբոր քուրմերը դուրս ելան, Գանիէլ մոխիր բերել տուաւ, բոլոր գետինը ցանել տուաւ, ու դուրս ելան, դուռը կնքեցին: Առաւօտանց կանուխ թագաւորը Գանիէլին հետ եկան տեսան որ կնիքը կեցած է. ու երբոր դուռը բացին տեսան որ կերակուրները հատեր են, թագաւորն ուրախութեամբ սկսաւ կանչել. « Ճշմարիտ Աստուած է Բէլ »: Ան ատենը Գանիէլն ըսաւ թագաւորին. « Մէյմը գետինը նայէ. թագաւորը նայեցաւ. « Մարդու՛ կրնալըս ու սղոց սաքի նշաններ կան » ըսաւ: Սկը-

սան փնտռել թէ ուսկից սկսած է. և տեսան որ սեղանին ասկէն գաղտուկ գուռ մը շինած կայ. ուսկից կ'ելլեն քուրմերը աղոցմով եօթանասուն հոգի կ'ուտեն կը խմեն եղեր: Կատղեցաւ թագաւորը, ջարդել տուաւ զամէնքը, ու կուատուեր կործանել տուաւ:

Հ. Դանիէլ Բաբելացւոց պաշտած միշտայն ինչ պէս ճաթեցուց.

Պ. Թագաւորն երբոր Բէլին տուաւ ըլլալն իմացաւ, միշտային համար ալ որ կը պաշտէին՝ հարցուց Դանիէլի: Պատասխանեց Դանիէլ թէ « Աստուած անմահ պիտի ըլլայ. իսկ ես աս միշտայն առանց թրի կրնամ մեռցնել »: Թագաւորն ալ հրաման տուաւ: Ան ատենը Դանիէլ եղ ձիւթ ճարպ ու մազ մէկտեղ եփեց, գունա մը շինեց, ան միշտային կերցուց, որ մէկէն ճաթեցաւ: Բաբելացիք ալ աւելի կատղեցան, ըսելով թէ « Հրեայ եղաւ թագաւորը. Բէլը, քուրմերը, միշտայր ջրնջեց » . ուստի բռնեցին Դանիէլն առիւծներուն գուրը ձգեցին, ուր որ եօթը առիւծ կային որ օրը երկու մարդու մարմին ու երկու ոչխար կ'ուտէին: Բայց երբոր Դանիէլը ձգեցին՝ ուրիշ բան չտուին, ու վեց օր հոն թողուցին:

Հ. Դանիէլ վեց օր ինչո՞վ ապրեցաւ գուրին մէջ.

Պ. Անգամ մը Ամբահում մարգարէն ապուր եփեր էր ու մէջը հաց բրդած իր բանուորներուն կը տանէր. հրեշտակ մը երեցաւ « Դանիէլին տար » ըսաւ: Երբոր մարգարէն՝ « Տեղը չեմ գիտեր » ըսաւ, հրեշտակն անոր գլխուն մազերէն բռնեց ու շուտ մը Բաբելոնի առիւծներուն գուրն իջեցուց, որ ձեռքի կերակուրը Դանիէլի տուաւ. ու նորէն իր տեղը դարձուց: Եօթներորդ օրը թագաւորը գուրին բերանը գնաց, տեսաւ որ Դանիէլն ողջ է, սկսաւ կանչել. « Մեծ ես տէր Աս-

տուած Դանիէլի » . և շուտ մը հանել տուաւ , ու տեղը թշնամիները ձգեցին որ մէկէն բզիկ բզիկ էլ զան առիւծներէն :

95

Յովնան .

Հ . Յովնանու մարդարէութիւնը ի՞նչ բանի վրայ է :

Պ . Երկրորդ Յերոբովամի Կարայէլացւոց թագաւորին ատենն էր . Աստուած իրեն հրամայեց որ Նինուէ քաղաքն երթայ՝ ու խմացընէ , որ եթէ չապաշխարեն , իրէք օրէն Նինուէն պիտի կործանի : Յովնան վախնալով որ եթէ Նինուէացիքն ապաշխարեն ու չպատժուին , ան ատեն ինքը սուտ ըսող կ'երևնայ , ելաւ Յոպպէ գնաց , ու նաւ մը մտաւ՝ Թարսիս փախչելու համար : Բայց Աստուած սաստիկ ալէկոծութիւն մը ըրաւ որ նաւը մօտ էր ընկղմելու : Կաւալարներն իրենց աստուածները օղնութիւն կը կանչէին ու բեւերնին ծովը կը ձգէին . իսկ Յովնան մէկ կողմը քաշուած կը խրուկար : Արթընցուցին զինքն ալ որ աղօթք ընէ իր Աստուծոյն : Բայց ճար չըլլալով ըսին որ վիճակ ձգեն , իմանան թէ որո՞ւն մեղացը համար է աս փոթորիկը : Երբոր վիճակը Յովնանու վրայ ելաւ , հարցուցին իրեն թէ ո՞ւր կ'երթայ . և իմանալով իրմէն որ Աստուծմէ կը փախչի , սկսան տարակուսիլ թէ ի՞նչ ընեն : Յովնան ըսաւ որ զինքը ծովը ձգեն . բայց անոնք կը ջանային ցամաքին մօտենալ . և չկրնալով բռնեցին զՅովնան ծովը ձգեցին . հովն ալ մէկէն դադրեցաւ :

Հ . Յովնան ծովը ձգուելէն ետև ի՞նչպէս կըրցաւ քարոզութիւն ընել .

Պ. Մեծ ձուկ մը կըլեց զինքը, և իրեք օր անոր
փորումն մէջն ողջ կեցած, Ի նէզու-Ռէան իմած սկը-
սած աղօթքն ընելով ապաշխարեց: Ետքը ձուկը
զինքը ցամաքը տարաւ դուրս ձգեց. ինքն ալ նո-
րէն Աստուծմէ հրամանն առնելով գնաց Նինուէ
ու քարոզեց թէ իրեք օրէն Նինուէն պիտի կոր-
ծանի: Ըստ մը հաւատացին, ու թագաւորին
հրամանով մեծ ու պղտիկ՝ ինչուան անբան անա-
սուններն ալ ծով պահեցին, ապաշխարեցին. Աս-
տուած ալ պատիժը չխրկեց: Յովնան տրամած
ըսաւ Աստուծոյ. « Ես գիտէի որ զզջացողին թա-
ղութիւն կուտաս, անոր համար փախչել կ'ուզէի.
ուստի հիմա սուտղըրուց երեցայ. գոնէ մեացն
զիս որ ազատիմ »: Ետքը գնաց քաղքին գիմացը
տեղ մը նստաւ որ տեսնէ թէ քաղաքը կը կործա-
նի. Աստուած ալ հոն դգմենի մը բուսցուց, որ
չուտ մը մեծցաւ՝ տերեւներովը շուք ըրաւ Յովնա-
նու վրայ. Յովնան ալ ուրախացաւ անոր համար.
բայց մէկալ օրն առաւօտանց որդ մը գնաց ան
դգմենին արմատէն կտրեց, դգմենին ալ չորցաւ:
Ան ատենը Յովնան սաստիկ արեւէն տանջուելով
սկսաւ ըսել. « Ա՛հ, մեռնէի ու ազատէի »: Աս-
տուած ալ ըսաւ իրեն. « Դուն այդչափ կը ցաւիս
մէկ դգմենիին համար, որ ինքն իրեն մէկ գիշե-
րուան մէջ բուսաւ ու մէկալ գիշերը չորցաւ. հա-
պա ինչպէս ես չողորմիմ մեծ քաղքի մը, ուր
հարիւր քսան հազար միայն անմեղ աղաք կան »:

Հրեից գերութիւնէ դառնալը .

Հ . Երբոր Աստուծոյ սահմանած եօթանասուն տարին լմնցաւ , ինչ կերպով դարձան Հրեայք Բաբելոնացոց գերութենէ .

Պ . Աիւրոս Պարսից Թագաւորն երբոր Բաբելոնացոց տիրեց , Աստուծմէ շարժած հրաման հանեց որ Հրեաները բոլոր Երուսաղէմ դառնան , և Աստուծոյ տաճարը նորէն շինեն . և որչափ ոսկիէ ու արծրթէ ամաններ կային որ ատենով Երուսաղէմէն կողոպտեր էին , բոլորը ետ դարձուց . հրաման ալ տուաւ թէ տաճարը շինելու ինչ որ պէտք ըլլայ՝ Թագաւորական գանձէն արուի : Ուստի յիսուն հազարի չափ Հրեայ իրենց առաջնորդ առած Զորաբարէլը Սաղաթիէլեանց՝ Յեքոնիա Թագաւորին թող , և Յեսու Յովսեփեկեանց ան ատենի քահանայապետը , Երուսաղէմ եկան ու սկսան քաղաքը նորոգել , և տաճարը շինել :

Հ . Երբոր Հրեայք Բաբելոնէն դարձան , տաճարին շինելն ինչ կերպով առաջ դնաց .

Պ . Հրեից քովի ազգերը նախանձելով կ'արգիլէին , ինչուան որ Աիւրոս մեռաւ : Ետքը Արտաշէս Թագաւորին ատենը բոլորովին արգիլել արեւին , ինչուան Գարեհ Թագաւորին երկրորդ տարին :

Հ . Գարեհի ատեն տաճարն ինչպէս նորէն կրցան շինել Հրեայք .

Պ . Գարեհ փառաւոր սեղան մը ըրաւ իշխաններուն . ետքը երբոր գնաց քուն ըլլալու՝ իրեք սենեկապանները , որոնց մէկն էր Զորաբարէլն՝ որ Երուսաղէմէն նոր դարձեր էր ու տաճարը շի-

նեղու հրամանն առնելու կը ջանար, խորհուրդ ը-
րին՝ որ ամէն մէկը զատ մէյմէկ խելացի բան գրեն,
ու որուն որ թագաւորն հաւնի, անիկայ մեծամեծ
պատիւներու հասնի. ուստի կարծիքնին գրած
կնքած՝ թագաւորին բարձին տակը գրին: Առջինը
գրեր էր թէ գինին յաղթող է ամէն բանի: Երկ-
րորդը՝ ամենուն յաղթող՝ թագաւոր. և երրորդն
որ Չորաբարէլն էր, գրեր էր թէ՛ կիներն են ա-
մենուն յաղթող, և անոնցմէ ալ զօրաւոր ճշմար-
տութիւնն է: Թագաւորն երբոր ան թղթերը
կարդաց, հրամայեց որ ամէն մէկը իր գրածը պատ-
ճառներով հաստատէ մեծամեծներուն տուջև: Երբ
որ անոնք լսեցին՝ Չորաբարէլն ըսածին հաւնե-
ցան, ու սկսան կանչել. « Մեծ է ճշմարտութիւ-
նը »: Ան ատենը Գարեհի ըսաւ իրեն, թէ « Խնդրէ՛
ինչ որ կ'ուզես ». Չորաբարէլն ալ ըսաւ. « Միայն
այս կը խնդրեմ որ Երուսաղեմի տաճարը շինուի ».
Թագաւորն ալ հրաման տուաւ որ իր գանձէն
վճարուի պէտք եղածը: Ասանկով Չորաբարէլն
տաւջնորդելովը՝ չորս տարուան մէջ լմրնցաւ տա-
ճարը, ու ետքը Աստուծոյ նուիրեցին: Սեղանին
կրակն ալ գտան բերին ու սկսան ողջակէզ ընել,
զոհ մատուցանել:

Հ. Չորաբարէլ տաճարը շինելէն ետև Իսրայէ-
լացւոց ո՞վ կ'իշխէր.

Պ. Եզրաս քահանան, Գարեհի յաջորդ Ար-
տաշեսին հրամանովն եկաւ Երուսաղեմ, ու հրեկոց
օրէնքները սորվեցուց, և ուրիշ կարգեր կանոն-
ներ ալ դրաւ: Ետքը Նէեմիս որ թագաւորին կը
ծառայէր, և իրեն շատ սիրելի եղաւ, հրաման ա-
ռաւ, ու գնաց Երուսաղեմին պարիսպները շինել
տուաւ: Թէպէտ շատ ջանացին քովի ազգերուն
իշխաններն արդելել, բայց չկրցան:

Հ. Սեղանին կրակն ի՞նչպէս և ուստի գտան.

Պ. Հրեկոց Բաբելոն գերի երթալու ատեննին

Երեմիա մարգարէն ողջակիզաց սեղանին սուրբ
կրակն որ միշտ վառ կը պահուէր, Երուսաղեմին
արևելեան կողմը ցամաք հորի մը մէջ պահել
տուաւ: Նէեմիս աս բանիս տեղեկանալով մարգ
խրկեց որ երթան հանեն • դնացին, թանձր պղղ-
տոր ջրէն զատ ուրիշ բան չգտան. Նէեմի հրա-
մայեց որ ան պղտոր ջուրը բերեն • ու երբոր պա-
րաստած ողջակէզին վրայ լեցուցին, արևը սեղա-
նին վրայ ծաթեղուն պէս՝ սկսաւ վառիլ, ու ողջա-
կէզը շուտ մը երեցաւ: Ետքը Նէեմի ան հորուն
մէջի բոլոր ջուրը հան քարերու վրայ թափել ար-
ւաւ որ նորէն բռնկեցաւ ու ողջակէզը բոլորովին
լնրնցաւ: Արտաշէս երբոր լսեց աս հրաշքը, հրա-
ման հանեց որ ան հորուն չորս դին պատ քաշե-
ցին ու կը պատուէին ան տեղը:

Հրէից ազատիլը Պաղոմէոսի բարկութիւնն.

Հ. Եզրաակն ետքը ով եղաւ Հրէից իշխեցող.

Պ. Երկու հարիւր երեսուն տարիի չափ քա-
հանայապեաներ կ'առաջնորդէին • ետքը մեծն Ա-
ղեքսանդր ախրեց բոլոր աշխարհքիս • ու երբոր
չորս բաժին եղաւ Աղեքսանդրի տերութիւնը,
Հրէաստանը Պաղոմէոս Սոտեր Եգիպտացւոց թա-
ղաւորին տակն ինկաւ, և անոր յաջորդները կ'իշ-
խէին • և Պաղոմէոս Փիղոսպատր թշնամութիւն
կապելով Հրէից հետ, հրաման հանեց որ իր տե-
րութեան տակն եղած Հրեաներէն ով որ կուօք
չպաշտէ, Աղեքսանդրիս ժողովն՝ ջարդելու հա-
մար:

Հ. Պաղոմէոս Փիղոսպատր ինչ պատճառաւ
Հրէից հետ թշնամացաւ.

Պ. Անդամ մը երբոր Երուսաղէմ եկաւ, Աստուծոյ զոհ մատուցանելէն ետքը՝ հետաքրքրութեամբ Սրբութիւն սրբոցն ալ ուզեց տեսնել. թէպէտ շատ դէմ կեցան, բայց ճար չեղաւ՝ մըտաւ. և մէկէն ասդին անդին զարնուելով՝ անգամալոյժ ինկաւ գետինը. հասան ծառաները, դուրս քաշեցին, խել մը ատենէն հաղիւ վրայ եկաւ: Երբոր ետ դարձաւ, բարկացած՝ հրաման հանեց որ իր տէրութեան տակն եղած հրեաներն ամէնքն ալ կուռք պաշտեն, և յանձն չաւնողը կապած Աղեքսանդրիա տանին: Ասանկով շատ հրեաներ մեծ ու սղտիկ տարին Աղեքսանդրիա հրապարակի մը մէջ, ու եօթը հարիւր փիղ պատրաստեցին՝ որ կատղեցուցած վրանին թողուն, ու իրենք տեսնելով անոնց ջարդը զուարճանան: Հրեայք սիրասն աղօթքի ու պաղատանքի. և Աստուած երկու իրեք օր թագաւորին քունը ծանրացընելով՝ անոնց ջարդը արդիւնց. ետքը նոյն օրն ալ որ փիղերը թողուցին, երկու հրեշտակ՝ որ միայն հրեից կ'երենային, մէկ խռովութիւն մը ձգեցին զօրքին ու փղերուն մէջ, որ փղերն սկսան զիրենք ջարդել, և զօրքը փախչող փախչողի եզան: Թագաւորին ալ միտքը փոխուելով՝ սկսաւ վրանին ցաւիլ. ու հրաման տուաւ որ հոն մեռնելու տեղերնին եօթն օր իր ստակով հրեայք ուտեն խմեն. և ամենուն պիտոյքը հոգալով՝ տեղերնին խրկեց զամէնքը. ու անկէ ետքը հանգիստ ուրախ կ'ապրէին:

Հ. Պտղոմէոս Փիղոսպատորին հրեից հետ հաշտուելէն ետքը, ո՛րչափ ասեն հրեայք հանգիստ մնացին.

Պ. Անոր մեռնելէն ետքը մեծն Անտիոքոս Ասորեոց թագաւորը տիրեց Եգիպտոսոց. և անոր որդւոյն Սելևկոս Փիլոսպատորին ասեն հրեից խաղաղութիւնը տակնուվրայ ըրաւ Սիմոն անունով հրեայ մը, որ անկարգութեան համար Անիա

քահանայապետէն յանդիմանուելով, ներացաւ,
գնաց Ապօղոնիոսի՝ ան կողմերուն վերակացուն
մատնեց թէ Երուսաղէմի տաճարը շատ գանձ
կայ: Սեւեկոս խանաչուն պէս՝ Հեղիոզորոս իշ-
խանը Երուսաղէմ խրկեց որ ան գանձն իրեն բե-
րէ: Ոնիա քահանայապետն ըսաւ. « Իրաւ չորս
հարիւր քանքար արծաթ ու երկու հարիւր քան-
քար ոսկի կայ, բայց որբերուն ու որբւարիներ-
ուն ասրուսան են »: Հեղիոզորոս ոտք կը կոխէր
թէ « Պէտք է որ թագաւորին տանիմ »: Ուստի օր
մը բռնի տաճարը մտաւ որ առնէ. բոլոր քաղաքը
կուլային կ'աղօթէին որ Աստուած որբերուն ո-
ղորմի: Ան ատենը երկնքէն ձիաւոր մը հասաւ՝
երկու փառաւոր կարիճներով, աղէկ մը ծեծեցին
Հեղիոզորոսը՝ մեռնելու մօտ: Անանկ խեղճու-
թեամբ քաշքրչելով դուրս հանեցին զինքը մեռե-
լի պէս. ու քովիններն աղաչեցին Ոնիային որ ա-
ղօթք ընէ, առողջացնէ: Երբոր քահանայապե-
տը զոհ մատուց, նորէն ան փառաւոր կարիճներն
երեցան՝ ըսին Հեղիոզորոսի. « Շնորհակալ եղիր
Ոնիա քահանայապետին որ Աստուած անոր ա-
ղօթքովը քեզի ողորմեցաւ, և գնա՛ ամենուն պատ-
մէ Աստուծոյ կարողութիւնը »: Ելաւ Հեղիոզո-
րոս ինքն ալ զոհ մատուց, ու շնորհակալ ըլլալով՝
պարգևներ տուաւ Ոնիա քահանայապետին, եւ
դարձաւ ու ամենուն կը պատմէր. թագաւորին ալ
խնացուց թէ Աստուած պաշտպան է ան տեղին.
« Թէ որ կ'ուզես, ըսաւ, պատժել մէկը, հոն
խրկէ »:

Անտիոքոս Եպիսկոպոսի ժամանակը .

Հ . Սիմոնէն ուրիշ ո՞վ եղաւ որ Ռնիայի քահանայապետութեանն աչք տնկէ .

Պ . Երբոր Մենեղոսէն ետքը Անտիոքոս Եպիսկոպոս ըստած եղբայրը թագաւորեց, որ հրէական օրէնքին թշնամի էր, Յասոն Ռնիային եղբայրը շատ տուրք տալ խոստացաւ թագաւորին, թէ որ ինքն ըլլայ քահանայապետ . խօսք ալ տուաւ՝ հրէից կռապաշտութիւն սորվեցընելու : Աննկով աս չար Յասոնն իրեք տարի հրէից աստուածապաշտութիւնն աւրելէն ետքը, երբոր Մենեղաւոսին ձեռքովը տարեկան տուրքը Անտիոքոսին խրկեց, Մենեղաւոս դնաց՝ թագաւորին ալ շատ տուրք խոստանալով Յասոնին տեղը ինքն անցաւ :

Հ . Մենեղաւոս Յասոնէն յափշտակած քահանայապետութիւնը կրցան առաջ տանել .

Պ . Խոստացած տուրքը հատուցանել չկրնալով, տաճարին արծըթեղէններէն կաշառք տուաւ Անդրոնիկոսի՝ թագաւորին մեծ իշխանին, կէս մըն ալ ծախեց : Երբոր Ռնիան Մենեղաւոսի գողութիւնը յայտնեց, ան ալ Անդրոնիկոս իշխանին ձեռքովը մօրթել տուաւ զՌնիան : Ասոր վտայ ժողովուրդը սաստիկ ցաւելով գանգատեցան թագաւորին . ան ալ շուտ մը Անդրոնիկոսը իշխանական լաթերը հանած բոլոր քաղաքը պարտցընել տալէն ետեւ, Ռնիայի սպաննուած տեղը գլուխը կտրել տուաւ :

Հ . Անդրոնիկոս իշխանը մեռնելէն ետեւ Մենեղաւոս քահանայութեան մէջ մնաց .

Պ . Երբոր չէր կրնար տուրքը հատուցանել՝
գնաց ինքը թագաւորին , Լիւսիմաքոս եղբօրք
յանձնելով որ տաճարէն ոսկի արծաթ վերցընէ
գաղտուկ իրեն խրկէ : Ժողովուրդն իմացան ու
կ'ուզէին ձգել Լիւսիմաքոսը . ան ալ իրեք հա-
ղար հոգի հանեց անոնց դէմ , կռուեցան ու շատ
մարդ ջարդուեցան : Ետքը թագաւորին առջև դա-
տաստանի ելան՝ Մենեղաւոս պարտաւորեցաւ .
բայց ինքը թագաւորին մէկ բարեկամը կաշառե-
լով , ամբաստանողները մեռցընել տուաւ : Եւ աս
օրերս քառասուն օր երկինքը ձիււոր մարդիկ
կ'երևնային և զէնքերու ձայներ կը լսուէին :

Հ . Երկինքն երեցած պատերազմի նշաններն
ինչ վերջ ունեցան .

Պ . Ան օրերն Անտիոքոս Եգիպտացւոց վրայ
պատերազմի երթալով , երբոր ուշացաւ , ձայն
ելաւ թէ մեռեր է . Յասոն որ փախեր էր , շուտ
մը քսան հաղար հոգւով եկաւ Երուսաղէմ , շատ
մարդ ջարդեց որ իշխանութեան հասնի Մենեղա-
ւոսը ձգէ . բայց իմանալով Անտիոքոսին ողջ ըլլա-
լը , նորէն փախաւ , և ամենուն ատելի եղած՝ օտար
երկիր չարաչար մեռաւ : Անտիոքոս աս բաներս
իմանալով , կարծեց թէ Հրեայքն իրմէ կ'ապրու-
տամբին , անոր համար կատղած բոլոր զօրքով ե-
կաւ , իրեք օրուան մէջ ութսուն հաղար մարդ
ջարդեց , քառասուն հաղար ալ գերի առաւ ծա-
խեց : Ետքը Մենեղաւոսի մատնութեամբը տա-
ճարը մտաւ , արծաթ՝ ոսկի եւ ուրիշ պահճու
բաներ ալ մէկտեղ հաղար եօթը հարիւր քանքա-
րի չափ ժողվեց տարաւ . մնացած Հրէից ալ վե-
րակացու դրաւ Փիլիպպոս Փոխգահի չար մարդը :
Եսե Ապողոնիոսը քսան հաղարով խրկեց որ չա-
փահաս մարդիկը ջարդէ , և կանայք ու տղաքը
գերի ծախէ : Ապողոնիոս գիտնալով թէ Հրեայք
չաբաթ օրը սուրբ պահելու համար՝ դէմ չեն գներ ,

ապասեց քանի մը օր, ու շարաթ օրը յանկարծ վրանին ելաւ, շատ մարդ ջարդեց :

Եօրև եղբայրց նահատակութիւնը .

Հ . Անտիոքոս չրէից տուած ջարդովը կշտա-
ցաւ .

Պ . Ուղեց որ մնացածներն ալ ամէնքը կուռք պաշտեն . ուստի Աթէնորիոս ծերունին խրկեց , որ եկաւ կուսպաշտութիւն կը սորվեցընէր , ու մըտիկ չընողը սասաիկ տանջանքներով կը սպաննէր : Անգամ մըն ալ երկու կին՝ աղաքնին թլիատեղ նուն համար տարաւ բարձր պարիսպէն վար նետեղ տուաւ : Անոր համար շատ մարդ ասդին անդին լեռները փախան :

Հ . Անտիոքոսի հալածանքին մէջ ինչ երևելի դիպուած կը յիշատակուի .

Պ . Եղիազար քահանային քաջութիւնը . Եօթն եղբայրց նահատակութիւնը և Մակաբայեցւոց կործութիւնը :

Հ . Եղիազար քահանան ինչ քաջութիւն ըրաւ .

Պ . Ասոր բերանը դայլ դրած՝ կ'ուղէին բռնի խողի միս կերցընել որ օրինաց դէմ ընէ . և թէպէտ բարեկամները կը յորդորէին թէ գաղտուկ ուրիշ միս տան ուտելու , որ գատաւորը խաբէ ու տանջանքէն ազատի , բայց ինքն ամենևին յանձն չառաւ . « Իննսուն տարուան ծեր եմ , կ'ըսէր , ինչպէս իմ խիղճս մաքուր պահելու համար՝ ուրիշները գայթակղեցընեմ . դիտնամ որ իննսուն

տարի ալ պիտի ապրիմ, չեմ ընել » ասանկով
ինքզինքն Աստուծոյ յանձնելով հոգին աւան-
դեց :

Հ. Եօթն եղբարքն իրենց մօրը հետ ինչպէս
նահատակուեցան .

Պ. Երբոր զասոնք բռնեցին, կը ստիպէին որ
խողի միս ուտեն . մեծ եղբայրնին առաջ անցաւ,
ըսելով . « Ինչ պարտաւ տեղը կը հարցընէք . կը
մեռնինք, օրէնքը չենք թողուր » : Թագաւորը
հրամայեց որ շուտ մը անոր լեզուն ու ոտուրնե-
րուն ձեռուրներուն ծայրերը կտրտեն, գլխուն
կաշին ալ քերթեն՝ երեսին վրայ դարձընեն : Ա-
սոնցմով երբ չմեռաւ, հրամայեց որ կրակին վրայ
դնեն, տապկեն : Մէկալ եղբարքը մօրերնուն հետ
սկսան մէկմէկու սիրտ տալ որ մեռնին ՚ի փառս
Աստուծոյ : Ետեւէն երկրորդին գլխուն կաշին քեր-
թեցին՝ երեսին վրայ ձգեցին ըսելով . « Հնազան-
դէ, խողի միս կեր » . ու մէկալին պէս տանջեցին .
և ինքը հոգին տալու ատենը Թագաւորին ըսաւ .
« Ո՛վ հպարտ, դուն զմեզ կը մեռցընես, բայց Աս-
տուած կը կենդանացընէ » : Երրորդին հրամայե-
ցին որ լեզուն դուրս հանէ, շուտ մը հանեց, ա-
ռանց վախնալու ձեռուրներն ալ երկնցուց, որ Թա-
գաւորն ալ զարմացաւ մնաց : Ետքը չորրորդը մեռ-
նելու ատենն ըսաւ . « Երանի՛ մեզի որ պիտի յա-
րուծիւն առնենք . վայ քեզի որ զրկուած ես ան-
կէց » : Հինգերորդը՝ վեցերորդն ալ նոյն տանջան-
քով մեռան : Ուղեց Թագաւորն որ գոնէ եօթնե-
րորդն անոյշ խօսքերով պարգևներ խոստանալով
խաբէ . բայց երբոր ճար չեղաւ . իր մօրը տուաւ
որ զինքը խրատէ : Մայրն ալ անոր դէմ սկսաւ
յորդորել որ չըլլայ թէ ստակէն զրկուի, որ եր-
կինքը մէկտեղ ուրախանան : Ան ատենը տղան ալ
աւելի սիրտ առած սկսաւ նախատել զԹագաւո-
րը . « Աստուած քեզ պիտի պատժէ » ըսելով :

Թագաւորն ալ կատղեցաւ, ալ աւելի սասաիկ
տանջանքով զինքն ալ մայրն ալ մեռուց:

100

Մակարայեցիք .

Հ . Մակարայեցիք որոնք են, և ինչ կործա-
թիւն ըրին .

Պ . Աս ատենն էր Մատաթիա քահանան որ
գնաց Մովզիիմ քաղաքը քաշուեցաւ հինգ աղոց-
մով, անուենին՝ Յովհաննէս, Շմաւոն, Յուդա
Մակարէ, Եղիազար, Յովնատան: Անտիրոքս հոն
ալ մարդ խրկեց՝ դարձնելու համար, և շատը կը
դառնային . բայց Մատաթիան համարձակ կ'ըսէր
թէ «Մենք կուռք չենք պաշտեր» : Աս ըսելու ա-
տեն տեսան որ անդիէն ուրացող հրեայ մը եկաւ,
կուռքին զոհ կը մատուցանէր . մէկէն վրան վա-
ղեց ու ոտքով դարկաւ, կուռքին առջև սատկե-
ցուց : Ան թագաւորական մարդն ալ որ զինքը կը
յորդորէր՝ մեռուց, կուռքը կործանեց, և սկսաւ
կանչել . «Ով որ աստուածային օրէնքը կ'ուզէ
պաշտպանել՝ քովս գայ» : Ասանկով տղաքն և ու-
րիշ բարեպաշտ մարդիկ ալ մէկտեղ ելան լեռ մը
գնացին ու այրելու մէջ կը բնակէին : Թշնամիներն
խմացան, շաբաթ օր վրանին եկան, համարձակ
հազար հոգի ջարդեցին : Ասոր վրայ Մատաթիա
շատ ցաւելով, խորհուրդ ըրաւ որ անկէց ետքը
շաբաթ օրն ալ աստուածային օրինացը համար
պատերազմին : Եւ երբոր աւելի շատցան, սկսան
կապաղաչից հետ պատերազմիլ կուռքերը կործա-
նել, ուրացողները ջարդել : Ետքը Մատաթիայի
մահը մօտենալով՝ յորդորեց որդիքն որ քաջու-
թեամբ աստուածապաշտութիւնը նորէն հաստա-

անն , ու մեռաւ . Շմաւոն եղբայրնին իրենց հօր
անդ դնելով , Յուդա Մակաբէն ալ զօրասպետ , ո-
րուն անուանովը կոչուեցան Մակաբայեցիք :

Հ . Յուդա Մակաբէն ինչպէս յաջողութեամբ
առաջ կ'երթար .

Պ . Առջի բերանը վեց հազար հոգևով սկսաւ
քաղաքներ գեղեր ասնել . Ապողոնիոսին դէմ ալ
ելաւ , յաղթեց , շատ կողոսուտ առաւ , ղինքն
ալ սպաննեց ու անոր թուրը ինքը բանեցը-
նել սկսաւ : Ան ատենը Ասորեստանի Նրէն զօրա-
պետն ալ աւելի զօրքով դէմն ելաւ . Յուդա իր
քիչ զօրքը յորդորելով որ Ասաուծոյ ապաւինին ,
վրանին վազեց , և ութը հարիւր հոգի ջարդելով
ցրուեց անոնց բանակը :

Հ . Անտիոքոս ինչ ըրաւ՝ երբոր լսեց Յուդա
Մակաբէին քաջութիւնները .

Պ . Մտածեց որ բոլոր ութովը դէմ ելլէ ու
Հրէից ազգը ջնջէ . ուստի առաջ գնաց Պարսից
վրայ՝ ստակ ձեռք ձգելու համար , Լիւսիաս իշ-
խանին և իր Անտիոքոս որդւոյն յանձնելով Հրէից
պատերազմին բաները : Լիւսիաս իրեք զօրասպե-
տներեց՝ Պաղոմէոսը , Նիկանովըն ու Գորգիասը .
և քառսուն հազար հեռեակ՝ ու եօթը հազար
ձիաւոր զօրքով խրկեց որ Անտիոքոսին մտածածը
կատարեն : Նիկանովը վաճառականներուն հեռ-
խօսք դրաւ , որ բռնելու գերիներուն իննսունը՝
մէկ քանքարի ծախէ իրենց . և կը կարծէր որ
միայն ան Հրէից գնովը՝ Հառմայեցւոց արուելու
տարեկան տուրքն կ'ելլէ : Յուդա իրեններն որ
սասախի վախի մէջ էին՝ յորդորեց նախահարց
օրինակներովն ու Ասաուծոյ հրաշքներովն : Ետքը
բոլոր Հրէից աղօթք ու պաք ապրստարելով , զօրքը
կարգի դրած՝ Ասաուծոյ օգնութեամբը թշնա-
միներէն տասնումէկ հազար հոգի ջարդեց և ամ-
բարտաւան Նիկանովը զօրասպետն ալ աղքատի հա-

դուստով որ չճանչցուի՝ Անտիոք փախաւ : Իսկ
Հրեայք խեղ մը կողոպուտ ձեռք ձգելէն ետե՛
դերի գնելու եկող վաճառականներն ալ բռնեցին
ու ստակնին առին . և աս կողոպուտներէն՝ Յու-
դայի հրամանովը շատ բան աղքատաց ու որբոց
բաժնեցին : Անկէ ետե Յուդա յաղթութիւն մըն
ալ ըրաւ Տիմոթէոսի և Բաքիդի դէմ . քսան հա-
զար ալ անոնցմէ ջարդեց ու շատ կողոպուտ ալ
սուաւ :

101

Անտիոքոսի մահը .

Հ . Լիւսիասայ խորհուրդն երբոր առաջ չգը-
նաց ինչ ըրաւ .

Պ . Տարիէ մը վաթսուն հազար հեռակ ու
հազար ձիաւոր զօրքով Հրէաստան եկաւ : Յուդա
տասնումէկ հազարով դէմ ելաւ , ու հինգ հազար
հոգի ջարդեց , և բանակը ցրուեց :

Հ . Յուդա Մակաբէ Երուսաղէմն ալ չաղատեց
Անտիոքոսի ձեռքէն .

Պ . Լիւսիասայ յաղթելէն ետե բոլոր Հրէից
իշխան ըլլալով՝ Երուսաղէմ գնաց , որ իրէք տարի
կռապաշտութեան մէջ մնացած էր . ու բոլոր
կուսքերը վերուց կործանեց , և սկսաւ նորոգե-
լու Աստուծոյ սաճարն ամէն բանով . քահանա-
ները զտանց , և Աստուծոյ շնորհակալութեան
համար եօթն օր տօն կատարեցին : Ետքը ամէն
սահմանակից կռապաշտ ազգերուն ալ յաղթեց
Յուդա՝ յայտնի Աստուծոյ օգնականութեամբը .
անանկ որ անգամ մը հինգ ձիաւոր կտրիճներ ե-
րեցան որ Յուդան մէջերնին առած կը սահէին ,
ու թշնամիներուն նեա նեա ելով կը շփոթէին զա-
նոնք՝ որ իրար անցած կը յաղթուէին :

Հ. Անախոքոս որ Պարսկաստան գնացեր էր՝
երբոր լսեց իր զօրապետներուն յաղթուելը, ինչ
ըրաւ .

Պ. Երբոր խաղք եղած դարձաւ անկէ, սաս-
տիկ կատակեցաւ . ճամբայ ելաւ՝ արտորնօք Հրէաս-
տանի վրայ սկսաւ գալ որ օր մը առաջ ջնջէ
Հրեաները : Ան ատեն Աստուծոյ պատուհասե-
լովք սաստիկ ցաւ մը եկաւ վրան : Երբոր ինքը
ցաւին մտիկ չընելով կը քշէր կառքը, յանկարծ
ինկաւ, ջարդուբուրդ եղաւ բոլոր մարմինը, և
սկսաւ փտիլ ներսի դին, վրան որդեր կը վրի-
տային ու կը հոտէր : Ասանկով երբոր ալ մահուան
դուռը հասաւ, իմացաւ քաշածներուն պատճա-
ռը, անոր համար առաջադրեց որ եթէ առողջա-
նայ, Հրեայ ըլլայ ու ամէն Աստուծոյ ուղածներն
ընէ : Բայց Աստուծոյ ողորմութեան չափը լցուած
ըլլալով՝ թողուց որ չարաչար սատկի :

Հ. Անախոքոսի մեանելէն ետե Յուդա Մակա-
բէն հանգստութիւն գտաւ .

Պ. Չէ . վասն զի Լիւսիաս մէկէն անոր որդին՝
Եւպատոր կամ Հօրամոյն ըսուած Անախոքոսը
թագաւոր դրաւ, որ նորէն պատերազմ բացաւ,
ու շատ անգամ Յուդայէն յաղթուելէն ետքը՝
հաշտութիւն խօսեցաւ . բայց քիչ քշեց, որով
հետե Դեմէարիոս իրեն հօրեղբօրը որդին եկաւ
Անախոք, սպաննեց Անախոքոսն ու Լիւսիասը և
ինքը տիրապետեց : Ան ատենը Ալկիմոս անունով
Հրեայ մը որ ատենով քահանայապետութենէ
վանտուած էր, գնաց թագաւորին ըսաւ, թէ « Բա-
նի որ Յուդա Մակաբէն ողջ է, Հրէաստան խա-
ղաղութիւն չըլլար » . և ուրիշներուն ալ վրայ տա-
լով՝ թագաւորը զԱլկիմոսը Բաքիդ զօրապետին
հետ խրկեց որ պէտք եղածն ընեն, անոնք ալ ե-
կան խաբէութեամբ խել մը մարդ Յուդայի բա-
րեկամներէն սպաննեցին, և տեսնելով որ Յուդան

պատերազմի կը պատրաստուի , դարձան նորէն
Թագաւորը գրգռեցին . ան ալ Նիկանովը շատ
զօրքով խրկեց որ ղՅուդան բռնէ , ու Աղկիմոսը
քահանայապետ դնէ :

102

Յուդայի մահը .

Տ . Նիկանովը ղՅուդան բռնելու հրամանը կըր-
ցաւ առաջ տանիլ .

Պ . Նիկանովը տեսաւ որ Յուդա կտրիճ ղօրքով
պատրաստուած կեցեր է , սիրտ չըրաւ , ուղեց որ
հաշտութիւն ընէ . ուստի Երուսաղէմ մտաւ և
Յուդայի հետ խնամութիւն ալ ըրաւ : Աղկիմոս
Նիկանովրայ ըրածները տեսնելով , գնաց Թագա-
ւորին տիրաստանեց . ան սրդողեցաւ , գրեց Նի-
կանովրին թէ Յուդան կապած ինձի խրկես : Յու-
դա լսեց , պահուրտեցաւ . Նիկանովը փնտռելով
զինքը քահանաներուն գնաց , ձեռքը դէպ 'ի տա-
ճարն երկընցընելով « Թէ որ , ըսաւ , Յուդան ձեռքս
չտաք , աս տաճարը կը կործանեմ , մեհեան կը շի-
նեմ » : Քահանաները լալով սկսան աղաչել Աս-
տուծոյ որ պահէ իր տաճարը :

Տ . Նիկանովը երբոր ղՅուդա Մակաբէն շիւր-
ցաւ բռնել , ինչ ըրաւ .

Պ . Նախ քաղքին գլխաւոր ծերը Հաաքս բռ-
նելու համար հինգ հարիւր զինուոր խրկեց . բայց
Հաաքս չուղելով կռատաշաներու ձեռք լինալ ,
Թուրով ինքնիրեն զարկաւ ու ինք զինքը պարիս-
պէն վար ձգեց . և շմեռած՝ արիւնիւրւայ ոտքի
վրայ ելաւ , դուրս ինկած փորտախիբը ձեռքն ա-

աաւ, ըսաւ. « Տէր, այսպէս իրեն հատուցա-
նես » . ու ինկաւ մեռաւ : Ետքը Նիկանովը խնա-
նալով որ Յուդա Մակաբէն Սամարիայի կողմերը
զօրքով կեցեր է, կամօք շաբաթ որ իր բոլոր ու-
ժովը վրան վազեց : Յուդա Մակաբէն ալ իր զօր-
քը յորդորելով, տեսիլք մըն ալ պատմեց թէ
Ոնիա քահանայապետը Հրէից համար աղօթք
կ'ընէր, և ուրիշ ծերունի մըն ալ կը ցուցընէր,
ըսելով թէ՛ « Երեմիա մարգարէն է, որ միշտ
ձեզի համար Աստուծոյ կ'աղաչէ » : Ան ատեն
Երեմիան ոսկիէ թուր մը Յուդայի կուտայ ու
կ'ըսէ. « Ա՛ռ ու բոլոր թշնամիներդ սպաննէ » :
Աս տեսիլքով քաջալերուած իրենք քիչ հոգի
ըլլալով, երեսունըհինգ հազար հոգի մեռուցին՝
Նիկանովն ալ մէկտեղ : Յուդա հրամայեց որ
Նիկանովոյ գլուխը և աջ ձեռքը կտրեն, որ բե-
րին տաճարին առջևը կախեցին :

Հ. Նիկանովը մեռնելէն ետև Յուդան խաղա-
ղութիւն դտաւ .

Պ. Մօտերն ուրիշ զօրաւոր թշնամի մը չգրա-
նուելով, քիչ մը ատեն դադրեցաւ պատերազմը,
և ինքն ալ ըսելով Հասմայեցւոյ մեծ անունը,
դեպքան խրկեց, հեաերնին դաշինք գրաւ : Բայց
Դեմեար ըսելով Նիկանովոյ մահը, նորէն Բա-
քիզը Աղկիմասի հետ խրկեց : Ան ատեն Յուդայի
քով միայն իրէք հազար զօրք գանուելով վախ-
ցան ցրուեցան, և միայն ութը հարիւր ձիաւոր
մնաց . անոնք ալ կ'ըսէին թէ « Աս անգամ ետ
կենանք » : Յուդա ըսաւ. « Ես փախչիլ չեմ
գիտեր » . և ան ութը հարիւրով առաւօտանց
լնչուան իրիկուն պատերազմեցաւ ու բանակին
աջ թևին յաղթեց : Բայց ձախ թևին զօրքը եկան
ղերենք մէջ առին . հան ինկաւ Յուդան ու զօրքը
ցրուեցան : Ետքը Էմաւոն ու Յովնաթան եղբար-
քը անոր մարմինը տարին հայրենական գերեզ-

մանը թաղեցին, հրեայք ալ վրան մեծ սուգ
քրին :

103

Յովնաբուն, Շմառն .

Հ . Յուդա Մակաբէին տեղ ո՞վ եղաւ սուաջ-
նորդ հրէից .

Պ . Առջի բերանը անտէր մնալով, Բաբելոնէն
չաա նեղութիւն քաշեցին . անոր համար Յովնա-
թան անոր եղբայրը քահանայապետ ու առաջ-
նորդ դրին : Բաբելոն դան ալ կ'ուզէր սպաննել .
բայց Յովնաթան զօրքով անասաւ տեղ մը քա-
շուեցաւ : Բաբելոն գնաց՝ շարաթ օր պատերազմ
բացաւ . Յովնաթան հազար հոգի զարկաւ փա-
խուց : Երկրորդ անգամ ալ Բաբելոն յաղթուելով
հաշտութիւն ըրաւ ու Անտիոք դարձաւ, սրով
հեռե Մեմեար թագաւորն ալ Աղեքսանդր Եսթի-
փանին ձեռքէն կը վշտանար : Ասանկով Յովնա-
թան Մաքմառ նստաւ սկսաւ ժողովուրդը կառա-
վարել . վասն զի Երուսաղեմի բերդը գեռ Մեմեա-
րին ձեռքն էր :

Հ . Յովնաթան կրցա՞ւ խաղաղութեամբ քշել
եր իշխանութիւնը .

Պ . Իրեն քաջութիւնը հաջակուելով, ուրիշնե-
րը չէ թէ միայն դէմ չէին ելլէր, հապա նաև եր-
կու թագաւոր Մեմեար ու Աղեքսանդր՝ մէկմէ-
կու դէմ Յովնաթանու բարեկամ ըլլալ կը ջանայ-
ին : Բայց Յովնաթան Մեմեարի սնորէնու-
թիւնները յիշելով, անոր բարեկամական խոսա-
մունքներուն այնչափ չէր հաւտար . մանաւանդ
որ Աղեքսանդր զինքն քահանայապետ ճանչա-

լով ոսկի թագ ու ծիրանի խրկեց իրեն . թէպէտ
Գեմեար ալ նորէն բարեկամութեամբ թուղթ
գրեց Հրէից , շատ ազատութիւններ տալով ,
բայց անոնք հաստատ կեցան Աղեքսանդրի հետ :
Ետքը Աղեքսանդր զԳեմեարն սպաննեց , ու Ե-
ղիպտացւոց Պաղոմէոս թագաւորին հետն ալ բա-
րեկամանալ ուղեւոր , անոր Աղէոսպատրա աղ-
ջիկն իրեն կին առաւ . և երբոր երկու թագաւոր
մէկտեղ Պաղոմայիդ քաղաքը հարսնիք կ'ընէին , Ա-
ղեքսանդր զՅովնաթանն ալ հրաւիրեց , ու շատ
պատիւ տուաւ իրեն . թէպէտ հոն Յովնաթա-
նի վրայ շատ ամբաստանութիւն ընողներ ալ ե-
ղան :

Հ . Յովնաթան ինչուան ետքը խաղաղութեամբ
իշխեց Հրէից .

Պ . Քիչ ատենէն՝ մեռած Գեմեար թագաւո-
րին մեծ որդին Գեմեար Նիկանովը՝ իր հօրը տեղը
Մնաիոք քաղաքն եկաւ նստաւ . ու Յովնաթանի
վրայ բարկացած՝ իր հօրմէն զատուելուն համար ,
Ապողոնիոս զօրապետը՝ խրկեց վրան , ու թը հա-
զար հեռեակով և իրեք հազար ձիաւորով : Յով-
նաթան Շմաւոն եղբօրը հետ տասը հազար զօր-
քով դէմ ելաւ , ու թը հազարը ջարդեց , և Բագոն
կուռքին տաճարը՝ հոն փախչողներուն վրայ այ-
րեց , ու շատ կողոպուտով Երուսաղէմ դարձաւ :
Աղեքսանդրն ալ Յովնաթանի քաջութեանը հա-
մար իրեն թագաւորական նշան տարդև խրկեց
ու իշխաննութիւնը մեծցուց : Բայց Աղեքսանդր
սպաննուելէն ետքն որ Գեմեար աւելի զօրացաւ ,
ինքն ալ Յովնաթանը մեծարեց , ազատութեան
գիր տուաւ :

Հ . Յովնաթան ինչպէս մեռաւ .

Պ . Տրիփոն զօրապետը կ'ուզէր Աղեքսանդրի
տղան թագաւոր դիւել . Յովնաթան Գեմեարին
օգնեց , յողթել տուաւ . բայց Գեմեար անոր

փոխարէն չընելով, ետքը իր զօրքն ալ թշնամա-
նալով փախուցին զինքն ու Անտիոքոսը թագա-
ւոր ճանչցան, որ Յովնաթանին սրափու ըրաւ :
Բայց Տրիփոն Անտիոքոսին ալ թշնամի դարձած,
երբոր Յովնաթան անոր օգնելու կ'երթար, Տրի-
փոն խաբէութեամբ զօրքը քովէն հեռացընել
տուաւ ու հաղար հոգւով Պտղոմայիս քաղքին
մէջ գոցեց զՅովնաթան, հետը եղած զօրքը ջար-
դեց, ու ինքն սկսաւ Հրէստանի վրայ երթալ :
Հրեայք եղածին վրայ շատ ցաւելով, Ամաւոնը
Յովնաթանի տեղ նստուցին : Տրիփոն իմանալուն
պէս՝ Ամաւոնի խրկեց ըսաւ, թէ « Յովնաթան
պարտք ունի, վճարեցէք, և իրեն երկու որդիքն
ինձի պատանդ տուէք որ զինքը թողում » : Ամա-
ւոն իմացաւ խարդախութիւնը. բայց ժողովրդ-
դեան բերանը չկնալու համար՝ անոր ուղածները
տուաւ : Տրիփոն անոնք առնելէն ետեւ, Յովնա-
թանը մեռուց ու ետ դարձաւ. գնաց Անտիոքոսն
ալ դադատել սպաննել տուաւ ու ինքը թագա-
ւորեց : Իսկ Ամաւոն Յովնաթանի մարմինն ա-
ռաւ, Մովզիիմ քաղաքն՝ իր հօրը դերեզմանը
դրաւ, և վրանին փառաւոր քարէ շինուածք շի-
նեց :

Հ. Ամաւոն ինչպէս քչեց իր իշխանութիւնը.

Պ. Որովհետեւ Դեմեար ան ատենը ուժովցեր
էր, ընծաներ խրկեց անոր ու աղատութիւններ
առաւ, և երկար ատեն խաղաղութեամբ կառա-
վարեց : Ետքերը Անտիոքոս անուշով մէկը Տրի-
փոնին յաղթեց, ու Ամաւոնին հետ սկսաւ թըշ-
նամութիւն ընել. իր Աթենոքիոս բարեկամը խըր-
կեց, շատ բաներ կը սղահանջէր Ամաւոնէն : Ար-
մաւոն պատասխանեց, թէ « Միայն հարիւր քան-
քար կուտանք Յուպպէ ու Գաղարա քաղաքնե-
րուն տեղը. ուրիշ պարտք չունինք տալու » :
Անտիոքոս բարկացած՝ շատ զօրքով խրկեց վրան

Կենդեբոս զօրասպեար . Ըմաւոն ալ իր երկու որդիքը Յուդա և Յոհան քսան հազար զօրքով անոնց դէմ խրկեց , որ զամէնքը ջարդեցին ու փախուցին :

Հ . Ըմաւոն իր մահաւամբ մեռաւ .

Պ . Չէ . Պաղումէս Աբուբեանց Ըմաւոնի փեսան վրան նախանձելով , որ մը սեղան ըրաւ անոր իր քաղաքը , և ուտել խմելէն ետե՛ Ըմաւոնը և երկու որդիքը Յուդա ու Մատաթիա սպաննել տուաւ . Անտիոքոսէն ալ իրեն օգնութիւն ուղեց . և Ըմաւոնին մէկալ տղուն վրայ ալ Գաղարա քաղաքը մարդ խրկեց որ սպաննեն . բայց անիկայ առաջուց դաղտուկ խմանալով , ան մարդիկը բռնեց մեռուց ու իր հօրը տեղը նստաւ :

104

Յաւելորում .

Հ . Յոհանի կառավարութիւնը ինչպէս եղաւ .

Պ . Ասոր վրայ կը լմըննայ Մակարայեցւոց պատմութիւնը . բայց Յովսեպոսին մէջէն գիտենք թէ Յոհան որ Հիւրկանիա գաւառին յաղթելուն համար Հիւրկանոս ալ կ'ըսուի . Պաղումէոսին յաղթելէն ետե՛ հօրը տեղը անցաւ : Եւ Անտիոքոս երբոր բոլոր ուժովն եկաւ Երուսաղէմ պաշարեց , Յոհան անանկ քաջութեամբ դէմ դրաւ որ անոր ճարը հատած՝ հետը հաշտուեցաւ : Ետքը Անտիոքոս Պարսից դէմ պատերազմի ելլելու ատենը Յոհանն ալ հետն առաւ՝ անոր քաջութեանը համար : Անտիոքոս երբոր ինքզինքն սպաննեց , Յոհան Հրէաստան դարձաւ , ու իր տէրու-

Թիւնը ուղածին պէս մեծցուց : Բայց իր ատենը Սաղուկեցւոց ու Փարիսեցւոց աղանդները տարածուած ըլլալով, Յոհան ետքերը Սաղուկեցւոց կողմը բռնեց, և Հրէից ատելի եղաւ :

Հ. Յոհանին ո՞վ յաջորդեց .

Պ. Հինգ տղոցը մէջէն նստաւ Արիստոբուզոսը, և ինքզինքը Հրէաստանի Թագաւոր անուանեց . իր մայրն որ իշխանութեան ետեւէ էր՝ մեռուց, ու իրեք եղբայրները բանտ դնել տուաւ . և մէկալ Անտիգոնոս եղբայրն՝ որ իրեն Թագաւորութեան ընկեր էր աւեր, անդամ մը երբոր պատերազմէն յաղթութեամբ դարձաւ, վրան կարծիքի երթալով՝ թէ կուզէ Թագաւորութիւնը յափշտակել, անողորմաբար մորթել տուաւ : Բայց տարիէ մը աւելի չքշեց իր իշխանութիւնն ալ . և ուր որ եղբորն անմեղ արիւնը թափեց, հոն հողին փչեց :

Հ. Արիստոբուզոս որո՞ւ Թողուց իր Թագաւորութիւնը .

Պ. Ինքը զաւակ չունենալով, իր կինը՝ ՂԱղէքսանդրոս Յաննէոս տագրը բանտէն հանել տուաւ, ու հետը կարգուելով զինքը Թագաւոր դրաւ . որ թէպէտ քաջութեամբ Հրէաստանի սահմանը շատ մեծցուց, բայց իր անգթութեամբը խիստ ատելի եղաւ ամենուն . ուստի զինքը մեռցրնել կը նայէին : Աղէքսանդրոս խմանալով կատղեցաւ, և ինչպէս որ կ'ըսեն, վեց տարուան մէջ յիսուն հազար հոգւոյ զլուխ կարեց . մէկ հեղ մ' ալ ութը հարիւր հոգի մեծամեծներէն որ իր ըրած բռնակալութիւններուն վրայ կը խօսէին, բռնել տուաւ . ու ինքը սեղան նստած ուրախութեան ատենը՝ զանոնք խաչի վրայ կախել տուաւ, ու իրենց կնիկները՝ զաւկրները բերաւ անոնց առջև մորթել տուաւ : Աղէքսանդրոս ետքերը զինքը գինիի տալով, անոր համար իրեք տարի ալ հիւան,

դու թիւն քաշելէն ետև , իր իշխանութեանը քսան
ուեթներորդ տարին մեռաւ :

Հ . Աղեքսանդրոսին ո՞վ յաջորդեց .

Պ . Իրեն տղաքը Հիւրկանոս և Արիստոբուզոս
պղտիկ ըլլալուն , թագաւորութեան ժառանգու-
թիւնը յանձնեց իր Աղեքսանդրա կնկանը որ Սո-
լոմէ ալ կ'ըսուէր . ան ալ քահանայապետութիւ-
նը Հիւրկանոսի տուաւ , և ինքը միայն կառավա-
րութիւնը կ'ընէր . ինը տարիէն երբոր մեռաւ , իշ-
խանութիւնը բոլորովին Հիւրկանոսի մնաց :

Հ . Հիւրկանոսի կառավարութիւնը ի՞նչպէս
եղաւ .

Պ . Ինքը տկար ըլլալով և իր Արիստոբուզոս
եղբայրը տաքարիւն , Հիւրկանոսի վրայ պատե-
րազմի ելաւ , յաղթեց , ինքը անցաւ աթոռը : Իրեք
տարիէն Հիւրկանոս՝ Արաբացոց Արեսասս թա-
գաւորին օգնութեամբը փախուց Արիստոբուզոսն
ու ինքը նստաւ . ինչուան որ Սկաւրոս Հառմայե-
ցոց զօրապետն Երուսաղէմն առաւ՝ նորէն Հիւր-
կանոսի դարձուց , և Արիստոբուզոսն իր զաւկընե-
րովը Հառմ բերաւ , և բոլոր Հրէաստան Հառմայե-
ցոց հարկատու ըրաւ , Անդիպատրոսի յանձնելով
որ Հրէից տուրքերը ժողովէ ու Հառմայեցոց խրկէ :

Հ . Մակաբայեցոց ցեղէն վերջի թագաւորն
ո՞վ եղաւ .

Պ . Անաիզոնոս Արիստոբուզոսին որդին , որ
ուժը տարի Հառմի բանաը կենալէն ետև , հօրը
հետ բանակէն փախաւ , ու Հրէաստան դարձաւ :
Բայց ետքը Անդիպատրոսի որդւոյն Հերովդեսի
խօսքովն որ կ'ըսէր թէ Անաիզոնոս թշնամի է
Հառմայեցոց , կասկած Անաիոք քաղաքը տարին
ղինքն ու գլուխը կտրեցին : Ասով բոլորովին Հրէից
իշխանութիւնը վերջացաւ :

Հ . Հրէից ազգը Մակաբայեցոցմէ ետքը ո՞վ
կառավարեց .

Պ . Հերովդէս , որ Հրէից աղգէն չէր , և խար-
գախուժեամբ Հոռմայեցւոց ծերակուտին ուժը
հարիւր տաղանդ ստակ խոստանալով , Օգոստոս
կայսեր ձեռքէն բոլոր Հրէաստանի թագաւորու-
թիւնը ինքն առաւ , որուն անունը Քրիստոս աշ-
խարհք եկաւ :

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ. Հրեայք երբոր գերութեան գնացին, տա-
պանակն ինչ եղաւ.

Պ. Երեմիա մարգարէն՝ տաճարը չկործա-
նուած՝ գետնին տակ գաղտուկ պահեց տապա-
նակն ու սեղան խնկոցը. ետքը տարաւ Նաբաւ-
լեօր՝ Մովսեսի թաղուած տեղը. և ուր դնելը ան-
յայտ պիտի մնայ ինչուան վերջը:

Հ. Եսթեր ինչո՞ւ համար թագաւորը և Հա-
մանն ալ մէկտեղ երկու անգամ սեղանի հրամ-
ցուց.

Պ. Որպէս ղի թագաւորին սէրը իր վրայ ալ
աւելի շարժէ. և Համանն ալ կանչուելով և փա-
ռաւորուելով, թէ որ յանկարծ իր ըրած անիրա-
ւութիւնը լսէ, շիտթի ու չկարենայ խաբէու թիւն
մտածել: Մէյմըն ալ, որ ըսած ատենը Համանը
քոյն ըլլալով, թագաւորն ամենեկին կասկածի մը
չերթայ:

Հ. Համանը կասուելէն ետքը, Հրեաներն ին-
չո՞ւ իրենց թշնամիները ջարդեցին.

Պ. Այնն ղի անոնք Հրեից վրայ թշնամութիւն
պահելով, միշտ ղիրենք ջնջելու ետեւ կ'ըլլային.
ուստի Հրեաներն ալ ատեն գանկելով անոնց ա-
ռաջքը առին, որ իրենց կեանքը ազատեն. անոր
համար ալ թշնամիներուն հարսաութեանը ամե-
նեկն չմտայան:

Հ. Դանիէլ ու իր ընկերներն ինչո՞ւ թագաւո-
րական սեղանէն ուտել չուղեցին.

Պ. Մէյմը որ թագաւորական սեղանը շատ

անգամ Մովսէսի օրինացը դէմ կերակուրներ կը գրուէին . և երկրորդ՝ շատ անգամ Բաբելացիք ան կերակուրներն իրենց կուռքերուն նուիրած կ'ըլլային :

Հ . Տասնուերկու փոքր մարգարէներն ո՞ր ատեն և ի՞նչ բանի վրայ մարգարէացան .

Պ . Շատը Հրէից թագաւորներուն ատենը մարգարէացան , Իսրայէլացւոց կուսպաշտութիւնը յանդիմանելով և Քրիստոսի գալուստը գուշակելով . միայն Յովնան ու Նաւում Նինուէացւոց վրայ մարգարէացան . իսկ ետքի իրէքը Բաբելացւոց գերութենէ ետքը սկսան մարգարէանալ :

Հ . Հռաքսին ինքզինքն սպաննելն աղէկ բան էր .

Պ . Չէ . թէպէտ և ինքը բարեմտութեամբ ըրաւ որ անհաւատներուն ձեռքը չլինայ , իր սուգին ալ կտրձութեան օրինակ տայ : Անոր համար շատերը զինքն անմեղադիր կ'ընեն :

Հ . Ռափայէլ Հրեշտակն ի՞նչպէս իր անունը Աղարիա ըսաւ .

Պ . Վասն զի ան Աղարիային կերպարանքովն երեցաւ՝ որն որ Տոբիթ կը ճանչնար . մէյմըն ալ որ հրեշտակները որովհետև մասնաւոր անուն չունին , մարգկանց առջև ինչ անուն որ ուզեն՝ կրնան ըսել :

Հ . Սեղանին սուրբ կրակն որ Երեմիա սրահեց , ուսկից եկած էր .

Պ . Ան կրակն էր որ առջի անգամն անապատին մէջ՝ Ահարոնին ողջակէզ ընելու ատենն երկնքէն յանկարծ իջնելով , այրեց ողջակէզը . Աստուած հրամայեց որ ան կրակը միշտ վառ սրահեն քահանաներն ողջակիզաց սեղանին վրայ . ուստի ինչուան Բաբելացւոց գերութիւնը վառ մնաց : Ետքը Երեմիայի սրահած տեղէն հրաշքով հանեցին , ու անկէ ետև ինչուան տաճարին կտրձանիլը դիմացաւ :

Ն. Յակոբ նահապետին խոսամունքը, թէ Յուդայի ցեղէն իշխան չպակսի ինչուան Քրիստոս, ինչ կերպով կատարուեցաւ .

Պ. Յուդայի ցեղին իշխանութիւնը Դաւթէն սկսելով ինչուան Սեղեկիա շարունակեց, ետքը Բաբելացոց գերութեան ատենը Նաբուգոդոնոսոր զՅեքոնիան թագաւորական պատուով կը պահէր . և անոր որդին և Զօրաբաբել թողը՝ ան գերութեան ատենն ալ ամէն չրէկից մէջ առջի պատիւն ունէին և իշխանութեան մէջ էին Նաբուգոդոնոսորայ քովը, և թագաւորութեան իրաւունքով կը վարուէին : Երբոր նորէն Երուսաղէմ գարձան և սկսան տիրել, ան ալ Յուդայի իշխանութիւն էր, որովհետեւ երկիրը Յուդայի էր, ժողովուրդը բոլոր Յուդայի, և միայն մէկ քանի հոգի ուրիշ ցեղերէն կը գտնուէին մէջերնին . և թէպէտ ետքի բուն իշխանը Ղևեայ ցեղէն էր, բայց յայտնի է որ Յուդայի ցեղին անուամբը . որովհետեւ Աստուած Ղևեայ ցեղը տասնուերկու ցեղին մէջէն ընտրե՛ր՝ իրեն առեր էր, անոր համար Ղևեայ ցեղը թագաւորութիւն չէր կրնար ունենալ, հրաման ալ չունէր քաղաքներ երկիրներ ստանալու . բայց Յուդայի ցեղին մէջ թագաւորելու յարմար մարդ չգտնուելով, Աստուած իր մարդիկներէն անոնց տուաւ որ իշխանութիւննին հաստատ պահեն . ասանկով Յուդայի թագաւորութիւնը ինչուան Քրիստոս գիմացաւ :

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԱՐԴԵՂՈՒԹԵՆԷՆ

ԻՆՉՈՒԱՆ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

106

Աշևտոշմ, այցկոշիւն .

Հ . Ո՛վ փրկեց զմեզ սատանային գերութիւնէն .

Պ . Ատուած իր անհուն գթութեամբն ու անչափ սիրովը լսեց մարդկանց աղապակն՝ որ չորս հազար տարի իր ընտրեալ նահապետներուն և մարգարէներուն բերնով ոտքն ինկած՝ իր սիրոյն գէմըրած յանցանքներնուն թողութիւն կըխնդրէին : Եւ ուզեց որ, եթէ մարդիկ ստեղծման ատեն իր ցըցուցած սէրը չճանչցան, փրկելու ատենն իր մեր վրայ ունեցած սիրոյն մեծութիւնը խիստ յայտնի փորձով ցուցնէ : Անոր համար ինքն Ատուած մարմին առաւ, մարդ եղաւ .

ու իր նախատական մահուամբը զմեզ մահուանէ
ազատեց :

Հ. Երբոր Քրիստոսի աշխարհք գալը մօտե-
ցաւ, առաջուց նշան մը տուաւ .

Պ. Հերովդեսի թագաւորութեանը երեսունը-
հինգերորդ տարին՝ Եղիսաբէթի էրկանը Չաքա-
րիա քահանային՝ որ ծերացեր էր ու սղայ չու-
նէր, օր մը երբոր տաճարը խուճիկ կը մատուցա-
նէր, հրեշտակ մը երեցաւ ու ըսաւ . « Աղօթքդ
լսեց Աստուած, Եղիսաբէթ քեզի որդի մը պիտի
ծնանի, անունը Յովհաննէս գնես, որ շատերուն
ուրախութեան պատճառ ըլլայ . չծնած՝ հողուով
սրբով լեցուի, և Աստուծոյ առջևէն երթալով ժո-
ղովրդեան սիրան անոր դարձնէ . ուխտաւոր ըլ-
լալուն համար զգուշացիր որ գինի և օղի չխմէ » :
Չաքարիա երբոր տարակուսեցաւ ծեր ըլլալուն
համար, հրեշտակն ըսաւ . « Ես Գաբրիէլ հրեշ-
տակն եմ, որ Աստուած զիս խրկեց . հիմա ինձի
չհաւտալուդ՝ համր ըլլաս ինչուան ան օրը » : Մէ-
կէն Չաքարիային լեզուն կապուեցաւ . ետքը երբ-
որ տուն գնաց, Եղիսաբէթ յղացաւ, ու փառք
կուտար Աստուծոյ :

Հ. Յիսուսի ծնունդը Յովհաննէսին ծննդէնէն
որչափ ետքը պիտի ըլլար .

Պ. Հինգ ամիսէն ետև Գալիլեայի Նազարէթ
քաղաքը՝ ուր էր կոյսն Մարիամ նշանած Յովսե-
փայ արդարոյն հետը՝ եկաւ Գաբրիէլ հրեշտակը
Մարիամու ըսաւ . « Ուրախ լեր բերկրեալդ, տէր
ընդ քեզ » : Կոյս Մարիամ հրեշտակը տեսնե-
լով և ան խօսքը լսելով՝ շիտթեցաւ : Հրեշտակը
նորէն ըսաւ, թէ « Մի վախեր, Քրիստոս քեզմէ
պիտի ծնանի » : Երբոր ինքը նորէն կը տարակու-
սէր, պատասխան տուաւ հրեշտակը, թէ « Հող-
ուով սրբով պիտի ըլլայ » . և խմացուց թէ Եղիսա-
բէթ ազգականն ալ որ ամուլ էր՝ յղի է : Մարիամ

ալ ըսաւ . « Ահա ես Աստուծոյ աղախինն եմ , ինչ որ ըսիր ինծի՛ կատարուի » : Աս խօսքովն յղացաւ զՅիսուս :

Հ . Աւետմանէն ետեւ ինչ ըրաւ սուրբ կոյսը .

Պ . Եղիսաբեթին աչքիչուտի գնաց . ու երբոր բարեւեց , Եղիսաբեթի արգանդին մէջ վեց ամսուան տղան շարժեցաւ . մայրն ալ հոգւով սրբով լեցուած՝ կանչելով ըսաւ . « Օրհնեալ ես դու՛ ի կանայս , և օրհնեալ է պտուղ որովայնի քո . աս ինչ մեծ պատիւ է՝ որ Աստուծոյ մայրն ինծի գայ » : Մարիամ ալ սկսաւ ըսել ան խորհրդաւոր օրհնութիւնը . Մեծացոսացէ անցն իմ պէր . ու իրեք ամիսէն իր տունը դարձաւ :

Հ . Յովհաննու մկրտչի ծնունդն ինչպէս եղաւ .

Պ . Եղիսաբեթ ատենին երբոր ծնաւ , աղգա կաններն իրեն ուրախակից եղան . և ութերորդ օրը տղան թրխատելու ատենն՝ ուղեցին որ անունը Ջաբարիա դնեն : Մայրը կ'ըսէր թէ « Յովհաննէս դրէք » . ուրիշները՝ « Ձեր ազգատոհմին մէջ ատ անունը չկայ » կ'ըսէին : Ետեւ հօրը հարցուցին , ան ալ ախտակի մը վրայ գրեց , թէ « Յովհաննէս է անունը » . ան ատեն լեզուն ալ արձակուեցաւ՝ ու հոգւով սրբով լեցուած սկսաւ Օրհնեալ պէր Աստուծոյ Իսրայէլի օրհնութիւնը ըսել : Իսկ Յովհաննէս սղտրիւոց անապատ քաշուեցաւ՝ ինչուան քարոզութեան ատենը :

Մեռելոյ .

Հ . Սուրբ Յովսէփ ինչպէս խնայաւ Մարիա մու հրաշալի յղութիւնը .

Պ . Դրսի նշաններէն տեսնելով, և չգիտնալով թէ հոգևով սրբով է, շատ շիտթեցաւ . բայց ինքն արդար ըլլալով, ուզեց դադարուի քովէն ճամբել : Ասանկ մտածելով երբոր քունը տարաւ, հրեշտակ մը խնայուց ինչ ըլլալը, և անուէր Յիսուս դնես ըսաւ, յիշելով Եսայի մարդարէին ըսածը, թէ « Ահա կոչս յղացի և ծնցի որդի, և կոչեացեն զանուն նորա Կամանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած » : Ասոր վրայ Յովսէփ շատ ուրախացաւ :

Հ . Յիսուսի ծնունդն ինչպէս եղաւ .

Պ . Արտիճեալ մարդարէնէն ըսեր էին որ Բեթղէմէմ քաղաքը պիտի ծնանի Քրիստոս, հռոմայեցոց Օգոստոս կայսրը հրաման հանեց որ ամէն մարդու ցեղն ու քաղաքը գիր անցուի : Յովսէփ ալ Բեթղէմէմացի ըլլալով եկաւ Բեթղէմէմին դրսի գին ախոսի մը մէջ իջաւ . հոն ծնաւ Յիսուս գիշեր ատեն . Աստուածածինն ալ զինքը խանձարրով պատեց ու մսուրի մէջ դրաւ : Ան կողմերը հովիւներ կային, ոչխարներ կը պահէին . անոնց ալ յանկարծ հրեշտակ երեցաւ ու ըսաւ . « Մի վախէք, ուրախացէք, այսօր ծնաւ ձեր փրկիչը . գնացէք տեսէք մսուրին մէջ » : Աս ըսելու ատեն ուրիշ անհամար հրեշտակներ ալ երեցան ու սկսան օրհնել զԱստուած՝ ըսելով . « Փառք 'ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն » : Եսքը հո-

վիւնները վաղեցին եկան, դասն Յիսուսը մտուրին մէջը, երկրպագութիւն ըրին. և ով որ անոնցմէ կը լսէր, կը զարմանար: Իսկ ութերորդ օրը թըւ-
փատեցին ու անունը Յիսուս դրին:

Հ. Հովիւներէն ուրիշ մարդ չգտնուեցա՞ն որ դայ Յիսուսը տեսնելու.

Պ. Աստուած Հրէից անհոգութիւնն երեսնին տալու համար՝ հեռու աշխարհքէ խրկեց իրէք մոգերն որ աստղի երևնալէն գուշակելով Յիսուսի ծնունդը, եկան ու սկսան Երուսաղեմի մէջ հարցընել, թէ «Ո՞ւր է նոր ծնած թագաւորը»: Հերովդէս անոնցմէ լսելով՝ շփոթեցաւ. կանչեց Հրէից կարդացողները, հարցուց. անոնք ալ ըսին. «Միքիա մարգարէն կը գրէ թէ Բեթղեհէմ քաղաքը պիտի ծնանի»: Ան ատեն Հերովդէս դադառակ կանչեց մոգերը, ապրասպրեց իրենց որ եթէ գտնեն տղան, իրեն ալ իմացընեն որ ինքն ալ երթայ անոր երկրպագութիւն ընէ: Ետքը ան աստղը նորէն երեցաւ իրենց ու ինչուան Յիսուսին ընտանիք տեղին վրայ դնաց կեցաւ: Անոնք ալ մըտան, երկրպագութիւն ըրին Յիսուսին ու սարդեատուին, ոսկի՝ կնդրուկ ու զմուսս:

Հ. Մոգերը գարձանն Հերովդեսին՝ Յիսուսի ծննդեան տեղը ցուցընելու համար.

Պ. Չէ. վասն զի հրէշտակ երեցաւ անոնց, ապրասպրեց որ ուրիշ ճամբով երթան իրենց տեղը:

Հ. Հերովդէս երբոր մոգերէն խաբուեցաւ, ինչ ըրաւ.

Պ. Սաստիկ սրդողեցաւ, ու ջարդել տուաւ բոլոր Բեթղեհէմի և մօտ տեղերուն երկու տարուընէ վար եղած տղաքը:

Հ. Բեթղեհէմի մանկանց կատորածէն Յիսուս ինչպէս ազատեցաւ.

Պ. Առաջուց հրէշտակին իմացընելովը Յովսէփ զՅիսուս մօրը հետ Եգիպտոս փախուց, ինչուան

որ հերովգէս մեռաւ : Ետքը նորէն հրեշտակին ըսելովը դարձաւ եկաւ . տեսաւ որ Արքեղայոսը հերովգէսի չար տղան նստեր էր՝ վախցաւ , ու հրեշտակին առաջնորդելովը Նաղարէթ քաղաքը գնաց , որ Անդիտաս հերովգէսին իշխանութեանը տակն էր :

Հ . Յիսուսի ընծայումն ինչպէս եղաւ .

Պ . Յիսուս երբոր քառսուն օրուան եղաւ , ինչպէս որ օրէնքը կ'ապաստէր , տաճարը տարին զինքը՝ երկու տասրակ հեռերնին առած , Աստուծոյ ընծայելու համար : Ան ատենը հոն էր ծերունին Սիմէոն , որուն հոգին սուրբ յայտներ էր թէ ինչուան որ փրկիչը չտեսնէ , պիտի չմեռնի . ուրախութեամբ գիրկը առաւ Յիսուսն ու ըսաւ . « Տէր՝ ինձի ըրած խոստմունքդ կատարեցիր , ալ թող որ մեռնիմ » : Ետքը Աստուածածնայ ըսաւ , թէ « Ասիկայ շատերուն փրկութեան և շատերուն կորստեան պատճառ պիտի ըլլայ , և քու սիրող ալ պիտի խոցուի » : Աննա մարգարէն ալ , որ եօթը տարի միայն էրկանը հեռ կեցեր էր , և ութսունը չորս տարի որբեարի տաճարը կը բնակէր պաքով և աղօթքով , սկսաւ փառք տալ Աստուծոյ ու քարոզել Յիսուսին Մեսիա ըլլալը : Ասանկով նորէն Նաղարէթ դարձան :

Հ . Հրէից մէջ կարգ էր որ բարեպաշտ մարգիկ տարին մէյմը տաճար երթան , զո՛հ մատուցանեն . աս կարգն ալ կը պահէր Աստուածածինն .

Պ . Ամեն տարի Յիսուսն ալ մէկտեղ առած կ'երթային : Անգամ մը երբոր Յիսուս տասնուերկու տարուան էր՝ գնացին , ու ետ դառնալու ատեն՝ առանց իրենց գիտնալուն՝ Յիսուս տաճարը մնաց : Երեւի կարծելով թէ ուրիշ ճամբորդներու հետ կուգայ՝ հոգ չըրին : Օրուան մը ճամբայ ընելէն ետև փնտռեցին , ու երբոր չգտան , նորէն

Երուսաղէմ գարձան • իրեք օր չորս դին պարտե-
լէն ետքը՝ տաճարին մէջը գտան որ վարդապետ-
ներուն հետ կը խօսէր ու զամէնքը կը զարմացը-
նէր : Սուրբ կոյսը երբոր տեսաւ • « Արդեակ , ը-
սաւ , աս ինչ ըրիր մեզի » : Յիսուս ալ ըսաւ •
« Չէիք գիտեր որ ես իմ հօրս տանը մէջ պիտի
ըլլամ » : Ետքը Նազարէթ դնացին , ու Յիսուս
հնազանդութեամբ տունը ապրեցաւ երեսուն տա-
րի ինչուան քարոզութեան ատենը , և ամենուն
սիրելի էր :

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Հ . Երբոր Յուդայի ցեղին իշխանութիւնը վերջացաւ , Հրեայք չէին սպասէր Քրիստոսի գալուն .

Պ . Կը սպասէին , բայց կարծէին որ թագաւորական փառքով պիտի գայ , ու Հերովդեսի բռնաւորութենէն ազատէ զիրենք , և բոլոր աշխարհքիս աիրէ , ինչպէս որ Հերովդեսին ալ մեկնեցին կարգացողները , մտնալով այնչափ մարդարէութիւններն որ Քրիստոսի խոնարհութեամբ գալուստը կը գուշակէին :

Հ . Մոգերն ո՞վ էին ու ի՞նչպէս աստղով խնայան Քրիստոսի ծնունդն ու եկան .

Պ . Արարացի կամ Սաբայ երկրին երեք իմաստուն թագաւորներն էին , որ աւանդութեամբ դիտէին թէ ասենով աստղ մը պիտի երևնայ՝ Հրէից մեծ թագաւոր մը ծնանելու նշան , և երբոր տեսան ան մեծ աստղը որ երկրիս մօտիկ անշարժ կեցած է , մէկէն ճանչցան որ անիկայ բնական աստղ չէ . և Աստուծոյ մասնաւոր ազգամարը եկան Երուսաղէմ : Երբոր Երուսաղէմէն նորէն ճամբայ ելան , հոն նորէն երեցաւ ան աստղը որ արեւելք տեսեր էին , անոր համար խիստ շատ ուրախացան տեսնելով թէ յոյսերնին պարտապը չելաւ : Եւ ինչպէս որ հաւանական կ'երևնայ , միայն իրենք կը տեսնէին զայն աստղը :

Հ . Հերովդէս ինչո՞ւ գաղտուկ ասպարէց մտդերուն Քրիստոսի համար .

Պ . Որպէս զի չըլլայ թէ բոլոր Հրեաներն ալ խմանան Քրիստոսի ծնունդը

Հ • Յիսուս երեսուն տարի ի՞նչ ըրաւ •

Պ • Աստուածածնայ և սրբոյն Յովսէփայ հնազանդելով կ'աշխատէր պէտք եղած գործքերուն մէջ՝ ու հիւանութիւն կ'ընէր :

Հ • Յիսուս ի՞նչպէս շատերուն կորսուելու պատճառ պիտի ըլլար •

Պ • Մեր վրայ ունեցած անհուն սիրովք չափէ դուրս խոնարհութիւն ընելուն համար , շատերը պիտի արհամարհէին Աստուծոյ անբաւ իմաստութիւնն , ու չարանալով պիտի չհաւատային իրեն մարդկեղութեանը , ինչպէս որ եղաւ :

The first part of the book is devoted to a general
 introduction of the subject. The author discusses
 the various methods of investigation and the
 principles of the science. He then proceeds to
 a detailed description of the different
 classes of plants and animals. The second part
 of the book is devoted to a description of the
 various parts of the human body. The author
 describes the structure and function of the
 different organs and systems. The third part
 of the book is devoted to a description of the
 various diseases and their treatment. The author
 describes the symptoms and signs of the
 different diseases and the various methods of
 treatment. The fourth part of the book is
 devoted to a description of the various
 medical instruments and their use. The author
 describes the different kinds of instruments
 and the various methods of using them. The
 fifth part of the book is devoted to a
 description of the various medical schools and
 their teachings. The author describes the
 different schools and the various methods of
 teaching. The sixth part of the book is
 devoted to a description of the various
 medical societies and their activities. The
 author describes the different societies and
 the various methods of their activities. The
 seventh part of the book is devoted to a
 description of the various medical books and
 their contents. The author describes the
 different books and the various contents of
 them. The eighth part of the book is
 devoted to a description of the various
 medical journals and their contents. The
 author describes the different journals and
 the various contents of them. The ninth
 part of the book is devoted to a description
 of the various medical lectures and their
 contents. The author describes the
 different lectures and the various contents
 of them. The tenth part of the book is
 devoted to a description of the various
 medical experiments and their results. The
 author describes the different experiments
 and the various results of them.

The book is written in a clear and concise
 style. The author uses simple language and
 avoids unnecessary technical terms. The book
 is well organized and easy to read. The
 author provides a comprehensive overview of
 the subject. The book is a valuable resource
 for anyone interested in the history of
 medicine. The book is written in a clear
 and concise style. The author uses simple
 language and avoids unnecessary technical
 terms. The book is well organized and
 easy to read. The author provides a
 comprehensive overview of the subject.
 The book is a valuable resource for
 anyone interested in the history of
 medicine. The book is written in a clear
 and concise style. The author uses simple
 language and avoids unnecessary technical
 terms. The book is well organized and
 easy to read. The author provides a
 comprehensive overview of the subject.
 The book is a valuable resource for
 anyone interested in the history of
 medicine.

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԵՆԷՆ

ԻՆՉՈՒՍՆ ԵՐՈՒՍՍՂԷՄ ՄՏՆԵԼԸ

109

Յիսուսի քարոզութեան սկիզբը .

Ն . Ի՞նչպէս սկսաւ Յիսուս իր քարոզութիւնը .

Պ . Ինչպէս որ Յիսուսի ծննդեանը կարասկա եղաւ Յովհաննէս մկրտիչ իր հրաշալի ծննդեամբը , առանկ ալ Յիսուսի քարոզութենէն առաջ Յովհաննէս մկրտիչն եկաւ անապատէն , սկսաւ քարոզել Յորդանան գետին քովն ու կ'ըսէր , թէ « Ապաշխարեցէք , մտեցաւ Աստուծոյ թագաւորութիւնը » , ու զեղջ եկողները կը մկրտէր՝ ապաշխարութեան նշան ըլլալու համար : Ժողովուրդը իր բարի վարքէն ճանչցան թէ Աստուծմէ խրկուած է . ու կարծիք ալ երթալով թէ Մեսիան է , եկան՝ սկսան իրեն հարցրնել . ինքն ալ կ'ըսէր , թէ « Ես անոր ճամբայ բացողն եմ , և արժանի չեմ անոր կոչիկները հանելու . անիկայ պիտի գայ իմ ետեւն ու զձեզ մկրտէ , Հոգւով սրբով » : Ան օրերը Յիսուս ալ երեսուն տարուան Յորդանան գետը գնաց՝ մկրտուելու համար : Յովհաննէս յանձն չէր առնէր . « Ես քեզմէ պէտք է որ մկրտուիմ » ըսելով : Յիսուս պատասխան տուաւ . « Հիմա թող որ արդարութեան պարտքը կատար

րենք » : Ասանկով մկրտուեցաւ Յիսուս, ու ջրէն
դուրս ելլելուն պէս՝ երկինքը բացուեցաւ, Հոգին
սուրբ աղաւնիի կերպարանքով Յիսուսի գլխուն
վրայ իջաւ, երկինքէն ալ ահաւոր ձայն մը ե-
կաւ, թէ « Դու ես իմ սիրելի որդիս, քեզի հաւ-
ներ եմ » :

Հ . Յիսուս մկրտուելէն ետև ի՞նչ ըրաւ .

Պ . Գնաց անապատը, և քառասուն օր ծով
պահելէն ետև անօթեցաւ . ան ատենը սատանան
եկաւ զինքը փորձելու . Նախ՝ « Թէ որ Աստու-
ծոյ որդին ես, ըսաւ, հրամայէ որ աս քարերը
հաց ըլլան » : Յիսուս պատասխան տուաւ . « Գը-
րուած է, միայն հացով մարդ չապրիր, հասկա
Աստուծոյ պատուիրանքներովը » : Ետքը սատա-
նան զՅիսուս տաճարին աշտարակին վրայ հա-
նեց, ըսաւ . « Թէ որ Աստուծոյ որդի ես, ինք-
զինքդ վար ձգէ . դրած է թէ հրեշտակները ձեռ-
քի վրայ բռնած են զքեզ » : Յիսուս ալ ըսաւ,
« Գրած է թէ զԱստուած մի փորձեր » : Անկէ
ետքը լեռան մը վրայ հանեց զՅիսուս, ու բոլոր
աշխարհքիս փառքը ցուցնելով՝ ըսաւ . « Ասոնք
քեզի կուտամ, թէ որ ինձի երկրպագութիւն ը-
նես » : Ան ատենը Յիսուս ըսաւ անոր . « Կորսուէ
քովէս՝ սատանայ . միայն Աստուծոյ պէտք է եր-
կիրպագանել » : Ետև հրեշտակներն եկան Յիսու-
սի կը ծառայէին :

Հ . Յիսուս սատանայէն փորձուելէն ետքը ի՞նչ
ըրաւ .

Պ . Անապատէն դարձաւ որ քարոզէ, աշա-
կերաներ ժողովէ . և Յովհաննէս մկրտիչը հեռուէն
զինքը տեսնելով, իր աշկերաններուն ըսաւ . « Ահա
աս է իմ ձեզի քարոզած գառն Աստուծոյ Բրիս-
տոսը » : Աս որ լսեցին անոնցմէ երկուքը Յիսուսի
ետևէն գնացին, որոնց մէկը Անդրէասն էր՝ Պետրո-
սի եղբայրը :

Հ. Յիսուսի քարոզութեանը մէջ գլխաւոր խը-
րատ անեղու գործքերն որոնք են .

Պ. Նախ գործած հրաշքները , երկրորդ խօ-
սած առակները , երրորդ ըրած վարդապետու-
թիւնները , և չորրորդ երկայնամիտ համբերու-
թիւնը :

Հ. Յիսուսին առջի ըրած հրաշքն ո՞րն եղաւ .

Պ. Ան օրերը հանգիստելով Կանա Քալիլեա-
ցոց հարսնիքը , և հոն Աստուածամայրը հրաւի-
րուած ըլլալով , Յիսուս ալ կանչուեցաւ իր աշա-
կերաներովը : Երբոր գինին պակասեցաւ , Աս-
տուածամայրն ըսաւ իրեն՝ թէ « Գինի չունին » .
Յիսուս պատասխան տուաւ , « Ատենս չէ եկած » :
Բայց Աստուածամայրը գիտնալով թէ Յիսուս իր
խօսքը զանց չառներ , ծառաներուն աղօսարեց որ
Յիսուս ինչ որ ըսէ՝ ընեն : Աս հարսնիքին տունը
վեց թակոյկ կար . Յիսուս հրամայեց որ ջրով լե-
ցրնեն զանոնք ու տաճարապետին տանին : Երբոր
համը նայեցաւ տաճարապետը , չգիտնալով թէ
ուսկից է , ըսաւ փեռային , թէ « Սովորութիւնը
չէս գիտեր որ առաջ աղէկ գինին կը բաժնեն , և
երբոր ալ խմած կ'ըլլան , գէշը կը բերեն . դուն
աղէկը պահեցիր ու վերջը բերիր » :

Հ. Յիսուս ջուրը գինի ընելէն ետքը ո՞ւր գնաց .

Պ. Կափառնաում քաղաքն եկաւ . անկէ ալ
քանի մը օրէն զաակին Երուսաղէմ տաճարը գը-
նաց , տեսաւ որ կով՝ ոչխար՝ աղաւնի կը ծախէին
մէջը , և լուսնայափոփաներն առուտուր կ'ընէին .
խարաղան մը շինեց ու զամէնքը ծեծելով դուրս
վանտեց , ըսելով , թէ « Իմ հօրս առնն առուտու-
րի տուն մի ընէք » : Հրեաները նեղացան թէ ի՞նչ

իրաւունք ունի ասանկ բան ընելու. Յիսուս ալ
իրենց ըսաւ. « Քակեցէք ատ տաճարը, ու ես ի-
րեք օրուան մէջ նորէն շինեմ » : Հրեաներն ալ
ըսին թէ « Քառասունուվեց տարի քշեց ասոր շի-
նուածքը, դու ի՞նչ կը խօսիս » : Չխմացան որ ինքն
իր մարմնոյն համար կ'ըսէր : Աս զատկին շատ մար-
դիկ իրեն հաւտացին, տեսնելով իրեն ըրած հը-
րաշքները. որոնց մէջն էր Նիկողեմոսն ալ : Ետքը
դէպ 'ի Յորդանան սկսաւ երթալ, ու իրեն աշ-
կերաներուն հետ մկրտութիւն ընել. և աս բանիս
նախանձեցան Յովհաննու աշկերաները : Բայց
Յովհաննէս անոնց խմացուց թէ ան է ճշմարիտ
Մեսիան. անոր համար իրեն աշակերաներն ալ
սկսան Յիսուսին ետեւէն երթալ. և Հերովդէսն
ալ Յովհաննէս մկրտիչը բանա դրաւ՝ զինքը խրա-
տելուն համար :

Հ. Յիսուս երբոր լսեց Յովհաննէս մկրտիչին
բռնուիլը, ի՞նչ ըրաւ .

Պ. Ինքն ալ ան կողմերը թողուց, նորէն Գա-
լիլեա եկաւ : Ճամբան երբոր Սամարացուց երկ-
րէն կ'անցնէր, կէս օրուան դէմ հողնած՝ հորու
մը քով նստաւ որ քիչ մը հանգչի : Ան ատենը Սա-
մարիա քաղքէն կին մը եկաւ ջուր տանելու. Յի-
սուս ալ անոր ձեռքէն խմելու ջուր ուզեց. անկէ
խօսք բացուելով, կինը Յիսուսի հաւտաց, ու վա-
ղեց քաղաքը քարոզեց զինքը : Սամարացիք ալ ե-
կան զՅիսուս քաղաքը տարին, հաւտացին իրեն
ու աղաչեցին որ երկու օր ալ կենայ քովերնին .
և ան ատենը տուած խրատներուն համար սկսան
ըսել. թէ « Աս է աշխարհքիս ճշմարիտ փրկիչը » :

Հ. Յիսուսի երկրորդ հրաշքը սրն է.

Պ. Երբոր Սամարիայէն Նազարէթ իր քաղաքը գնաց, ու հոն հրէից ժողովարանը մտաւ, առաւ որ կարգայ Նսայեայ մարգարէութիւնը. երբ ան խօսքը հանդիպեցաւ որ կ'ըսէ « Հոգի տեսան'ի վերայ իմ », իր վրայ մեկնեց. ու հրէից կուրութեանը վրայ խօսեցաւ: Ասոր վրայ հրեայք անանկ սրդողեցան, որ բռնեցին քաղքէն դուրս լեռան զլուխը հանեցին, և անկէ վար ձգել ու մեռցրնել կ'ուզէին. բայց Յիսուս մէջերնէն ելաւ գնաց Գալիլեա:

Հ. Յիսուսի երրորդ հրաշքը սրն է.

Պ. Գալիլեայի մէջ իշխանի մը տղան հիւանդ ըլլալով, հայրը եկաւ՝ կ'աղաչէր Յիսուսին որ Կափառնաում գայ, իր որդին՝ որ մեռնելու վրայ է՝ բժշկէ: Երբոր Յիսուս հանդարտ սկսաւ երթալ, անիկայ կ'արտօրցրնէր որ տղան չմեռած հասնի: Յիսուս դարձաւ ըսաւ իրեն. « Գնա՛, որդիդ ողջ է » . մարդն ալ հաւատաց ու ելաւ գնաց: Ծամբան ծառաները զխմացն ելան՝ աւետիս տալով, թէ « Արդիդ աղէկցաւ »: Ան ատենը հարցուց իմացաւ որ Յիսուս՝ Աղջ է, ըսելուն պէս՝ բժշկուեր է. անոր համար անով անդով հաւտաց Յիսուսի: Ետքը Յիսուս ալ Կափառնաում գնաց, քարոզելով շատ հիւանդներ ու գիւահարներ բժշկեց:

Հ. Յիսուսի չորրորդ հրաշքը սրն է.

Պ. Անգամ մը Գալիլիա Գեննեսաբէթ ծովուն քով ժողովուրդը խիստ շատ ըլլալուն, հոն որ երկու պարսպ ձկնորսի նաւեր կային, մէկը Սիմոն Պետրոսին, մէկալը Յակոբոսի և Յովհաննու՝ Զեբեդէոսին որդւոցը, Յիսուս Պետրոսին նաւը մը-

տաւ ու անկէ քարող խօսեցաւ : Ետքը Սխմունին ըսաւ որ քիչ մը բացը ելլէ, ուռկանը ձգէ ձուկի համար : ան ալ ըսաւ, թէ « Արդապետ՝ առ դիւ շէր բոլոր աշխատեր ենք՝ բան չենք կրցած բանել : բայց հիմա քեզի կը հնարանդինք » : Ետքը երբոր ձգեցին, ձուկին շատութենէն ուռկանը կը սլաւորուէր թէ որ մէկալ նաւը չօգնէր : ու երկու նաւն ալ ընկղմելու չափ ձուկով լեցուեցան : Պետրոս ու մէկալնոնք առ տեսնելով երբոր սկսան վախնալ, Յիսուս իրենց սիրտ տուաւ, « Ասկէ ետքը սկսի մարդիկ որսաք » ըսելով : Անոնք ալ ամէն բաներնին թողուցին ու Յիսուսին ետեէն գնացին :

Հ . Յիսուսին հինգերորդ հրաշքը ո՞րն է .

Պ . Գալիլեայի ծովէն Գերգեսացուց երկիրն անցնելու ատեն նաւուն մէջն սկսաւ քնանալ : Յանկարծ սաստիկ ալէկոծութիւն ելաւ . աշակերտները վախցած՝ արթընցուցին, « Ազատէ մեզ » ըսելով : Յիսուս ալ արթընցաւ « Թերահաւատներ՝ ըսաւ, ինչո՞ւ այդչափ կը վախէք » : Ետքը ծովուն « Գաղբէ » ըսաւ, մէկէն հանդարտեցաւ : Ամէնքն սկսան զարմանալ թէ « Աս ո՞վ է որ ծովուն կը հրամմէ » :

Հ . Յիսուսի վեցերորդ հրաշքը ո՞րն է .

Պ . Գերգեսացուց երկիրը հասածին պէս՝ դերեզմանէն երկու կատղած մերկ դիւահարներ դիմացն ելան ու կը կանչուըւտէին . « Յիսուս որդի Աստուծոյ, ինչո՞ւ դմեզ կը տանջես » : Ասան զի Յիսուս կը հրամմէր որ ելլեն սատանաներն ան մարդիկներէն : Անուննին որ հարցուց, « Լեզնն է » ըսին . ետքը Յիսուսի աղաչեցին որ զիրենք դրժսիք չխրկէ, հապա հրաման տայ որ ան կողմերը արծող խողերուն փօրը մանեն : Հրամայելուն պէս գնացին . ու խողերն որ երկու հազարի չափ կային՝ դիւահարեցան ու վաղելով ծովը թափե-

մաքսաւորներ ալ կանչուած էին : Փարիսեցիներն
ու կարդացողները երբոր լսեցին , սկսան գայ-
թակղիլ : Յիսուս ալ պատասխան տուաւ թէ ,
« Բժիշկը հիւանդներուն համար է , ես ալ մեղա-
ւորներուն համար եկեր եմ » :

Հ . Յիսուսի ութերորդ և իններորդ հրաշքնե-
րը որո՞նք են .

Պ . Յայրոս հրեից իշխանն եկաւ , Յիսուսի
ոտքն ինկաւ , ու իր մէկ հասիկ տասնուերկու տա-
րուան աղջկանը համար կ'աղաչէր որ շուտով գայ՝
ձեռքը վրան դնէ՝ ու բժշկէ , որ մեռնելու վրայ
էր : Յիսուս մէկէն ճամբայ ելաւ . երթալու ատեն
տեսատես կին մը որ տասնուերկու տարի բոլոր
ունեցածը բժիշկներու տալով՝ օգուտ մը չէր տե-
սած , եկաւ գաղտուկ Յիսուսի լաթերուն դպաւ
ու շուտ մը բժշկուեցաւ : Յիսուս դարձաւ հար-
ցուց թէ « Ո՞վ ինձի դպաւ » : Աշակերտներն սկը-
սան զարմանալով ըսել , թէ « Բազմութիւնը քեզ
կը նեղէ » . Յիսուս նորէն չորս դին կը նայէր : Ախ-
նը տեսաւ որ չճածկուիր , վախնալով Յիսուսի
ոտքն ինկաւ ու պատմեց . Յիսուս ալ իրեն սիրտ
տուաւ ու ճամբեց : Անդիէն Յայրոսի տնէն մար-
դիկ հասան ըսին , թէ « Աղջիկդ մեռաւ . վարդա-
պետը մի աշխատցըներ » : Յիսուս Յայրոսին « Դու
մի վախեր , ըսաւ . միայն հաւատա՛ » : Երբոր տու-
նը հասան , լաղկաններն ու գոռում գոչումը տես-
նելով , « Ի՞նչ շփոթեր էք , ըսաւ . աղջիկը մեռած
չէ , քուն է » : Անոնք աս խօսքիս վրայ սկսան խրն-
տալ : Յիսուս միայն իրեք աշակերտներն ու ծնող-
քը հեռն առած՝ դնաց աղջկանը ձեռքը բռնեց ,
« Ելի » ըսաւ . մէկէն ելաւ աղջիկը : Յիսուս հրա-
մայեց ծնողացն որ կերակուր տան որ ուտէ :

Հ . Յիսուսի տասներորդ հրաշքը որն է .

Պ . Զատիկի տօնին Յիսուս Երուսաղէմ որ
դնաց , հոն Պրոսպատիկէ կամ Բեթհեզղա աւա-

զանին քովը շատ հիւանդներ կը սպասէին որ տա-
րին անդամ մը երբոր հրեշտակ Աստուծոյ իջնաց
ջուրը խառնէ, իրենք մէջը նետուին . և ով որ ա-
մենէն առաջ կ'իյնար, ան միայն կը բժշկուէր :
Մէկը կար որ երեսունեւութը տարուընէ վեր ան
ջրին քով կը սպասէր . Յիսուս հարցուց իրեն, թէ
« Կ'ուզես ողջըննալ » : Ան ալ ըսաւ . « Տէր, զիս
աւազանը ձգող մը չունիմ » : Պատասխան տուաւ
Յիսուս . « Ելի, մահիճդ ան ու գնա » : Ան ալ
մահիճը շալկեց ու գնաց : Հրեաներն սկսան սրբ-
գողիլ թէ ինչո՞ւ շաբաթ օր մահիճը վերցուցեր կը
տանի : Պատասխան տուաւ, թէ « Իս բժշկողն ը-
սաւ ինձի » : Անոնք հարցուցին, թէ « Ո՞վ է անի-
կայ » . բժշկուողը չէր գիտէր : Ետքը տաճարին
մէջը Յիսուս իրեն հանդիպեցաւ ու ըսաւ . « Մէյ-
մըն ալ մեզք մի ըներ որ ալ գէշ հիւանդութիւն
չգայ վրայ » : Մարդը գնաց Հրեաներուն պատ-
մեց թէ Յիսուս էր զինքը բժշկողը : Անոր համար
Հրեաներն ալ սկսան Յիսուսը հալածել . Յիսուս
փախչելու տեղը՝ իրենց սկսաւ խմացընել թէ ինքն
Որդի Աստուծոյ է . անով աւելի կատուեցան Հրեա-
ներն ու զինքը մեռցընել կ'ուզէին :

Հ . Յիսուսի մեռասաներորդ հրաշքը ո՞րն է .

Պ . Շաբաթ օր մը արտերուն մէջէն կ'անցնէր .
աշակերաններն անօթեցած՝ ցօրենի հասկեր փր-
ցընելով ափերնուն մէջը կը շփէին ու կ'ուտէին :
Երբոր Փարիսեցիքն խմանալով նեղացան, Յիսուս
Գաւիթ մարդարէին Առաջաւորաց հացէն ուտե-
լուն ու քահանաներուն շաբաթ չպահելուն օրի-
նակներովը զիրենք պատանձեցուց : Բայց մէկալ
շաբաթը Յիսուս ժողովարանին մէջ քարոզելու
ատեն՝ փարիսեցիք չար մտքով հարցուցին իրեն,
թէ « Շաբաթ օր բժշկութիւն ընել կ'ըլլայ » : Հոն
ալ ձեռքը չորցած մարդ մը կար . Յիսուս առջևը
կանչեց զինքն ու Փարիսեցւոց հարցուց, թէ « Շա-

բաժնի օրը բարեք ընելն աղէկ է՝ թէ չարիք . թէ որ ոչխար մը շաբաթ օր փոսն իյնայ , չէք հաներ . ուրեմն շաբաթ օրը մարդ բժշկել ալ կ'ըլլայ » : Ետքը ան մարդուն « Չեռքդ երկնցուն » ըսաւ . ան ալ երկրնցուց ու բժշկուեցաւ :

Հ . Յիսուսի երկուսասաներորդ հրաշքը ո՞րն է .

Պ . Անդամ մըն ալ Յիսուս շաբաթ օր ժողովարանին մէջ կին մը բժշկեց՝ ձեռքը վրան դնելով , որ տասնևութը տարի սատանայէն բնուած՝ մէջքը ծաած մնացեր էր : Ան ատենը ժողովարանին գլխաւորը սրդողեցաւ ժողովրդեան , ըսելով . « Շաբաթը վեց օր բանի օր է . ան օրերն եկէք բժշկուեցէք , չէ թէ շաբաթ օր » : Յիսուս սատասխան տուաւ , թէ « Շաբաթ օր անասունը կ'արձրկէք . հապա Աբրահամու զաւակն որ տասնևութը տարի սատանայէն կապուած էր , սէտք չէր արձակել շաբաթ օրը » :

Հ . Ով որ ուզէր կրնա՞ր Յիսուսի աշակերտ ըլլալ :

Պ . Թէպէտ ամէն ուղող կրնար Յիսուսի ետեէն երթալ , բայց ինքն անոնցմէ ընարեց տասնուերկու հոգի ու Աւաքեալ անուանեց . որոնց անունը՝ Սիմոն , որ Յիսուս՝ Պետրոս անուանեց . Յակովբոս և Յովհաննէս՝ Չեքեղեայ որդիքը , որ Բաներեղէս անուանեց՝ այսինքն Արդիք որոսման . Անդրէաս՝ Պետրոսին եղբայրը . Փիլիպպոս , Բարթաղիմէոս , Մատթէոս մաքսաւորը . Թովմաս , Յակոբոս Ալփէոսի որդին . Թադէոս , որ Յուդա ալ կ'ըսուէր . Սիմոն կանանացի կամ Նախանձայոյդ , Յուդա խկարիսլտացի : Ասոնցմէ զատ եօթանասուն ալ աշակերտ ընարեց : Ետև Յիսուս իրենց խրատ տուաւ , և ինը երանութիւնը իրենց ըսաւ :

Տ. Յիսուսի երեքասաներորդ հրաշքը ո՞րն է.

Պ. Երբոր առաքեալներն ընտրելէն ետքը լմրն-
ցուց ժողովրդեան տուած խրատներն՝ ու լեռնէն
վար իջաւ, բորոտ մը եկաւ, երկրպագութիւն ը-
նելով կ'ըսէր. « Տէր, թէ որ կա՞միս, կարող ես
ղիս բժշկել » : Յիսուս ալ՝ « Կ'ուզե՞մ » ըսելուն
պէս՝ բժշկուեցաւ : Ապստոլեց իրեն Յիսուս որ մար-
դու չըսած՝ երթայ օրէնքին ապստրած կարգերը
կատարէ :

Տ. Յիսուսի ժ՞ն հրաշքը ո՞րն է.

Պ. Յիսուս Կափառնաու՛մ գնաց. հոն հարիւ-
րապետին սիրական ծառան մեռնելու վրայ էր.
բայց ինքն այլազգի ըլլալով՝ չհամարձակեցաւ
Յիսուսին գալու աղաչելու. անոր համար մարդ
խրկեց : Յիսուս ելաւ որ տունը երթայ. հարիւ-
րապետը նորէն խրկեց աղաչեց որ չաշխատի
չգայ : Բայց երբոր մտակցաւ, ան ատենը վազեց
առջնն ելաւ, « Արժանի չե՞մ որ իմ տունս մտնես,
ըսաւ. հասցա մէկ խօսքդ հերիք է բժշկելու » :
Յիսուս դարձաւ՝ ժողովրդեան ըսաւ. « Կրաւ կ'ը-
սե՞մ որ Իսրայէլացւոց մէջ ասանկ հաւատք չե՞մ
տեսած » : Ետքը հարիւրապետին « Գնա՛, հաւա-
տացածիդ պէս ըլլայ » ըսաւ : Ասանկով հիւանդը
բժշկուեցաւ :

Տ. Յիսուսի ժ՞ն հրաշքը ո՞րն է.

Պ. Յիսուս աշակերաններովը՝ Նային երթալու
ատեն՝ գրանը քով տեսնեն որ որքեարի կնիկան մը
մէկ հատիկ աղան մեռեր էր, կը տանելին : Յիսու-
սի դու՛թը շարժեցաւ, գնաց դագաղին մօտ, ը-
սաւ մեռելին. « Արդեակ ելի » : Եւստ մը մեռելն
եղաւ նստաւ ու խօսիլ սկսաւ :

Աս Յիսուսի ըրած հրաշքներուն ձայնը ամէն տեղ տարածուեցաւ : Յովհաննէս մկրտչին ալ բան տին մէջը պատմեցին • ան ալ իր աշակերտներէն երկուքը խրկեց Յիսուսի հարցընելու , թէ « Դուն գալու Մեռիան ես » : Յիսուս անոնց՝ առջևն ամէն տեսակ բժշկութիւններ ընելով , ապաստեց որ երթան Յովհաննէս մկրտչին պատմեն : Ետքը Յիսուս ժողովադեան առջև Յովհաննէս մկրտչը գովեց , ու վայ տուաւ հրէից որ անոր քարոզութեամբը չդարձան :

Հ • Յիսուսի քարոզութեան ատեն առջև խօսած առակը ո՞րն է •

Պ • Օր մը Սիմոն Փարիսեցին՝ Յիսուսը հացի հրամցուց : Մեղաւոր կին մը խմանալով որ Յիսուս հոն է , եկաւ ոտքն ինկաւ , կուլար ու արցունքով ոտուրները կը թրջէր , մազերովն ալ կը սրբէր , և ոտուրները համբուրելով , ազնիւ եղով կ'օժէր : Սիմոնն սկսաւ կասկածի երթալ թէ Յիսուսը կնոջն ո՞վ ըլլալը չգիտեր , մարգարէ չէ : Յիսուս անոր միտքն խմանալով , « Սիմոն՝ ըսաւ , մարգու մը երկու հոգի պարտք ունէին • մէկը հինգ հարիւր դահեկան , մէկալը յիսուն • պարտքին տէրը երկուքին ալ թողուց • հիմա աս երկուքէն ո՞րն աւելի կը սիրէ պարտքին տէրը » : Սիմոն ըսաւ • « Արն որ շատ պարտք ունէր » : Յիսուս ալ իրեն պատասխանեց • « Ես քու տունդ եկայ , դուն ջրով ալ չսուցիր ոտքս • աս կինն արցունքովը թրջեց ու մազերովը սրբեց • դուն ինձի համբոյր մը չտուիր , ասիկայ ոտուրներս համբուրելէն չգաղթիր • եղով դուխս չօժեցիր • աս անոյշ եղով օժեց : Աւստի իս շատ սիրելուն համար թողութիւն տուի իր շատ մեղքերուն » : Դարձաւ կնկանն ալ ըսաւ • « Հաւատքդ քեզ փրկեց • դնա՛ ուրախացիր » :

Հ. Յիսուսի երկրորդ առակն ինչ էր .

Պ. Քաղքէ քաղաք սլարակելով՝ ժողովրդեան խրատ խօսելու ասեն , « Սերմանացանին մէկը , ըսաւ , իր արան որ կը ցանէր , ան հունտերէն որը ճամբու վրայ խնաւով՝ թռչունները կերան . որն ապառաժ տեղուանք ինկած՝ առանց արմատի տաքէն չորցան . որն ալ փշերու մէջն՝ խղճուած մնացին պտուղ չառնին : Բայց աղէկ տեղ ինկածներն առատ պտուղ տուին , մէկին տեղ երեսուն կամ վաթսուն կամ հարիւր » : Աս առակս ետքը աշակերաններուն մեկնեց , թէ « Հունտերը Աստուծոյ խօսքերն են , ու ցանած տեղուանքը մարդկանց սիրան է . աղէկ սիրտ ունեցողը սիրով կ'ընդունի ու համբերութեամբ առատ պտուղ կուտայ » :

Հ. Յովհաննէս մկրտիչ ո՞րչափ ասեն բանար կեցաւ .

Պ. Երկու տարիի չափ . և թէպէտ Հերովդէս կ'ուզէր ղինքն սպաննել , ձանձրացած անոր խրատաներէն , բայց գիտնալով թէ անիկայ սուրբ մարդ է , կը քաշուէր : Իսկ երբոր իր ծննդեան օրն իշխաններուն սեղան ըրաւ , ու առջևին Հերովդէսի աղջիկը խաղաց , Հերովդէս այնչափ հաւնեցաւ՝ որ երգում ըրաւ տալու անոր ինչուան նաև իր թագաւորութեան կէսը : Աղջիկն իր մօրմէն խրատուած՝ Յովհաննէս մկրտչին գլուխն ուղեց : Հերովդէսի դժարն եկաւ . բայց չէ ըսելու ամբընալով , խրկեց գլուխը կարել՝ բերել տուաւ : Ետքը իր աշակերաները մարմինը թաղեցին , ու եկան Յիսուսի պաամեցին :

Հ. Յիսուսի ժի՛ղ հրաշքը ո՞րն եղաւ .

Պ. Գլխանալով թէ Հերովդէս իր ետեւն ալ ինկեր կը հարցընէ, ելաւ անոր իշխանութեան տեղէն նաւով դէպ'ի Բեթսայիգա գնաց. ժողովուրդն իմացան, ետեւն գնացին, ինքն ալ անասլաա լեռ մը ելաւ, քարող կուտար ու բժշկութիւններ կ'ընէր: Հոն իրիկուն որ եղաւ, աշակերաններն սկըսան ըսել թէ հրաման տայ ժողովրդեանն որ երթան կերակուր ուտեն: Յիսուս « Անոնց ուտելիքը դուք տուէք » ըսաւ: Անգրէաս ալ ըսաւ, թէ « Հոս մանչ մը կայ, հինգ հաց ու երկու ձուկ ունի, բայց ան որո՞ւ կը բաւէ »: Փիլիսոսոս ալ ըսաւ, թէ « Անոնց երկու հարիւր դահեկանի հաց պէտք է »: Յիսուս հրամայեց որ ժողովուրդը առդին անդին խտտերուն վրայ նստեցընեն. և ան հինգ հացը՝ երկու ձուկն օրհնելով ու բաժնելով, հինգ հազարի չափ մարդիկը կշտացան. ետքը կտորուանքն ալ ժողովել տուաւ, տասնուերկու սակառի ելաւ, խել մըն ալ ձուկ: Ասով ժողովուրդը վրան այնչափ սէր ձգեցին որ մէջերնին խորհուրդ ըրին զինքը թագաւոր դնելու:

Հ. Յիսուսի թէ և թ՛ւ հրաշքը ո՞րն է.

Պ. Երբոր հացին շատցընելու հրաշքն ըրաւ ու ժողովուրդն արձակեց, ինքը լեռը քաշուեցաւ ու աշակերաններուն ըսաւ որ նաւով երթան, ինքն ալ ետեւնէն կուգայ: Երբոր կէս ձամբան հասան, զիշերն ալ կոխեց, սկսաւ սասաիկ ալէկոծութիւն. ան վախին մէջ մէյմալ տեսնեն որ ծովուն վրայէն մէկը կուգայ, սկսան կանչուըռտել: Անտան Յիսուս « Մի՛ վախէք, ըսաւ, ես եմ »: Պետրոս, « Աթէ դուն ես, ըսաւ հրամայէ որ քովդ դամ »: Յիսուս « Եղ՛՛ » ըսաւ: Պետրոս իջաւ ու ծովուն վրայէն երբոր կը քալէր, յանկարծ ընկղմելու պէս եղաւ և սկսաւ Յիսուսը կանչել: Յիսուս ալ ձեռքէն բռնեց ու « Թերահաւատ, ըսաւ, ինչո՞ւ տարակուսեցար »: Ետքը երբոր ին-

քը նաւը մտաւ , ծովը հանդարտեցաւ , ու շուտ
մը ցամաքը հասան . ան ատեն ամէնքն ըսին , « Յի-
րաւի դուն որդի Աստուծոյ ես » : Աւրիշ անգամ
մըն ալ անապատին մէջ իրեք օր քարոզ տալէն
ետե ժողովրդեան վրայ դուժը շարժեցաւ , ու ա-
շակերտացը քով դանուած եօթը հացովն ու քիչ
մը ձուկովը՝ չորս հազար հոգի կշտացուց , և եօթը
դամբիղ կտորուանք ալ աւելցաւ :

115

Հ . Յիսուսին ժժ հրաշքը ո՞րն է .

Պ . Անգամ մը Տիւրոս ու Սիզոն այլազգեաց
քաղքրներուն կողմերը դնաց : Քանանացի կին մը
հանդիպեցաւ , սկսաւ կանչել . « Տէր որդի Դաւ-
թի՛ ողորմէ ինձի » : Յիսուս սրտասխան չառաւ .
աշակերտները աղաչեցին որ ճամբէ ան կիներ : Յի-
սուս ալ ըսաւ . « Ես Իսրայէլացւոց կտրուած ոչ-
խարներուն համար խրկուած եմ » : Աինը ինկաւ
Յիսուսի ոտքը , կ'աղաղակէր . « Տէր՝ օգնէ » : Յի-
սուս « Թող , ըսաւ , չիվայլեր աղոյն առջևի հացը
չներու տալ : — Տէր , ըսաւ կիներ , շներն ալ տիրո-
ջը սեղանին փշրանքները կ'ուտեն » : Ան ատեն
Յիսուս « Ա՛յլ կին , ըսաւ , հաւատքդ մեծ է , ու-
ղածդ ըլլայ » . մէկէն անոր դիւահար աղջիկը բը-
ժրչկուեցաւ :

Հ . Յիսուսի ՚ ու իմ հրաշքը ո՞րն է .

Պ . Առջևը բերին մէկ խուչ ու համր մարդ մը .
Յիսուս բժշկեց ու ապաստեց որ մարդու չքու-
բայց որչափ որ կ'ապաստէր , ճար չէր ըլլար , կը
սրտամէկն : Ետքը երբոր Բեթսայիդտ եկաւ , առ-
ջևը կոյր մը բերին , որ բժշկեց :

Հ . Առաքեալներն ի՞նչ կարծիք ունէին Յիսուսի աստուածութեանը վրայ .

Պ . Պաղեստինի մէջ Կեսարիայի քովի քաղաքները պարտելու ատեննին Յիսուս հարցուց առաքելոց թէ « Ժողովուրդը ո՞վ կը կարծեն զիս » . պատասխան տուին թէ « Որը Յովհաննէս Մկրտաիչն է կ'ըսեն , որը Եղիան , որը Երեմիան , կամ ուրիշ մարգարէներէն մէկը : - Իսկ ի՞նչ կարծիքի վրայ էք » ըսաւ Յիսուս : Ան ատենը մէկէն պատասխանեց Պետրոս . « Իսկ ես Գրիստոս Աստուծոյ որդին » : Յիսուս ալ ան ատեն երանի տալով Պետրոսի ըսաւ . « Իմ Եկեղեցիս քու վրայ պիտի շինեմ որ հիմանը քարն ես , ու զժողովէն ալ չյաղթուիս . արքայութեան բանալիքն ալ քեզի կուտամ » : Անկէ ետքն սկսաւ պատմել անոնց Յիսուս իր քաշելու չարչարանքները :

Հ . Յիսուս քարոզութեան ատեն իր աստուածութիւնն ալ յայտնի նշանով մը չերևցո՞ւց .

Պ . Քարոզութեան երրորդ տարին Պետրոս՝ Յակոբոս ու Յովհաննէս առաքեալները հեան առած՝ Թափոր լեռն ելաւ : Հոն Յիսուսի կերպարանքը բոլորովին փոխուեցաւ , երեսն արևու տէս ու հագուստը ձիւնի տէս ձերմակ փայլուն եղան : Մովսէս ու Եղիան ալ երևցան ու Յիսուսի հեա խօսեցան իր չարչարանացն ու մահուանը վրայ . իսկ առաքեալները զարմացած կը նայէին : Երբոր Մովսէս ու Եղիա գնացին , Պետրոս սկսաւ Յիսուսի աղաչել որ հոն մնան : Ան ատենը լուսաւոր ամառ մը ծածկեց զիրենք , ու մէջէն ասանկ ձայն մը եկաւ թէ « Աս իմ սիրական որդիս է , իրեն մտիկ ըրէք » : Առաքեալները վախցան , երեսի վրայ ինկան . Յիսուս զիրենք սոք հանեց ու ապապրեց որ չպատմեն ուրիշի՝ ինչուան իր յարութիւնը :

Հ . Յիսուսի ի՞նչ հրաշքը ո՞րն է .

Պ . Երբոր լեռնէն վար իջան , տեսան բազմու-

Թիւն աշակերտներուն քով ժողովուած . և անոնց-
մէ մէկը Յիսուսի առջևն ինկաւ , « Մէկ հասիկ
տղաս , ըսաւ , դիւահարեր է , աշակերտներուդ
բերի , չկրցան դեր հանել » : Յիսուս սրդողելով
առջեր բերել տուաւ . դիւահարն սկսաւ կատողել :
Յիսուս ըսաւ . « Պիղծ սասանայ , ելի » : Ան ա-
տեն տղան սաստիկ տանջուելով ինկաւ , անանկ
որ ամէնքը մեռաւ ըսին : Յիսուս ձեռքէն բռնեց
վերցուց ու ողջ առողջ հօրը տուաւ : Ետքը աշա-
կերտներն առանձին Յիսուսի հարցուցին , թէ
« Մենք ինչո՞ւ չկրցանք բժշկել » . Յիսուս ալ ը-
սաւ . « Հաւատք չունենալնուդ համար . թէ որ
մանանեխի չափ հաւատք ունենաք ու լեռանը
փոխուէ՛ ըսէք , տեղէն կը փոխուի : Աս ալ դիա-
նաք որ աս տեսակ դեր միայն պարով ու աղօթ-
քով կ'ելլէ » :

Հ . Յիսուս տէրութեան տուրք կուտար .

Պ . Ինչպէս սերիշ բաները հասարակ մարդու
մը պէս կ'ընէր , ասանկ տուրք ալ կուտար : Եւ
անգամ մը երբոր Պեարոսի հարցուցին թէ « Յի-
սուս աս ասրուան տուրքը չիտար » , Պեարոս
« կուտայ » ըսաւ . ու տուն որ մտաւ , Յիսուս
Պեարոսի հարցուց , թէ « Թագաւորներն իրենց
ղաւկրներէն կ'առնեն տուրքը թէ օտարներէն » .
Պեարոս ըսաւ . « Օտարներէն » : Յիսուս պատաս-
խանեց . « Ուրեմն ազատ են սրդիքը . բայց զիրենք
չգայթակղեցրնելու համար , գնա՛ ծովէն ձուկ բռ-
նելու . և առջի բռնած ձկանդ բերանը բաց ու մէ-
ջէն սատեր մը կը դանաս , առ և իմ ու քու տեղդ
տուր » . Պեարոս ալ անանկ ըրաւ :

Հ . Յիսուսի աշակերտներուն տուած խրատ-
ներուն մէջ գլխաւորը որն է .

Պ . Խոնարհութիւնն է : Անգամ մը ճամբան
երթալու ատեն աշակերտներուն մէջ խօսք եղաւ
թէ Յիսուս երբոր Թագաւորէ , իրենցմէ ո՞վ մեծ

սխախ ըլլայ : Ետքը Յիսուս հարցուց թէ ճամբան
ի՞նչ կը խօսէին : Երբոր լսեց իրենցմէ , ըսաւ .
« Մեծ ըլլալ ուզողը սղտիկ սխախ ըլլայ » : Պզտի
տղայ մըն ալ առաւ գիրկն ու ըսաւ . « Թէ որ աս
տղուն սէս խոնարհ ու անմեղ չըլլաք , արքայու-
թիւն չէք երթար » : Ուրիշ անգամ մըն ալ Յի-
սուսի առջևը մանր տղաք բերին որ օրհնէ . ու երբ-
որ աշակերտները թող չէին տար որ Յիսուսի նե-
ղութիւն չըլլայ , Յիսուս՝ « Թողէք որ գան , ը-
սաւ . արքայութիւնը ատանկ սղտիկներունն է » ,
ու զանոնք գիրկն առաւ , օրհնեց :

116

Հ . Յիսուսի ըսած երրորդ առակն ի՞նչ է .

Պ . Անգամ մը եղբայրսիրութեան վրայ խրատ
տալով՝ ըսաւ . « Թէ որ եօթն անգամ եղբայրդ
քեզի գէմ ընէ ու մեղայ ըսէ , իրեն թողութիւն
տաս » : Պեարոս ասոր վրայ տարակուսելով հար-
ցուց , թէ « Միայն եօթն անգամ » : Յիսուս ալ ը-
սաւ թէ « Եօթանասուն անգամ եօթը » . այս-
ինքն միշտ : Ետքը առակով մըն ալ խմայուց . « Թա-
գաւոր մը քննեց , ըսաւ , թէ ծառաներն իրեն ի՞նչ
սարաք ունին . ու մէկուն սարաքը գտաւ տասը
հազար քանքար : Աստպրեց որ զինքը անով տե-
ղով ծախեն որ սարաքը վճարուի : Ծառան թա-
գաւորին ոտքն ինկաւ , կ'աղաչէր որ իրեն ատեն
տայ . թագաւորին ալ դուրը շարժեցաւ , ու բո-
լոր սարաքէն աղատ ըրաւ զինքը : Ատ ծառան ու-
րիշէ մը միայն հարիւր գահեկան աննելիք ունէր .
եղաւ գնաց , սկսաւ ուղել . ան ալ աղաչեց իրեն
որ քիչ մը համբերէ : Անիկայ « Չէ , կ'ըսէր , չըլ-
լար » , բռնեց բանտ գնել տուաւ : Ուրիշ ծառա-

ները խղճացին ան մարդուն վրայ, գնացին թա-
գաւորին ըսին: Ան ատեն թագաւորը կանչեց զա-
նիկայ, « Չար ծառայ, ըսաւ, քեզի ազաչելուդ
համար տասը հազար քանքար պարտքդ թողուցի,
պէտք չէր որ դուն ալ հարիւր գահեկան անե-
լիքդ թողուիր. ուստի զինքն ալ կապեցէք, ը-
սաւ, ինչուան որ բոլորը հատուցանէ »:

Հ. Յիսուսի ըսած չորրորդ առակն ինչ է.

Պ. Օր մը օրինաց վարդապետ մը հարցուց Յի-
սուսի, թէ « Ի՞նչպէս կ'երթըցուի արքայութիւն »:
Յիսուս « Պատուիրանքները գիտես, ըսաւ, զա-
նոնք պահէ »: Ան ալ պատասխան տուաւ թէ
« Պատուիրանքին մէջ՝ ընկերդ սիրէ կ'ըսէ. իմ
ընկերս ո՞վ է: — Մտիկ ըրէ, ըսաւ Յիսուս. Մարդ
մը Երուսաղէմէն Երիքով երթալու ատեն աւա-
զակները զարկին. անոր ինկած տեղէն քահանայ
մը անցաւ, ետքը Աւտայի մըն ալ անցաւ, ամե-
նելին օգնութիւն մը չըրին. ետեւէն Սամարացի մը
հանդիպեցաւ, մէկէն վերուց, վերքերը կապեց,
իր ձիուն վրայ դրած՝ տարաւ պանդոկ մը յանձ-
նեց. երկու գահեկան ալ տուաւ պանդոկապետին
որ հոգայ զինքը. և ըսաւ թէ դարձած ատենս ինչ
ստակ ալ որ երթայ՝ կը վճարեմ: Գնա՛ ըսաւ Յի-
սուս, դուն ալ ան Սամարացիին պէս ըրէ »:

Հ. Յիսուսի ի՞նչ հրաշքը ո՞րն է.

Պ. Երբոր Յիսուս Գալիլեայի ու Սամարիայի
մէջ տեղէն կ'անցնէր, տասը բորոս հեռուէն սկը-
սան կանչել, թէ « Յիսուս, սղորմէ՛ մեզի »: Յի-
սուս պատասխանեց. « Գնացէք, ձեզ քահանա-
ներուն ցրցուցէք » . անոնք ալ բժշկուած գնա-
ցին: Ետքը անոնցմէ մէկն որ Սամարացի էր՝ եկաւ
չորհակալ եղաւ. Յիսուս զարմանալով հարցուց.
« Մէկանոնք չբժշկուեցան որ չեկան փառք տա-
լու Աստուծոյ » . ու դարձաւ Սամարացիին ըսաւ.
« Գնա՛, քու հաւատքդ քեզ փրկեց »:

Տ. Յիսուսի աշակերանները միշտ իրեն հետ կը պտըտէին .

Պ. Երբեմն առանձին ալ կը խրկէր քարոզութիւն ընելու . անգամ մըն ալ երկերկու խրկեց զառ , որ երբոր դարձան , սկսան ուրախութեամբ ըսել Յիսուսի , թէ « Տէր , քու անունդ որ կուտանք , սատանաներն ալ կը հնազանդին » : Յիսուս ալ պատասխան տուաւ . « Դուք անոր վրայ ուրախացէք որ անուննիդ երկինքը գրուած է » :

Տ. Յիսուսին սովորական կերակուրն ի՞նչ էր .

Պ. Եղած տեղը ինչ որ գտնուէր՝ ան կ'ուտէր . թէ որ շատ բաներ պատրաստէին՝ չէր արգիլէր . և թէ որ իրեն հարցընէին , քիչը հերիք է կ'ըսէր : Ինչպէս անգամ մը Բեթանիա գեղը Մարթա ու Մարիամ Ղազարու քոյրերուն տունը գնաց : Մարթան կերակուրներ պատրաստել սկսաւ , ու Մարիամ Յիսուսի քովն եկաւ , խօսածը մտիկ կ'ընէր : Մարթան եկաւ Յիսուսի ըսաւ , թէ « Մարիամն ինձի ջօգնէր որ մէկտեղ ընցընենք ու ես ալ դամ մտիկ ընեմ » : Յիսուս « Մարթա , ըսաւ , գիտցիր որ պարապ տեղը կ'աշխատիս , մեզի քիչ մը բան կ'օգտէ . Մարիամն խրատ մտիկ ընելն ալ աղէկ է » :

Տ. Յիսուսի ի՞նչ հրաշքը ո՞րն է .

Պ. Շաբաթ օր մը Երուսաղեմի ճամբան կոյր մուրացկանի մը հանդիպեցաւ . աշակերանները հարցուցին , թէ « Ասոր կուրութիւնը ի՞ր մեղքին պատիժն է թէ ծնողացը » : Յիսուս ալ ըսաւ , թէ « մէկունն ալ չէ » : Ետքը Յիսուս գետինը թըքաւ , անով կաւ շինեց , կուրին աչուրներուն քսեց ու հրամայեց որ Սելուլամի աղբիւրն երթայ

լուացուի : Ասանկով կոյրը բժշկուեցաւ : Ճանչ-
ւորները տեսնելով, զարմացան, ու կը տարակու-
սէին թէ արդեօք ան է : Փարիսեցիք երբոր իմա-
ցան որ շաքաթ օրը բժշկեց, սկսան կուրին ըսել,
թէ « Ան մեղաւոր մարդ է » : Աոյրն ալ կ'ըսէր •
« Թէ որ Աստուծմէ չըլար անիկայ, չէր կրնար
կոյր ծնած մարդ մը բժշկել » : Փարիսեցիք բար-
կացան վրան ու վանեցին : Ետքը Յիսուս անոր
հանդիպեցաւ, զինքն անոր ճանչցուց, ան ալ Յի-
սուսի երկրպագութիւն ըրաւ :

Հ • Ինչո՞ւ Հրեայք Յիսուսի չէին հաւտար •

Պ • Նախանձոտ ու չարասիրտ ըլլալնուն հա-
մար : Անգամ մը տաճարին սրահին մէջ՝ « Թէ որ
մեսիան ես, կ'ըսէին Յիսուսի, յայտնէ մեզի » •
Յիսուս ալ պատասխան տուաւ, թէ « Ես յայտ-
ներ եմ, բայց դուք չէք ուզեր իմանալ, որովհետեւ
իմ ոչխարներէս չէք • վասն զի ես ու իմ հայրս
մէկ ենք » : Հրեաները մէկէն զինքը քարկոծել ու-
զեցին • Յիսուս տեսնելով որ խօսք չեն հասկը-
նար, մէջերնէն հեռացաւ :

Հ • Յիսուսին հինգերորդ ու վեցերորդ խօսած
առակն ի՞նչ է •

Պ • Որովհետեւ Հրեայք խիստ կը նեղանային որ
Յիսուս ցած մարդիկներուն հետ կը վարուէր,
իսուս ալ անոնց ըսաւ • « Մարդ մը որ հարիւր
ոչխարներէն մէկը կորսուցնէ, ան իննսունուինը
կը թողու, ու մէկ կորսուածին ետէն կ'երթայ •
և թէ որ գտնայ, կ'ուրախանայ » : Ասոր ետէն
անառակին պատմութիւնն ալ ըսաւ :

Հ • Անառակին պատմութիւնը ի՞նչպէս է •

Պ • Մարդ մը երկու որդի ունէր • օր մը պրզ-
աիկ տղան հօրմէն ուզեց՝ առաւ իրեն ինկած ժա-
ռանդութիւնը, գնաց հեռու քաղաք մը, բոլոր
մտխեց ու մէկու մը քով ծառայութեան մտաւ՝
խող կ'արածէր, ու անոնց կերած եղջիւրէն կ'ու-

զէր, ու չէին տար որ ուտէ : Ասանկ խեղճու-
թեան մէջ միտքն եկաւ իր հօրը տանը ծառաները
որ հանգիստ կ'ապրին • ու սիրտ ըրաւ երթալ
հօրն աղաչել որ ծառայի տեղ զինքը տուն առնէ :
Երբոր հայրը զինքը հեռուէն տեսաւ, վազեց
վիզը սլուեցաւ • տղան ամբնջալով « Մեղայ, կ'ը-
սէր, զիս ծառայի տեղ ընդունէ » : Հայրը՝ « Բե-
րէք, ըսաւ, ասոր առջի աղուոր լաթերը հագու-
ցէք » • ու փառաւոր սեղան ըրաւ, գիրցուցած
եզը մօրթել տուաւ, որ կորսուած տղան գտնուե-
ցաւ : Ան միջոցին մեծ տղան տուն որ կուգար,
հարցուց ծառային թէ ի՞նչ ուրախութեան ձայն
է • երբ իմացաւ, հօրը նեղացաւ, ըսելով • « Այս-
չափ ատեն քեզի հնազանդեր եմ ու մէկ բան մը
ինձի չես տուած, ու գէշ եղբօրս այնչափ պատիւ
կ'ընես » : Հայրն ալ ըսաւ • « Արդեակ, ամէն ու-
նեցածներս քուկդ են • բայց ասիկայ կորսուած
էր ու գտնուեցաւ • անոր համար պէտք է ուրա-
խանալ » :

Հ • Յիսուսին եօթներորդ առակն ի՞նչ է •

Պ • Հարուստ մարդ մը լսեց որ իր տնտեսը մըս-
խողութիւն կ'ընէ, քովէն հանել ուղեց : Տնտեսը
մտմտալով որ ետքը ասրուստ պիտի չգտնէ, կան-
չեց իր տիրոջը պարտք ունեցողներն ու պարտքերուն
մէկ մասն աւրել տուաւ : Տէրը երբոր լսեց անոր
ասանկ խելք բանեցընելը՝ գովեց : Ետքը Յիսուս
« Դուք ալ, ըսաւ, անոր պէս մէկուն մէկալին
թողութիւն տուէք, որ ձեզի օգնեն արքայութիւն
երթալու համար » : Բայց ետքը ալ աւելի հաս-
տատելու համար թէ ուրիշի թողուլ և ողորմու-

Թիւն ընելը խիստ հարկաւոր է, մեծատան աւակն ալ ըսաւ :

Հ • Յիսուսին ութերորդ աւակն ի՛նչ է •

Պ • Հարուստ մարդ մը հագուած կասուած՝ ամէն օր ուտել խմելու հետ էր • անոր գրանը քով կը կենար աղքատ մը Ղաղար անունով փշրանքի կարօտ, շներն ալ անոր վերքերը կը լղէին : Մեռան երկուքն ալ • մեծատունը դժօխքէն տեսաւ Ղաղարը Աբրահամու գիրկը, սկսաւ աղաչել թէ խրկէ իրեն Ղաղարն որ մառին ծայրովն իրեն ջուր տայ, որ քիչ մը սպառակը իջեցնէ : Աբրահամ ալ « Չըլար, ըսաւ, մէյմը միտքդ բեր աշխարհքին մէջ ըրածներդ, և ասոր քաշածները » : Անտանը աղաչեց որ գոնէ իրեն եղբարցը խրկէ իմացնէ դժօխքին տանջանքը : Աբրահամ ըսաւ • « Թէ որ անոնք ըսած ու կարդացած խրատները չեն սպահեր, մարդ մըն ալ յարուժիւն առնէ, երթայ իրենց ըսէ, մախկ չեն ըներ » :

Հ • Յիսուսին իններորդ աւակն ի՛նչ բանի վերայ է •

Պ • Աղօթքին հարկաւորութեանը վրայ : Դատաւոր մը կար որ Ասաուծմէ չէր վախէր, մէկէ մ' ալ չէր ամաչէր • որբեարի կին մըն ալ կուգար ամէն օր կ'աղաչէր որ իրեն դատաստանը կարէ : Օր մը ինքնիրեն ըսաւ դատաւորը • « Ես թէպէտ ոչ վախ ունիմ և ոչ ամօթ, բայց աս որբեարիին դատաստանը տեսնեմ ու ազատիմ ձեռքէն » : — Թէ որ, ըսաւ Յիսուս, անիրաւ դատաւորը շատ աղաչելուն չկրցաւ դէմ դնել, հապա Ասաուծ ի՛նչպէս չողորմի աղաչողին » :

Հ • Յիսուսի տասներորդ աւակն ի՛նչ է •

Պ • Անգամ մը փարիսեցին ու մաքսաւորը տաճար դնացին • փարիսեցին սկսաւ աղօթել, թէ « Փառք Ասաուծոյ որ դէշ մարդ չեմ, կամ աս մաքսաւորին պէս չարագործ չեմ, այլ ամէն օ-

րէնքները կը պահեմ » : Իսկ մաքսաւորն աչքն ալ չէր ուզէր վեր վերցընել, ու կուրծքը զարնելով « Մեղայ » կ'ըսէր : Ետքը ըսաւ Յիսուս . « Ա'լ աւելի հաճոյ եղաւ Աստուծոյ մաքսաւորը, այսինքն մեղաւոր մը իր խոնարհութեամբը, քան թէ փարիսեցին, այսինքն հպարտ արդարը » :

Հ . Յիսուս հարո՞ւստ մարդն աւելի կը սիրէր թէ աղքատը .

Պ . Ինքը զան մարդը կը սիրէր որ սրտով աղքատ է . բայց հարուստ մարդու մը դիպուածով իմացուց, թէ շատ դժուար է որ մէկը հարուստ ըլլայ ու սիրտը ստակի կապած չըլլայ : Անգամ մը հարուստ երիտասարդ մը հարցուց Յիսուսի, թէ « Արքայութիւն երթալու համար ի՞նչ պէտք է ընել » : Յիսուս ըսաւ . « Պատուիրանքները պահէ » : Հարուստն ալ՝ « Պզտիկուց ՚ի վեր պահեմ եմ » ըսաւ : Յիսուս սրտասխանեց . « Ուրեմն թէ որ կ'ուզես կատարեալ ըլլալ, բոլոր հարստութիւնդ թող ու ետեւէս եկո՛ւ » : Հարուստը աս ըսածին պէս՝ գլուխը կախեց գնաց : Դարձաւ Յիսուս կսկծալով ըսաւ . « Շատ դիւրին է որ մէկ հասաչուն մը ասեղի ծակէն անցնի, քան թէ հարուստ մարդ մը արքայութիւն երթայ » : Աշակերտները զարմացան, սկսան հարցընել, թէ « Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ : Յիսուս ալ ըսաւ . « Եւ ոչ մէկը . բայց ուղողին Աստուած ոյժ կուտայ » : Ան աւանելը Պետրոս ըսաւ . « Մենք ամէն բաներնիս թողուցինք, քու ետեւէդ եկանք . մեզի ի՞նչ պիտի ըլլայ » : Յիսուս ալ սրտասխանեց . Դուք դասաստանին օրը ինձի հետ տասնուերկու ամիս պիտի նստիք » :

Հ. Յիսուսին տասնումէկերորդ առական ինչ է.

Պ. Ուղեւոր խմացընել թէ շատ մարդիկ թէ պէտ ուշ, բայց սրտանց Աստուծոյ մտենալով՝ ուրիշներէն առաջ կ'անցնին. « Աստուած՝ ասեալիւ մը կը նմանի, ըսաւ, որ առաւօտանց ելաւ իր այգիին մշակներ բռնեց՝ դահեկանի մը խօսք կապելով: Ետքը ժամը իրէքին նորէն մարդ գտաւ, խրկեց այգին. վեցին ալ, իննին ալ, ինչուան տասնումէկին մարդ գտաւ. « Ինչո՞ւ պարտաւ կեցեր էք » ըսաւ, ու խրկեց այգին: Իրիկուան վերջի եկողներէն սկսաւ վարձքերնին տալ մէյմէկ դահեկան. առջի եկողները տեսնելով, կարծեցին թէ իրենց աւելի պիտի աայ. երբոր յոյսերնին պարտան ելաւ, սկսան տրանջալ: Ան ասենը տանուաէրն ըսաւ. « Չեղի հեա ինչ որ խօսք կապեցի, տուի. հիմա ինչո՞ւ կը տրանջաք ուրիշ խեղճերուն բարեք ընելուս համար »:

Հ. Յիսուսին քսանեւհինգերորդ հրաշքը ո՞րն է.

Պ. Երբոր Ղազարոս ծանր հիւանդացաւ, քոյրերը Յիսուսի խրկեցին խմացուցին. Յիսուս երկու օր ալ ուշացաւ ու ետքը աչկերաներուն ըսաւ, թէ « Երթանք հրէաստան որ Ղազարոսն արթընցընեմ »: Անոնք չհասկըցան ու սկսան զարմանալ. ան ասեն յայտնի ըսաւ թէ « Ղազարոս մեռաւ. բայց ես ուրախ եմ որ ասով ձեր հաւատքն ալ կը հաստատուի »: Ետքը երբոր Բեթանիա հասաւ, Ղազարոս չորս օրուան մեռած ու թաղուած էր. Մարթա Ղազարոսին քոյրը երբոր լսեց, դիմացը ելաւ, « Տէր, ըսաւ, եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռներ. բայց հիմայ ալ կը հաւատամ որ ե.

Թէ ուզես, կրնայ ողջըննալ » : Յիսուս պատասխանեց . « Կ'ողջըննայ թէ որ հաւատաս » : Գնաց Մարթա կանչեց զՄարիամ քոյրը . հետը եկան սգաւոր բարեկամներ ալ լալով : Յիսուսի ալ սիրան ելաւ, լացաւ . հարցուց, թէ « Ո՞ւր թաղեցիք » . տարին ցրցուցին : Յիսուս վրայի քարը վերցընել տուաւ ու ամուր ձայնով կանչեց . « Ղազարոս, դուրս եկո՛ւ » : Մէկէն մեռելը պատանքովն ելաւ կեցաւ . և Յիսուս հրամայեց որ պատանքը քակեն : Ասով շատ մարդ Յիսուսի հաւատացին . ոմանք ալ գնացին փարիսեցիներուն խնայուցին . անոնք ալ քահանայապետներուն հետ խորհուրդ ըրին որ Յիսուսը մեռցընեն, չըլլայ թէ ասանկով Ժողովուրդը ասպատակեցընէ ու հռոմայեցիք գան զմեզ ջարդեն ըսելով : Յիսուս ալ խմանալով, նորէն երեսը ծածկեց, Եփրայիմ գեղը գնաց :

Հ . Երբոր Յիսուսի չարչարանաց օրերը մօտեցաւ, առաջուց խնայուց աշակերտներուն .

Պ . Մօտիկ ան զատկին որ ինքը սխալ չարչարուէր, Եփրայիմէն ելաւ Երուսաղէմ գալու համար, ու ճամբան սկսաւ ըսել, թէ « Մարգարէներուն ըսածն աս զատկին իմ վրաս սխալ կատարուի » : Ան ատենը Յակոբոս ու Յովհաննէս Չեբեղեայ որդիքն՝ իրենց մօրը բերնով խնդրեցին որ Յիսուս երբոր թագաւոր նստի, ղերենք քովն անէ : Յիսուս ալ իրենց խնայուց թէ խոնարհութեամբ միայն կ'ըլլայ աս բանը : Երբոր Յիսուս Երեքովին մօտեցաւ, ճամբուն վրայ մուրացկան կոյր մը բժշկեց : Եւ բաղմուծիւնը չորս գին լըցուած ըլլալով, Չաբէոս մաքսապետն ալ որ կը փափաղէր զՅիսուս տեսնելու՝ կարճ հասակով

ըլալուն չէր կրնար, ելաւ ծառի մը վրայ • Յիսուս ալ զինքը կանչեց ու ըսաւ • « Քու տունդ այսօր պիտի ուտեմ կերակուր » : Ան ալ ուրախացաւ ու խոստացաւ ունեցածին կէսն աղքատի տալ, ու անիրաւութիւններուն տեղ չորեքսպասիկ հատուցանել • Յիսուս ալ ըսաւ, թէ « Այսօր վերկուծիւն եղաւ աս տանս » :

Հ • Յիսուսի տասնուերկուերորդ առակն ի՞նչ է •

Պ • Ատուծոյ արդարութիւնը յայանելու համար պատկեց թէ թագաւոր մը երբոր հեռու տեղ պիտի երթար, կանչեց իր ծառաներն ու մէյմէկ քիչ ստակ տուաւ որ ինչուան որ դառնայ՝ շապրնեն : Երթալէն ետե խրկեցին քաղաքացիք ըսելու իրեն, թէ « Չենք ուզեր զքեզ մեզի թագաւոր » : Ետքը երբոր դարձաւ, կանչեց ծառաները հարցուց թէ ի՞նչ վասարկեցաք : Տասը քսակ անողը տասն ալ վաստակ բերաւ, և հինգ անողն ալ՝ հինգ բերաւ • Թագաւորը երկուքն ալ պատուեց գովելով : Երբոր մէկալին ալ հարցուց, բերաւ ետ տուաւ առած քսակը՝ ըսելով, թէ « Չկորսրնցնելու համար պահեցի, գիանալով թէ խիստ բարկացող ես » • ան ատենը տէրը բարկացաւ ու ըսաւ • « Թէ որ տասնկ է, ինչու շահու չդրիր որ հիմա ամօթով չմնայիր » : Ասանկ ըսելով՝ պատժեց ան ծոյլ մարդն ու ան ստակն ալ մէկալնոնց տուաւ : Եւ իրեն գէմ խօսողներն ալ սպաննել տուաւ :

Հ • Ի՞նչ կերպով սկսաւ լցուիլ Յիսուսի վրայ եղած մարդարէութիւնները •

Պ • Երբոր Երեքովէն նորէն Բեթանիա գնաց՝ Սիմոն բորտաին տունը սեղանի նստաւ, Ղազար ալ հոն էր • ան ատեն Մարիամ անոր քոյրն՝ աղնիւ եղով եկաւ Յիսուսի գլուխը և ոտուրններն օծեց • Յուզա ստակին մեղքըննալով, աղահ ըլլա-

լուն « Մեղք, ըսաւ, աղքատներուն համար որ-
չափ ստակ կ'ելլէր ան եղէն » : Յիսուս գովեց ըզ-
Մարիամ, « Աս ըրածն իմ թաղուիցս կը նշանա-
կէ » ըսելով. և երկրորդ օրը հանդէսով Զաքա-
րիա մարդարեփն ըսածին պէս Երուսաղէմ գնաց
չարչարուելու :

Handwritten text in Armenian script, likely a signature or note, including the date 1879.

ՅԻՍՈՒՍԻ

ԵՐՈՒՍՍԱՂԷՄ ՄՏՆԵԼԷՆ

ԻՆՉՈՒՄՆ ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

121

Ծաղկազարդ .

Հ . Յիսուս ինչ հանդէսով Երուսաղէմ մտաւ .

Պ . Երբոր Բեթանիայէն ելաւ ու Չիթենեաց լեռը մտակցաւ , աշակերտներէն երկուքը խրկեց դիմացի գեղն որ հոն կապած էշ մը կայ՝ իր քուսակովը բերեն . և թէ որ հարցընող ըլլայ , « Իր անիւծը պէտք է » ըսեն : Աշակերտները գնացին բերին , ու լաթերնին անոնց վրայ ձգած՝ Յիսուսը հեծուցին ու սկսան Երուսաղէմ մտնել : Ժողովուրդն արմաւենիի ու ձիթենիի ճիւղեր առած առջևն ելան ու հաղուսանին գետինը փռելով՝ ամէնքը մէկտեղ մեծ ու պզտիկ սկսան աղաղակել . « Օրհնութիւն որդւոյ Դաւթի , օրհնեալ յանուն Տեառն . օրհնութիւն ՚ի բարձունս » : Փարիսեցիներն ու կարգացողները սաստիկ նախանձելով՝ սկսան Յիսուսի ըսել , թէ « Ապստրի որ չկանչեն » : Յիսուս պատասխանեց . « Թէ որ անոնք ըսն , քարերը կ'աղաղակեն » : Ետքը Երու-

սաղեմին մօտենալով՝ Յիսուս լացաւ քաղքին վըրայ • « Ասյ քեզի՝ ըսելով, որ չճանչցար քեզի եղած բարիքը • անոր համար պիտի կորսուիս » :

Հ • Երբոր Յիսուս հանգիստով Երուսաղէմ մըտաւ, ի՞նչ ըրաւ •

Պ • Մտաւ տաճարն ու տեսաւ որ հոն առուտուր կ'ընէին, զամէնքը դուրս վաընտեց, ըսելով, թէ « Իմ հօրս տունը աւազակի այր մի ընէք » : Ետքը շատ կոյրեր ու կաղեր բժշկեց, ու իրիկուան դէմ Բեթանիա գնաց :

Հ • Յիսուսի քսանըվեցերորդ հրաշքը ո՞րն է •

Պ • Ծաղկազարդին երկրորդ առաւօտն Երուսաղէմ դառնալու ատեն անօթեցաւ • թզենիի մը քով գնաց ու պտուղ չգտնելով, ըսաւ անոր, թէ « Քեզմէ մէյմ՝ ալ մարդ պտուղ չուտէ » : Երկրորդ օրն որ նորէն անկէ կ'անցնէին, տեսան որ բոլորովին չորցեր է : Աշակերտները Յիսուսի ցըցուցին • ան ալ ըսաւ որ « Հաւաքով և աղօթքով ամէն բան կրնաք ընել » :

Հ • Յիսուսի տասնուիրեքերորդ ու ասանըչորրորդ առակն ի՞նչ է •

Պ • Փարիսեցիներն օր կը պարծէին թէ իրենք են Աստուծոյ հնազանդ որդիքը, զիրենք յանդիմանելու համար ըսաւ • « Մարդ մը երկու աղաք ունէր, մէկուն ըսաւ, թէ « Գնա՛ այսօր այգին բանէ » : Տղան՝ « Ա՛րթամ » ըսաւ ու չգնաց • Հայրն ալ մէկալին տագսպրեց, անիկայ « Չեմ՛ երթար » ըսաւ, բայց զղձաց ու գնաց : Ասանկ ահա մեղաւորները հնազանդելով՝ ձեզ պիտի անցնին » : Ետքը « Աս առակս ալ լսեցէք, ըսաւ • Մարդ մը այգի տնկեց ու մշակներուն ձեռքը յանձնեց՝ գընաց : Ատենին ծառաներ խրկեց որ պտուղը ժողվեն • մշակները զանոնք բռնեցին սպաննեցին : Տէրը նորէն ուրիշները խրկեց • մշակները զանոնք ալ մեռուցին • ասանկ քանի մը անգամ : Ետքը տէրը

իր տղան խրկեց, դուցէ տղէս ամբնան ըսելով .
անոնք զան ալ սպաննեցին որ այդին իրենք ժա-
ռանգեն » : Ետեւէն ըսաւ Յիսուս . « Ան մշակնե-
րուն տէրն ի՛նչ պիտի ընէ » : Մտիկ ընողները սպ-
տասխան տուին , թէ « Պէտք է սպաննէ » : Իսկ
չարերն խմանալով թէ իրենց համար է ըսածը ,
« Չըլլար ըսին , առանկ բան » :

Հ . Յիսուսի տասնըհինգերորդ առակն ի՛նչ է .

Պ . Աւելի հաստատելու համար թէ Հրեայք
զինքն արհամարհելով իրենց գէշ կ'ընեն , ըսաւ .
« Աստուած Թագաւորի մը կը նմանի որ հարսնիք
ըրաւ , ու ծառաները խրկեց՝ կանչեց բարեկամնե-
րը . անոնք մէյմէկ պատճառաւ չեկան . ոմանք
ծառաներն ալ սպաննեցին : Թագաւորը ըսելով ,
սասաիկ բարկացաւ , զինուորներ խրկեց , զանոնք
սպաննել տուաւ . և անոնց տեղը փողոցներէն
մարդիկ բերել տուաւ : Ետքը Թագաւորը քովեր-
նին եկաւ , տեսաւ որ մէկն ալտոտ լաթերով նըս-
տեր է . հարցուց թէ « Ի՛նչպէս հարսնիքի լաթ
չհագած եկեր ես » . ան ալ սխալանձեցաւ : Ա-
նոր համար Թագաւորը հրաման տուաւ որ ոտքը
ձեռքը կապած՝ դուրս ձգեն զինքը » :

Հ . Յիսուսի վարդապետութեանը զվաւոր
դէմ զնողները որոնք էին .

Պ . Փարիսեցիներն ու Սադուկեցիները : Անգամ
մը Փարիսեցիք խօսք դրին որ զՅիսուս տէրու-
թեան դէմ յանցաւոր ցուցնեն ու բռնել տան ,
անոր համար եկան գովելով հարցուցին իրեն , թէ
« Պէտք է որ Հրեայք հռոմայեցւոց կայսեր հարկ
տան » : Յիսուս խմանալով անոնց մտքին շարու-

Թիւնը • « Բերէք , ըսաւ , դահեկան մը որ տեսնեմ » • երբոր բերին , « Ասոր վրայ որո՞ւն պատկերը տպած է » ըսաւ • պատասխանեցին թէ « Կայսեր » : « Ուրեմն , ըսաւ Յիսուս , տարէք կայսեր բանը իրեն տուէք , Աստուծոյ բանն ալ Աստուծոյ » • Փարիսեցիք ասանկով պապանձեցան մնացին • Սադուկեցիք ալ տեսան որ միշտ առակով զիրենք կը բռնէ , իրենք ալ առակով մը ուզեցին Յիսուսը խաղք ընել :

Հ • Սադուկեցիք զՅիսուս խաղք ընելու համար ինչ առակ ըսին •

Պ • Որովհետեւ իրենք յարութիւն չեն ընդունիր , « Արդապետ , ըսին , Մովսէս օրէնք դրեր է որ երբ կարգուած մարդ մը մեռնի առանց զաւկի , անոր կինը եղբայրն առնէ , որ եղբորն անուամբ զաւակ բերէ : Անգամ մը մէկ կինը՝ եօթն եղբարք կարգաւ առին ու ամէնքն ալ առանց զաւկի մեռան , ետքէն կինն ալ մեռաւ • յարութեան ատենն ան կինը որո՞ւն պիտի ըլլայ » : Յիսուս ըսաւ • « Դուք մօլորած էք • չէք գիտեր թէ անդի աշխարհք կարգուիլ չկայ : Իսկ յարութիւն ըլլալուն նշանն ալ ան է որ Աստուած ինքզինքը Աբրահամու , Իսահակայ , Յակոբայ Աստուած կը կանչէ • թէ որ անոնք ոչնչացած ըլլային , Աստուած՝ ոչնչութեան Աստուած կ'ըլլար » :

Հ • Յիսուս աղքատ մարդու ինչ ճամբայ սորվեցուց որ հարուստէն շատ ողորմութիւն ըրած ըլլայ •

Պ • Գիտուածով մը խնայուց որ Աստուած մարդուն սիրար կը նայի , ստակին շատութեանը չը նայիր : Երբոր տաճարը գանձանակին գխնացը կեցեր կը նայէր , շատ մարդիկ շատ ստակ կը ձգէին • որբեարի աղքատ կին մըն ալ երկու լուծայ ձգեց : Յիսուս ըսաւ իր աշկերաներուն , թէ « Ան կինն ամենէն շատ ձգեց • վասն զի մէկալնոնք աւելորդ

ստակնին ձգեցին • բայց անիկայ իր բոլոր ունեցա-
ծը տուաւ » :

Հ • Յիսուսի տասնըվեցերորդ առակն ի՞նչ է •

Պ • Որովհետեւ առաջ առակ մը ըսաւ, թէ՛ եր-
բեմն ուշ դարձած մեղաւորներ պիտի ուրիշնե-
րէն վեր անցնին, ետքը աասը կուսանաց առա-
կովն ալ իմացուց որ ապաշխարութիւնը անհո-
գութեամբ ետք ձգողը չփրկուիր : « Տասն կուսանք
կային, ըսաւ, հինգը յիմար, հինգն ալ իմաս-
տուն • ասոնք լապտերնին վառած՝ փեային դի-
մացը ելան : Փետան երբոր ուշացաւ, իրենք ալ
քնացան • կէս գիշերուն ձայն ելաւ թէ « Փետան
կուգայ » • ելան լապտերնին պատրաստեցին : Յի-
մարներն ուրիշ պատրաստ եղ չունենալով, իմաս-
տուններէն ուղեցին • անոնք ալ չտուին վախնա-
լով որ չըլլայ թէ իրենց ալ չբաւէ • « Գնացէք
ձեզի գնեցէք » ըսին : Երբոր անոնք գնացին, փե-
սան եկաւ, իմաստունները ներս մտան : Ետքը ե-
կան յիմարներն սկսան աղաչել որ դուռը բանայ •
բայց ձոր չեղաւ, դուռը մնացին, առաջուց եղ
չպատրաստելուն համար » : Աս առակէն ետե
Յիսուս յայանեց աշխարհներուն որ երկու օրէն
պիտի խաչուի :

123

Հ • Երբոր Յիսուսի չարչարանաց օրերը մօտե-
ցան, փարիսեցիք ի՞նչ կերպեր բանեցուցին զինքը
բռնելու համար •

Պ • Զատկէն երկու օր առաջ ամենքը ժողովե-
ցան Վայիափա քահանայապետին քովն, ու խօսք
դրին որ Յիսուսը կերպով մը սպաննեն • բայց
տօնի օրերը չէին ուզէր ընել որ չըլլայ թէ խառ-
վութիւն մը ելլէ : Ան ատենն ալ Յուդա Կոկա-

բիովապցիին փորը սատանայ մտաւ որ գնաց ա-
նոնց ըսաւ . « Յիսուսը ես կը մատնեմ , ինձի ինչ
կուտայք » : Անոնք ուրախացան :

Հ . Յուդա երբ մատնեց զՅիսուս .

Պ . Բաղարջակերաց առջի գիշերը : Յիսուսին
մարմնոյ և արեան պատարագին խորհուրդը տե-
սաւ , ճաշակեց սուրբ մարմինն ու գնաց մատնեց
զՅիսուս :

Հ . Յիսուս զատկական գառն ո՞ւր կերաւ .

Պ . Երուսաղէմին մէջ՝ ո՞ր տունն որ ինքը հաճե-
ցաւ . առաջ խրկեց Պետրոսն և Յովհաննէսն ու
ըսաւ . « Քաղաքը մանեղնուդ պէս , մարդու մը կը
հանդիպիք՝ սափոր կանակը , գնացէք ետեւն ու
անոր մտած տանը ախրոջը ըսէք . « Արդապեալին
տանը հասեր է , կ'ուզէ որ զատիկը քու տունդ
ընէ : Ան ալ զձեզ զարդարած վերնատուն մը կը
հանէ , հոն սեղանը պատրաստեցէք » : Իրիկուան
դէմ ինքն ալ հոն գնաց , ու երբոր նստան ուտե-
լու , Յիսուս « Խիստ կը բաղձայի , ըսաւ , սա ժա-
մին հասնելու » : Մէկ քանի սիրոյ խօսքեր ըսելէն
ետե , « Չեզմէ մէկը զիս պիտի մատնէ » ըսաւ :
Աս խօսքիս վրայ ամէն մէկը խռոված՝ սկսան հար-
ցընել , թէ « Արդեօք ես եմ » . Յիսուս ըսաւ . « Ան
է որ իր ձեռքը ինձի հետ սկաւառակին կերկնցը-
նէ » : Ան ատենը Յուդան ալ հարցուց , թէ « Ես
եմ » . Յիսուս ըսաւ « Ի՞նչն ըսիր » : Վերակուրը
լմբնալու ատեն Յիսուս հաց մը առաւ օրհնեց ,
ու աշակերտացը բաժնելով՝ Աբէ+ Կերէ+ ըսաւ : Ե-
տեւէն գինիով գաւաթն առաւ օրհնեց ու տուաւ
աշակերտներուն՝ Աբէ+ Ի մանէ ըսելով : Ասով պա-
տարագը հաստատեց ու ապապրեց որ անով զինքը
միշտ յիշեն :

Հ . Չարչարանաց ընթրիքէն ետե Յիսուս ինչ
ըրաւ .

Պ . Աշակերտներուն ոտուրները լուաց . բայց

Պետրոս չէր ուզէր թողուլ Յիսուս ըսաւ . « Թէ որ չլուամ , ինձի հետ մասն չես ունենար » : Ետքը ամենուն մէկէն ըսաւ . « Ինչպէս ես ձեզի ըրի , դուք ալ մէկմէկու ըրէք » :

Հ . Չարչարանաց ընթրիքին գիշերը Յիսուս ո՛ւր կեցաւ .

Պ . Աշակերտաց ոտքը լուանալէն ետքը նախ նստաւ քիչ մը խօսեցաւ . ետև դարձաւ Յուդայի ըսաւ . « Ինչ որ պիտի ընես , գնա՛ ըրէ » : Յուդա ելաւ գնաց Յիսուսը մատնելու՝ բողոքովին սատանայէն միտքը բռնուած : Ուրիշները կարծեցին թէ Յիսուս զինքը բանի մը կը խրկէ : Անկէ ետև իր մեր վրայ ունեցած սէրը շատ կերպ խօսքերով եմացուց Յիսուս , և թէ պիտի իրենցմէ բաժնուի : Երբոր ամենքը սրտերնին ելած մտիկ կ'ընէին , իրենց ըսաւ , թէ « Դուք ալ զիս պիտի թողուք երեսի վրայ » . անոնք՝ Չէ , կ'ըսէին . ամենէն աւելի Պետրոս , « Ար մեռնիմ քեզի հետ ու չեմ բաժնուիր » կ'ըսէր : Յիսուս ըսաւ . « Գիտնաս որ աս իրիկուն իրէք անգամ զիս պիտի ուրանաս » : Ան ալ աւելի կը պնդէր թէ անկարելի է : Ետև գիշերանց ելան , Յիսուս Չիթենեաց լեռը գնաց աղօթք ընելու :

124

Հ . Մատնութեան գիշերը Յիսուս երբոր լեռը գնաց աղօթք ընելու , առաքեալներն ո՛ւր թողուց .

Պ . Գեթսեմանի գեղը թողուց , ու միայն Պետրոսը՝ Յակոբոսն ու Յովհաննէս հետն առած՝ պարտէզ մը գնաց . և անոնց ալ ըսաւ , թէ « Շատ տրամութեան մէջ եմ . հոս աղօթքի կեցէք » : Բիչ մ' ալ առաջ գնաց , ու սկսաւ աղօթք ընել .

և մեր ըրած մեղքերուն մեծութիւնը մտածելով՝
արիւն քրանիլ սկսաւ : Երկու անգամ ալ եկաւ
առաքեալներն արթնցուց աղօթքի՝ որ փորձու-
թեան մէջ չկնան : Երրորդ անգամ եկաւ « Ելէք,
ըսաւ, երթանք, հիմա կուգան զիս փնտռողնե-
րը » : Ան ատեն մէկէն հասան հրեաները զինքը
բռնեցին :

Հ. Յուդա ի՞նչ կերպով մատնեց զՅիսուս, և
Յիսուս ի՞նչպէս բռնուեցաւ .

Պ. Յուդա նշան առեր էր անոնց թէ որուն
որ պահնելով բարե տայ՝ ան է . ուստի երբոր զի-
նուորներով զէնքերով եկան, Յուդայի բարե տա-
լու ատենն ըսաւ Յիսուս, թէ « Աս ի՞նչ է Յու-
դա, համբուրելով զիս կը մտանես » : Ետքը ա-
նոնց առջեւ ելաւ, « Զո՞վ կ'ուզէք » ըսաւ . « ԶՅի-
սուս » ըսին : Երբոր պատասխանեց թէ « Ես եմ »,
ամենքը կանրկի վրայ ինկան : Ետքը նորէն հար-
ցուց ու ըսաւ որ աշկերաններուն ձեռք չդպրե-
նեն : Երբոր մտնեցան զինքը բռնելու, աշակերա-
ները սուր հանեցին որ կռուին : Սուրերը տեղը
դրէք ըսելու չմնաց, Պետրոս քաշեց Մաղքոսի
ականջը կտրեց : « Յիսուս մի ընէք, ըսաւ . ես
թէ որ ուզէի հիմա հաղարաւոր հրեշտակ կու-
գային » . ու ծռեցաւ ականջը առաւ տեղը կտուց :
Ասանկով բռնեցին Յիսուսն Աննա քահանայա-
պետին տարին :

Հ. Յիսուս Աննա քահանայապետին առջև ի՞նչ
ըրաւ .

Պ. Քահանայապետն սկսաւ հարցնել Յիսու-
սի ըրած գործքերը . Յիսուս պատասխանեց, թէ
« Իմ ըրած բաներս ամենքը գիտեն » : Ասանկ հա-
մարձակ ըսելուն համար՝ մէկը Յիսուսի ապասկ
մը զարկաւ « Ասանկ պատասխան կուտաս » ըսե-
լով : Յիսուս ալ ըսաւ . « Թէ որ ծուռ խօսք ը-
սի, ինձի խնայու . իսկ թէ որ շիտակ, ինչո՞ւ կը

զարնես » : Ետքը Վայխափա քահանայապետին տարին :

Հ . Վայխափայի առջև Յիսուսի ինչ ըրին .

Պ . Սկսան սուտ վկայ փնտռել , և հազիւ երկու հոգի գանուեցան որ կ'ըսէին , թէ « Մենք լսեցինք որ իրեք օրուան մէջ տաճարը կրնամ քակել ու շինել » կ'ըսէր . բայց ինչ որ ալ կ'ըսէին , մէկմէկու նման չէր ըլլար : Վայխափա հարցուց թէ « Ինչո՞ւ պատասխան չես տար » . երբոր տեսաւ որ ճար չըլլար խօսեցրնելու , ըսաւ . « Յանուն Աստուծոյ կ'երդուրնեցրնեմ որ ըսես թէ որդի Աստուծոյ ես » . ան ատեն պատասխանեց Յիսուս . « Դուն կ'ըսես . և վերջի դատաստանին օրն իմ փառքս պիտի տեսնէք » : Աս խօսքիս վրայ Վայխափա կատղեցաւ , լաթը պատուեց , ըսելով « Հայհոյեց , ալ վկայ ինչ պէտք է » : Ուրիշներուն հարցուց , ամէնքը ըսին , թէ « Պէտք է մեռցրնել » . ու սկսան նախատել , թքնել , զարնել . գլուխը լաթ մը ձգեցին ու կը հարցրնէին թէ « Ո՞վ է զարնողը , գիտցիր » :

Հ . Երբոր Յիսուս Վայխափային քոմն էր , առաքեալներն ո՞ւր էին .

Պ . Ամէնքը ցրուեցան գնացին . միայն Յովհաննէս՝ քահանայապետին ծանօթ ըլլալով պալատն եկեր էր . և Պետրոս ալ որ Յիսուսի սիրոյն չէր կրնար հեռանալ , ու եկեր էր ինչուան դուռը , Յովհաննէսին խօսքովը ներս առնուեցաւ :

Հ . Յիսուս ինչպէս որ ըսեր էր , Պետրոս զինքն ուրացաւ .

Պ . Երբոր սրահը նստած կը տաքնար ուրիշներուն հետ , աղախին մը իրեն ըսաւ որ « Դուն ալ Յիսուսի հետն էիր » . Պետրոս մէկէն ուրացաւ թէ « Չեմ ճանչնար ան մարդը » : Քիչ մը ետքը ուրիշ մըն ալ տեսաւ ու առջինին պէս ըսաւ , ան ալ նորէն ուրացաւ : Քիչ մը անցաւ՝

ուրիշ ծառայ մըն ալ « Ես զքեզ պարտիզին մէջ
անսայ, ըսաւ, Յիսուսին հետ • լեզուէդ ալ կ'ի-
մացուի որ Գալիլեացի ես » : Պետրոս սկսաւ եր-
գուրննալ՝ ուրանալ, « Չեմ ճանչնար » ըսելով :
Ան ատենը Յիսուս ներսէն դարձաւ Պետրոսին
նայեցաւ • անով Պետրոսին միտքը վրան եկաւ,
զղջաց, ելաւ գուրս ու լալ սկսաւ :

125

Հ • Երբոր Կայխափային առջևը զՅիսուս մա-
հապարտ դատեցին, մէկէն սպաննեցին •

Պ • Ուզելով Յիսուսը նախատական մահուամբ
մեռցընել, որովհետև իրենք օրինաց ըսածին պէս՝
միայն քարկոծելու հրաման ունէին կայսերէն ալ,
անոր համար առաւօտանց կանուխ Յիսուսը Պի-
ղատոսի ատենը տարին ու ամբաստանեցին թէ
կայսերէն կ'ապստամբեցընէ զհրեաներն ինքզինքը
թագաւոր անուանելով :

Հ • Երբոր զՅիսուս Պիղատոսի տարին, սպան-
նելու հրաման տուաւ •

Պ • Չէ • առաւ զՅիսուս քննեց • ու երբոր ի-
մացաւ թէ անմեղ է, ելաւ հրէից ալ ըսաւ իր
կարծիքը : Անոնք նոր նոր ամբաստանութիւններ
ընել սկսան : Յիսուս ամենեկին պատասխան չտա-
լովը զարմացուց զՊիղատոս • որ խմանալով թէ Յի-
սուս Գալիլեացի է, հերովդեսի խրկեց • որ ան օ-
րերը Երուսաղէմ եկեր էր :

Հ • Հերովդէս Յիսուսին վրայ ինչ դատաստան
կարեց •

Պ • Շատոնց փափաքելով որ Յիսուսը տեսնէ,
ուրախացաւ, ուզեց որ իր առջև հրաշք մը ընէ •
ու շատ բաներ սկսաւ հարցընել : Երբոր Յիսուս

ամենևին պատասխան չառաւ, հերովդէս բարկացաւ՝ նախասեց զՅիսուս, ու վրան ճերմակ լաթ մը ձգած՝ նորէն Պիղատոսին խրկեց որ դատաստանը տեսնէ :

Հ • Երկրորդ անգամ երբոր Յիսուսը Պիղատոսի տարին, Պիղատոս ինչ վճիռ տուաւ •

Պ • « Մեռնելու արժանի յանցանք չունի, ըսաւ, ուստի քիչ մը սլաախտ տանք • ու ինչպէս որ սովորութիւն ունիք՝ զատկին մէկ յանցաւոր մը արձրկելու, ասիկայ արձրկենք » : Ան ատեն ամէնքը մէկէն սկսան աղաղակել որ Բարաբբան արձրկէ, որ արիւնկըզակ մարդ մըն էր, ու զՅիսուս խաչ հանէ : Պիղատոս շատ ջանաց որ մաքրենին փոխէ, բայց երբոր ճար չեղաւ, անոնց առջև ձեռքը լուաց, « Ես անպարտ եմ » ըսելով : Անոնք մէկ բերան սկսան կանչել, թէ « Արիւնը մեր ու զաւկրներնուս գլխուն • թող խաչուի » : Ան ատեն Պիղատոս դեռ յուսալով շահիլ անոնց սիրտը, զինուորներուն ձեռքը տուաւ զՅիսուս, որ լաթերը հանած՝ չարաչար ծեծեցին • գլուխը փշէ պսակ գրած՝ ձեռքը եղէգ մը կուտային, ծաղր ընելով կը չոքէին առջևն, ու « Ո՛ղջ լեր, թագաւոր » ըսելով կ'առնէին եղէգը ձեռքէն ու գլխուն կը դարնէին • ասանկով Յիսուսին բովանդակ վրան գլուխն արիւնլուայ ըրին : Ետքը անանկ խեղճութեան մէջ Պիղատոս հանեց զինքը հրէից ցցուց • բայց անոնք գլծալու տեղ ալ աւելի կաաղեցան • « Ինքզինքը Աստուծոյ որդի կ'անուանէ » կ'ըսէին : Աս որ լսեց Պիղատոս, սիրտը դող ելաւ • գնաց նորէն սկսաւ հարցընել ըսելով, թէ « Իշխանութիւն ունիմ զքեզ արձրկելու » : Յիսուս ալ պատասխանեց • « Թէ որ Աստուած չլծողն էր, դու բան չէիր կրնար ընել » : Աս խօսքիս վրայ աւելի վախնալով, կ'ուզէր արձրկել : Ան ատեն հրեայք սկսան կանչուրուտել ըսելով • « Թէ որ

ատիկայ արձրկես, կայսեր բարեկամ չես » : Տե-
սաւ Պիղատոս որ ուրիշ ճար չկայ, և վախնալով
անոնց կամքին գէմ ընելու որ չըլլայ թէ իր վրայ
կայսեր ամբաստանութիւն ընեն, « Ձեր թագա-
ւորն, ըսաւ, կ'ուզէք որ խաչ հանեմ » : Անոնք ալ
ըսին • « Վայսրէն ուրիշ թագաւոր չունինք մենք » :
Ան ասէն Պիղատոս ալ վճիռը գրեց որ խաչին
վրայ դնեն, թէ « Աս խաչուողը Յիսուան է՝ Հրեկց
թագաւորը » • ու Յիսուսը մատնեց անոնց ձեռ-
քը : Հրեայք աս վճռոյն չհաւնեցան, ուզեցին որ
գրէ՝ թէ « Ինքզինքը թագաւոր անուանեց » • բայց
Պիղատոս մտիկ չըրաւ, վճիռը չփոխեց :

Հ • Յուդան ղՅիսուս մատնելէն ետքը ինչ ը-
րաւ •

Պ • Տեսնելով որ Յիսուսը մեռցրնելու կը տա-
նին, սաստիկ սրտին ցաւ եկաւ • գնաց առած
ստակը ետ տուաւ « Մեղայ, ըսաւ, որ անմեղ
մարդուն արիւնը մտայ » : Հրեաներն « Ան դու
գնա՛ մտածէ » ըսին : Ինքն ալ յուսահատած
գնաց ինքզինքը կախեց : Իսկ ան ստակով Հրեայք
գեախն մը գնեցին, օտար մարդիկներու գերեզ-
մաննոց ըրին • տեղին անունն ալ գրին Ագաբակ
արեան :

Հ • Երբոր Հրեայք Յիսուսի մահուանը վճիռն
ատին, ինչ ըրին •

Պ • Նախատեւով զարնելով՝ խաչն ուսը տուին,
եւան Գողգոթա լեռն երթալու : Ամէն տեսնող-
ներուն գութը կը շարժէր, կուլային • Յիսուս
դարձաւ ըսաւ անոնց, թէ « Իմ վրաս մի լաք,
ձեր վրայ լացէք, որ չճանչնալով իմ ձեր վրայ ցը-
ցուցած սէրս, ետ սխալի չկենաք ձեր անկարգու-

Թիւններէն ու յաւիտեան պիտի տանջուիք » :
Հրեաները վախնալով որ Յիսուս ճամբան կը մեռ-
նի , դասն Սիմոն Ալեքեանացին ու Յիսուսին խաչն
անոր կանակը տուին , ինչուան հասան Գողգոթա
լեւը : Հոն Յիսուսին լեզիով խառնած քացախ
տուին . Յիսուս համն առաւ ու խմել չուզեց :
Ետքը Յիսուսը դամեցին խաչին վրայ , երկու դին
ալ երկու ուրիշ աւաղակներ խաչեցին : Յիսուսի
լաթերն ալ զինուորները մէջերնին բաժնեցին .
Յիսուս պատմութեան մը ունէր առանց կարի վե-
րէն վար հիւսած , առ ալ վիճակով մէկու մը
տուին :

Հ . Յիսուս խաչուելու ատեն ի՞նչ կը մըտա-
ծէր .

Պ . Մէկ կողմանէ սիրով կը համբերէր որ անով
մենք պիտի փրկուէինք , մէկ կողմանէ ալ կը ցա-
ւէր որ շատերնիս իրեն անանկ մեծ սէրը պիտի
արհամարհէինք . անոր համար սկսաւ ձայնով ալ
աղօթել Հօր Աստուծոյ . « Հայր , ըսաւ , թողու-
թիւն տուր ասոնց ըրածներուն , վասն զի իրենք
ալ չեն գիտեր ինչ կ'ընեն » :

Հ . Հրեայք Յիսուսը խաչելով հանդրատա-
ցան .

Պ . Չէ . ամէն կերպով կը ջանային որ քանի որ
ողջ է՝ սիրտը կսկիծ ցընեն , հայհոյելով , ծաղու-
լով . « Թէ որ Աստուծոյ որդի ես՝ կ'ըսէին , ի՞նչ
կեցեր ես , խաչէն վար իջիր որ քեզի հաւտանք » :
Մէկն ալ անդիէն « Տեսէք , կ'ըսէր , ինքն որ ու-
րիշները կ'ազատէր , ինքզինքն ինչո՞ւ չազատէր » .
ուրիշ մըն ալ կ'ըսէր . « Թէ որ Աստուած զքեզ
կը սիրէ , շուտ ընէ թող զքեզ փրկէ » : Չինուոր-
ներն ալ մէկ դիէն սիրտ ծակելու բաներ կը խօ-
սէին . իր հետ խաչուած աւաղակներուն մէկն ալ
զինքը կը նախատէր :

Հ . Յիսուս թէ որ զինքը նախատողներուն հա-

մար աղօթք կ'ընէր որ թողութիւն դանեն, հապա սրտանց իրեն ցաւակից եղողին համար ինչ կ'ընէր :

Պ • Անանկ մարդը մէկէն շնորհքով կը լեցընէր որ ճշմարիտ զղջումով արքայութեան որդի ըլլայ • Ինչպէս որ աջ կողմի աւաղակը Յիսուսի ըրած հրաշքները լսած ըլլալով, և ան օրուան համբերութիւնը տեսնելով՝ կսկրծաց վրան ու սկսաւ մէկալ աւաղակը յանդիմանել, ըսելով, թէ « Անմեղ Յիսուսն ինչո՞ւ կը նախաատես • մենք արժանի պատիժնիս առեր ենք • բայց անիկայ յանցանք մը չէ ըրած » : Յիսուս ալ իր շնորհքովն անոր սիրտը լեցուց, որ դարձաւ Յիսուսի « Տէր, ըսաւ, զիս մի մոռնար » : Յիսուս ալ իրեն ըսաւ • « Այսօր ինձի հետ արքայութիւն պիտի երթաս » :

Հ • Յիսուսի խաչելութեան ատենը Աստուածամայրն ուր էր •

Պ • Եկեր խաչին դիմացը կեցեր էր, ուրիշ կանայք ալ և Յովհաննէս աւետարանիչն ալ մէկտեղ : Յիսուս զմեզ իրեն յանձնելով, և Յովհաննէսը ցուցընելով, ըսաւ իր մօրը, թէ « Ահա քու որդիդ » : Ետքը Յովհաննէսին ալ ըսաւ • « Ահա քու մայրդ » • անոր համար անկէ ետքը Յովհաննէս միշտ Աստուածածնին հետը բնակեցաւ :

Հ • Յիսուս մեռնելու ատեն յայտնի նշան ցուցնուց իր աստուածութեանը •

Պ • Առջինն որ աւաղակը՝ զՅիսուս թէպէտ խաչուած պատժուած տեսաւ, բայց Աստուած դաւանեցաւ : Երկրորդ՝ խաչուելէն ետքը իրեք ժամ, վեցէն ինչուան ինը՝ արևը խաւարեցաւ : Երրորդ՝ տաճարին մեծ վարագոյրը վերէն վար

պատուեցաւ : Չորրորդ՝ գեանաշարժ եղաւ . ապա առաժ քարեր ինքիրեննուն ճեղքուեցան : Հին գերորդ՝ գերեզմաններէն մեռելներ ողջընցան ելան : Աւերորդ՝ Յիսուս ինքը մեռնելու ատեն ուժով հօր Աստուծոյ սկսաւ աղաչել թէ ինչու զինքը թողուց : Ետքը « հողիս քեզի կուտամ » ըսելով մեռաւ . անանկ որ խաչին քովն եղողները վախնալով , սկսան ըսել , թէ « Իրաւ աս Աստուծոյ սրդի էր » : Եօթներորդ , երբօր մեռնելէն ետքը փորձի համար նիղակով կողը խոցեցին , կողէն արիւն ու ջուր ելաւ :

Հ . Յիսուս սրչափ ատեն խաչին վրայ կեցաւ .

Պ . Մեռած օրը ուրբաթ իրիկուն ըլլալով , որ երկրորդ օրը մեծ ատն էր , մէկէն գնացին հրեաները Պիղատոսէն հրաման առին որ խաչուողներուն ծունկերը ջարդեն որ շուտ մեռնին : Բայց Յիսուսինը ջարդեցին , ինքիրեն մեռած ըլլալուն համար . և ետքը մէկէն մարմինը վար առին :

Հ . Յիսուսին մարմինը խաչէն սլ վար առաւ , և ուր թաղուեցաւ .

Պ . Յովսէփ Արեմաթացին և Նիկողեմոս որ Յիսուսի կը հաւատային , Պիղատոսէն հրաման առնելով՝ եկան վար առին , զմասեցին պատեցին ու մէկ նոր քարէ փորած գերեզմանի մը մէջ դրին , մեծ քարով մըն ալ դոցեցին :

Հ . Հրեայք Յիսուսը մեռցնելով հանգարուեցան .

Պ . Խղճերնին զարնելով՝ սրտերնին վախի մէջ էր որ չըլլայ թէ նոր խռովութիւն ելլէ ու իրենց գլուխը փորձանք մը դայ . անոր համար Պիղատոսին հարցնելով , գերեզմանը գնացին կնքեցին ու քովը պահապաններ ալ դրին իրեք օրուան համար՝ որ մարմինը չգողնան աշակերտները :

Հ . Յիսուսի յարութիւնն ինչպէս եղաւ .

Պ . Քանի մը բարեպաշտ կանայք շարաթ իրի-

կուրնէ խօսք գրին ու կիրակի առաւօտանց կա-
նուխ տեսակ տեսակ խօսակեր ու անուշահոտ ե-
ղեր մէկտեղ առած՝ գերեզմանը կուգային : Ճամ-
բան սկսան տարակուսիլ թէ ինչպէս վրայի մեծ
քարը տիտի շարժեն . բայց առաջուց մեծ շարժ-
մունքով հրեշտակ մը իջաւ՝ քարը մէկդի դարեց .
որուն վախէն զինուորները մեռելի պէս ինկան ,
ունենք ալ փախան քահանայապետներուն պատ-
մեցին : Դսկ անոնք շատ ստակ տուին զինուորնե-
րուն որ ձայն հանեն թէ՛ « Գիշերանց օշկերանե-
րը գոյցեր են զՅիսուս » : Ետքը երբոր իւղաբեր
կանայք գերեզմանին դուռը բաց դասն , և մասն
ներս , մարմինը չգտան , կարծելով թէ գոյցեր են ,
լալ սկսան : Մարիամ Մագդաղենացին վաղեց
գնաց՝ ըսաւ Պետրոսի և Յովհաննու . անոնք ալ
հետը մէկտեղ ելան եկան : Բայց դեռ անոնք չհա-
սած , մէկալ կանայքը նորէն երբոր լայլով գերեզ-
մանը նայեցան , տեսան երկու հրեշտակ , վախ-
ցան : Հրեշտակներն ըսին , թէ « Մի վախեք , Յի-
սուս յարուժիւն առաւ . գնացէք ուրիշներուն
պատմեցէք » : Բայց անոնք վախնալով գնացին ու
մէկու մը բան չըսին : Ետքը Պետրոս ու Յովհան-
նէս եկան նայեցան որ չկայ , գնացին մէկալնոնց
ըսելու . բայց Մարիամ կեցաւ հոն ու կուլար :
Ան ասունը հրեշտակներն իրեն ալ երեցան , հար-
ցուցին թէ ինչո՞ւ կուլայ . Մարիամ պատասխան
տալու ասնն ետեր նայեցաւ տեսաւ զՅիսուս ,
պարտիզպան կարծեց . սկսաւ աղաչել որ եթէ
ինքը վերուցեր է , ըսէ ո՞ւր դրեր է : Ան ասնն
Յիսուս իր ձայնովը կանչեց՝ « Մարիամ » . ան ալ
մէկէն ճանչցաւ . վաղեց որ ոտքը տլուի . Յիսուս
թող չտուաւ . « Գնա՛ , ըսաւ , պատմէ ուրիշնե-
րուն » :

Հ. Յիսուս յարութենէն ետքը քանի՞ անգամ երեցաւ .

Պ. Շատ անգամ երեցեր է ու շատ քան սորվեցուցեր աշակերաններուն ինչուան քառասուն օր : Բայց մասնաւոր կը յիշուի մէյսը Նսմաւուսի ճամբան երկնալը , մէյ մ'ալ ծովուն եղերքը . ուրիշ երկու անգամ ալ :

Հ. Յիսուս յարութենէն ետքը Նսմաւուսի ճամբան ինչպէս երեցաւ .

Պ. Յարութեան օրը աշակերաններէն երկու հօդի Նսմաւուս դեղը կ'երթային . Յիսուս քովերնին մօտեցաւ ճամբորդի մը պէս , սկսաւ հարցընել թէ ինչ քանի վրայ կը խօսին տրամած : Անոնց մէկը Աղէօսաա՝ « Չէս դիտեր , ըսաւ , աս օրերս ինչ քաներ եղան , որ սուրբ մարդը իշխանները խաչել տուին . մենք յոյս ունէինք թէ անիկայ զմեզ վրկէ . և այսօր կ'ըսեն թէ երեցեր է մէկուն մէկալին » : Ան ատեն Յիսուս սկսաւ մարդարէից խօսքերով ցուցնել թէ պէտք է որ ըլլային ան քաները : Իրիկուան դէմ երբոր Նսմաւուս հասան , Յիսուս կը ձեացընէր թէ հեռու տեղ պիտի երթայ . անոնք սախպեցին որ ան դիչերը հոն կենայ . և երբոր սեղանի նստան , Յիսուս հացն օրհնեց բաժնեց . ան ատեն աչուրնին բացուեցաւ ու ճանչցան , ու մէկէն աներեղթ եղաւ : Իրենք ալ շուտ մը ելան Երուսաղէմ եկան դասն ուրիշները ժողովուած , որ կ'ըսէին թէ Յիսուս Պեարոսին երեցեր է : Հոն տեղը երբոր գոցուած հրեաներուն վախէն՝ կը խօսէին , յանկարծ Յիսուս մէջերնին երեցաւ , ցրցուց վերքերը . ետքը կերակուր ալ ուղեց ուտելու : Քիչ մը խորտ

ված ձուկ և խորիսխ բերին, կերաւ, օրհնեց զերեւիք ու աներևոյթ եղաւ :

Հ • Յիսուսի երկրորդ անգամ ամենուն մէկէն երևնալն ինչպէս եղաւ •

Պ • Առջի օրն որ երեցաւ, Թովմաս հոն չէր • երբոր եկաւ, սրտմեցին : Ան սկսաւ ըսել թէ « Ինչուան ես չտեսնեմ ու մասս իրեն կողը չխաթեմ, չեմ հաւատար » : Ուստի ութը օրէն նորէն երեցաւ Յիսուս բոլոր աշակերաներուն մէկէն, և Թովմասին ըսաւ • « Եկո՛ւ նայէ ու անհաւատ մի ըլլար » : Ան ատեն Թովմաս կանչեց • « Տէր իմ և Աստուած իմ » • Յիսուս ալ ըսաւ • « Երանի՛ ա՛նոնց որ զիս չտեսած կը հաւատան » :

Հ • Յիսուս ծովեզերքն ինչպէս յայտնեց զինքն աշակերաներուն •

Պ • Երբոր Տիրերեայ ծովուն քով աշակերաները ձուկ բռնելու գնացեր էին, ու ձուկ չէին գտած, Յիսուս եկաւ երեցաւ, ու ըսաւ որ նաւին աջ կողմը ձգեն ուսկանը : Անանկով հարիւր յիսուն հատ խոշոր ձկներ բռնուեցան • ու քիչ մնաց որ կը սրտուէր ուսկանը : Աս հրաշքէն առաքեալք իմացան որ Յիսուսն է, քովը ժողովեցան, նրստան մէյտեղ ան ձկներէն եփեցին կերան : Ետքը Յիսուս Պետրոսի հարցուց իրեք հեղ թէ « Ձիս ուրիշներէն աւելի կը սիրե՞ս » • Պետրոս՝ « Սըրտանց կը սիրեմ » ըսաւ • Յիսուս ալ սրտասխանեց • « Իմ գառներս ու ոչխարներս արած է » : Ետե իրեն Յիսուս ըսաւ, թէ « Ատենով գու ալ սիրի խաչուիս ու մարտիրոս ըլլաս » :

Հ • Յիսուսին վերջի երևնալն ինչպէս եղաւ •

Պ • Շատ անգամ երևնալէն՝ խրատ տալէն վերջը, քառասներորդ օրը նորէն երեցաւ, ասորս պըրեց որ սպասեն հոգւոյն սրբոյ գալստեան, որ շնորհքով լցուած՝ բոլոր աշխարհքիս քարոյլեն : Ետե զամէնքն առաւ հետն ու Չիթենեաց լեռը

գնաց. հոն օրհնելով զանոնք՝ երկինք ելաւ : Երբ-
որ ամպերուն հասաւ ու ծածկուեցաւ աչուրներ-
նէն, երկու հրեշտակ երեցան՝ ըսին թէ « Ի՞նչ
զարմացած երկինք կը նայիք. դիտցէք թէ ինչպէս
որ հիմա գնաց, անանկ օր մը փառքով նորէն պի-
տի գայ » : Աշակերտներն ալ ուրախութեամբ
Աստուծոյ փառք տալով Երուսաղէմ դարձան :

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

129

Հ . Քրիստոս իր վարդապետութեամբը գլխաւոր քանի՜ տեսակ բան մեզի սորվեցուց .

Պ . Իրեք . Ս . Հին օրէնքներուն տեղ , որ Աւետեաց երկիրը ժառանգելու համար էր , նոր օրէնքներ ու պատուիրանքներ դրաւ՝ արքայութիւն վաստրկելու համար . Բ . խրատներ՝ Աստուծոյ սիրելի ըլլալու համար . Գ . խորհուրդներ՝ մեր բնութեան տկարութեան տեղը լեցրնելու համար :

Հ . Քրիստոսի նոր օրէնքներն ու պատուիրանքները որո՞նք են .

Պ . Նոյն առջի տասը պատուիրանքներն են . քայց որովհետեւ հին օրէնքին ամէն խոստմունքը մարմնաւոր էին , պատուիրաններն ալ նիւթական կերպով կը պահուէին . ինչուան որ մէկը արձան մը չպաշտէր , կուսպաշտութիւն ըրած չէր սեպուէր . ինչուան որ մարդ մը չսպաննէր , մարդասպանութիւն ըրած չէր . ասանկ մէկալ ամէն պատուիրաններն ալ : Քրիստոսի մեզի ըրած խոստմունքը հոգևոր ըլլալուն , պատուիրանքներն ալ սպասարեց որ հոգևոր կերպով պահենք : Առապաշտութիւն է ըսաւ հպարտանալը , փառքի՛ հարստութեան ետեւ ըլլալը , աշխարհքիս՝ մարմնոյ ուզածներն ընելը , լայն ճամբէն երթալ ուղեւը , ասրելու աւելորդ հոգ ունենալը : Ուր որ միայն այս կամ ոչ ըսելով ճշմարտութիւնը կրնայ խնայուիլ , հոն Աստուծոյ անունը յիշելը աւելորդ սեպեց : Միայն շաբաթ օրը սուրբ պահե-

ցէք ըսուած էր, անոր տեղը ամէն օր ըսաւ ա-
ղօթք ըրէք. Հայր Տէրն ալ սորվեցուց, և մաքով
միշտ սուրբ եղիք ըսաւ: Սպաննել է ըսաւ՝ մաքով
զուրիշը դասել, բամբասել, ռիս պահել, ողորմու-
թիւն չընել, բարկանալ, չար օրինակ տալ, դայ-
թակղեցընել զուրիշը: Մէկ խօսքով, ամէն մեղք
որ հին օրէնքին ատենն ինչուան դործքով չընէին՝
մեղք չէր սեպուէր, Քրիստոս սորվեցուց որ ինչ
և իցէ մեղք ընելու երբոր մէկը փափաքի մաքով,
թէսկտ մարդ ալ չխանայ, ան մեղքն ըրած կը
սեպուի: Հին օրէնքը մեղքին մեծութիւնը եղած
դործքէն կը չափէր. Քրիստոս սորվեցուց որ պղղ-
տիկ մեղքն ալ չարութեամբ ըրած՝ քան զբիւրա-
ւոր տկարութեամբ ըրած մեղքերէն մեծ է, և հոգ-
ւոյն սրբոյ դէմ է:

Հ. Յիսուսի խրատները որոնք են.

Պ. Հոգւով աղքատութիւն, հեղութիւն, սղա-
ւոր ըլլալ, արդարութեան քաղց ու ծարաւ ու-
նենալ, ողորմածութիւն, սուրբ սիրտ ունենալ,
խաղաղարար ըլլալ, արդարութեան համար հա-
լածանք ու նախաախնք քաշել: Ասոնց ամէն մէկն
ընողին երանի տուաւ Յիսուս: Եւսքը աս ետեխններն
ալ ըսաւ. « Աջ ծնօտը զարնողին՝ մէկալն ալ դար-
ձընել. բաճկոնն ուղողին՝ շապիկն ալ թողու-
անկարիայի բռնողին ետեկն սիրով երթալ. ուղո-
ղին տալ. մեզի չտուողին չափալել. կատարեալ
ըլլալու ջանք ունենալ. աշխարհք և ամէն բան թո-
ղուլ, խաչը առնել իր ետեկն երթալ. պատուոյ
անուաններ չուզել. ամենուն հետ հաւասար ըլլալ.
մեծ ըլլալով պղտիկներուն ծառայել. միշտ աղօթք
ընել ու չձանձրանալ. մաքրութիւն պահել. հո-
գևոր կենաց հետ ըլլալ. սաք պահելու ատեն ու-
րախ ըլլալ. ուրիշներուն հոգւոյն համար կեանքը
գնել. փոխ տալ՝ առանց յոյս ունենալու որ ետ
առնէ. թշնամեաց ու հալածողաց համար աղօթք

ընել • սուրբ գրքին ըսածները մտածել • ձրի քա-
րողել » : Բայց առ աւետարանական խրատներուն
գլխաւորներն առ իրեքն են • կամաւոր աղքատու-
թիւն, տղջատհուութիւն, և անձնուրացութիւն՝
որ է կրօնաւորական հնազանդութիւն :

Հ • Աւետարանին պատուիրաններն ու խրատ-
ները պահողին ինչ խոստացաւ Քրիստոս •

Պ • Առ աշխարհքիս մէջը շնորհք, և անդին յա-
ւիտենական արքայութիւն • ինչպէս որ չպահող-
ներուն ալ՝ հոս անհանդատութիւն սրտի, և ան-
դին դժոխքն ու տանջանք յաւիտենական :

Հ • Յիսուսի մեր տկարութեանը օգնելու հա-
մար տուած խորհուրդները որո՞նք են •

Պ • Մկրտութիւնը, Դրոշմը, ապսպրեց առա-
քելոց որ քրիստոնէութիւն դարձողները մկրտեն՝
սկզբնական մեղքէն սրբուելու համար, և ձեռք
ալ դնեն՝ դրոշմէն, հոգւոյն սրբոյ շնորհքով լե-
ցնելու համար, որ կարենանք դէմ դնել սատա-
նային : Ապաշխարութեան խորհուրդն ալ հաս-
տատեց՝ իրեն կատարեալ սէրը ցուցնելու հա-
մար, որ մեզայ ըսողին չկրնար չներել • վասն զի
ճշմարիտ սէրն արհամարհել չգիտեր : Հաղորդու-
թեան խորհուրդը հաստատեց որ զինքը սրտեր-
նուս մէջն ասնելով, ուրիշ բանի սէր չկապենք :
Վերջին օժումն ապսպրեց, որ հիւանդներն օժեն
ու հոգւոյն սրբոյ կրակը մեղքերնուս վերքերը
այրելով բժշկելով, հողինիս գեղեցկանայ զօրա-
նայ՝ Աստուծոյ սիրելի և սատանային զօրաւոր
յաղթող թշնամի ըլլայ : Քահանայութիւն հաս-
տատեց որ անով մասնակից ըլլան հաւատացեալ-
ները առ խորհուրդներուն : Եւ Պատկն անլուծա-
նելի հաստատեց, որ սրբութեամբ ու Աստուծոյ
օրհնութեամբ Աստուծոյ ծառայքը շատնան :

Հ. Յիսուս առաքելոց մասնաւոր բան ապրս-
պրեց .

Պ. Իր չարչարանքէն առաջ քարոզութեան
խրկելու ատեն միայն ան միջոցին համար մէկ քա-
նի մասնաւոր բան ապասպրեց , ինչպէս , « Մախաղ
և դաւաղան չառնեն հեռերնին . ամենեին ստակ
չունենան . ուր որ կ'երթան ինչ որ իրենց տան՝
ան ուտեն . երկու հագուստ՝ երկու հողաթափ
չունենան . հիւանդները բժշկեն , մեռելները ող-
ջացրնեն » : Ասոնցմէ զատ ուրիշ բաներ ալ ա-
պրասպրեց ամէն քարոզչի համար , այս ինքն « Ձրի
քարոզեն , որ քաղաքն որ զիրենք ջնդունին , ել-
լելու ատեն ոտուրնին թօթվեն անոնց առջևն՝ որ
խմանան թէ իրենք անպարտ են . դայլերուն մէջ
դառն ըլլան . օձի պէս խորագէտ խոհեմ՝ ու ա-
ղաւնիի պէս միամիտ ըլլան . մարդիկներէն զգու-
շանան . թէ որ հալածեն , փախչին , բայց չվախ-
նան . թագաւորաց ու դատաւորաց առջև որ տա-
րուին , հոգւոյն սրբոյ ատեն տուածը միայն խօ-
սին . իրարու հետ խոնարհութեամբ վարուին . ա-
մենայն ազգաց քարոզեն ու դարձողները մկրտեն
յանուէն Հօր և Արդւոյ և Հոգւոյն սրբոյ » :

Հ. Յիսուս աշխարհքիս մէջ ինչ տեսակ կեանք
անցուց .

Պ. Ծննդենէն ինչուան երեսուն տարի առան-
ձին հասարակ մարդու մը պէս ամենուէն հետ ա-
նուշութեամբ կենցաղավարեցաւ : Ետքը քառսուն
օր և ուրիշ անգամ ալ անասպար քաշուած՝ պա-
քի աղօթքի հետ եղաւ ճգնաւորի պէս : Հարսնի-
քի դնաց , մէկուն մէկալին սեղանը հրաւիրուե-
ցաւ , ու հողեր խրատներով զանոնք ուրախա-

ցուց՝ ժողովուրդեան մէջ ընակող վարդապետի մը
պէս : Պէտք եղած տեղը Թշնամիները պատանձե-
ցուց , բարկացաւ , յանդիմանեց , գէշերուն առանց
ակնառութեան վայ տուաւ՝ արդար դատաւորի
պէս : Ստակ ժողովելով աղքատներուն բաժնեց՝ ու
ղորմած մեծատան պէս : Երբեմն ժողովուրդեան
պատիւը սիրով ընդունելով՝ փոխարէնը առատու-
թեամբ տուաւ . խեղճ մարդկանց հետ սիրով վա-
րուեցաւ ու իրենց պիտոյքը հոգաց՝ հեղ ու գը-
թած իշխանի պէս : Ամեն տղաքը սիրեց՝ գիրկն
առաւ օրհնեց . անոնց չար օրինակ առողին պա-
տիժ սպառնացաւ , գութ ունեցող ծնողաց պէս :
Թշնամիներէն երբեմն փոխաւ , հալածուեցաւ ,
Աստուծոյ անուանը համար նախատուողի պէս :
Աղքատութեամբ գամը կերաւ , հագուեցաւ ,
հօր Աստուծոյ ինչուան մահը հնազանդեցաւ , և
միշտ սրբութեամբ ապրեցաւ : Անպարտ տեղը
անարդական մահուամբ մեռաւ : Աս ամէն բան
պէտք եղածին պէս ընելով , և ասոնցմէ զատ հը-
րաշքներ գործելով՝ սատանաները վախցընելով ,
յայտնի ցրցուց որ ինքն Աստուած է՝ մարդ եղած ,
և կ'ուզէ որ ամէն վիճակի մարդիկ իրեն նմանելով՝
Աստուծոյ նման ըլլան :

Հ . Յիսուսի քարոզութեան ստեղծ ըրած հը-
րաշքներն և ուրիշ գործքերը բոլոր գրած են ա-
ւետարանին մէջ .

Պ . Չէ , հասկա ինչպէս որ աւետարանիչն ալ
կ'ըսէ , այնչափը գրուեցաւ որ լսողը չկարենայ
տարակուսիլ Քրիստոսի աստուածութեան վրայ :

ՀՈԳԵԳՍԱԼՍՏԵՆԷՆ

ԻՆՉՈՒԱՆ ՊԵՏՐՈՍ ՊՕՂՈՍԻ ԳԼԽԱՏՈՒՄԸ

131

Հոգւոյն սրբոյ գաղտնաստր .

Հ . Քրիստոսի համբարձմանէն ետքը առաքեալներն ինչ ըրին .

Պ . Ինչպէս որ Քրիստոս իրենց ապրսպրեց Հոգւոյն սրբոյ գաղտնեանն սպասելու , գնացին Ժողովեցան մէկ տան մը մէջ Սառուածածնայ հետ մէկտեղ . գիշեր ցորեկ աղօթք կ'ընէին : Ան օրերը Պետրոս առաքեալ ըսաւ , թէ «Պէտք է Յուդային տեղ ուրիշ մը ընտրել» : Ուստի Յովսէփ կամ Յուստոս և Մատաթիա աշակերաններուն վրայ վիճակ որ ձգեցին , Մատաթիային ելաւ , և առաքելոց կարգը մտաւ :

Հ . Հոգին սուրբ էրբ և ինչպէս իջաւ առաքելոց վրայ .

Պ . Համբարձման ասաներորդ օրը յանկարծ երկնքէն սաստիկ հովի ձայն գալով՝ տունը լցուեցաւ . և ամէն մէկուն վրայ կրակէ լեզուներ երեցան . իրենք ալ սկսան տեսակ տեսակ լեզուներ խօսիլ : Ան ասանը ամէն աշխարհքէ բարեպաշտ հրեաներ որ զասկին Երուսաղէմ եկեր էին՝ իմա-

ցան, եկան սկսան զարմանալ որ իրենց երկիրնե-
րուն լեզուովը կը խօսէին առաքեալները : Ոմանք
ալ սկսան ծաղր ընել՝ « Գինով են » ըսելով : Ան-
տաները Պետրոս ուրիշներուն հետ Յովէլ մարդա-
րէին խօսքովն անոնց խմացուց ու զղջման բերաւ,
անանկ որ ամէնքն սկսան հարցընել, թէ « Ի՞նչ
ընենք » : Պետրոս՝ « Զղջացէք » ըսաւ. և ասան-
կով ան օրը իրեք հազար հոգի Յիսուսի հաւատա-
ցին ու մկրտուեցան :

Հ. Հոգին սուրբ անելէն ետքը առաքելոց սո-
վորական գործքն ի՞նչ էր .

Պ. Ամէն օր տաճար կ'երթային աղօթք ընելու .
ամենուն համարձակ կը քարոզէին . և տեսակ տե-
սակ հրաշքներով ալ ըսածնին կը հաստատէին :
Ինչպէս օր մը Պետրոս և Յովհաննէս մէյտեղ տա-
ճար մտնելու ատեն, կաղ ծնած մարդ մը որ միշտ
գրան քով կը բերէին կը դնէին ողորմութիւն մու-
րալու համար, իրենցմէ ողորմութիւն ուղեց .
Պետրոս ալ ըսաւ : « Բեզի ահա ունեցածս տամ .
Յիսուսի անունով ելիր քալէ » . աս ըսելով ձեռ-
քէն բռնեց վերուց : Ան ալ մէկէն ցատքեց գնաց
տաճարն՝ Աստուծոյ փառք տուաւ : Աս պատճա-
ռով եկան Պետրոսի քարոզութիւնը մտիկ ըրին ու
հինգ հազար հոգի ալ դարձան :

Հ. Յիսուսի թշնամի եղող Հրեաները երբոր ա-
ռաքելոց ըրածներն խմացան, ի՞նչ ըրին .

Պ. Արանին բարկանալով թէ Ժողովուրդը կը
խառնեն, բռնեցին զանոնք բանա դրին . առաւօ-
տանց հանեցին բանակն որ քննեն զիրենք : Առա-
քեալներն ալ խմացուցին անոնց ճշմարտութիւնը :
Անոնք վախնալով առաքելոց վրաս մը հասցընե-
լու, ապառնալք ըրին որ մէյմ' ալ չխօսին Յի-
սուսի վրայ : Անոնք ալ ըսին . « Մենք մարդու
հնազանդելու համար՝ Աստուծոյ հրամանն օտքի
տակ չենք կրնար անել » : Հրեայք նորէն բար-

կացան ու թողուցին : Առաքեալները գնացին մեկաշնոնց պատմեցին , և ամէնքը մէկէն աղօթք ըրին որ Աստուած շնորհքն աւելցընէ որ չվախեն : Մէկէն կեցած տեղերնին շարժեցաւ ու նորէն Հոգին սուրբ իրենց եկաւ :

132

Հ . Երբոր հաւատացեալք սկսան շատնալ , մէջերնին ի՞նչ կարգ կանոն դրին .

Պ . Յիսուսի խրատներուն հետեւելով՝ ամէնքը մէկ սիրտ մէկ հոգի , ունեցածնին կը ծախէին ու ստակնին կը բերէին մէկտեղ կը դնէին որ հաւատար ամենուն բաժնուի . կերակուրն ալ մէկտեղ կ'ուտէին : Անանիան ու Սափիրա իր կինը ասկարգիս դէմն խարդախութիւն ընելով՝ պատժուեցան :

Հ . Անանիայ և Սափիրայի ըրած խարդախութիւնն ի՞նչ բան էր .

Պ . Ասոնք ծախեցին երկիրնին ու ստակին միայն մէկ մասը տարաւ Անանիան Պետրոս առաքելոյն առաւ . « Անանիա , ըսաւ առաքեալը , գիտնաս որ ատ գործքովդ զԱստուած խաբեցիր » : Անանիան մէկէն հօն ինկաւ մեռաւ : Ետքէն Սափիրան եկաւ . հարցուց Պետրոս , թէ « Ա՞յնչափ էր ագարակին գինը : — Հրամար էս » ըսաւ : « Աս ի՞նչ է , ըսաւ Պետրոս , խօսք դրեր էք որ զԱստուած խաբէք . դուն ալ երկանդ քով թաղուիս » : Ան ալ հօն ինկաւ մեռաւ . ու տարին երկանդ քով թաղեցին : Ասով ամենուն սիրաը սաստիկ վախ ինկաւ որ կեղծաւորութիւն չընեն :

Հ . Առաքեալներուն ըրած հրաշքները՝ Յիսուսին ըրածներուն շատութեանը կը հասնի .

Պ . Ամենեին Յիսուսին պէս անթիւ հրաշք կ'ը-

նէին, և զամէնքը կը հաւատացրնէին. այնչափ որ Պետրոսի անցնելու ճամբուն վրայ կը դնէին հիււանդներն, որ իրեն շուքը վրանին զարնէ ու բըժշկուին. շատն ալ առաքելոց թաշկինակը կամ ուրիշ լաթը կը տանէին ու հիւանդին վրայ կը դնէին՝ կը բժշկուէր. թշնամիներն ալ կը վախէին դէմ խօսելու: Իսկ Պետրոս առաքելոյն ըրած հըրաշքներէն մասնաւոր կը յիշուի Ննեա անդամաւորոցն որ բժշկեց, և Տաբիթա բարեպաշտ կիներն՝ որ երբոր մեռաւ՝ ողջընցուց:

Հ. Առաքեալները միշտ հանգիստ կըրցան իրենց քարոզութիւնը ընելու.

Պ. Չէ. վասն զի չգիտմանալով քահանայապետներն ու փարիսեցիք, զառաքեալները բանա դնել տուին: Բայց գիշերը հրեշտակ մը եկաւ զիրենք ազատեց, դնացին տաճարին մէջ սկսան քարոզել: Առաւօտանց հրեայք մարդ խրկեցին բանան որ դատաստանի բերեն զանոնք: Գնացին տեսան որ բանար գոց է ու մէջը մարդ չկայ: Ետքը ուրիշներն եկան ըսին որ տաճարին մէջն են: Չարմայան. բայց կանչեցին սրդողեցան: Անոնք համարձակ պատասխանեցին, թէ «Մենք մարդու ըսածին չենք նայիր, Աստուծոյ կը հնազանդինք»: Ետքը սկսան երեսնին զարնել անոնց Յիսուսի դէմ ըրած անօրէնութիւնները. հրեաներն ալ կատուեցան, դուրս հանեցին զիրենք ու խորհուրդ ըրին որ սպաննեն: Ան ասենը Գամաղիէլ խելացի մարդ մը իրենց խորհուրդ առաւ որ անոնց ձեռք չդպցընեն. «Թէ որ ասոնք, ըսաւ, Թեղասին և Յուդային սէս են որ ելան ժողովուրդն ասըստամբեցընելու համար ու կորսուեցան, ասոնք ալ կը կորսուին. իսկ թէ որ Աստուծմէ է ըրածնին, Աստուծոյ դէմ կռիւ ըրած կ'ըլլաք, ու զիրենք ալ չէք կրնար ջնջել»: Աս բանիս իրենց խելքն ալ պառկեցաւ. բայց նախ աղէկ ծեծ մը տուին

առաքելոց ու արդիւելով որ չխօսին, թողուցին :
Ասոնք ալ ուրախանալով որ Յիսուսի անուանը
համար նախատուեցան՝ գնացին ալ աւելի սկսան
քարոզել :

133

Հ . Երբոր հաւատացեալները շատցան, աղ-
քաններուն հոգն ալ միշտ առաքելոց վրայ էր .

Պ . Առաքեալները տեսնելով որ չեն կրնար
հասնիլ ժողովրդեան հոգևոր և մարմնաւոր պի-
տոյքը մէկտեղ հոգալու, խորհուրդ ըրին, եօթը
հոգի ընտրեցին ու սարկաւադ օրհնեցին որ դրսի
բաները հոգան . և էին ասոնք . Ստեփանոս . Փի-
լիպպոս . Պրոխորոն , Նիկանովը , Տիմոնա , Պար-
մենա , Նիկողայոս . որոնց մէջէն Ստեփանոսը հոգ-
ւոյն սրբոյ շնորհքով լցուած՝ հրաշքներ կ'ընէր ,
թշնամիները կը պատանձեցրնէր :

Հ . Հրեայք Ստեփանոսի թշնամանալով կրցան
իրեն մնաս մը հասցրնել .

Պ . Բռնեցին քահանայապետին առջև դատաս-
տանի տարին , ըսելով թէ զԱստուած ու զՄով-
սէս կը հայհոյէ : Քահանայապետն իրեն հար-
ցուց . Ստեփանոս տեղն 'ի անդը ցրցուց Հրէից
խոտասրտութիւնը և իր ըսածներուն ճշմարտու-
թիւնը : Ասով սաստիկ բարկացան վրան : Նայե-
ցաւ Ստեփանոս երկինքն ու ըսաւ . « Ահա կը
տեսնեմ Յիսուսն Աստուծոյ աջ կողմը նստած » :
Ամէնքն ահանջնին դոցեցին , բռնեցին տարին քար-
կոծեցին . որ մեռնելու ատեն կանչեց . « Տէր Յի-
սուս , առ խմին հոգիս » : Ետե ծունկի վրայ եկաւ ,
(« Աստուած , ըսաւ , ասոնց ըրածը մեզք մի սե-
պեր »), ու մեռաւ : Ետքը եկան հաւատացեալնե-
րը լալով արցունքով մարմինը վերուցին : Սուրբն

Ստեփանոս Քրիստոսի համար առջի արիւն թափողն ըլլալուն՝ Նախավկայ ըսուեցաւ :

Հ. Սրբոյն Ստեփանոսի մահուան ատեններն ուրիշ հաւատացեալները հանգիստ էին .

Պ. Հրեայք բոլոր քրիստոնէից դէմ հալածմունք հանեցին . ան սպառձառաւ բոլոր աշակերտներն Երուսաղէմէն ցրուեցան ու դացած տեղերնին կը քարոզէին :

Հ. Հոգեգալստենէն ետքը առաքելոց ըրած գործքերը նոր հասկարանին մէջ բոլոր կը ստամուխն .

Պ. Չէ . միայն Պետրոսին մէկ երկու գործքերը , Փիլիպպոսին զներքինին մկրտելը , Անանիային ձեռքով Պողոս առաքելոյն դարձը , և ետքը Պողոս առաքելոյն Բանաբասի հետ ըրած քարոզութիւնները : Այնչափ որ ասոնցմէ մահաբերեց ուրիշներուն ըրածներն ալ :

Հ. Պետրոս առաքելոյն վրայ սպամուած գործքերը որոնք են .

Պ. Սիմոն մոզին առած յանդիմանութիւնը , հեթանոսներուն՝ եկեղեցւոյ անդամ ըլլալնին իրեն յայանուիլը , բանտէն հրեշաակին ձեռքով ազատիլը :

Հ. Սիմոն մոզն ո՞վ է , և Պետրոս առաքեալ զինքն ինչո՞ւ յանդիմանեց .

Պ. Սիմոն՝ կախարդ մարդ մըն էր Սամարիայի մէջ , որ իր գործքերով զամէնքը զարմացուցած էր : Երբոր Փիլիպպոս հոն գնաց , ինքն ալ եկաւ մկրտուեցաւ ու քովէն չէր զատուէր , և ըրած հրաշքներուն վրայ կը զարմանար : Ետքը երբոր Պետրոս առաքեալն ալ հոն եկաւ որ մկրտուածներուն վրայ ձեռք դնելով՝ Հոգին սուրբ առնել կուտար , Սիմոն հանեց առաքեալներուն ստակ առաւ որ իրեն ալ տան ան իշխանութիւնը : Ան ատեն Պետրոս՝ « Ստակիդ հետ կորսուէ՛ ըսաւ սիրադ չի-

տակ չէ, անոր համար հոգւոյն սրբոյ շնորհքէն
զրկուած ես. ապաշխարէ որ թողութիւն ըլլայ
քեզի » :

134

Տ. Փիլիպպոս ինչպէս մկրտեց Եթովպացի
Ներքինին .

Պ. Անգամ մը հրեշտակ Աստուծոյ Փիլիպպոսի
հրամայեց որ Երուսաղէմէն դէպ'ի Գազա հա-
նող ճամբէն երթայ. հոն ճամբուն վրայ հանդի-
պեցաւ Եթովպացւոց թագուհւոյն Ներքինի գան-
ձապետին որ ուխտն ըրած՝ կառքով կը գառնար
Երուսաղէմէն. Փիլիպպոս հոգւոյն սրբոյ ազգ-
մամբը քովը գնաց, տեսաւ որ Եսայի մարգարէին
գիրքը կը կարդար. հարցուց, թէ « Ար հասկը-
նաս » . Ներքինին « Չէ » ըսաւ, ու աղաչեց զինքն
որ ելլէ քովը նստի ու իրեն մեկնէ : Կարգացած
տեղն ալ հանդիպեցաւ Քրիստոսի վրայ գրածը՝
թէ « Ոչխարի պէս առանց ձայնի մեռցրնելու տա-
րին » : Ներքինին հարցուց, թէ « Աս որո՞նք հա-
մար կ'ըսէ » : Ան ասէն Փիլիպպոս տեղն 'ի տեղը
Քրիստոսի հաւատքը անոր սորվեցուց : Երբոր
ջրի մը քով մօտեցան, ներքինին ուղեց ու մկրտ-
ուեցաւ, և հոգին սուրբ ալ եկաւ վրան . ետքը
հրեշտակը յանկարծ Փիլիպպոսը քովէն վերուց՝
ուրիշ քաղաք տարաւ. ներքինին ալ ուրախու-
թեամբ լցուած՝ գնաց իր տեղը :

Տ. Պօղոս տաքեալն ո՞վ էր, և ինչպէս դար-
ձաւ .

Պ. Սաւուղ անունով օրինաց սաստիկ վրէժ-
խնդիր հրեայ մըն էր, որ Ստեփանոսի քարկոծ-
ման ատեն քարկոծողներուն լաթերը պահեր էր :
Իմանալով թէ հաւատացեալները Գամասիոսի

մէջ կը շատնան , քահանայապետէն թուղթ առաւ ճամբայ ելլելու , որ երթայ զանոնք բռնել տայ : Երբոր Գամասկոս մտեցաւ , յանկարծ երկնքէն չորս դին լոյս փայլատակեց , ինքն ալ գեւորինն ինկաւ , ու ձայն լսեց , թէ « Սաւուղ Սաւուղ , ինչո՞ւ զիս կը հալածես » : Պողոս ըսաւ . « Տէր , դուն ո՞վ ես » : Նորէն ձայն եկաւ , թէ « Ես Յիսուս Նազովրեցին եմ : — Տէր ի՞նչ կ'ուզես որ ընեմ » ըսաւ Պողոս : Ան ալ պատասխանեց . « Ելի՛ քաղաքը գնա՛ , ու ինչ որ քեզի կ'ըսեն՝ ըրէ » : Պողոսին քովի մարդիկն ալ զարհուրած՝ բան չէին տեսներ , միայն ձայն կը լսէին : Ետքը աչուրնեքը կուրցած՝ Գամասկոս տարին . հոն իրեք օր անանկ ահոթի կեցաւ , ինչուան Սաուուծոյ հրամանով Անանիան եկաւ , ձեռքը վրան դնելով բժշկեց ու մկրտեց :

Հ . Պողոս մկրտուելէն ետե ի՞նչ ըրաւ .

Պ . Մէկէն սկսաւ քարոզել զՅիսուս ու վիճել Հրէից հետ . անոնք կը զարմանային թէ ինքն էր որ զքրիստոնեայս հալածելու եկեր էր ու իրենց դէմ կ'ընէր . ուստի իրենք ալ ետեէ եղան որ զինքն սպաննեն : Աշակերտներն ալ զինքը գիշերանց սպասպէն կախելով փախուցին , որ Երուսաղէմ գնաց , սկսաւ քարոզել : Երբոր հոն ալ իմացան Հրեայք , ետեէն ինկան բռնելու : Անկէ ալ Տարսոն փախուցին :

Ն • Պետրոս առաքելոյն ինչպէս յայտնուեցաւ թէ հեթանոսներն ալ եկեղեցւոյ անդամ են .

Պ • Կուռնեւելիոս հարիւրապետ հեթանոս՝ բայց բարեպաշտ մարդ մը՝ միշտ ողորմութիւն կուտար ու աղօթքի հետ էր : Հրեշտակ Աստուծոյ երեցաւ իրեն ըսաւ՝ թէ « Աղօթքդ Աստուած ընդունեցաւ . ուստի Յոսիպէ քաղաքը մարդ խրկէ ու Պետրոս առաքելալը կանչէ որ քեզի սորվեցընէ փրկութեան ճամբան » : Կուռնեւելիոս շուտ մը իրէք հոգի խրկեց . ան ասեն Պետրոս կէս օրուան դէմ տանիքն ելեր աղօթք կ'ընէր . յանկարծ տեսաւ որ երկինքը բացուեցաւ , ու մէկ կտաւ մը չորս ծայրէն կախած , մէջը ամէն տեսակ կենդանիներով լցուած առջնն իջաւ : Պետրոս երբոր զարմացած կը նայէր , ձայն մը լսեց՝ թէ « Պետրոս , ելիր մորթիւն ու կեր ասոնք » . Պետրոս ըսաւ . « Քաւ լիցի աէր , պիտի բան չեմ ուտեր » : Կորէն ձայն եկաւ թէ « Մի ըսեր պիտի , վասն զի Աստուած սրբեց զասոնք » . ասանկ իրէք հեղ լսելէն ետե անյայտ եղաւ : Ասոր վրայ երբոր Պետրոս սկսաւ մամլաւ , նոյն ասենը Կուռնեւելիոսի խրկած մարդիկն ալ հասան , զինքը կանչեցին խօսեցան , ու պատմեցին Կուռնեւելիոսին հանդիպածը : Երկրորդ օրը Հոգւոյն սրբոյ ազգելովը՝ հետը մէկ քանի Հրեայ առած՝ Կուռնեւելիոսի քով եկաւ , որ բոլոր բարեկամները ժողոված՝ իրեն կը սպասէր : Երբոր Պետրոս տունը մտաւ , Կուռնեւելիոս ելաւ ոտքն ինկաւ : Պետրոս « Ելի , ըսաւ , ինչ կ'ընես , ես ալ քեզի պէս մարդ եմ » . ու ետքը անոր իմացուց թէ տեսիլքով Աստուած իրեն յայտնեց է որ անկէց ետե

օրինաց խտրութիւն պիտի չըլայ : « Հիմա ի՞նչ կ'ուզէք » ըսաւ . Առաւելիոս ալ « Ա'ուզէնք որ , ըսաւ , Աստուծոյ հրամանը մեզի ըսես » : Պետրոս անոնց սորվեցուց ամէն բան ու միրտեց : Բայց մէկ երկու օրէն որ Երուսաղէմ գնաց՝ Հրէից հաւատացեալները վրան դայթակղիլ ցրցուցին , ինչուան լսեցին Աստուծոյ կամքն ու փառք տուին Աստուծոյ :

Հ . Պետրոս առաքեալն ի՞նչ պատճառաւ բանադնաց , և ի՞նչպէս ազատեցաւ .

Պ . Հերովդէս Ագրիպպա Հրէաստանի Թագաւորը՝ Հրէից աչքը մանել ուզելով , հալածանք հանեց , ու Յակօբոս առաքելոյն դուրսը կարել տուաւ . ետէն Պետրոս առաքեալն ալ բանադրաւ , որ զատկէն ետե ան ալ սպաննէ . Երուսաղէմի մէջ ամէն հաւատացեալք իրեն համար աղօթք կ'ընէին : Ետքի դիշերը Պետրոս շղթաներով կապուած՝ պահապաններու մէջ քնանալու ատեն , հրեշտակ մը եկաւ , Պետրոսը արթնցուց և ըսաւ . « Ելաւ ըրէ ել » : Ան ատենը յանկարծ բոլոր շղթաները արձրկուեցան՝ ինկան : « Գօտիդ կապէ , ըսաւ հրեշտակը , հողաթամփներդ հագիր , լաթդ վրագ առ՝ ետեկս եկո՛ » : Պետրոս երազ կը կարծէր . բայց երբոր բանախն երկրթէ դուռն ալ ինքիրեն բացուեցաւ , ու դուրս ելածին պէս՝ հրեշտակն ալ չեւեցաւ , ան ատենը իմացաւ թէ հրաշք է . ու Աստուծոյ փառք տալով՝ Մարիոսի տունը գնաց , ուր որ շատ հաւատացեալք ժողոված իրեն համար աղօթք կ'ընէին : Գուռն որ զարկաւ , աղախին մը նայեցաւ , ու ձայնէն ճանչնալով՝ ուրախութենէն դուրս չբացած ներս վաղեց իմացուց . անոնք չհաւատացին . Պետրոս ալ դուրս շարունակ կը զարնէր . երբոր բացին ու զինքը տեսան՝ զարմացան : Պետրոս եղածը պատմելէն ետքը՝ Վեսարիա գնաց : Բայց առաւօտանց երբոր

Հերովցէս Պետրոսը չգտաւ, պահապաններն ըս-
պաննել տուաւ:

136

Հ. Պօղոս առաքեալն առջի քարոզութիւնները
որ քաղաքն ըրաւ:

Պ. Բառնաբաա երբոր Անտիօք կը քարոզէր,
գնաց՝ Տարսոնէն Պօղոսն ալ հանեց ու տարիւ մը
չափ հոն շատ պտուղ ըրին. և ամենէն առաջ Ան-
տիօքացիք Քրիստոնէաց ըսուեցան: Անկէ հողւոյն
սրբոյ յայանելովն որ զկռասպաշաներն երթան
գարձրնեն, երկուքը մէկտեղ Ախպրոս գնացին,
շատ հոգի վասարկեցան:

Հ. Ախպրոսի մէջ Պօղոս առաքելոյն ինչ նոր
զիպուած հանգիստեցաւ:

Պ. Պատիոս քաղաքը Բարեյեսուս կախարդը ե-
տեէ էր որ Սերգիոս Պօղոս ըսուած իշխանը հա-
ւատքէ հանէ: Անոր համար Պօղոս առաքեալը
յանդիմանեց կախարդն ու ըսաւ. «Ո՛վ խաբե-
բայ ստանայի որդի, Աստուծոյ պատիժը վրադ
ըլլայ որ կուրնաս»: Մէկէն Բարեյեսուս կախար-
դին աչուրները գոցուեցան. Սերգիոս աս որ տե-
սաւ, հաւատքին վրայ աւելի հաստատուեցաւ:

Հ. Պօղոս առաքեալ Ախպրոսէն ո՛ւր գնաց:

Պ. Բառնաբաասին հետ Անտիօք Պիտիդեայ գը-
նաց, ու մտաւ Հրէից ժողովարանը քարոզելու:
Երբոր հոն չընդունեցան, անոնք ալ ելան Իհո-
նիոն եկան. անկէ ալ հալածուելով, Լիւսարա
գնացին: Հոն կաղ ծնած մարդ մը բժշկեց Պօղոս
կռասպաշաներուն առջև. անոնք աս հրաշքս տես-
նելով, կարծեցին թէ կուռքերն երկինքէն իջեր
են. ուստի կովեր բերին որ իրենց առջևը զօճը-
նեն: Ան ասեն Պօղոս ու Բառնաբաա լաթերնին

պատուեցին, սկսան հանչել. « Մենք ձեզի նման մարդիկ ենք, ճշմարիտ Աստուածը ձեզի կը քարոզենք » . ասանկով հազիւ արդիւնեցին զոհեւէն : Բայց ուրիշ քաղաքներուն հրեաներն իմանալով թէ ասոնք շատ ժողովուրդ կը դարձնեն, գրգռեցին զամենքն ու զՊօղոս չարչարելով վարնուեցին . ան ալ Բառնաբասին հետ Զուհաստանի ուրիշ քաղաքները գնաց ու շատ մարդ դարձուց :

Հ . Հեթանոսներէն դարձած քրիստոնեաներուն ու հրեաներէն եկածներուն մէջ ամենեւին կոխ չէր ըլլար .

Պ . Գրեթէ միշտ մէջերնին հակառակութիւն կար Մովսէսի օրէնքներուն համար . աւելի թըլլաւ փրատութեան վրայ : Հրեայք կը պնդէին թէ ամենքը պէտք է թլիսատուին որ փրկուին : Անոր համար Պօղոս ու Բառնաբասն Երուսաղէմ խորհուրեցան որ առաքելոց հետ խորհուրդ ըրին՝ որոշեցին որ չթլիսատուին :

Հ . Պօղոս առաքեալ հեթանոսներուն քարոզելու ատեն ամենեւին թշնամի չուրեցաւ .

Պ . Իրեն շատ նեղութիւն հասցընողները հրեաներն եղան . թէպէտև հեթանոսներէն ալ երբեմն չարչարուեցաւ : Ինչպէս անգամ մը երբոր Մակեդոնիա կը քարոզէր, դիւահար աղախին մը ամէն հանդիպելուն կը հանչէր, թէ « Ասոնք Աստուծոյ ծառաներն են » : Օր մը Պօղոս դարձաւ սատանային ըսաւ . « Յիսուսի Գրիստոսի անունովը ելի ասկից » . ու շուտ մը կինը բժշկուեցաւ : Անոր վրայ դիւահարին տէրերը շատ սրգողեցան որ անոր իրենց գաղտուկ բաներ յայտնելովը շատ վաստակ կ'ընէին : Անոր համար Պօղոսն ու Շիղան իր ընկերը բանա գնել տուին, ժողովուրդը կը խռովեն ըսելով : Բայց կէս գիշերուն աղօթքի ատեն՝ յանկարծ բանալը շարժ մը եղաւ՝ բոլոր դռները բացուեցան, ու իրենց ալ կասկերն արձը-

կուեցաւ : Բանախն վերահացուն ձայնէն արթըն-
ցաւ , ու կարծելով թէ վախեր են , յուսահա-
տու թենէն թուրը քաշեց որ ինքզինքն սպաննէ .
Պօղոս շուտ մը կանչեց , թէ « Մի վախեր , հոս
ենք » : Ան առեն սրահասպանը զարմանալով եղած
հրաշքին վրայ , բանտէն զերենք հանեց տուն տա-
րաւ . ու ինքն ալ ան գիշերը մկրտուեցաւ : Առա-
ւօտանց երբոր դատաւորներէն հրաման եկաւ ա-
զատ ըլլալու , Պօղոս սրատասխան տուաւ՝ թէ « Ա-
զատ հռոմայեցի մարդիկ ծեծելով բանտ դրին ,
ու հիմա գաղտնիկ կը հանեն » : Դատաւորները
երբոր իմացան ասոնց հռոմայեցի ըլլալնին , շատ
վախցան , ու եկան թողութիւն խնդրելով ազա-
տեցին : Ասկէ ետեւ Պօղոս ասդին անդին շատ քա-
րոզութիւններ՝ շատ հրաշքներ ընելով Եփեսոս
գնաց : Հոն ալ այնչափ եղաւ որ իրեն թաշկինակը
հիւանդներուն կը տանէին ու անով կը բժշկուէին :

Հ . Եփեսոսի մէջ Պօղոսի ինչ նոր գիպուած
սրատահեցաւ .

Պ . Եփեսոս Սկևի քահանայի մը եօթը տղաք
կային , որ երգմնեցուցիչ կ'ըսուէին , և դիւահար-
ներ բժշկել կը ջանային . առան որ Պօղոս առա-
քեալ Յիսուսի անունովը դե կը հանէ , իրենք ալ
մէկ հեղ մը ըսին . « Քեզ կ'երդուընցընենք Յի-
սուսի անունովը՝ որ Պօղոսը կը քարոզէ » : Ետեւ
մը դիւահարը՝ « Յիսուսը գիտեմ ու Պօղոսը կը
ձանչնամ , բայց դուք ո՞վ էք » ըսելով՝ վրանին
վաղեց ու անոնցմէ երկուքը անանկ չարչարեց որ
ձորով մերկ ու վերաւորուած ազատեցան ձեռ-
քէն : Ասով Ժողովրդեան սիրտը վախ ինկաւ ,
սկսան կախարդական գրքերն այրել , խոստովա-

նիլ ու դառնալ: Ան ատեն Գեմեարիսս արծա-
թագործ մը որ կուռքեր կը շինէր, երբոր տեսաւ
որ կուռքերը գնողները կը քիչնան, դրդուեց իր
արհեստակիցներն ու սկսաւ խռովութիւն հանել:
Պօղոս տեսաւ որ ձեռքերնէն ազատիլ չըլլար, ե-
լաւ անկէ առջի քարոզած տեղուանքը ստորակալ
նաւ մտաւ որ Երուսաղէմ երթայ:

Հ. Երբոր Պօղոս Եփեսոսէն Երուսաղէմ գնաց,
ի՞նչ նոր բան պատահեցաւ:

Պ. Ճամբան երբոր Աեսարիա հանդիպեցաւ,
հոն Ագաբոս աշակերտ մը մարդարէացաւ թէ՛
Երուսաղէմ զՊօղոս կապեն սխաի ու կռատաշտ-
ներուն մասնեն: Ուստի Պօղոս երբոր գնաց Ե-
րուսաղէմ, Հրեայք վրան շատ բարկացած ըլլա-
լով, բռնեցին զինքը, կ'ուզէին մեռցնել. բայց
դատաւորներու ձեռք մասնուեցաւ, որոնք Հրէից
հաճոյանալու համար չէին արձրկէր. արդարու-
թեան դէմ չընելու համար ալ՝ չէին մեռցնէր:
Ասանկ մէկ երկու տարի կապուած կեցաւ Պօղոս:
Բայց տեսնելով որ ուրիշ ճար չկայ, կայսեր դի-
մացն ելլել ուզեց. ուստի Փեսոսս դատաւորը
զինքը հռոմ խրկեց:

Հ. Պօղոս հռոմ երթալու ատեն՝ Ճամբան ի՞նչ
նեղութիւն քաշեց:

Պ. Շատ խառնակ օղերու հանդիպելով, քանի
մը հեղ նաւակոծութիւն եղաւ: Անգամ մը որ
ամէնքը յուսահատած՝ ոչ կ'ուտէին և ոչ կը խմե-
ին, Պօղոս անոնց սիրտ տուաւ որ ուտեն, ըսե-
լով « Աստուած ինձի յայանեց որ մարդ սխաի
չկորսուի »: Եւ ետքը երբոր ցամաքի դարկաւ ու
սկսաւ նաւը քայքայիլ, ուզեցին զնուորներն որ
հռոմ տանելու մահապարաններն սղաննեն որ
չփախչին. բայց հարիւրապետը չթողուց, « Այլ
որ ինչ կերպով կրնայ՝ թող ցամաքն ելլէ » ըսաւ.
վասն զի զՊօղոսն ապրեցնել կ'ուզէր: Ասանկով

մէյմէկ տախտակի կտորով ամէնքն ազատեցան եւ
լան Մելիաինէ կղզին : Հոն կղզեցիք զերենք սի-
րով ընդունեցան ու կրակ վառեցին որ տաքնան ,
վրանին գլուխնին չորցրնեն : Պողոս կրակին մէջ
խախեներ ձգելու ատեն մէջէն օձ մը ելաւ՝ ու իր
թևին սղլուեցաւ . ամէն տեսնողները սկսան ըսել :
Թէ « Գէշ մարդ է եղեր որ օձը զարկաւ զինքը » :
Բայց երբոր Պողոս թօթվեց օձը կրակին մէջ ու
իրեն բան մը չեղաւ , « Աւրեմն , ըսին , ասիկայ
աստուածներէն մէկն է » : Երեք ամիս հոն կե-
ցաւ Պողոս , շատ մարդ բժշկեց : Ետքը դնաց
Հռոմ , և տեսնելով որ իրեն դէմ դատաստանի
ելլող չկայ , մէկ տուն մը քարոզութիւն կ'ընէր :
Քանի մը տարիէն ետեւ Ներոն կայսրը մէկ օրուան
մէջ Պետրոսը գլխիվար խաչեց և Պողոսը գլխա-
տեց :

Գ Ի Տ Ե Լ Ի Ք

Ջ . Նոր կտակարանին պատմութիւնը ուլ գրեց .
Պ . Յիսուսի վարքը գրեցին չորս աւետարա-
նիչները , Մատթէոս , Մարկոս , Ղուկաս և Յով-
հաննէս : Մատթէոս հրեարէն գրեց Երուսաղեմի
մէջ՝ Քրիստոսի մեռնելէն վեց տարիի չափ ետքը :
Մարկոս Պետրոսի տուն տալովը Հռոմ գրեց ա-
ւետարանը՝ Քրիստոսի մահուանէն տասը տարի
ետե : Մարկոս և Ղուկաս առաքելոց աշակերտ-
ներէն էին : Ղուկաս Պողոսէն ու մէկալ առա-
քեալներէն լսելով գրեց աւետարանը՝ Քրիստո-
սի համբարձմանէն քսան տարիի չափ ետքը : Յով-
հաննէս ալ՝ Քրիստոսի չարչարուելէն վաթսուն
ուհինգ տարի ետե : Իսկ Քրիստոսի համբարձմա-
նէն ինչուան Պողոսի Հռոմ երթալուն պատմու-
թիւնը զատ գրեց Ղուկաս աւետարանիչը , որ
Գործք առաքելոց կ'ըսուի :

Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Տ

Երուսաղեմի կործանումը .

Հ . Հրեայք իրենց խստասրտութեամբք Քրիստոսի և քրիստոնէից դէմ կռուելով որչափ ատեն ղիմացան .

Պ . Ատուած իր երկայնամիտ համբերութեամբք Քրիստոսի մահուանէն ետև քառսուն տարի ալ իրենց միջոց տուաւ որ խելուքնին գլուխնին ժողվեն ու դառնան որ Ատուածոյ սպառնալիքէն ազատին : Բայց երբոր ճար չեղաւ , թողուց Ատուած որ Հռոմայեցի իշխաններն սկսան ղիրենք չափէն աւելի չարչրկել . որոնց վերջինն եղաւ Փլուրոս դատաւորն որ սասաիկ անողորմութեամբ կը տանջէր Հրեաները : Անոնք ալ չղիմանալով , խօսք դրին , ապստամբեցան Հռոմայեցւոցմէ . և իրենց չորս իշխան առաջնորդ դնելով ամբացուցին Երուսաղէմն ու Հրեաստանի ուրիշ քաղաքները , և սկսան պատերազմիլ : Եկաւ ասոնց դէմ Աեսպասիանոս և Տիտոս իր տղան , կռուեցան զարկին զարնուեցան , ինչուան որ բոլոր Հրեաստան և Երուսաղէմ հիմնայտտակ կործանեցաւ :

Հ . Երուսաղեմի կործանումն ի՞նչ կերպով սկսաւ .

Պ . Երբոր լսեցին Երուսաղէմացիք թէ Հռոմայեցիք եկան բոլոր Հրեաստանի քաղաքներն առին , մեծ խռովութիւն ինկաւ մէջերնին . ոմանք նորէն Հռոմայեցւոց հնազանդիլ կ'ուզէին , ուրիշներն ալ ինչուան ետքը պատերազմիլ : Ասպատճառաւ սրիկայ մարդիկ մէկ եղած՝ սկսան կռիւրնել մէկալ Հրեաներուն հետ . և քաղաքին գլուխները գոց , մէջն ամէն օր վայնասուն , մէկզմէկ կը

Զարդէին : Տաճարն եղեր էր իրենց պատերազմին
տեղը • որչափ որ ուտելու պաշար ունէին , բոլոր
կրակի տուին , անանկ որ դեռ թշնամիք վրանին
չեկած՝ մէջերնէն խելացիներն խնայան որ առ մաս
նաւոր Աստուծոյ պատիժն է , ասանկով ուզեն
չուզեն՝ պիտի ջնջուին • մանաւանդ որ Աստուած
ալ մէկ քանի յայտնի նշաններով խնայուց իրենց
գլխուն գալիքը :

Հ • Աստուած Երուսաղեմի կործանելուն ինչ
նշաններ տուաւ •

Պ • Նախ՝ տաճարին սղնձէ դուռն որ քան հո-
գի հազիւ կրնային դոցել , կէս գիշերանց ինքիրեն
բացուեցաւ , և տաճարին մէջ հրեշտակներուն ա-
հաւոր ձայնը կը լսուէր որ կ'ըսէին • « Աս տեղէն
փախչինք , փախչինք » : Բ • Կրակի պէս վառած
կառքեր ու խումբ խումբ զօրքեր կ'երևային օդուն
մէջ երկինքը : Գ • Յիսուս անուհով մարդ մը Ե-
րուսաղեմին մէջ եօթը տարի գիշեր ցորեկ անգա-
ղար մէկ դիէն մէկալ դին վաղվատելով կ'աղաղա-
կէր • « Աայ , վայ , վայ Երուսաղեմի » : Դ • Երկին-
քը սաստիկ մեծ լոյս մը երևցաւ՝ տաճարին չորս
դին պատած , կէս ժամի չափ • ահաւոր տեսքով
գիսաւոր աստղ մըն ալ երևցաւ քաղքին վրայօք
տարիի մը չափ :

Հ • Երուսաղեմ ինչպէս պաշարուեցաւ •

Պ • Տիտոս շատ զօրքով եկաւ քաղքին չորս կող-
մը բանակը դրաւ , ու սկսան երկու կողմէն սաս-
տիկ պատերազմիլ : Տիտոս շատ անգամ կը յոր-
դորէր հրեաներն որ խաղաղութիւն ընեն • բայց
ամենեկին օգուտ չէր ըլլար : Ետքը հողաբլուրներ՝
աշտարակներ շինեց , ու բաբաններով պարիստ-
ներն սկսաւ ծեծել : Ասոնք հողաբլուրը կ'այրէին՝
յուսահատած սաստիկ քաջութիւն ցուցնելով •
բայց սովը զիրենք խիստ կը տանջէր , և շատ մարդ
կը մեռնէին անօթութենէ , շատն ալ կը փախչէին

քաղքէն : Ասանկ պատերազմելով, Հռոմայեցիք
առջի պարսպին մէկ կողմը փլուցին ու զՀրեաներն
երկրորդ պարիսպը փախուցին :

Հ • Հռոմայեցիք ձեռք ինկած Հրեաներն ինչ
կ'ընէին .

Պ • Ինքիրեննուն անձնատուր եղողները կը թու-
ղուին որ երթան ուր որ կ'ուզեն : Բայց պատե-
րազմի մէջ բռնածնին քաղքին դիմացը խաչ կը
հանէին՝ օրը հինգ հարիւր մարդէն աւելի . թէ-
պէս ինքիրեննուն դնացողներէն ալ շատը չարա-
չար ասնջանքներով կը սպաննէին Հռոմայեցւոց
զինուորներն՝ որ պահած ստակնին քովերնէն առ-
նէն :

Հ • Տիտոս ինչ կերպով առաջ տարաւ Երու-
սաղեմի յաղթութիւնը .

Պ • Արովհետեւ ինքը քաղքին աղուորութեանը
և ամրութեանը վրայ զարմացած կ'ուզէր ազա-
տել, անոր համար իրէք օրուան մէջ բոլոր քաղ-
քին չորս դին հեռուէն նոր պատ մը քաշել առաւ
որ ոչ ջուր ունենան խմելու, ոչ գաղտուկ ճամ-
բայ մը՝ քաղաքը կերակուր տանելու, և ոչ յոյս
փախչելու ազատելու, և անձնատուր ըլլան : Աւս-
տի Երուսաղեմի մէջ չարամուտելու սով ախրեց :
Թէ որ մէկը չոր խոտ գանէր ուտելու, երջանիկ
կը սեպուէր : Մայր մը իր գրկի տղան եփեց՝ կե-
րաւ : Տներն ու փողոցները մեռելներով լեցուե-
ցան, մարդ չէր հասնէր թաղելու, և մեռելները
պարսպի պէս վար փոսերուն մէջ կը նետէին : Տի-
տոս աս խեղճութիւնները տեսնելով ու չկրնալով
ճար մը ընել, « Աստուած է, կ'ըսէր, աս բաներս
ընողը » : Իսկ Երուսաղեմին մէջի խռովարարները՝
բոլորովին յուսահատած ու կատղած՝ խելքէ մրա-
քէ չանցած չարիքը կը գործէին . մէկու մը չէին
գլծար, որուն բերնէն որ անձնատուր ըլլալու
խօսք մը լսուէր՝ մէկէն կը սպաննէին : Պաշարման

չորրորդ ամսուն մէջ Հռոմայեցիք Անտոնեան աշ-
տարակն առին ու հիմնայատակ փլուցին : Ետքը
տաճարն ալ առին ու Տիտոսի կամքին դէմ կրակի
առին : Այնէ ետե երրորդ պարիսպն ալ առին ու
քաղքին բոլորովն տիրելով՝ թալէցին :

Հ . Երուսաղէմի կործանման ատեն որչափ մարդ
կար մէջը .

Պ . Զատկի տօնին հանդիպելով, ուրիշ քաղ-
քներէն շատ մարդիկ հոն ժողվեր էին, շատն ալ
ամբուլթեանը համար հոն ապաւիններ էին . ուստի
իրենց բազմութիւնը պատերազմին ատեն մեռած
ներուն համբանքէն կրնայ խնայուիլ, մէկ միլիոն
հարիւր հազար մեռան, կ'ըսէ Յովսէպոս, իննը-
սուն հազար ալ դերի եղան . թող փախածներն
ու ասդիս անդին ցրուածները :

Հ . Երուսաղէմի պաշարման ատեն մէջը քրիս-
տոնեայք չկային .

Պ . Պաշարմանէն առաջ երբոր նշաններէն խնա-
ցան թէ պիտի կատարուի Քրիստոսի սպանալի-
քը, ամէնքն ելան փախան :

ԾԱՂԿԱՌԱՂ ԻՄԱՍՏՆԵՐ

ՍՈՒՐԲ ԳՐՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՒՐԱՌԱՆՁԻՒՐ ԳԱՍԷՆ

ՄԻՏՒ ԱՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ :

1. Հրեշտակը հպարտութեամբ սատանայ եղաւ : Մարմնով անասուն և հոգևով սատանայ դարձած մարդն ալ խոնարհութեամբ հրեշտակ կ'ըլլայ :

2. Մեծ էր Ադամայ մեղքը՝ Աստուծոյ սիրոյն դէմ, անոր համար սաստիկ պատժուեցաւ . ալ մեծ եղաւ Քրիստոսի սէրը՝ մեր ըրած անիրաւութիւններուն դէմ : Անոր համար վայ անոր որ Քրիստոսի մեծ սիրոյն մեծ անիրաւութեամբ յաղթել կը ջանայ :

Սուրբ դիրքը կ'ըսէ թէ Ադամ մեղանչեց . բայց սպաշխարութիւնը ուշացրնելուն համար արժան չսեպեց ըսել թէ ապաշխարեց : Մեղանչելէն ետև մարդ որչափ ուշացրնէ սպաշխարելը, այնչափ դժուար կ'ըլլայ մեղքերէն սրբուիլը :

3. Արեւի նման ըլլալու համար՝ ուրիշներէն եկած նեղութեան համբերելու է . բայց Վայենի նման ըլլալու համար՝ միայն սրտով զուրիշն ատելը հերիք է :

4. Մեղաւոր մարդիկ որչափ շատ ըլլան, այնչափ անհոգութեամբ մեղք կ'ընեն՝ մէկմէկէ սիրտ առնելով . բայց Աստուած՝ որչափ մեղաւորները շատ ըլլան, այնչափ շուտ և սաստիկ կը պատժէ զանոնք :

Նոյայ հետ ամէն տեսակ կենդանիներէն ալ փրկուեցան, բայց անոնք միայն որ տապանը մըտան ու տապանով ջրոյն մէջ պտրտեցան, և նեղուածք տեղ չարչարուելով կեցան : Ամէն ազգէ

մարդիկ արքայութիւն պիտի երթան . բայց անոնք միայն որ Քրիստոսի խաչին կ'ապաւինին , ու խաչին հետ մեկտեղ կը մկրտուին , և ինչուան ետքը խաչին պըտած՝ չարչարանք կը քաշեն :

5 . Երիւթանք որչափ աւելի մարդկանց նշանի կարօտ եղած ատեննին երևնայ՝ մութ ամպերու մէջ , այնչափ աւելի գոյնզգոյն աղուոր կը վայլի : Սուրբ եկեղեցին ալ Աստուծոյ շնորհքներովը զարգարուած՝ որչափ սաստիկ թշնամիներու մէջ լցնայ ու որչափ հալածուի , այնչափ աւելի փառաւոր կը աւանուի , և զմարդիկ Աստուծոյ հետ կը հաշտեցնի :

6 . Ի՞նչ օգուտ որ կը պարծինք դրախտին հայաստանու մէջ ըլլալուն համար , երբոր Աստուծան դրախտին մէջ չէ : Այն անոր որ հպարտութեամբ կը պարծի իր իմաստութեամբ զարգարուած խելքին վրայ , բայց Աստուծոյ երեսէն ինկած է :

7 . Ա՛վ որ իր ծնողացը վրայ կը ծիծաղի , Քամայ հետ ինքն ալ բոլոր աշխարհքիս առջև ծիծաղ կ'ըլլայ , և ծնողացն անէծքին տակը կ'սնայ :

Հպարտութեամբ կը կարծեն մարդիկ թէ իրենց խելքով բաղձանքնուն կը հասնին , ու կը սկսին մեծ մեծ աշտարակներ շինել մտքերնուն մէջ . բայց Աստուած յանկարծ կը շփոթէ զիրենք ու կը սորվեցնէ՝ թէ որչափ բարձր բաներու ձեռք զարնել ուզեն առանց Աստուծոյ , այնչափ խոնարհ պէտք է ըլլան Աստուծոյ առջև :

8 . Երանի՛ աստուածասէր ծնողաց զաւակն . վասն զի անոնց օրհնութիւնը ինքն ալ կը վայելէ . բայց որչափ որ բարի ըլլալն իրեն դիւրին է , այնչափ ալ երբոր դէշնայ՝ պատժէն ազատիլը դժուար է :

9 . Ի՞նչ շահ խանութը շատ կենալէն , երբոր ստակ պիտի չվասարկիս որ երթաս զուարճանաս :

Ի՞նչ օգուտ երկար ապրելէն, երբոր առաքինութեան պիտի չվաստուիս որ արքայութիւն երթաս ուրախանաս :

10 • Որչափ որ յայտնի է թէ լեզունիս Ազամայ լեզուն է, այնչափ աւելի ստոյգ է թէ խօսածնիս Ազամայ խօսքերը չեն * :

11 • Մեծ հաւատք ունեցողներուն՝ մեծ ու դժուար բաներ կ'ապաստէ Աստուած • բայց երբոր մեծ նեղութիւններու մէջ կ'լինան, մեծ պաշտպանութիւն ալ կ'ընէ անոնց :

12 • Աբրահամ որչափ իրեն հիւր դարձ կ'ընդունէր, անոր համար զԱստուած ալ ընդունեցաւ : Ո՛վ որ ամէն աղբրաին ողորմութիւն կ'ընէ, երբոր Աստուած ալ դադարուկ գայ չկարծած ատենը զինքը դատելու, Աստուծոյ ալ սէր ցուցնելովն ինքը զԱստուած կը ստիպէ որ դատելու անդ ողորմի :

13 • Չարերը երբոր Աստուծմէ կը կուրնան՝ Սոգոմացեոց պէս արդարներուն ետեւէն կ'լինան որ մնասեն, բայց դուռը չեն դռներ, անոնց յաղթելու դիւրին ճամբայ մը չեն դռներ, ու ետքն ալ սաստիկ կը սպառժուին Աստուծմէ :

Չէ թէ միայն չար չըլլալու է, հապա բարի ըլլալէն ետքն ալ չարերէն զգուշանալու ենք, որպէս զի անոնց վրայ գալիք պատիժէն կարենանք ազատիլ :

14 • Միայն Աբրահամն է արդեօք որ իր տղան խիստ սիրելուն համար Աստուծոյ ընծայեց : Աստարակոյս մըն է : Բայց ողբալի ճշմարտութիւն մը առ է որ շատը զաւելրնին չարաչար սիրելով՝ սասանային կ'ընծայեն, ալիկ չկրթելով, բռնի աշխարհքի հետ կապելով ու չար օրինակներով :

* Վասն զի Սդամ միշտ մեղքին գեշութեանը վրայ կը խօսէր ու կուլար :

15. Ճամբորդը ճամբայ կ'ընէ՝ քաղաքը հասնելու համար. սուրբերն ալ կ'ապրին՝ արքայութիւն հասնելու համար: Թէպէտ Աստուած Աբրահամու բոլոր Քանանու երկիրը տալ խոստացաւ, բայց ինքն իր կողմանէ պերեղման մը միայն գնեց հոն. գիանալով որ մարմնոյն միայն է ան խոստմունքը:

16. Երբոր մէկուն ջրհորը գոցեն, ջուր ուսկից խմէ: Իսահակայ ջրհորները գոցեցին, բայց ջուրը չկրցան սպիտեցրնել. վասն զի աշխատանքէ չէր փախչէր, միշտ նոր ջրհոր կը բանար: Ով որ կ'ուզէ Աստուծոյ շնորհքին մէջ միշտ ապրիլ, թէ որ սատանան իրեն մեղք ընել տալով՝ շնորհքն արգիլէ, պէտք է միշտ աշխատի ու մեղքերը դուրս ընէ որ միշտ նոր շնորհք ընդունի:

17. Եսաւ է չարափործ մարդն որ անցաւոր զուարճութեան համար՝ արքայութեան փառքը կ'արհամարհէ, ու ետքը իր խելքովն ըրած բաներուն վրայ կը սպարծի, կարծելով թէ հպարտութեամբ խոնարհին պիտի յաղթէ. բայց վերջը ինքիրեն խաղք եղած՝ խոնարհին փառքին կը նախանձի:

18. Յակոբայ Աստուած մեծամեծ խոստմունքներ ըրաւ ու Եսաւէն ալ մեծ ըլլաւ՝ ըսաւ. բայց Յակոբ Եսաւէն շատ տկար կը տեսնէր զինքը: Աստուած սանդուխով խնացուց իրեն՝ նաև ուրիշներուն, որ Աստուծոյ ծառաները թէ և անարգունն մարդկանց առջև, բայց ինքը կ'իջնայ՝ անոնց հետ կը բնակի:

Աստուած Յակոբայ իշխանութիւն ու փառք խոստացաւ. Յակոբ գացեր Լաբանու ծառայութեան մէջ կ'աշխատի: Ով որ կ'ուզէ Աստուծմէ փառաւորուիլ, պիտի աշխատի, անարգուն՝ ուրիշներուն ծառայէ:

19. Սատանան մահուան ատեն մարդուն կու-

գայ կ'ամբաստանէ թէ իմ բաներս գործածեցիր
ու վայելեցիր, և հիմա իմ գործքերս քու քովդ
է: Երանի՛ ան մարդուն որ կարենայ Յակոբայ
սէս ըսել սատանային. «Նայէ, թէ որ քովս
քու բանդ գանաս՝ առ»:

20. Եսաւ թուր էր սրուած. անիրաւ, հը-
պարտ. Յակոբ ջուր էր յստակ տարածուած,
արդար, խոնարհ. Եսաւ զարկաւ ջրին մէջն ու
փաշփրլէլով հստարտացաւ որ ուղածին սէս կը
շարժի ջրին մէջ, բայց անոր չկրցաւ մնասել,
ինքն ժանգոտեցաւ: Իսկ Յակոբ դեանին հաւա-
սար առջևը խոնարհելով՝ արևուն զօրու թեամբ
ինչուն երկինք բարձրացաւ: Ուր որ պարտքեր-
նիս է խոնարհիլ, վայ թէ որ չխոնարհինք. բայց
հազար անգամ երանի՛ թէ որ իրաւունքնիս թո-
ղունք ու անիրաւին առջև խոնարհինք:

21. Յակոբ աղէկ տղան սիրեց և ուրիշներուն
առջև գգուեց. անոր համար ինքն ալ ցաւեցաւ՝
տղան ալ: Աստուած աղէկ մարդը կը սիրէ ու նե-
ղու թեան մէջ կ'աշխատեցնէ. անոր համար ինքն
ալ կ'ուրախանայ մարդն ալ: Ծառին աղէկ պտու-
ղը թէպէտ կը սիրեն մարդիկ. բայց կը թողուն
որ արևուն մէջ եփի ու հասնի:

22. Յովսէփ գերի ծախուեցաւ, գնողներուն
չամբաստանեց եղբարցը վրայ. Յովսէփ թագաւոր
եղաւ, վսէժ շինդրեց անոնցմէ. Աստուած է ա-
մէն բան առաջ տանողը, ո՛վ չհաւտար. Աստու-
ծոյ ըրածին վրայ ո՛վ կը տժգոհայ: Բայց ամէնքը
կը տժգոհան իրենց դժտուն եկած նեղութիւննե-
րուն վրայ:

23. Ո՞րչափ մարդիկ Աստուծմէ կը պատժուին՝
Աստուծոյ ուղածն ընելուն համար. վասն զի
իրենք Աստուծոյ դէմ ընելու մտքով կ'ընեն: Յով-
սէփայ եղբարքն իրեն վրայ նախանձեր էին.
Աստուած իրենց խնայուց որ փուճ տեղը չնա-

խանձին • վասն զի ինքն անանկ կարգաւորեր է որ ամէնքն անոր երկրպագութիւն պիտի ընեն : Մաքով չհաւնեցան աս քանիս , բայց գործքով տեղն 'ի տեղը կատարեցին Աստուծոյ ուղածը :

24 • Մեղաւոր մը իր մեղքերէն որչափ աւելի ետ կենայ , Աստուած ալ այնչափ աւելի զինքը տանջել կը սկսի • բայց ետքը յանկարծ կը մխիթարէ • վասն զի ան ատենի տանջանքովը կ'իմանայ մարդ առջի մեղքերուն մեծութիւնը • և զինքը տանջելուն համար ինքն ալ կը սկսի զԱստուած սիրել : Յովսէփայ եղբարքն երբոր իրեն օտքը դիմեցին , ինքն ալ ան ատեն սկսաւ զիրենք փորձել 'նեղը խոթել • և քանի որ 'նոր վիշտ կը հապրնէր իրենց , այնչափ աւելի կը ճանչնային յանցանքնուն մեծութիւնն ու կը զղջային : Բայց քիչ ատենէն զինքը բոլորովին յայանեց ու զանոնք մխիթարեց :

25 • Յակոբ թէ որ զՅովսէփ չկորսընցընէր ու չցաւէր , ետքն ալ չէր գտնէր ու չէր ուրախանար • վիշտը՝ միայն կորսընցընելուն համար էր , իսկ ուրախութիւնը՝ տղուն հետ շատ բարիքներ ալ գտնալուն համար :

Աստուած զՅովսէփն առաւ Յակոբայ ձեռքէն , գործածեց , ու ետքը առատ շահով 'նորէն իրեն դարձուց : Աստուած ինչ հանգստութենէն որ կը զրկէ զմարդ , ան հանգստութիւնը շահովը մեկտեղ ետ կը դարձընէ :

26 • Սովի համար Նոբիլոսու պէտք չէ երթալ • առջի բերանը կը հանգչեցընէ , բայց ետքը կը նախանձի ու կը չարչարէ : Ա՛լ որ 'նեղութեան մեջ աշխարհքիս հանգիստը կը փրնտուէ , ետքն ալ մեծ 'նեղութիւններու մեջ կ'լցնայ :

27 • Փարաւոնն Հրէկց տղաքը ջնջել ուղած ատենն որ չըլլայ թէ իրմէ ապստամբին , իր պաշտափն մեջ կը մեծցընէր ան տղան , որ ատենով բո-

լոր Հրեաները պիտի ապաստանեցնենք, և զինքն
ու իր զօրքը պիտի ջնջէր: Աստուծոյ գէմ կառուիլ
ուղողին շինել կուտայ Աստուած ան գործիքներն՝
որ ինքն անոր գէմ պիտի բանեցնէ:

28. Ուր լսուած է որ խախներու մէջ կրակ
վառի ու չայրէ. բայց Աստուծոյ կամքովը մորե-
նին կը բարնկի ու չայրիր: Աստուծոյ ապաւինած
մարդիկ ինչ փորձութիւններու մէջ ալ իյնան՝
չեն այրիր, հապա կը յաղթեն՝ թէպէտ տկար ու
խեղճ ալ ըլլան:

29. Աստուած որչափ որ իր գթութեան գիրկը
բացաւ Փարաւոնին, անիկայ այնչափ զգուշացաւ
ու չիյնայ մէջը. անոր համար արդարութեան վը-
հին մէջ ինկաւ կորսուեցաւ: Անզեղ մեղաւորը
չէ թէ Աստուծոյ գթութեանը կը յաղթէ, հապա
ինքն Աստուծոյ արդարութենէն կը յաղթուի:

30. Ինչո՞ւ համար խստացած մեղաւորը մեծա-
մեծ հրաշքներով ալ դարձի չգար: Թէ որ Աս-
տուած ջայանէր, ինչպէս կրնայինք խմանալ:
Վասն զի չարագործներուն հոգւոյն աչքը խա-
ւարած է, չեն տեսներ. պէտք է նախ ճրագ վա-
ռեն, շորհք խնդրեն: Փարաւոնին սիրտը շօշա-
փելի մութ պատած էր, ինչ և իցէ մեծ ջահերու
կը յաղթէր: Առջի ութը պատիժները չարագործ-
ներուն համար էին, իններորդը խստասրտին. ան-
կէ ետեւ ալ մահ է եկածը:

31. Իսրայէլացիք Եգիպտոսէն ազատեցան՝
գառնը բաղարջով ուտելով. մենք սատանային
բռնութենէն ազատեցանք՝ ճշմարիտ գառնը ըզ-
Քրիստոս ճաշակելով: Բայց անոնք ամենքն ալ
գառնը կերածնուն պէս՝ ելան փախան Եգիպտո-
սէն. հիմա որչափ մարդիկ գառնը կը ճաշակեն.
բայց Եգիպտոսէն Փարաւոնին հետ կ'ելլեն. այս-
ինքն հպարտութեամբ իրենք իրենց հաւնելով.
անոր համար կ'ընկղմին:

Թէ որ մեծամեծ հրաշքներ պէտք եղան Իս-
րայէլացւոց Եգիպտոսէն խալըսելու համար, հա-
պա ո՞րչափ աւելի հրաշքի կարօտ է մէկ հողի մը
սատանային ձեռքէն ելլելու համար: Աս լսելով
թէ որ մէկը յուսահատի իր փրկութենէն, ես աս
ըսելով կը վստահիմ անտարակոյս փրկուելու:
Թէ որ Աստուած հին օրինաց ատենն որ ամէն բան
արգարութեամբ կը դատէր՝ Իսրայէլացւոց ար-
ցունքովն ստիպուեցաւ հրաշք ընելու, հիմա որ
ամէն բան ողորմութեամբ կը դատէ, ո՞րչափ դիւ-
րին է քանի մը կաթիլ արցունքով մեծամեծ հր-
աշքներ Աստուծոյ ընել տալու:

32. Անիրաւ մարդն ամէն բանէն աւելի պէտք
է վախնայ տղօր ու խեղճ մարդէն: Եգիպտացիք
Իսրայէլացւոց անիրաւութիւն ըրին՝ բայց ըրած
զրկումնին վճարելէն ետե՛ տեղն ՚ի տեղ պատիժն
ընդունեցան:

33. Մանանայէն համ չառնող Իսրայէլացիք՝
մանանային ինկած տեղուանքն իրենք ալ ինկան
մնացին, ու Աւետեաց երկրէն զրկուեցան: Հա-
ղորդութենէն համ չառնող քրիստոնեայք ինչպէս
որ սատանային բնակարանին մէջ կ'ընդունին հա-
ղորդութիւնը*, իրենք ալ սատանային ձեռքը պի-
տի մասնուելն:

34. Մարդիկ զԱստուած սիրելու համար ե-
ղեր են: Երբոր զաշխարհ սիրելով Աստուծմէ
պաղած կ'ըլլան, Աստուած իր սիրոյն կրակն ա-
նոնց սրտին դպցնելուն պէս՝ կարծեն թէ պիտի
այրին: Աս ճշմարտութիւնը ճանչցողը չէ թէ Իս-
րայէլացւոց պէս կ'ըսէ, թէ « Չիտսի մեզի հետ
Աստուած », հապա մէկէն իր սիրան աշխարհ-
քէս կը բաժնէ՝ Աստուծոյ սիրոյն մէջ կը ձգէ կը
բռնկցընէ:

* Վասն զի անզեղջ մեղաւորին սիրաբը դժոխք է:

35 . Կարծեն մարդիկ որ իրենց խիստ մօտ աղ-
գականը ծնողքն են , բայց կը սխալին . անոնք
մարմնոյ ծնողքն են . իսկ հոգւոյն՝ Աստուած :
Աւսացիք իրենց հոգւոյն աղգականին հրամանո-
վը մարմնոյ աղգականներուն շինայեցին : Ո՛րչափ
մարդիկ իրենց աղաքը չարամեցընելու համար
թող կուտան որ Աստուծոյ դէմ ուղածնին ընեն ,
ու ասով զԱստուած կը արամեցընեն :

Երբոր մարդ մեղքերով Աստուծոյ պատուի-
րանքին տախտակները գեաին կը զարնէ կը կոտ-
րէ , ետքը թէ որ խելքը գլուխը գայ՝ նորէն
դրել ուղէ , Աստուած կը հաճի . բայց ան ատեն
Աստուած կ'ուղէ որ աշխատի՝ տախտակներն ինքը
շինէ . այսինքն աղէկ մը ասպաշխարէ ըրածին
վրայ :

36 . Թէ որ Նաբադ ու Աբիուդ բուրվառին
կրակը դրսէն առնելով՝ Աստուծոյ կրակէն այ-
րեցան , որ միայն օրինակն էր Քրիստոսի սիրոյն ,
հիմա ո՛րչափ աւելի թէ որ ուրիշ սիրով Քրիստո-
սի մօտենանք : Քրիստոսի սէրը զմեզ պիտի այրէ
ու դառապարտէ :

37 . Ի՛նչ մեծ անխելքութիւն է Իսրայէլաց-
ւոց ըրածը . Աստուած երկնքէն անոնց ամէն
տեսակ համ՝ ունեցող կերակուր կը խրկէ , ու ա-
նոնք միտի կը կարօտին ու կը արարնջան : Բայց
այլ մեծ է մեր ըրածը , Աստուած ինք զինքը մեզի
կուտայ որ ճաշակենք ու յաւիտեան իրեն հետ
ապրինք , բայց մենք համ չենք առնել՝ աշխարհ-
քիս սիրով կապուած ըլլալնուս համար : Ըրած-
նիս թէ չենք ճանչնար , դէթ օրինակովն զգաս-
տանանք :

38 . Միշտ շատին պէտք է հետեիլ : Լրտես-
ները տասուերկուք էին . Իսրայէլացիք քանիին
հետեւեցան : Տասը շատ չէ երկուքէն : Ահա աս
թիւերուն սխալ երևնալովը՝ ինչուան հիմա շատը

Իսրայէլացւոց հետ կը մօլորին: Ասան զի անոնք՝
միայն տասն էին. իսկ մեկալ երկուքին հետ Աս-
տուած ալ կը վկայէր. չէ թէ Աստուած բազմու-
թեան, հասլա բազմութիւնն Աստուծոյ ըսածին
պէտք է հետեի:

Մեծ պաշտօններուն հասնելու փափաք պէտք
է ունենալ. առանց փափաքի չհասնուիր: Աորև
փափաքեցաւ քահանայ ըլլալու, պատժուեցաւ:
Ամէն մարդ ալ կ'ուզէ փրկուիլ. բայց շատերը
դժոխք կ'երթան: Ասան զի փափաքիլը դործով
պէտք է ընել, չէ թէ խօսքով:

39. Մովսէս տարակուսած չէր դիտել ջուր
ուսկից դանայ. մաքէն չանցաւ թէ ապառաժ
քարն ալ, երբոր Աստուած ուզէ՝ իրեն ջուր կըր-
նայ տալ: Միախտան մարդն ալ երբոր կամօքն
Աստուծոյ աշխատի, խեղացի ու սուրբ մարդիկ-
ներէն աւելի օգտակար կ'ըլլայ աշխարհքիս: Աս
բանիս վրայ տարակուսիլը մեզի իրաւունք կ'երե-
նայ, բայց Մովսէսի վրայ պատժոյ արժանի յան-
ցանք սեպուեցաւ:

Քանի որ հին օձէն՝ այսինքն սատանայէն վե-
րաւորուինք՝ մեր խաչէն փախչելուն տրտնջալուն
պատիժ, պէտք է Քրիստոսի խաչելութեանը նայ-
ինք որ բժշկուինք:

40. Բաղաամայ շահասիրութիւնն իրեն շուտ
մեռնելու պատճառ եղաւ, Իսրայէլացւոց ալ շատ
չարիք հասուց. բայց Փենեհէս Աստուծոյ բար-
կութիւնն իջեցուց: Ով որ Աստուծոյ ծառայու-
թեան մէջ շահու համար կ'աշխատի, ո՛ւր էր թէ
միայն իրեն վնասէր: Բայց աս է փափաքելին,
որ Բաղաամ եղած տեղը՝ Փենեհէս ալ դրա-
նուի: Այն ան աղջին որուն մէջը Բաղաամներ
կը ծաղկին:

Մովսէս սքանչելի է, չէ թէ Աստուծմէ պա-
տիւ սունելու համար, հասլա ներողութիւններու

համբերող, անոյշ, հեզ, նախամեծաւոր և հաւատարիմ ըլլալուն համար: Ուստի անոնք միայն պէտք է ուրախանան, որոնք որ կարողութիւն ունին առ բաները ձեռք ձգելու. վասն զի իրենք ալ իրենց վիճակին մէջ կրնան ըլլալ սքանչելի:

41. Քահանաներուն ձայնովք Նրիքով կործանեցաւ. քահանաներուն ձայնով մարդկանց սրբօրին մէջ սատանային տները կը կործանին: Նրիքովն ամէն բանը նդովեցին. սատանայինը առաջուց նդոված է:

Այն ան մարդուն որ սատանային նդոված խորհուրդին կը հաւնի, ու գաղափար սրտին մէջ կը թաղէ ու կը պահէ, թէպէտ դրսուանց չիմացուիր, բայց որ մը Աստուած ամենուն առջև պիտի յայտնէ, ու զինքը Ա. քարին պէս տնով տեղով՝ այսինքն հոգւով և մարմնով կրակի պիտի մաանէ ու տանջանքները վրան լեռան պէս պիտի դիզէ:

42. Աստուած արևն ստեղծեց՝ ու ըսաւ. «Ան գաղար պարակ» . Յետուն ո՞վ է որ կ'արգիլէ: Բայց անդգայ արարածը ինչպէս առաջ Աստուծոյ, ասանկ ալ հիմա Յետուայ հնազանդեցաւ: Ամբշնան ան մարդիկն որ իրենց սովորութիւնը պատճառ բերելով՝ մեծերուն հրամանին չեն հնազանդիր:

43. Քառսուն տարի աշխատելով հազիւ մտան Իսրայէլացիք Աւետեաց երկիրը. բայց երկրին տէր ըլլալու համար շատ պատերազմներ ընել պէտք եղաւ: Մեղաւորը շատ զղջումով Աստուծոյ գիրկը կը կը մանէ. բայց հոն հաստատ մնալու համար շատ փորձութիւններ պիտի քաշէ ու շատ կռիւններ պիտի ընէ:

44. Աւովգայ երկու ձեռքով յաջող ըլլալն ինչ օգուտ ունէր: Սատանան իր ուժին վստահացած է. թէ ուժով դէմ չես դներ, խաբելով

պէտք է յաղթես : Թէ նա աջով բարև կուտայ , դու ձախդ դադարուկ բանեցուր . թէ որ յաջողութեամբ բարև տայ՝ հպարտացընելու համար , խոնարհութեամբ թուրը սիրտը պէտք է խոթես . ձախորդութեամբ թէ աժգոհալ սախպէ , վստահութեամբ դէմն առնելով պէտք է յաղթես :

45 . Գեբորա մարգարէացաւ՝ սիրա տուաւ . Բարակ զօրքով քաջութիւններ ըրաւ , Յայէլ յաղթութիւնը ըմբոցուց : Մէկ հողի յաղթեց , իրէք հողի փառք կուտան Աստուծոյ : Թէ Աստուծոյ փառացն համար մէկը կ'աշխատի , ինչով իմանամ , թէ որ իր աշխատանաց վարձքն ուրիշն առնէ ու ինքն ուրախանայ :

46 . Երեսուներկու հազարէն իրէք հարիւր հողի մնացին Գեդէոնին քովը . վասն զի ընտրեալքը քիչ են : Շատերը գէշ ըլլալնուն ցրուեցան . բայց ան քիչն ալ երբ մինակ մնացին , խելքը կը ցուցընէր թէ իրենք ալ ետ քաշուին պատերազմելէն : Ա՛վ որ աշխարհքիս մէջ Աստուծով չգործեր , ասանկ կը մտածէ , բայց անոնց հետ Աստուած կար՝ ամենուն յաղթող :

47 . Թէ որ արևը կը սիրես , արևուն շատ մի նայիր որ իր լոյսը վայելես : Աբիմէլէք փառք կը սիրէր , ափսոս իրեն որ անդադար փառքին կը նայէր , կուրցաւ չարաչար . եղբայրներն որ իրեն փառք պիտի ըլլային՝ թշնամի կարծեց , ըստաննեց . անոր համար անարգ մահուամբ չարաչար կորսուեցաւ :

48 . Ուխտ ընելն Աստուծոյ փառացը և մեր օգտին համար է . ուխտը կատարելու ատեն ո՛վ չուրախանար . Յեփթայէ արամեցաւ ու ցուեցաւ : Վասն զի Աստուած խելք տուեր է որ մըտածենք ու գործենք . թէ որ մէկն առանց մտածելու ուխտ կ'ընէ , ետքը կատարելու ատեն որ կը մտածէ՝ պէտք է որ ցաւի . չէ թէ ուխտ ընելը

գէշ ըլլալուն համար, հապա ինքը Աստուծոյ դը-
րած կարգը չսխալելով՝ առանց մտածելու գոր-
ծելուն համար:

49. Ա՛րջափ մարդիկ մինակ ըլլալով՝ առիւծէն
տկար գաղաններէն ալ կը յաղթուին: Երանի
անոնց որ Սամիսոնին պէս Աստուծոյ ապաւի-
նած՝ առիւծները կը սպառուեն: Արջափ որ մեծ
փորձութիւններու յաղթեցք, այնչափ աւելի ա-
նուշութիւն անոնցմէ կը քաղենք: Թէ որ առիւ-
ծին տեսքը նայիս, կը թուլնաս կը յաղթուիս •
իսկ թէ որ Աստուծոյ ապաւինիս, կը յաղթես
ու կը յազիս:

50. Ամենեկին խառնակ ճամբաներ երթալ
պէտք չէ. կամ թէ որ դացեր է մէկը, նորէն
պէտք է ետ դառնայ որ չկորսուի: Սամիսոնին
հետ շատը կ'երթան աշխարհք սիրելով կը կուր-
նան, կը կապուին, խաղալիք կ'ըլլան սատանայի •
բայց ո՛ր էր թէ նորէն դառնային Սամիսոնին
հետ ճանչնալով իրենց խեղճութիւնն ու յաղ-
թէին աշխարհքին՝ սատանային և իրենց մարմնոյն
ալ մէկտեղ:

51. Ալ որ ճշմարիտ Աստուծոյ կ'ապաւինի,
Աստուած միշտ անոր հետ կը բնակի ու յաւի-
տեան զայն մարդը կը մխիթարէ: Միքան իր ա-
տուածը կորսընցուց, մխիթարութենէն զրկուե-
ցաւ: Ա՛րջափ մարդիկ աշխարհքիս մէջ իրենց մէկ
յօժարութիւնն սլաշտելով կարծեն թէ անով
միշտ հանդիստ պիտի ըլլան • բայց քիչ ատենէն
ուզեն չուզեն կը զրկուին ան անկարգ յօժարու-
թենէն ու բողբոլին թշուառութեան մէջ կ'ը-
նան:

52. Ըստ մարդիկ աշխարհքիս փառք սպառիւր
թողուլ հեռանալ կ'ուզեն • բայց կարծելով թէ
Աստուած զիրենք կ'արդիլէ, կը մնան ու ետքը
չարաչար կը կորսուին: Հռութ և Արփա ուզե-

ցին իրենց հայրենիքէն ելլել գալ Իսրայէլացւոց մէջ բնակիլ . բայց Արփան եւս դարձաւ . իսկ հըռութն եկաւ՝ Յիսուսի նախնեաց կարգն անցաւ : Յայտնի է պաաճառը . Արփան բերնով ուղեց , հըռութը սրտով :

53 . Ի՞նչ օգուտ ծնողաց իրենց բարի ըլլալը՝ երբոր զաւակնին չեն կրթուած՝ բարի չեն : Աւա՛ղ քեզ հեղի քահանայապետ , որ աղոցդ համար դու ալ պատժոյ տակ ինկար :

54 . Աստուած սուրբ հոգի է , աղտոտ հոգւոյ մէջ չբնակիր . Իսրայէլացիք չարութեամբ լցուած՝ Աստուծոյ տապանակը հեռերնին կը պարտացընեն որ ուղածնին առաջ տանին : Ի՞նչ օգուտ կ'ընէ տապանակը երբոր տապանակին տէրը հեռերնին չէ , որ տապանակին ալ իրենց ալ պաշտպանէ . մանաւանդ թէ ան ատեն Աստուած աւելի զիրենք կը պատժէ որ իր տապանակն ալ ձեռքերնէն առնէ . հապա ի՞նչ մեծ պիտի ըլլայ անարժան հաղորդութեան պատիժն որ Աստուծոյ սուրբ հոգին կ'առնեն իրենց չար հոգւոյն հետ կ'ուզեն միացընել :

55 . Աշխարհքիս մէջ որ մարդն է որ ամէն բանի մէջ իր ուղածը կարենայ առաջ տանիլ , և ամէն անտակ մարդկանց գիւրաւ խօսք հասկըցընէ : Ահեղ սաստիութիւն ունեցողն է : Եւ ի՞նչպէս կ'ըլլայ աս բանիս մէջ աղէկ կրթուիլ : Մովսէսի հարցու որ աղէկ աս բանիս մէջ Աստուած զինքը կրթեր էր , ու ամէնքը կը պատկառէին իր լուսաւոր դէմքէն ու ահաւոր կերպէն . բայց իր հեղութեամբն ինքը չգիտցող կը ձեանայ . և Աստուած կը վկայէ թէ հեղ էր Մովսէս : Աւրեմն ահա քեզի ճամբան : Եւ ո՞վ չգիտեր թէ ինքիրեննուն ահեղութիւն ունեցող մարդիկ ատելի են , չէ թէ պատկառելի , սիրելի :

56 . Թշնամիէն պէտք է վախնալ՝ թէ աղգա-

կանէն : Ամէն մարդ թշնամիէն կը վախէ ու կը զգուշանայ . բայց ով որ կ'ուզէ Յորայ առաքինութիւնն ունենալ, թշնամիէն սկսք է զգուշանայ միայն . իսկ ազգականէն՝ և զգուշանայ և վախնայ : Թշնամին զՅոր կը չարչարէր, մեռցընել կ'ուզէր . իսկ իր կիներն իրեն զԱստուած հայհոյել կը ստիպէր : Ա՛րչափ մարդիկ թշնամի ձեռքէ մարմնով մեռնելէն կը զգուշանան կ'ազատին, ու ազգականի ձեռքով դժոխքը կը թաղուին հոգւով և մարմնով :

57 . Սաւուղը Աստուած ընտրեց, Աստուած անտրգեց : Չգիտցողին զարմանալի կ'երևնայ . բայց զամէնքն ալ իրենց պաշտօնին մէջ Աստուած կը գնէ, մէկը յայտնի կանչելով՝ մէկալը ծածուկ . ամէնքն ալ կրնան գէշ ըլլալ կամ աղէկ, ինչպէս որ իրենք կ'ուզեն :

58 . Յովնաթան մեծամեծ յաղթութիւններ ըրաւ, բայց անհոգութեամբ կտոր մըն ալ մեղք կերաւ . ով կարծէր թէ այնչափ կտրճութիւնները մտացուին ու մեռնելու դատապարտուի : Բարի՛ ծառայք Աստուծոյ, թէ որ մէկ սղափ աշխարհային յօժարութիւննիդ կատարէք, բարի գործքերնիդ մտցէք՝ մեռնելու պատրաստուէցէք :

59 . Իորայելի բանակը Սաւուղ թողաւորին հետ զարհուրած՝ Գողիաթին ուժէն կը վախեն . և ով ըլլայ չվախեր : Մէկ աղայ մը Աստուծոյ ապաւինած՝ քար մը նետեց, անյաղթ թշնամին սպաննեց : Ստանան խիստ ուժով է, մենք ի՛նչպէս յաղթենք . Աստուծոյ ապաւինիմք, քարով մը զինքը խաղք կ'ընենք :

60 . Նախանձը կրակ է՝ կ'այրէ, ով չգիտեր : Թէ որ կրակին բարկանաս ու աւելի բռնեցրնես, ինքն արդէն կ'այրի, աւելի դու կը տանջուիս : Սաւուղ Գաւթի նախանձող թշնամի, Գաւթի

անոր կը կսկըծայ և միշտ բարին կը կամի . ահա
ասանկ երկուքն ալ իրենց սրտին հատուցումն
առին : Ասան զի նախանձողին բարիք ուզողը կրա-
կին վրայ ջուր կը լեցընէ : Նախանձողը այրած
ներուն մնասը պիտի հատուցանէ . ուրիշի բարին
ուզողը՝ իր վաստակածն անոր կրակէն աղատ կը
պահէ :

61 . Դաւիթ իր թշնամիներուն կը յաղթէ , ա-
ւարը պատերազմի չգացողներուն ալ կը բաժնէ .
վասն զի անոնք ալ պատերազմելու փափաք ու-
նէին : Դաւիթ իր զօրացն աս օրէնքը դրաւ , ետքը
Քրիստոս ալ իր զօրացն աս ապսպրեց՝ սատա-
նային դէմ պատերազմ ընողներուն :

62 . Մարդ աւելի պէտք է ջանայ որ շնորհքը
չկորսնցընէ քան խելքը : Շնորհքին խրատովը
Սաւուղ կախարդները ջնջեց . ետքը խելքին հե-
տեւելով գնաց կախարդ փնտռեց որ Աստուծոյ
կամքն իմանայ : Շնորհքով առաջ Աստուծոյ սի-
րելի եղաւ Սաւուղ , ետքը խելքով ատելի : Խել-
քը յուսահատութիւն կը բերէ , շնորհքը զըզ-
ջում :

63 . Անիւր դարձած ատեն վրան անշարժ ո՞վ
կրնայ նստիլ : Հիմա ի՞նչ պատասխանեմ : - Խելք
ունեցողը : - Գլուխը տաքցած ատեն ո՞վ կրնայ ա-
ռաքինութիւն գործել : - Աստուծոյ շնորհքին մէջ
եղողը : Թէ որ աս բաներս դժուար կ'երևնան , մե-
կին վկայ ըլլայ կառք հնարողը , մեկալին Դաւիթ՝
որ պատերազմին տաքցած ատենը ծարաւն անցը-
նելու տեղ ջուրն Աստուծոյ նուիրեց :

64 . Աստուծոյ առջև կաքաւելը լաւ է , թէ սա-
տանային : Ամէն մարդ սատանային դիմացը կը
կաքաւէ ու ջարհամարհուիր . և թէ որ մէկը
Դաւթի հետ սաստիկ ջերմեռանդութիւն մը ցու-
ցընէ , ամէնքը Մեղքողի հետ ծաղր ընել կը սկը-
սին : Թէ որ ամենուն ըրածին հաւատանք . վերջի

դատաստանին ամենուն առջև պիտի ծաղր ըլ-
լանք: Բայց չէ թէ ընտղներուն, հասլա քննողնե-
րուն պէտք է հաւատանք: Քննողն Աստուած է,
իր առջև կաքաւողն իրեն կ'ընտրէ:

65. Մարդս անվաաս չկրնար քալել աս իրեք
տեղս. այսինքն օգուն մէջէն, ջրին երեսը, և կրա-
կին մէջ: Արդարը ոչ երբէք կը մեղանչէ. բայց
աս իրեք տեղին մէջ քալելէն շատ պէտք է զգու-
շանայ. մեղքերուն կրակին մէջ, յանձնասպաստա-
նութեան օգուն մէջ, և հանգստութեան ջրին մէջ:
Դաւիթ կրակէն կը զգուշանար, օգուն մէջ չէր
պտրտէր, բայց ջրին մէջ մտաւ ու ընկրղմեցաւ:
Արակին մէջ պտրտողը շատ դժուար է որ ըսնա-
նայ. օգուն մէջ պտրտիլ ուզողը կ'իյնայ՝ կը ջախ-
ջախի. բայց ջրին մէջ իյնողը որչափ շուտ ելլէ,
այնչափ աղէկ կը բժշկուի:

66. Որչափ մէկը սաստիկ հալածուի մարդիկ-
ներէն, այնչափ Աստուծոյ կը մօտենայ: Դաւիթ
քանի որ կը հալածուէր՝ Աստուծոյ սիրելի էր.
դադրեցաւ հալածուելէն. սկսաւ պաղիլ Աստու-
ծոյ սիրոյն: Բայց իրեն առջի բարի գործքերուն
համար Աստուած նորէն իր տղուն ձեռքով սաս-
տիկ զինքը հալածեց ու առջի սիրոյն մէջ հաս-
տատեց:

67. Աւաղանին որ կողմէն որ ծակ բանաս,
բոլոր ջուրը դէպ 'ի հոն կը վազէ: Աւաղնորդն
ինչ ճամբայ որ ցուցնէ, ժողովուրդն ան ճամ-
բէն կ'երթայ. Դաւիթի օրինակը ասանկ մեղի կը
սորվեցնէ:

68. Տանտէրը թէ որ դրան տեղ պատուհա-
նէն կը մտնէ, ինքզինքը գողի տեղ դատաւորի կը
մասնէ: Ազոնիան անդրանիկ էր, իրաւունք ու-
նէր թագաւորութեան. բայց կասկածելով ու-
ղեց որ անիրաւ ճամբով ձեռք ձգէ, չկրցաւ,
չկրատուեցաւ. թագաւորութենէն արդէն զրո-

կուած, կեանքէն ալ զրկուեցաւ: Ար բանին որ
արդարութեամբ չես հասնիր, ալ լաւ է որ համ-
բերութեամբ կենաս, քան թէ ծուռ ճամբով մէկ
փոսէն մէկալ փոսն իյնաս:

69. Թէ որ շուքին տեսքին կը զմայլիս, հապա
թէ զինքը տեսնես, ի՛նչպէս պիտի ապշիս: Սողո-
մոնի պատարագը՝ հաղորդութեան շուքն էր.
տաճարը մեր եկեղեցւոյն օրինակն էր. Աստուած
արեւ ծագեցաւ. շուքը կորսուեցաւ. բուն տա-
ճարը մեր առջեւ երեցաւ: Հրեշտակներ երկրն-
քէն մեր տաճարն ու պատարագը տեսնել կը փա-
փաքին, մենք, աւանդ, կը ցաւինք որ անոր շու-
քին կարօտ մնացինք. աս ի՛նչ անխելքութիւն:

Սաբայ թագուհին որ Սողոմոնի ծառաներուն
երանի տուաւ, թէ որ հիմա գար զՔրիստոս
տեսնելու, Քրիստոսի ծառաներուն վայ կու-
տար, զարմանալով Քրիստոսի խմաստութեանն
ու դրած կարգերուն վրայ: Իմաստուններն ա-
սոր պատճառը գիտէն, ագէտները պէտք չէ որ
գիտնան: Ասան զի ո՛վ որ քիչ մը խելք ունի՝ մէ-
կէն կ'իմանայ թէ Քրիստոսի կանոններովը կար-
գի չեկողին քանի վայ պիտի ըլլայ. ագէտները
Թող նախ սորվին թէ զՍողոմոն Քրիստոսին բաղ-
գատել կ'ըլլայ:

70. Արքայութեան աղուորութեանը խելք
չհասնիր. բայց դռները ծածուկ տեղուանք բա-
ցուած են: Ես կը յայտնեմ, ուղողը թող եր-
թայ: Յորայ աղբիւսին մէջէն արքայութեան
դուռ բաց կայ. Սողոմոնին պաշտար մ'երթար,
ան կողմը պատ հիւսած է:

Ռորովամ որչափ տղայամիտ է եղեր. մեր ա-
մենուս առջև ծիծաղ եղած է: Բայց Ռորովամ
ի՛նչ պիտի ջընէր՝ թէ որ մեր ըրածը լսէր: Աս-
տուած մեզի կ'ըսէր, ճշմարտութիւնը կը քարո-
ղէ, խիղճերնիս կը վկայէ. աս ամէն բաները

կ' արհամարհենք ու մեր կիրքերուն կը հեռանինք ,
և ուրիշը ծիծաղելի կը համարինք :

71 • Թագաւորութիւնը Աստուած տուաւ Յե-
րորովամայ • անոր համար ան ալ զԱստուած թո-
ղուց՝ ուրացաւ , որ չըլլայ թէ Աստուած նորէն
իրմէն ուզէ տուածը ետ առնէ : Ի՛նչ մեծ անմը-
տութիւն : Բայց թէ որ մեր ըրածը մտածես
ի՛նչ պիտի ըսես : Աստուած մեզի տուաւ աս աչ-
խարհքս • ով որ աղէկ բանեցրնէ , անոր յաւի-
տենական բարիքը խոստացաւ տալ : Մենք հիմա
զԱստուած դործքով կ'ուրանանք , խոսամունքն
ոտքի տակ կ'առնենք որ չըլլայ թէ երբ մեռնինք՝
զաշխարհք թողունք , անոր տեղը նորէն ուրիշ բա-
րիքներ առնենք :

72 • Թէ որ Աստուծմէ պարգև կը խնդրես ,
խնդիրքներուդ կատարուելուն ի՛նչ բան յայանի-
նչան կը սեպես • ան որ ուզածներդ սկսիս առ-
նել , թէ ան որ ունեցածէդ ալ զրկուիս : Աս-
հարցմունքս ծիծաղելի կ'երևնայ • բայց սրբոց
առջև ասիկայ տարակոյս չէ , հասրա հասարակ
մարդկանց մտքին դէմ ճշմարտութիւն : Եղիա զը-
նաց Սարեփի թացւոյն ապրուստ հոգալու • բայց
առջի բերանն անոր մնացած կերակուրն ալ ինքն
ուզեց • անիկայ ճանչցաւ թէ Աստուծոյ է , չտա-
րակուսեցաւ , տուաւ ունեցածն ալ որ ուտէ :
Աստուած նախ մարդուն սերը կը փորձէ , և սի-
րոյն չափով պէտք եղածը սիրով կը հասու-
ցանէ :

73 • Թշնամւոյն յաղթել ուզողը՝ շատ և զօրա-
ւոր մարդիկ պէտք է ունենայ հետը : Եղիա կ'ու-
զէր հարիւրաւոր քուրմերուն յաղթել • երբ տե-
սաւ որ իր հետը կարիճ զինուորներ չկան , զԱս-
տուած հեան առաւ : Տեսնողը զինքը մինակ կը
կարծէր • բայց զարհուրած՝ յաղթել անոր չէր
կարծէր , վասն զի Աստուծոյ դէմ ուժ կայ որ

բաւէ : Ով որ Աստուծոյ կ'ապաւինի , անոր ուժն
անբաւ է :

74 . Աստուած մարդու ան բանը կու տայ , ինչ
որ մարդ Աստուծմէ կը յուսայ : Մարդն Աստու-
ծոյ նման է . բայց երբոր չարանայ , կարծէ թէ
Աստուած ալ իրեն սէս չար է . չարէն ով բարի
կը յուսայ : Աքաաբ չար էր , զղջալու տեղ Աս-
տուծմէ չարիք յուսալով , կ'ուզէր որ Աստուած
իրեն չխառնուի . Աստուած ալ կատարեր էր ա-
նոր ուզածը , բայց երբոր Աքաաբ ստիպեց Աս-
տուծոյ հարցուց , Աստուած ստեղ չգիտեր , ա-
նոր համար Աստուած ան ալ իմացուց իրեն :
Ով չգիտեր թէ Աստուծոյ երեսէն ինկած մարդը
կորսուած է : Ես շատ մարդ գիտեմ որ Աստուծ-
մէ աւելի աշխարհք կը սիրեն , ուստի կուզեն որ
Աստուած իրենց չխառնուի , ազատ ըլլան . բայց
չեն գիտեր որ Աստուծոյ ձեռքէն ելլողը՝ սասա-
նային կը մտանուի . աշխարհքիս մէջ ինքնիշխան
մարդ չգտնուիր :

75 . Զերմեռանդներուն վրայ ծիծաղողին Աս-
տուած ինչ պատիժ կուտայ : Թէ որ միտակ է ,
կը թողու որ զղջումի գայ . իսկ եթէ շատուոր տես-
նէ , յիտուն յիտուն զանոնք կը ջնջէ :

76 . Տղաքը՝ երկու կերպով կը կրթէ Աս-
տուած . թէ որ աղէկ ծնողաց պատահեր են՝
կ'որհնէ ու շնորհքը կ'աճեցընէ . բայց թէ երեսի
վրայ մնացած՝ չարը բարիէն ընարեւ չեն սորված ,
արջի առիւծի բերան զիրենք կը մտանէ : Որչափ
աղաք երեսի վրայ մնացած են , որ չար գործքեր
ընել տալով՝ կտոր կտոր կ'ընէ զիրենք սասանան .
Թող մտածեն ծնողք թէ Աստուծոյ ինչ պա-
տասխան տան :

77 . Թշնամիներուն մէջը կեցած Եղիսէն՝ անե-
րևոյթ զօրքերը կը պաշտպանեն : Որչափ փարձու-
թիւնը զօրաւոր ըլլայ , Աստուծոյ ապաւինողը

կը յաղթէ անոր: Սատանային զէնքերը քանի՞
տեսակ են: Թէ որ յաղթել ուզես անոր, առանց
զէնքի մը իր զէնքերուն ամէնն ալ կ'աւրես, թէ
որ աչքդ դէպ'ի երկինք դարձնես:

78. Շատ մարդիկ որոնք իրենք զիրենք բարե-
գործ կը սեպեն՝ Աստուծոյ չարիք կ'ընդունին,
անոր համար շատն ալ զԱստուած անիրաւ կը
համարին: Բայց Յէոնն արդեօք անիրաւեցաւ
Աստուծոյ, թէ Աստուած Յէոնին: Ա՛լ լաւ է
զԱստուած ջճանչնալ, քան թէ ճանչնալ, ու կէս
մը Աստուծոյ ծառայել՝ կէս մըն ալ իր կամքին:

79. Ով որ կ'ուզէ բան մը ջմուռնալ, նշանը
վրան կ'առնէ՝ աչքին առջև կը սպահէ: Իսրայէլ-
լացոյ տասուերկու ցեղն ալ Յակոբայ որդիքն
էին՝ ինչո՞ւ տասը ցեղը կռասպաշտ եղան, ու
մնացած երկուքը՝ շատ անգամ աստուածապաշտ:
Ասոնց քաղքին մէջ Աստուծոյ տաճարը կար որ
անարգելէն կը զգուշանային, մէկաշնոնք իբրև
թէ մինակ մնացած՝ ուղածնին անվախ կ'ընէին:
Ով որ Քրիստոսի կամ սուրբերուն նշանը քովը
միշտ կը սպահէ, անոնց յիշատակովը շատ չարիք-
ներէ ազատ կը մնայ. թէպէտ իրեն անօգուտ բան
երևնայ:

80. Չարը բարիէն՝ կրակը ջրէն նայնչափ տար-
բեր են: Թէ որ ջուրը երկար ատեն կրակին քով
սպահես, կը ցնդի կը կորսուի. ամէնեւին չնօսե-
ցրնելն է ապահով ճամբայ: Յովսափատ Ա. քաա-
րին հետ բարեկամութիւն ըրաւ, Ա. քաաք զգեստ
նեքն անոր տուաւ. Յովսափատ թէ որ առջև
բարեգործութիւնները ջունենար, ան ատեն կ'այ-
րէր կը կորսուէր: Չար մարդու հետ ընտանու-
թիւն պէտք չէ ունենալ:

81. Աստուած կը բարկանայ երկու տեսակ
մարդկանց, մէյմը իր թշնամւոյն՝ մէյմ՝ ալ իր
ծառային. բայց իր ծառան կը խրատէ թշնամւոյն

ձեռքով, իսկ թշնամին կը պատժէ ինքն իր ձեռքով: Չդիպցողը կարծէ թէ Աստուած իր ծառան քան զթշնամին սաստիկ կը պատժէ. բայց ասով Աստուած մեր վրայ ունեցած դուժը մեզի կը սորվեցընէ: Իր ծառաներուն քաշած պատիժը՝ պատժողին կենացը հետ կը լմննայ. բայց քաշած ասնջանքներնուն վարձքը՝ Աստուծոյ հետ անվախճան կը մնայ: Գոթողայի ձեռքով զՅուդան խրատեց Աստուած, բայց պահեց Յովանն ու անով նորէն զազգը մխիթարեց. իսկ զԳոթողիան յաւխտեան տանջանքի մատնեց:

82. Ամէն մարդու ինչ որ կ'իյնայ՝ անկէ դուրս բանի սէտք չէ խառնուի: Ողիա թագաւորը շատ բարեպաշտ էր. կարծեց թէ բարեպաշտ մարդը կրնայ խառնուիլ ամէն բանի, դնաց բուրվառը ձեռք առաւ ու մէկէն բորստեցաւ:

83. Շատ անգամ բարիք ընող մարդիկ՝ Աստուծակ պատիժ կ'ընդունին. Մանասէն չարիք ըրաւ ու բարիք ընդունեցաւ: Չարն ալ բարին ալ երբոր իրենց գործքին մէջ անհաստատ կ'ըլլան, բարին իր վարձքը կը կորսընցընէ, չարն ալ իր պատիժը:

84. Յովսիա որչափ որ բարեպաշտ էր, այնչափ շուտ ու ցաւալի մահուամբ մեռաւ: Աշխարհասէր մարդիկ ասոր վրայ կը զարմանան ու զԱստուած կ'արհամարհեն. իսկ աստուածասէրն ասով Աստուծոյ անհուն բարութիւնը կ'իմանայ ու կը դովէ: Ասան զի աշխարհասիրաց բարի երեցածը՝ Աստուծոյ առջև չար է, և իր ծառաներն անկէ կը զգուշացընէ: Եր ճշմարիտ բարին տայ իրենց: Աշխարհքիս ամէն դէշ փորձանքները մեծամեծ վարձքերու պատճառ են՝ Աստուծոյ սիրոյն համար քաշողին:

85. Աստուած ինչո՞ւ կ'ուշացընէ խոստացեալ մեղաւորներուն պատիժը, ողորմած ու արդար

ըլլալուն համար : Ողորմութեամբ կ'ուշացրնէ որ դառնան, արգարութեամբ կը պատժէ որ խնայան : ողորմութեամբը՝ տկարութեամբ սխալող մեղաւորներուն յոյս կուտայ փրկուելու . իսկ արգարութեամբը անղեղ մեղաւորները կը յուսահացրնէ, խնայրնելով թէ պատիժը կ'ուշացրնէ, բայց ետքը ամէն պատիժ մէկէն վրանին կը թափի : Յուդայի թագաւորներուն պատիժը որչափ ուշացաւ . բայց երբոր անոնք իրենց շարութենէն ետ չկեցան, Աստուծոյ արգարութեան ձեռքը մատնուեցան :

86 . Թէ որ ուրիշի կորստեանը պատճառ ես, պէտք է լաս՝ պէտք է ցաւիս, չէ թէ հանգիստդ նայիս : Աբիսողոմին գէշ ըլլալուն Գաւիթ ինքզինքը պատճառ կարծելով՝ այնչափ կը ցաւէր, որ ճար չէր ըլլար անոր լալուն ողբալուն :

87 . Ի՞նչ կը զարմանաս Սողոմոնին վրայ թէ այնչափ շնորհք առաւ, ու ի՞նչպէս Աստուծոյ դէմ ելաւ : Շնորհքը զէնք է որ Աստուած մեզի կուտայ . մենք որուն դէմ ուղէնք՝ կը բանեցրնենք : Թէ որ Սողոմոնի կարողութիւնը շատ էր, Աստուծոյ դէմ պատերազմներ շատ կ'ընէր . թէ որ ալ շատ յօժարութիւն դու ունիս, Սողոմոնէն շատ աւելի ասերախտ և չար կը դանուիս : Սողոմոն իր շնորհքներն Աստուծմէ առաւ . մեզի ալ կեանք և ոյժ Աստուած տուաւ, հեան ալ անթիւ վարձք խոստացաւ . առ ամէն բան կը մոռնանք ու կ'ըսենք թէ կիրքերնուս չենք կրնար յաղթել . վայ մեզի : Աստուծոյ կրնանք յաղթել : Բայց ան դարձեալ կը ներէ, միայն թէ ճանչնանք ու զղջանք :

88 . Ծառը գեանէն կը բուսնի . գեանէն ոյժ կ'առնէ, ու կ'աճի . գետինը թէ որ ցամքի, ինքն ալ կը գեղնի կը վտանայ . բայց թէ որ հանես առկէն՝ բոլորովին կը չորնայ : Տոբիթ շատ նեղու-

Թիւններ քաշեց, բայց իր յոյսը միշտ Աստուծոյ վրայ էր. ինքզինքը կը ճանչնար Աստուծմէ, նեղութիւններն ալ ընդունեցաւ Աստուծմէ, եաքը նորէն մխիթարուեցաւ Աստուծմէ: Մենք երբոր Աստուծմէ նեղութիւն մը կ'ընդունինք, արմատով կը բաժնուինք իրմէ ու դժոխքի նիւթ կ'ըլլանք:

89. Յուզիթայ ո՞ր բանին պէտք է զարմանալ: Հողեփեանէսի յաղթելուն: Թէ որ խելքով մտածես, տա է նիւթ տարակուսի. վասն զի մտքէ չանցած խոնարհութեամբ մը յաղթեց:

Հպարտը Աստուծոյ թշնամին է, խոնարհը՝ հպարտին դէմ կռուելու՝ Աստուծոյ ձեռքի գործիքն է. իսկ հպարտին գործիքը՝ երկրթէ շինած զէնքերն են: Հողեփեանէս զէնքերը ձեռք առաւ, Աստուած զՅուզիթը: Հողեփեանէս քաղաքները պաշարեց, Աստուած Յուզիթայ ձեռքովն անոր մտքը պաշարեց: Հողեփեանէս քաղքին ջուրը կարեց որ մէջինները մեռնին, Աստուած իրեն գլուխը կարեց ու պատերազմը ընկուց:

90. Ի՞նչ է պատճառն որ նոյն գործքը՝ մէկուն վրայ խոնարհութիւն կը սեպուի, մէկաւրին վրայ հպարտութիւն: Երկուքին ալ դիտմունքն է: Մուրթքէն Աստուծոյ փառացը անարգանք սեպեց՝ Աստուծոյ անիծած ազգին երկրպագութիւն ընելը, իբրև թէ անոնց ծախը կուռք պաշտել՝ Աստուծոյ թշնամին պատուել է. Աստուած ալ անոր պաշտպանեց: Բայց թէ Մուրթքէն մեղի պէս իրեն պատուոյն նախաաինք սեպեր ծախը ու Աստուծոյ փառքը իրեն պատրուակ առնէր, Աստուած զան ալ չէր ծածկէր, կը յայտնէր:

91. Աստուած մարդը մէկ տեսակ ստեղծեց, բայց մեղաւորները երկու տեսակ կ'որոշեն. մէյ-

մը իրենք՝ որ ամէն չարիք կը գործեն, մէյմ՝ ալ Աստուծոյ ծառաները՝ որ ամէն մեղքէ կը զգուշանան : Թէպէտ բերնով աս տարբերութիւնը չեն խոստովանիր, բայց մտուրնին հաստատ դրած ըլլալնուն գործքով կը վկայեն : Իրենք ամէն անկարգութիւն անխիղճ կ'ընեն՝ ակար մարդիկ ենք ըսելով : Իսկ թէ որ Աստուծոյ ծառաներէն մէկը արգարութեան ճամբէն ծած տեսնեն, կը դատեն ու կը բամբասեն . բայց չեն գիտեր որ ասով իրենք զիրենք կը դատապարտեն : Արդարը բարին ճանչցեր է՝ գործելու համար . մեղաւորը բարին ճանչցեր է՝ արդարները դատելու համար : Արդարները իրենց պակասութեանը համար մեղաւորներէն կը դատուին . բայց մեղաւորները Աստուծմէ պիտի դատապարտուին : Անոր համար շատ աշխատեցան մարդարէները, Իսրայէլացիքը դարձի բերել չկրցան :

Յ2 . Թէ երկիրդ պարարտ է, բոյսերը զօրաւոր կ'ըլլան . բայց թէ երկիրդ է գէշ, փուճ ակող մի աշխատիր հարիւրաւոր պտուղ անելու : Դանիէլ իր ընկերներովը պարարտ երկրի մէջ, այսինքն Աստուծոյ սիրոյն մէջ ծրած ծաղկած՝ միայն հնտեղէն ուտելով գիրցան հողով և մարմնով քան զամէն խելացի ու փափկասուն Քաղդէացիները : Իմաստութիւն թէ կ'ուզես սորվիլ, վառէ սրախդ մէջ Աստուծոյ սէրը, անով ամէն բանի վրայ շիտակ դատաստան կ'ընես՝ քան ամէն աշխարհքիս խելացիները :

Յ3 . Արակը ամէն բան կ'այրէ, բայց զոսկին կը մաքրէ ու կը փայլեցընէ : Նոյն կրակով իրեք մանկունքը փայլեցան, անով հնոց վառողներն այրեցան : Նեղութիւնը արդարներուն հանգստեան պատճառ կ'ըլլայ, չարերուն յաւիտենական տանջանքին համը առնել կուտայ :

Յ4 . Ծշմարտութիւնը սիրողին դէմ՝ ստութիւնը

փուճ տեղ ահաաները կը սրէ : Դանիէլ գուրը կը
ձգուի , առիւծներն իրմէ կը զարհուրին . գուրէն
գուրս կը հանուի , անողամ մարդիկ անկէ յաղ-
թուած կը պատժուին : Շխտակ խօսողէն սա աշ-
խարհքիս մէջ առիւծի պէս զօրաւոր մարդիկ կը
վախեն , անոցին ալ սատանաները կ'ուզեն զինքը
խաղք ընել ու իրենք կը տանջին :

95 • Արևուն վրան ամպերը գանգառ ունին .
Երբեմն զիրենք կը սլաշտպանէ՝ բարձր տեղուանք
կը պահէ , երբեմն ալ կը թողու որ վար թափին
կորսուին . բայց անիրաւ է գանգառանին : Իրենք
երբոր կը թանձրանան՝ արևուն ուժը չեն սեպեր՝
կը ծանրանան կը թափին : Այսպէս անիրաւ գան-
գառ կ'ընեն մարդիկ Աստուծոյ ու իր քարոզիչ-
ներուն վրայ՝ թէ զիրենք աղէկ խրատներով գէ-
շութենէ չեն զգուշացրներ : Երբոր մարդիկ խրա-
տի կարօտ ըլլան , Աստուած զՅովնան բռնի կը
բերէ քարոզելու որ զղջան . բայց երբոր իրենք
չարխքներով թանձրանան , Աստուած ի՞նչ ընէ ա-
նոնց : Չէ թէ քարոզիչներուն պակասութեանը հա-
մար մարդիկ գէշ կ'ըլլան , հասլա մարդկանց գէ-
շութեանը համար քարոզիչները կը պակասին :

96 • Աստուածասէր մարդիկ թէ որ սատանայէն
խաբուեր գէշցեր են , թող չյուսահատին , դառ-
նան , սրտերնուն մէջ կործանած Աստուծոյ տա-
ճարը շինեն : Աստուծոյ յիշատակը՝ իրենց պղտո-
րած մտքերնուն մէջ պահուած է , հանեն բռնիկ-
ցրնեն : Երուսաղեմայ տաճարին նորոգութեամբ
Աստուած մեզի սա կը սորվեցրնէ :

Թէ երկինք ելլես՝ թէ գժոխք իջնաս , ճշմար-
տութիւնը անյաղթելի կը գտնաս : Չարերը ամէն
չարիք կ'ընեն անվախ անամօթ . բայց երբոր
խղճմտանքնին կը բողոքէ որ պիտի դատէ զիրենք
ճշմարտութիւնը , ամէն ուժէ կ'իյնան , կը յու-
սահատին : Բարակ մտածող մարդիկներու , զօ-

բաւոր ու շատոր մարդիկներու, միամիտ խեղճ մինակ մարդ մը ճշմարտութեամբ կը յաղթէ և ամէն խորհուրդնին կը կործանէ : Թէ որ ինձի չես հաւատար, Զօրաբարէլ պատճառներով զքեզ կը համոզէ :

97. Թէ Աստուծոյ յուսացեր ես, մի վախեր, բան չկայ որ չյաղթես : Ըստ մարդիկ Աստուծմէ բարիք կը յուսան, բայց քիչ կան որ ընդունին : Ասան զի Աստուած ամենուն վրայ ձախորդութիւն կը խրկէ որ յոյսերնին փորձէ, և յոյսին վրայ հաստատ մնացողները միայն՝ առատ պարգևներով կը վարձատրէ : Պաղոմէոս հրեաները բռնեց, կապեց. անոնք մեռնելու պատրաստուեցան. բայց որովհետեւ յոյսերնին Աստուծմէ չկարեցին, ամէն փորձանքէ յանկարծ ազատեցան :

98. Զագ մը երբոր իր մօրմէն հեռանայ, ամենեին չհանգչի ինչուան մեռնի կամ մօրը քով մօտենայ : Հրեայք Աստուծմէ հեռացան, այլազգեաց մասնուեցան. փորձանք չպակասիր իրենց՝ ինչուան նորէն Աստուծոյ երթան մօտենան : Թագաւորը իր զօրքը պատերազմի կը տանի, քաջութիւն ընողներուն պարգև ալ կը բաժնէ. բայց ոչ երբէք փորձի համար թշնամեաց ձեռքը զանոնք գերի կը մասնէ : Աստուած իր ծառաները միշտ կը փորձէ. բայց երբոր Սրբութիւնն այլազգեաց ձեռքը կը մասնէ, անիկայ փորձ չէ, պատիժ է. զղջում կ'ուզէ որ դարձնէ. հոն քաջութիւն չբանիր :

99. Ամէնքը կարծեն որ միշտ ազէկ բանի կը փափաքին. բայց ճշմարիտ ազէկ ո՛վ կը փափաքի : Ըստ մարդիկ Ըամոնէիսն պատմութիւնը կը լրսեն. բայց մտքերնէն չէ անցած որ ըսեն, թէ « Մենք ալ տղոցմով Աստուծոյ սիրոյն համար ջարդուէիմք մեռնէիմք » : Աւրիշ կարիճ ազաբներ ալ տեսնելով՝ անանկ աղաքներ ունենալ կը

փափաքին • բայց ո՛ւր են ան կարիճները • Շամու-
նէն իր որդիքներովը բոլոր աշխարհքիս ու երկրն-
քին առջև փառաւորուած կեցեր է : Ահա ասանկ
են մարդիկ • աղէկը կը ճանչնան ու գէշին կը փա-
փաքին : Երանի՛ ան ծնողաց որ աղէկը կը ճանչ-
նան • թէ որ չեն կրնար ունենալ, գէթ գէշէն կը
զգուշանան • տղաքնին արքայութեան որդիք ընել
կը ջանան, եւ Աստուծոյ կամքովը անոնցմէ բաժ-
նուիլն ալ բոլոր սրտանց յանձն կ'առնեն • զա-
նոնք յաւիտեան պիտի վայելեն :

100 • Աշխարհքիս բնակիչները Աստուծոյ հը-
պատակներն են • և հպարտ մարդիկ Աստուծոյ
դէմ դէնք կը վերցընեն • Աստուած կ'ուզէ մէկէն
ջնջել հպարտ ու ասպտամբ մարդը • բայց որով
հետև մէկալ հպատակներէն ալ ասպտամբներ կան
որ իր օրէնքին չեն հնազանդիր, թող կուտայ որ
հպարտը զանոնք չարչարէ որ խրատուին՝ իրեն
դիմեն • հպարտն ալ սաստիկ բարձրէն խնալով
ալ սաստիկ պատժուի, ուրիշներուն ալ զգուշու-
թեան օրինակ ըլլայ : Ուստի թէ որ կ'ուզես հը-
պարտ մարդու մը յաղթել, քու ուժիդ մի վստա-
հիր, թէ չէ՛ կը յաղթուիս • վասն զի Աստուած
է որ զքեզ կուզէ պատժել : Ապահով ճամբայ
կ'ուզես • Աստուծոյ ապաւինէ, զԱստուած հետդ
հաշտեցուր : Մատաթիս քահանան իր տղոցմով
քեզի ըլլայ օրինակ :

101 • Աստուծոյ երկայնամտութիւնը չափ չունի •
բայց ով որ կ'արհամարհէ՛ անիկայ պատիժը մէ-
կէն կ'ընդունի : Անտիոքոս Աստուծոյ երկայնամտու-
թեան այնչափ դէմ դրաւ որ Աստուած ալ բար-
կացաւ պատժեց զինքը, իմացուց թէ Աստուած
երկայնամտութեամբը չյաղթուիր ու անդարձ կե-
ցողը կը պատժէ :

102 • Առաջնորդն իր կենաց մէջ աս եօթը
բանս գիտէ • Ա • միշտ Աստուծոյ ապաւինի • Բ •

ամէն աշխատանք յանձն առնէ, չէքանի. Գ. մեռնելէն չվախէ. Գ. վախճանը աչքին առջև ունենայ՝ Աստուծոյ փառքը՝ ժողովըրդեան օգուտը, անկէ դուրս բանի չխառնուի. Ե. Աստուծոյ և իր դրած օրէնքին մէջ՝ մէկ կերպով մը զանցառութիւն չընէ. Զ. կիրքով մէկու մը բան չհրամայէ, յանցաւորներն ալ անուշութեամբ իրենց վճիռը իրենց բերնէն առնելով ու կակողցրնելով դատէ. Է. ինչ և իցէ խեղճ մարդու կարծիքն իր կառավարութեանը վրայ՝ առանձին լսելու ջանայ, եւ առանց կրքի կամ նախապաշարման քննէ լսածն ու անոր յարմարցնէ զինքը. խօսքին շատակ ըլլալը նայի, չէ՛ թէ ըսողին խօսքի տէր մարդ ըլլալը: Յուդա Մակաբէն ասոնցմէ առջինին ու ետքինին մէջ թուլցաւ, հոն մէկէն ինկաւ մեռաւ: Այլ որ ուզէ՝ կը ճանչնայ թէ ամենէն դժուար ան երկուքն է:

103. Բարին ոչ երբէք չարիք կ'ընդունի. չարը՝ բարեաց ոչ երբէք կը հանդիպի. թէ որ չարն ըզբարին մեռուց, ուրիշ բան չըրաւ՝ բայց եթէ անոր երթալու ճամբան կարծրցուց. բայց ինքն անոր մարմնոյն փնասելով՝ իր հոգին վերաւորեց ու չարաչար տանջանքներու մէջ ինկաւ, հոգւով անդին պիտի տանջուի, մարմնով ալ ասդին քանի որ ասորի՝ խռոված սրտով միշտ կը չարչարուի:

104. Աստուած որ կ'ուզէ մէկու մը վիշտ հասցրնել՝ կամ փորձելու համար եւ կամ պատժելու, երբ կը տեսնէ որ անիրաւ մարդիկ նոյն ուզածը իրենց չարութեանը համար կ'ուզեն կատարել, թող կուտայ որ ընեն. ասով Աստուած իր ուզածը առաջ կը տանի, և ետքը անոնց չար սրտին փոխարէնն ալ տեղն 'ի տեղը կը հաստուցանէ: Աստուած հրէից իշխանութիւնը կ'ուզէր վերջացրնել. հերովդէս խարդախութեամբ ետէն ինկաւ որ ինքն իշխէ. կարծեց թէ իր խելքով ուզածն առաջ կը տանի: Ա՛րչափ մարդիկ անիրաւութեամբ

ուրիշի յաղթել կը ջանան . ու երբոր, ուզածնին յաջողի՝ իրենց խելքը արդարութենէն վեր կը սեպեն , բայց օր կուգայ՝ կ'իմանան որ ինչ սխալ բան մտքերնին դրեր են :

105 . Թէ և սեղանի վրայ շատ կերակուր հանուի , նստողները իրենց չափովը կ'ուտեն : Աստուածաշունչին սրամտութիւնները խիստ շատ դիտելիք մեզի կը հանեն , բայց կարդացողները իրենց չափովը պիտի քաղեն . ուրեմն քիչն ալ մեզի բաւական սեպենք : Աս նմանութիւնը անոնց առջև կը գօրէ , որոնց մարմնոյն ախորժակը քան զհոգիներունը խիստ շատ է : Թէ որ քիչ մը խելք ունիս՝ եկու ասանկ մտածէ . մարմիննիս մեծնալու համար ամէն օր սպրուստ կ'ուզէ , բայց պիտի աշխատի որ դանէ : Թէ որ տաս ամէն օր ալ՝ նոր տեսակ համով բաներ , կը զուարճանայ կ'ախորժի . իսկ թէ չտաս հարկաւորն ալ , ինքը կարօտ մնալուն համար կը սկսի ուտել ինչ որ դանէ , ու կը ինասուի կը մեռնի : Հոգւոյն կերակուրն է ճշմարտութիւնը , ուստի պէտք է որ միշտ ճշմարտութիւնը քննես . թէ չէ՝ հոգիդ չկրնալով համբերել , ստութիւնները ճշմարտութեան տեղ կ'ընդունի ու քիչ ատենէն Աստուծմէ կը դրկուի կը մեռնի : Անոր համար ամէն օր ամէն ատեն սուրբ գիրքը քննելով՝ հոգւոյն միշտ ճշմարտութիւնը յիշել տալու է , ինչուան մարմնէն բաժնուի , ու ճշմարտութեան աղբիւրին մէջ ընկղմի և ապրի յաւիտեան :

Աս սրամտաւ նոր կտակարանէն ալ մասնաւոր խրատ չհանեցինք , վասն զի Յիսուսին և առաքելոց ամէն մէկ խօսքը ու գործքը՝ բարի քրիստոնէին մէյմէկ մտածութեանց նիւթ են՝ թէ որ սրտանց ու մտազրութեամբ կարդայ :

ՍՈՒՐԲ ԳՐՈՅ

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԴԱՐ Ա.

ԱՏ
ՅԻ ԷԶ

Ադամ սպեղծուեցաւ .	0	15
Կայեն ծնաւ .	1	16
Աբել ծն .	50	16
— Մեռաւ 69 ամբուանն .	99	16
Սէթ ծն .	151	16
Ենոչ ծն .	259	17
Կայեն շինեց Ենոչ Կաղատ .	515	16
Ենոչ ծն .	625	17
Մաթուսաղա ծն .	688	17
Ադամ մեռ . 950 ամբուանն .	950	
Ենոչ վերացաւ 564 ամբուանն .	987	17
Սէթ մեռ . 912 ամբուանն .	1042	
Նոյ ծն .	1057	
Ենոչ մեռ . 905 ամբուանն .	1140	
Յաբել ծն .	1337	
Սէթ ծն .	1559	
Մաթուսաղա մեռ . 969 ամբուանն .	1655	

* Քառսն ալ ջրհեղեղէն առաջ ծն . բայց ժամանակն անյայտ է :

ԴԱՐ Բ.

	Ա+	Ե
Ջրհեղեղ .	1636	18
Աշխարհայալ ինտ-ձիւն .	1774	24
Աշխարհայիլն կործանումը .	1812	24
Նոյ Տէր . 900 արժէ .	2006	
Աբրահամ ծն .	2059	25

ԴԱՐ Գ.

Աբրահամն կորումը .	2114	50
Իսմայէլ ծն .	2124	52
Սողոմ կործանեցաւ .	2157	41
Իսահակ ծն .	2158	56
Իսմայէլը ճամբեց Աբրահամ .	2143	56
ՍէՏ Տէր . 600 արժէ .	2138	
Իսահակ զոհ պիտի ըլլար .	2165	57
Սառա Տէր . 127 արժէ .	2175	57
Եսաւ և Յակոբ ծն .	2198	41
Աբրահամ Տէր . 175 արժէ .	2215	59
Յակոբ Լաբանիլն գնաց .	2275	43
— Քանան դարձաւ .	2290	46
Յովսէփ ծախուեցաւ .	2505	50
— Քանի դրուեցաւ .	2516	63
Իսահակ Տէր . 180 արժէ .	2518	49
Յովսէփ պարուեցաւ .	2519	55
Յակոբ Եգիպտոս գնաց .	2528	58
— Տէր . 147 արժէ .	2545	60
Յովսէփ Տէր . 110 արժէ .	2599	61
Մովսէս ծն .	2464	65
— Մարտիանայոց երկու խախաւ .	2505	64
— Եգիպտոսէն հանեց Ղիւրայեւացիս .	2545	71

ԴԱՐ Դ.	Աճ+	Էջ
Իսրայելացիք Կարճի ծովէն անցան .	2545	75
Մանանաս իջնալ սկսաւ .	2545	77
Աճաղէիացոց ջարդը .	2545	78
Տասը պատուիրանք .	2545	80
Խորանին շինութիւնը .	2545	81
Նաբադայ պատիժը .	2548	84
Լորամարգին .	2544	84
Լքաբեաները .	2544	86
Կորիայ պատիժը .	2545	86
Մարիամ Տոմ . 126 փրձ .	2546	90
Յոբայ պատճառաբանելու աս Տիջոնէրուս Էղած կ'երևանայ .		50
Ահարոն Տոմ . 125 փրձ .	2546	91
Պղնձե օջ .	2546	92
Բաղասանս շարաբիանը .	2585	92
Մովսէս Տոմ . 120 փրձ, ու իշխեց 40 փարի .	2585	94
Յորդանանէն անցան Իսրայելացիք .	2585	94
Երէտով ու Գայի առանտեցան .	2584	96
Աւեպեաց երկիրը Բաթնեց Յեսուս .	2589	100
Յեսուս Տոմս . 110 փրձ . ու իշխեց 18 փարի .	2600	102
Գոթանիել իշխեց 40 փարի .	2640	105
Առվար . 80 .	2720	105
Սաթեգար Առվարայ վերջի փարին .	2720	104
Դեբովրա և Բարաի . 49 .	2769	104
Գեդեոն . 40 .	2809	105
Աբիմեւէք . 5 .	2812	109
Թովրա . 25 .	2855	111

	ԱՏ ՇԻ	ԷԶ
Յայիր . 22 .	2857	111
Յեթևայէ . 6 .	2865	111
Եսէբոն . 7 .	2870	115
Եղն . 10 .	2880	115
Աբդոն . 8 .	2888	115
Աս Տիգրիս Եղսա Նոռա՛նայ պարսնա՛նիւնը .	2889	122
Սամբսոն . 20 .	2908	114
Նելի . 40 .	2948	122
Սամուէլ . 22 .	2970	122

ԴԱՐ Ե .

Սառազ ընարուեցաւ .	2962	155
Դաւիթ ընարուեցաւ .	2964	141
Սառազ Տեա .	2979	150
Դաւիթ ապառիսարէց .	2996	156
Դաւիթ ապէնին Տահարաթամը .	5017	162
Սողոմոն թագաւորէց .	5017	164
Դաւիթ Տեա . 70 փրձե . 40 փարի թագաւորէ . Լէն Եփս .	5019	164
Սողոմոնի փաճարը .	5023	166
Սողոմոն Տեա . 40 փարի թագաւորէ Լէն Եփս . Թագաւորա՛նիւնն ալ Երիա Բաթնուեցաւ .	5059	169

ԹՊԳԻ Յոգայի և Բէ որչափ Բագասո րեցին	էջ	Թագասոր Իսրայէ լի և Բէ որչափ Բա գասորեցին	Աճ Յի	էջ
Ռոբոզան 17		Յերոբոզան 22		
սկսան ԹՊԳԵԼ	180	սկսան ԹՊԳԵԼ	5059	169
Աբիա 5	189		5077	
Ասա 41	190		5079	
		Նաբաթ 2	5080	172
		Բասան 24	5081	172
		Էլա 2	5104	172
		Չամբրի 7 օր	5105	175
		Արի 12	5105	175
		Ասաթ 22	5106	175
Աս Իլոցին էին Եղիա և Եղիսէ				175
Յոզաբաթ 25	191		5120	
Յոզաբաթ Իր		Ասաթ Ռոբոզի		
Յոզան որդին		որդին Իսրայելայ		
Իսրայելայ որդու	195	որդու	5156	178
		Յոզան Ռոբոզայի		
		աղին անցան 12	5158	179
Յոզաբաթ Իր Յոզ ան որդին ան ուսկից ըրան 7	195		5142	
Ռոբոզի 1	194	Յէն 28	5149	186
Գոբոզի 6	194		5150	
Յոզան 40	194		5156	
		Յոզաթա 17	5178	187
		Յոզան 16	5195	187

Թագաւորի Յոսիպ և թէ որչափ թագա- ւորեցին	էջ	Թագաւորի Իսրայէ- լի և թէ որչափ թա- գաւորեցին	Աճ Տի	էջ
Յովան սկսաւ Տարգարեանաւ աս Տիջոցիս				235
Ամսիս 29			3193	
սկսաւ թփրել	196	Յերոնիմ Բ 41		
		սկսաւ թփրել	3198	188
Ուրիս 32	196		3224	
Ունէկ և Յովէլ Տարգարեացան		100 փարի	3224	
Ամսիս		28 փարի	3247	
Եսայի և Աբդիոս Տարգարեացան		100 փարի	4249	264
		Միջոց 12 փարի	3250	
		Զարթիս 6 ամիս		188
		Սեղղոմ 1 ամիս	3262	188
		Մանայեմ 20	3263	188
		Փակիս 2	3273	188
		Փակէկ որդի Ռոմելայ 20	2373	188
Յովանիմ 16	197		3276	
Միսիս Տարգարեացաւ 50 փարի աս Տիջոցիս			3276	
Յովան Նիսուէ իսիուէցաւ աս աբէնէրը				236
Ասաղ 16	197	Ունէկ Փակէկն ըս- պաննէց, Բայց ինչ փարոսան իսու- լաննէն էր կրցաւ թագաւո- րել 22	3292	
			3304	189
Երէիս 29	198		3307	

Թագաւորի Յուդայի և Ռէ գլխի Թագաւորեցին	Աճ Յի	Էջ
Սամարիան առնուելոյս Սաղմանասարէն . և Իարայելի Թագաւորութիւնը Վերջացաւ, 254 փարի շէնքն էր զը .	5515	188
Տաբիթայ պարսնութիւնը առ Տիզոցիս եղաւ Նի- նուէ .	5524	211
Եղեիկայի հիւանդութիւնը .	5524	199
Նաւոստ սխաւ Տարգարէանալ առ Տիզոցիս .	5525	199
Սէնէթերիի Իսպորածը .	5556	200
Մանասէ 55 . սխաւ Թագաւորել .	5557	200
Մանասէն զԵսայի սղոցեց . գերի գնաց ու դարձաւ .	5557	200
Յուդիթայ պարսնութիւնը առ Տիզոցիս հանդի- պելոյս .	5594	215
Աճն 2 .	5594	201
Յովսիա 51 .	5595	201
Յովսիա Ենճը Իսապալպոսնէնէ Տարեց .	5404	201
Առ Տիզոցիս Երէթա Տարգարէացաւ 45 փարի . Բարոստը, Սոթոնիան ալ առ ապէններս էն .	5405	
Աքաիոս սխաւ Տարգարէանալ .	5411	201
Յովսիա Ժառասոր զապիկն ըրաւ .	5424	202
Յովսիա 3 ածիս, և գերի գնաց .	5428	202
Եղեիկ 3 գերի գնաց Բաբելոնն ու նորէն դար- ձաւ Երոսաղէմ .	5428	202
Դանիէլ Տարգարէացաւ առ Տիզոցիս 72 փարիի լաթ .	5455	226
Յեթոնիա 5 ածիս . ու գերի գնաց . սխաւ Թա- գաւորել .	5459	240
Եղեիկէ սխաւ Տարգարէանալ 22 փարի .	5446	225
Սեդեիա 11 փարի Թագաւորելէն էր զը Իս- ցուցած գերի գնաց Բաբելոնն Բուր ժողո- վարդուլ .	5446	240

ԳՍԲ Զ.		ԱՖ	ԵՐ''
Վիւրասի հրամանով 70 փարոսան գերութեան դարձան հրեայք փառաբար շինել սկսան .	5516	237	
Անգէոս և Չափարիս սկսան ճարգարհանալ .	5517		
Եսթերայ պարտութիւնը .	5536	218	
Նեէմի Երուսաղէմն պարտապնէրն սկսաւ շինել .	5669	283	
Առ Ռշոնիս Մաղաթիս ճարգարհացաւ .			
Եօթանասնից թարգմանութիւնը .	5749	9	
Եօթն եղբարց նահապահութիւնը .	5877	288	
Մաքաբիս քահանան , որ իշխեց 1 փարթ .	5878	246	
Յադաս Մակաբէ 6 .	5879	247	
Յոշաթան 18 .	5894	252	
— քահանայապետ ալ եղաւ .	5902	253	
Յոշաթանու և Շաաթի քաջութիւնները Ա պողոնիոսի դէմ .	5907	254	
Շաաթ 7 .	5912	254	
Յահան հիւրհանոս 31 .	5919	255	
Արիստոբուլոս Ա . որ թագաւոր ալ եղաւ 1 .	5930	256	
Ալեքսանդր Յաննէոս 24 .	5931	256	
Հիւրհանոս 3 .	5973	257	
Արիստոբուլոս Բ . 23 .	5988	257	
Հիւրհանոս Բ անգամ 16 .	5994	257	
Անտիֆոնոս 3 .	4014	257	
Տերուղէս 37 .	4017	257	
ԳՍԲ Է.		ԲՆ	ԷՐ''
Քրիստոս ծնաւ աշխարհիս 4033 փարթն .	4	266	
Քրիստոսի մկրտութիւնը .	30	275	
Քրիստոսի ճակը .	55	313	
Հոգոյն սրբոյ փառասփը .	55	323	
Սքեփանոսի քարխոջումը .	55	329	

Պօղոսի դարձը .	54	552
Կառնեւելիոսին դարձը .	58	553
Մաքսիմոսի աւելաբանը .	58	540
Պեպրոսի հոռոմ երկաւը .	42	
Մարիոսի աւելաբանը .	45	540

ԴԱՐ Ը .

Ղուկասոս աւելաբանը .	56	540
Պօղոսի հոռոմ երկաւը .	60	591
Պեպրոսի և Պօղոսի նահապահութիւնը .	67	559
<u>Երոստաղէի կործանումը .</u>	70	541

5105

1887	18	...
1887	20	...
1887	22	...
1887	24	...
1887	26	...

Page 6


1887	28	...
1887	30	...
1887	32	...
1887	34	...

2012

1584

1584

1535



153